ISSN 1829-4383

Արցախի պետական համալսարան

Арцахский государственный университет

Artsakh State University

Նվիրվում է Արցախի պետական համալսարանի 50-ամյակին

Արցախի պետական համալսարանի ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ Арцахского государственного университета

Artsakh State University PROCEEDINGS

ՊՐԱԿ 2 ТОМ 2 VOLUME 2

2019

Ստեփանակերտ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

СОЦИАЛЬНЫЕ НАУКИ SOCIAL SCIENCES

Հրատարակվում է 1998թ-ից.
Պարբերականությունը՝ տարեկան երկու անգամ
Издается с 1998г. Периодичность – дважды в год
Issued since 1998. Frequency – twice a year

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
Публикуется по решению ученого совета Арцахского государственного университета.
Published by the Decree of the Academic Council of the Artsakh State University.

Խմբագրական խորհրդի նախագահ՝ բ.գ.թ. Սարգսյան Ա.Յու.
Председатель редакционного совета: к.ф.н. Саргсян А.Ю.
Chairman of the Editorial Board: Ph. D. in Philology Sargsyan A.Yu.

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ. Ավանեսյան Վ.Մ.
Главный редактор: д.и.н. Аванесян В.М.
Editor-in-chief: Doctor of History Avanesyan V.M.

Խմբագրական կոլեգիա
Редакционная коллегия
Editorial board

Հասարակական գիտություններ

1. Աղաբալյան Ն.Է, ԱՀ ԿԳՍ նախարար – Агабалян Н.Э., Министр образования, науки и спорта АР - Aghabalyan N.E., Minister of Education, Science and Sport of AR
2. Սուվարյան Յու.Մ., տ.գ.դ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս –Суварян Ю. М., д.э.н., академик НАН РА - Suvaryan Yu.M., Doctor of Economics, Academician of NAS RA
3. Ղազինյան Գ.Ս., ի.գ.դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս – Газинян Г.С., д.ю.н., академик НАН РА - Ghazinyan G.S. . Doctor of Law, Academician of NAS RA.
4. Մանասերյան Թ.Ն., տ.գ.դ. պրոֆեսոր – Манасерян Т.Н., д.э.н., профессор – Manaseryan T.N., Doctor of Economics, Professor
5. Ասրյան Շ.Շ., տ.գ.թ.- Асрян Ш.Ш., к.э.н. –Asryan Sh.Sh., Ph.D. in Economics
6. Բալայան Վ.Ռ., պ.գ.դ., -Балаян В. Р., д.и.н. – Balayan V.R., Doctor of History
7. Ղազարյան Հ.Ս., բ.գ.թ. – Газарян А.С., к.ф.н. –Ghazaryan H.S., Ph.D. of Philology
8. Ենգոյան Ա.Փ., բ.գ.դ.- Енгоян А.П., д.п.н. – Engoyan A.P., Doctor of Political science
9. Հարությունյան Վ.Ն. բ.գ.դ., Арутюнян В.Н ., д.ф.н. – Harutyunyan V.N., Doctor of Philology
10. Խանյան Ս.Ա., բ.գ.դ.- Ханян С.А. д.ф.н. – Khanyan S.A., Doctor of Philology
11. կարապետյան Ի.Կ., մ.գ.դ.- Карапетян И.К., д.п.н. - Karapetyan I.K., Doctor of Pedagogics
12. կարապետյան Վ.Ս., ի.գ.դ., պրոֆեսոր –Карапетян В.С., д.п.н., профессор - Karapetyan V.S., Doctor of Psychology , Professor
13. Հայրապետյան Է.Ա., մ.գ.թ. - Айрапетян Э.А., к.п.н.- Hayrapetyan E.A., Ph. D. in Pedagogics
14. Հովհաննիսյան Լ.Շ., բ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Ованнисян Л.Ш., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Hovhannisyan L.Sh., Doctor of Philology, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences.

15. Մանասյան Ա.Ս., փ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Манасян А. С., д.ф.н., член-корреспондент НАН Армении – Manasyan A.S., Doctor of Philosophy, Corresponding Member of the Armenian Natioanl Academy of Sciences
16. Մարգարյան Գ.Գ. կ.գ.թ., /գիտ.քարտուղար/–Маргарян Г. Г., к.б.н., ученый секретарь – Margaryan G.G., Ph. D. in Biology, Scientific Secretary
17. Մխիթարյան Ա.Մ., հ.գ.թ. - Мхитарян А.М., к.п.н. – Mkhitaryan A.M., Ph. D. in Psycology
18. Մուսայելյան Հ.Գ., բ.գ.դ.– Мусаелян О. Г., д.ф.н.– Musaelyan H.G., Doctor of Philology.
19. Յարամիշյան Վ.Բ., հ.գ.թ. - Ярамишян В.Б. –к.п.н. - Yaramishyan V.B., Ph. D. in Psycology.
20. Մուրադյան Դ.Է., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Мурадян Д.Э. – заслуженный деятель искусств Армении – Muradyan D.E., Honored Artist of Armenia.
21. Հակոբյան Ե.Ս., մ.գ.դ., - Акопян Е.С., д.п.н. – Hakobyan E.S., Doctor of Pedagogics
22. Թադևոսյան Ա.Վ., մ.գ.թ. – Тадевосян А.В., к.п.н. – Tadevosyan A.V., Ph.D. in Pedagogics

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ՄԱՅՐ ԲՈՒՀԻ 50-ԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 13

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԸ (ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆ) 21

Վ. ՍԱՖԱՐՅԱՆ, Մ.ՏԻՏԱՆՅԱՆ
ՍՈՄ ԳՅՈՒՂԻ «ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՄԱՐ» ՈՒԽՏԱՏԵՂԻԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 36

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Օ. ԲԱԲԱՅԱՆ
ՄԵԾ ԼԵԶՎԱԲԱՆԸ (ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲՅԱՆ-120) 45

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԼԵՌՆԱՇԽԱՐՀՆ ՈՒ ՆՐԱ ՄԱՐԴԻԿ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ 51

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ
ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՆՈՐ ՏՊԱԳՐՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 63

Ս.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ» ՊՈԵՄԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԳՈՒՄ ՄԵԹՈԴՈՎ 72

Չ. ԵՐՎԱՆԴՅԱՆ
ՀԱՅՐԵՆԻ ԵՉԵՐՔԻ, ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՐՈ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԱՄԱԿԱՐԳՈՒՄ 82

Մ. ԽԱՆՅԱՆ
ԱՐՎԵՍՏԻ ԲԱԶՄԱՇԵՐՏ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ 91

Մ. ՅԱՎՐՈՒՄՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ԴԵՐԸ ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ 107

Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՓԻՐՈՒՄՅԱՆՆԵՐԻ ՓԱՌԱՊԱՆԾ ՏՈՀՄԸ ԵՎ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ 113

Ն. ԱՎԱՆԵՍՅԱՆ
ՀՈԳԵՎՈՐ ԵՐԿՓԵՂԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԿԱՄ ԴԱՐՁԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԵՏՔԵՐԸ ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆԻ ՎԻՊԱՇԽԱՐՀՈՒՄ 119

Լ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԻՐԱՆԱԿԱՆ -ŠAT/ՇԱՏ և -ŠEN/ՇԵՆ ԲԱՌԱՐՄԱՏՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԱՐՑԱԽԻ ԲՆԱԿԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ 132

Մ. ՔՈՒՄՈՒՆՑ
ԱՆԳ>(Ա)ԱՆԳԵՂ (NERGAL -'ΕΡΓΕ΄Λ) «ԱՆԳՂ», ԲՇԻՇ, ՊԻՇԱԿ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 138

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՈՒՐՄԻԱՅԻ ԲԱՐԲԱՌԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ 146

Շ. ՆԵՐՍԵՍՅԱՆ
ՀԱՅՐ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ 153

ՕՏԱՐ ԼԵԶՈՒ

Թ.ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԼԵԶԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԴԻՍԿՈՒՐՍԻՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՏԿՈՐՈՇՈՒՄԸ (ՆՅՈՒ ՅՈՐՔ ԹԱՅՄՍ ԹԵՐԹԻ «ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՋՈՐԴ ՏԱՐԱԾՔԻ ԳՐԱՎՈՒՄԸ» ՀՈԴՎԱԾԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ) 161

Ն. ՄԻՆԱՍՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՆԵՐՈՒԺԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՃՈՒՄ 168

Ն. ԱՎԱԳՅԱՆ
ՌՈՒՄ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ XX ԴԱՐԻ ՀԱՅՏՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐՈՂ ՈՒԽԼՅԱՄ ՖՈԼԿՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 174

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱ198ՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ 182

Վ. ԲԱԼԱՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ (ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ) 198

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ և ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՎԱԹՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԱՈՐՈՒՄ 216

Հ. ՄՄԲԱՑՅԱՆ
ՄԱՄՆԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 222

Լ.ԱՍԱՏՐՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՉԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ 230

Ս.ԴԱԴԱՅԱՆ
ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷԹՆԻԿ ՏԱՐՐԻ ԱՐՑԱԽ-ՂԱՐԱԲԱՂԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐ ՆԵՐԹԱՓԱՆՑԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 238

Յա. ՉՈԲԱՆՅԱՆ
ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՅԵՑԵԿԵՏԵՐԻ ՇՈՒՐՋ 253

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄՆ ՈՒ ՍԻՆ-ՇԻԱՆԳ ՈՒՅՂՈՒՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐՉԻ ՁևԱՎՈՐՈՒՄԸ 264

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՈՒՅՂՈՒՐՆԵՐԸ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ (IX-XV ԴԱՐԵՐ) 278

Ն. ՍԱՐՈՒՄՅԱՆ
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵԱՀԽ-ԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 284

Մ. ՖԱԹԵՄԻ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՐՈՆԱՓՈԽ ԵՋԴԻՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ (ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐ, ՀԻՄՍՈՒՆԱԿԱՆՆԵՐ) 301

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ
ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ և ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁեՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ: (1992Թ. ՀՈՒՆՎԱՐ – 1994Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ) 307

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
ԱՊԱՁՈՒՅՑՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԵՐՈՎ 327

Յու.ԿԱՍՈՒՄՅԱՆ
ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁեՎ ԵՎ ՆՐԱ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ 339

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վ. ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
ՇՓՎԵԼ ԱՅՆՊԵՍ, ՈՐ ՔԵԶ ՀԱՄԿԱՆԱՆ 346

Ա. ՓԻՐՅԱՆ
ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 355

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռ. ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ
ՓՄՋ-Ի ԸՆԴԱՅՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ 362

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ, ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱՀ ՄՆՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 375

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 384

Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԿՐԻՊՏՈԱՐԺՈՒՅԹՆԵՐ: ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ 391

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆ
ՍՏԵՓԱՆ ԴԱԴԱՅԱՆ: ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈԼՈՒԹՅՈՒՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ . ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, «ԴԻԶԱԿ-ՊԼՅՈՒՍ» , 2019, 472 էջ. 424

Մ. ԽԱՆՅԱՆ
ՆՈՐ ԷՋ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԱՆՈՒՄ 428

СОДЕРЖАНИЕ

50-ЛЕТНЯЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРЦАХСКОГО ГОСУНИВЕРСИТЕТА 13

ЭТНОГРАФИЯ И АРХЕОЛОГИЯ

А. САРКИСЯН
ИССЛЕДОВАНИЕ ЭТНОГРАФИИ АРЦАХА С ПОЛОВИНЫ 19-ГО ВЕКА ДО НАЧАЛО 20-ГО ВЕКА (ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД) 21

В. САФАРЯН, М.ТИТАНЯН
ПЕРВЫЕ РЕЗУЛЬТАТЫ АРХЕОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ ХРИСТИАНСКОГО СВЯТИЛИЩА НА «ГОРЕ ПРОСВЕТИТЕЛЯ» В С. СОС 36

АРМЯНСКИЙ ЯЗЫК И ЛИТЕРАТУРА

О. БАБАЯН
ВЕЛИКИЙ ЛИНГВИСТ (АРАРАТ ГАРИБЯН - 120) 45

А. БАГДАСАРЯН
НАГОРНЫЙ КРАЙ И ЕГО ЖИТЕЛИ В СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ПРОЗЕ 51

С.МИНАСЯН
НЕОЛОГИЗМЫ В НОВЫХ ОПУБЛИКОВАННЫХ СТИХОТВОРЕНИЯХ ОВАНЕСА ШИРАЗА 63

С.БАГДАСАРЯН
ИЗУЧЕНИЕ ПОЭМЫ ОВАННЕСА ТУМАНЯНА «ТМКАБЕРДИ АРУМЫ» МЕТОДОМ «ЗНАЮ – ХОЧУ УЧИТЬ-УЧУ» 72

З. ЕРВАНДЯН
ОБОБЩЕНИЯ РОДИНЫ, ПРИРОДЫ И ФИЛОСОФСКОЙ ЛЮБВИ В СИСТЕМЕ ОБРАЗОВ ВАРДАНА АКОПЯНА 82

С. ХАНЯН
ПРОРОК МНОГОСЛОЙНОГО МИРА ИССКУСТВА 91

М. ЯВРУМЯН
РОЛЬ ДИАЛЕКТНЫХ СЛОВ И СЛОВ ОБЩЕНАРОДНОГО РАЗГОВОРНОГО ЯЗЫКА В ПОЭЗИИ СОКРАТА ХАНЯНА 107

В.АРАКЕЛЯН
САРДАРАПАТСКОЕ СРАЖЕНИЕ И СЛАВНЫЙ РОД ПИРУМЯНОВ 113

Н. АВАНЕСЯН
ПРОБЛЕМА ДУХОВНОГО РАЗДВОЕНИЯ ИЛИ СЛЕДЫ ПУТИ РАСКАЯНИЯ В ПРОЗЕ МУШЕГА ГАЛШОЯНА 119

Л. МАРКАРЯН
ФУНКЦИОНАЛЬНО-СЕМАНТИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ИРАНСКИХ КОРНЕВЫХ ОСНОВ -ŠAT /ШАТ И -ŠEN/ШЕН В ОЙКОНИМАХ АРЦАХА 132

М. КУМУНЦ
ЭТИМОЛОГИЯ СЛОВ АНГ>[А]АНГЕХ (NERGAL-'ЕРГЕ́Л) «ГРИФ» (ԱՆԳ>(Ա)ԱՆԳԵՂ), БЦИЦ, ПИЦАК «ПЧЕЛА, МУХА» (ԲԾԻԾ, ՊԻԾԱԿ) 138

Л.ПЕТРОСЯН, Л.ХАЧАТРЯН
ХАРАКТЕРИСТИКА УРМАЙСКОГО ДИАЛЕКТА И ПРОБЛЕМА ЕГО СОХРАНЕНИЯ 146

Ш.НЕРСЕСЯН
СЕМАНТИЧЕСКИЕ РЕЦЕПЦИИ КОНЦЕПТА «ОТЕЦ» В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ 153

ИНОСТРАННЫЙ ЯЗЫК

Т. ДАНИЕЛЯН
СПЕЦИФИКАЦИЯ ДИСКУРСИВНОГО СТАТУСА ПУБЛИКАЦИЙ В ЛИНГВИСТИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЕ (НА МАТЕРИАЛЕ СТАТЬИ НЬЮ ЙОРК ТАЙМС «ЗАХВАТ СЛЕДУЮЩЕЙ ТЕРРИТОРИИ РОССИЕЙ») 161

Н.МИНАСЯН
ФУНКЦИЯ СИМВОЛА В ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЕ 168

Н. АВАКЯН
О ВЛИЯНИИ РУССКОЙ ЛИТЕРАТУРЫ НА ТВОРЧЕСТВО ИЗВЕСТНОГО АМЕРИКАНСКОГО ПИСАТЕЛЯ XX ВЕКА УИЛЬЯМА ФОЛКНЕРА 174

ИСТОРИЯ, ПОЛИТОЛОГИЯ

В. АВАНЕСЯН
ФРАНЦУЗСКИЙ ПАРЛАМЕНТ И ПРОБЛЕМЫ ДАЛЬНЕГО ВОСТОКА 182

В. БАЛАЯН
СТЕПАНАКЕРТ (ИСТОРИЧЕСКОЕ ПРОШЛОЕ И СОВРЕМЕННОСТЬ) 198

А.ХАЧАТРЯН
СОЗДАНИЕ АЗЕРБАЙДЖАНСКОГО ГОСУДАРСТВА КАК ПРОЯВЛЕНИЕ ИДЕОЛОГИИ ПАНТУРКИЗМА И ЗАХВАТНИЧЕСКОЙ ПОЛИТИКИ ТУРЦИИ 216

А. СМБАТЯН
ВОЗМОЖНОСТИ ПРИМЕНЕНИЯ ПАРТИСИПАТОРНОЙ МЕТОДОЛОГИИ В ИССЛЕДОВАНИЯХ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА 222

Л. АСАТРЯН
ТРАНСФОРМАЦИЯ СОВРЕМЕННОГО ВООРУЖЁННОГО КОНФЛИКТА 230

С. ДАДАЯН
К ВОПРОСУ О ПРОНИКНОВЕНИИ ТЮРКСКОГО ЭТНИЧЕСКОГО ЭЛЕМЕНТА В НАГОРНУЮ ЧАСТЬ АРЦАХ-КАРАБАХА 238

Я. ЧОБАНЯН
ТЕОРЕТИЧЕСКИЕ ПОДХОДЫ К СТРАТЕГИЧЕСКОМУ СОЮЗУ АРМЕНИИ И РОССИИ 253

А. ХАЧАТРЯН
ПРОВОЗГЛАШЕНИЕ КИТАЙСКОЙ НАРОДНОЙ РЕСПУБЛИКИ И ОБРАЗОВАНИЕ СИНЬЦЗЯН-УЙГУРСКОГО АВТОНОМНОГО РАЙОНА 264

А. ХАЧАТРЯН
УЙГУРЫ В ЭПОХУ МОНГОЛЬСКОЙ ИМПЕРИИ (IX-XV ВЕКА) 278

Н.САРУМЯН, Э.ЗАХАРЯН
ПЕРЕГОВОРНЫЙ ПРОЦЕСС УРЕГУЛИРОВАНИЯ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА В ПЕРИОД СТАНОВЛЕНИЯ ЧЛЕНОМ СБСЕ И ПОЗИЦИЯ АЗЕРБАЙДЖАНА 284

С.ФАТЕМИ
ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ СРЕДИ ОБРАЩЁННЫХ ЕЗИДОВ (СВИДЕТЕЛЕЙ ИЕГОВЫ, ПЯТИДЕСЯТЫХ) 301

Т. АКОПЯН
ВНУТРИПОЛИТИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКЕ И ИХ ВЛИЯНИЕ НА ФОРМИРОВАНИЕ ГОСУДАРСТВЕННОЙ СИСТЕМЫ (ЯНВАРЬ 1992 - ДЕКАБРЬ 1994 гг.) 307

ЮРИСПРУДЕНЦИЯ

Г АРЗУМАНЯН
ОСОБЫЕ ПРАВИЛА ДОПУСТИМОСТИ ДОКАЗАТЕЛЬСТВ ПО СПОРАМ О СДЕЛКАХ 327

Ю.КАСУМЯН
ЭКСТРЕМИЗМ КАК ФОРМА ПРЕСТУПНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ И ЕГО АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ 339

ПСИХОЛОГИЯ

В.ЯРАМИШЯН
ОБЩАТЬСЯ ТАК, ЧТОБЫ ТЕБЯ ПОНЯЛИ 346

А. ФИРЯН
СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКАЯ КАРТИНА НАЦИОНАЛЬНОГО САМОСОЗНАНИЯ АРМЯН АРЦАХА 355

ЭКОНОМИКА

Р. МАНГАСАРЯН
РАСШИРЕНИЕ МАЛОГО И СРЕДНЕГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА КАК ВАЖНАЯ СОСТАВЛЯЮЩАЯ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ 362

Г. САРКИСЯН
ОЦЕНКА ВЗАИМОСВЯЗИ ПОКАЗАТЕЛЕЙ ФИНАНСОВОГО ЦИКЛА, РЕНТАБЕЛЬНОСТИ И ЛИКВИДНОСТИ ОРГАНИЗАЦИЙ ПИЩЕВОГО ПРОИЗВОДСТВА РЕСПУБЛИКИ АРЦАХ 375

Т. АКОПЯН
ОРГАНИЗАЦИЯ ВНУТРЕННЕГО КОНТРОЛЯ В СТРОИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЯХ 384

Т. ГРИГОРЯН
СОВРЕМЕННАЯ БАНКОВСКАЯ СИСТЕМА И КРИПТОВАЛЮТЫ: ПРИНЦИПЫ, ПРОТИВОРЕЧИЯ, ПЕРСПЕКТИВЫ 391

РЕЦЕНЗИИ

В.АВАНЕСЯН
СТЕПАН ДАДАЯН. ПРАВДА И ЛОЖЬ О КАРАБАХСКОМ “ХАНСТВЕ”
Степанакерт, “Дизак-плюс”, 2019, 472 с. 424

С. ХАНЯН
НОВАЯ СТРАНИЦА В СОКРОВИЩНИЦЕ АРМЯНСКОЙ БИБЛИОГРАФИИ 428

CONTENTS

50 YEARS ACTIVITY OF THE ARTSAKHI ALMA MATER 13

ETHNOGRAPHY & ARCHEOLOGY

A. SARGSYAN
THE INVESTIGATION OF ARTSAKH'S ETHNOGRAPHY FROM THE HALF OF THE 19TH CENTURY TO THE BEGINNING OF THE 20TH CENTURY (PRE-SOVIET PERIOD) 21

V. SAFARYAN, M.TITANYAN
THE FIRST RESULTS OF ARCHEOLOGICAL EXCAVATIONS OF THE CHRISTIAN SANCTUARY ON THE «MOUNTAIN OF THE ILLUMINATOR» IN THE VILLAGE OF SOS 36

ARMENIAN LANGUAGE & LITERATURE

O. BABAYAN
GREAT LINGUIST (ARARAT GHARIBYAN-120) 45

A. BAGDASARYAN
HIGHLAND AND ITS PEOPLE IN MODERN ARMENIAN PROSE 51

S.MINASYAN
NEOLOGISMS FROM THE NEW PUBLISHED PAGES OF HOVHANNES SHIRAZ 63

S.BAGHDASARYAN
STUDY OF HOVHANNES TUMANYAN'S POEM “TMKABERDI ARUM” BY THE METHOD “KNOW - WANT TO TEACH-TEACH” 72

Z. YERVANDYAN
GENERALIZATIONS OF HOMELAND, NATURE AND PHILOSOPHICAL LOVE IN THE IMAGE SYSTEM OF VARDAN HAKOBYAN 82

S. KHANYAN
PHILOSOPHICAL GENERALIZATIONS ABOUT ART 91

M. YAVROUMYAN
THE ROLE OF COLLOQUIAL AND DIALECTIC WORDS IN SOKRAT KHANYAN'S POEMS 107

V. ARAQELYAN
THE SARDARAPAD BATTLE AND THE PIRUMANYAN`S GLORIOUS FAMILY 113

N. AVANESYAN
THE PROBLEM OF SPIRITUAL DICHOTOMY OR TRACES OF REPENTANCE IN MUSHEGH GALSHOYAN’S PROSE 119

L.MARGARYAN
THE FUNCTIONAL-SEMANTIC CHARACTERISTICS OF IRANIAN ROOT STEMS -SHEN AND -SHAT IN ARTSAKH OIKONYMS 132

M. KUMUNTS
ETYMOLOGY OF WORDS ANG>[A]NGEGH (NERGAL-’ԵՐԳԵՎ) «VULTURE» (ԱՆԳ>(Ա)ԱՆԳԵՂ), BCIC, PICAK «LOUSE, WASP» (ԲԾԻԾ, ՊԻԾԱԿ) 138

L.PETROSYAN, L.KHACHATRYAN
CHARACTERISTICS OF URMIA DIALECT AND THE PROBLEM OF ITS PRESERVATION AT SCHOOL 146

SH.NERSESYAN
SEMANTIC PERCEPTION OF THE CONCEPT “FATHER “IN ARMENIAN LANGUAGE 153

FOREIGN LANGUAGES

T. DANIELYAN
PECULIARITIES OF DISCURSIVE PUBLICATION STATUS IN LINGUISITC EXPERTISE (BASED ON THE ARTICLE “RUSSIA’S NEXT LAND GRAB” BY THE NEW YORK TIMES) 161

N. MINASYAN
THE POTENTIAL OF SYMBOL IN FICTION 168

N.AVAGYAN
ON THE INFLUENCE OF RUSSIAN LITERATURE ON THE WORKS OF THE FAMOUS AMERICAN WRITER OF THE XX CENTURY WILLIAM FAULKNER 174

HISTORY & POLITICAL SCIENCE

V.AVANESYAN
THE FRENCH PARLIAMENT AND THE PROBLEMS OF THE FAR EAST 182

V. BALAYAN
STEPANAKERT (HISTORICAL PAST AND PRESENT) 198

A.KHACHATRYAN
THE FOUNDATION OF ADRBEJANI STATE, AS THE MANIFESTATION OF TURKISH AGGRESSIVE POLICY AND TURKISM IDEOLOGY 216

H. SMBATYAN
APPLYING PARTICIPATORY RESEARCH IN THE STUDIES OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT 222

L.ASATRYAN
TRANSMISSION OF A MODERN ARMED CONFLICT 230

S.DADAYAN
ABOUT THE PENETRATION OF TURKIC ETHNIC ELEMENTS INTO THE MOUNTAINOUS PARTS OF ARTSAKH-KARABAKH 238

Ya. CHOBANYAN
THEORETICAL APPROACHES TO THE STRATEGIC ALLIANCE OF ARMENIA AND RUSSIA 253

A. KHACHATRYAN
PROCLAMATION OF THE PEOPLE'S REPUBLIC OF CHINA AND THE FORMATION OF THE XINJIANG UYGUR AUTONOMOUS REGION 264

A. KHACHATRYAN
UIGHURS IN THE ERA OF THE MONGOL EMPIRE (IX-XV CENTURIES) 278

N. SARUMYAN, E.ZAKHARYAN
NEGOTIATION PROCESS FOR SETTLEMENT OF THE KARABAKH CONFLICT DURING BECOMING THE OSCE MEMBER AND POSITION 284

S. FATEMI
EDUCATION ISSUES AMONG CONVERTED YEZIDIS (JEHOVAH'S WITNESSES, PENTECOSTALS) 301

T. HAKOBYAN
THE INNER POLITICAL PROCESSES IN THE NAGORNO KARABAKH REPUBLIC AND THEIR INFLUENCE ON THE FORMATION OF THE STATE SYSTEM (JANUARY 1992 – DECEMBER 1994) 307

JURISPRUDENCE

G. ARZUMANYAN
SPECIAL RULES OF ACCEPTABILITY OF PROOFS ABOUT CONFLICT BARGAIN 327

Yu. KASUMYAN
EXTREMISM AS A FORM OF CRIMINAL ACTIVITY AND ITS ACTUAL PROBLEMS 339

PSYCHOLOGY

V.YARAMISHYAN
COMMUNICATE TO BE UNDERSTOOD 346

A.FIRYAN
SOCIO-PSYCHOLOGICAL DESCRIPTION OF THE ARMENIANS' ETHNIC SELFCONSCIOUSNESS IN ARTSAKH REGION 355

ECONOMY

R. MANGASARYAN
SME EXPANSION AS AN IMPORTANT COMPONENT OF THE ECONOMIC DEVELOPMENT OF THE REPUBLIC OF ARTSAKH 362

G. SARGSYAN
THE ASSESSMENT OF INTERRELATION OF THE FINANCIAL CYCLE, THE PROFITABILITY AND THE LIQUIDITY INDICATORS IN ARTSAKH REPUBLIC'S FOOD PRODUCTION ORGANIZATIONS 375

T. HAKOBYAN
ORGANIZATION OF INTERNAL CONTROL IN CONSTRUCTION ORGANIZATIONS 384

T. GRIGORYAN
MODERN BANKING SYSTEM AND CRYPTOCURRENCIES: PRINCIPLES, CONTRADICTIONS, PERSPECTIVES 391

REVIEW

V. AVANESYAN
STEPAN DADAYAN. TRUTH AND LIE ABOUT THE KARABAKH KHANATE. Stepanakert, "Dizak-plus", 2019, 472 p. 424

S. KHANYAN
NEW PAGE IN THE TREASURY OF ARMENIAN BIBLIOGRAPHY 428

ԱՐՑԱԽԻ ՄԱՅՐ ԲՈՒՀԻ 50-ԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արցախի պետական համալսարանը եղել է ու կա Արցախի Հանրապետության պետականության հենասյուներից մեկը, արցախահայության կրթական, մշակութային և գիտական արժեքների ստեղծողն ու կրողը, այն գլխավոր հիմնաքարը, որի վրա կառուցվում, հիմնավորվում է մեր երիտասարդ հանրապետության գիտակրթական ներուժը: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում արցախահայությունն իրեն բաժին հասած փորձություններին, նետված մարտահրավերներին դիմակայել է՝ ապավինելով ոչ միայն բազկի ուժին, այլև իր մտավոր կարողություններին՝ զինված լինելով գիտելիքի կայուն ուժով: Հենց այդ ուժը, նախնյաց թողած գիտակրթական ու մշակութային ժառանգությունն են արցախահայությանը կառչած պահել իր հայրենիքին ու ազգային արժեքներին:

Հայոց բազմադարյան գիտակրթական ու մշակութային ժառանգության մի մասը կազմող արցախյան հատվածը պատմական անարդարության հետևանքով բռնակցվեց Ադրբեջանին: Ստեղծվեց ԼՂԻՄ-ը /Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ/, որի նկատմամբ խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում Ադրբեջանը դրսևորեց հակահայկական քաղաքականություն թե՛ հասարակական–քաղաքական, թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ գիտակրթական ու մշակութային կյանքի բնագավառներում՝ նպատակ ունենալով հասնել մարզի հայաթափմանը, նրա հայեցի դիմագծի խեղաթյուրմանը, սակայն ապավինելով ազգային արժեհամակարգին, մտավոր ներուժին՝ արցախահայությունը կարողացավ ոչ միայն դիմակայել, այլ նաև մաքառել, դուրս գալ ազգային կենսակերպը խեղդող կապանքներից ու հռչակել ազատ ու անկախ ապրելու իրավունքը: Մաքառման, դիմակայման ու հաղթանակի այդ երթին իր գլխավոր դերակատարությունն ու զգալի ավանդն ունեցավ Արցախի պետական համալսարանը՝ Արցախի մայր բուհը, որի ստեղծման պատմության արմատները, ամուր կերպով մխրճված լինելով մայր հողում, ոչ միայն առողջ ու կայուն էին, այլև անկախության պայմաններում նորից ծլարձակեցին՝ նոր վերածնունդ տալով արցախահայության գիտակրթական կյանքին, դառնալով ազգային-ազատագրական պայքարի օջախ, ազգային-գաղափարախոսության երակ, մշակութային արժեքների պահպանիչ, գիտական կադրերի պատրաստման դարբնոց, մտավոր ներուժի ստեղծող, Արցախի պետականության կայացման, հզորացման ներքին մղիչ:

Ադրբեջանի կազմում ընդգրկված ԼՂԻՄ-ի ուծացման, վերջնական հայաթափման քաղաքականության ուղղություններից մեկն էլ արցախահայությանը իր ազգային մշակույթին, պատմությանը

հաղորդակցվելու, նրանով սնուցվելու հնարավորությունների արգելումն էր: Մարզի ղեկավարությունը, մտավորականության բազմաթիվ ներկացուցիչներ ժամանակ առ ժամանակ դիմումներով, պահանջագրերով ահազանգել են, բարձրաձայնել խնդիրը. 1966թ. ԽՍՀՄ ղեկավարությանն ուղղված դիմումում ասված էր. « Ղարաբաղը Հայաստան է իր կենսաձևով, իր պատմությամբ, բայց արհեստականորեն կտրված է նրանից...»:

Մարզի հայությունը հնարավորություն չուներ իրացնելու հայկական մշակույթը, հայոց պատմությունն ուսումնասիրելու, հայերենով կրթություն ստանալու անկապտելի իրավունքը: Դիմումներում անհերքելի փաստեր էին բերված կրթության և մշակույթի բնագավառում Ադրբեջանի իշխանությունների կողմից վարվող հակահայկական քաղաքականության վերաբերյալ: Մարզի մտավորականության արժանի զավակներն իրենց վրա վերցրին ոչ միայն Արցախի նկատմամբ 1921թ. կատարված պատմական անարդարությունը վերացնելու պահանջի արտահայտումը, այլև մարզում հայեցի գիտակրթական օջախ ստեղծելու, հիմնելու խնդիրը: Մարզի մտավորականությունը գիտակցում էր, որ Ադրբեջանի ազգային հակահայկական քաղաքականությունն ի վերջո կարող էր հանգեցնել մարզի հայաթափմանը, ուստի և լծվեց երիտասարդության արտահոսքը կանխելու ռազմավարական խնդրի իրականացմանը: Լեռնային Ղարաբաղում մանկավարժական բուհի ստեղծման նախապատրաստական աշխատանքը հանձնարարվեց կուսակցության մարզային կոմիտեի գաղափարական աշխատանքների գծով քարտուղար Ալեքսանդր Հարությունյանին և մարզգործկոմի նախագահի առաջին տեղակալ Երվանդ Բաղդասարյանին: Բուհի ստեղծման անհրաժեշտությունը հայկական կողմը հիմնավորում էր մի քանի փաստերով.

ա/ Լեռնային Ղարաբաղում և նրա հարևան ադրբեջանական շրջաններում, չհաշված Բաքվի հայությունը, ապրում են 250.000-ից ավելի հայեր, որոնց դպրոցահասակ սերնդի բացարձակ մեծամասնությունը սովորում է հայկական դպրոցներում, հետևաբար ինստիտուտը կունենա ուսանողության համապատասխան քանակ,

բ/ մարզի տարածքում և հարակից շրջաններում կլուծվի կադրային ապահովվածության խնդիրը,

գ/ հայկական մարզում հայերեն ուսուցմամբ մանկավարժական բուհի ստեղծումը կլինի միանգամայն օրինավոր՝ հաշվի առնելով այն փաստը, որ ԼՂԻՄ-ը Խորհրդային Միության տարածքում միակ ինքնավար վարչական տարածքն է, որը չունի ազգային բարձրագույն ուսումնական հաստատություն:

Մարզի «ադրբեջանականացումը» գլխավոր ռազմավարական խնդիր որդեգրած ադրբեջանական իշխանություններն ի վերջո գնացին Ստեփանակերտում մանկավարժական բուհ հիմնելու քայլին, մանավանդ որ այն հանդիսանալու էր Բաքվի մանկավարժական ինստիտուտի

մասնաճյուղ և ունենալու էր խայտաբղետ «ինտերնացիոնալ» բնույթ. ուսուցումը տարվելու էր երկու լեզուներով ՝ հայերեն և ադրբեջաներեն:

Այսպիսով՝ 1969թ. սեպտեմբերին Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի նախկին շենքի մի մասում սկսվեցին բուհական ուսումնական պարապմունքները: Բուհը բացվեց որպես Բաքվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղ, որի առաջին տնօրեն նշանակվեց փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Շ.Մ.Աբրահամյանը: Մասնաճյուղն ուներ երկու ամբիոն՝ հայոց լեզվի և գրականության ու մաթեմատիկայի: Ուսումնական գործընթացն սկսվեց երեք մասնագիտություններով՝ հայոց լեզու և գրականություն, մաթեմատիկա ու ֆիզիկա:

Արդեն 1974-1989թթ. ինստիտուտում գործում էր չորս ֆակուլտետ՝ բանասիրական, պատմական, ֆիզիկա-մաթեմատիկական և տարրական կրթության մանկավարժության ու մեթոդիկայի, իսկ ամբիոնների թիվը հասել էր 8-ի: Բուհում դասավանդում էին իրենց գործին նվիրյալ առաջավոր մտավորականներ: Շնորհիվ վերջիններիս ազգանվեր գործունեության՝ ինստիտուտը դարձավ հայեցի կրթության, դաստիարակության օջախ, որին վերապահվեց լինել նաև ազգային գաղափարախոսության, արցախյան շարժման սկզբնավորման առաջին օջախներից մեկը, արցախյան պայքարի ջահակիրը:

Ադրբեջանի իշխանություններին չհաջողվեց բուհը դարձնել հակահայկական քաղաքականության գործիք, որով նախատեսում էր արագացնել մարզի «ադրբեջանականացման» վաղուց որդեգրած ռազմավարությունը:

1988թ. սկիզբ առած արցախյան պայքարի նոր վերածննդի պայմաններում Արցախի մայր բուհը արժանապատվորեն նվիրվեց հայրենիքի պաշտպանության գործին, դարձավ ազատագրական պայքարի գաղափարախոս, արցախահայության ազգային ինքնագիտակցության բարձրացման, պայքարի կազմակերպման հարթակներից մեկը՝ իր մտավորական սերուցքով, ուսանողությամբ լծվելով ազատագրական պայքարին՝ Ադրբեջանի լուծը թոթափելու, Մայր Հայաստանին միանալու նվիրական գործին:

Դեռևս 1986թ. ապրիլից ընդհատակում գործող «Արցախական միության» աշխատանքներին իրենց մասնակցությունը հանդես բերեցին հայ ուսանողները, ովքեր թրծվեցին պայքարի կազմակերպման, նպատակների իրականացման, հանուն գաղափարի միավորման բովում:

1988թ. փետրվարի 13-ին արցախահայությունն առաջին անգամ դուրս եկավ հանրահավաքի՝ իր ձայնը բարձրացնելու 70 տարիներ ի վեր ծխացող հարցի շուրջ՝ պահանջելով վերամիավորում Մայր հայրենիքին: Համալսարանի ուսանողությունն ու դասախոսական կազմն էին նախաձեռնողները առաջին հանրահավաքի և ակտիվ մասնակցություն ունեցան նաև հետագա հանրահավաքներին՝ դառնալով

համաժողովրդական պայքարի ծավալման ազդակն ու գաղափարաքաղաքական մշակը: Բուհից 200 ուսանողների ստորագրությամբ հեռագիր հղվեց ԽՄԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին, որտեղ ուսանողները պահանջում էին իրականություն դարձնել Արցախը Մայր հայրենիքին վերամիավորելու արդարացի պահանջը: Մի շարք դասախոսներ իրենց ելույթներում հիմնավորում էին պայքարի դուրս գալու անհրաժեշտությունը, պատմական անհերքելի փաստերով ապացուցում շարժման ծավալման արդարացիությունն ու անշրջելիությունը: Հատկանշական է բուհի մի շարք դասախոսների կողմից պատրաստված դիմումը, որն ընդունվեց ու ընթերցվեց 1988թ. մայիսի 28-ին Ստեփանակերտի Ազատության հրապարակում կայացած 30 հազարանոց հանրահավաքում: Դիմումը որպես բողոքի ձայն հղվեց ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Ե. Լիգաչովի թույլ տված այն արտահայտության դեմ, որ ԼՂԻՄ-ի հայերի պահանջն անլուծելի է, քանի որ կապված է «ադրբեջանական գործոնի» հետ: Բուհի բազմաթիվ աշխատակիցներ ոչ միայն հեռագրեր ու նամակներ էին հղում ԽՍՀՄ ղեկավարության հասցեին, այլև հոդվածներով հանդես գալիս տարբեր պարբերականներում՝ փորձելով լսելի ու մատչելի դարձնել արցախահայության պահանջատիրությունը, պայքարի դուրս գալու արդարացի հիմնավորումը:

Ի պատասխան ինստիտուտի ստանձնած այս առաքելության՝ արցախահայության նկատմամբ իրականցվեց «պատժիչ գործողություն». 1988թ. հոկտեմբերին ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ փակվեց ԼՂԻՄ-ի միակ բուհը, ինչը խորհրդային կենտրոնի և Ադրբեջանի իշխանությունների հերթական միացյալ գործողությունն էր՝ ի պատասխան արցախահայության բարձրացրած արդարացի պահանջատիրության: Հայկական ԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրության կոլեգիայի 1988թ. հոկտեմբերի 17-ի որոշմամբ ինստիտուտի հայկական և ռուսական բաժինների ուսանողության ու պրոֆեսորադասախոսական անձնակազմի 989 անդամ / հայազգի/, այդ թվում առկա ուսուցման 373, հեռակա՝ 616, տեղափոխվեցին Կիրովականի մանկավարժական ինստիտուտի կազմ, իսկ ադրբեջանական բաժինը տեղափոխվեց Կիրովաբադ:

Սակայն 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի աղետալի երկրաշարժի հետևանքով զգալիորեն տուժեցին Կիրովականի մանկավարժական ինստիտուտի մասնաշենքերն ու հանրակացարանը, ինչը փաստորեն անհնարին դարձրեց այնտեղ պարապմունքների հետագա շարունակումն ու կազմակերպումը: Արցախից այնտեղ ժամանած ուսանողներն ու դասախոսներն ստիպված էին վերադառնալ:

1989թ. մարտի 15-ի Հայկական ԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրության կոլեգիայի որոշմամբ Ստեփանակերտում բացվեց Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը: Այն ղեկավարում էր տ.գ.թ., դոցենտ Ե.Հ. Բաղդասարյանը:

1989թ. դեկտեմբերի 20-ին բուհական կրթության բնագավառում տեղի ունեցավ մեկ փոփոխություն ևս: Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի գիտական խորհուրդը որոշեց Ստեփանակերտում բացել հեռակա ուսուցման ֆակուլտետի ընդհանուր տեխնիկական բաժանմունք՝ հաշվի առնելով այն, որ Արցախից ԵրՊԻ-ում սովորում էին 200-ից ավելի ուսանողներ, և ստեղծված պատերազմական իրավիճակը, ճանապարհների շրջափակումը հնարավորություն չէր տալիս լիարժեք կազմակերպելու վերջիններիս ուսումնական գործընթացը:

1991թ նոյեմբերի 1-ի ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի N85 որոշման համաձայն՝ ԵրՊԻ-ի Ստեփանակերտի ընդհանուր տեխնիկական բաժանմունքը վերակազմավորվեց ԵրՊԻ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի: Տնօրեն նշանակվեց տ.գ.թ. դոցենտ Ա.Ս.Ավանեսյանը:

Կրթական կյանքում տեղի ունեցող այս փոփոխությունները խոսուն փաստ են այն իրողության, որ ազատագրական պայքարին լծված արցախահայությունը շարունակել է մաքառել նաև իր գիտակրթական ու մշակութային արժեքների պահպանման ու զարգացման համար: 1992թ. հոկտեմբերին տեղի ունեցավ մի նշանակալից իրադարձություն. ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի միջնորդությամբ ՀՀ կառավարությունը 1992թ. հոկտեմբերի 13-ին որոշում կայացրեց / N 509/ Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան ստեղծելու մասին: Որոշման մեջ ասված էր. «Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանն ընդգրկել Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարարության համակարգում՝ միավորելով Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը և Վանաձորի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքը»:

Գիտության, կրթության հանդեպ հայի դարավոր հոգատարությունն ու սերը լավագույնս արտացոլվեցին նորանկախ Արցախի Հանրապետությունում համալսարան հիմնելու այս ճիշտ որոշման մեջ: Արցախահայությունը 92-ին ստիպված էր զենքը ձեռքին ապացուցելու իր հայրենատիրության իրավունքը, պաշտպանելու 1991թ. սեպտեմբերի 2-ին կայացրած անկախություն հռչակելու որոշումը, միաժամանակ ստեղծելու կրթօջախ, ուր պիտի շարունակվի հայրենիքի շենացումն ու նորօրյա արարումը:

Համալսարանի ավելի քան 400 ուսանողներ և դասախոսական գրեթե ողջ կազմը դարձան ազգային - ազատագրական պայքարի մասնակիցներ: Մայր բուհի ուսանողները դարձան առաջամարտիկներ՝ իրենց մտավոր ուժով ու պատասխանատվության բարձր գիտակցումով, Արցախի անկախ գալիքը կերտելու հավատով զինվորագրվելով պայքարին: Պատեհ ժամն էր գաղափարը իրականություն դարձնելու.

մասնագիտական գիտելիքը դարձավ ռազմական հմտություն և պայքարն առաջնորդելու կարողություն:

Հընթացս շարունակվում էին պարապմունքները բուհում: Մի կողմում՝ մարտիկ ուսանողներ, մյուս կողմում՝ թիկունքը գրով ու կրթությամբ զորացնող քույրեր ու մայրեր: Այդպես էլ արցախցին հաղթեց…

Մայր բուհի 72 ուսանողների կրթության վկայագրերը դարձան բուհի պատվի հուշարձան, նորօրյա ուսանողության խոնարհումի և արիության խորան: Իսկ նրանք, ովքեր վերադարձան վահանով, լծվեցին պետականշինության կերտմանը՝ իրենց ռազմական փորձառությամբ և մտավոր ներուժով սյուն դառնալով կառուցվող երկրին:

Հրադադարի հաստատումից հետո Արցախի մայր բուհը նոր ոգով ձեռնամուխ եղավ գիտակրթական գործընթացի ու պետականության կայացմանը՝ միտված իր առաքելության իրականացմանը: 1995թ. փետրվարի 6-ի ԼՂՀ կառավարության որոշմամբ ԼՂՀ պետական համալսարանը վերանվանվեց Արցախի պետական համալսարան, որը փաստացի դարձավ իրավահաջորդը մինչ այդ իր կազմում միավորած ուսումնական հաստատությունների:

ԼՂՀ հռչակումը, անկախության կերտումը նորովի վերախմբագրեցին համալսարանի առջև դրված խնդիրները: Այն դարձավ հանրապետության սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական տարբեր բնագավառներին անհրաժեշտ գիտական կադրերի ստեղծող, գիտության, կրթության, մշակույթի օջախ, որը լուրջ դերակատարություն ունի պետականակերտման, ազգային հայեցի գաղափարախոսության մշակման ու տարածման գործընթացում: Չընկրկելով ԼՂՀ միջազգային չճանաչվածության փաստից բխած դժվարությունների առջև՝ Արցախի պետական համալսարանը արժանավույնս ընդգրկվեց համաշխարհային նորարարական գործընթացներում, ստեղծեց բազմաթիվ միջազգային կապեր՝ կրթության և գիտության բնագավառում մշտապես աչալրջորեն հետևելով արդի զարգացումներին: Գիտակցելով իր առաքելության կարևորությունը և ելնելով այն առաջնահերթությունից, որ իր կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակն անմիջականորեն փոխազդում է երկրի առաջընթացի որակին՝ մայր բուհը ստանձնեց Արցախի Հանրապետության կրթական կարիքների բավարարման պատասխանատվությունը՝ դառնալով նորանկախ հանրապետության մասնագիտական ներուժի հիմնական ստեղծողը, կադրուժ ձևավորողն ու առաջարկողը:

2005 թվականից Արցախի պետական համալսարանը փաստացի ընդգրկվեց Բոլոնյան գործընթացում և քայլ առ քայլ սկսեց կառուցել կրթության որակի բարելավման նոր ճանապարհ:

Իր հիմնադրման օրվանից համալսարանի գերակա ուղղություններն էին բնական և հումանիտար գիտությունները, որոնք առայսօր էլ ուղենշային են բուհի առաքելության առաջնահերթություններում:

Տնտեսական, սոցիալական (իրավագիտություն, քաղաքագիտություն, լրագրություն, թարգմանչական գործ) ուղղություններն ավելի երիտասարդ են, և նրանց ներդրումը պայմանավորված էր ԱՀ հասարակատնտեսական ու իրավական համակարգերի ձևավորման ու զարգացման պահանջով:

Այսօր ԱրՊՀ-ն ԱՀ կառավարության հաստատած մասնագիտությունների գծով երեք հիմնական ուղղություններով՝ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ ՈԱԾ-ի սահմանած մակարդակներով (բալալավրի, մագիստրոսի, հետազոտողի որակավորումներ), գիտական հետազոտություն և հանրային ծառայություն, առաջարկում է կրթական ծրագրերի ընդգրկուն ցանկ՝ մանկավարժական, բնագիտական, հումանիտար, տնտեսագիտական, սոցիալական:

Ներկայումս համալսարանի 5 ֆակուլտետներում իրականացվում է **75** կրթական ծրագիր, որից 25-ը՝ բակալավրի, 44-ը՝ մագիստրոսի, 6-ը՝ ասպիրանտուրայի կրթական աստիճաններում: Սովորողների թիվը բակալավրիատում 2019թ. դրությամբ հասնում է 2141-ի, մագիստրատուրայում՝ 369-ի և ասպիրանտուրայում՝ 11-ի: Իր գործունեության 50 տարիների ընթացքում Արցախի մայր բուհը թողարկել է ավելի քան 23 հազար շրջանավարտ, ովքեր բարձր արդյունավետությամբ ներգրավված են երկրի տնտեսության բոլոր բնագավառներում՝ բարձր պահելով հարազատ բուհի անունն ու պատիվը :

Ամառային ամիսներին համալսարանի գործունեությունը նոր երանգներ է ստանում՝ ուսանողների հետ տարվող աշխատանքը կազմակերպելով և իրականացնելով ուսանողամետ և ուսանողակենտրոն քաղաքականության շրջանակներում՝ առանձնակի ուշադրություն դարձնելով անձի ձևավորման համակարգի այնպիսի կարևորագույն ուղղություններին, ինչպիսիք են ուսանողների կարիերայի ու անձնային աճին նպաստող միջոցառումները, ոչ ֆորմալ կրթական ծրագրերը, միջբուհական, հանրապետական ու միջազգային ուսանողական գիտաժողովներն ու ֆորումները, ամառային ճամբարներն ու դպրոցները, վրանային բանակումները, ինտելեկտուալ ծրագրային միջոցառումներն ու այցերը դեպի զորամասեր, բազային կազմակերպություններ ու դպրոցներ:

Ուսանողական ամառը հետաքրքիր ու ակտիվ է կազմակերպվում արտերկրի և հայաստանյան ավելի քան երեք տասնյակ բուհերի հետ ակտիվ համագործակցության շնորհիվ: ԱՀ կառավարության և միջազգային դրամաշնորհային ծրագրերի շնորհիվ իրականանում են խոշոր ծրագրեր՝ տասնյակ ուսանողների ներգրավմամբ, ինչպիսիք են ամառային ճամբարը Պատարայում, ուսանողների բազմաթիվ գործուղումները արտերկրի և հայաստանյան բուհեր, մասնակցությունը գիտաժողովներին, մասնագիտական դասընթացներին և այլն: Այս ամենը նպաստում է ԱրՊՀ միջազգային ճանաչվածության աստիճանի

բարձրացմանը, համահայկական և համաեվրոպական կրթական դաշտին նրա լիարժեք ինտեգրմանը, մասնագիտական պատրաստման որակի բարելավմանը, ուսանողների մոտ անհրաժեշտ մասնագիտական ու մարդկային որակների ձևավորմանը:

Հատկանշելի է, որ Արցախի պետական համալսարանը որպես կրթարան ընտրող դիմորդների բաժնեմասը Արցախի Հանրապետությունում ընդհանուր դիմորդների թվում կազմում է մոտ 85%, և սա վկայում է Արցախի պետական համալսարանի՝ ԱՀ բարձրագույն կրթության ոլորտում առաջատարը լինելու փաստը ու նաև հավաստում, որ կրթության ներառականության ու բաց միջավայրի առկայության պայմաններում էլ բուհը շարունակում է լինել մրցունակ նաև ՀՀ բարձրագույն կրթական հաստատությունների շարքում:

Մայր բուհ պատվանունը բարձր պահելով և կրթության որակի բարելավումը ուղեգիծ ընտրելով՝ Արցախի պետական համալսարանը իր կեսդարյա հոբելյանի շեմին հավատարմագրման նոր հայտ է ներկայացրել՝ այդպիսով իր կենսագրության մեջ նոր շրջափուլ բացելով և ուղենշելով վստահ ու կենսահաստատ իր պատվավոր երթի նոր շարունակությունը…

ՀՏԴ 398
Ազգագրություն

Արմեն ՍԱՐԳՍՅԱՆ
բ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
e-mail: armen.sarkisyan68mail.ru

ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԸ (ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆ)

Հոդվածում քննության են առնվում 19-րդ դարի կեսերից մինչև 20-րդ դարի սկզբները հրատարակված այն աշխատությունները, ուսումնասիրությունները, ճանապարհորդական ակնարկները, ժողովածուները և այլ նյութերը, որոնք վերաբերում կամ առնչվում են Արցախի ազգագրության: Առանձնակի ուշադրություն է դարձվում 19-րդ դարի վերջերին լույս տեսած «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», «Ազգագրական հանդես» մատենաշարերում ընդգրկված ուսումնասիրություններին:

Բանալի բառեր՝ *ազգագրություն, հանդես, մատենաշար, պարբերական, աշխատություն, ուսումնասիրություն, հոդված, ճանապարհորդություն, նահանգ, գավառ, քաղաք, բնակավայր:*

A. Саркисян

ИССЛЕДОВАНИЕ ЭТНОГРАФИИ АРЦАХА С ПОЛОВИНЫ 19-ГО ВЕКА ДО НАЧАЛО 20-ГО ВЕКА (ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД)

В статье рассматриваются работы, исследования, путешественческие очерки, сборники и другие материалы опубликованные с половины 19-го века до начало 20-го века связанные с этнографией Арцаха. Особое внимание уделяется исследованиям включенным в серии изданий «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края» и «Ազգագրական հանդես» опубликованный в конце 19-го века.

Ключевые слова: *этнография, журнал, серия изданий, периодическое издание, научная работа, исследование, статья, путешествие, губерния, уезд, город, поселение.*

A. Sargsyan

THE INVESTIGATION OF ARTSAKH'S ETHNOGRAPHY FROM THE HALF OF THE 19TH CENTURY TO THE BEGINNING OF THE 20TH CENTURY (PRE-SOVIET PERIOD)

The article deals with works, research, travelling *essay, collections and other materials published from the half of the 19th century to the beginning of the 20th century related to Artsakh's Ethnography.*

Particular attention is given *to the research included in the series of publications «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края» and «Ազգագրական հանդես» issued in the late 19th century.*
Keywords: *Ethnography, journal, series of publications, periodical, scientific work, investigation, article, travel, province, county, city, populated area.*

Հայ ազգագրության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Արցախը, որի արմատները թաղված են հազարամյակների խորքում: Դժբախտաբար հարուստ այդ պատմության բուն ուսումնասիրությունը սկիզբ դրվեց ընդամենը 19-րդ դարի կեսերից: Ընդհանուր առմամբ Արցախի ազգագրության ուսումնասիրության պատմությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք շրջանի՝ նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային: Առաջին շրջանն ամենից առաջ կապվում է 1822թ. Ղարաբաղի խանության վերացման և Ղարաբաղի պրովինցիայի ձևավորման հետ, որը 1840թ. մտնում է Կասպիական մարզի, իսկ 1868-1917թթ.՝ ներառվում Ելիզավետպոլի նահանգի կազմում: Ռուսական կայսրության կազմում հայտնվելուց անմիջապես հետո ուսումնասիրության նյութ են դառնում տարածաշրջանի բնակչության էթնոժողովրդագրական հիմնախնդիրները՝ կապված Անդրկովկասում Ռուսաստանի վարած քաղաքականության հետ: 1866թ. Թիֆլիսում հրատարակվում է *«Описание Карабахской провинции, составленное в 1823 г. действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-ым»* աշխատությունը, որն էլ դառնում է այս բնագավառում կատարվող ուսումնասիրությունների նախադեպը: Այստեղ հեղինակները ներկայացնում են 1822-1823թթ. կազմած ցուցակները, որոնցում ընդգրկված են Ղարաբաղի Շուշի քաղաքի ու գյուղերի բնակչության ու եկամուտների տվյալները: Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունն ընդգրկում է 34 տեղեկագիր և մեկ ընդհանուր ամփոփող ցուցակ, ինչպես նաև Ջեբրայիլից Իրան տեղափոխված ընտանիքների թիվը ներկայացնող մեկ լրացուցիչ ցանկ: Հետագա տարիներին հատուկ ծրագրով տարբեր գիտնականների, հասարակական գործիչների, Շուշի քաղաքի ու որոշ գյուղերի ուսումնական հաստատությունների ուսուցիչների և տեսուչների կողմից Թիֆլիսում հրատարակվող *«Кавказский календарь»*, *«Материалы для изучения экономического быта государственных крестьян закавказского края»*, *«Сборник материалов для описания местностей и племен Кавказа»*, *«Записки Кавказского отдела императорского русского географического общества»* և այլ բազմահատորյակներում ու հանդեսներում, ինչպես նաև Թիֆլիսում, Վաղարշապատում, Շուշիում և այլուր լույս տեսնող տարբեր պարբերականներում տպագրվում են Արցախի ազգագրությանը

վերաբերող և առնչվող տարաբնույթ ուսումնասիրություններ, հոդվածներ, նյութեր, հաղորդումներ[1]:

Դրանց շարքում առանձնահատուկ տեղ ունի 1881 թվականին Կովկասյան ուսումնական օկրուգի՝ Թիֆլիսում հիմնադրած *«Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК)»* հանդեսը: Լույս է տեսել հանդեսի ընդամենը 46 պրակ, որից 44-ը՝ Թիֆլիսում 1881-1915 թվականներին, իսկ 45-րդը և 46-րդը՝ Մախաչկալայում 1926 և 1929 թվականներին: Հանդեսում ռուսերենով տպագրվել են Կովկասի, այդ թվում Հայաստանի տարբեր շրջանների վերաբերյալ ազգագրական, բանահյուսական, լեզվաբանական, հնէաբանական, պատմագիտական բազմաթիվ նյութեր, որոնց հեղինակները հիմնականում տեղական դպրոցներում և գիմնազիաներում աշխատող ուսուցիչներն ու տեսուչներն էին: Ինչ խոսք, որ հեղինակները, չլինելով փորձառու գիտնականներ, աշխատանքները ներկայացրել են նկարագրական եղանակով՝ չկատարելով խոր վերլուծություններ, ինչը սակայն էապես չի ազդում դրանց կարևորության վրա, հատկապես եթե հաշվի առնենք, որ 19-րդ դարի կեսերին ժողովրդագիտությունը մեր տարածաշրջանում դեռևս սկզբնավորման շրջանում էր, և նման ուսումնասիրությունները հաճախ միակ հուսալի աղբյուրն են այդ ժամանակաշրջանի համապատասխան երևույթների հետազոտման մասին: *«СМОМПК»*-ը կարևոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդագիտության ուսումնասիրության գործում՝ միաժամանակ նախատիպ հանդիսանալով 1896 թվականին Շուշիում հիմնադրված *«Ազգագրական հանդեսի»* ու ժողովրդագիտական տարբեր ուսումնասիրությունների համար: Հանդեսում տպագրված ուսումնասիրություններից անմասն չմնաց Արցախը: Դեռևս 1888 թվականին հրատարակված 6-րդ պրակում լույս է տեսել Ն. Գրիգորովի՝ Բեգում Սարով գյուղին նվիրված ուսումնասիրու-

---

[1] *Обзор экономического состояния Елисаветпольской губернии, «Кавказский календарь», Тифлис, 1893. с. 64-85,* ***Уразов Г.****, Медико-топографическиий очерк Джебраильского уезда Елисаветпольской губернии, «Медицинский сборник», Тифлис, 1889, № 50, Карабахские казенные летние пастбища (с картой карабагских летних пастбищ), «Материалы для устройства казенных летних и зимних пастбищ и для изучения скотоводства на Кавказе». Тифлис, т. IV, 1899. с. 1-203,* ***Кара-Мурза Г.,*** *Из сельскохозяйственной жизни Джеванширского уезда , «Кавказское сельское хозяйство», Тифлис, 1903, № 497,* ***Кара-Мурза Г.****, Производство арб и колес в Шушинском и Джеванширском уездах, «Кавказское сельское хозяйство», Тифлис, 1903, № 503,* ***Мириманов Г.,*** *Шелкомотальные заводы в Шушинском и Джебральском уездах , «Труды Кавказской шелководственной станции», Тифлис, 1891, т. II.. с.145-151, Շուշի քաղաք, «Հայկական աշխարհ», Շուշի, 1874, N1-2, էջ 34-39 ,* ***Պլուզեան Մ.****, Արցախ նահանգի Ջրաբերդ գաւառը, «Արարատ», Վաղարշապատ, 1871, թիւ Ը, էջ 440-443,* ***Атабеков Н.****, Карабахские армяне, «Кавказ», Тифлис, 1857, № 56,58,* ***Егоров П.****, Мои поездки по Карабаху, «Русский инвалид», 1857, № 217, 218, 221, 239, 241, 244,* ***Никитин К.,*** *Географическое описание Шушинского уезда, «Кавказ», Тифлис, 1872, № 149; 1873, №1,2, Состояние шелководства в Шушинском уезде, «Кавказ», Тифлис, 1890. № 140 ևն:*

թյունը[1], որի առաջին երկու հատվածներում անդրադառնալով բնակավայրի ընդհանուր բնութագրին, անվան ծագումնաբանությանը, աշխարհագրական դիրքին, բնակելի տների կառուցվածքին, եղանակին ու ոռոգման համակարգին, հիմնական զբաղմունքին (երկրագործություն, անասնապահություն)՝ հեղինակը հաջորդ բաժիններում առավել հանգամանորեն ներկայացնում է գյուղի բնակիչների կենսակերպը, սովորություններն ու կրոնական ծիսակատարությունները: Գրիգորովը ընդգծում է բնակիչների հյուրասիրությունը, առատաձեռնությունը, ինչպես նաև աղքատությունը՝ վերջինիս հիմնական պատճառ համարելով ծուլությունը, ընտանիքների առանձնացվածությունը, ոչ կազմակերպված լինելն ու կատարվող անիմաստ ծախսերը, հարևան բնակավայրերի թաթարների հետ շփումները: Ըստ նկարագրության՝ այդ շփումներն այնքան մեծ են, որ գյուղացիները կատարել են մեծ թվով փոխառություններ, մյուս կողմից լայն տարածում են ստացել թաթարական հագուստի ձևերը և որոշ սովորություններ: Սակայն բեգումսարովցիները նաև ջերմեռանդ կրոնասերներ են և հարազատորեն պահպանում են ազգային սովորությունները: Առանձնակի նկարագրվում է Համբարձման տոնը, որի ժամանակ երիտասարդ աղջիկները երգում էին վիճակի երգեր, պահում Վարդավառի պասը: Բնակիչները հաճախ էին այցելում եկեղեցի, մոմ վառում: Հեղինակի հաղորդման համաձայն՝ վատթար վիճակում է առողջապահությունը. չկան բուժաշխատողներ, և հիվանդությունների դեպքում գյուղացիները դիմում են տեղի հեքիմին ու գուշակին կամ ապավինում սուրբ գրքերին և սրբավայրերին: Հաղորդումից տեղեկանում ենք նաև, որ 1885 թվականի հոկտեմբերի 17-ին բացված Բեգում Սարովի գյուղական ուսումնարանում սովորում էր 35 տղա երեխա, որից 34-ը՝ հայ, մեկը՝ ռուս:

Հանդեսի նույն պրակում է լույս տեսել Ի.Դավիդբեկովի՝ Հադրութ գյուղին նվիրված ուսումնասիրությունը[2]՝ բաղկացած վեց մասից: Առաջին մասում ներկայացվում է գյուղի անվան ստուգաբանությունը՝ այն կապելով պարսկերեն *հա* (միջև), *դու* (երկու) և *րութ* (գետ) բառերի հետ (*երկու գետի մեջ*), ինչպես նաև բնակավայրի տեղագրությունը, տարածքի հնագիտական հուշարձանները *(Կռապաշտի հանգիստարան, Քոհնա հանգիստարան, Ղալին բանդ, Ծծախաչի դալա, Միպտակ խաչ, Վնեսա դալա, Աստղաբլուր, Օխտը դռնի, Մինա-Խորեն, Շաղախ)*, սահմանները: Երկրորդ բաժնում հեղինակն անդրադառնում է գյուղի կառուցվածքին, աղբյուրներին (*Խոր աղբյուր, Շեն աղբյուր*), եղանակին, բուսական և կենդանական աշխարհին: Երրորդ մասում առանձին ենթաբաժիններով

[1] ***Григоров Н.,*** *Село Саров, Елисаветпольской губернии, Джеванширскаго уезда, выпуск шестой, 1888, отдел I, с. 123-132*

[2] ***Давидбеков И.,*** *Село Гадрут, Елисаветпольской губернии, Джебраильскаго уезда, выпуск шестой, 1888, отдел I, с. 153-192*

ներկայացվում է Հադրութի և հարակից գյուղերի բնակչության թիվը (նաև աղյուսակներով), հողային բաժանումները, տուրքերը, ոռոգման համակարգը, բնակիչների զբաղմունքը (*այգեգործություն, երկրագործություն, բանջարաբուծություն, անասնապահություն, արհեստներ*)՝ առավել հանգամանորեն անդրադառնալով խաղողագործությանն ու գինեգործությանը, առևտրին ու մետաքսագործությանը, իսկ չորրորդ բաժնում տեղեկություններ են տրվում բնակավայրի ուսումնական հաստատությունների, կառավարական ու հասարակական կառույցների, դեռևս 1838 թվականին Վանք գյուղում հիմնադրված և 1847-ից Հարութում տեղակայված զինվորական շտաբի վերաբերյալ: Հինգերորդ բաժնում Դավիդբեկովը նկարագրում է բնակավայրի բնակելի կացարանը *(դարադամ)*, կարևոր տեղեկություններ հաղորդում բնակիչների սննդակարգի ու ճաշատեսակների, հագուստի, լեզվի և հավատի մասին՝ նշելով, որ գրեթե յուրաքանչյուր անգրագետ գյուղացի տիրապետում է ռուսերենին, ինչը ռուսական զինվորական շտաբի հետ շփումների արդյունք է: Առավել ծավալուն է վեցերորդ բաժինը, որտեղ նկարագրվում են հարսանիքը, ծնունդը և կնունքը, մահը և թաղումը, ժողովրդական տոներն ու դրանց հետ կապված տարբեր ծիսակատարություններ:

Հանդեսի 1892 թվականի 13-րդ պրակում հրատարակվել է Գ.Իզրայելովի *«Село Касапеть»* ուսումնասիրությունը[1]՝ բաղկացած 6 բաժնից: Առաջին բաժնում հեղինակն անդրադարձել է գյուղի անվան ստուգաբանությանը, պատմությանը, տեղադրությանն ու արտաքին տեսքին, երկրորդ բաժնում՝ ոռոգման համակարգին ու եղանակին, երրորդ բաժնում՝ գյուղի և հարակից տարածքներում գտնվող հնագիտական հուշարձաններին *(Եղին աղբյուր, Ղարիբ խաչ, Ինը մաս, Տրվըրախաչ, Իրեք մանկունք, Քըղըքատեղ, Ջրմոկին դալա, Եղիշե Առաքյալի վանք, Կաթողիկոսարան)*, չորրորդ բաժնում՝ հանքային աղբյուրներին ու հանքավայրերին, հինգերորդ բաժնում՝ կուսապատցիների սովորույթներին, սովորություններին ու նախապաշարմունքներին: Գյուղացիների բնավորության գծերից հեղինակն առանձնացնում է խստությունը, կոպտությունը, հյուրասեր լինելը՝ միաժամանակ շեշտելով հարևան թաթարների բացասական ազդեցությունը, որի արդյունքում տարածվել են գողությունը, վրեժխնդրությունը, թաթարական տարազը, թաթարերեն բառերի հաճախակի գործածությունը, աղջիկ փախցնելու սովորույթը ևն: Նշվում է նաև, որ համատարած իշխում են հին սովորույթներն ու նախապաշարմունքները, հիվանդությունների դեպքում բնակիչները շարունակում են դիմել միայն հեքիմներին ու սրբավայրերին: Վեցերորդ բաժնում նկարագրվում է բնակիչների հիմնական զբաղմունքը

[1] ***Израелов Г.,*** *Село Касапет, Елисаветпольской губернии, Джеванширскаго уезда, выпуск XIII, 1892, отдел I , с.42-58*

(անասնապահություն, հողագործություն, այգեգործություն, գինեգործություն): Մեկ այլ նյութում[1] Իզրայելովը նկարագրել է Ելիսավետպոլի նահանգի Ջևանշիրի գավառում գտնվող *Իստի-սու* հանքային աղբյուրը՝ շեշտելով նրա բուժիչ նշանակությանը: Կարևոր նշանակություն ունի նաև նրա *«Домашнее воспитание армян Джеванширского уезда Елисаветпольской губернии»* ուսումնասիրությունը[2], որտեղ հեղինակն անդրադարձել է Ջևանշիրի գավառում երեխաների դաստիարակության խնդիրներին, երեխաների ու նրանց ծնողների փոխհարաբերություններին:

Ուշագրավ է Օ. Ջեյրանովի աշխատությունը[3], որտեղ հեղինակն առանձին բաժիններով ներկայացնում է Հյուսիսային Արցախի Գետաշեն գյուղի պատմությունը, տեղադրությունը, բնակարանը, եղանակն ու տարածված հիվանդությունները, այգիները, բանջարանոցներն ու անտառները, կենդանական աշխարհն ու որսորդությունը, բնակչության կազմը և զբաղմունքը, պետական տուրքերն ու գյուղական ծախսերը, խաղողագործությունն ու գինեգործությունը, մեղվաբուծությունը, շերամապահությունը, յուղի ստացումը, օճառագործությունը, հագուստը և սննդակարգը, ժողովրդական խաղատեսակները *(Կրպպըտլախտե, Ջրզրլախտե, Փանդի, Չիլինգյի, Պոզի-պոզի, Վեքյի, Հոթի, Չրխկըլդանե)*, տեսարժան վայրերը, վանքերն ու սրբավայրերը *(Գոգ-գել, Չրաղա ծոր, Նահատակ, Եղնասար, Ավագ Սուրբ նշան ևն)*, հավատալիքներն ու նախապաշարումները, տոները *(Մեծ պահք, Ծառազարդար, Վարդավառ, Նավասարդ, Սուրբ Սարգիս (Խաշիլ)*:

Նմանատիպ կառուցվածք ունի Գ. Օսիպովի՝ Քարին տակ գյուղին նվիրված ուսումնասիրությունը[4]: Այստեղ անդրադարձ է կատարվում բնակավայրի հիմնադրմանը, եղանակին, տների կառուցվածքին, բնակիչների զբաղմունքին՝ հատկապես երկրագործությանն ու կրի արտադրությանը, սննդակարգին, տարազին, հավատքին, ընտանեկան կյանքին ու կրթությանը, հասարակական դատին ու պատժամիջոցներին, շրջակայքի քարանձավներին, ժողովրդական տոներին, ամուսնության և հարսանիքի հետ կապված ծիսակատարություններին, սովորություններին, հավատալիքներին ու նախապաշարմունքներին:

Արցախի վերաբերյալ ազգագրական կարևոր նյութեր են ընդգրկված նաև հանդեսում հրատարակված համահավաք ժողովածուներում: 11-րդ

---

[1] ***Израелов Г.***, *Описание минеральнаго источника Истису (теплый ключ), Елисаветпольской губернии, Джеванширскаго уезда, выпуск седьмой, 1889, отдел II, с.84-85*

[2] ***Израелов Г.,*** *Домашнее воспитание армян Джеванширскаго уезда Елисаветпольской губернии, выпуск седьмой, 1889, отдел II, с.73-76*

[3] ***Джейранов О.,*** *Селение Чайкенд, Елисаветпольскаго уезда, той же губернии, выпуск двадцать пятый, 1898, отдел II, с.59-100*

[4] ***Осипов Г.,*** *Селение Даш-Алты, Шушинскаго уезда, Елисаветпольской губернии, выпуск двадцать пятый, 1898, отдел II, с.101-136*

պրակում լույս տեսած *«Промысловыя занятия в некоторых населенных пунктах Закавказья»* աշխատության մեջ[1] ներկայացվում են Շուշի քաղաքում *(գորգագործություն, կարպետագործություն, գուլպայագործություն, գլխարկագործություն, մոմագործություն, կոշկակարություն, օճառագործություն, կաշեգործություն, մորթագործություն, թամբագործություն),* Աղդամի համայնքում *(աղյուսագործություն, օճառագործություն, դերձակություն, երկաթագործություն, գորգագործություն),* Տող գյուղում *(բրդագործություն),* Մոխրենես գյուղում *(փայտանյութի հայթայթում),* Կուսապատ գյուղում *(երկաթագործություն, ատաղձագործություն, բրուտագործություն, տակառագործություն, բամբակագործություն, բրդագործություն),* Հադրութ գյուղում *(մանածագործություն, արծաթագործություն, երկաթագործություն, տակառագործություն, քարագործություն, աղյուսագործություն, կրագործություն, բրուտագործություն)* 19-րդ դարի վերջերին տարածված արհեստները, որտեղ հեղինակները հաճախ հանգամանորեն անդրադարձել են արտադրության եղանակներին ու միջոցներին, հումքի հայթայթմանը, արտադրանքի իրացմանն ու գներին: Նույն պրակի երկրորդ բաժնում լույս տեսած *«Описание кавказскаго шелководства»* աշխատության մեջ ընդգրկված են նաև Ելիսավետպոլի նահանգի Ջևանշիրի, Շուշու և Ջեբրայիլի գավառներում այդ ժամանակաշրջանի շերամապահության ու մետաքսագործության վիճակը ներկայացնող նկարագրությունները[2]:

Հանդեսում է տպագրվել նաև Ե. Մելիք-Շահնազարովի՝ Շուշու գավառի Չանախչի գյուղի Կուսանաց անապատի ու հին գերեզմանոցի նկարագրությունը ներկայացնող նյութը[3]:

18-րդ պրակում է հրապարակված Ա. Կալաշևի նյութը[4], որտեղ նկարագրվում է Գետաշեն գյուղում տոնվող Վարդավառի տոնը, որին հետևում է հեղինակի գրառած՝ այդ տոնի ժամանակ երգվող 122 ջանգյուլում՝ հայերենով (որոշները՝ թաթարերենով)՝ ռուսերեն զուգահեռ թարգմանությամբ:

Հայտնի է, որ դեռևս 19-րդ դարի վերջերին հայ իրականության մեջ բանահյուսական նյութերը հաճախ ներկայացվում էին ազգագրական ու

---

[1] *Промысловыя занятия в некоторых населенных пунктах Закавказья, выпуск одиннадцатый, 1891, отдел I , с.1-79 (Город Шуша.* ***Я. Зедгенидзе, Салах-бек Захар-беков, Амбарцум Тер-Егиазаров****), с.79- 87 (Шушинский уезд: Агдамское общество.* ***Б. Ибрагимбеков****), с.87-88 (Шушинский уезд: селение Туг.* ***М. Погосов****), с.88-89 (Шушинский уезд. Селение Мухренес.* ***М. Погосов****), с.105-113 (Джеванширский уезд. Селение Касапет.* ***Г. Израелов****), с.113-116 (Джебраильский уезд. Село Гадрут.* ***И. Давидбеков****)*

[2] *Описание кавказскаго шелководства, выпуск одиннадцатый, 1891, отдел II, с.87-90 (Джеванширский уезд), с.90-95 (Шушинский уезд), с.96-111 (Джебраильский уезд)*

[3] ***Мелик-Шахназаров Е.****, Из древностей селения Ченахчи (Елисаветпольской губернии, Шушинскаго ыезда), выпуск девятнадцатый, 1894, отдел I, с.78-83*

[4] ***Калашев А.,*** *Вардавар (сел. Чайкенд, Елисаветпольской губернии), выпуск восемнадцатый, 1894, отдел второй, с.1-36*

ժողովրդագիտական այլ նյութերի հետ միասին: Նմանատիպ բազմաթիվ նմուշներ, հատկապես ավանդություններ են ընդգրկված վերոհիշյալ ուսումնասիրություններում:

Արցախի ազգագրության ուսումնասիրության պատմության մեջ կարևոր նշանակություն ունեն 1885-1887թթ. Թիֆլիսում հրատարակված *«Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края (МИЭБГКЗК)»* հատորաշարում ընդգրկված նյութերը: 4-րդ հատորում հրապարակված աշխատության մեջ[1] Ա. Դեկոնսկին հանգամանորեն անդրադառնում է Ելիզավետպոլի նահանգի Շուշիի ու Ջեբրայիլի գավառների աշխարհագրական դիրքին ու սահմաններին, բնակչության թվին ու էթնիկ կազմին, հողային բավարարվածությանը, հանրային հողատարածքների մակերեսներին, ոռոգման միջոցներին, հողերի սեփականության ձևերին ու օգտագործման եղանակներին, վարելահողերին, արոտավայրերի տեսակներին և հասարակության վերաբերմունքին դրանց նկատմամբ, անտառահատմանը և անտառային նյութերի թողարկմանը, գյուղացիների բարեկեցության աղբյուրներին, երկրագործությանը (ցանքաշրջանառություն, հացահատիկի տեսակներ, ցանքսի ժամանակ, հացահատիկի մաքրում, սերմերի քանակ), այգեգործությանը, մետաքսագործությանը, անասնաբուծությանը, խոզաբուծությանը, մյուս եկամուտներին և այլ հարցերի: Կարևոր նշանակություն ունեն նաև ուսումնասիրության վերջում տեղադրված տեղեկագրերը, որոնցում արտացոլված են տեղեկություններ հետազոտված գյուղերի, գյուղերում հողի քանակի և ըստ ծխերի ու շնչերի տեղաբաշխման չափի, հարկերի ու տուրքերի, ըստ ծխերի ու շնչերի հողի տասնորդականի համար նախատեսված հարկերի չափի մասին նև:

6-րդ հատորում է ընդգրկված Ա. Խան-Ագովի ուսումնասիրությունը[2], որտեղ հեղինակն առանձին բաժիններով ներկայացնում է Ելիզավետպոլի նահանգի Ջևանշիրի գավառի աշխարհագրական դիրքն ու բնական հարստությունները, բնակչությունը՝ ըստ էթնիկ կազմի, սեռերի, հավատի, բնակավայրերի, գրագիտության նև, հողատարածքները՝ ըստ բաշխվածության, տեսակների, օգտագործման նպատակների, ոռոգման համակարգը, անտառները, ամառային ու ձմեռային արոտավայրերը, նրանցից գյուղական համայնքների օգտվելու կարգը, բնակչության եկամուտի աղբյուրներն ու զբաղմունքը (երկրագործություն, խաղողագործություն, շերամապահություն, անասնապահություն, արհեստներ), հարկերն ու հարկատեսակները նև: Ուսումնասիրությանը կցված են նաև նշված բնա-

[1] ***Деконский А.,*** *Экономический быт государственных крестьян Шушинского и Джебраильского уезда Елисаветпольской губернии, 1886, т. IV, с. 221-385*

[2] ***Хан-Агов А.,*** *Экономический быт государственных крестьян Джеванширского уезда Елисаветпольской губернии, Тифлис, 1887, т.VI, ч.2-ая, с.335-435*

գավառների մասին հանգամանալից տեղեկություններ պարունակող ցանկեր:

Նմանատիպ կառուցվածք ունի Ն. Աբելովի՝ 7-րդ հատորում հրապարակված աշխատությունը[1], որտեղ հեղինակը Ելիզավետպոլի նահանգի շրջանակում անդրադառնում է նաև Ղարաբաղի որոշ բնակավայրերի:

Հայ ու մասնավորապես Արցախի ազգագրության պատմության մեջ աննախադեպ երևույթ էր 1896 թվականին նշանավոր ազգագրագետ Ե. Լալայանի՝ Շուշի քաղաքում հիմնադրած *«Ազգագրական հանդես»*-ը, որով էլ *«հիմք դրվեց հետագա ժողովրդագիտական ուսումնասիրությունների համար»*[2]: Կարճ ժամանակում հանդեսի շուրջն են համախմբվում անվանի մտավորականներ Մ. Աբեղյանը, Լեոն, Ստ. Մալխասյանը, Հր. Աճառյանը, Թ. Թորամանյանը, Ե. Շահազիզը, Խ. Սամվելյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Վ. Փափազյանը, Գ. Լևոնյանը և շատ ուրիշներ, որոնք, նաև ակտիվ աշխատակցելով հանդեսին, տպագրում են ժողովրդագիտական մնայուն արժեքներ ներկայացնող իրենց ուսումնասիրություններն ու ժողովածուները: Հանդեսի խմբագրությունը շուտով տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ լույս են տեսնում երկրորդ և հաջորդ համարները: Ընդհանուր առմամբ 1896-2016 թթ. տպագրվում է հանդեսի 26 գիրք, որտեղ լավագույնս ներկայացվում են հայ և առանձին ազգագրական շրջանների ազգագրական, բանահյուսական, բարբառագիտական, հնագիտական և տարաբնույթ այլ ուսումնասիրություններ, ժողովածուներ, նյութեր:

«Ազգագրական հանդես»-ի հիմնադրումը ու նրա առաջին գրքի լույսընծայումը Շուշիի Մահտեսի Հակոբյանի տպարանում առանձնակի կարևորություն ունեցավ Արցախի և մասնավորապես Շուշիի հոգևոր կյանքում, որը 19-րդ դարի վերջին իր նշանակությամբ համարվում էր Անդրկովկասի երրորդ քաղաքը[3], և որտեղ բուռն վերելք էին ապրում հասարակական կյանքը, մշակույթն ու կրթությունը: Պատահական չէ, որ հենց Շուշիում, իր շուրջը համախմբելով Արցախի մի խումբ մտավորականների, Ե. Լալայանը գավառի տարբեր բնակավայրերից կարճ ժամանակում հավաքում է ազգագրական հարուստ նյութ, որն էլ խմբագրելով, լրացնելով և ամբողջացնելով Վարանդային վերաբերող՝ տարբեր լեզուներով հրատարակված և արխիվային ձեռագիր նյութերով ու պաշտոնական վիճակագրական տեղեկություններով կազմված մի շարք

---

[1] ***Абелов Н.***, *Экономический быт государственных крестьян Елисаветпольского уезда, 1887, т. 7, с.1-141*

[2] ***Խեմչյան Է.***, *Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները), «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 343*

[3] *Нагорный Карабах (историческая справка), Ереван, 1988, с. 83*

աղյուսակներով ու տախտակներով *«Վարանդա»* ընդհանուր խորագրով հրատարակում է հանդեսի երկրորդ և երրորդ գրքերում[1]:

Բ գրքում տեղադրված ժողովածուի բաժինների մեծ մասի նյութերը հավաքել է Ե. Լալայանը: Որպես հեղինակներ են նշված նաև Լ. Աթաբեկյանը՝ *«Ստատիստիկական տեղեկություններ (Շուշու ամբողջ գավառի մասին)»,* Ղ. Տեր-Ղազարյանը՝ *«Տնտեսական դրություն»,* Վ. Յ.-ն՝ *«Տղաբերք և կնունք»,* Բ. Ա.-ն՝ *«Ընտանեկան կեանք»,* Յ. Տեր-Հովհաննիսյանը՝ *«Հիվանդություն և բժշկություն»:*

Ժողովածուն սկսվում է *«Մի երկու խոսք Վարանդայի պատմական անցեալի մասին»* բաժնով[2], որտեղ տրվում է Վարանդա գավառի համառոտ պատմությունը, առանձին անդրադարձ է կատարվում Ամարաս վանքին:

«Վարանդայի տեղագրությունը»[3] բաժնում առանձին ենթաբաժիններով ներկայացվում են գավառի սահմանները, լեռները, դաշտերը, գետերը, լճերը, աղբյուրները, քարայրերը *(Հունոտի կարան, Շմանեք, Ավանա կարան, Որվան կարան, Ծծքարի կարան),* կլիման, բուսական և կենդանական աշխարհը, հանքերը, Շուշի քաղաքը և նշանավոր գյուղերը *(Ավետարանոց, Շոշու գյուղ, Կյունի Ճարտար, Սարուշեն, Վարազաբուն, Նոր Թաղլար),* նշանավոր վանքերը *(Ամարաս, Ս. Գրիգորիս, Կուսանաց անապատ, Ղևոնդյանց անապատ, Եղիշա կուսի անապատ, Բոի եղցե, Կարմիր եկեղեցի, Բողրխանի վանք, Մավասի վանք, Շոշկա վանք),* նշանավոր բերդերը *(Աղջկաբերդ, Ղալին խութ, Բրդահոնջին դալա):*

Շուշի քաղաքի և ամբողջ գավառի մասին վիճակագրական լուրջ տեղեկություններ են տրվում *«Ստատիստիկական տեղեկություններ (Շուշու ամբողջ գավառի մասին)»*[4] բաժնում: Ուշագրավ են 1886 և 1895 թվականների բնակչության թիվն ու խտությունը, բնակչությունն ըստ ազգությունների և դավանությունների, ըստ բնակության տեղի (քաղաքում և գավառում), ինչպես նաև բնակչության շարժը՝ ամուսնությունները, ծնունդները, մահացությունը, հայ բնակչության աճը ներկայացնող աղյուսակներն ու համապատասխան վերլուծությունները:

Ծավալուն և բովանդակալից է *«Տնտեսական դրություն»*[5] բաժինը, որտեղ հանգամանորեն ներկայացվում է Վարանդայի բնակչության տնտեսական զբաղմունքը՝ երկրագործությունը, այգեգործությունը, անասնապահությունը, շերամապահությունը, մեղվաբուծությունը, ձկնորսությունը, որսորդությունը, արհեստները, գործարանային արդյունաբերությունը, առևտուրը՝ անհրաժեշտ աղյուսակներով:

---

[1] ***Լալայան Ե.***, *Վարանդա. Նյութեր ապագայ ուսումնասիրութեան համար, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1897, Բ գիրք, էջ 5-244, Վարանդա, նշանաւոր տօներ, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898, Գ գիրք, էջ 338-349*

[2] *Բ գիրք, էջ 5-8*

[3] *Նույնը, էջ 9-53*

[4] *Նույնը: էջ 54-76*

[5] *Նույնը, էջ 77-101*

Հաջորդ՝ *«Լուսաւորութիւն»* բաժնում[1] Լալայանն անդրադառնում է դպրոցներին, գրադարաններին, պարբերական հրատարակություններին, թատրոնին, տպարաններին, ոճրագործությանը, փոստին՝ քննության արդյունքները ներկայացնելով տարբեր աղյուսակներով:

«Ընտանեկան բարք» խորագրի տակ առանձին բաժիններով՝ *«Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ»*[2], *«Տղաբերք և կնունք»*[3], *«Ընտանեկան կեանք»*,[4] *«Հիվանդութիւն և բժշկութիւն»*[5], *«Մահ, թաղումն և մեռելոց»*[6], *«Հոգու և հանդերձեալ կեանքի մասին»*[7], հանգամանորեն լուսաբանված են ընտանեկան բարքերն ու ծեսերը: Ամուսնությունը և հարսենական սովորությունները քննելիս հեղինակն առանձին ենթավերնագրերի տակ անդրադառնում է այնպիսի ծեսերի ու երևույթների, ինչպիսիք են՝ *օրորոցի նշանադրությունը, շալակի նշանադրությունը, ծաղկազարդի նշանադրությունը (բարգյահ), օջախի պսակը, թոնրի պսակը, առևանգմամբ ամուսնությունը, գնմամբ ամուսնությունը, լեվիրան, ծախսը, աղջիկ ուզելը, նշանդրեքը, խոնչա տանելը, հրե կտրելը, տըշտըմաղը, քավորը, հանդերձօրհնեքը, սափրելու ծեսը, հարսնառ գնալը, փըթեթօրհնեքը, պսակ գնալը, հարսի օժիտը, հարս տանելը, մեծարքը, մկրկոչեքը:*

Ընտանեկան կյանքը նկարագրելիս վերլուծության են ենթարկվում նահապետական ընտանիքի բարքերը, տրվում են ազգակցության աստիճանները, անդրադարձ է կատարվում նաև բարոյականությանը. նշվում են նահապետական բարքերի ու բարոյական ըմբռնումների անկման պատճառները, որոնցից են պանդխտությունը, երկրի դիրքը, գործարանները, զորքը և այլն:

«Հիվանդութիւն և բժշկութիւն» բաժինը ներկայացնում է գավառում տարածված մի շարք հիվանդություններ՝ *ականջի վշշոց, աչքացավ, անքնություն, արյունահոսություն, այտուռուց, ատամնացավ, այրված մարմին, բարակացավ, բերանհարենք, գլխացավ, լուծ, խավարան, խոլերա, խլություն, կատաղած շան կծած, կողքի ծակոց, կտրված մաշկ, կապույտ վերք, հազ, հարբուխ, միզակապություն, մատնաշունչ, մազոլ, մոլոքոր, ոսկրաբեկ, ոտների քրտինք, գնդակի վերք, տաքություն, ցավ տված մկանուք, փայծաղի մեծանալը, փորացավ, փորկապություն, օձի թույն,* և դրանց բուժման ժողովրդական միջոցներն ու հիվանդությունների տարածման հիմնական պատճառները:

---

[1] *Նույնը, էջ 102-112*
[2] *Նույնը, էջ 113-144*
[3] *Նույնը, էջ 144-150*
[4] *Նույնը, էջ 151-172*
[5] *Նույնը, էջ 173-178*
[6] *Նույնը, էջ 178-184*
[7] *Նույնը, էջ 185-186*

Համառոտ տրվում են նաև մահվան և թաղման հետ կապված ծեսերը, հոգու և հանդերձյալ կյանքի մասին ժողովրդի պատկերացումները:

Աշխատության մեջ ամենաընդարձակը *«Հավատք»* բաժինն է, որտեղ նշանավոր ազգագրագետն առանձին ենթաբաժիններով քննության է առնում լեռների, քարերի, կրակի, ջրի, ծառերի, կենդանիների, լուսավորների պաշտամունքի ձևերը, անդրադառնում նաև քաջքերին և սատանաներին, կախարդությանն ու սնոտիապաշտություններին:

Աշխատության երկրորդ մասի[1] հեղինակը նույնպես Ե. Լալայանն է, ով ուսումնասիրության համար, ինչպես նշում է, բացի իր հավաքած նյութերից, օգտագործել է Ալլահվերդյանի, Վարդապետյանի, Հովհաննիսյանի և ուրիշների՝ տարբեր գյուղերից հավաքած նյութերը[2]: *«Նշանաւոր տօներ»* խորագիրը կրող այս բաժնում ամենայն մանրամասնությամբ քննության են առնված 19-րդ դարի վերջին Վարանդայում տարածված տոները՝ *Նոր տարի, Ծնունդ և ջրօրհնէք, Սուրբ Սարգիս, Բարեկենդան, Տյառնընդառաջ, Մեծ պաս, Ծաղկազարդ, Չարչարանաց շաբաթ, Զատիկ, Համբարձում, Լուսավորչի պաս, Վարդավառ, Նավասարդ,* դրանց հետ կապված զանազան ծեսերը, կերակրատեսակները, խաղատեսակները և այլ հանգամանքներ:

Կարևոր նշանակություն ունեն աշխատության մեջ ընդգրկված լուսանկարները՝ *«Շուշի», «Շուշեցի հայ կինն ու իր թոռը», «Շուշեցի այան ու հարսը», «Շուշեցի կինը փողոցում», «Մոլլան ազան տալիս», «Զենքեր», «Շուշու ջրկիր», «Վարանդեցի հայ գեղջկուհի», «Վարանդեցի հայ կին»,* որոնք այդ ժամանակաշրջանի եզակի նմուշներից են, ինչպես նաև բանահյուսական նյութերը[3]:

«Ազգագրական հանդեսի» 17-րդ, 18-րդ և 19-րդ գրքերում է ընդգրկված Ա. Դադյանի *«Վարանդայի բանաւոր գրականութիւնից»* ժողովածուն[4], որտեղ ընդգրկված են հեղինակի՝ 1903 թ. և նրա եղբոր՝ նշանավոր ժողովրդագետ Խ. Դադյանի՝ 1885-1889թթ. Վարանդայի, մասամբ նաև Դիզակի և Խաչենի գյուղերից գրառած ժողովրդական վիճակի երգեր՝ջանգյուլումներ:

Արցախի ժողովրդագիտությանն առնչվող նյութեր են տպագրվել նաև *«Ազգագրական հանդես»*-ի այլ համարներում:

---

[1] *Գ գիրք, էջ 338-349*

[2] *Նույնը, էջ 349*

[3] *Մանրամասն տե՛ս* ***Վարդանյան Մ.****, Վարանդայի բանավոր մշակույթը Ե. Լալայանի և նրա թղթակից բանահավաքների գրառումներում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2015, N2, էջ 356-367*

[4] ***Դադեան Ա.****, Վարանդայի բանաւոր գրականութիւնից, «Ազգագրական հանդես», XVII գիրք, Թիֆլիս, 1908, N1, էջ 37-48, XVIII գիրք, Թիֆլիս, 1908, N2, էջ 25-32, XIX գիրք, Թիֆլիս, 1910, N1, էջ 85-89*

Դեռևս Շուշիում 1896 թվականին հրատարակված Ա գրքում է հրապարակվել Լ. Բաբայանի *«Խոջալլուի գերեզմանները»* հաղորդումը[1]՝ նվիրված Պետերբուրգի հնագիտական ընկերության անդամ, Շուշիի ռեալական դպրոցի գերմաներենի ուսուցիչ Է. Ռոսլերի՝ Ղարաբաղում, հատկապես Խոջալլու և Առաջաձոր գյուղերում 19-րդ դարի վերջերին կատարած հնագիտական պեղումներին: Հաղորդումից տեղեկանում ենք, որ գերմանացի հնագետը պեղումների արդյունքում հայտնաբերել է շինությունների մնացորդներ, կուրգաններ, անոթներ, դրամներ, զենքեր, զարդարանքներ, գործիքներ, սափորներ, որոնց մի մասը պատված է գեղեցիկ զարդաքանդակներով, *«որ ցոյց են տալիս այդ տեղի բնակիչների գեղարուեստական զարգացած ճաշակը»*[2]:

Մեկ այլ՝ Ջեբրայիլի գավառի Ղարաբուլաղ գյուղում կատարված պեղումների մասին հաղորդում է տպագրել Ե. Լալայանը[3]: Հանդեսի XIII գրքում է տպագրված Ի. Հարությունյանի *«Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց»* հոդվածը[4], որտեղ ներկայացնելով արցախցի նշանավոր հոգևորականի կյանքն ու գործունեությունը՝ անդրադարձ է կատարվում նաև նրա ժողովրդագիտական աշխատություններին և հրատարակություններին:

Արցախի ազգագրության վերաբերյալ կարևոր տեղեկություններ են ընդգրկված հայ և օտարազգի մի շարք գործիչների՝ նախախորհրդային շրջանում Արցախում կատարած ճանապարհորդությունների արդյունքներն ամփոփող աշխատություններում ու ժողովածուներում[5]: Դրանցում հեղինակներն անդրադառնում են տարածաշրջանի և նրա տարբեր բնակավայրերի, սրբավայրերի, հնությունների, եկեղեցիների, վանքերի, լեռների, գետերի, բուսատեսակների ևն նկարագրությանը, աշխարհագրական դիրքին, կլիմային, բնակչության թվին, էթնիկ կազմին,

---

[1] *«Ազգագրական հանդես», Շուշի, Ա գիրք, էջ 37-40*

[2] *Նույնը, էջ 39*

[3] *«Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1897, Բ գիրք, էջ 307-308*

[4] *«Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1906, XIII գիրք, N1, էջ 227-228*

[5] ***Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, մասն Բ, Տփխիս, 1858, **Թաղիադյան Մ.**, Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթայ, 1847, **Гакстгаузен А.**, Закавказский край. Заметки о семейной и общественной хизни и отношениях народов, обитающих между Черным и Каспийским морями, Санкт-Петербург, 1857, Часть I, 248с., Часть II, 215с., (Верещагин В.), Путешествие по Закавказью в 1864-1865 гг. **Василия Верещагина**, «Всемирный путешественник», т. 7. Санкт-Петербург, 1870. с.209-305, **Բաբախանեան Ա.,** Ուխտավորի հիշատակարանը, Շուշի, 1885, **Բաբախանեան Ա.**, Իմ հիշատակարանը, Շուշի, 1890, Հայկունի (**Եղիշե (Հովակիմ) ավագ քահանա Գեղամեանց**), Ուղեգնացական ակնարկներ, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1885թ. (հունիսի 16-ից դեկտեմբերի 5-ը լույս տեսած 46-95-րդ համարներում), **Րաֆֆի**, Երկու ամիս Արուանից և Սիւնեաց աշխարհներում, «Լումայ», Թիֆլիս, 1896, Գիրք Ա., էջ 60-109, Գիրք Բ., էջ 193-228, **Madame B. Chantre**, A travers Larmenie Russe, Paris, 1893, **Сераль И.**, Елисаветпольская губерния, впечатления и воспоминания, Тифлис, 1902, **Բարխուտարեանց Մ.**, Պատմութիւն Արուանից, Վաղարշապատ, 1902, հ. 1 Աղուանից երկիր և դրացիք ևն*

տնտեսական զբաղմունքին, սովորություններին, հավատալիքներին, հաղորդում պատմական, վիմագրական, ազգագրական, բանահյուսական, վիճակագրական, կրթական կարևոր տեղեկություններ:

Այդ շարքում առանձնակի կարևորություն ունի Մ. Բարխուդարյանի *«Արցախ»* ժողովածուն[1], որտեղ առանձին բաժիններով և ենթաբաժիններով նկարագրվում են Արցախ նահանգի սահմանները, լեռները, դաշտերը, դաշտակները, հովիտները, գետերն ու գետակները, մեծ աղբյուրները, հանքային սառն ու տաք ջրերը, լճակները, անտառները, բուսական ու կենդանական աշխարհը, հանքերը, գավառները, նրանց կազմում գտնվող բնակավայրերը, պատմաճարտարապետական հուշարձանները՝ վանքերը, եկեղեցիները, մատուռները, ապարանքները, սրբավայրերը, քարայրերը, բերդերը, հին բնակատեղիները ևն: Առանձնակի անդրադարձ է կատարվում յուրաքանչյուր բնակավայրի աշխարհագրական դիրքին, բնակչության (արական և իգական) ու ծխերի թվին, կյանքի միջին տևողությանը, զբաղմունքին, հողատեսակներին, ստացվող բերքերին, եկեղեցիներում պահվող գրչագրերին ևն: Վերջում տրվում են ծանոթություններ, հատուկ անունների, ավերակ բնակատեղիների, բերդերի, վանքերի ու մատուռների, քարայրերի ցանկեր և առանձին գավառների ու քաղաքների բնակչության, ծնունդների, պսակների, ննջեցյալների, եկեղեցիների, քահանաների մասին տեղեկատվական ամփոփագիր:

Կարևոր են *«Записки Кавказского отдела императорского русского географического общества»* հանդեսի 18-րդ հատորում ընդգրկված՝ Ելիսավետպոլի նահանգի, այդ թվում՝ Ջեբրայիլի, Ջևանշիրի ու Շուշիի գավառներին վերաբերող երկու ուսումնասիրությունները[2], որոնցից առաջինում ներկայացվում են նշված գավառների տնտեսության վերաբերյալ 1894թ. վիճակագրական տվյալները, առանձին ենթաբաժիններով անդրադարձ է կատարվում երկրագործությանը, բանջարաբուծությանը, ծխախոտագործությանը, բամբակագործությանը, գինեգործությանը, օղեգործությանը, անասնապահությանը, մետաքսագործությանը, հանքագործությանը, առևտրին, բնակչության կազմին ու շարժին ևն, իսկ երկրորդում առանձին աղյուսակներով ու

---

[1] ***Բարխուդարեանց Մ.****, Արցախ, Բագու, 1895*

[2] *Краткая статистическая сведения о Елисаветпольской губернии за 1894 год, «Записки Кавказского отдела императорского русского географического общества», книжка XVIII, Тифлис, 1896, с. 423-439, Этнографические карты губерний и областей Закавказского края, составленная правителем дел Кавказского отдела Императорского русского географического общества* ***Е. Кондратенко*** *по своду статистических данных о населения Закавказя, извлеченных из посемейных списков1886 года, изданному по распаряжению главноначальствующего Закавказским статистическим комитетом в 1893 г., «Записки Кавказского отдела императорского русского географического общества», книжка XVIII, Тифлис, 1896, Приложение, I, с. 1-46*

սյունակներով տվյալներ են հաղորդվում այդ գավառների ու նրանց որոշ բնակավայրերի վերաբերյալ՝ ըստ զբաղեցրած տարածքների (քառակուսի վերստերով, դեսյատիններով, միլերով, կիլոմետրերով), բնակավայրերի քանակի, բնակչության թվի (ըստ ընտանիքների, արական և իգական սեռերի, խտության, էթնիկ կազմի):

Հիշատակության արժանի է նաև Ս. Զավարյանի ուսումնասիրությունը[1]: Այստեղ հեղինակը ներկայացնում է Բաքվում գործող Հայկական կուլտուրական միության ագրարային մասնաճյուղի առաջարկությամբ 1906թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Արցախում, մասնավորապես՝ Շուշիում, Խաչենում և Վարանդայում կատարած իր շրջագայությունների ժամանակ տեղի բնակավայրերից, պատկան մարմիններից, ինչպես նաև պարբերական մամուլից հավաքած տեղեկատվությունը՝ որոշակի դասակարգումներով ու վերլուծություններով: Առանձին բաժիններով համառոտակի բնութագրվում են Արցախի տեղագրական առանձնահատկությունները, բնական պայմանները, կրթության և մշակույթի վիճակը և առանձնահատկությունները, հողատիրության պայմանները, ցանքատարածությունների ու բերքատվության չափերը, գյուղացիների տնտեսական վիճակն ու գյուղի շերտավորումը, կողմնակի եկամուտները, արդյունաբերությունը, տարագնացությունը, վաշխառությունը, տնտեսական կյանքի այլ կողմերը: Ուսումնասիրության մեջ ընդգրկված են նաև նշված բնագավառների մասին տեղեկություններ պարունակող ցանկեր:

Սրանով չեն սպառվում Արցախի ազգագրությանը վերաբերող և առնչվող՝ նախախորհրդային շրջանում կատարված ուսումնասիրությունները: Նման նյութեր են ընդգրկված նաև Արցախի պատմությանը, բանահյուսությանը, բարբառին, այլ բնագավառներին նվիրված աշխատություններում, ժողովածուներում, հոդվածներում, պատկերագրքերում, գեղարվեստական ստեղծագործություններում, այլ աշխատանքներում:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:

[1] ***Заварян С.,*** *Экономическая условия Карабага и голод 1906-1907 гг., Санкт-Петербург, 1907, 87 с.*

ՀՏԴ 904
Հնագիտություն

Վարդգես ՍԱՖԱՐՅԱՆ
պ.գ.թ. դոցենտ, ԱրՊՀ պատմության ամբիոն
Մանուշ ՏԻՏԱՆՅԱՆ
ՇՏՀ, ճարտարապետ

ՍՈՍ ԳՅՈՒՂԻ «ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՍԱՐ» ՈՒԽՏԱՏԵՂԻԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հոդվածում ներկայացվում են ԱՀ Մարտունու շրջանի Սոս գյուղում 2019 թ. հուլիս-օգոստոս ամիսներին կատարած հնագիտական հետազոտությունների առաջին արդյունքները: Հետազոտությունների ընթացքում գտնվել են սյուն-կոթողի մասեր, ինչպես նաև բացվել են մատուռ– եկեղեցու պատերը:
Բանալի բառեր՝ *Սոս, Սբ. Լուսավորիչ, Սբ.Գրիգորիս, եկեղեցի, խաչակալ, ճրագ :*

В. Сафарян, М.Титанян

ПЕРВЫЕ РЕЗУЛЬТАТЫ АРХЕОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ ХРИСТИАНСКОГО СВЯТИЛИЩА НА «ГОРЕ ПРОСВЕТИТЕЛЯ» В С. СОС

В статье представлены первые результаты археологических исследований христианского святилища в с. Сос, осуществленных в июле-августе 2019 г., в ходе которых были выявлены части раннехристианских стел, а также остатки стен христианской церкви.
Ключевые слова: *Сос, святилище, Св. Просветитель, Св.Григорис, маслянный светильник,*

V. Safaryan, M.Titanyan

THE FIRST RESULTS OF ARCHAEOLOGICAL EXCAVATIONS OF THE CHRISTIAN SANCTUARY ON THE "MOUNTAIN OF THE ILLUMINATOR" IN THE VILLAGE OF SOS

The article presents the first results of archaeological excavations of the Christian sanctuary in the village of Sos, carried out in July-August 2019, in which parts of the early Christian steles, as well as the remains of the walls of the Christian church were identified.
Keywords. *Sos, sanctuary, St.Illuminator, St. Grigoris, oil lamp*

Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղը գտնվում է պատմականորեն ձևավորված վաղ քրիստոնեական հարուստ

ժառանգություն ունեցող տարածքում:[1] Գրավոր աղբյուրներում Սոս գյուղը հիշատակվում է 19-րդ դարի կեսերից, չնայած որ այս տարածքը բնակեցված է եղել առնվազն մ.թ.ա. 2-1 դարերում, ինչի մասին են վկայում նրա տարածքում հայտնաբերված կարասային թաղումները: Սոս գյուղը միջնադարյան կոթողներով հարուստ Արցախի բնակավայրերից մեկն է:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում գյուղի արևելյան կողմում բարձրացող «Լուսավորչի սար»-ի հնությունները:

Հուշարձանը գտնվում է «*Լուսավորչի սար*» կոչվող կոնաձև, անտառապատ բլրի գագաթին, որի արևմտյան ստորոտում է տեղադրված Սոս գյուղը: Սարի բարձրությունը ծովի մակերեսից - 993 մ է: Հուշարձանի տարածքը հավասար է մոտավորապես 1.1 հա:(նկ.1)

Դեռևս 19-րդ դարի կեսին Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը գրում էր. «*Լուսավորչի սար*, բարձրացած է գիւղիս գլխին վերև՝ արևելեան հանդէպ: Սարիս կատարին վերայ կան շատ թափուած քարեր, տնաբակեր և եկեղեցու աւերակ: Աւանդաբար պատմում են. «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ կողմերումս քարոզելու և եկեղեցիներ հիմնարկելու ժամանակ գիշերն բարձրացած է սարիս գլուխն և աղոթքով լուսացրած գիշերները: Սուրբ Գրիգորիս Աղուանից կաթուղիկոսի մարմինը երբ փախցրած բերում են նորա աշակերտներն Դարբանտից այստեղ, նահատակել տուող թագաւորի զորականներն, փախցնողների ետևից ընկած, գալիս են մինչև այստեղ: Սակայն աշակերտներն ապաւինելով յԱստուած և դիմելով Սուրբ Լուսաւորչի աղոթած տեղն, ազատ են մնում հալածողներից և ապա նահատակուած Սուրբ Գրիգորիսի մարմինը տանում թաղում Ամարասի վանքում և իրանք փախչում դէպի Հայաստան»:[2]

2012 թ. ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության վարչության կողմից պատրաստվել է այս հուշարձանի պահպանական գոտու նախագիծը, համաձայն որի՝ այն անվանվել է «Վանական համալիր Սբ. Լուսավորիչ»: Ըստ այդ նախագծի՝ այստեղ են գտնվում – «եկեղեցի և հնարավոր է գավիթը, բազմաթիվ բնակելի տների, բազմասենյականոց շինությունների փլատակներ, որոնք շրջապատված են եղել պարսպապատով»:[3]

2019 թ. հուլիս ամսվա կեսերին հուշարձանի տարածքում, մասնավորապես, ուխտատեղում, **ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության** նախարարության թույլտվությամբ և գյուղի բնակիչ բարերար Յաշա Դադասյանի հովանավորությամբ, «Լուսավորչի սար» հնավայրում մաքրման աշխատանքներ են ձեռնարկվել:

---

[1] *Վաղ քրիստոնեական ճարտարապետական ժառանգության հետքեր հայտնի են Ճարտար, Բերդաշեն, Մաճկալաշեն գյուղերի շրջակայքում, սբ. Եղիշե վանքում, և իհարկե, Ամարասում:*

[2] ***Մ. եպս. Բարխուտաեանց*** *Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, Երևան, 1999, էջ 219-220:՝*

[3] *ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության վարչություն*

Սրբավայրի մաքրման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են նյութեր, որոնք վկայում են սրբավայրի վաղ քրիստոնեական ծագման մասին:Դրանցից է մաքրվող տեղանքի կենտրոնում գտնվող քարե տոռաձև խարիսխը, որի վրա կատարվում էր մոմավառություն, ինչի հետևանքով քարե խարիսխը ճաքել է և բաժանվել երկու անհավասար մասերի (նկ. 2):

Սրբավայրը մաքրելուց հետո, բացվեց արևմուտքից արևելք ուղղությամբ շինություն, որի արևելյան կողմում հատակը բարձրացված է: Ծավալային նման լուծումն ու ուղղվածությունը վկայում են, որ գործ ունենք քրիստոնեական մատուռի կամ եկեղեցու հետ: Սրբարանը, կառուցված է առանց շաղախ, կոպտատաշ քարե շարվածքով, ունի անկանոն՝ 9.7 x 6.0մ հատակագիծ:[1](նկ. 3):

Սրբարանի հարավ-արևելյան անկյունից 1,45 մ արևելք բացվել է հյուսիս-հարավ կողմնորոշում ունեցող կոպտատաշ քարերով շարված պատի հատված: Այստեղ գտնվել է կղմինդրների երկու բեկոր՝ զարդարված շտամպով՝ արված խաչաձև նախշով (նկ.4):

Սրբարանի տարածքը լցված հողից, փոքր թափված քարերից, թփերից ու ծառերից և դրանց արմատներից մաքրելու ժամանակ բացվել են փոքր և մեծ անտաշ թափված քարերի կուտակումներ՝ խառնված կղմինդիրների և զարգացած միջնադարով թվագրվող կավանոթների բեկորներ, ինչպես հասարակ, այնպես էլ՝ ջնարակած (նկ.5): Գտնված կղմինդիրները վկայում են, որ սրբարանի մոտակայքում եղել է սրբատաշ քարերով ավելի մեծ կառույց[2], իսկ մեր կողմից բացված սրբարանը հավանաբար ունեցել է ավելի համեստ տեսք և հարթ, գերանակապ տանիք:

Մատուռ-սրբարանի ներսում գտնվել են մեծ քանակությամբ ճրագներ հիմնականում՝ բեկորային: Գտնված ճրագները մեծ մասամբ պատկանում են բաց ճրագների տիպին (նկ.6):[3] Ճրագների մեջ ձևաբանական տարբերություն համարյա չկա. բոլոր ճրագները ունեն հարթ հատակ: Հատակի տրամագիծը տատանվում է 5 -7 սմ, իսկ բերանի տրամագիծը՝ 5 - 9 սմ.:

Գտնվել են նաև կավից պատրաստած երեք մոմակալներ, որոնք կարծես կրկնօրինակում են ավելի ուշ շրջանում երևան եկած մետաղյա մոմակալները. դրանք ունեն խողովակաձև և ռելյեֆային իրան, կլորավուն նստուկ (նկ.7: Հետաքրքիր է նաև երկկոն շրջանաձև իրան ունեցող ու մի քանի մոմերի համար նախատեսված բնիկներով մոմակալը (նկ.8):

---

[1] Պարփակ տարածքի երեք անկյունները մոտ են 90 աստիճանին, իսկ հյուսիս-արևելյանը՝ մոտ է 60 աստիճանին:

[2] Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ սրբարանի արևմտյան կողմում գտնվող մուտքի եզրաքարերը իրականացվել են կրկնակի օգտագործման սրբատաշ անկյունաքարերով:

[3] Սկզբում պատրաստվել է սովորական թաս, ապա , քանի դեռ կավը թաց է եղել, շուրթի սեղմուղով ձևավորվել է քթիկը:

Ճրագների ու մոմակալների նման բազմությունը վկայում է ինչ-որ սովորույթի մասին: Համաձայն մի վարկածի՝ Հայաստանում տարածված է եղել եկեղեցուն ճրագ նվիրելու ծեսը: Այսպես՝ ՀՀ Առագածոտնի մարզի Միրաք գյուղի միանավ բազիլիկ եկեղեցու պեղումների ընթացքում գտնվել են երկու տասնյակից ավել ճրագներ: Հետազոտողների կարծիքով՝ «ճրագների նման քանակությունը բացատրվում է եկեղեցում մոմի փոխարեն ճրագ վառելու հին սովորությամբ: … եկեղեցում վառված ճրագը թողնում էին հատկապես նրանք, ում տներում ճրագ շատ կար, այսինքն՝ «իրենց ճրագն էին տալիս եկեղեցուն», ինչպես ներկայումս լուցկի են տանում սրբավայր և այնտեղ թողնում»:[1]

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում վաղքրիստոնեական քարե կոթողների մասերը (նկ.9): Հայտնի է, որ վաղ միջնադարում տարածված էր կոթողների կանգնեցնումը սրբավայրերում, նահատակների շիրիմի վրա: Դրանք բաղկացած էին գետնախարիսխից, պատվանդանից, սյունից, խոյակից, խաչակալից և պսակվում էին ազատ թևերով խաչով:[2] Վաղ միջնադարում, մասնավորապես 4 -7 –րդ դդ., խաչը «կանգնեցում էին՝ ի նշան նոր հավատի հաղթության»:[3]

Ինչպես նշում են հայ պատմիչները, դեռևս 4 - րդ դարում ավերած ու քանդած հեթանոսական մեհյանների տեղում կանգնեցվում էին քարե խաչակիր կոթողներ՝ որպես քրիստոնեության հաղթանակի նշան:[4] Այսպես կոչված ձողաբարձ խաչերը հայտնի են 5 – 7-րդ դարերի քանդակներից:[5]

Սոսի սրբարանի տարածքից հայտնաբերվել են երկու կոթողի մանրամասներ: Առաջինից ունենք երեք կողմից հավասարաթև խաչանախշով քանդակազարդված խարիսխ, սյունակոթող, որի խաչակալ խոյակը քանդակազարդված է բուսական հորինվածքով: Նշված խարիսխը արդեն իսկ երևում էր մուտքի հյուսիսային կողմում, մինչ մաքրման աշխատանքներ սկսելը: Այս տիպի զարդով խոյակներ հայտնի են Արցախի Տիգրանակերտից, Ճարտարից, Բերդաշենից, Քասաղից (նկ.10): Մեր դեպքում գործ ունենք խաչասյուն կոթողի խարսխի հետ. բոլոր կողմերի շրջանի մեջ ներառված խաչերի ներքևի մասում քանդակված է կարճ ձող:

Կոթողի գտնված մասերի երկարությունը կազմում է մոտ 2 մ.: Եթե դրան գումարենք պատվանդանը(մոտ 45-50 սմ) ու թևավոր խաչը (45-50 սմ), ապա կունենանք 290 -300 սմ բարձրությամբ խաչակիր կոթող (նկ.11):

---

[1] ***Մարգսյան Ռ.*** *,Միրաք գյուղի եկեղեցու պեղումներից գտնված ճրագները… էջ 386:*

[2] ***Պետրոսյան Հ.*** *,Վաղքրիստոնեական հայկական կոթողների և իռլանդական բարձր խաչերի ընդհանրությունները նոր գյուտերի լույսի տակ / (Similarities between the Early Christian Armenian monuments and Irish high crosses in the light of new discoveries, in Armenian), էջ 254:*

[3] *Նույն տեղում, էջ 255:*

[4] ***Ագաթանգեղոս****, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, 397:*

[5] ***Պետրոսյան Հ.****, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան,2004, էջ 52:*

Հավանաբար, երկրորդ կոթողին է պատկանում մասամբ կոտրված երկրորդ խաչակալ խոյակը: Ուշագրավ է, որ խոյակի ներբանի հարթության վրա փորագրված է հավասարաթև խաչ և ՀՈՎԱՆԻԿ / հավանաբար՝ Հովհաննես/ անունը:

Հաջորդ ուշագրավ նյութերը խաչակալ քարի (կամ քարերի) երկու բեկորներն են պահպանվել է միայն ոտքի վերին հատվածը կամարի ստորին հատվածի հետ: Ոտքերի հաստույթները և կամարների շառավիղներն իրենց բնորոշ չափերով մոտ են, սակայն նույնը չեն, որը թույլ չի տալիս նրանց միանշանակ նույնացնել որպես նույն խաչակալի երկու բեկոր: (նկ.8):

Սրբավայրում պահպանվել են թևավոր խաչի աջ թևի հատվածը՝ երկու բեկորով և խաչի ոտքի երկու բեկորները: Խաչաթևի ստորին հատվածում պահպանվել է վաղ միջնադարին բնորոշ շրջանը պարփակող պարանաձև հյուսքի մի հատվածը: Խաչի ոտքի վրա պահպանվել է երկրաչափական զարդանախշ (նկ.9):

Սրբարանի բեմի հարավային անկյունում գտնվել է նաև մի խոյակ, 51x48x21.5սմ չափերով, որը պատկանել է մեծ կառույցի: Խոյակը, չնայած քանդակազարդ է երեք կողմից, սակայն քառակողմ է և որմնախոյակ չէ: Կրկնակի օգտագործման ժամանակ խոյակի վերին հատվածը վերամշակվել է, փոխել իր ուղղաձիգ չափերը և հարմարեցվել նոր նպատակով օգտագործման համար: Նրա երկու կողմերը զարդաքանդակված են պարանաձև հյուսքով պարուրված երկու շրջաններով, իսկ երրորդը՝ հակինթի տերևներով (նկ.10):

Սրբարանի տարածքում գտնվել են նաև այլ քանդակազարդ փոքր բեկորներ, որոնց պահպանված չափերը թույլ չեն տալիս որոշել կիրառման վայրը (նկ.11):

Հայտնաբերված բեկորների քանակը, հորինվածքները և բազմազանությունը, ինչպես նաև տեղանքի ռելիեֆը թույլ են տալիս մտածել, որ տեղում գոյություն է ունեցել վաղ քրիստոնեական մեծ սրբավայր՝ համալիր և աղոթատեղի, որի պարզաբանման համար հարկ կլինի իրականացնել պեղման աշխատանքներ:

Նկ.1



Նկ.2





Նկ.3

Նկ.4

նկ.5

Նկ.6

նկ.7

նկ.8

նկ.9

նկ.10



Նկ.11



նկ.12



Նկ.13



նկ.14



15





16

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ,պ.գ.դ., Վ.Ռ.Բալայանը:

ՀՏԴ 809.198.1
Հայոց լեզու

Օֆելյա ԲԱԲԱՅԱՆ
բ.գ.թ., պրոֆեսոր, ԱրՊՀ ակ. Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
e-mail: o.e. babayan @ mail.ru

ՄԵԾ ԼԵԶՎԱԲԱՆԸ (ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲՅԱՆ-120)

Լրացել է ակադեմիկոս Արարատ Ղարիբյանի ծննդյան 120 տարին: Նրա կյանքն ու գիտական գործունեությունը կապված են հայ լեզվաբանության պատմության խորհրդային շրջանի հետ: 1930-50 թվականներին Ա. Ղարիբյանը հետևել է Ն.Մարի «լեզվի նոր ուսմունքին», պայքարել նրա հաղթանակի համար: 1950թ. հրաժարվել է նրա դրույթներից: Հոդվածում համառոտ ներկայացվում է Ա. Ղարիբյանի ներդրումը հայոց լեզվի պատմության, բարբառագիտության, բառարանագրության, հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի, դպրոցական ու բուհական դասագրքերի ստեղծման բնագավառներում:

Բանալի բառեր` *լեզվաբան, հայոց լեզու, բարբառներ, ճևաբանական դասակարգում, բաղաձայնական համակարգ, լեզվի պատմություն, խորհրդային շրջան, դասավանդման մեթոդիկա, գիտություն, բառարան, Ա. Ղարիբյան:*

О. Бабаян

ВЕЛИКИЙ ЛИНГВИСТ (Арарат Гарибян - 120)

Исполнилось 120 лет со дня рождения академика Арарата Гарибяна. Его жизнь и научная деятельность связаны с советским периодом истории армянского языкознания. В 1930-50х годах Гарибян следовал «новому учению языка Н.Мара, боролся за его победу». В 1950г. отказался следовать его положениям. В статье кратко описан вклад Гарибяна в историю армянского языка, диалектологию, в составление словарей (лексикографию), в методику обучения армянского языка и в сферу создания школьных и университетских учебников.

Ключевые слова: *лингвист, армянский язык, диалекты, морфологическая классификация, согласная система, история языка, советский период, методика обучения, наука, словарь.*

O. Babayan

GREAT LINGUIST (Ararat Gharibyan-120)

This year marks the 120th anniversary of academician Ararat Gharibyan. His life and scientific activities are connected with the Soviet period of the history of Armenian linguistics. In the 1930-50 Garibyan followed the "new teaching of the language of N. Mar, fought for his victory." In 1950 he refused to follow his point of view. The article briefly describes Garibyan's contribution to the history of the Armenian language, dialectology, lexicography, teaching methods of the Armenian language and the establishment of school and university textbooks.

Keywords. *linguist, Armenian language, dialects, morphological classification, consonant system, language history, Soviet period, teaching methods, science, vocabulary.*

Արարատ Սահակի Ղարիբյանը (1899-1977) ծնվել է Արտաշատի շրջանի Այգեզարդ (նախկին՝ Դարղալու) գյուղում՝ հողագործի ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է գյուղի երկդասյան հայկական դպրոցում, ապա՝ Արտաշատի երկդասյան ռուսական դպրոցում: Ուսումը շարունակել է Երևանի պրոգիմնազիայում և գիմնազիայում: 1922թ. աշակերտել է Հր. Աճառյանին: 1923-1927թթ. սովորել է Երևանի պետական համալսարանում, 1928-30թթ.՝ համալսարանի ասպիրանտուրայում: 1931 թվականից սկսել է դասախոսել Երևանի պետհամալսարանում: 1937թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 1940թ.՝ դոկտորական ատենախոսություն, ստացել դոկտորի աստիճան, ապա և՝ պրոֆեսորի կոչում: 1947թ. ընտրվել է ՀՀ ԳԱ թղթակից-անդամ, 1960-ին՝ իսկական անդամ: Երիտասարդական տարիներին դասախոսել է ՀՀ տարբեր բուհերում, տարբեր ժամանակներում հայոց լեզվի ամբիոնի վարիչ է եղել պետհամալսարանում, Ս.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, աշխատել է ՀՀ ԳԱ լեզվաբանության ինստիտուտի տնօրեն:[1]

Մեր ուսանողության տարիներին նա արդեն 70 տարեկան էր, մեզ դասավանդել է «Հայ բարբառագիտություն», «Հայոց լեզվի պատմություն», «Պատմական քերականություն»(60-70-ական թվականներին նաև այս դասընթացն էին անցնում) առարկաները: Չնայած տարիքին՝ առույգ էր, կենսախինդ, արագաշարժ, բարձր, բայց հաճելի ձայն ուներ, հետաքրքիր էր խոսում: Ինքն իր մասին ծիծաղաշարժ պատմություններ էր ստեղծում: Պատմում էր, որ Հայրենական պատերազմի տարիներին, քանի որ քիչ էին դասախոսները, առաջարկել էր՝ լսարանի դռները թողնեն բաց, ինքն էլ միջանցքում քայլելով դասախոսություն կարդա մի քանի խմբերի համար, խոսքը լսելի կլինի բոլորին: Ասում էր՝ իր միտքն առաջ է անցնում, կարող է և' կարդալ, և' լսել, պատասխանել: Կամ ասում էր, թե ինչքան տարիքն առնում է, այնքան ջահելանում է: Հիշում եմ՝ այդ տարիներին հոլովների վերաբերյալ վեճը վերսկսվել էր. լեզվաբանների մի մասը ժամանակակից հայերենում ընդունում էր հինգ հոլով, Է.Աղայանը մերժում էր հայցական հոլովը, բայց ընդունում սեռականը, այսինքն՝ վեց հոլով: Ա. Ղարիբյանը կողմնակից էր յոթ հոլովին, 30-ական թվականներից իր հայոց լեզվի դպրոցական գործող դասագրքում յոթ հոլով էր ներկայացնում: Մի քանի ուսանողներով գնացել էինք լսելու գիտավեճը (Լեզվի ինստիտուտի հին շենքում էր, շենքի տեղում հիմա նկեղեցի է): Ա. Ղարիբյանն իր ելույթը սկսում է այն պատմությունով, թե մուկն ընկել է գինու կարասը և ողջ գինին փչացրել: Երբ իմացավ, որ կուրսում Հադրութեցի կա, ասաց՝ «Վէրան վէտ ա կ'յաս, գ'իդաս ըս»: Հաճախ վերջին պահին ուղիղ լսարան էր գալիս՝ վերարկուն թևին, երբեմն էլ սեղանի մի անկյունին էր նստում:

Ակադեմիկոս Ա. Ղարիբյանը խորհրդային շրջանի մեծ լեզվաբաններից է: Տասնյակ տարիներ դպրոցներում հայոց լեզու էին սովորել նրա կազմած դպրոցական դասագրքերով: 1934թ. լույս էր տեսել նրա «Հայոց լեզու» դասագիրքը՝ գրված միջնակարգ դպրոցի 5-6-րդ դասարանների համար, 30 տարվա մեջ անընդհատ մշակվել, կատարելագործվել էր ու 25 անգամ հրատարակվել և մեծ դեր է կատարել ժամանակակից գրական հայերենի

[1] *Տե՛ս* ***Պետրոսյան Հ.,*** *Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 447:*

ուսուցման ու տարածման գործում: 1965թ-ին այն փոխարինվել է Է.Աղայանի և Հ. Բարսեղյանի կազմած «Հայոց լեզու» դասագրքով:

Հետագա տարիներին Ա.Ղարիբյանը դասագրքեր է գրել միջնակարգ դպրոցի համարյա բոլոր դասարանների համար, որտեղ ուսումնական պլանով նախատեսված էր հայոց լեզու: Նա դասագրքեր է կազմել նաև ոչ հայկական դպրոցների համար: Ա. Ղարիբյանը բուհի ուսանողների, հայոց լեզվի ուսուցիչների համար կազմել է «Հայոց լեզվի մեթոդիկան», որն ընդգրկում էր քերականության և ուղղագրության ուսուցումը: Այն լույս է տեսել 1938թ.: 1954թ. հրատարակվել է «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան». այն ընդգրկում էր առարկայի բոլոր բաժինները և խորհրդային դպրոցի մեթոդական աշխատանքն ու փորձը: Մեթոդական ուղղվածություն ունի նաև նրա «Հայ մանկավարժական լեզվաբանությունը»(1969):[1]

Ա. Ղարիբյանը ասպիրանտուրայում սովորելու տարիներին ութ ամիս աշակերտել էր մեծ հայագետ Ն.Մառին: Մինչև 30-ական թվականները խորհրդային լեզվաբանության զարգացման ուղիների որոնումների շրջան էր, որի ընթացքում էլ ծագել ու տիրապետող էր դարձել Ն.Մառի «լեզվի նոր ուսմունքը»: Խորհրդային լեզվաբանության տեսության բնագավառում 30-ական թվականներից հետո ընկած ժամանակաշրջանը բնորոշվում է գաղափարական պայքարի սրումով, այնուհետև Ն. Մառի ուսմունքի պաշտոնական ճանաչմամբ:

«Նոր ուսմունքը» իր ազդեցությունն էր ունեցել խորհրդային լեզվաբանության վրա: Հայ գիտնականները բարձր էին գնահատում Ն. Մառի՝ հայագիտությանը մատուցած ծառայությունները, բայց «նոր ուսմունքը» մեծ արձագանք չէր գտել հայ լեզվաբանության մեջ: Դեռևս խորհրդային կարգերի հաստատումից առաջ իր գործունեությունը սկսած լեզվաբանների հին սերունդը (Մ.Աբեղյան, Հր. Աճառյան, Գ. Ղափանցյան), ընդունելով «նոր ուսմունքի» որոշ դրույթներ, ամբողջությամբ չի ընդունել այն: Հայ լեզվաբանների խորհրդային սերնդի շատ ներկայացուցիչներ, զիջումներ անելով «նոր ուսմունքին», հանդես էին բերում նաև ինքնուրույն մտածողություն: 30-ական թվականների խորհրդային լեզվաբաններից միայն Ա. Ղարիբյանն էր անվերապահորեն ընդունել Մառի տեսության բոլոր դրույթները:[2]

Դա երևում է թե' նրա գործունեության մեջ, թե' գիտական աշխատություններում: Այդ հարցում նա ծայրահեղության էր հասել, պայքարել «նոր ուսմունքի» հաղթանակի համար: Հր. Աճառյանը, լատինական արտահայտությունը փոխելով, Ա. Ղարիբյանին համարել էր «քան զՄառն մառա կան»: Միայն 1950թ. հունիսին «Պրավդա» թերթի էջերում ծավալված լեզվաբանական գիտավեճից հետո էր Ա.Ղարիբյանը հրաժարվել Ն. Մառի «նոր ուսմունքի» դրույթներից և ընդունել խորհրդային լեզվաբանության հիմնական սկզբունքները: Այդ ամենը հաշվի առնելով՝

Ա.Ղարիբյանի գիտական գործունեությունը բաժանել են երկու շրջանի՝ 1930-1950 թթ. և 1950 թվականից հետո՝ հատկապես անհատի պաշտամունքի հաղթահարումից հետո:[3]

---

[1] *Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Հայագիտական հետազոտություններ, մտորումներ, խոհեր: Գիտ.: Երևան, 2001, էջ 53-54:*

[2] *Տե՛ս **Հովհաննիսյան Լ.**, Սովետահայ լեզվաբանությունը 60 տարում, Երևան, 1988, էջ 10-15:*

[3] *Տե՛ս **Աղայան Է.**, Հայ լեզվաբանության պատմություն, հ.2, Երևան, 1962, էջ 263-264:*

Ա. Ղարիբյանի կյանքն ու գործունեությունը՝ իր թերություններով ու առավելություններով ամբողջությամբ կապված է խորհրդային շրջանի հայ լեզվաբանության պատմության հետ, որի զարգացումը նույնպես ընդունված է բաժանել երկու՝ 1920-1950թթ.և 1950թ.հետո, այսինքն՝ զարգացման ուղիների որոնումների և ինքնահաստատման, [1] կամ երեք շրջանների՝ 1920-1936թթ., 1937-1950թթ. և 1950 թվականից հետո:[2] Փաստորեն հայ լեզվաբանության մեջ բեկումը սկսվել է 1950 թվականից: Կարծում ենք՝ հայ լեզվաբանության մեջ նոր մոտեցում, բեկում է սկսվել նաև անկախության պայքարի շրջանում՝ 1990-ական թվականներից: Եթե 1950 թվականից հետո հայ լեզվաբանությունը զարգանում էր խորհրդային լեզվաբանների միասնական ընտանիքում, եթե աշխարհի հետ կապվում էինք Ռուսաստանի ու ռուսերենի օգնությամբ, ապա անկախության շարժումից հետո անկախ Հայաստանն ու Արցախը անմիջական կապերի մեջ են աշխարհի հետ, և գիտական բոլոր նվաճումներին տեղեկանում են և մասնակից դառնում միաժամանակ:

«Նոր ուսմունքի» հիմունքներով է շարադրված Ա. Ղարիբյանի «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն» գիրքը(1937), որում փորձել էր տալ հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանումը, հիմնական գծերով բնութագրել գրաբարը, միջին հայերենը, աշխարհաբարը (երկու տարբերակներով) և բարբառները: Գիրքն ունի թերություններ, բայց նշվել է նաև հեղինակի ներդրումը գրաբարի կառուցվածքի տիպաբանության, հատկապես անվանական հոլովման (արտաքին և ներքին) որոշման գործում:[3]

Մեծ է Ա. Ղարիբյանի ներդրումը հայ բարբառագիտության բնագավառում: Նրա բազմավաստակ ուսուցիչը՝ Հր Աճառյանը, որն արդեն հայ բարբառների ձևաբանական դասակարգման հիմնադիրն էր, հիմք ընդունելով սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմության ձևը, ընդունել էր հայ բարբառների **ում**, **կը**, **ել** ճյուղերը, ստեղծել բարբառագիտության բուհական դասընթաց («Հայ բարբառագիտություն», 1911), կազմել «Հայերենի գավառական բառարանը» (1913): Ա. Ղարիբյանը շարունակել է հայ բարբառների ուսումնասիրությունը: Նա հայտնաբերել և գիտականորեն նկարագրել է 15 (տասնհինգ) հայերեն բարբառներ, 6(վեց) ենթաբարբառներ առաջարկել է ճանաչել ինքնուրույն բարբառներ, տարբերակված բարբառների ճյուղերին ավելացրել է **կա**, **հա**, **ս**, նաև **գրաբարատիպ** ձևաբանական խմբերը, լրացրել, վերանայել է հայ բարբառների դասակարգման ձևաբանական դասակարգումը: Հետագայում նա մշակել է տիպաբանական դասակարգումը և հայ բարբառները բաժանել բարբառային յոթ ճյուղ ընդգրկող երեք խմբի, որոնք սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմում են 1. **դերբայների** օգնությամբ (**ում**, **ս**, **լ** ճյուղերի բարբառները), 2. **մասնիկների** օգնությամբ (**կը**, **կա**, **հա** ճյուղերը) և 3. **գրաբարատիպ**: Ա. Ղարիբյանը, հենվելով գրաբարի հնչյունական համակարգի համեմատությամբ հայ բարբառների պայթական ու կիսաշփական բաղաձայնների կրած փոփոխությունների վրա, կատարել է նաև հայ բարբառների հնչյունաբանական դասակարգում: Բարբառների բաղաձայնական համակարգից ելնելով՝ Ա. Ղարիբյանն առանձնացրել է հայ

---

[1] ***Հովսեփյան Լ.***, *Սովետահայ լեզվաբանությունը 60 տարում, Երևան, 1988, էջ:*

[2] *Հայերենագիտությունը 60 տարում, Երևան, 1981, էջ 4:*

[3] *Տե՛ս* ***Աղայան Է.,*** *Հայ լեզվաբանության պատմություն, հ.2, Երևան, 1962, էջ 264-265: Աբրահամյան Ա., Հայագիտական հետազոտություններ, մտորումներ, խոհեր: Գիտ.: Երևան, 2001, էջ 51:*

բարբառների 4(չորս) խումբ: Հետագայում Ա. Ղարիբյանը մշակել ու զարգացրել է իր դասակարգումը և հանգել հայ բարբառների բաղաձայնական համակարգը հնդեվրոպականի հետ համեմատելու մտքին: Դրանով կարելի է բացահայտել հայ բարբառների ծագման ժամանակագրական հաջորդականությունը: Հայտնի է, որ հնդեվրոպական նախալեզվի համար ընդունվել է բաղաձայնների քառաշարք համակարգ, իսկ գրաբարի համար՝ եռաշարք: Ա. Ղարիբյանը նշել է նաև առանձնացված խմբերի աշխարհագրական տեղաբաշխումը: Նա զգացել է հայ բարբառների բաղաձայնական համակարգի յուրահատկությունների կարևոր նշանակությունը և իր եզրակացություններով հանդես եկել «Вопросы языкознания» միութենական հանդեսի էջերում: Հոդվածը առաջ է բերել մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցել են ինչպես հայ լեզվաբանները, այնպես էլ նշանավոր ռուս և արտասահմանյան հայագետները:[1]

Ա. Ղարիբյանն ունի բարբառագիտությանը նվիրված մի շարք աշխատություններ՝ «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» (1939), «Համառոտություն հայ բարբառագիտության» (1941), «Հայ բարբառագիտություն» (1953), «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ» (1958) և այլն:

Ա. Ղարիբյանի նախաձեռնությամբ է ստեղծվել ռուս-հայերեն քառահատոր բառարանը, սկսվել Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի կողմից հրատարակված ժամանակակից հայերենի քառահատոր բացատրական բառարանի, հայ մատենագրության, դասական ու ժամանակակից աշխարհաբար գրականության համաբարբառների ստեղծման աշխատանքը:[2]

Ա. Ղարիբյանը որոշակի աշխատանք է կատարել նաև բառարանագրության բնագավառում: Կազմել է դպրոցական ուղղագրական բառարան, հայրենական պատերազմի տարիներին հայ մարտիկի համար՝ ռուս-հայերեն գրպանի բառարան, ռուս- հայերեն միհատորյա ընդարձակ բառարան (1968), որն արժանացել է Հայաստանի պետական մրցանակի: Բառարանը վերամշակվել ու վերահրատարակվել է 1982թ.:

Ամեն սերունդ իր վրա կրում է իր ժամանակի կնիքը: Ակադեմիկոս Ա. Ղարիբյանի կյանքն ու գիտամանկավարժական գործունեությունը՝ իր դրական ու բացասական կողմերով, դրա վառ օրինակն է: Կյանքի տարբեր էտապներում, հաղթահարելով որոշակի դժվարություններ՝ նա կարողացել է իր փայլուն ընդունակություններն ու աշխատասիրությունը ծառայեցնել գիտության զարգացմանն ու ժողովրդական կրթությանը, մնալ հայ լեզվաբանության մեծերի շարքում:

---

[1] *Տե՛ս **Հովսեփյան Լ.**, Սովետահայ լեզվաբանությունը 60 տարում, Երևան, 1988, էջ 58-62:*

[2] *Տե՛ս **Աբրահամյան Ա.,** Հայագիտական հետազոտություններ, մտորումներ, խոհեր: Գիտ.: Երևան, 2001, էջ 53-54:*

Գրականություն

1. Աբրահամյան Ա., Հայագիտական հետազոտություններ, մտորումներ, խոհեր: Գիտ.: Երևան, 2001:
2. Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, հ.2, Երևան, 1962:
3. Հայերենագիտությունը 60 տարում, Երևան, 1981:
4. Հովսեփյան Լ., Սովետահայ լեզվաբանությունը 60 տարում, Երևան, 1988:
5. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:

Հոդվածը տպագրության է երաշխավորվել
ակ.Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի կողմից:

ՀՏԴ 808.1
Գրականագիտություն

Ալիսա ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
բ.գ.թ., Արցախի հանրային հեռուստատեսություն
e-mail: alisa250536@gmail.com

ԼԵՌՆԱՇԽԱՐՀՆ ՈՒ ՆՐԱ ՄԱՐԴԻԿ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԱՐՁԱԿՈՒՄ

Սույն հոդվածում ներկայացված է ժամանակակից հայ արձակի երևելիներից՝ Մաքսիմ Հովհաննիսյանի և Արտաշես Ղահրիյանի ստեղծագործությունները՝ նվիրված լեռնաշխարհին ու նրա մարդկանց:

Աշխատանքի սահմաններում քննության ենք առել վերոնշյալ գրողների ստեղծագործությունների թեմատիկ, ժանրային, աշխարհայացքային, պատկերային առանձնահատկությունները: Մ. Հովհաննիսյանն ու Ա. Ղահրիյանը լավ են հասկացել, որ իրենց տեղը գրավելու համար պետք է ապավինել հոգու ազատությանը, դառնալ սեփական օջախի ու երկրի տերը, պահպանել ցեղի տեսակը, կրել ժողովրդի երազած երջանկության մեծ բաժինը:

Յուրացնելով հայ դասականներից Ակսել Բակունցի ավանդույթներն ու սովորելով Հրանտ Մաթևոսյանի վարպետությունին՝ Մաքսիմ Հովհաննիսյան ու Արտաշես Ղահրիյանն առաջին հերթին բացահայտում են արցախցիների կենսափիլիսոփայությունը, նկարագրում նրանց կրած տառապանքը, հայ մարդուն հատուկ կամքի ուժն ու հավատն ապագայի հանդեպ:

Մաքսիմ Հովհաննիսյան և Արտաշես Ղահրիյան գրողների ինքնատիպությունը պայմանավորված է թեմատիկ բազմազանությամբ, բարձր ինտելեկտուալությամբ, զգացմունքների բնականությամբ, կենդանի ու գունեղ լեզվառճական առանձնահատկություններով:

Բանալի բառեր՝ *արձակ, Հրանտ Մաթևոսյան, Մաքսիմ Հովհաննիսյան, Արտաշես Ղահրիյան, գյուղ, գյուղացի, հոգեբանություն, բարբառ, ծննդավայր, կին, աշխարհ:*

А. Багдасарян

НАГОРНЫЙ КРАЙ И ЕГО ЖИТЕЛИ В СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ПРОЗЕ

В данной статье представлены произведения известных современных армянских прозаиков Максима Оганесяна и Арташеса Гагрияна, посвящённые нагорному краю и его жителям.

В рамках этой работы проанализированы произведения вышеупомянутых авторов, их тематические, жанровые,

мировоззренческие и визуальные особенности.

Максим Оганесян и Арташес Гагриян хорошо поняли, что, для того чтобы занять их место, необходимо полагаться на свободу души, стать владельцем собственного очага и родины, сохранить свою национальную природу, нести большую часть мечты своего народа о счастье.

Освоив традиции армянского классика Акселя Бакунца и обучившись беспрецедентному мастерству у Гранта Матевосяна, Максим Оганесян и Араташес Гагриян в первую очередь раскрывают жизненную философию арцахцев, описывают их страдания, особую силу воли и веру в будущее, присущее армянину.

Уникальность прозаиков Максима Оганесяна и Арташеса Гагрияна обусловлена разнообразием тем, высоким интеллектом, естественностью эмоций и особенностью стилистики.

Ключевые слова: *проза, Грант Матевосян, Максим Оганесян, Арташес Гагриян, село, сельчанин, психология, диалект, место рождения, женщина, мир.*

A. Bagdasaryan

HIGHLAND AND ITS PEOPLE IN MODERN ARMENIAN PROSE

The works of famous faces of modern Armenian prose Maxim Hovhannisyan and Artashes Ghahriyan which are dedicated to our highlands and the people living there are presented in this article.

The thematic, genre, world view and visually descriptive peculiarities of the works of the mentioned writers have been analyzed in this article. Maxim Hovhannisyan and Artashes Ghahriyan have perfectly understood that to win their place in literature they should keep the freedom of soul, become the owners of their homes and land, preserve the nation and bear the greater part of the happiness which was the dream of our nation.

Adopting the literary traditions and learning the unique mastery of Hrant Matevosyan, Maxim Hovhannisyan and Artashes Ghahriyan reveal first of all the life philosophy of Artsakhi people, describe their sufferings, will power and strong belief to the future of Armenian people which is typical to our nation only.

The uniqueness of Maxim Hovhannsiyan and Artashes Ghahriyan as writers has formed due to the thematic variety, high intelligence, natural feelings, vivid and colorful linguistic and stylistic peculiarities.

Keywords. *prose, Hrant Matevosyan, Maxim Hovhannsiyan, Artashes Ghahriyan, village, peasant, psychology, dialect, birthpolace, woman, world.*

Գլխատված երկրի հայ գյուղացին իր տունն իհարկե պետություն և իրեն էլ այդ պետության մշակի հետ նաև իշխանն էր դարձնելու. երկրի ազնվականությունն անցավ հայ շինականին, թշնամու առաջ հայոց պետականության փոխարեն հայի տունը կանգնեց:

Համո Սահյան

Հայրենական մեծ պատերազմից հետո հայ գրողների ուշադրության կենտրոնում գտնվեց նաև գյուղական թեմատիկան: Սիրո Խանզադյանն ընթերցողի սեղանին դրեց «Հողը», Վախթանգ Անանյանը՝ «Ֆերմայի մարդիկ», Անահիտ Սեկոյանը՝ «Ոսկե վազերի մեջ», Սուրեն Այվազյանը՝ «Խորաձորցիք», Բագրատ Ուլուբաբյանը «Հայրենի հող» վեպերը: Սկսված գործը շարունակվեց նոր առատությամբ: Տպագրվեցին Բագրատ Ուլուբաբյանի «Թարթառ», Բենիկ Սեյրանյանի «Աստղաձոր», Քրիստափոր Թափալցյանի «Ոսկե հովիտ», Մարգար Դավթյանի «Վազը», Անահիտ Սահինյանի «Ծարավ» երկերը: Սակայն և՛ այդ երկերում, և՛ գյուղական կյանքը պատկերող մյուս հեղինակների ստեղծագործություններում, ըստ էության, չէր արտահայտվել ժամանակի իսկական բովանդակությունը: Նկատելի էր թեմայի պարզունակ ըմբռնումը: Զգացվում էր բարոյախոսությունը, կոնֆլիկտի մանրացումը, հակասությունների կոծկումը, իրականության գունազարդումը և այլն: Չնայած 1954-ին քննադատվել էր անհատի պաշտամունքը, այնուամենայնիվ շարունակվում էին ԽՄԿԿ Կենտկոմի հրահանգները, Սովետական գրաքննչությունը վերահսկում էր գրական գործերը: Գրականության զարգացման համար անհրաժեշտ էին զգաստ հայացք, իրականության բազմակողմանի դիտարկում, ժամանակի էական հարցերի խորքային դրվածք: Եվ 1960-70-ական թվականներին ասպարեզ եկավ արձակագիրների մի սերունդ, որի մուտքը տարբեր կերպ ընկալեց և ընդունեց քննադատությունը: Այդ սերնդի ներկայացուցիչների՝ Հրանտ Մաթևոսյանի, Մուշեղ Գալշոյանի, Աղասի Այվազյանի, Վարդգես Պետրոսյանի, Զորայր Խալափյանի, Հովհաննես Մելքոնյանի, Ռուբեն Հովսեփյանի, Պերճ Զեյթունցյանի, Մանուկ Մնացականյանի, Մաքսիմ Հովհաննիսյանի, Արտաշես Ղահրիյանի շնորհիվ հայ արձակում զգացվեց թարմ շունչ: Նրանք գտան կյանքը պատկերող նոր ու հետաքրքիր ձևեր, եղանակներ, առաջին պլան մղվեց մարդը՝ իր հոգեբանությամբ ու ներաշխարհով:

Նշածս աստղաբույլի մեջ գերաստղը Հրանտ Մաթևոսյանն էր: Նրա «Ահնիձոր» գեղարվեստական ակնարկը շառաչեց գարնանային ամպրոպի պես: Ահա աշխարհ եկավ նրա «Օգոստոս» առաջին գիրքը: Առկա էր նորարարությունը՝ գրողի նոր, առողջ հայացքի շաղախով: Ճիշտ է, որոշ գրաքննադատներ անարդարացիորեն ժխտում էին նրա «Ահնիձոր» գեղարվեստական ակնարկը, սակայն կյանքն ապացուցեց, որ նա հայտնություն էր հայ արձակի

բնագավառում: Ազատ Եղիազարյանը գրում. «Հր. Մաթևոսյանի ստեղծագործության միտումները հասկանալու համար մենք նրան պետք է դիտենք ոչ միայն հայկական, այլև ամբողջ սովետական ու եվրոպական արձակի զարգացման ընթացքի մեջ ՝ սկսած Սերվանտեսից, վերջացրած Դոստոևսկիով, Մաննով, Կաֆկայով և բոլոր նորագույններով: Եթե մեր քննադատությունը ունենար այս կարողությունը, գյուղի մասին գրող արձակագիրների հասցեին չէին լսվի մեղադրանքներ հետամնացության, «ետ դեպի Ծմակուտ» կոչելու մեջ…»[1]:

Հրանտ Մաթևոսյանի «Մենք ենք, մեր սարերը», «Մեր վազքը», «Ծառերը», «Տերը» և այլ ժողովածուների, ոչ միայն զարգացման նոր հունի մեջ մտավ հայ արձակը, այլև իր վրա հրավիրեց նախկին խորհրդային և համաշխարհային ականավոր գրողների լուրջ ուշադրությունը: Տաղանդավոր գրողը հանդես եկավ նաև գրախոսություններով, հոդվածներով և այլ նյութերով, որտեղ քննարկում և լուսաբանում էր կյանքի և գրականության փոխհարաբերության, գրականության և արվեստի յուրահատկությունների, գրողների թողած ժառանգության վերաարժեքավորման, ազգային ու հասարակական-մշակութային կյանքի գնահատման և այլ կարևոր հիմնախնդիրներ:

Անդրադառնալով գրողի դերին, գրականության և հասարակական կյանքի փոխհարաբերություններին՝ ականավոր արձակագիրը թևավոր մտքերով ընդհանրացնում է կատարում: «Գրողն ի՞նչ է անում,- հարցնում է նա և պատասխանում,- աշխարհն իր ուզածի պես չէ, ուզում է աշխարհը բերել իր ուզածի պես: … Գրականությունը մարդկության կարոտն է կյանքին: Մոնումենտալացնելով՝ գրականությունը մեզ կարոտել է տալիս մեր կողքին իսկ գտնվող մարդուն, հատը երեսուն կամ հիսուն կոպեկ արժեցող շուկայի վարդը դարձնում է քնարական,- Աստծուն հավասար արարիչ է գրականությունը»[2]:

Ինչպես տեսնում ենք, անվանի արձակագիրը բարձր է գնահատում ստեղծագործողին: Գրողն իրեն պետք է զգա երկրի տերն ու պատվախնդիրը, նա սպիտակ թղթի առաջ պետք է նստի ոչ թե որպես առաջադրանք կատարող աշակերտ, այլ որպես անհայտությունից գրականության և կյանքի բարդ խնդիրներ բացահայտող ուսուցիչ:

Ստացվեց այնպես, որ Վարդգես Պետրոսյանն ու Գևորգ Արշակյանը վկայակոչելով ուրբանիստական կենցաղի հայաստանյան արգումենտը, մոռացել էին մի շատ կարևոր պահանջ, որը, ըստ Հր. Մաթևոսյանի, այն է, որ «ամեն մի կարգին գրողի ստեղծագործությունն այդ գրողի աշխարհայացքի և փիլիսոփայության իրացումն է. գրողը դեպքեր շարադրող չէ, այլ աշխարհը յուրովի բացատրող կամ բացատրել փորձող»[3]:

---

[1] *«**Սովետական գրականություն**», 1976 թ., N 1:*

[2] ***Մաթևոսյան Հր.,** «Սպիտակ թղթի առջեւ», Երեւան, «Հայ գիտակ» հրատ., 2004 թ., էջ 3:*

[3] *Ն. տ., էջ 37:*

Հր. Մաթևոսյանն իր «Այսպես կոչված գյուղագրության մասին» հոդվածում սպառիչ պատասխան տվեց գյուղագիր և գյուղագրություն հասկացությունների շուրջ եղած հնացած կարծիքի: Նա չի ընդունում գրողներին ըստ թեմաների դասակարգելու երևույթը՝ ընդգծելով գրականության գլխավոր առաքելության՝ հասարակական մարդու կերպարի ստեղծման առաջնահերթ խնդիրը: Մաթևոսյանը ժխտեց Պետրոսյանի և Արշակյանի այն դրույթը, ըստ որի՝ գյուղագրությամբ զբաղվողները՝ որոնող վարպետներ:

Հր. Մաթևոսյանը գտնում էր, որ կյանքի հավերժական ճանապարհին գրականության բնապաշտական թեքումը շարունակվում է: Նա խորհուրդ է տալիս՝ չմոռանալ, որ արվեստը միշտ էլ խրված է մարդասիրության հողում, որ գյուղագրությունը քաղաքակրթություն է: Վերջապես նա ընդհանրացնում է. «Չկա գյուղագրություն կամ քաղաքագրություն, կա միայն մարդկային հայացք բնությանն ու աշխարհին»[1]:

Այս հարցի շուրջ ուշագրավ է նաև Պերճ Զեյթունցյանի տեսակետը. «Քաղաքայինը… արվեստի մակարդակն է ու կուլտուրան և ոչ թե թեման կամ օբյեկտը, ոչ թե քաղաքն ու գյուղը: Արվեստը ստեղծվում է միայն քաղաքի չափանիշով: Իսկ գյուղագրությունը որակ է»[2]:

Պ. Զեյթունցյանի հետ համամիտ է նաև Նորայր Ադալյանը՝ գտնելով, որ որոշիչը ոչ թե քաղաքն է, արվեստորեն կատարումը, ոչ թե գյուղն է, այլ գեղարվեստական ընդհանրացումը…[3]:

Հ. Էդոյանը ևս չի կարևորում թեմայի ընտրությունը. «Կարևորն այն չէ, որ Հրանտ Մաթևոսյանը դիմում է ընդգծված թեմաների, կարևորն աշխարհընկալումն է, իրերի փիլիսոփայական ներթափանցումը, նրանց գեղարվեստական վերարժեքավորումը»[4]:

Գյուղագրության մասին արտահայտված մտքերի փայլուն ընդհանրացում է Հր. Մաթևոսյանի հետևյալ խոսքը. «Տա աստված, որ աշխարհի քարտեզի վրա մի բնակավայր էլ ես ավելացնում… Ծմակուտն առայժմ իմ հայրենի գյուղն է, ես այդ գյուղի ակնարկագիրն եմ, կուզեք ակնարկագիր ասեք, կուզեք լուսանկարիչ, կուզեք նկարիչ-նատուրալիստ: Իրական այդ գյուղը կվերաճի գրական Ծմակուտի, կկարողանամ վերաճեցնել՝ չգիտեմ»[5]:

Այո՛, անվանի գրողը ստեղծել է իր գրական Ծմակուտի գեղարվեստական կերպարն ու միաժամանակ օրինակ հանդիսացել Մաքսիմ Հովհաննիսյանի համար: Հայաստանում ծփաց Հր. Մաթևոսյանի Ծմակուտը, Հայոց Արցախում՝ Մ. Հովհաննիսյանի Լեռնաղբյուրը: Բայց ի տարբերություն «Ծմակուտի»՝ «Լեռնաղբյուրում» բնակվում են արցախցի հայ մարդիկ՝ իրենց բնութագրական անուններով: Մ. Հովհաննիսյանը լավ է հասկացել, որ իր

---

[1] *Ն. տ., էջ 44:*

[2] ***«Գարուն»,*** *1968 թ., N 8:*

[3] ***«Գարուն»****, 1968 թ., N 11:*

[4] ***«Գարուն»****, 1972 թ., N 11:*

[5] ***«Գրքերի աշխարհ»,*** *1979 թ., N 5:*

տեղը գրավելու համար պետք է ապավինել հոգու ազատությանը, դառնալ սեփական օջախի ու երկրի տերը, պահպանել ցեղի տեսակը, կրել ժողովրդի երազած երջանկության մեծ բաժինը: Գրականագետ Սևակ Արզումանյանը, հետևելով Հովհաննիսյանի գրական ընթացքին, նկատել է. «Արձակագիր Մաքսիմ Հովհաննիսյանի գրական «հումքի» աղբյուրն իր ծննդավայրն է, հայրենի գյուղը, որը պատմվածքներում Լեռնաղբյուր անունն է ստացել՝ սիմվոլացնելով առհասարակ ավանդական ու նոր Լեռնային Ղարաբաղը՝ իր աշխատասեր ու խոսքաշեն մարդկանցով ու սովորություններով»[1]:

Հայրենի ծննդավայրի մաքրությունն ու գեղեցկությունն ամբարած իր մեջ՝ գրողը ստեղծեց արժեքավոր գործեր՝ տալով Արցախի ու արցախցու, և ընդհանրապես՝ աշխարհի և մարդու անաղարտ ու բնական, ճշմարիտ ու կենդանի պատկերը: Ասվածի փայլուն վկայություններից են գրողի «Գյուղացի մարդիկ», «Հարար, Հարար» և այլ ժողովածուներ:

«Գյուղացի մարդիկ» շարքի մեջ զետեղված պատումները Լեռնաղբյուրի գեղեցիկ բնապատկերների ու լեռնաղբյուրցիների վարքուբարքի, կենցաղի ու առօրյայի մասին են: Ստեղծելով մի ընդհանուր, ամբողջական պատկեր՝ հերոսները մի պատմվածքից տեղափոխվում են մեկ այլ պատմվածք՝ հաջորդ պատմվածքում հանդես գալով արդեն այլ իրավիճակում, իրենց իսկ կերպարը բացահայտող մեկ այլ գործողությամբ: Պայմանական Լեռնաղբյուր անունը կրող գյուղը՝ խորհրդանշում է Արցախ աշխարհը իր յուրօրինակ մարդկանցով, խորհրդավոր բնությամբ, իր սովորություններով ու ավանդույթներով: Մ. Հովհաննիսյանը, հայրենի գյուղի ու գյուղացիների հետ կապված իր հուշերն ու երազները վերհիշելով ու վերակերտելով, ստեղծել է կոլորիտային մի յուրօրինակ պատմվածաշար, որտեղ ոչ միայն գյուղի ու գյուղացու կյանքն ու կենսակերպն են, այլև մարդու հոգեկերտվածքի բազմաբարդ դրսևորումները: Գյուղի խորհուրդը թերևս պատահական չէ, քանի որ գյուղը քաղաքի անհրաժեշտ մասնիկն է, նրա կարևոր բաղադրիչը: Գրողն իր կենսափիլիսոփայական արժեհամակարգի և ճիշտ դիտողականության համաձուլվածքում տալիս է իրականության անմիջական ու պատկերավոր նկարագիրը: Նրա հերոսները, ինչպես ինքն է խոստովանում, այն միջավայրի մարդիկ են, որտեղ ինքն ապրել է: Ինքն էլ նրանցից մեկն է. «Մենք իրար հարաբերվում ենք տանու շորերով. Իրարից քաշվելու հարկ չկար և մանավանդ անհրաժեշտություն չկար»[2],- խոստովանում է գրողը:

«Որպես նախաբան» խորագրի տակ Մ. Հովհաննիսյանը հերոսի շուրթերով ներկայացնում է Լեռնաղբյուր գյուղի ու լեռնաղբյուրցու յուրատիպ բնույթը, խոսելաձևն ու կենսակերպը: «Տխրությունս կամաց-կամաց փոխվում է լացի» սահյանական բանաստողի ընտրությունը որպես բնաբան ինքնին

---

[1] ***«Գրական Ադրբեջան»*** *հանդես, 1984 թ., N 5, էջ 92-93:*

[2] ***Հովհաննիսյան Մ.****, Երկեր, Առաջին հատոր, Մտեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Մոնա» գրատուն, 2005 թ., էջ 2:*

խոսում է շարքի մեղեդային ու տխուր, միաժամանակ բարձր ու գեղեցիկ գաղափարների, մտքերի, ձևակերպումների ու պատկերների առկայության մասին: Մաքսիմ Հովհաննիսյանի կենսափիլիսոփայությունը, մարդու ներաշխարհը ճիշտ ընկալելու նրա հմտությունը հնարավորություն է տալիս ծրագրային և սյուժետային ամբողջական համակարգի միջոցով հասնելու իր նպատակին: Գրողը իր հերոսների անձնական օրինակով, նրա հոգու տվայտանքների, կասկածների ու կսկիծների արտացոլման միջոցով ցույց է տալիս գյուղ-քաղաք կամրջին հայտնված մարդկանց երկփեղկված ճակատագրերը: Գյուղում տեղի ունեցող փոփոխությունները, գյուղը շեն պահողների նոսրացումը, գյուղի և քաղաքի մրցակցության հետևանքով քաղաքի խլող ուժը չեն վրիպել ժամանակի շնորհաշատ գրողների ուշադրությունից: Հր. Մաթևոսյանի, Մ. Գալշոյանի, Զ. Խալափյանի և գյուղի թեման արծածող մյուս գրողների երկերում ռեալիստական գույներով ցույց տրվեցին դարաշրջանի հրամայականով տեղի ունեցող իրադարձությունները, հայրենի եզերքի և նրանց մարդկանց փոխհարաբերության նկատելի խորթացումն ու կարոտի ծփանքը: Նման գրողների շարքում արձակագրի իր կարողությունները դրսևորեց Մաքսիմ Հովհաննիսյանը: Նա ևս վերհիշում է հայրենի գյուղի անցյալի հաջողությունները, նկարագրում հրաշք բնության գեղեցկությունները և կսկիծով արձանագրում ներկայի տխուր պատկերը:

Կյանքի և մարդկային հոգու տարածքները թափանցելու ունակ արձակագիրը գյուղ և գյուղացի ընդգծումներում շոշափում է մշտապես արդիական հարցեր ու հիմնախնդիրներ: Ի ցույց հանելով մարդու բնական կեցվածքը արձակագիրը հերթական անգամ ընդգծում է աշխարհում ամեն ինչի պայմանական լինելու հանգամանքը: *«Գյուղացի մարդիկ»* շարքի թեմատիկ կողմնորոշման մեջ դիտակետի տակ դնելով գյուղն ու գյուղացուն՝ Մ. Հովհաննիսյանը բացահայտումների համար ընտրել է լեռնաղբյուրցուն՝ որպես սուբյեկտ, Լեռնաղբյուրն էլ՝ որպես օբյեկտ: Շարքը սկսում է «Որպես նախաբան» վերնագիրը կրող մուտքով, իր մեջ ներառում «Վանի», «Բուդի»,»Գյուղի ծուռը»,»Նշանի մատանին» և այլ պատմվածքներ, և տրամաբանական ու կառուցվածքային ամբողջություն ստանում «Հրաժեշտի խոսք» պատումով: Գրողը բանաստեղծական նրբանկատությամբ, փիլիսոփայական դիտարկումներով ու հոգեբանական ընդգծումներով, ներքին մենախոսության յուրօրինակ մի ձևաչափով պատմվածաշարին յուրահատուկ հրաժեշտի խոսք է ասում: Ինչպես գրականագետ Ս. Բոդոսյանն է նշում. «Նյութից մինչև բանաստեղծություն ձգվող ճանապարհը անցնում է բանաստեղծի էության միջով: Նյութը, լիցքավորվելով մարդկային ապրումներով, խոհերով ու շնչով, «այլափոխվում է», ստանում նոր իմաստ: Սա ամենևին չի նշանակում, թե նյութը իր հերթին չի ազդում բանաստեղծությունների բավանդակության վրա, նյութի և բովանդակության

միջև միշտ գործում է փոխազդեցության օրենքը»[1]: «Գյուղացի մարդիկ» պատմվածաշարը Մ. Հովհաննիսյանի հայրենի գյուղի և իր համագյուղացիների կենսապատումն է:

Արցախյան գյուղերի տարածքային, բնակլիմայական պայմանների, մարդկանց կենսակերպի, առօրյա ու հիմնավոր խնդիրների, հույզերի ու զգացմունքների, ներաշխարհի իրական ու ճշգրիտ նկարագրության ինքնատիպ դրսևորումներից է «Հարար, Հարար» պատմվածաշարը: Գրողը քննախույզի սուր դիտողականությամբ, նուրբ ելևէջումներով, փաստացի համոզումներով, փիլիսոփայական և հոգեբանական ընդհանրություններով բացում է կյանքի և մարդու դռները՝ արծարծելով արդիական հիմնախնդիրներ: Ութ պատմվածքից բաղկացած շարքն սկսվում է «Փարշի գորգը» պատմվածքով, որը Ստ. Զորյանի «Խնձորի այգին», Ս. Խանզադյանի «Սպիտակ գառը» ստեղծագործությունների թեմատիկ շարունակությունն է՝ իր թարմ ու յուրօրինակ ընդհանրացումներով: «Կնանիք», «Մոռացված արահետներ», «Ծաղրատեղ», «Հարևաններ», «Գոտկացավեր» և այլ պատմվածքներում Հովհաննիսյանը, շարունակելով հայ գրականության համար ավանդական դարձած գյուղի թեման, հանդես է գալիս նոր խոսքով, ոճային յուրօրինակ նրբերանգներով: Գյուղական կյանքը, գյուղացու առօրյան միջոց են դառնում մարդու ներքին և արտաքին աշխարհները բացահայտելու համար: Հարար գյուղի պայմանական անվան տակ գրողը ներկայացնում է Արցախի գյուղական աշխարհը և այդ բնական ու կենդանի աշխարհում ապրող մարդուն, նրա ներաշխարհը և արտաքին աշխարհի հետ ունեցած նրա կապերն ու հարաբերությունները: Գրողի նպատակը մարդկային փոխհարաբերությունների, նրանց հոգեբանության, զգայական աշխարհի, կենսապայմանների, երազանքների և վարքագծերի բացահայտումն է: Այստեղ հատկանշական են բարոյական և հոգեբանական, սոցիալ-հասարակական խնդիրների ընդհանրացումները: Գրողի պատմվածաշարերին բնորոշ ներքին կապն ու բովանդակային ու կառուցվածքային ամբողջականությունն ընդգծված է նաև «Հարար, Հարար» պատմվածաշարում: Հարարը պայմանական գեղարվեստական միջավայր է, որը գրողի համայնապատկերն է, որտեղ հիշատակված ցանկացած դեպք, իրողություն, պատկեր, զգացողություն շոշափելության չափ իրական են ու ընդգծուն, դրանում էլ հատկանշվում է Մաքսիմ Հովհաննիսյան-գրողի վարպետությունը:

Արցախում ստեղծվող գրականությունն արցախցու խառնվածքը և դիմագիծն ունի: Այստեղ գրողը գրիչ է վերցնում սուրբ դող զգալով: Այդ սուրբ դողով «գրականության տաճար» մտավ տաղանդավոր արձակագիր Արտաշես Ղահրիյանը: Չեխովի, Թումանյանի, Դոստոևսկու, Սարոյանի, Շոլոխովի, Բակունցի, Մաթևոսյանի գրականությամբ տոգորված՝ Ղահրիյանն ստեղծեց իր «երկիր-եզերքի» գեղարվեստական դիմանկարը: Հեղինակը բազմիցս է նշել,

[1] ***Բանաստեղծությունը եւ իրականությունը*** *(Հոդվածներ եւ ուսումնասիրություններ), Երեւան, 1976 թ., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, էջ 187:*

որ «թեմայի հարցում» նրան ուղղություն է տվել Հր. Մաթևոսյանը: «Պատմվածքի նյութ առ պատերազմական օրերի մանկությունդ, գյուղում ապրած-տեսածիդ հուշերը…»[1],- ասել էր Հր. Մաթևոսյանը:

Հետևելով «թումանյանական գեղջկական կյանքին ու բնանկարին, շոլոխովյան ու բակունցյան վերարտադրումներին, չեխովյան հումորին, Դոստոևսկու ցնցող դրամատիզմին, Սարոյանի ծփուն մարդասիրությանը, Պարոնյանի այրող հեգնանքին»[2]՝ Արտաշես Ղահրիյանը գրականություն մտավ իր գյուղով՝ «մե՜րթ Թաղաշատ, մե՜րթ Թաղեր անվանումներով»[3]: Իսկ Հր. Մաթևոսյանի ազդեցության մասին Ղահրիյանը նշում է. «Լեռներում բռնկվող ու շողարձակող կայծակի նման թարմաշունչ է նրա գրելաձևը, վարակիչ, ես նրանից շատ բան սովորեցի»[4]:

Արձակագիրն իր պատմվածքների համար որպես խորագիր է ընտրել «տոհմականչ» բառը, որի «անըմբռնելի ու հարազատ կապն է՝ ոգեկանչը»: Պատահական չէ Հր. Մաթևոսյանի հետևյալ ընդհանրացումը. «Լավ ես գտել «տոհմականչ» բառը գրածներիդ համար»[5]:

Ղահրիյանը գրականություն բերեց արցախյան գյուղի և նրանում ապրող մարդկանց կենսակերպն ու հոգեկերտվածքը՝ կարևորելով այն հանգամանքը, որ երբ առանցքում մարդն է, նրա հոգեբանությունը, էական չէ՝ գրածդ «գյուղագրություն» է, թե՝ «քաղաքագրություն»:

Արձակագիրը հպարտությամբ է նշում գրականագետ Ալլա Տեր-Հակոբյանի «Լիտերատուրնայա գազետա»-ում տպագրված հոդվածը, որտեղ նա զուգահեռ է անցկացրել Ռասպուտինի «Հրաժեշտից առաջ» վիպակի և Արտաշես Ղահրիյանի «Մայրական հիշատակ» պատմվածքի միջև:

Գրողի «Տոհմականչ» (1978), «Պատրանք» (1983), «Լեռան հուշ» (2002), «Թախծոտ մեղեդի» (2006) և «Տոհմականչ» հատորյակները գյուղաշխարհի մարդկանց ապրելակերպի, դժվար ճակատագրերի, աշխարհընկալումների ու հոգեվիճակների մի հետաքրքիր ընդհանրացում է: «Իմը պատմվածքն է: Նրանում ապրում է իմ մարդը, ես էլ: Իմաստուն խորհրդատվության մեջ արարվում է երկիրդ՝ միշտ ականջալուր այստեղ ապրողի կանչերին: Ո՞վ է, որ ի զորու է գրելու այն բառը, որը նկարեն է, ընկալելի է անում ծառի ու երկնի թռչունի մտածողությունը, մեղեդիացնում է երկրի ու բնակչի հավերժական հունչը տիեզերական անհայտությանը, կարողանալու է հայտնության մղել այդ անհայտը, որպեսզի միշտ մնաս հմայված նրա հոլովույթում՝ գեղարվեստի տողում ու հնչյունում»[6] , - նշում է Արտաշես Ղահրիյանը: Նա ինքն իրեն վերագտնում, հոգեպես լիանում ու ամբողջանում է միմիայն իր

---

[1] ***«Եղիցի լույս»**, 15/11/2018թ.:*

[2] ***«Գրական թերթ»**, Արտաշես Ղահրիյան, Ինքնագրույց. Ինքնադատման փորձ, 04/07/2017:*

[3] *Ն. տ.:*

[4] ***«Եղիցի լույս»**, թիվ 2, 2002թ.:*

[5] *«**Եղիցի լույս**», 15/11/2018թ.:*

[6] ***Ղահրիյան Ա.,** Տոհմականչ, Գիրք երրորդ, Ինքնագրույց. Ինքնադատման փորձ, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2017 թ., էջ 340:*

հայրենի ծննդավայրում, իր հող ու ջրի, բառ ու բանի համ ու հոտի մեջ: Գրականագետ Վարդան Հակոբյանը նկատում է. «…Հիմա Արտաշեսը կանգնած է ճիշտ իր տեղում, իր այգում, բոստանում, բառի մեջ, գյուղամեջում, աշխարհամեջում»:

Ինքնատիպ ձեռագիր ունեցող արձակագիրը փոքր կտավի վրա վրձնում է մարդկային հարաբերությունների բարդ տարածքը և այդ ձևաչափով արժևորում բառի գրավիչ աշխարհը: Մտքերի խտության, գեղեցիկ բառաշաղախի, յուրօրինակ հանգուցալուծումների մթնոլորտ է ստեղծում Ղահրիյանի արձակը: Հետաքրքիր են համեմատությունները («-Աղջի, անխե՞լք, ի՞նչ ես պուճախումդ տապո արել թառի ննջող հավի պես»[1], «Սուզվեցի իմ այն միգապատը, ինչպես բռնված ճանճը՝ սարդոստայնի կենտրոն՝ սարդի ոտքերի մեջ»[2] և այլն), գեղեցիկ պատկերները, բանաստեղծական հուզականությունն ու ռիթմը (Ալվարդը … նա՝ դպրոցական նստարանի ընկերուհին, ում փոքր հպումն իրեն սարսռեցնում էր, և իր մտքում անվարժ տողեր էին հյուսվում նրան քաղցր, տառապագին, որոնց լուռ մտաբերումն իսկ վախով էր պարուրում, դրանք մանավանդ անքուն գիշերներին մոլորեցնում էին և չգիտեր անդնդասույզ իջնում էր ո՞ր… նա՝ պատկից հարևան միայնակ որբ աղջիկը, որ հասակ էր առնում դիմացի պատշգամբում՝ լցվելով, լցվելով իր սիրտը»[3]): Հայի գենի այս հետաքրքիր ընդհանրացումը դեռևս հայ մեծանուն գրողն էր նկատել՝ արձակ եմ գրում՝ ստացվում է բանաստեղծություն: Արտաշես Ղահրիյանն իր նախնիների «աննյութ, խորունկ ոգեկանչով», նայելով իր «գյուղամեջքի սարերի» «անտառուտ բարձրերին», հոգեբանական նուրբ դիտարկումներով, սիրտ կեղեքող ընդգծումներով բացահայտում է մարդու ապրելու և արարելու բռնկումները, նրա հոգու և ոգու ինքնատիպ դրսևորումները՝ կյանքի այս կամ այն իրողության եզրույթում: Գյուղաշխարհի դժվարությունների, հոգսերի ու գոյապայքարի ամենօրյա հաղթահարումների, կորուստների ու ձեռքբերումների անընդհատ կրկնվող հերթականության մեջ գրողը բացազատում է մարդու ներաշխարհը: Ղահրիյանի գրական ձեռքբերումներում առանձնակի տեղ է գրավում հայ գյուղացի կնոջ կերպարակերտումը: «Ալվարդի ուխտը», «Երկրորդ գալուստ», «Արուսյակը», «Չգրված նամակ» և այլ պատմվածքներում ալվարդները, շուշաններն ու արուսյակները, արփիկներն ու ալմաստները, իրենց խռովքը, մենությունն ու կարոտները թաքցրած, լուռ ու մունջ քայլում են կյանքի արահետներով: Պատահական չէ, որ Ա. Ղահրիյանը հպարտությամբ է նշում, որ կերտել է հայ աշխատավոր գեղջուկ կանանց ազնվական կերպարների մի ամբողջ շարք:

---

[1] *Ն. տ.:*

[2] ***Ղահրիյան Ա.,*** *Տոհմականչ, Գիրք առաջին, Տոհմականչ, Ստեփանակերտ, ԳՄ «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2007 թ., էջ 80:*

[3] ***Ղահրիյան Ա.,*** *Տոհմականչ, Գիրք երրորդ, Ինքնագրույց. Ինքնադատման փորձ, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2017 թ., էջ 6:*

Արձակագիրն իր գրական հետաքրքրությունների համար շնորհակալ է ճակատագրին, քանի որ, եթե այլ ասպարեզ վիճակվեր նրան, նա այն չէր լինի, ինչ հիմա է: Արցախի Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում ծնված գրողը, 37 տարի ապրելով Երևանում, տեղափոխվել է հայրենի ծննդավայր: Գյուղական հոգսառատ առօրյայի շրջապտույտում, գոմ մաքրելով, կովի հետ զրույցի մտնելով, այգի ջրելով, խոտ հարելով, գրողի «միտքը դանդաղ ներծծում է պատմվածքի նյութը՝ քաղված բնավորություններից, ուրախ-տխուր նրանց ապրումներից, անտեսանելի մանրամասներից…»[1]:

Արտաշես Ղահրիյանի արձակը հետաքրքիր շերտավորումներ ունի, արցախաբույր ու արցախաշունչ է նրա յուրաքանչյուր տողը, որն, ինչպես ինքն է խոստովանում՝ գրվում է դժվար: Գրողը ստեղծում է արժեքավոր գործեր լեռնաշխարհի և նրանում ապրող մարդու մասին՝ թարմ պատկերներով, հետաքրքիր համեմատություններով, հոգեբանական ընդհանրացումներով, դյութիչ բառ ու բանով: Մաքսիմ Հովհաննիսյան և Արտաշես Ղահրիյան – գրողների ինքնատիպությունը պայմանավորված է թեմատիկ բազմազանությամբ, բարձր ինտելեկտուալությամբ, զգացմունքների բնականությամբ, կենդանի ու գունեղ լեզվաոճական առանձնահատկություններով: Գրողները, իրենց ասելիքն ամփոփելով բովանդակալից շարադրանքում, բաց տարածություններ չեն թողնում: Նրանց լեզվի հարստությունը շարունակաբար ճյուղավորվում է, նպաստում յուրօրինակ ոճի դրսևորմանը, որտեղ իրենց ուրույն դերն ունեն բարբառային բառերն ու բառակապակցությունները, ժողովրդական առած-ասացվածքները, հետաքրքիր համեմատությունները, որոնք առավել վառ գույներ են հաղորդում նրանց պատումներին:

Յուրացնելով հայ դասականներից Ակսել Բակունցի ավանդույթներն ու սովորելով Հրանտ Մաթևոսյանի վարպետությունից՝ Մաքսիմ Հովհաննիսյանն ու Արտաշես Ղահրիյանն առաջին հերթին բացահայտում են արցախցիների կենսափիլիսոփայությունը, նկարագրում նրանց կրած տառապանքը, հայ մարդուն հատուկ կամքի ուժն ու հավատն ապագայի հանդեպ:

Անցյալ-ներկա-ապագա փոխկապակցության մեջ իրականի և երևակայականի համադրմամբ՝ արձակագիրներին հաջողվում է ստեղծել ժամանակի ընդգրկուն պատկերը: Նրանց ստեղծագործություններում կարևոր տեղ են գրավում հերոսների վերհուշը, ինքնաբացահայտման հոգեբանական երանգը: Պատմվածքներում օգտվելով կոմպոզիցիոն տարբեր ձևերից ու միջոցներից՝ նրանք հասնում են մարդկային հոգևոր աշխարհի ցուցադրմանը:

---

[1] ***Ղահրիյան Ա.,*** *Տոհմականչ, Գիրք երրորդ, Դեմդ մարդ-ընթերցողն է, Ստեփանակերտ, ԼՂՀ ԳՄ «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2017, էջ 349:*

Գրականություն

1. Բանաստեղծությունը և արդիականությունը (Հոդվածներ և ուսումնասիրություններ), Երևան, 1976 թ. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
2. Հովհաննիսյան Մ., Երկեր, Առաջին հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրատուն, 2005:
3. Հովհաննիսյան Մ., Երկեր, Երկրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրատուն, 2006 :
4. «Գարուն», 1968, N 8:
5. «Գարուն», 1968, N 11:
6. «Գարուն», 1972 , N 11:
7. Գրքերի աշխարհ», 1979 , N 5:
8. «Գրական Ադրբեջան», 1984 , N 5:
9. Հովհաննիսյան Մ., Երկեր, Երրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրատուն, 2008:
10. Հովհաննիսյան Մ., Երկեր, Չորրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրատուն, 2009:
11. Ղահրիյան Ա., Տոհմականչ, Գիրք առաջին, Ստեփանակերտ, ԳՄ «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2007 :
12. Ղահրիյան Ա., Տոհմականչ, Գիրք երկրորդ, Ստեփանակերտ, ԳՄ «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2008 :
13. Ղահրիյան Ա., Տոհմականչ, Գիրք երրորդ, Ստեփանակերտ, ԳՄ «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2017 :
14. Մաթևոսյան Հր., «Սպիտակ թղթի առջև», Երևան, «Հայ գիտակ» հրատ., 2004:
15. «Սովետական գրականություն», 1976 , N 1:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

ՀՏԴ 809.198.1
Հայոց լեզու

Սիլվա ՄԻՆԱՍՅԱՆ
ԱրՊՀ, բ.գ.թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
e-mail: silvaminasyan50@mail.ru

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՆՈՐ ՏՊԱԳՐՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Շիրազի (Կարապետյան) նոր տպագրված բանաստեղծությունների նորակազմությունները 400-ից ավելին են: Դրանք ձևաբանորեն մոտավորապես բաշխված են այսպես՝ գոյական՝ 145, ածական՝ 200, բայ՝ 78, մակբայ՝ սակավ: Հոգեկան ապրումներով դրսևորված խոտան նորակազմությունները ածանցավոր, բարդ ու բարդածանցավոր են՝ հիմնականում գոյական+գոյական, գոյական+բայ կաղապարներով: Պարզ միավորները իմաստային նորաբանություններն են, որոնք քանակով զիջում են: Քննված բաղադրությունները լեզվական բնութագրումներով համապատասխանում են մեծանուն գրողի՝ հանրությանը վաղուց հայտնի գործերի նորակազմություններին:

Բանալի բառեր՝ *չափածո, հեղինակային նորակազմություն, իմաստային նորաբանություն, հիմնական ձևույթ, ածանցավոր, բարդ, բարդածանցավոր բառեր, գոյական, ածական, բայ, շարահյուսական հարաբերություններ:*

С.Минасян

НЕОЛОГИЗМЫ В НОВЫХ ОПУБЛИКОВАННЫХ СТИХОТВОРЕНИЯХ ОВАНЕСА ШИРАЗА

Неологизмов в последних двух опубликованных художественных работах именитого армянского поэта Ованеса Ширазa (Карапетяна) более чем 400. Они, по принадлежности к частям речи следующие: существительные-145, прилагательные-200, глагол-78, наречия – незначительны. Активные неологизмы наделенные психологическими оттенками, по лексической структуре являются сложными и сложно – производными (несколько смысловых неологизмов с несколькими простыми структурами). Строй слов наделенных таким богатством, по принадлежности к частям слова, в большинстве случаев существительные.
По типу структуры они следующие: существительное + существительное, существительное + глагол. В стилистическом плане преобладают подчиненные, что свойственно армянскому языку.
Ключевые слова: *поэзия, авторские неологизмы, неологизм- значение, существительное, прилагательное, глагол, производные, сложные, сложнопроизводные слова, синтаксическое отношение*

S.Minasyan

NEOLOGISMS FROM THE NEW PUBLISHED PAGES OF HOVHANNES SHIRAZ

There are more than 400 neologisms in the last two published artworks of the eminent Armenian poet Hovhannes Shiraz (Karapetyan). According to their parts of speech, they are the following: nouns-145, adjectives-200, verb-78, adverbs are insignificant. Active neologisms endowed with psychological connotations are complex and difficult derivative in terms of lexical structure (several semantic neologisms with several simple structures). Build words endowed with such wealth by belonging to parts of the word, in most cases nouns.

According to the type of structure, they are as follows: noun + noun, noun + verb. In the stylistic terms subordinates prevail, which is typical of the Armenian language.

Keywords: *poetry, originality of authorship, neologisms, one-root, basic form, noun, adjective, verb, derivative, complex derivative*

Ի՞նչ ավանդեմ, ա՛զգ իմ, ես քեզ, ի՛նչ պատգամեմ վերջին շնչով,
Որ խենթ սերս իրավ դառնա *նոր իմաստուն* Հայաստանի:
(ԱԷ, էջ 204)

Հայ չափածո խոսքի վարպետ Հովհաննես Թադևոսի Կարապետյանի՝ Շիրազի անտիպ բանաստեղծությունները վերջին տարիներին հրատարակվել են երկու առանձին ժողովածուներով՝ «Հուշարձան հայրիկիս»[1], «Անտիպ էջեր (գիրք առաջին)» [2]՝ Սամվել Մուրադյանի խմբագրությամբ, ծանոթագրություններով և Սամվել Բալասանյանի հովանավորությամբ:

Մեր կողմից հաշվարկվել են 400-ից ավելի նորաբանություններ[3] (հիմնականում նորակազմություններ):

---

[1]. ***Հովհաննես Շիրազ***, *Հուշարձան հայրիկիս, «Հայրապետ» հրտրկչ, Ե., 2017 թ., 240 էջ :*

[2] . ***Հովհաննես Շիրազ***, *Անտիպ էջեր, գիրք առաջին, «Հայրապետ» հրտրկչ, Ե., 2018 թ., 300 էջ:*

[3].*Նորաբանությունները համեմատվել են հետևյալ աշխատությունների բառակազմի հետ՝ Աւետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի (2 հատոր, վերահրատ.), ԵՊՀ հրտկչ., Ե., 1979 թ., 1140-1170 էջ, Ժամանակակից հայերենի բացատրական բառարան (4 հ.), ՀՍՍՀ ԳԱ հրտկչ., Ե., 1969-1980 թ., 488-720-574-828 էջ, Աղայան Էդ., Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրտկչ., Ե., 1976 թ., 1614 էջ, Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, «Լույս» հրտկչ, Ե., 1973 թ., 980 էջ, Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, «Նաիրի» հրտկչ., Ե., 2002 թ., 492 էջ, Գալստյան Ա. Ս. (ղեկ.), Հովսեփյան Գ. Կ., Սահակյան Ա. Գ., Սահինյան Լ. Ե., Նոր բառեր, Ա պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրտկչ., 2015 թ., 196 էջ, Գալստյան Ա. Ս. (ղեկ.), Գալստյան Ս. Ա., Հովսեփյան Գ. Կ., Սահակյան Ա. Գ., Սահինյան Լ. Ե., Նոր բառեր, Բ պրակ, Ե., ՀՀ ԳԱԱ «Ասողիկ» հրտկչ., 2016 թ., 184 էջ, Գյուրջինյան Դ., Հայերեն բառարան-տեղեկատու (միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր), «Ասողիկ» հրտկչ., Ե., 2001 թ., 84 էջ, Ամառյան Հ. Հ., Հայերէն արմատական բառարան, 4 հ., ՀՊՀ հրտրկչ. (վերահր.), Ե. 1971-79 թթ., 700-688-636-*

Նորակազմություններով առատ բանաստեղծություններից են՝ «Հեռվում» (2, 198), «Տրտմում եմ» (2, 131), որոնք ութական հեղինակային բառ են պարունակում, իսկ «Մրմունջ» բանաստեղծությունը՝ ինը: «Ողբ հայոց լեզվի» բանաստեղծության մեջ, որտեղ հայ հոգու խոր վիշտն է ներկայացվել, կան՝ *դավընդունակ, գաղտնածակ, հայրնդդեմ* (2, 93, վերջինս նաև «Թոնդրակեցիներ»-ում է կիրառված), *քծնագլուխ, գաղտնաթուրք* կազմությունները (Դավաճան է՝ ով հայ է, բայց չի խոսում հայերեն,// *Նոր վասակ* է՝ ով սուզվող ազգի վշտով չի լալիս,// *Քծնագլուխ* է տալիս *գաղտնաթուրքին* շնորհեն, 2, 95):

Բառակազմական տեսակետից քննվող բառերը տարաբնույթ են. երբեմն հնչեղ են *-վ-* ածանցով բաղադրվածները՝ անհավատվել (1, 225), խնձորվել, ծիրանվել, համեմվել (1, 184, համեմ դառնալ՝ անուշաբույր լինել), կերոնվել (1, 102), հասկվել (1, 218), հուշաշխարհվել (1, 201), հուշարձանվել (1, 222), մահիկվել (1, 159), նեցուկվել (1, 197), շոկոլադվել (1, 147), որջվել (1, 178) և այլն:

Հարադիր *նորակազմությունները* սակավ են, կան շրջասության արժեք ունեցողներ: Օրինակ՝ քառյակներից մեկում *սրվան ծիտ* (2, 63, Գարեգին Սրվանձտյանց՝ Զրեվանդատ[1], *ինքնուրույն, ազատ գործած*) հարադրությունը կիրառված է շատ դիպուկ, խոսուն ու արտահայտիչ մեր բառ ու բանի գնահատմամբ՝ Հայոց խոսքի ծաղկեծաղիկն հավաքելով՝ մեղվից էլ նուրբ,// *Սրվան ծիտն* էլ արծվացավ, խոսքի խորքից, համով-հոտով (2, 63): *Կռունկ-երամ* (2, 154) կազմությունը լեզվական առումով անհարիր է թվում: Այն համատեքստային պահանջով կարծես արդարացվում է *ագռավ-կռունկ, խումբ-երամ* խոսքային հակադրությամբ. Ագռավն ինչքան շատ խմբվի, իմացիր,// Գարնանաբեր *կռունկ-երամ* չի դառնա:[2]

Նորակազմ հարադիր կառույցի բաղադրիչներից մեկը երբեմն կից գործածվել է՝ հնչեղացնելով իմաստաբանական արժույթը՝ արև-մշակ/ արև (2, 43՝ *Արևս* քեզ *արև-մշակ*), *հուշ-ավազ/ ավազ* (Հովի պես կանցնի ծովդ, մի բուռ *հուշ-ավազ* թողած,// *Ավազի* ծովն էլ, ավա՛ղ, կաթիլի նման կանցնի… (2, 226)): Հազվադեպ է հատուկ անվան երկրորդ բաղադրիչ դառնալը (*դիպվածային գրություն*), ինչպես՝ ծծմայր-Ծծմակաքիթ (2, 176), հող-Հայաստան (2, 229):

Կառուցվածքային յուրահատկություն է նաև մի շարք բաղադրիչների՝ որպես տարածված սերող հիմքերի հանդես գալը, օրինակ՝ *միշտ, յոթ՝*

---

676 էջեր, Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան (II հրտկ.), Ե.. 2011 թ., 644 էջ, Словарь иностранных слов (16 и.), М., 1988, 624 стр.):

[1].Սրվանձ-ը պահլավական, պարսկական անուն է, նշանակում է ժամանակածին, էջ 323, տե՛ս Ավետիսյան Տ. Մ., «Հայոց ազգանունների բառարան», Վան Արյան հր., Ե., 2000 թ., 388 էջ:

[2] Բառը կռունկերամ բաղադրությամբ հանդիպում է Ս. Էլոյանի բառարանում՝որպես թարգմանություն ռուս պոեզիայից (էջ 251):

մշտաբերան (1, 121), մշտավեճ (1, 104), մշտաբուք (2, 152), մշտազրահ (2, 156), մշտալաստ (2, 124), մշտախոլ (2, 169), մշտակռիվ (2, 117), մշտահամբեր (2, 152), մշտամանկիկ (2, 156), մշտանուրբ (2, 39, 42), մշտասանձ (2, 127) և այլն: *Յոթ* արմատով կազմություններն իշխում են I գրքում՝ յոթնագութան (1, 197), յոթնաթոռ (1, 95), յոթնածու (1, 184), յոթնականանի (1, 43), յոթնակունք (1, 191), յոթնահող (1, 44, 130), յոթնանախշուն (1, 137), յոթնատեղ (1, 225), յոթնվել (1, 95), յոթնաբուրվառ (2, 68), յոթնածով (2, 168), յոթնամեծ (2, 209), յոթնուրեք (2, 74) և այլն: Երբեմն դրանք հոմանշվում են, ինչպես՝ *մշտատկլոր-մշտամերկ*՝ (2, 241), *լեզվատաշտ* (1,251)- *լեզվաբույն* (2, 73): *Լեզվատաշտ* բառը հանդիպում է Ս. Էլոյանի[1] բառարանում՝ *Լեզվական հարցերի շուրջն ընթացող վիճաբանությունների ասպարեզ* նշանակությամբ: Նշված բառարանի հրատարակության ժամանակ Հովի. Շիրազն արդեն լուսահոգի էր, ուրեմն՝ գեղագետը տասնամյակներ առաջ էր բառը յուրովի գործածել: «Հայոց գրողականները» բանաստեղծությունում *լեզվատաշտ* բառը գործածվել է *միևնույն լեզվով խոսողներ* հասկացությամբ, այսինքն՝ *նույնալեզու տեղանք*, ինչպես՝ *Լեզվատաշտից* հայոց վսեմ (1, 251): Հայերեն խոսելու վայր իմաստով է *լեզվաբույն*-ը «Այնճարցիներին» բանաստեղծությունում (կա *լեզվաբուն* բառը՝ հնացած՝ լեզվալընտանիք[2]). Այնճա՛ր, հայոց բերդ *լեզվաբույն*,// Այնճա՛ր, անճար չես մնա,// Մուսա լեռն էլ քեզնով խնդուն// Մասիս պիտի բարձրանա…

Հատուկ անուններից կերտված նորակազմությունները ևս զգալի քանակ են կազմում քննվող գրքերում՝ անմասիս (1, 232), գյումրինամե (1, 11, 14, 107, 116, 193), էրզրումված/ել (1, 73, պատմական Կարին), լոխմանի (1, 91, 114, 225), հուդայվել (1, 75), մասիսվել (1, 124), շիրազական/ներից (1, 24, 2, 29), պառնասվել (1, 121), սևանվել (1, 97), փյունիկվել (1, 76), դամոկլված (2, 32), երևանված/վել (2, 86, 258), թեմուրլանկ (2, 212), խայամախոս (2, 225), *ծծմայր*-Ծծմակաքիթ (2, 176), կերչաեզր (2, 120), վեր/ հիսուսվել (2, 68), մասիսագոչ (2, 252), մասիսատենչ (2, 29, 60, 62, 78), մասիսվել (2, 214, 216, 256), մեծ մասիսաչափ (2, 246), շիրազականչ (2, 78), վեր/պառնասվել (2, 51), Սրվան ծիտ (2, 63, Գարեգին Սրվանձտյանց), սևանաչափ (2, 245):

Տարբեր խոսքի մասերից *նորակազմ* բայ կերտելու երևույթն առավել ուշադրություն գրավող է մեծ բանաստեղծի մոտ: Օրինակ՝ *անտուն* ածականից կերտված նորակազմ *անտունել* բայը դարձել է բառային կապակցությունը հակիրճ դարձնելու գեղագիտական նվաճում, ինչպես՝ Նոր չէ վիշտս, որ մազերիս մեջ ձյունեց,// Չնաշխարհիկ գիշերներս *անտունեց*… (2, 116), կամ՝ *յոթ*-ից՝ *յոթնվել* (1, 95): Այս երևույթը տարածվել է նաև այլ ոճերում:

---

[1] *Տե՛ս* ***Ս. Էլոյան****, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, էջ 198:*

[2]. *Տե՛ս* ***Աղայան Էդ., Բ.****, Արդի հայերենի բացատրական բառարան, Հայաստան հրտկչ., Ե., 1976 թ., էջ 520:*

-*վ*- բայածանցը շիրազյան նորակազմություններում հաճախակի կիրառություն է ստացել: Ս. Գ. Աբրահամյանն այդպիսի երևույթը *սկզբնաձևային բայածանցավոր* (ածանցյալ սկզբնաձևեր)[1] է համարել: Դա արևելահայերենում հարաճուն բառակազմական գործընթաց է: Օրինակ՝ Ա. Ա. Աբրահամյանը նկատել էր, որ մի շարք բայեր XX դարի սկզբին գործածվել էին նաև առանց *–վ*- ածանցի[2], օրինակ՝ Վ. Տերյան՝ Վերջին լույսերը *կվախճանեն* (կես դար հետո և հիմա՝ *կվախճանվեն*), Ստ. Զորյան՝ Մի ժամ հետո, որ ամեն ինչ *խաղաղել* էր (կես դար հետո և հիմա՝ *խաղաղվել էր*), Դ. Դեմիրճյան՝ Ամեն ինչ *խաղաղեց* (կես դար հետո և հիմա՝ *խաղաղվեց*) ևն: Ահա մեր կողմից նկատվածը Հովի. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմում (թեև սա հրատարակվել է 2014 թ., բայց հեղինակն աշխատել էր XX դարի 50-ականներին)՝ *Պապանձեց* քեզնով լեզվագար դևը (էջ 262), իսկ այժմ ասում ենք՝ *պապանձվեց* (այդպիսի փոփոխությունները սկզբնական շրջանում լեզվաբանների կողմից խաթարում են համարվել): Այժմ էլ շարունակվում է բայական համակարգում *–վ/ել* բաղադրյալ ածանցի բառակազմական գործընթացը: Նախորդ դարի 60-ականներից Հովի. Շիրազի գեղարվեստում առավել ևս ուշադրություն գրավեցին հատուկ անուններից կերտված այդ տիպի բայերը[3]: Լեզվական այդ գործընթացը շարունակվել է մեծ բանաստեղծի գործերում՝ ավարայրվել, արագածվել, արազվել// արաքսվել, արարատվել, աքիլլեսվել, երևանվել, կայենվել, կոմիտասվել, նարեկվել, նժդեհվել, շամիրամվել, չարենցվել ևն: Այդ տիպի բառեր կան քննվող գրքերում, ինչպես՝ հուդայվել (1, 75), մասիսվել (1, 124), սևանվել (1, 97), փյունիկվել (1, 76), դամոկլված (2, 32), վեր/ հիսուսվել (2, 68), վեր/ պառնասվել (2, 51) և այլն: Այդ երևույթն արցախյան գոյապայքարին նվիրված չափածոյում ևս արտահայտվեց (կարճ խոսքի բանաձև դարձավ)՝ արևսարվել, բեկորվել (հերոսամարտիկ Աշոտ Ղուլյանի մականունն էր), դավիթվել, թարթառվել, խաչենվել ևն:

Բառային իմաստի ընդարձակում և բայասեռի փոփոխություն ունեն *նվիրել// նվիրվել, հավաքել// հավաքվել* և այլ բայեր: Ստացվել է միջին-անդրադարձ[4] բայը. կարելի է համարել բայի սեռային կարգի համանուն: Շիրազյան այս տիպի օրինակներից են՝ համասփյուռվել (2, 63), բանակվել (2, 60), աշխարհվել (2, 62), նորվել (2, 65, *նորել* ձևը սովորական է), ճրագվել

---

[1]. *Տե՛ս* ***Աբրահամյան Ս. Գ.****, Ժամանակակից գրական հայերեն, ՀՍՍՀ ԳԱ հրտկչ., 1981 թ., էջ 187:*

[2]. *Տե՛ս* ***Աբրահամյան Ա. Ա.****, Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, էջ 650:*

[3]. *Տե՛ս* ***Մինասյան Ս.Ա.,*** *«Բայակազմական առանձնահատկությունները Հովհ. Շիրազի պոեմներում», «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1986 թ., N 12, էջ 30-36: Հատուկ անուններից կերտված բայեր, Հայաստան հրտ.,Դիզակ պլյուս տպ., Ստ., 2004 թ., 72 էջ: Թեմային մասնակի անդրադարձել է նաև Բաղդասարյան Գ. Խ., Արդի հայերենի բայասեռի և բայակազմության հարցեր, Ստ., 2005 թ., 88 էջ (II մշակում):*

[4]. *Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, էջ 640:*

(2, 52՝ իրական դառնալու հույս), նժույգվել (2, 131), ամրոցվել (2, 188), հենակվել (2, 192), պառնասվել (1, 121) և այլն: Գոյականների (ուրուր և սոխակ) փոխաբերված հակադրության հիմքի վրա նորակազմ բայը (*ուրուրվել*) հակիրճ կառույցով իմաստասիրական ընդհանրացում է կատարում՝ *Ուրուրվում* են սոխակները հույսերիս (2, 116):

Շիրազը *նույնահիմքություն* ոճական միջոցին դիմելիս երբեմն որպես եզր է գործածել նորակազմությունը՝ *կուսախաղաղ/ կույս* (Մի՞թե չի գերվել քո *կուսախաղաղ*// Մատաղ հայացքը դեռ *կույս* մի սրտի (2, 110)), *ճահճախոտ/ ճահճագո* (Անդորրի մեջ թող մեռնի *ճահճախոտը ճահճագո* (2, 131)), *լուսաբուրվառ-վառել* (*Լուսաբուրվառ* իմ քնարն է ձեզ *վառում* (2, 52)) և այլն: Երբեմն երկու բառերի հարևանությամբ երկու նորակազմություն է լինում, ինչպես՝ *Եղնիկին, վիթին* շամփրի քաշում՝// Հանգիստ իշխում են վագրերի նման… ո՛վ խեղճ,// Ո՛վ իմ քնարերգ, ո՛վ *եղնիկենի*, ո՛վ *աղավնավիթ*,-// Ո՛վ դու իմաստուն մեծ Սողոմոնի ծնած իմ Դավիթ (2, 144):

Նորակազմությունը երբեմն հականիշ կառույց է դառնում՝ *Պառնաս - անպառնաս* (Ով քո անունն հանեց *Պառնաս*՝ այս *անպառնաս* դարում էլ… (2, 231)), *մարմին-ոգեմարմին, պիղծ-սրբագեղ* (Հետ մարմնո՞ւյս կռվեմ,// Թե՞ *ոգեմարմնույս*… Հետ պղծո՞ւյս կռվեմ,// Թե՞ *սրբագեղույս*… (2, 90-91)):

Երանգավորող ածանցներ են մասնակցել նորակազմություններին (քիչ են), ինչպես՝ աստվածիկ (1, 154), արևապաշտիկ (2, 276), բոստանիկ (1, 140), բուռիկ (2, 169), գառնուկ-մանուկ (1, 27), հավքիկ (1, 51), հայրախոսիկ (1, 105, 170), վտակիկ/ներ (2, 51՝ ոչ հայտնի *բանաստեղծներ*. Կուզեն չափվել Արաքսի հետ մռնչան՝// *Վտակիկներն* այս մթին), օրիկ (2, 40՝ Որ դու վշտոտ իմ սիրտ, գեթ մի *օրիկ* բերկրես):

Հիմնական ձևույթի կրկնությամբ *նորակազմություններ* քիչ են կիրառված, ինչպես՝ առվեառու (1, 16), գրկեգիրկ (1, 149), գրքեգիրք (1, 149), թումբեթումբ (1, 51), լեռնելեռ (1, 79), ծաղկեծաղիկ (1, 37), մարգեմարգ (1, 37), մահճեմահիճ (2, 244): Սակավ հանդիպում են գծիկով կառույցներ (նորմավորված է համադրականը)՝ *կիսվե-կես* (1, 148, խոսակցական ոճ):

Նորակազմության բաղադրիչը երբեմն *բարձրացող աստիճանավորում* է ստեղծում՝ Ելնում, մի նոր *Միս* ես դառնում,// Որ *մասիսվես*, ինչ էլ լինի (2, 256, խոսքը վերաբերում է Երևանին):

Քննված 400-ից ավելի *նորակազմությունները* խոսքիմասային հետևյալ պատկերն ունեն. գոյական՝ 145, ածական՝ 200, բայ՝ 78, մակբայ՝ սակավ: Ածականների գերիշխանությունը բնական է ու չափածոյի գեղագիտական առանձնահատկություններից է բխում:

Հետաքրքիր զուգորդումով ածական խոսքի մաս է կերտվել *դահիճ* (հոգեպես սպանող՝ վնասող) այլաբերված գոյականին գերադրական աստիճանի ձևույթի համադրմամբ՝ Կնոջ խրախճանքն *ամենադահիճ* (2, 244):

Նորակազմությունները Հովի. Շիրազի «Հուշարձան հայրիկիս» և «Անտիպ էջեր» գրքերում ունեն հետևյալ խոսքիմասային թվային շարքերը. I-ում՝ 65 գոյական, 77 ածական, 45 բայ և 10 մակբայ, II-ում՝ 80 գոյական, 120 ածական, 33 բայ և 2 մակբայ: Ըստ կազմության՝ ունենք հետևյալ պատկերը՝ ածանցավոր բառեր. I-ում՝ 61, II-ում՝ 50 (ընդհանուր՝ 111), բարդ՝ 81-131 (ընդհանուր՝ 212) և բարդածանցավոր՝ 54- 33 (ընդհանուր՝ 87): Նշվածներում հոդակապը գործուն բաղադրիչ է:

Նորակազմությունների սերող և բաղադրող հիմքերում գերակշռում է *գոյական* բաղադրիչը. օրինակ՝ առաջին գրքում կա մոտավոր 212, II-ում՝ 280 գոյական բաղադրիչ, *ածական*՝ I-ում՝ 38, II-ում՝ 50, *թվական*՝ 9- 5, *դերանուն*՝ 0- 8, *բայ*՝ 35- 28, *մակբայ*՝ 9- 14:

Մթագնված հարաբերությամբ կառույցների խոսքիմասային առանձնահատկությունների վերականգնումը մեծ ջանք է պահանջում, ինչպես՝ *աշխարհակյանք*՝ 1. աշխարհի կյանքը պարունակող, 2. աշխարհին կյանք պարգևող՝ Բայց թե արևն էլ ընկնի *աշխարհակյանք* իր գահից (2, 225), *դագաղազարդ*՝ 1. գոյական+բայ՝ դագաղը զարդարող, 2. գոյական+գոյական՝ դագաղի զարդ՝ Ձեզ էլ *դագաղազարդ* օշինդրներ ողբի (2, 147), 1. Գ+Գ, թե՞ 2. Ա+Գ՝ *հայավանդ* (2, 74)՝ հայի ավանդ//հայկական ավանդ և այլն:

Քննվող գրքերի նորակազմությունները հիմնականում երկհիմք են: Կաղապարների պատկերը հետևյալն է՝ Գ+Գ (I-ում 50, II-ում՝ 77)՝ ազգանիշ (2, 252), աղավնավիթ (144), աղվեսասիրտ (2, 154), ամպամրրիկ (2, 131), աշխարհաշահ (2, 257), առյուծազարմ (2, 154), գայլ-թռչուն (2, 230, թշնամին՝ Թուրքիան) և այլն, Գ+Ա (քիչ են)՝ խղճազուրկ (2, 252), կուսախաղաղ (2, 110), պոռնկապիղծ (2, 244), սառցալուռ (2, 179), հայընդդեմ (ԱաԱ, 2, 93, «Թոնդրակեցիներ»-ում կիրառված է), Գ+Բ (I-ում 36, II-ում՝ 38)՝ ազգագետ (2, 64), ազգահառաչ (2, 70), ազգաձոնել (2, 126), անսերմնացան (2, 198), անրջատանջ (2, 162), աշխարհաթունդ (2, 131), աշխարհաստատ (2, 227, աշխարհ+հաստատ՝ հ-երի համաբանություն), արևապաշտիկ (2, 276), սիրակույր (2, 31) և այլն, Ա+Ա (քիչ են)՝ հար-հավիտյան (2, 256, հար՝ կից), սրբագեղ (2, 90), Ա+Գ՝ արծաթաս (2, 220), բյուրաեղջյուր (2, 169), բյուրաձի (2, 187), բյուրամեղք (2, 90), բյուրափեղկ (2, 90), գաղտնաթուր (2, 227) և այլն, Թ+Գ՝ յոթնաձով (2, 168), քառագահ (2, 62), Թ+Ա՝ յոթնամեծ (2, 209), Թ+Դ՝ յոթնուրեք (2, 74), Բ+Գ՝ աղոթաշուրթ (2, 198), , քծնագլուխ (2, 94), քծնախենթ/երին (2, 112), Մ+Բ՝ մշտազրահ (2, 156), մշտախոլ (2, 169), մշտահամբեր (2, 152), մշտասանձ (2, 127), մշտաքանդ (2, 192), Մ+Գ՝ մշտաբուք (2, 152), մշտաբերդ (2, 192), մշտալաստ (2, 124), մշտակռիվ/ն (2, 117), մշտահուր (2, 90), մշտամանկիկ (2, 156), Մ+Ա՝ մշտամերկ (2, 112, 241), մշտանուրբ (2, 39, 42), մշտավեհ (2, 241), մշտատկլոր (2, 241), նորանենգ (2, 172):

Եռաբաղադրիչ բարդությունների կաղապարներում կան նաև մթագնվածներ (հատկապես կրկնաբերված ձայնարկությունները)՝ Գ+(Ձ+Ձ՝

մ-ձայնարկություն, Հ. Աճառյան)՝ հայրենամրմունջ[1] (2, 70, հայրենիքի համար մրմնջացող՝ մուռ+մուռ+ալ՝ ԱաԱաա, մ-ր-մ-ուն-ջ՝ ԱաԱաա), Թ+Գ (Բ+Բ)՝ յոթնաբուրվառ (2, 68), Գ+Գ (Բ+Բ)՝ խնկաբուրվառ (2, 215) :

Քառաբաղադրիչ կազմությամբ մեկ բառ կա՝ Գ+Գ-Գ+Գ կաղապարը՝ *ծծմայր*-Ծծմակաքիթ (2, 176):

Սերող և բաղադրող հիմքերի շարահյուսական հարաբերությունները տարաբնույթ են՝ *ստորոգումային*՝ 2 (1-ում և 2-ում՝ մեկական), *ստորադասական* (1-ում՝ 115 (որոշչ.՝ 65, հտկց.՝ 6, խնդր.՝ 30, պարգ.՝ 14), 2-ում՝ 155 (որոշչ.՝ 69, հտկց.՝ 27, խնդր.՝ 39, պարգ.՝ 25)) և *համադասական* (1-ում՝ 34, 2-ում՝ 21, խառը՝ 1-ում՝ 1, 2-ում՝ 13): Երբեմն մթագնված բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների վերականգնումը մեծ ջանք է պահանջում, ինչպես՝ *բարձրագոռոզ* (1, 16), *պարագայական*՝ բարձրից (պաշտոն, կացություն) գոռոզացած, *համադասական*՝ վերին դաս է ու գոռոզ, ըղձերգանք (1, 152)՝ *որոշչային* և *պարագայական*: Մթագնված է *ժայռաքարտեզ*-ը՝ *որոշչային* հարաբերություն, ժայռի նման քարտեզ ունեցող, ժայռերով լցված քարտեզ (հարթավայր՝ դաշտ չունեցող երկիր, փոքր) և *հատկացական* (ժայռերի քարտեզ)՝ Մեր մեծածով *ժայռաքարտեզն* ահարկու (2, 207):

Ստորոգումային հարաբերությունը բաղադրյալ նորակազմություններում սակավ է՝ ջրհորդել (1, 82), գլխիկորված/վել (2, 148):

Ստորադասական՝ *որոշչային* (իշխող հարաբերություն է)՝ դառնախոտ (1, 122), դառնընկեր (1, 137), դեղնակարիճ (1, 144), երկարածամ (1, 82), ըղձահայաց (1, 196), երկնաթագ (2, 62) և այլն (*միշտ* մակբայով կառուցված բարդություններում երբեմն *մշտական* ածականի իմաստն է լինում, ինչպես՝ մշտալաստ (2, 124) ևն):

Հատկացական՝ աստվածագահ (1, 212), համեմնահամ (1, 78), ճնճղաձագ (1, 93), մահաբերդ (1, 146), ազգանիշ (2, 252), ամպամրրիկ (2, 131) և այլն:

Խնդրային՝ ազգամոռ (1, 153), արնահեղց (1, 204), բանջարակյաց (1, 217), գայլապաշտ (1, 11), ազգահառաչ (2, 70), ազգաճռնել (2, 126), անրջատանջ (2, 162), աշխարհաթունդ (2, 131), աշխարհաստատ (2, 227, աշխարհ+հաստատ՝ ամփոփում), արևապաշտիկ (2, 276), դավընդունակ (2, 93) և այլն:

Պարագայական՝ արտասվալուռ (1, 232), գառնամայել (1, 181), դիտապաստվել[2] (1, 196, դիակի նման գետնին փռվել), երկնաթափառ (1, 184), խայամախոս (2, 225), մենատենչ (2, 90), թռնրախոս (2, 67, լսող չունենալ, միայն թռնրի մեջ ասել), հուսահառաչ (2, 70), ճահճագո (2, 131) և այլն:

---

[1]. Տե՛ս **Աճառյան Հ. Հ.,** *Հայերէն արմատական բառարան, էջ 369, հ. III, ՀՊՀ հրտրկչ., Ե. 1977թ.:*

[2]. *Դիակի նման պառկել՝ դի-տապ-աստ-վ-ել-ԱԱաաա:*

Համադասական՝ ազգ-որբեր (1, 32), ազնվամեծ (1, 102), աղվագեղ (1, 144, աղու[1]՝ քաղցր), աղվամեղ (1, 78), այգի-բոստան/ում (1, 37), աղավնավիթ (2, 144), բաժան-դաժան (2, 178), գիրկ-պարտեզ (2, 124), խոյ-ոչխար/ի հոտ (2, 240), հուշ-ավազ (2, 226), մենաորբ (2, 167, միայնակ ու որբ), մռունչ-ճիչ (2, 202), սրբագեղ (2, 90) և այլն:

Քննվող գրքերում իմաստային նորաբանությունները քիչ են: Օրինակ՝ *կաքավել* բառը գործածվել է առվի շարժը նկարագրելու համար: Այն վետվետալով, ներծծվելով առաջ է շարժվում. կարճընթաց իրարահաջորդումներն ապշեցնում են գեղագիտական բանաձևումով՝ առուն է մեղմ *կաքավում* (1, 163): Թվում է՝ աստվածային այս պատկերը մեծարժեք գոհար է իր պարզությամբ: Սուր դիտողունակությամբ օժտված բանաստեղծը նույն տեղում՝ *համբուրել՝ շփվել* իմաստով բառը համադրել է գեղագիտական մի այլ պարզունակի, և կառույցն այդ պահի կենսաձև է դարձել՝ *Համբուրելով* հայրիկիս ոտքերը՝ առուն կվազե: Սովորական թվացող բանջարանոցային *քաղհանվել՝ ոչնչացվել* իմաստով բառը ներքին ապրումների այլաբերված ժայթքում է: Մեր հասարակության ներկայացուցիչների՝ մարդկայնորեն ոչ համակարգված լինելն է մեղմաբարո ներկայացվում՝ մոլախոտված այս կյանքն էլ եղեմաբեր *քաղհանվի* (1, 157, *եղեմաբեր* բառը ևս նորակազմություն է): *Գավաթ* բառը հեղինակային մեկնաբանությամբ է *Վանա ծով* իմաստը ձեռք բերել՝ *Գավաթս* պիտի որդուս կտակեմ,// Վաղվա *գավաթս*, որ ծովն է Վանա (1, 136): Իմաստաբանական նորաբանություն է *քարասիրտ*-ը (շենք, 1, 16), որով բարձրահարկ շենքերն են նոր գեղագիտական մոտեցմամբ հատկանշվել, բանաստեղծականացվել:

Այսպիսով՝ յուրատիպ խոսք կառուցող Հովի. Շիրազի նոր տպագրված բանաստեղծություններում էլ առկա է հեղինակային բառաստեղծական անզուգական տաղանդը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

[1]. *Ն. տ., էջ 115, աղ արմատից, հ. I, ՀՊՀ հրտրկչ., Ե. 1971 թ.. 700 էջ:*

ՀՏԴ 82.09
Գրականագիտություն

Սիրուն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
բ.գ.թ.,դոցենտ
ԱրՊՀ դասախոս

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ» ՊՈԵՄԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԳՈՒՄ ՄԵԹՈԴՈՎ

Հոդվածում պարզաբանվել է ժամանակակից մեթոդներից մեկը, որն օգնում է ավելի խորը և բազմակողմանի ուսումնասիրել Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը»պոեմը:Այն արդյունավետ է դարձնում դասագործընթացը, խթանում՝ աշակերտների ինքնուրույնությունը, ակտիվացնում նրանց մտածողությունը, հնարավորություն տալիս նրանց կատարելու հետևություններ և եզրակացություններ, օգտվելու իրենց իսկ կատարած որոնողական-հետատոտական աշխատանքներից: Թեման լիիրավ ընկալելու և աշակերտների ինքնուրույնությունը խթանելու նպատակով կարևոր է հարցերի պարզաբանման վերոհիշյալ յուրահատուկ եղանակը,որը բացահայտում է երկի հիմքում ընկած օբյեկտիվ ճշմարտությունը, օգնում՝ բնութագրելու երկի կերպարներին:

Բանալի բառեր՝ *Պոեմ, հիմնանդիր, Թաթուլ, Թմկա տիրուհի, աշուղ, Նաղիր շահ, ուսուցման մեթոդ, արդյունավետ, նպատակային, ակտիվություն:*

С.Багдасарян

ИЗУЧЕНИЕ ПОЭМЫ ОВАННЕСА ТУМАНЯНА «ТМКАБЕРДИ АРУМЫ» МЕТОДОМ «ЗНАЮ – ХОЧУ УЧИТЬ-УЧУ»

В статье описывается один из современных методов, который помогает более глубоко и разносторонне изучить поэму Ованнеса Туманяна «Тмкаберди арумы», что обучение делает эффективнее, стимулиует самостоятельности учеников и активизацию их мышления, позволяя делать выводы и использовать иследовательно-поисковые работу. Для полного понимания предмета и повышения самостоятельности учеников важен вышеупомянутый уникальный метод выяснения вопросов, который раскрывает объективную правду предмета, помогая охарактеризовать двух персонажей.

Ключевые слова: *поэма, основатель, Татул, бард, Надира, метод обучения, результативность, целеустремленность, активность.*

S.Baghdasaryan

STUDY OF HOVHANNES TUMANYAN'S POEM “TMKABERDI ARUM” BY THE METHOD “KNOW - WANT TO TEACH-TEACH”

The article describes one of the modern methods that helps to more deeply and comprehensively study the poem of Hovhannes Tumanyan "Tmkaberdi Arum", which makes learning more efficient, stimulates students' autonomy and activates their thinking, allowing them to draw conclusions and use research and research work. For the full understanding of the subject and increasing the independence of the students, the aforementioned unique method of clarifying questions is important, which reveals the objective truth of the subject, helping to characterize two c

Keywords. *poem, founder, Tatul, bard, Nadir, teaching method, effectiveness, purposefulness, activity.*

Յուրաքանչյուր երկ պետք է յուրացնել մտքով ու սրտով, հույզով, հասկանալով: Մայրենիի ուսուցչի համար կարևոր է ոչ միայն երկի բովանդակության ընկալումը, այլև դաստիարակչական կողմի ապահովումը: Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել երկի ձևի ու բովանդակության ներդաշնակ կառուցվածքին, վեր հանել այն կարևորը, որին միտված է հեղինակի գլխավոր նպատակադրումը:

Ուսուցման երեք կարևոր հիմնախնդիրներից առաջինը՝ **ի՞նչ սովորեցնելը,** ծրագրային նյութի միջոցով իբրև ճանաչողական,իմացական արժեք, գիտելիք մատուցվում է սովորողներին:Երկրորդը՝ **ինչու՞ սովորեցնելը,**կրթության բովանդակությունը կազմող ունակություններ, կարողություններ, հմտություններ և արժեքային համակարգ բաղադրիչների միջոցով կարևորում է **ի՞նչ սովորելու նպատակը ,**իսկ երրորդը՝ **ինչպե՞ս սովորելը** պայմանավորում է դասավանդման կերպը, եղանակը, միջոցներն ու ձևերը,որոնք կազմում են ուսուցման մեթոդաբանությունը:

Ժամանակակից մանկավարժագիտության մեջ մեթոդների դասակարգման հիմքում ընկած են տարբեր մոտեցումներ՝ խոսքային, զննական , գործնական:Առավել տարածված է մի տեսակետ, ըստ որի ուսուցման մեթոդները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ ավանդական և ժամանակակից:Ավանդական համարվում են այն մեթոդները, որոնց հիմքում ընկած են պատրաստի գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա վերարտադրումը,որի կիրառման ժամանակ սովորողն ուղղակի ուսուցչի հրահանգների կրողն է: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն, ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրա ակտիվ և անմիջական մասնակցությունը: Արդյունավետ դասավանդումն իրականացնող գործոններ են նաև մեթոդական հնարներն ու վարժությունները, գեղագիտական ճաշակի և գեղեցիկի հանդեպ նուրբ վերաբերմունքի ձևավորումն ու աստիճանական խորացումը: «Քանի որ գեղեցիկի զգացողությունը,- գրում է Հենիկ Մախճանյանը,- գրողի տաղանդի մի մասն է և առանց դրա իսկական գրող չկա ,անհրաժեշտ է գրական երկի ուսուցման ժամանակ բացահայտե նրա

գաղափարական իմաստն ու գեղարվեստական արժեքը, և դա կատարել միաձույլ ներքին սերտ փոխկապակցության մեջ»[1]: Արդյունավետ դասավանդումն իրականացնող գործոններ են նաև մեթոդական հնարներն ու վարժությունները:

Մարդու մարդկայնացման և փրկության հիմնախնդիրը դարեր շարունակ եղել է համաշխարհայինկն գրականության ,ինչպես նաև Թումանյանի ստեղծագործության, գլխավոր թեմաներից մեկը:Հին աշխարհի իմաստունները անտիկ շրջանից առ այսօր քննարկել են ներդաշնակ մարդու և նրա ինքնակատարելագործման հիմնախնդիրը:Մեծ լոռեցու համար այն նույնպես եղել է մտահոգիչ և խիստ հրամայական խնդիր:Դրա վառ ապացույցներից մեկն է նաև « Թմկաբերդի առումը » պոեմը:

Դասարանական ողջ կոլեկտիվին ակտիվացնելու և ուսուցանվող նյութի շրջանակները համեմատաբար ընդլայնելու նպատակով անհրաժեշտ է ունենալ ընթերակա աշակերտներ, որոնք դասավանդման ընթացքում ուսուցչի օգնականներն են և առանձնակի հակում ունեն գրականության նկատմամբ:

Մինչև պոեմի ուսուցումն սկսելը՝ ուսուցիչը ընթերակա աշակերտներին հանձնարարում է իմանալ Թմկաբերդ, Թմուկ բերդի, Ե. Լալայանի Երկերի հ. 1-ինի « Ջավախքի բուրմունք» բաժնից՝ Թմուկ բերդին վերաբերող զրույցի , Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի մասին տեղեկություններ, որոնք նրանք սիրով ներկայացնում են ուսուցչին և իրենց ընկերներին: Երկը ընթերցելուց և սյուժեն աշակերտներին ներկայացնելուց հետո աշակերտները ուսուցչի օգնությամբ կազմում են աղյուսակը ,որն ունի հետևյալ տեսքը Հիշեցնենք, որ բոլոր սյունակներում պետք է զգացվի ուսուցչի ուղղորդող օգնությունն ու ներկայությունը: Հիշեցնենք, որ բոլոր սյունակներում պետք է զգացվի ուսուցչի ուղղորդող օգնությունն ու ներկայությունը:

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորել եմ

Աղյուսակը նախ լրացվում է այն գիտելիքներով, որ արդեն ձեռք է բերվել.

Առաջին սյունակ՝ Գիտեմ

Այս սյունակում տեղադրվում են այն բոլոր հարցերը, որոնց պատասխաններին աշակերտները արդեն ծանոթ են:

1. «Թմկաբերդի առումը» պոեմի բովանդակությունը, ծանոթ եմ կերպարներին:

[1] ***Հ. Մախճանյան****, Հայ գրականության ուսուցման պատմություն,Ե.,1976 թ.,էջ 326:*

2. Թմկաբերդ-Մինադարյան դղյակ Մեծ Հայքի Գուգարք նահանգի Վերին Ջավախք գավառում, Կուր գետի ձախ ափին:Բերդը գտնվում էր երեք բարձրադիր բլուրների վրա և ուներ մոտ 150 մ երկարություն և 30 մ լայնություն՝շրջապատված պարիսպներով և ու երեք բլուրների վրա կառուցված աշտարակներով:Պարիսպները և աշտարակները շինված էին սրբատաշ քարով ուկրով և ունեին մոտ 1,5մ հաստություն:Բերդն ուներ երեք դուռ՝ հարավային, հյուսիսային և արևելյան:Առանձին ցածրադիր բլրի վրա պահպանվել են մատուռի հարավային և արևելյան պատերը,որոնց վրա պատկերված են եղել Ս. Աստվածածինը , երկու կույսերը և և երկու առաքյալները:Հարավային պատի կամարի ներքին մասում երևում է մի սրբի պատկեր:Հարավային դռան մոտից ստորգետնյա ճանապարհը ժայռի միջով անցնում էրդեպի Կուր գետը: Բլուրներից մեկի առջևում կա 4,5մ բարձրութամբ կոթող,որի շուրջը փռված են ավերակ բնակարաններ: Այստեղ էր Թմբուկ գյուղը,որի գերեզմանատանը կան հայերեն արձանագրություններով բազմաթիվ տապանաքարեր և խչարձաններ: Խաչքարերից մեկի վրա նշված է ՊԿԶ (1417թ.):Ավերակ սենյակների պատեր կան նաև Թմկաբերդի դիմաց,Կուր գետի աջ ափին:Գյուղը այսօր էլ գտնվում է իր տեղում:[1]

3. Ե. Լալայան, (Ջավախքի բուրմունք)-

Թմկաբերդի քրդերը պատմեցին ինձ, թե մի ժամանակ Թմկաբերդում իշխում էր մի հայ իշխան: Պարսից թագավորն եկել ,եչկար պաշարել էր այս բերդը, սակայն չի կարողացել առնել: Իշխանի կինը սիրահարվել է պարսից շահի վրան ծածուկ առել է նորա հաճությունը՝յուր հետ ամուսնանալու,եթե ինքը սպանե յուր ամուսնուն և բերդը հանձնե շահին: Եվ իբր նա սպանել է ամուսնուն, հարբեցրել է զորքին և բերդի բանալիները ուղարկել շահին: Շահն այսպիսով տիրել է բերդին և հարցրել է մատնիչ իշխանուհուն.«Ես եմ գեղեց՞կ, թե՞ ամուսինդ »: Եվ երբ սա պատասխանել է, թե ամուսինս գեղեցիկ էր՝ շահը հրամայել է կապել սորան ձիու ագիից և քաշ տալ ՝ մինչև մեռնելը,ասելով. «Եթե ամուսինդ շահից գեղեցիկ էր ՝ինչու՞ սպանեցիր»:[2]

4. «Ալմաստ» օպերան գրվել է Ալեքսանդր Սպենդիարյանի կողմից՝ Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հիման վրա:Այն հայ ժողովրդի հերոսական – ազատագրական պայքարն արտցոլող հոգեբանական-փիլիսոփայական բնույթի երաջշտական դրամա է: Առաջին անգամ բեմադրվել է Մոսկվայում, 1930-ին, իսկ Հայաստանում բեմադրվել է 1933-ին՝Երևանի օպերայի և բալետի թատրոնի բացման օրը: Վերաբեմադրվել է 1939-ին, 1969-ին և 1971-ին: Գլխավոր դերերգերը կատարել են՝ Ալմաստ՝Թ. Շահնազարյան, Տ. Սազանդարյան,Մ. Չմշկյան, Թաթուլ ՝ Պ. Լիսիցյան, Մ. Երկաթ, Նադիր Շահ՝ Լ. Հովհաննիսյան, Հ. Ալավերդյան,Աշուղ՝ Վ,

[1] *ՀՍՀ հանրագիտարան, հ4,Ե,978թ.,էջ 193:*

[2] ***Ե. Լալայան*** *,հ 1,Ե.,1953թ., էջ 403:*

Միրաքյան, Գ. Գաբրիելյան, դիրիժորներ՝ Գ. Բուդաղյան, Օ. Դուրյան, ռեժիսորներ՝ Ա.Բուրջալյան, Վ. Ադեմյան, նկարիչներ՝ Մ. Սարյան,Մ. Ավետիսյան…[1]:

5.Պոեմի առաջին երկու հրատարակությունները (1905 և 1908) ունեին հատուկ ենթավերնագիր՝ «Աշուղի զրույցը», որը հետո բանաստեղծը հանել է:

6.«Մարդու միակ իսկական անմահությունը նրա գործն է,այն դրական արդյունքները,որ նա թողնում է հաջորդ սերունդներին,այն բարի անունը,որ նրանից մնում էմարդկային հիշողության մեջ: Խաբուսիկ և անցողիկ են փառքն ու հարստությունը,երկրային բոլոր վայելքները, և միայն «գործն է անմահ»[2], - գրում է գրականագետ Էդ.Զրբաշյանը: Հաստատեցեք կամ հերքեք ասվածը:

Երկրորդ սյունակ՝ ուզում եմ իմանալ:

Այս սյունակում տեղադրվում են այն հարցերը, որոնց պատասխանները պետք է գտնվեն և յուրացվեն:

1.Ինչու՞ է Թումանյանը աշուղին ընտրել իր գլխավոր գաղափարն արտահայտելու համար:

2.Ինչու՞ է Թումանյանը պոեմի սկզբում նշում.

Էսպես է ասել հընուց էդ մասին
Ֆարսի բյուլբյուլը,անմահ Ֆիրդուսին,
Ինչը կըհաղթի կյանքում հերոսին,շ
Թե չըլինեին
Կինն ու գինին:

3.Ինչու՞ է Նադիր շահը պատժում Թմկա տիրուհուն:

4.Թմկա տիրուհին միայն իր ամուսնու՞ն է դավաճանում:

5.Հիմնավորվա՞ եք համարում, որ Թաթուլի քաջության և հերոսության աղբյուրը ջահել, սևաչյա կինն էր:

6. Թմկա տիրուհին հեշտությա՞մբ է գնացել իր ստոր քայլին:

7. « Ալմաստ» օպերայի մասին այլ տեղեկություններ:

8.Ի՞նչ գիտես պոեմի ժանրային հատկությունների մասին:

9. Ցանկանում եմ բնութագրել պոեմի դրական և բացասական կերպարներին:

10. Լավ և վատ մարդկանց մասին ի՞նչ կարծիք ուներ Թումանյանը:

11. Նադիր շահը պատահակա՞ն հերոս է, թե՞ պատմական :

12.Սովորենք Թումանյանի Մարդու և Մարդկայինի մասին գրական դասերից մի քանիսը::

Երրորդ սյունակ՝ Սովորել եմ:

Այս սյունակում տեղ են գտնում սովորած, հիմնավորված բոլոր հարցերի պատասխանները:

---

[1] *ՀՍ հանրագիտարան, Հ 1,Ե.,1974թ.,թջ 182:*

[2] ***Էդ. Զրբաշյան**, Թորմանյանի պոեմները,Ե.,1986թ.,էջ 352:*

1.Մենք նկատեցինք, որ պոեմն սկսվում և ավարտվում է աշուղի խոսքով, որը հռչակում է հեղինակի հիմնական գաղափարը:Դրանք Թումանյանի ամենաանվիրական խոհերն են մարդու կոչման և իրական անմահության մասին, բարու և չարի մասին, բանաստեղծի գեղեցիկ երազանքը մարդկային բարձր կատարելության՝ անարատ մարդու վերաբերյալ: Բացի դրանից՝ Թումանյանը իր գաղափարներն արտահայտելու համար աշուղին է ընտրել՝ հաշվի առնելով, որ պատերազմի ժամանակ միայն նրանք ազատ ել ու մուտ ունեն հակառակորդ բանակների տարածքներ: Հիշենք աշուղի խոսքերն սկզբում,երբ նա ազդարարում է.

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվուն է դարեդար;
Երնե՛կ նրան , որ իր գործով
Կապրի անվերջ անդադար:

Թումանյանի կարծիքով միայն փառաբանված, լավ գործերի հեղինակ մարդը կարող է հասնել անմահության: Հեղինակի սույն կարծիքը նորից աշուղն է ազդարարում վերջում՝ ի լուր աշխարհի.

Անց ենք կենում…միայն անմահ.
Գործն է խոսվում լավ ու վատ,
Ա՛խ, երանի՝ ով մարդ կըգա
Ու մարդ կերթա անարատ:

2. Թումանյանը հատուկ վերաբերմունք ուներ արևելյան քնարերգության և հանճարեղ պոետների հանդեպ: Դրա համար պոեմում ծավալվող դեպքերի հիմնավորումը նա կապում է Ֆիրդուսու հետ, ով իր իմաստնությամբ կարծես կանխազգում է գալիքը:

3.Նախ՝ ժողովրդական ավանդության բարոյական սկզբունքը պահանջում է, որ չարն անպայման պատժվի: Թեպետ պարզ երևում է, որ Թմկա տիրուհին զղջացել է իր ամոթալի արարքի համար, բայց նա. ով դավաճանում է իր ամուսնուն և հայրենիքին, կդավաճանի նաև իրեն տիրողին:

4. Առաջին հերթին նա դավաճանել է հայրենիքը, քանի որ ուժեղ հայրենիքը հենվում է ուժեղ ընտանիքների վրա:

5.Այո՛, թե՛ կյանքում, թե՛ այս պոեմում կինը անձնուրացության կարող է մղել ամուսնուն, կամ՝ կործանել: Իսկ սա նշանակում է, որ ամեն հարցում կինը պետք է հավատարիմ լինի ամուսնուն և կանգնած լինի նրա կողքին, որպեսզի ամուր և անսասան լինի ընտանիքը:

6.Ո՛չ:Պարզ երևում է, որ նա ապրումներ է ունեցել, երբ աշուղի երգից հետո վրդովվել է հոգին.

Լըռում է մատաղ Թըմկա տիրուհին.
Եվ վըրդովվում են իր միտքը թաքուն
Դավաճան գործի ամոթը խորին
Եվ արքայական փառքն ու մեծություն:

Կամ՝ Լըռում է չքնաղ Թմկա տիրուհին
Գիշեր ու ցերեկ նորից ու նորից…
Ու դարձավ նա լու՛ռ,դալու՛կ,մըտախո՛հ,
Եվ քունը փախավ սիրուն աչքերից…

Հիշենք նաև 10-րդ գլխից մի հատված, երբ երևում է, որ մատնիչը լիովին զղջացել է իր ստոր արարքի համար.

-Պատասխան տո՛ւր ինձ ,մատնիչ սևաչյա,
Մի՞թե Թաթուլը քաջ չէր և սիրուն…

Տեսնելով իր դիմաց նենգ ու քստմնելի Նադիրին, ով իր ազնիվ, քաջարի և հավատարիմ ամուսնու հակապատկերն է՝ նա պատասխանում է.

-Քաջ էր և սիրուն քեզնից առավել.
Մի բարձր և ազնիվ տղամարդ էր նա.
Կնոջ մատնությամբ ամրոց չէր առել,
Չէր եղել կյանքում երբեք խաբեբա…

7.Թումանյանի դուստրը՝ Նվարդ Թումանյանն իր «Հուշեր և զրույցներ» գրքում գրել է.«…Սպենդիարանը հետաքրքրվեց «Անուշ» պոեմով, ուզում էր ձայնագրել: Բայց ծանոթանալուց հետո նյութը գտավ բոլորովին անծանոթ: Որոշեցին ամառը միասին Լոռի գնալ: Հետո հայրիկը կարդաց «Փարվանան», որը կոմպոզիտորը հավանեց և ավելի հարմար գտավ օպերայի համար, բայց նկատեց,որ սյուժեն փոքր է …Հայրիկը կարծես թե գլխի ընկավ նրա ցանկացածը և կարդաց «Թմկաբերդի առումը» պոեմը: Սպենդիարյանը տեղից վեր կացավ ու սկսեց սենյակում ոգևորված ման գալ…

Հայրիկի ցանկությամբ օպերան պիտի կոչվեր «Գոհար»՝ իշխանուհու անունով»: Բայց Սպենդիարյանի բացատրությունից հետո այն փոխարինվեց այդ անվանը հոմանիշ «Ալմաստ» անունով:

8. Պոեմ անվանումը գալիս է հին Հունաստանից, որ նշանակում է «ստեղծել»: Իբրև գրական ժանր՝ այն չափածո ծավալուն ստեղծագործություն է, որի տարբեր մասերը միավորված են սյուժեի կամ կերպարի ընդհանրությամբ: Նրան հատուկ են թե՛ պատմողական, թե՛ քնարական հատկանիշներ: Այս առումով էլ պոեմները բաժանվում են երեք խմբերի կամ տեսակների՝ **պատմողական, քնարականև քնարապատմողական**: **Պատմողական** պոեմներին հատուկ են սյուժեի և կերպարների առկայությունը,պատմողական շարադրանքը,դեպքերի, դեմքերի նկարագրությունները:Այսպիսինն են Թումանյանի «Սասունցի Դավիթը»,Դ. Վարուժանի «Հարճը» պոեմները: **Քնարական են** Թումանյանի «Դեպի անհունը», «Պոետն ու մուսան»,Իսահակյանի «Աբու- Լալա Մահարին»: Վերջիններիս մեջ ներկայացվում են հեղինակի մտորումները, խոհերը այս կամ այն երևույթի, իրադարձության մասին: **Քնարապատմողականի** մեջ, ինչպիսիք են Թումանյանի «Անուշը», «Թմկաբերդի առումը» ծավալվող դեպքերի պատմությունն ուղեկցվում է **քնարական շեղումներով** (էն տեսակ կին,ես իմ հոգին», էդպես է ասել հնուց այդ մասին և այլն):

Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը մի ասք է՝ պատմություն ազնվության ու նենգության, հայրենասիրության և դավաճանության, չարի և բարու, լավ ու վատ արարքի մասին: Ժանրային առումով «Թմկաբերդի առումը» ժողովրդական լեգենդի մշակում է, և պատմական պոեմի ճշմարտացի վերարտադրում: Դրա արդյունքում պոեմի հիմքում դրված, ժողովրդական ավանդությունը սկզբից մինչև վերջ հենված է պատմական դեպքերի վրա, որի արդյունքում ստացվել է հերոսական – էպիկական մի հիանալի ստեղծագործություն:

9.Մարդկային առաքինություններով օժված հերոսի որոնումներում Թումանյանն առանձին սիրով է միշտ գովերգել իր իդեալ հերոսին, որն այս պոեմում **Թաթուլն** է: Նա քաջ է, հայրենասեր և ազնիվ, ընտանիքին նվիրված: Մեր ժողովրդական հերոսի՝ Դավթի նման նա բացսիրտ է և հեռու չարամտությունից ու նենգությունից. անգամ իր կռիվն անում է առանց դավերի, շիտակ ու հրապարակավ: Նրա համար սերն առ հայրենիք և կին միահյուսնած են իրար և անբաժան են մեկը մյուսից: Թաթուլն անմահացել է իր անձնվիրությամբ, լավ ու բարի գործերով:

Թմկա տիրուհին իր ամուսնու ոգեշնչման աղբյուրն էր, բայց դարձավ նրա կործանման պատճառը: Նրա արտաքին ցեղեցկության տակ թաքնված էր մի նսեմ, ընչաքաղց հոգի: Մեր կարծիքով նա կատարել է կրկնակի դավաճանություն և՛ ամուսնու, և՛ հայրենիքի հանդեպ: Եվ թեպետ պոեմի վերջում նա խորապես զջացել էր՝ տեսնելով իր գեղեցիկ, աննկուն, առաքինի ամուսնու վեհ, իսկ իր դիմաց՝ փոքրոգի շահի ատելի կերպարը, համեմատելով և համոզվելով դրանց հսկայական տարբերության մեջ, միաժամանակ գտնում է, որ միևնույն է՝ պետք է ստանար իր արժանի պատիժը: Նա պատմության մեջ մնաց որպես դավաճան կնոջ, չարության խորհրդանիշ:

Ինչպես պատմական աղբյուրներում է նշվում, **Նաղիր շահը** դաժան է , նենգ ու խարդախ: Թաթուլի կռիվն արդարացված է. նա պայքարում է, իր բերդը, իր հայրենիքը պետք է պաշտպանի: Նույնը չենք կարող ասել Նաղիրի մասին, ով հարձակվել է՝ մի այլ աշխարհից տիրելու, զավթելու այն ամենին, ինչը իրավամբ պատկանում է ուրիշին: Դրա համար իրենց մարդկային նկարագրով Թաթուլը և Նաղիրը հակադիր բևեռներում են. մեկը հայրենասեր, ազնիվ, մյուսը՝ ագրեսիվ մղումներով տարված, նենգադավ և ստոր: Շահը պատմության մեջ մնաց որպես չարիք տարածող անհատ, որին խորթ են մարդկային նկարագրի գեղեցիկ գծերը

Պոեմի առաջին հրատարակությունները ունեին ենթավերնագիր՝ «Աշուղի զրույցը», որը հետո բանաստեղծը փոխել է: Պոեմի սկզբում և վերջում Թումանյանի երկի հիմնական գաղափարը արտահայտում է **աշուղը:** Բայց դա ոչ թե փառաբանում և անեծք է, կամ պարզապես հերոսների նախնական թվարկում, ինչպես սովորաբար լինում է ժողովրդական զրույցների մեջ, այլ ստեղծագործության հիմնական գաղափարի հռչակում՝ մի դեպքում՝ պատմությունից առաջ իբրև նրա նախադուռ, իսկ մյուս

դեպքում՝պատմության վերջում իբրև եզրակացություն և ավարտ: Անմահ գործի և անարատ մարդու գեղարվեստական իդեալը կարևոր նշանակություն ունի ոչ միայն այս պոեմի, այլև բանաստեղծի աշխարհայացքն ու նրա գեղագիտական համակարգն արժևորելու համար:

10..Հայ գրականության մեջ Թումանյանն այն գրողն է, ում առանձնապես շատ է մտահոգել կատարյալ Մարդու պրոբլեմը է,որը տարբեր ձևերով արծարծել է: Պտահական չէ, որ նա իր մի շարք երկերում, նամակներում և հրապարակախոսական հոդվածներում անդրադարձել է այդ թեմային: Հիրավի՛ այսօր սերունդները հիշում են և՛ Թաթուլին և՛ դավաճան կնոջը, բայց մի տարբերությամբ՝ հերոսին հիշում են օրհնությամբ ու սիրով, իսկ կնոջը՝ անեծքով, դառնությամբ:Նույն ձևով մենք հպարտությամբ ենք հիշում Վարդան Մամիկոնյանին, իսկ Վասակին՝ նզովքով և ատելությամբ: Պատմությունը կրկնվում է, այսօր էլ կան և՛ պանծալի հերոսներ, և՛ ընտանիքի ու հայրենիքի դավաճաններ:

11.Մենք հասկացանք, որ, Թումանյանն աշխատել է պոեմը կապել որոշ պատմական դարաշրջանի հետ: Ժողովրդական ավանդության անորոշ «պարսից շահը» պոեմում դարձել է Նադիր շահ, որը թագավորել է 18-րդ դարի 30-40-ական թվականներին (1736-1747): Այդ կոնկրետացումը պատահական չէր. պատմությունից հայտնի է, որ Նադիր շահը բազմաթիվ արշավանքներ է կատարել դեպի Անդրկովկաս և հայտնի էր իր դաժանությամբ և նենգությամբ, ով և դարձել է բացասական կերպարի նախատիպ:

12. **Ահա Թումանյանի ասույթներից մի քանիսը**.

Գրականությունը ոչ միայն արտացոլում է ժամանակը և իր դեպքերն ու դեմքերը,այլև տալիս է իր լույսն ու ջերմությունը կյանքին և ձգտում է կյանքում ստեղծել մարդու վեհ ու վսեմ , մաքուր և անաղարտ պատկերը՝ կազմված ու հյուսված բնության ամենամաքուր տարրերից:

Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կարելի լինի համեմատել Մարդ կոչումի հետ:

Լավ մարդը - էդ բնության, ավելի ճշմարիտը՝մարդկության մեջ ամենակատարյալ ու ամենասքանչելի երևույթն է-և ամենահազվագյուտը: Աշխատեցեք ձեր սիրտը պահել մաքուր ու լիքը ամենալավ և ամենաբարի զգացմունքներով և աշխարհին ու մարդուն նայեցեք բարի սրտով ու պայծառ հայացքով:

Աշխարհքում ամեն բան հեշտ է, մի բան է դժվար՝մարդ լինելը…. Հեշտ բան հո չէ Մարդ լինելը:

Ճշնարիտ, մի՞թե գեղեցիկ կնոջից ավելի սրտառուչ երգ կա, կամ առաքինի մարդուց ավելի վսեմ բանաստեղծություն:

ԳՈՒՍ աղյուսակը լրացվում, ամփոփվում և ամբողջացվում է ամբողջ դասարանի կամ առանձին աշակերտների կողմից դասակարգված ողջ տեղեկատվությամբ, որն անցնում է ուսուցչի հսկողությամբ և լրացումներով: Այսպիսով՝ այս մեթոդը ուսուցիչներին հնարավորություն է տալիս

պատկերացում կազմելու աշակերտների տվյալ թեմայի վերաբերյալ ունեցած նախնական գիտելիքների մասին, զարգացնում են նրանց վերլուծական-հետազոտական հմտությունները, որի ընթացքում նրանք սովորում են ավելի ուշադիր ընթերցել ոչ միայն ուսուցանվող երկը, այլև նրան առնչվող նյութերը, ակտիվորեն մասնակցում են երկը վերլուծելու, կերպարները բնութագրելու, ինքնուրույն երահանգումներ կատարելու գործընթացին: ԳՈՒՍԸ ժամանակակից դասավանդման մեթոդ է, որը կիրառվում է և՛ չափածո, և՛ արձակ երկերի ուսուցման ժամանակ: Կարևորն այստեղ մեթոդի ճիշտ ընտրությունն է, որը դասապրոցեսը դարձնում է հետաքրքիր և արդյունավետ:

Երկն ամբողջությամբ ընկալելու և ըստ ամենայնի հետևություններ անելու տեսակետից կարևոր է նաև արտահայտիչ ընթերցանությունը, անգիր ասմունքը: Ուսուցիչն ընտրում է պոեմի նախերգանքը և վերջերգը, իսկ դերերով ընթերցման և ասմունքի համար՝ Նադիր շահի և Թմկա տիրուհու երկխոսություն:Այն կօգնի ավելի արժևորելու պոեմի հիմնական գաղափարը, Թմկա տիրուհու՝ թեպետ ուշացած, բայց տեղին զղջման խոսուն փաստը: Տեղին է նաև «Ալմաստ» օպերայի տեսանյութի դիտումը:

Դասը անպարագիծ և բովանդակալից պրոցես է, որի կախարդական դուռը բացում է ուսուցիչը և առաջնորդում իր սաներին դեպի գրականության հրաշքներով լի աշխարհը:Այդ հրաշք աշխարհի դռները բացվում են այլևայլ մեթոդներով և հնարներով, որոնք անընդհատ թարմացվում և հարստանում են: Գրականության արդի մեթոդների համակարգում ԳՈՒՍ-ը առաջնակարգ և արդյունավետ մեթոդներից է: Սա նշանակում է, որ այս մեթոդն **արդիական**, է, քանի որ բարձրացնում և արդյունավետ է դարձնում դասապրոցեսը, խթանում՝ աշակերտների ինքնուրույնությունը, ակտիվացնում նրանց մտածողությունը, հնարավորություն տալիս նրանց կատարելու հետևություններ և եզրակացություններ, օգտվելու իրենց իսկ կատարած որոնողական-հետաոտական աշխատանքներից: Թեման լիարժեք ընկալելու և աշակերտների ինքնուրույնությունը խթանելու նպատակով կարևոր է հարցերի պարզաբանման վերոհիշյալ յուրահատուկ եղանակը, որը բացահայտում է երկի հիմքում ընկած օբյեկտիվ ճշմարտությունը, օգնում՝ հիմնավորված և ճիշտ բնութագրեր տալ երկի կերպարներին:

Հոդվածի **նորույթն** այն է, որ այն առաջին անգամ է բացահայտվում և նպատակ ունի օգնելու մայրենիի ուսուցիչներին և մանկավարժական բուհերի ուսանողներին՝ մեթոդական պատրաստականության բարդ և դժվարին գործում, նպաստելու նրանց մեթոդական զինանոցի հարստացմանն ու ընդլայնմանը:Այն կարող է հետաքրքրել նաև մանկավարժությամբ և մեթոդիկայի հարցերով զբաղվող մասնագետներին:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

ՀՏԴ 808.1
Գրականագիտություն

Զուխրա ԵՐՎԱՆԴՅԱՆ
Բ.գ.թ., դոցենտ
ԵՊՀ լեզվի ամբիոն

ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔԻ, ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐՈ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վարդան Հակոբյանի գեղագիտական աշխարհի բարձրագույն արժեքների շարքում իր ուրույն տեղն ունի խորապես ազգային ներաշխարհով ու դիմագծով արցախցու բանաստեղծական կերպարավորումը: Բանաստեղծի կողմից յուրովի ընկալվող Արցախ աշխարհին ու արցախցուն նվիրված ստեղծագործություններում բնությունը, հայրենի եզերքն ու նրա մարդիկ ներթափանց խորհրդանիշներ են՝ իրարով պայմանավորվող, իրարով զորացող ու սրբացող: Հատկապես մոր, հոր, ինչպես և տատ ու պապի ներկայությունը Վարդան Հակոբյանի գեղագիտական աշխարհում հրաշալիորեն ապահովում է եզերքային բներանգը, արտացոլում արցախական սովորույթներ ու ավանդույթներ:

Բանալի բառեր՝ *մաքառում, ճանաչում, կերպարավորում, արցախցի, տիեզերակ, անկրկնելի, վերհուշ, կեցություն, բնաշխարհիկ, նախատիպ:*

З. Ервандян

ОБОБЩЕНИЯ РОДИНЫ, ПРИРОДЫ И ФИЛОСОФСКОЙ ЛЮБВИ В СИСТЕМЕ ОБРАЗОВ ВАРДАНА АКОПЯНА

В ряде наивысших ценностей эстетического мира Вардана Акопяна свое особое место имеет с глубоко национальным внутренним миром и чертами поэтическое изображение арцахца. В произведениях своеобразно воспринимаемых поэтом, посвященных земле Арцах и арцахцу природа, родной край и его люди проникновенные символы, обусловленные друг другом, подкрепляемые и обожествляемые друг другом. Особенно присутствие матери, отца, также как бабушки и дедушки в эстетическом мире Вардана Акопяна восхитительным образом обеспечивает колорит края, отображает арцахские традиции и обычаи.

Ключевые слова: *борясь, признание, изображение, арцахец, космический, неповторимый, воспоминание, бытие, отечественный, архетипы.*

Z. Yervandyan

GENERALIZATIONS OF HOMELAND, NATURE AND PHILOSOPHICAL LOVE IN THE IMAGE SYSTEM OF VARDAN HAKOBYAN

In line with the utmost values of aesthetic world of Vardan Hakobyan its unique place with deep national inner world and features has poetic description of man of Artsakh. In the works perceived by the poet in a distinctive way dedicated to Artsakh land, man of Artsakh nature, native land and its people are heartfelt symbols, determined by each other, supported and deified by each other. Especially presence of mother, father, as well as grandmother and grandfather in aesthetic world of Vardan Hakobyan miraculously ensures color of land, depicts custom and traditions of Artsakh.

Keywords. *struggling, acknowledgement, depiction, man of Artsakh, cosmic, unique, recollection, existence, native land, archetype.*

Վարդան Հակոբյանը, լինելով արցախյան մշակույթի կրողն ու ժառանգորդը, գրականություն է բերում բարձրարվեստ մի աշխարհ, որտեղ նախօրինակը չունեցող կերպարավորումով են ներկայացվում Արցախն ու արցախցիները. և այդ անում է մեծ ներշնչումով, սահմանափակումներ չճանաչող պատկերավոր ու հարուստ լեզվով, զուտ հակոբյանական ոճով: Խորը կենսազգացողությամբ ստեղծված այդ գեղագիտական աշխարհը աչքի է ընկնում կեցության ու գոյաբանական արժեքների խորապատկերների վրա ազգայինը մարմնավորող իր առանձնահատկությամբ:

Վարդան Հակոբյանի գեղագիտական աշխարհի բարձրագույն արժեքների շարքում իր ուրույն տեղն ունի արցախցու բանաստեղծական կերպարավորումը՝ խորապես ազգային ներաշխարհով ու դիմագծով: Նրա տողը գոյակերտվում է զգայական՝ մերթ նուրբ ու քնարական, մերթ առնական ու կոշտուկուռ ապրումներով, փիլիսոփայական մտորումներով ու խոհերով, իմաստասիրական ինքնահատուկ ընդհանրացումներով:

Յուրաքանչյուր ճշմարիտ բանաստեղծ իր կերտած աշխարհի կենտրոնական դեմքն **ինքն** է, իսկ այդ **ինքը** անկրկնելիության ուղին մաքառումներով հաստատող հայ մարդու ընդհանրացված կերպարի կրողն ու կենսավորողն է: Եվ բնական է, որ մարդու ճանաչումն ու նրա գեղարվեստական կերպավորումը սկսվում է հայրենի եզերքով, նրա մարդկանցով: Վարդան Հակոբյանի ստեղծած գրականության առանցքը արցախցիներն են ու արցախականը, հայոց ազգային ոգին: Եվ նրա երկերում ամենայնի սկիզբը պիտի փնտրել մի պարզ ու հասարակ, հայկական տոհմիկ օջախի մոր մեջ, ով իր հոգում կրում է արցախական աշխարհի բոլոր գույներն ու բույրերը. *«Մորս օրորի, քաղցր կաթի հետ // Գարնան ծաղկավոր լույսերն եմ ըմպել…* ***(«Ծաղկած ծառերը»):***

Մոր անփոփոխական **Է**-ն ժամանակ ու տարածություն չի ճանաչում. այն եզակի երևույթ է. նրանով մարդ արարածի ներսում փոխվում են տիեզերական չափումները, աշխարհը նրա գոյությամբ, սիրո գերերևութականությամբ դառնում է անկրկնելի: Այդ գերակա դերն առավել անգնահատելի է հատկապես մեր օրերում, *երբ մայրությունը բախվում է գլոբալացումից բխող անհամատեղելիություններին*[1] *(Յուլյա Կրիստևա),* և օր օրի մարդու մեջ վտանգվում է (*«Մոր օրորի, քաղցր կաթի հետ»*) ազգային նախասկզբի առեղծվածայինը ժառանգող դավանանքի հիմնաշերտը՝ բարոյականը, որով և պայմանավորվում են արժեհամակարգային կարևոր կողմնորոշիչների մնայունությունն ու ոգու անխաթարությունը:

Վարդան Հակոբյանի եսի անկեղծ ինքնաբացահայտումները՝ գաղտնագրումներով ու առանց գաղտնագրումների, կատարվում են նրա տողերում՝ ներկայացնելով այն միջավայրը, որտեղ սկսվել են նրա հոգևոր սկզբնաշխարհի ձևավորումն ու կեցության հիմքերի ճանաչողությունը:

Ասում են՝ մարդը՝ իբրև ինքնահայեցող էակ, իր աշխարհը գոյակերտում է ոչ միայն կենսաբանական եսի խնդիրների ճշգրտումներով, այլև բարոյական փորձի, ինչպես և հոգեբանական վստահության հիման վրա: Իսկ վերջինս ստեղծվում է, առաջին հերթին, մայրական սիրո տիրույթում: Ավելին, մայրը և մայր հողը նույնանում են ավանդական բարոյականության «դասերի» մեջ, որոնցով և ձևավորվում են մարդու կենսահաստատ համոզմունքները, նրա ներաշխարհային կենսագրությունը:Եվ պատահական չէ, որ հատկապես մայրերգության մեջ է առինքնող ուժով երևան գալիս այդ թեմային դիմած ցանկացած պոետի հոգեբանական նրբերանգների ամբողջությունը: Եվ ոչ միայն: Խոսելով Ավետիք Իսահակյանի կերպարավորած մոր մասին, Սիմոն Չիկովանին գրել է, որ իր համար դժվար է մատնացույց անել որդիական քնքշությամբ և հայրենասիրական խանդավառությամբ տոգորված մոր մի այլ կերպար, «որը դրա հետ միասին դառնա հայրենիքի դեմքի արտացոլումը, նրա բանաստեղծական անկրկնելի այլակերպությունը «[2]:

Մայր և հայրենիք, մայր-հարենի հող ու բնություն. սրանք մեկը մյուսի մեջ փոխներթափանցված խորհրդանիշեր են, որոնք իրարով պայմանավորում են *«բանաստեղծական անկրկնելի այլակերպությունները»,* իրար զորացնում ու սրբացնում. *«Մորս ձայնը գարունվել է // մեր հանդերում, // ծաղիկ-ծաղիկ երանություն, // ալպիական ինչ մեղեդի // և ինչ խորհուրդ // -Սուրբ հողն է դա…»****(«Մորս ձայնը»):*** Նույնը և՝ մայր ու տուն-օջախ ներթափանցությունը. *«Երբ իմ մայրիկը մեզ հետ չի ապրում // (ես նախանձում եմ եղբորս այնքան), // երբ տուն մտնելիս՝ չի*

[1] *http://inknagir. org/?p=8138*

[2] ***Վ. Սահակյան, Ռ. Ներսիսյան,*** *Գնահատանքի խոսքեր հայոց մեծերի մասին, Եր., 2005, էջ 75:*

ելնում իմ դեմ, // ինձ թվում է, թե ես տուն չեմ հասել,// դեռ տեղ չեմ հասել, ճանապարհին եմ…» ***(«Հայրական տան մասին»):***

Մոր ներկայությունը Վարդան Հակոբյանի գեղագիտական աշխարհում հրաշալիորեն ապահովում է եզերքային բներանգը, արտացոլում սովորույթներ, ավանդույթներ. երբեմն դրանք ներկայացվում են կենցաղային, առտնին գործողությունների խորապատկերների վրա: Ահավասիկ. *«Պողերի վրա թեժատաք արված, // մորս ձեռքերով վրան ջուր ցանված, //մորս փեշի մեջ փաթաթված՝ պահված // հացի բույրն անուշ աշխարհ է բռնում»* ***(«Ալոճենին»).*** *«Ախր, մայրս ասում էր միշտ. // -Երբ որ տնից մեկը հանկարծ // Ուշանում է հանդ ու արտում, // Արեգակը մայր մտնելիս՝ // Վառեք լույսը, // Որ նա լույսով գա, հասնի տուն…»* ***(«Իմ տան լույսը»):*** Այսպես արցախական ոգին մոր մեջ եղած գաղտնագրով է փոխանցվում զավակին, իսկ ժառանգականությամբ ավելանում են մնացյալ հատկանիշները ցեղի, այդ թվում՝ արյան ձայնով փոխանցվող նախնյաց հիշատակները:

Ընդհանրապես Վարդան Հակոբյանի պոետական լեզուն զարմանալի նրբացումներով է հյուսում այն տողերը, որոնցում կերպավորվում են իր սրտին մոտ, մտերիմ մարդիկ. հետևենք բառերի հոսքին մորը, տատին նվիրված բանաստեղծությունների մեջ. *«Մայրս լվացել գույն-գույն կարպետներ, // Փռել է, կանգնել, մի տերև ծամին. // Մեծ ձորագետով, ձորալանջն ի վեր՝ // Գարուն է ասես արևի կայմին»* ***(«Մեծ ձորագետով…»),*** *«Ծարավ ծաղկունքի // Հոգսը չլիներ՝ // Առվակը տատիս նվեր տաներ- // Որպես սարերից գտած մանկություն* ***(«Եվ մոլորել է առվակը իրեն»):***

Կարելի է մեջբերել բազմաթիվ տողեր, որոնք Վարդան Հակոբյանի ստեղծագործության պատկերային համակարգում հատկորոշ դերակատարություն ունեն՝ որպես հայ մարդու էթնիկ գոյակերպից սկիզբ առած կենսափիլիսոփայության արտահայտություններ: Դրանք, ի դեպ, կառուցվածքային միավորներ են, որոնք եզերքային բներանգի պահպանման առումով ապահովում են գեղարվեստական միջավայրի ամբողջականությունը. *«Մորս վարսերը // մեր սար ու ձորով, մեր հին հանդերով // անցած ու անցնող ճանապարհներ են…// Ճերմակ մազերը ճամփեքն են անցած, չանցած ճամփեքը // ախ, այնքան քիչ են մորս վարսերում», «Այնպես եմ մի չեղած անձրևի կարոտել, թվում է՝ մորս // ձեռքով թրծված կավն իմ մեջ ճաք է տվել», «….Դու մորոտվեցիր ձայնի մեջ իմ մոր, // իմ տան քիվերին քսվեցին թևեր», «Մորս խոսքերը դողում շուրթերին, // Թախիծ են մաղում հանդերի վրա», «Ես մի օր մորս ցույց տվի գլխիս // ճերմակն առաջին, // հառաչեց հանկարծ // ու մի վայրկյանում // մայրս ծերացավ»:*

Բավարարվենք բերված օրինակներով և նշենք դիտարկումներից վերհանված ընդհանրացումը. քնարական հերոսի կերպարը կերտելիս (տվյալ դեպքում՝ մոր) Վարդան Հակոբյանը կարողանում է անվրեպ գտնել բանաստեղծական պատկերի առանցքը կազմող բառն ու

արտահայտությունը, որոնցով բացահայտվում են ոչ միայն խոսքի անչափելի խորքերը, այլև ապրումի հոգեզգացական նրբերանգները: Վարպետորեն օգտվելով լեզվառճական միջոցների իր մեծ պաշարից՝ նա քնարական հերոսի կերպարը տեսանելի է դարձնում բառի՝ իր բուն գործառույթների սահմաններից դուրս գալու և ավելին պատկերելու կարողությամբ: Այսպիսով՝ բանաստեղծին հաջողվում է ապահովել ոչ միայն պոետական ասելիքի իմաստասիրական խորհուրդն ու բովանդակությունը, այլև դրանց ներշերտերում պահվող հղագրումները վերհանող բառակապակցություն-պատկերների հայեցողական ընկալումները, քանի որ սովորաբար գաղափարներն ու բառերը անքակտելի միասնության մեջ են գոյավորվում քնարական ստեղծագործություններում: Այսպես. *«Ծերացել է մայրս արդեն, ճամփա տվեք ձեր մայրիկիս, // Օգնեցեք, որ մայթը անցնի, // իմ ձեռքերով բռնեք ձեռքից:* ***(«Ծերացել է մայրս»),*** *«Մայրս չի օրորել, // քուն չի դրել ինձ երգելով: Թե որ հանկարծ պատահել է՝ չափից շատ եմ քնով անցել, // մայրս եկել, // վախվորանքով անմեկնելի // երգել է ու… արթնացրել: // Արթնացումի // Այդ երգից է երգս սերվել»* ***(«Ոգի»)****, «Իմ մայրը հանդերով անցնելիս, // աչքերից թափվել են սուրբ երգեր, // և ինքը դա չի նկատել: // Իմ հայրը հանդերով անցնելիս, // ձեռքերից թափվել են սուրբ երգեր, // և ինքը դա չի նկատել…. Եվ բանաստեղծության վերջում. «Երգեցեք՝ հանդերը կանաչեն, // և գոհված պապերը թե տուն գան, // չտեսած թոռներին, // չտեսած ծոռներին // չգոհված երգերով ճանաչեն…* ***(«Երգեցեք՝ երգերը չմեռնեն»):*** Ի դեպ, նույն խորունկ կենսափիլիսոփայությունն է Ղևոնդ Ալիշանի խոսքում. «Ուր որ հայրենի երգեր կլսվի՝ հոն հայրենիքը ողջ է»[1]:

Բանաստեղծության զգայական-գեղագիտական ներգործությունը ենթադրում է ընթերցողի երևակայության, ստեղծագործական ակտիվության խթանում, ինչպես և սեփական կենսական ու բարոյական փորձի իմաստավորում: Չենք ուզում դասդասել ո՛չ հոգեզգացական ապրում-դրսևորումներով ու անկեղծություններով, ո՛չ նրբախոս զեղումներով առանձնացող բանաստեղծությունները, որոնցում, ի դեպ, շինծու, «բանաստեղծականացված» ապրումների հետքեր անգամ չկան *(«Իսկ բառը, որով խոսում եմ առվի հետ, // արագացնում է նրա ընթացքը՝ փեշերը վեր կշտած մայրիկիս բոբիկ ոտնահետքերի պես…»* ***(«Ճանապարհին»),*** *«Ես համբուրում եմ խաչքարը, ինչպես // հոգնած ճակատն եմ համբուրում իմ մոր, // հայացքը ջինջ է, լույսից էլ՝ լուսե, // և զույգ աչքերն են երկու վառվող մոմ»* ***(«Վառվող մոմեր»):***

Երբ քնարական հերոսները մանկության հարազատ միջավայրից են, կամ՝ հայրենի եզերքն է կերպավորվում, Հակոբյանի խոսքում մայրենի բարբառի պահուստներից միշտ տեղին ու պատեհ հայտնվում են արդեն իսկ գեղագիտական ընկալումներով հատկորոշվող բառեր ու բառաձևեր,

[1] *http://mocak.am/13420/*

շարահյուսական կառույցներ, որոնք գունահնչունային ինքնատիպ խոսքը դարձնում են խորապես բնաշխարհիկ, հարազատ ու մտերիմ *(«…Որ մայրս կանգնի տան դռան շեմին, // ասի՝ եկե՞լ ես,* ***մաման քեզ մատաղ»*** ***(«Հայրական տան մասին»)****, «Ամառնավերջի խոհերս բացեմ // իմ* ***այամամու*** *// գործած գույնզգույն // կարպետի նման»* ***(«Մրմունդ»), «Մթնժորված*** *սարերում ճարճատում է գիշերը,- //* ***կաթուկ տվող*** *խնձորից պայթեց հողը ականված»* ***(«Արցախ»)****, «….Ողոքում է դարերն ի վեր. -* ***Էհհե՜յ, հու կա՜, մին կաթ ճյուր տվե՞ք, տինիմ պըռըշիս…»*** ***(«Տիեզերական Երգեհոն»):*** Հարկ է շեշտել, որ բանաստեղծը բարբառին դիմում է, երբ պոետական խոսքում վերհուշի մթնոլորտն է տիրում, և «ներկա դարձած վերհուշի կամ վերհուշ դարձած ներկայի հաջորդափոխությունը» (Սուրեն Աղաբաբյան) դառնում է տրամադրություն ստեղծող, մեծ մասամբ՝ կարոտի ու թախծի շեշտադրությամբ, քանի որ «վերհուշը, մեծ տեղ գրավելով համաշխարհային գրականության մեջ, որպես համամարդկային հոգեբանական հատկանիշ՝ միշտ ավելի ուժեղ է արտահայտվում այնտեղ, ուր ավելի մեծ են կորստյան հարվածները»[1]: Իսկ Արցախում, ցավոք, միշտ անպակաս են «*կորստյան հարվածները»:*

Ներկայացնենք, թե ինչպես է վերհուշ-հոգեվիճակի մեջ նյութեղենացվում ու ոգեղենացվում հոր ու պապի ներկայությունը Վարդան Հակոբյանի անհատական կենսատարածքում, որի ներհայաց դիտարկման դեպքում ներքին ապրումների ենթաշերտերում բացահայտում ենք մարդկայնության անգնահատելի հոգեպահուստներ. *«Հայրս կանգնում է արտերի եզրին. // այս ինչքան լավ են սերմերը ծլել, // ոսկի շողեր են՝ // բարձրացած հողից: Եվ հորս սիրտը տեղից ծուլ լինում, // առաջ է ընկնում // գարնան ծաղկումի շեն-շռայլ դողից…* ***(«Վերհուշ»)****, «Ինձ կանչելիս պապս բոլոր // թոռնիկների // անուններն էր տալիս հաճախ. // -Դավիթ, Վաղո, Սևակ, Լեռնիկ… // Այնքան մինչև հասնում էր ինձ. // -Մոտ եկ, Վարդան…// Դիտողություն աներ տատս՝ // պապս «վրա կտար» տաք-տաք.// -Թե ես այնքան թոռ չունենամ, // որ շփոթեմ անունները, // ինձնից ի՞նչ պապ: // ….Մեր սարերի, հանդ ու ձորի // անունը իր շուրթի վրա // պապս գնաց, // ապուպապոտ // այգալույսը հավերժ մնաց* ***(«Անմահություն»)****:*

Գրական առնչություններ չորոնելով ու չշեշտելով՝ նշենք, որ հոր և պապի կերպարները շատ են հողեղեն, իրենց էությամբ՝ բնաշխարհիկ, մտերիմ ու հարազատ և, որպես մտածողություն ձևավորող միավորներ, հիմնային նշանակություն ունեն բանաստեղծի պատկերային համակարգի ամբողջականացման գործում: Համաշխարհային իրականության մեջ մոտեցումները տարբեր են: Մենք մեր երկրին «**հայր**ենիք» ենք ասում: Իսկ ահա Նիցշեն իր երևույթը բանաձևում է այսպես. *«Ուր հայրեր՝ այնտեղ Հայրենիք»*: Ավետիք Իսահակյանը մի քիչ այլ ձևով է մոտենում խնդրին. *«Հայրենիքը՝ այդ մայրն է. ով չի սիրում իր մորը, նա չի սիրում իր*

[1] ***Հր. Թամրազյան,*** *Հովհաննես Թումանյան, Բանաստեղծը և մտածողը, Եր., 1995, էջ 458:*

հայրենիքը, և ընդհակառակը. ով չի սիրում մայրենի լեզուն, նա չի սիրում իր մոր խոսքը»[1]*:*

Վարդան Հակոբյանի ստեղծագործություններում ***մայր–բնություն-հայրենի եզերք*** հասկացությունների փոխներթափանցված ու խորքային կապի իրողությունը բանաստեղծականացվում, գեղարվեստական-կառուցվածքային միավորի է վերածվում ինքնաբերաբար և անբռնազբոս: Եվ դա գրական հավատամքից սկիզբ առնող ու կենսավորվող նրա պոետական բնավորության առանձնագծերից է: Վ. Հակոբյանի «Կերպավորված ըստ Արարատի պատկերի» հոդվածում կարդում ենք. *«Երբ գրողը կանխամտածված մտադրությամբ դիմում է որևէ գործի կամ թեմայի, դատապարտվում է ձախության, որովհետև ժպիտ ու ցավ չի լինում, տառապանք ու երկունք չի լինում»*[2]*:*

Տեսնենք, թե ինչպես է Վարդան Հակոբյանը խուսափում *ձախությունից,* ինչպիսի նրբությամբ է իր բանաստեղծական տողերում ներկայացնում *ժպիտ ու ցավ, տառապանք ու երկունք* և հազարաթել կապ ստեղծում ընթերցողի և քնարական հերոսի միջև: **«Կամուրջ՝ գետի երկարությամբ»** խորհրդանշական վերնագրով բանաստեղծության մեջ, օրինակ, պապ ու տատի և ընթերցողի միջև առաջացող քրոնոտոպային կամուրջը տեսանելիության չափ իրական է դառնում. *«Ասում են՝ ցավն աշխարհում հայտնվում է մինչև իր ծնվելը: Եվ // ես հիշում եմ պապիս դեմքը, որ երբեք չեմ տեսել: Նա // ձիապան էր ու վարդեր էր աճեցնում, ու երբ Վարդի տատս // խռովում էր իրենից, գիշերը գնում, նրա համար // թաքուն բերում էր ամենալավ վարդերը»:*

Պապունց տունը, պապին ու տատին կերպարավորող պատկերներով բնաշխարհիկ բառ ու գույնով հովվերգական մի գործ է ***«Մեր տան մեծը»*** բանաստեղծությունը. *«Եվ մթան մեջ վեր է թռչում իմ տատիկը, // «Հարձակվում» է պապիս վրա. / -Չե՞ս տեսնում, որ մեր Վարդանի ձենն է, Խաչի… // -Բա ասում ես՝էլ չե՞ս տեսնում: // Բա ասում ես՝խո՞ւլ եմ, աղջի,- // Ու ինձ գրկում, լաց է լինում պապս՝դարձած // մի երեխա»:*

Հարկ է նշել, որ, անկախ չափածո թե արձակ գործի ներքնատար տրամադրությունից, Վարդան Հակոբյանի խոսքում կարող է հումոր կամ հեգնանք հայտնվել, ձուլվել հյուսքին, դառնալ ասելիքի մաս՝ նոր երանգ, նոր տրամադրություն հաղորդելով նրան: Օրինակ, *«Բա որտեղից է էդ օղին ծառերի մեջ՝ // հարցնում է չտես տղան: Հայրը ասում է՝ // մեր պապական հողի մեջ արաղի հանք // կա, թթենիները հենց էդ հանքերում են բուսնում* ***(«Տաճարն Աստծո»):*** Բնաշխարհիկ համուհոտով հումորի մի օրինակ էլ մեջբերենք **«Կոնդոլիզա Ռայսը Ղարաբաղում»** բանաստեղծությունից.

Իսկ Հաբի պապս, որ հին արցախցի է, ու մի քիչ նման է Հոբին,

---

[1] ***Վ. Սահակյան, Ռ. Ներսիսյան****, Գնահատանքի խոսքեր հայոց մեծերի մասին, Եր., 2005, էջ 79:*

[2] *http://artsakhwriters.com/wp-content/uploads/2019/02/silva.jpg*

մեկ-մեկ հեռուստացույցով դիտում է Կոնդոլիզա Ռայսի
մասին հաղորդումները, նրան նայում
ու ասում է՝ լավ հարս է, խոսք չունեմ, բայց ափսոս,
երևում է՝ դեռ կարգին տղամարդու ձեռք չի ընկել…

Կան նաև՝ ներպահված դառնությամբ հեգնանքի օրինակներ. «*Սովածների փիլիսոփայություն՝ արդարությունը հաց է ավելի, քան արդարությունը* ***(«Փակիր աչքերդ՝ չերևաս»)****,* «*Գեղեցիկ չէ, երբ ամեն ինչ «գեղեցիկ» է՝ ինչպես // դեմոկրատիայի պատրաստած վերմակ՝ // կամ ոտքերդ են դուրս մնում, կամ՝ գլուխդ* ***(Տխուր է, որ տխուր է»)****:*

Արցախ աշխարհին ու արցախցուն նվիրված ստեղծագործություններում բանաստեղծն առինքնող գույներով է կենսավորվում հայրենի բնաշխարհը, մարդը, սերը, ոգին ու անկոտրում կամքը, գտածի նյութեղենությունն ու գտնելիքի տեսլականը. *«Լույսը երկնքից իջնում է զվարթ, // հայացքն արցախցու պարզ սրբատուն է, // գորության ներսից պարզվում է աջը, // լեռը բախում է դուռը Աստծո. // -Ինձ շարունակիր, տառապանք լուստ… // ….Արցախը՝ հույսի անառ վեհարան, // երկնքի շեմին՝ ոտքը մաքուր լեռ, // կրակի վրա Սրբատափն է հարթ, շնչում են գոհված // պապիս ձեռքերը. // -Ինձ շարունակիր, արդար արեգակ* ***(«Մանկություն»)****:*

Պետք է նկատել, որ, ընդհանրապես, փոխաբերված միջնորդավորումներով ու խորհրդանիշերով պատկերների գործածությունը պոետական մտածողության եղանակներից է: Ֆրոյդյան հայեցմամբ՝ մարդու ներաշխարհում գործող, գիտակցականի սահմաններից դուրս գոյություն ունեցող հակումներին՝ անգիտակցականին («այն»-ին կամ՝ «նա»-ին) հսկող-քննադատող ենթագիտակցականը՝ «գերես»-ը, կենսիմաստային կարևոր հարցադրումների պատասխանները կապում է գիտակցությանը խորհրդանիշերի ձևով տրված նախատիպերի հետ: Հավելենք նաև Յունգի հայեցումը, ըստ որի՝ անհատական անգիտակցականի հիմքում ընկած են հուզականի հնագույն շերտեր, որոնք արտահայտվում են նախնադարում գոյավորված հանրային փորձի խտացումների, նախատիպերի կերպարավորումներով:

Այսպիսով՝ դարերով կերպարավորված հանրային փորձի խտացումներն ու նախատիպերը մեր գիտակցությանը տրվում են միջնորդավորված՝ խորհրդանիշերի ձևով: Վարդան Հակոբյանի ստեղծագործության մեջ լեռը, ժայռն ու քերծը, վանքն ու մատուռը, քարն ու խաչքարը հավաքական կերպարներ են դառնում. *«Լեռը բարձրանում ճանապարհն ի վեր // և մատուռվում է երկնքի առաջ», «Մատուռ կա ամեն մի լեռան վրա»* և *«ամեն մի գագաթ գմբեթ է վանքի», «Քարածերպերիդ ծաղկունքը հավերժ // բարձր են լինում թռիչքիդ նման», «Ամեն ինչ չէ, որ կորած է անդարձ,- // Լույսի ափի մեջ լալիս է քարը»:* Այդ խորհրդանիշերը Վարդան Հակոբյանի անձնավորած բնապատկերներում արցախցու նախաստեղծ բնավորության կրողներն են. *«Իմ բանաստեղծության առաջին բնորդուհին // մեր մեծ ձորի գետակն էր, թիկնել էր՝ գլուխը // Լվացքատեղի*

քարերի վրա, մասրենու մի քանի փուշ ու հուլունք՝ // Լուսափրփուր լանջին առած ***(«Անապատան թիթեռներ»):*** Ինքնակերպությամբ տպավորիչ բնապատկերները հիմնականում ստեղծված են բանաստեղծի արտաքին՝ առարկայական տպավորություններով և ներքին հայեցումների ազդեցությամբ *(«Շեկ, լանջաբաց լուսինը ոնց որ մի քիչ ոտք կախեց», «Գիշերը վայրի ծաղկի բաժակում կծկվել է // վախից», «Օրն արծաթվել է մարմնի պես մերկալուսին»)*:

Հայտնի ճշմարտություն է՝ մարդու բարոյական պատկերացումները և հոգեկերտվածքը արտացոլումն են այն բնական միջավայրի, որտեղ նա կյանք է առնում, որտեղ ձևավորվում, ամբողջականանում է որպես անհատականություն: Այս առումով կարող ենք ասել, որ, քնարական հերոսների բարոյական պատկերացումները ձևավորող միջավայրի արտացոլումներով Վարդան Հակոբյանին հաջողվել է ստեղծել իրենց տեսակի մեջ բացառիկ գեղարվեստական գործեր, որոնք առանձնանում են հատկապես իրենց կենսահայեցողությամբ ու բնափիլիսոփայությամբ:

Ինքնատիպ են բնության գեղագիտության հակոբյանական ընկալումները: Հեղինակը գեղագիտական միջավայր ստեղծող բազմատեսակ տարրերով է իրականացնում իր քնարական հերոսի պատկերավորումը՝ գեղարվեստականացնելով նրա գոյի և հավերժության իմաստասիրական հիմնադրույթը: Այդ միջավայրի կերտմանը բանաստեղծը մասնակից է դարձնում խոսքի արտահայտչամիջոցների ամբողջ ընտրանին՝ ինքնահատուկ ձևերով ու կերպերով: Նա ստեղծում է *հայրենի եզերք-բնություն, բնություն-հայրենի եզերք* փոխներթափանցումներով կերպարավորված պատկերներ, որոնք իրենց գեղագիտական գործառույթների իրականացումով լավագույնս ներկայացնում են հայկական նոր ու հինավուրց Արցախ աշխարհը, անկոտրում արցախցուն:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ,բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

ՀՏԴ 808.1
Գրականագիտություն

Սոկրատ ԽԱՆՅԱՆ
բ.գ.դ., պրոֆեսոր, ԱրՊՀ
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

ԱՐՎԵՍՏԻ ԲԱԶՄԱՇԵՐՏ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՐԳԱՐԵՆ

Սույն հոդվածում գնահատվում են հանճարեղ գեղագետ Հովհաննես Թումանյանի ելույթները, զեկուցումները հոդվածներն ու նամակները արվեստի տեսակների մասին, ընդգծվում դրանց նշանակությունը հայ արվեստի զարգացման ու հարստացման գործընթացում:

Օգտվելով գրական-հրապարակախոսական բազմաբնույթ աղբյուրներից՝ հոդվածի հեղինակը նշում է անմահ գրողի ակտիվ մասնակցությունը արվեստին նվիրված միջոցառումներին, ընդգծում արվեստի փիլիսոփայության վերաբերյալ նրա կատարած ընդհանրացումները, դերն ու տեղը ազգային մշակույթը համամարդկային ասպարեզ տանելու ուղղությամբ:

Հոդվածում բերվում են մի շարք հայ և օտար ականավոր գեղագետների կարծիքները Մեծ Լոռեցու բարձրարվեստ ստեղծագործության,ինչպես նաև արվեստի վերաբերյալ նրա փիլիսոփայական ընդհանրացումների նշանակության մասին:

***Բանալի բառեր՝** Հովհաննես Թումանյան, արվեստի տեսակները, գրականություն, թատրոն, կերպարվեստ, երաժշտություն, ճարտարապետություն, հայ մշակույթ, գրական կապեր, զարգացման հեռանկարներ:*

С. Ханян

ПРОРОК МНОГОСЛОЙНОГО МИРА ИССКУСТВА

В данной статье анализируются выступления, доклады, статьи и письма о разных видах искусства гениального искусствоведа Ованеса Туманяна, подчеркивается их значение в деле развития и обогащения армянской культуры.

Используя разные литературно-публицистические источники, автор статьи отмечает активное участие великого писателя в мероприятиях посвященных искусству, акцентируя внимание на философии искусства его трудов, роль и значение в национальной культуре, ищущей свое место на международной арене.

В статье приводятся мнения ряда видных армянских и зарубежных искусствоведов о высококультурном творчестве Великого лорийца, а также подчеркивается его важная роль философских обобщений об искусстве.

***Ключевые слова:** Ованес Туманян, театр, изобразительное искусство, музыка, архитектура, армянское искусство, литературные связи, перспектива развития.*

S. Khanyan

PHILOSOPHICAL GENERALIZATIONS ABOUT ART

This article analyzes the speeches, reports, articles and letters about different types of art by the great art historian Hovhannes Tumanyan, emphasizes their importance in the development and enrichment of Armenian culture.

Using various literary and journalistic sources, the author of the article notes the great participation of the great writer in events dedicated to art, focusing on the philosophy of art of his works, the role and importance in the national culture, which is looking for its place in the international arena.

The views of a number of prominent Armenian and foreign art historians on the highly cultural work of the Great "Loretsi" are given in the article. In the article also emphasizes his important role of philosophical generalizations about art.

Keywords. *Hovhannes Tumanyan, theater, fine art, music, architecture, Armenian art, literary relations, development perspective.*

1969 թվականին՝ Մեծ Լոռեցու ծննդյան 100-ամյակի կապակցությամբ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս ընծայեց «Թումանյան. արվեստի մասին» ժողովածուն, որն առայսօր մնում է որպես թումանյանագիտության բազմաբնույթ գանձարաններից մեկը: Գիրքը կազմել և ծանոթագրությունները հեղինակել է Թումանյանի թոռնուհին՝ Ի. Սաֆրազբեկյանը, խմբագրել է անվանի գրականագետ Արամ Ինճիկյանը, իսկ համառոտ առաջաբանը գրել է աշխարհահռչակ Մարտիրոս Սարյանը:

Անմահ գեղանկարիչը իր խոսքում ողջունելով ժողովածուի աշխարհ գալը նշել է արվեստի վերաբերյալ արտահայտած Թումանյանի մտքերի, ասույթների, հատկապես ազգային արվեստի փիլիսոփայության մասին կատարած ընդհանրացումների նշանակությունը՝ ընդգծելով. «Թումանյանը բացառիկ հմայքի տեր անձնավորություն էր, և բոլորն էլ ձգտում էին դեպի նա: Օր չէր անցնում, որ նրա տանը չհավաքվեին գրողներ, նկարիչներ, երաժիշտներ, դերասաններ, ճարտարապետներ, հնագետներ… Չկար կուլտուրական կյանքի մի ասպարեզ, որին եռանդուն մասնակցություն չունենար Թումանյանը: Ցուցահանդեսներ, գեղարվեստական երեկոներ, դասախոսություններ, և ամենուրեք Թումանյանը կամ նախագահում էր, կամ բացման խոսք ասում, կամ բանավիճում: Անխտիր բոլորի համար նա սիրված ու ճանաչված հեղինակություն էր»[1]:

Կարդալով Մեծն Թումանյանի թողած հարուստ գրական ժառանգության բովանդակալից էջերը՝ կրկին ու կրկին հպարտանում ես, որ մեր ժողովուրդը և՛ իր, և՛ մարդկության պատմությանն է նվիրել Թումանյանի նման հանճարեղ անհատականություն, որի մասին մեր ազգային

[1] ***Թումանյան,*** *«Արվեստի մասին», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969, էջ 5-6:*

մեծություններից Ե. Չարենցը պիտի բացականչեր. «Կա Մեծարենց, կա Տերյան, և բազում ուրիշ պոետներ կան, Բայց Թումանյանն է Անհաս Արարատը մեր նոր քերթության»[1], աշխարհահռչակ Վարպետը՝ Ավ. Իսահակյանը, պիտի երազեր. «Ես Հովհաննեսի աշխարհազգացումով եմ ուզում մեռնել՝ իջնել իմ սարիս ետևը»[2], մեծանուն Պ. Սևակը պիտի գրեր. «Թումանյանն է մեր բանաստեղծներից ամենից ավելի հայոցը, ամենից ավելի բնաշխարհիկը… Թումանյանի կատարյալը բնական է այնքան, որ չես էլ տեսնում, ինչպես չես տեսնում օդը»[3], մեծատաղանդ Հր. Մաթևոսյանը պիտի հաստատեր. «Թումանյանով մենք կանք:Առանց Թումանյանի՝ մենք չկանք:Տարազի-տարալեզու գրականություն մեծ աշխարհ մենք մտնում ենք Թումանյանով, և այդ աշխարհը այլևս մեր հայրենի եզերքն է: Առանց Թումանյանի այդ եզերքը մերը չէ…[4], իսկ ռուս ժողովրդի աշխարհահռչակ բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ-հայագետ Վ. Բրյուսովը պիտի ձեռքը դներ կրծքին և ի լուր աշխարհի հայտարարեր. «Ամբողջապես վերցրած՝ Թումանյանի պոեզիան ինքը Հայաստանն է, հին և նոր Հայաստանը, որ հառնել է և տպավորվել Մեծ Վարպետի երկերում»[5]:

Լայն ու խորաթափանց են Հ. Թումանյանի դիտարկումներն ու գնահատականները արվեստի տարբեր տեսակների վերաբերյալ: Այն հանգամանքը, որ նա ակտիվորեն մասնակցել և իր բարձրարժեք խոսքն է ասել արվեստին նվիրված միջոցառումների ժամանակ, միայն բանաստեղծական իր բարձր հեղինակության հետ չի առնչվում, այլև հայ իրականության մեջ արվեստագետի իր աննախադեպ ու հիմնավոր գիտելիքների արդյունքի: Հենց դրա շնորհիվ է, որ Թիֆլիսում, 19-րդ դարի 90-ական թվականներից սկսած մինչև իր մահկանացուն կնքելը՝ 1923 թվականը, նրան հրավիրում էին բոլոր այն միջոցառումներին, որտեղ քննարկվում էին արվեստին առնչվող հիմնախնդիրները և դրանց վիճակը հայ իրականության մեջ: Ահա հենց վերոնշյալ ժամանակաշրջանում էլ մեծ գրողը հանդես է եկել որպես գրականագետ, թատերագետ, արվեստաբան, երաժշտագետ, ճարտարապետության տեսաբան՝ իրեն դրսևորելով որպես արվեստի փիլիսոփայության անմրցելի ջահակիր: Նրա մարգարեական կռահումներն ու գնահատականներն արվեստի տարբեր տեսակների վերաբերյալ դույզն-ինչ չեն հնացել, հնչում են որպես դաս ու խորհուրդ մերօրյա և գալիքի բոլոր ժամանակների համար:

Հ. Թումանյանը ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության զարգացման հիմնական ակունքը համարել է ժողովրդական

---

[1] ***Ե. Չարենց****, «Հատընտիր», «Սովետական գրող» հրատ., 1987, էջ 424:*

[2] ***Ավ. Իսահակյան,*** *Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, «Սովետական գրող» հրատ., 1977, էջ 287:*

[3] ***Պ. Սևակ****,«Երկերի ժողովածու» 6 հատորով, հ. 5, «Հայաստան» հրատ., 1974, էջ 356-357:*

[4] ***Հր. Մաթևոսյան,*** *«Սպիտակ թղթի առջև», «Հայգիտակ», Ե., 2004, էջ 82:*

[5] ***«Հովհաննես Թումանյան, 1869-1959»,*** *ՀՍՍՌ, Ալ. Մյասնիկյանի անվան պետական ռեսպուբլիկական գրադարան, 1959, էջ 31:*

ստեղծագործությունը: Նա գտնում էր, որ ճշմարիտ գրականությունն արտացոլում է ժողովրդի կյանքը: Նշանակում է՝ գրողը չպետք է մոռանա, որ «Հայոց գրականության աղբյուրը «ժողովրդական պատմություններն են», զրույցները, սովորությունները, որոնք գալիս են հին դարերից ու մեր նախնիների «մտքի ու հոգու ծնունդներն են»:

Ժողովրդական ստեղծագործությունը ժողովրդի խոսքը համարող Մեծ Լոռեցին համոզված էր, որ գրողը չպետք է մոռանա այն կաթնաղբյուրը, որը կոչվում է բանահյուսություն: Սակայն նա չէր կարծում, թե այդ ասպարեզում ևս կլինեն համբակներ, որոնք կարող են իրենց բթամտությամբ ոչ միայն առաջ քաշել անընդունելի կարծիքներ, այլև գռեհկորեն վիրավորել ազգային գրականությունը նոր հունի մեջ դնող, համամարդկային արժեքներ ստեղծող արվեստագետներին, որոնց թվում առաջին հերթին Մեծ Լոռեցուն: Նման համբակներից էր Ռուբեն Դրամբյանը, որը, ձեռք բերելով Թումանյանի կազմած և իշխանուհի Մարիամ Թումանյանի հրատարակած մանկական պատկերազարդ գրքույկները, վայնասուն է բարձրացրել: Նա, կարդալով Թումանյանի մշակած «Ծիտը» ստեղծագործությունը, գրում է, թե իբր այն վերցված է Ս. Հայկունու առակներից, ապա «Մշակ» թերթի թիվ 162-ում տպագրում «Գրական մեծությունները բանագող» հոդվածը, որտեղ պնդում էր, թե իբր Թումանյանի «Ծիտը» վերցված է Ս. Հայկունու «Աշըղ Ահլոր» առակից:Հ. Թումանյանը պատասխանում է նրան ամենայն լրջությամբ ու սրամտությամբ՝ տպագրելով «Ոչ գրական ոչնչությունները քննադատ» հոդվածը «Մշակի» 1909թ. օգոստոս ամսվա թիվ 169, 170 համարներում:

Հ. Թումանյանն ընդդիմախոսության մեջ նշում է, որ հեքիաթները գրական մարդիկ չեն հորինում, այլ առնում են ժողովրդականը ու պատմում՝ ընդգծելով. «Եվ շնորհքը հենց էդ պատմելու մեջն է, որ իմանան ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, ինչ լեզվով, ինչ ոճով ու ինչպես պատմեն, որ և՛ գեղեցիկ դուրս գա, և՛ ժողովրդականի համն ու հոտը չկորչի»[1]:

Հ. Թումանյանը նաև նշում է՝ եթե ինքը գործն առած լիներ նույնիսկ Ս.Հայկունու գրքից, դարձյալ կմնար իր արածն օրինավոր ու անպարսավելի: Դա այն ուղիղ ճանապարհն է, որով պետք է հոսանք տալ, ներս բերել առողջ ժողովրդական ստեղծագործությունները և ուժեղ, հարուստ, կենդանի լեզուն:

1913թ. Հ. Թումանյանը նորից անդրադարձավ Ռ. Դրամբյանի և Ս. Հայկունու կողմից բարձրացված վայնասունին՝ ուղղված իր դեմ: Մեծ Լոռեցին ստիպված էր պատասխանելու Ռ. Դրամբյանի «Գրական մեծությունները բանագող»[2], «Իմ վերջին խոսքը Հովի. Թումանյանին»[3]

---

[1] *Հ. Թումանյանը քննադատ, ՀՊՀ, Ե., 1939, էջ 125:*

[2] *«Մշակ», հ. 262:*

[3] *Մշակ, հ.հ.187, 182, 193:*

չարամիտ հոդվածներին: Ինչ վերաբերում է Ս. Հայկունուն, ապա նա հանդես էր եկել «Հովիտ» ամսագրի 1913թ. հ. 16-ում՝ «Հովհ. Թումանյանի «Գառնիկ ախպերը» հերյուրող հոդվածով:

Մեծ Լոռեցին զայրացած էր ոչ միայն Ռ. Դրամբյանի և Ս. Հայկունու անընդունելի կարծիքներից, այլև նրանից, որ «Գրական տգիտությունը կամ տգետ քննադատությունը ամեն մի նոր առաջ եկող գրականության մեջ սովորական երևույթ է, սակայն մեր մեջ տգիտության վրա ավելանում է վատ հոգին, հոգու չարությունը»[1]:

1913թ. Հ. Թումանյանը գրում է «Հայոց դրամբյանիզմն ու ես» պատասխան հոդվածը, որը տպագրվում է «Հորիզոն» թերթի 1913թ. 128, 129, 135 համարներում:

Հ. Թումանյանին ցավ էր պատճառել այն երևույթը, որ Դրամբյանը վերածվել էր դրամբյանիզմի, որը շարունակում էր չարախոսել՝ բթամտությունը դարձնելով ուղղորդ: Անդադար հոլովում էին, թե իբր Հ. Թումանյանն իր նյութերը վերցնում է Ս.Հայկունու ժողովածուից, բառացի կրկնում նրան, տպագրում իր անունով: Բանը հասել էր նրան, որ Ս. Հայկունին «Հովիտում» գրել էր, թե Թումանյանը «Գառնիկ ախպեր» հեքիաթը թարգմանել է ռուսերենից ու տպել իբրև ինքնուրույն գրվածք: Իսկ «Մշակ» թերթն էլ արձագանքել էր Ս. Հայկունուն:

Ըստ էության քննադատաբար պատասխանելով դրամբյանիզմի հետամնաց ներկայացուցիչներին՝ Հ. Թումանյանը հայտնում է հայ գրականության համար շատ կարևոր մի փաստ. «Ես իմ լեգենդներն էլ եմ ժողովրդից առել, բոլոր հեքիաթներն ու զրույցներն էլ եմ ժողովրդից ու ժողովրդականից առել ու միշտ աշխատել եմ ու աշխատում եմ ինչքան կարելի է մոտիկ ու հարազատ մնալ, «Սասունցի Դավիթը» կազմելիս էլ եմ էդպես արել, նույնիսկ «Անուշն» էլ, «Թմկաբերդն» էլ, մյուսներն էլ, որտեղ քեֆս տվել է, օգտվել եմ ժողովրդական նյութերից և շատ անգամ հենց ինչպես իրենք են ասում, «բառացի»[2]:

Ամենայն հայոց բանաստեղծի գրական-մարգարեական հայացքները ծիածանված են «Համլետ». «Ողբեգություն Շեքսպիրի», «Տաղանդ և բթամտություն», «Թարգմանությունները և հրատարակությունները մեզանում», «Ձևն ու հոգին», «Համաշխարհային գրական տոնը» «Կյանք և գրականություն», «Հայոց նոր գրականության հիսնամյակը», «Նաղաշ Հովնաթանը և նրա, «Քուչակ նահապետի և Սայաթ-Նովայի սերը», «Ղ. Աղայանի «Անահիտը», «Ռ. Պատկանյանի մասին», «Վահան Տերյանի մասին», «Տենդենցիան գրականության մեջ», «Գրական լեզվի մասին», «Պուշկինի մասին», «Մ. Նալբանդյանի հիշատակին», «Մանկական գրականության մասին» և բազմաթիվ այլ զեկուցումներում ու ելույթներում, ինչպես նաև ժամանակի անվանի գրողներին ու քննադատներին հղած

[1] *Նույն տեղում, էջ 218:*
[2] *Նույն տեղում, էջ 268:*

նամակներում: Չկա գեղարվեստական գրականության հետ առնչված մի հարց, որին անդրադարձած չլինի անմահ գրողը: Դրանցում քննարկվել, լուսաբանվել են գրողի գեղագիտական իդեալին ու արդիականությանը, թարգմանության արվեստին, հայ հին գրականությանը, գրական տարբեր ժանրերին և այլ երևույթների վերաբերող հիմնախնդիրներ:

Ամբողջ կյանքում Հ. Թումանյանը ծառայել է մանկական գրականության հարստացմանը իր բանաստեղծություններով, բալլադներով, լեգենդներով, հեքիաթներով, առակներով և անմրցակից պատմվածքներով, միաժամանակ նաև իր տեսական խորհուրդներով:

Միջնադարյան հայ պոեզիան ու կերպարվեստը գաղափարական խոր բովանդակության ու բարձր որակի շնորհիվ արժանացել են ոչ միայն հայ, այլև օտարազգի ականավոր գեղագետների դրվատանքին: Այս առումով միանգամայն առանձնահատուկ են Մեծ Լոռեցու անդրադարձները միջնադարյան հայ հանճարների պոետական ժառանգությանը: Այսպես՝ «Նաղաշ Հովնաթանը և նրա, Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սերը» գիտական-վերլուծական հոդվածում, որը գրվել է Ա. Չոպանյանի «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթանյան նկարիչը» գրքի առիթով, Թումանյանը ընդգծելով ականավոր գեղագետ, գրականագետ Արշակ Չոպանյանի գիտելիքների խորությունն ու նրա բարձր ճաշակը, ողջունում է նրան՝ վերոնշյալ աշխատության համար: Նա միաժամանակ խիստ քննադատում է որոշ հայ գործիչների անպատասխանատու, անտարբեր վերաբերմունքը ազգային բարձր արժեքների նկատմամբ:

Մեծ բանաստեղծը կոնկրետ նշում է հանգուցյալ Խրիմյանի աններելի վարմունքը աշուղ Նաղաշ Հովնաթանի և Հովնաթան Հովնաթանյանի, ասել է թե՝ պապի և նրա թոռան գործերի վերաբերյալ: Պապը՝ սիրո տաղերի հեղինակ, իսկ թոռը՝ աստվածաշնորհ նկարիչ, որոնք փայլել են միջնադարյան մութ ու խավար երկնակամարում: Ա.Չոպանյանն առաջին անգամ հայտնագործել է նրանց՝ գնահատանքի իր արժանի խոսքն ասել նրանց մասին:

Թումանյանը, քննադատելով անծանոթությունը ազգային արժեքներին, ավելի խիստ խարազանում է այդ արժեքները փչացնելու անհանդուրժելի երևույթը: Նա գրում է. «Բայց երանի թե միայն էսքանը լիներ-անծանոթությունը: Հապա էն անհասկանալի քմայքը, որ հետապնդում է մինչև թաքստոցները՝ փչացնելու, ոչնչացնելու գեղեցիկ գործերի մնացորդները, ինչպես արել է հանգուցյալ Խրիմյանը, փշրել տալով նկարիչ Հովնաթանի գործերը, որ զարդարում էին Էջմիածնի տաճարը՝ հորինելով «հոյակապ տեսիլ մը մեծապանծ, երբնագեղ, գարնանափառ, փթթինազարդ ահագին բուրաստան մը պատերն ի վար հավերժական թարմությամբ ծաղկեվորած… - Ճշմարիտ, ինչքան էլ մեծ լինի մարդու հարգանքը դեպի Խրիմյանի հիշատակը՝ չի կարող չսիրել Չոպանյան գեղարվեստագետի էս

ազնիվ զայրույթը, որով զայրանում է նրա արարքի դեմ, խստությամբ դատապարտելով քանդողական մոլեգնությունն ու քանդիչ ձեռքը»[1]:

Ա. Չոպանյանը հայտնում է, որ նկարիչ Հովնաթանը վրաց Հերակլ 2-րդ թագավորի պալատական նկարիչն է եղել այն ժամանակ, երբ նույն թագավորի պալատական երգիչն էր հոյակապ Սայաթ-Նովան: Եվ վրաց թագավորից է, որ Ղուկաս կաթողիկոսը խնդրում է թույլ տալ Հովնաթանին գնալու Էջմիածինը շքեղազարդելու իր նկարներով: Նկարիչ Հովնաթանի և իր աշակերտների նկարները Էջմիածնում 120-ից ավելի են եղել, նրանցից հազիվ 20-30 հատ են մնացել:

Հ. Թումանյանը հոդվածի վերջում գրում է.«Նկարիչ թոռից թերևս ավելի բախտավոր չի բանաստեղծ պապը, Նաղաշ Հովնաթան աշուղը, որ և՛ նկարիչ է եղել միաժամանակ: Նա էլ, անկասկած, շատ բան է կորցրել»[2]:

Արվեստի ազգային ոգու ու համամարդկային նշանակության մասին չէր կարող իր համոզիչ խոսքը չասել մեծ գրողը: Այս կապակցությամբ նա բանավեճի ձևով իր կարծիքն է հայտնել «Գեղարվեստը հայրենիք ունի» հոդվածում:

Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում 1916թ. մայիսի 1-ին տեղի է ունեցել Արվեստագետների միության հիմնադիր ժողովի հանդիսավոր բացումը: Ժողովը նախագահել է Ալ. Շիրվանզադեն: Ողջույնի խոսքն ասել է Թումանյանը: Անդրադառնալով արվեստի ընդհանուր հարցերին՝ նա առարկել է Գևորգ Բաշինջաղյանի այն մտքին, թե իբր «Արվեստը հայրենիք չունի»: Այդ կապակցությամբ Թումանյանը շարադրել է իր մտքերը՝ ժխտելով անվանի նկարչի թյուր կարծիքը:

Ճիշտ է, Գ. Բաշինջաղյանը ներկա չի եղել ժողովին, սակայն Թումանյանը չէր կարող անուշադրության մատնել մի հիմնախնդիր, որը սպասում էր լուրջ պատասխանի:

Բերելով Բաշինջաղյանի «Գեղարվեստը հայրենիք չունի» կարծիքը՝ Մեծ Լոռեցին հարցրել է. «Իսկ հայրենիքը գեղարվեստ ունի՞», և անմիջապես պատասխանել իր իսկ հարցին. «Իհարկե, ամեն հայրենիք ունի իր ուրույն արվեստը և չի կարող չունենալ, ինչպես որ ամեն ժողովուրդ ունի իր գրականությունը, իր ֆոլկլորը: Յուրաքանչյուր ազգի ու ժողովրդի մեջ ուրույն կերպով է զարգանում և ծավալվում գեղարվեստի այս կամ այն ճյուղը, և դա է, որ որոշում է նրա կուլտուրայի աստիճանը և կենցաղի առանձնահատկությունը»[3]:

Անդրադառնալով մեր ժողովրդի համար ստեղծված այդ դառն օրերին՝ Թումանյանը նկատում է մի տեսակ ինքնաճանաչում, սթափություն, որն արդյունք էր մեր ազգի կենսունակության: Եվ Թումանյանի համար կրկնակի ուրախալի էր այն երևույթը, որ Ընկերության հիմնադիր

---

[1] ***Թումանյան****, «Արվեստի մասին», ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ146:*

[2] *Նույն տեղում, էջ 147:*

[3] *Նույն տեղում, էջ 153:*

անդամների թվում կային նաև այսպես կոչված «գաղթական» նկարիչներ, որոնց նկարները, ինչպես ասում է Թումանյանը, «դեռ պատերազմի դաշտում ու ճանապարհին են ընկած»: Ելույթի վերջում Հ. Թումանյանն իրեն հատուկ լավատեսությամբ ողջունել է նոր Ընկերության երևան գալը, բարեմաղթել հաջողություններ մեր հայրենիքի գեղարվեստի զարգացմանը նպաստելու գործում ու խոսքն այսպես ավարտել. «Գեղարվեստը հայրենիք ունի» բոլոր ժամանակներում, բոլոր ժողովուրդների համար:

Հ. Թումանյանի հոդվածները թատրոնի և դրամատուրգիայի մասին իրենցից ներկայացնում են որպես առանձին-խորքային ուսումնասիրություններ: Դրանք սովորական գրախոսություններ չեն, այլ արվեստի տեսակների փիլիսոփայության բացահայտումներ: Ընթերցում ենք նրա «Համլետ», ողբերգություն Շեքսպիրի» աշխատանքը՝ գրված Հովհաննես խան Մասեհյանի կողմից այդ երկի անգլերենից թարգմանության առթիվ: Հենց սկզբից մտովի գնում ենք դեպի Շեքսպիրի ստեղծագործական աշխարհը և նրա նշանակության ծիրը համամարդկային առումով:

«Շեքսպիրը,-գրում է Մեծ Լոռեցին,- դարձել է մի չափ ազգերի զարգացման աստիճանը որոշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի տգետ է, եթե չի հասկանում, կնշանակի տհաս է, եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի տկար է»[1]:

Այդ տեսակետից անդրադառնալով հայոց լեզվին՝ Հ. Թումանյանը գտնում է, որ մենք առաջադիմել ենք, ու «Համլետ» -թարգմանությունը համարում է «մի հանկարծակի թռիչք»: Շեքսպիրն արդեն խոսում է հայերեն, իրար ետևից լույս են տեսնում «Շեյլոկ», «Օթելլո», «Արքա Լիր», «Համլետ» և այլ երկեր: Անմահ գրողը նշում է, որ առայժմ այդ երկերը հայերեն թարգմանվել են ուրիշ լեզուներով կատարված թարգմանություններից: Ու մարգարեաբար ընդգծում է Շեքսպիրի հարազատ լեզվից՝ անգլերենից կատարված թարգմանության առավելությունը: Կոնկրետ ու հանգամանալից զննելով թարգմանությունը, կատարելով նաև որոշակի դիտողություններ՝ Թումանյանը սրտանց ողջունում է Շեքսպիրի ստեղծագործության անգլերենից թարգմանությունը հայերեն:

Հ. Թումանյանն ի շահ հայ թատրոնի զարգացման և տաղանդավոր դերասանների աճեցման, մեկ անգամ չի հանդես եկել առանձին հոդվածներով ու նամակներով: Այսպես՝ «Մշակ» թերթին հասցեագրած նամակում, «Տաղանդ և բթամտություն», «Դերասան Գալֆայանի մասին» հոդվածներում պաշտպանել է երիտասարդ դերասան Կարապետ Գալֆայանի դերասանական արվեստը և խորհուրդ տվել հետևել ոչ միայն նրա, այլև թատերական արվեստին նվիրված երիտասարդ ուժերի կրթությանն ու կատարողական արվեստի հղկմանը:

---

[1] *«Թումանյան. արվեստի մասին», ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 21:*

Հետաքրքիր և ուսանելի դիտարկում է կատարել Մեծ Լոռեցին թարգմանչական արվեստի մասին: «Շեքսպիր-Համլետ» հոդվածի հենց սկզբից նա նշում է. «Թարգմանությունը ապակու տակ դրած մի վարդ է, գրեթե անկարելի է, որ թարգմանիչը տա բնագրի հարազատ բույրն ու հրապույրը: Սակայն միշտ պահանջելի է, որ նա հավատարիմ մնա գործի մտքին և հասկանալի տա ընթերցողին: Այս պահանջը մեծանում է մանավանդ, երբ թարգմանվում է այնպիսի մի երկ, որի ամեն մի խոսքն ու նախադասությունը՝ չափած ու կշռած, ունեն իրանց խոր նշանակությունն ու հաստատ տեղը: Այսօրինակ գործերից է Շեքսպիրի «Համլետը»[1]:

Այս խորհուրդը նա գրել է Բաբազյանի կողմից «Համլետի» կատարած թարգմանության առիթով: Իսկ 1889թ. «Համլետը» թարգմանել ու Թիֆլիսում հրատարակել էր նաև Ս. Արծրունին: Թումանյանը գործի խոր իմացությամբ դիտարկում է այդ թարգմանությունները և խորհուրդ տալիս ոչ միայն հարազատ ու հմտորեն թարգմանել, այլև սրբագրությունը կատարել ուշադիր ու փութաջան:

Համաշխարհային գրականության լավագույն նմուշների թարգմանության հետ կապված հիմնախնդիրների քննարկմանն է նվիրված հանճարեղ գրողի «Թարգմանությունները և հրատարակությունները մեզանում» հոդվածը: Այստեղ նա կատարում է բոլոր ժամանակների համար կարևոր դիտարկում՝ նշելով. «Թարգմանություններ: Իսկ Էստեղ ինչ է պետք: Ճաշակով ընտրություն, լավ լեզու, խնամքով հրատարակություն: Էս երեք պայմանը պետք է ունենանք»: Այս խորհուրդը նա տվել է նոր վերաբացված Կովկասի Հայոց Հրատարակչական ընկերությանը:

Գրականության տեսության հիմնարար խնդիրներից մեկը գրական երկի ձևի ու բովանդակության հարցն է, որի սպառիչ ու համոզիչ պատասխանն է տրված Մեծ Լոռեցու «Ձևն ու հոգին» հոդվածում: Առաջին հերթին նա ընդգծում է ձևի և բովանդակության ներդաշնակությունը: Նա հարցին անդրադառնում է նաև Փ.Վարդազարյանին 1899թ. հղած նամակներից մեկում: «Բանաստեղծության տեսակետից,- գրում է նա,- միտքը ինչ է որ, միայն նյութ, հում նյութ, մատերիալ: Բանաստեղծ չի նա, ով որ հայտնում է, թե մարդը ոչինչ է բնության առաջ, բանաստեղծը նա է, ով որ թեկուզ դրան լսելուց հետո-այնպես ներկայացնի ու պատկերացնի այդ հարաբերությունը, որ ընթերցողն զգա ու տեսնի…

Ես այսպես եմ հասկանում բանաստեղծությունը: Ոչ միայն մտքերը-այլ նույնիսկ երգած նյութերը դեռ արգելք չեն բանաստեղծին և դարձյալ նյութ են նրա համար, միայն մի պայմանով, որ կամ մի նոր կողմից լուսավորեիր այն կամ ավելի ազդու երգեիր, ավելի վեր հանեիր, քան կար արդեն»[2]:

---

[1] *Նույն տեղում, էջ 75:*

[2] *Նույն տեղում, էջ 172-180:*

Թատրոն ասելով Հ. Թումանյանն առաջին հերթին հասկանում էր բարձրարվեստ դերասանների խումբ: Ելնելով այս ճշմարիտ պահանջից՝ նա գտնում էր, որ դրամատիկական երկին բեմում կենդանի շունչ հաղորդողը դերասաններն են: Իր 1910թ. գրած «Համլետի» չարչարանքի շաբաթը Թիֆլիսում» թատերախոսության մեջ նա խիստ քննադատության է ենթարկում Թիֆլիսի արքունական թատրոնում երկու անգամ իրար հետևից ներկայացված Շեքսպիրի «Համլետը» հայերեն՝ Ամո Խարազյանի, երկրորդը՝ ռուսերեն, Դայլսկիի ղեկավարությամբ: Երկու դեպքում էլ դերասանները չեն կարողացել մարմնավորել պիեսի կերպարներին: «Եվ էսպես,- գրում է նա,- համերաշխ էս երկու խումբը Քրիստոսի չարչարանքի նախընթաց շաբաթը շինեցին Համլետի չարչարանքի շաբաթ»[1]:

Հ. Թումանյանը մեծ թերություն է համարում այն երևույթը, երբ բեմում դերասանները խաղում են ոչ թե դրամայի ամբողջությունը, ոչ թե նրա մտքերը, այլ նրա բառերը, առանձին-առանձին բառերը:

Թատերական կյանքին վերաբերող կարևոր խնդիրներ կան շոշափված «Հայոց թատրոնի բացումը»խոսքում՝ գրված 1911թ.: Թատերաշրջանի բացումն սկսվել է Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայով: Հ. Թումանյանը նախ պահանջում է, որ թատրոնն իր թատերաշրջանն սկսի ժամանակին, առանց ուշացման, և ապա դերասանական խումբը կազմված լինի նաև հին ու փորձված դերասաններից: Անդրադառնալով խաղացանկին՝ հանճարեղ գեղագետը գտնում է, որ ամեն մի ժողովրդի թատրոն թատրոն է ամենից առաջ ազգային ինքնուրույն խաղացանկով: Դա է, որ թանկ պիտի լինի թատրոնի համար, և նրա հաջող գործերը չպետք է հնացած համարվեն ու դուրս ընկնեն, և եթե մեկը կամ մի քանիսը դուրս են ընկնում, միայն այն դեպքում, երբ այս խաղացանկը շատ է մեծ ընտրության համար:

Հ. Թումանյանը խրախուսում էր մշակութային միջոցառումների կազմակերպումը, որոնց պետք է մասնակցեն տարբեր շրջանների կոլեկտիվները: 1911թ. փետրվարի 2-ին Թիֆլիսի ժողովարանում բժիշկ Ա. Զարգարյանը կազմել էր զոկական երեկույթ, ուր ներկայացվել էր իր զոկերեն գրած «Ադաթ չի» պիեսը: Ողջունելով հայ ժողովրդի այդ ամենակուլտուրական հատվածի ելույթը՝ Թումանյանը գտնում է, որ շատ լավ կլիներ, եթե մեր գավառները իրար ետևից հանդես գային Թիֆլիսում այսպիսի երեկույթներով՝ իրենց առանձին տարազով ու բարբառով, իրենց սարք ու կարգով, վարք ու բարքով, իրենց ադաթով, լավով, վատով: «Թող գան,- նշում է նա,- իրար ետևից Արարատը, Շիրակը, Ղարաբաղը, Լոռին, Ջավախքը, Զանգեզուրը, Նուխին, Շամախին, նույնիսկ Տաճկաստանի գավառները: Եվ ի՞նչ գեղեցիկ կլինի»[2]:

---

[1] *Նույն տեղում, էջ 101:*

[2] *Նույն տեղում, էջ 110:*

Հ. Թումանյանը հենց էն գլխից ձգտել է յուրացնելու ոչ միայն ազգային մշակույթի, այլև համաշխարհային եզակի դեմքերի նվաճումները: Իր զրույցներից բացի՝ նա այդ մասին արտահայտվել է ռուսական ու եվրոպական գրական մեծերի մասին գրած իր հոդվածներում:

«Համաշխարհային գրական տոնը» իր հոդվածում Մեծ Լոռեցին նախ բերում է հետաքրքիր մի փաստ առ այն, որ 1616թ. ապրիլի 23-ին Անգլիայում վախճանվել է Շեքսպիրը, միևնույն օրը Իսպանիայում՝ Սերվանտեսը: Իհարկե, Թումանյանը տուրք չի տալիս ճակատագրի հրամայականին. նա ֆատալիստ չէր: Պարզապես այդ առիթով մեծարում է նրանց՝ այդ երկու գրական հսկաներին, որոնք համաշխարհային գրականության հորիզոնի վրա հառնել են հավերժորեն բոլոր մեծերի շարքում որպես երկու պայծառ արեգակ:

Մեծ Լոռեցին ընդգծում է նրանց մահվան 300-ամյակը, որը որպես տոն պետք է նշի աշխարհը: «Պետք է տոնեն,- գրում է նա,- և՛ պատերազմից հեռու կանգնած ժողովուրդներն իրենց խաղաղ քաղաքներում, և՛ կռվող ազգերն իրենց խրամատներում, և՛ անգլիացին, որ Շեքսպիր է ծնել, և՛գերմանացին, որ Շեքսպիր է սիրել ու որդեգրել, և՛ ռուսը, և՛ֆրանսիացին, և՛ իտալացին, և՛ ավստրոհունգարացին,- ամենքը, մինչև ուր հասնում է Շեքսպիրի աստվածային բռնակալությունը, որ մարդկային հոգին ազատագրելով ամեն տեսակ բռնակալություններից՝ միայն ստեղծագործական ոգու իշխանությանն է ենթարկվում»[1]:

Ըստ Հ. Թումանյանի՝ Շեքսպիրի ու Սերվանտեսի նման հանճարները աշխարհ են գալիս ազգերին նվիրելու այն ամենաբարձրը, ինչ որ կարող է մարդը երազել, ստեղծել այսպիսի կապեր, որոնք միշտ մնան սրբազան, ամուր ու անսասան, նույնիսկ ահավոր պատերազմների ժամանակ:

Հ. Թումանյանը ոգևորությամբ բարձրաձայնում է. «Շեքսպիր ու Սերվանտես… Համլետ ու Դոնքիշոտ… Նրանք էին, որ հունական ֆատալիզմից ու միջնադարյան միստերիայից, այլև Իսրայելի Եհովայի ահավորությունից՝ ազատագրեցին մարդկային միտքը, պալատներից ու վանքերից դուրս բերին գեղարվեստն ու գրականությունը, էս լեն ու արձակ արև-աշխարհքը և տիրողներին բերին ցիփ մերկացրին ժողովուրդների առջև ու ցույց տվին մարդը՝ մինը իր բարձր հումորով, մյուսը՝ կյանքի ամենակողմանի ու խորին ըմբռնումով ու հանճարեղ վերարտադրումով և իրական կյանքի վրա դրին համաշխարհային նոր գրականության սկիզբը»[2]:

Թումանյանը գտնում է, որ Շեքսպիրի ու Սերվանտեսի շնորհիվ նոր գրականությունը դարձավ այն թարմ, առողջ օդը, որ Վերածնության շրջանից սկսած շնչում է մարդկությունը, և միշտ նոր ուժ առնելով՝ իրար ետևից նորանոր հորիզոններ է նվաճում՝ անդադար ընդարձակելով իր կյանքի ու աշխարհայացքի սահմանները:

---

[1] *Նույն տեղում, էջ 112:*

[2] *Նույն տեղում, էջ 112-113:*

Իսկ ի՞նչ պետք է անի հայ մտավորականը: «Մենք էլ,- ընդգծում է նա,- ամբողջ քաղաքակիրթ աշխարհի հետ միասին պետք է տոնենք էս մեծ տոնը»[1]:

Եվ ոչ միայն այդ: Հ. Թումանյանը բացման ճառով հանդես եկավ Թիֆլիսի ժողովարանում կայացած երեկույթին՝ նվիրված Շեքսպիրի և Սերվանտեսի մահվան 300-ամյակին: Իր յուրաքանչյուր ելույթի կամ զեկուցման մեջ Մեծ Լոռեցին երբեք չի կրկնել իրեն: Այս անգամ ևս այդպիսին էր: Նա ամեն անգամ գտնում էր փաստեր ու թվականներ, որոնք հատկանշական էին տարբեր ժողովուրդների մշակույթը ներկայացնող մեծերի համար: Այսպես՝ սույն բացման խոսքում նա մատնանշում է այն հետաքրքիր փաստը, որը հաղորդում է, թե ինչպես 1603թ. Անգլիայում լույս է տեսել Շեքսպիրի «Համլետը», իսկ Իսպանիայում՝ Սերվանտեսի «Դոն Քիշոտը», որոնք մի դեպքում՝ խորհրդանշում են մտածող ու տառապող նոր ինտելիգենտի ողբերգությունը, մյուս դեպքում՝ համաշխարհային ազնիվ խենթի արկածների պատմությունը:

Հ. Թումանյանը բացման խոսքի վերջում գոհունակությամբ է նշում այն երևույթը, որ այդ օրերին ոչ միայն մեծարում են այդ երկու հսկաներին, այլև հպարտությամբ ընդգծում են, որ Շեքսպիրի Համլետը բեմում մարմնավորում է այնպիսի մեծանուն դերասան, որպիսին Պետրոս Ադամյանն է:

Ի դեպ, Հ. Թումանյանը տարբեր առիթներով մեծարման իր խոսքն է ասել նաև հայ անվանի դերասանների մասին: Դրա խոսուն արտահայտություններից է «Ադամյանի օրերից» հուշագրությունը:

1916թ. Մեծ Լոռեցու ուշադրության կենտրոնում են եղել Շեքսպիրին ու Սերվանտեսին նվիրված միջոցառումները: Հայտնի են նրա «Շեքսպիրի մասին», «Ողջույնի խոսք Շեքսպիրի և Սերվանտեսի 300-ամյակի հանդեսին», ինչպես նաև «Հայ գրողների կովկասյան ընկերության հեռագիրը Շեքսպիրի մահվան 300-ամյակի առթիվ» գործերը:

Ավելորդ չենք համարում բերել ժողովրդական մեծ գրողի ձեռքով գրված այդ հեռագիրը. «Հայ գրողների ընկերության Վարչությունը և խուռն բազմությունը Շեքսպիրի մահվան 300-ամյակի հանդեսին հավաքված՝ իրենց հիացմունքն ու հարգանքն են ուղարկում, տեր նախագահ, ձեր միջոցով անգլիական մեծ ազգին, նրա հոյակապ գրականությանը և խորին երախտագիտության զգացմունքներով խոնարհվում են նրա հանճարեղ զավակի անմահ հիշատակի առջև»[2]:

Հ. Թումանյանին մշտապես հուզել են կերպարվեստի հարցերը: Այստեղ կցանկանայինք հոլովել Խ. Աբովյանի հիշատակը հավերժացնող այն միջոցառումները, որոնց ակտիվորեն մասնակցել ու խրախուսել է հանճարեղ գրողը: 1910թ. նա հանդես է գալիս «Ամենքը միասին» կոչով՝ Խ.

[1] *Նույն տեղում, էջ 113:*
[2] *Նույն տեղում, էջ 138:*

Աբովյանի արձանի հավերժացման կապակցությամբ: 18000 ռուբլի էր պետք արձանի համար, սակայն հազիվ հավաքվել էր 200 ռուբլի Դիմելով Կուլտուրական միության նախագահին՝ նա գալիս է այն եզրակացության, որ չի կարելի դիմել երեկույթներ կազմակերպելուն, հարուստներին խնդրելուն, այլ պետք է դիմել ժողովրդին, քանզի ինչքան էլ հոգնած ու աղքատ լինի նա, ակտիվորեն կարող է մասնակցել մեծ Լուսավորչի արձանի ստեղծմանը, որովհետև, ինչպես ընդգծում է Մեծ Լոռեցին, «Դա մի տաղանդավոր գրողի արձան չի, դա մի անհատի արձան չի, դա հայ ժողովրդի վերքոտ սրտի արձանն է, որ կանգնելու է այնտեղ, Արարատի սրբազան դաշտում՝ սերունդներին ու դարերին ի տես, որ տեսնեն, թե քանի սուր կա ցցված նրա մեջ, քանի դարդ ու ցավ»[1]:

Տվյալ հարցին մեծ գրողն անդրադառնում է նաև 1911թ.՝ հանդես գալով «Արձան Խաչատուր Աբովյանին» կրակոտ խոսքով: Խրախուսելով Բաքվի Հայոց կուլտուրական միության ձեռնարկումը՝ Խաչատուր Աբովյանի արձանը իր հայրենիքում կառուցելու համար Ամենայն հայոց բանաստեղծը գրում է. «Աշխարհի ամեն կողմից հայ մարդիկ ուղարկում են իրենց նվերները, ամենքն էլ ուզում են մասն ունենան Խաչ. Աբովյանի արձանի մեջ: Շատն ու քիչը այստեղ նշանակություն չունի, բանը սիրտը, սերը, զգացմունքն է: Թող հինգ կոպեկ լինի տվածը: Միայն թե ամենքն էլ լինեն»[2]:

Թիֆլիսում «Ձեռնարվեստի դպրոց» է գործում. Հ. Թումանյանն ասում է իր խրախուսանքի խոսքը («Պետք է խրախուսել»): Առանձին մտավորականներ ճիշտ չեն գնահատում գրական երևույթները, Թումանյանը հնչեցնում է իր իմաստուն խորհուրդը («Արևելքից Արևմուտք»), հարևան ժողովուրդների մտավորականների հետ շփվելու հարցն է բարձրացվում, Թումանյանը ոչ միայն խրախուսում է, այլև ցույց է տալիս շփման արդյունավետ ուղիները («Պետք է լսել») և այլն, և այլն:

Հ. Թումանյանն ուշի ուշով հետևել է նաև հայ երաժշտության զարգացման ընթացքին և արտահայտել իր վերաբերմունքը: Մերօրյա երաժշտագետների համար չափազանց ուսանելի կարելի է համարել 1912թ. դեկտեմբերի 30-ին Թիֆլիսի Հայոց երաժշտական ընկերությանն ուղղած նամակը:

Բարձր գնահատելով երաժշտության դերը մարդկային հասարակության կյանքում՝ մեծ գրողը Երաժշտական ընկերությունը համարում է գրական ընկերության հրաշալի քույրը, որը մեծ առաքելություն ունի: Նա պետք է Արևմուտքի մշակված երգն ու երաժշտությունը հայ իրականության մեջ տարածելով հանդերձ հատուկ կոչում ունենա՝ հավաքելու, ներդաշնակություն բերելու և զարգացնելու Արևելքի ու մեր ժողովրդի երգն ու երաժշտությունը՝ հարազատ ձայների կախարդական աշխարհը:

---

[1] *Նույն տեղում, էջ 139:*

[2] *Նույն տեղում, էջ 142:*

Հ. Թումանյանը մեր ժողովրդի ճանապարհին ստեղծված ամենածանր պահերին անգամ եղել է լավատես՝ հավատալով նրա կենսունակությանը: 1916թ. գրած «Ողջունում ենք» խոսքի մեջ նա ընդգծել է. «Զարմանալի է մեր ազգի կենսունակությունը, ես լիքն եմ էդ մեծ կենսունակության անսասան հավատով: Կենսունակություն էլ որ ասում եմ՝ ասում եմ խոսքի բարձր ու ազնիվ իմաստով: Եվ ոչ մի բռնակալ, և ոչ մի բարբարոս երբեք չի կարողացել նվաճել ու ընկճել հայկական ցեղի էդ հզոր հատկությունը: Ամեն անգամ ամեն մի բռնակալի հայ ժողովուրդը կարող էր կրկնել Վարդանանց խոսքը, թե՝ դու կարող ես հայի մարմինը տանջել, բայց նրա ոգու հետ ինչ ես անելու»[1]:

Հ. Թումանյանը ազգային հպարտության ամենազգայուն ծփանքով 1916թ. նշում է, թե ինչպես այդ ծանր օրերին էլ շարժվում է հայ ազգի հզոր ու աննկուն ոգին, թե ինչպես մեծ աղետի օրերում էլ նա, վերածնունդ նախատեսելով, շարժվում է լայնածավալ ու բազմակողմանի: Գրողը մատնանշում է այն երևույթը, որ այդ օրերին ընկերություններ են հիմնվում իրար ետևից, գործեր են ծրագրվում և ձեռնարկվում ամեն ասպարեզում:

Թումանյանը հենց այստեղ առանձին ուշադրությամբ գնահատում է երաժշտությունն ու նրա դերը հասարակական գիտակցության բոլոր ձևերի մեջ:

«Երաժշտությունը,- գրում է նա,- արվեստների մեջ էն կախարդ ուժն է, որ անմարմին արտահայտություններով կարողանում է անմիջականորեն ու միանգամայն տիրել մարդու բովանդակ գոյությանը, նրա մարմնին ու հոգուն և տիրաբար տանել, ուր որ կամենա: Էսպեսով էլ նա արվեստների մեջ ամենազգայականն ու ամենավերացականը միաժամանակ հանդիսանում է ամենաուժեղ արտահայտությունը ժողովուրդների հոգեկան կյանքի և բարձրագույն հաճույքներ տալով հանդերձ՝ դառնում է բարձրագույն կրթության միջոց»[2]:

Արտահայտելով այս թևավոր կարծիքը երաժշտության մասին՝ Ամենայն հայոց բանաստեղծը ուրախությամբ մատնանշում է, որ հայ իրականության մեջ Գևորգ կաթողիկոսի ու Չուխաճյանի ջանքերից հետո հանդես եկավ Կարա Մուրզան, ապա Եկմալյանը հայտնվեց: Եկմալյանից հետո նոր երաժիշտները եկան խմբովին՝ իրենց հետ բերելով երաժշտական ընկերությունը: Ապա հանդես է գալիս եվրոպական երաժշտական աշխարհում անուն հանած նշանավոր երաժշտագետ Ալ.Սպենդիարյանը:

Հ. Թումանյանի ընկալմամբ արվեստի տեսակները բոլոր պահերին ազգային դիմագիծը պահպանելու հզոր գործոններ են եղել ու պիտի լինեն: Իր «Խոսք հայ երաժշտության մասին» հոդվածում կոնկրետ ընդգծում է այդ կարծիքը: Անդրադառնալով մեր ժողովրդի ծանր ճակատագրին՝

[1] *Նույն տեղում, էջ 161:*
[2] *Նույն տեղում, էջ 162:*

միաժամանակ գոհունակությամբ ընդգծում է, որ 1916թ. հայոց կյանքում առանձին թափով ուժ է առել վերստին ամբողջանալու, առողջանալու, ինքնուրույն կուլտուրայով մի ամբողջական ազգ դառնալու ձգտումը և առաջ է բերել մի համատարած հոսանք կյանքի ամեն կողմերում և ամեն ասպարեզում: Այդ ուղղությամբ կարևորվում է նաև երաժշտությունը: Մեծ գրողը գոհունակությամբ է մատնանշում, որ վերջին տասնամյակների ընթացքում մեր երաժիշտները վերադառնում են դեպի հարազատ ժողովրդի երգն ու եղանակը և դեպի հայ բանաստեղծի երկերն ու երգերը:

Ինչպես բոլոր դեպքերում, այստեղ ևս հանճարեղ բանաստեղծը փայլում է իր իմաստասիրական խոհերով ու մտորումներով. «Բանաստեղծը,- գրում է նա,- միայն մարմին է տալիս իր մտքերին ու զգացմունքներին և իր ոգևորությունով կենդանության շունչ է շնչում նրան, որ նա ապրի մշտապես, բայց որ նա թռչի, դրա համար նրան թևեր են հարկավոր, իսկ թևեր առնել նա կարող է միմիայն էն կախարդական աշխարհում, որ կոչվում է երաժշտություն»[1]:

Արվեստի տեսակներից ճարտարապետությունը ևս հուզել է մեծ գրողին. «Թ.Թորամանյանի դասախոսության առթիվ» իր խոսքում խորհուրդ է տալիս թափանցել մեր անցյալը, ուսումնասիրել մեր հին կյանքն ու պատմությունը՝ անցյալի պատմությունը գնահատելով որպես լուսատու լապտեր, որ ժողովուրդը ձեռքին պետք է ունենա իր ճամփին անմոլոր գնալու համար: «Մենք,- նշում է նա,- որ մեծ անցյալի ու մեծ ավերակների վրա ապրող մի ժողովուրդ ենք, և ինքներս արդեն ըստ ամենայնի ավերակ ժողովուրդ, նոր ենք ջանքեր անում մեր խորտակված կյանքը վերականգնելու, վերանորոգելու և վերակազմելու, անցյալի ուսումնասիրությունը մեզ համար ունի առանձին կարևորություն, և մեր մեծ արժեքներն ու պարծանքներն էլ անցյալի մեջ են: Անցյալի մեջ են և մեր արվեստները: Գեղեցիկ արվեստները ֆիզիկական ու բարոյական առանձնահատուկ պայմանների մեջ ծնվելով ու զարգանալով՝ հատկանշում են ամեն մի ժողովրդի ինքնուրույն ազգային ոգին»[2]:

Հ. Թումանյանը գեղեցիկ արվեստների շարքն է դասում ճարտարապետությունը, որ կոչվում է «Քարացած երաժշտություն» ու երբեք չի աղավաղվում ժամանակի հետ:

Մեծ գրողը, հավատարիմ իր ազնվագույն ու ժողովրդանվեր բնավորությանը, արվեստագետ ընկերոջ ներքին հպարտությամբ է խոսում Թորամանյանի մասին, որ վկայված էր Պետերբուրգի կայսերական գիտությունների ակադեմիայից և Վիեննայի համալսարանից ու արժանացել է 1914թ. մրցանակին: Եվ ուրախալին այն է, որ նա տասնմեկ տարի է, ինչ անդադրում ուսումնասիրում է հայոց ճարտարապետությունը՝ ավերակից ավերակ անցնելով:

---

[1] *Նույն տեղում, էջ 165:*

[2] *Նույն տեղում, էջ 167-168:*

Սակայն ջերմ խոսքով չբավարարվեց մեծանուն գրողը, նա Հայոց գրողների ընկերության կողմից կազմակերպեց երեկույթ, ուր ցուցադրվեցին հայ ճարտարապետական նմուշներ մոգական լապտերով ու նկարներով, որտեղ Թորամանյանը խոսք ասաց հանգամանորեն:

Հ. Թումանյանը իր ելույթն ավարտեց հպարտության ու երախտագիտության ջերմացնող զգացումով. «Փառք ու պարծանք մեր նախնիքներին, որ աշխարհավեր հեղեղների դիմագրավելով հանդերձ, մեզ համար էսքան շքեղ ժառանգություն են թողել, և փառք ու պարծանք գիտության մարդկանց ու հատկապես պարոն Թորամանյանին, որ մեր ազգի մեծությունը ավերակների միջից հանելով ոչ միայն տարիների առջև, այլև մեր աչքում դարձնում են մեզ մեծ ու հարգելի»[1]:

Արվեստի տարբեր տեսակների մասին արտահայտած մշտահոլով մտքերն ու գնահատականները չեն սահմանափակվում միայն նրա հոդվածներով, զեկուցումներով, ելույթներով: Նրա հավերժաթև գնահատականների ծփանքն ենք տեսնում նաև ընկերներին հղած նամակներում և ընկերների պատասխաններում ու հուշերում:

Ուսումնասիրելով Մեծ Լոռեցու ելույթները, զեկուցումներն ու հոդվածները արվեստի տարբեր տեսակների մասին՝ ազգային ամենաջերմ ու սրբազան զգացումով կարող ենք ասել. «Փա՛ռք հայ ժողովրդին, որ իրեն ու աշխարհին Հովհաննես Թումանյան է նվիրել ու փա՛ռք Հովհաննես Թումանյանին, որ իրենով աշխարհին ճանաչել տվեց իրեն ծնող ժողովրդին ու նրա ստեղծած անմահ արվեստը»:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ,բ.գ.թ. դոցենտ Հ.Ս. Ղազարյանը:

[1] *Նույն տեղում, էջ 170:*

ՀՏԴ 81՝28
Լեզվաբանություն

Մամիկոն ՅԱՎՐՈՒՄՅԱՆ
Ուսում հանրակրթական դպրոցում հայոց լեզվի և գրականության ուսուցիչ
e-mail: mamikon.yavrumyan@gmail.com

ԺՈՂՈՎՐԴԱԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ԴԵՐԸ ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

Սոկրատ Խանյանը ժամանակակից այն բանաստեղծներից է, ում գեղարվեստական լեզուն ճոխ է ու գունեղ: Ժողովրդի ծոցից ելած բանաստեղծն իր խոսքը համեմում է բարբառային և ժողովրդախոսակցական բառերով ու արտահայտություններով՝ վարպետորեն դրանք զուգադրելով գրական բառապաշարի հետ: Վարպետ գրողի գրչի տակ նման բառերը ստանում են նոր հմայք և իրենց կենդանի արտահայտչականությամբ ստեղծում համապատասխան յուրօրինակ կոլորիտ:

Բանալի բառեր՝ *ժողովրդախոսակցական բառեր, բարբառային բառեր, բառապաշար, լեզվի ոճեր, բարբառային երանգներ:*

М. Яврумян

РОЛЬ ДИАЛЕКТНЫХ СЛОВ И СЛОВ ОБЩЕНАРОДНОГО РАЗГОВОРНОГО ЯЗЫКА В ПОЭЗИИ СОКРАТА ХАНЯНА

Сократ Ханян – один из тех современных поэтов, чей художественный язык отличается богатством и красочностью. Поэт из народа обогащает свою речь словами и фразами диалектного и общенародного разговорного языка, мастерски сопоставляя их с литературным. Под пером талантливого писателя такие слова приобретают новое очарование и создают соответствующий самобытный колорит своей живой экспрессивностью.

Ключевые слова: *Народно-разговорные слова, диалектные слова, лексика, стили языка, диалектные оттенки.*

M. Yavroumyan

THE ROLE OF COLLOQUIAL AND DIALECTIC WORDS IN SOKRAT KHANYAN'S POEMS

Sokrat Khanyan is one of modern poets whom artistic speech is picturesque and splendid. The poet, that has arised from the nation, embelishes his speech with dialectic and conversational words and expressions comparing them professionally with literary language.
Such words get a new charm under the master poet's pen and create an appropriate original colouring with their living expressiveness.

Keywords. *conversative words, dialectic words, vocabulary, styles of language, dialectic nuances.*

Սոկրատ Խանյանի բառապաշարի ընդհանուր շղթայի մեջ որոշակի տեղ են գրավում նաև ժողովրդախոսակցական բառերը:

«…Սակայն արվեստի ամեն մի իսկական գործի մեջ իշխում է ժողովրդական լեզվամտածողությունը, ասել է թե՝ լեզվի ժողովրդայնությունը»[1] ,- իրավացիորեն նկատում է Արտաշես Պապոյանը:

Խոսելով ժողովրդախոսակցական բառերի մասին՝ նա գրում է. «Կան բառեր ու բառաձևեր, որոնք դարեր ու դարեր գործածվելով ժողովրդի հայտնի ու անհայտ բանաստեղծների, երգիչների ու տաղերգուների անգիր ստեղծագործության մեջ՝ լիցքավորվել են ազգային շնչով ու ոգով, հղկվել ու սրվել, իմաստավորվել կենսափիլիսոփայությամբ և հագեցել սուրբ ու նվիրական զգացումներով» [2]:

Լեզվի ժողովրդայնությունը, անշուշտ, զգալիորեն պայմանավորված է ժողովրդախոսակցական, բարբառային բառերի հմուտ օգտագործմամբ, սակայն ինչպես իր միտքն է շարունակում Արտ. Պապոյանը, «…դրանից չի կարելի բխեցնել, թե ժողովրդական չի կարող լինել այն գրողների լեզուն, ովքեր խուսափում են բարբառներից ու ժողովրդական ձևերից և նախապատվություն են տալիս «մաքուր» գրական արտահայտություններին…: Իսկական գրողը, եթե նա իրոք մեծ արվեստագետ է, այս դեպքում էլ կգտնի այլոց համար անսպասելի ու անմեկնելի, միայն իրեն հայտնի լեզվական միջոցների ու գույների այն գաղտնի խաղը, որը խոսքին կհաղորդի կենդանություն ու հյութեղություն, ինչն անհրաժեշտ է լեզվի ժողովրդայնացման համար»[3]:

Իրավամբ, ոճական յուրահատուկ երանգ ունեն նաև ժողովրդական-խոսակցական և բարբառային բառերը: Դրանք իրենց կատարած դերով ու ոճական արժեքով ունեն շատ ընդհանրություններ բարբառային բառերի հետ, և հաճախ դժվար է դրանց մեջ որոշակի սահմաններ դնելը: Պապոյանի պատկերավոր նկարագրությունից տեսնում ենք, որ բազմաթիվ բարբառային բառեր, համընդհանուր գործածություն ստանալով, դադարում են նեղ բարբառային լինելուց, մտնում են ժողովրդական-խոսակցական բառերի մեջ և ապա բարձրանում են գրական լեզվի աստիճանի: Եթե անգամ այդ բառերը չեն գրականացվել, ապա դա չի նշանակում, թե դրանք բարբառային են: Օրինակ՝ գարունք, թուշ, իրիկուն, հանաք, յար և նմանատիպ այլ բառեր այսօր այլևս բարբառային չեն, քանի որ հասկանալի են բոլորին:

Բարբառային և ժողովրդական-խոսակցական բառերի միջև եղած ընդհանուրն այն է, որ երկուսն էլ իրենց ոճաարտահայտչական ֆունկցիաներով և հնչյունական-բառական ձևերով հանդիպագրվում են

---

[1] ***Պապոյան Ա.,*** *Պ. Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Եր., 1970, էջ 21:*

[2] *Նույն տեղում, էջ 34:*

[3] *Նույն տեղում, էջ 26:*

բարձր գրական բառերին, քանի որ դրանք դեռ չեն բարձրացել գրական լեզվի աստիճանի: Բայց այդուհանդերձ, բարբառային բառերի և ժողովրդական–խոսակցական բառերի միջև կան որոշակի տարբերություններ, և դրանք չի կարելի նույնացնել:

Բառապաշարի այս երկու շերտերն իրար մոտենում են այնքանով, որ երկուսն էլ ընդունված գրական ձևեր չեն համարվում: Բայց կարևոր է այս երկու խմբերի տարբերությունները նշել: Խոսակցական լեզվին բնորոշ բառերը գործում են մեր լեզվի տարբեր բարբառներում և ոլորտներում, դրանով իսկ հակադրվում արդեն ընդհանուր ճանաչում գտած գրական լեզվի համակարգի մեջ մտած ձևերին: Ժողովրդական-խոսակցական բառաշերտի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանք գրական լեզվի զարգացման ընթացքում աստիճանաբար ընդհանուր ճանաչում են գտնում, անցնում գրական լեզվի բառապաշարին:

Ժողովրդական-խոսակցական բառերը գործածության ավելի լայն շրջանակներ ունեն, որովհետև դրանք օգտագործվում են ոչ թե այս կամ այն խոսվածքում, այլ գրական լեզվի տարբեր ոճերում, որի շնորհիվ և նրանց իմաստային առումների մեջ խաչաձևվում են գրական և բարբառային երանգները: Ժողովրդական-խոսակցական բառերի մեջ եղած լրացուցիչ երանգներն այդ բառերը դարձնում են ավելի արտահայտիչ, հուզական և կենդանի, այդ պատճառով էլ դրանք հաճախ գեղարվեստական խոսքում գործածվում են որպես գրական բառերին զուգահեռ հոմանիշներ: Օրինակ՝ երիտասարդ-ջահել, ընտրել-ջոկել, եղբայր-ախպեր, գեղեցիկ-սիրուն և այլն:

Ինչպես բարբառային, այնպես էլ ժողովրդախոսակցական բառերի գործածությունը պայմանավորված է համապատասխան թեմայի ընտրությամբ և կատարված է որոշակի նպատակադրումով: Օգտվելով այդ բառերի հուզաարտահայտչական երանգներից և իմաստային նրբություններից՝ Խանյանն աշխատում է այդպիսի բառերի օգտագործումով ժողովրդական հարազատ շունչ տալ ստեղծագործությանը: Այդ կարգի բառերի գործածությունը ոճավորման նպատակ ունի:

Առանց լեզվին աղ ու համ տվող լեզվական այդ միջոցների՝ անչափ աղքատ ու անարյուն կլիներ ցանկացած գրողի լեզուն: Ժողովրդական խոսքի սեղմությունն ու դիպուկությունն իրենց մեջ պարունակող հարադրությունները գեղարվեստական խոսքը դարձնում են պատկերավոր ու արտահայտիչ, տալիս նրան ժողովրդական ոճի հարազատ երանգավորում:

Բարբառային բառերը չեն մտնում գրական լեզվի բառապաշարի մեջ և իրենց հնչյունական-ձևաբանական առանձնահատկություններով ու գործածության սահմանափակությամբ տարբերվում են ընդհանուր գործածություն ունեցող գրական բառերից:

Գրողի բառապաշարում եղած բարբառային բառերի մասին խոսելով՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանց օգտագործումը սովորաբար պայմանավորված է լինում գեղարվեստական արտահայտչական զանազան նկատառումներով: Բնականաբար, բանաստեղծը չի կարող բնական և համոզիչ ներկայացնել ժողովրդական տեսարաններ, ստեղծել տվյալ տարածաշրջանին և ժամանակաշրջանին հատուկ կոլորիտ՝ առանց բարբառային բառերով իր խոսքը համեմելու: Բարբառային բառերն ու արտահայտությունները հանդես են գալիս հիմնականում ոչ թե հեղինակային խոսքում, այլ հերոսների զրույցներում և երկխոսություն-ներում: Բարբառային բառերը բանաստեղծի խոսքը դարձնում են ավելի տպավորիչ, բնական և անմիջական:

Բարբառները եղել և մնում են մեր լեզուն սնող հիմնական աղբյուրներից մեկը: Հայերենի բազմաթիվ բարբառներ դեռևս պարունակում են գրական լեզվի կողմից չյուրացված հարուստ բառապաշար, որի՝ գրական լեզու մուտք գործելու ուղին, բնականաբար, մնում է գեղարվեստական գրականությունը: Բանաստեղծը բարբառներից՝ հիմնականում Ղարաբաղի բարբառից, վերցրել է այն, ինչը նպաստում է խոսքի հուզականությանն ու արտահայտչականությանը: Սա գեղարվեստական խոսքին ներկայացվող էական պահանջներից մեկն է:

Դիտարկենք Ս. Խանյանի «Արցախի արծիվը» պոեմը, որը հագեցած է բարբառային բառերով և արտահայտություններով:

Ինչպես վերը նշեցինք, բարբառային բառերը հանդես են գալիս հիմնականում հերոսների խոսքում, սակայն Խանյանը պոեմի նախերգում նույնպես օգտագործում է բարբառային և ժողովրդախոսակցական բառեր, և սա պատահական չէ: Չափազանց արհեստական և անհամոզիչ կստացվեր, եթե զուտ գրական բառերով շարադրված նախերգից հետո բանաստեղծն անցում կատարեր ժողովրդախոսակցական ու բարբառային բառերով հագեցած պոեմի գլուխներին: Դրանով հեղինակը օրգանական կապ է ստեղծում պոեմի բոլոր մասերի միջև: Այսպես՝ նախերգում հեղինակային խոսքում, կարդում ենք.

Սիրտս մեկեն առավ թևեր,
Եվ աստղացավ իմ հոգին: (ԸԵ, հ. 3, էջ 136)

Մեկ այլ հատվածում անգամ համեմատության մեջ կարելի է նկատել ժողովրդախոսակցկան տարր. ինչպես-ն ավելի գրական հնչողություն ունի, քան ոնց-ը.

…Այդ աշխարհն էլ ինչպես եղեմ
Ձգվել էր ոնց լեռնապար: (ԸԵ, հ. 3, էջ 137)

Ինչպես տեսնում ենք, բերված հատվածում բանաստեղծը միաժամանակ օգտագործել է և՛ինչպես-ը, և՛ ոնց-ը. բնականաբար սա հետապնդում է նաև այլ նպատակ, այն է՝ խուսափել կրկնությունից, ինչպես նաև հաշվառել տաղաչափական սկզբունքները՝ վանկերի քանակը:

Նույն նախերգում հանդիպում ենք.

… Իր հավատին հավատարիմ՝
Ճամփա չտա խուժանին: (ԸԵ, հ. 3, էջ 138)

Այստեղ հանդիպում ենք նաև սեռական հոլովի բարբառային կամ խոսակցական կազմության.

… Ուր չոքել էր վիշապն ինչպես
Հագարացոց (հագարացիների¤ զորքը խիտ: (ԸԵ, հ. 3, էջ 138)

Մեկ այլ տեղ՝

Գիտեմ, որ ինձ ես հիշում ու լալիս,
Ինձ ես որոնում տղերանց շարքում: (ԸԵ, հ. 3, էջ 258)

Վարպետ գրողն օգտվում է ոչ միայն ժամանակակից հայերենի բառական հարստությունից, այլև գրաբարի, ժողովրդական կենդանի խոսքի ու բարբառների կենսունակ տարրերից: Երբ ասում ենք, թե գրողի լեզուն պետք է զերծ լինի բարբառայնությունից, արխաիկ բառերից, դա ամենևին էլ չի նշանակում, թե դրանք առհասարակ անընդունելի են գեղարվեստական խոսքի համար: Դիտարկենք հետևյալ օրինակները.

Մետաքսի գործվածք, աղած համով ձուկ,
Հավերի տակից նոր վերցրած տաք ձու,
Չորթան, պզկաթան, շլորի լավաշ,
Այն ամենն, ինչից կստացվի լավ ճաշ… (ԸԵ, հ. 3, էջ 145)

***

Շուշանիկը իր հոր կանչից
Զգաստացավ ու խո¯ր շնչեց.
-Այստե¯ղ եմ, հայր, աղբրին մոտիկ: (ԸԵ, հ. 3, էջ 158)

***

-Գնա¯նք,- ասաց,- քեռի՛ Ադամ,
Մենք էլ ունենք մի չաղ կխտար… (ԸԵ, հ. 3, էջ 159)

Հաճախ ոչ միայն դժվար, այլև անհնարին է լինում այդ կարգի բառերի փոխարինումը գրական համապատասխան հոմանիշներով: Այս կարգի բառերից ոչ մի գրող չպետք է խուսափի, որոնք բանաստեղծի խոսքի մեջ բերում են իրենց յուրահատուկ համն ու հոտը, յուրօրինակ կոլորիտը: Օր.՝

…Այան փարվել էր նորընծա հարսին,
Մայրը նայում էր նրա թուխ վարսին… (ԸԵ, հ. 3, էջ 169)

***

Բայց թշնամին առել ճամփի թեք կռնակը
Ու չէր թողնում, որ մարդ անցնի անգամ ոտով: (ԸԵ, հ. 3, էջ 188)

Հարկ չկա թերևս մեջ բերելու բոլոր բարբառային և խոսակցական բառերը, սակայն ևս մեկ անգամ նշենք, որ նպատակային կերպով բանաստեղծը պոեմը հագեցրել է նման բառերով՝ փորձելով ստեղծել տեղի և պատմական ժամանակահատվածի կոլորիտ, ինչը նրան հաջողվել է:

Խանյանը հաճախ է գործածում *ջան* բառը, որը չի կարող փոխարինվել գրական ոչ մի բառով: Գեղարվեստական գրականության մեջ նմանօրինակ բառերի դերը կարևորելով՝ Հովհաննես Թումանյանը դիպուկ պատասխան

է տալիս այն քննադատներին, ովքեր պահանջում էին նման բառերից մաքրել գրական լեզուն: «…Առաջարկում եք «ջան»-ի տեղ գործածել «հոգյակ»…, այսուհետև փոխանակ ախպեր ջան կամ Գրիգոր ջան ասելու, մաքուր հայերենով կասենք հոգյակ եղբայր կամ հոգյակ Գրիգոր…: Մի՞թե չեք տեսնում, որ հոնքը շինելու տեղ, աչքն էլ հանում եք»,- գրում է բանաստեղծը [1]:

Բազմավանկ բառերում ա ձայնավորի սղումը, ինչպես հայտնի է, միջինհայերենյան շրջանի հնչյունափոխական երևույթ է, որը պահպանվել է նաև արևմտահայերենում և Կարնո բարբառի խոսվածքներում[2] : Բերենք մի քանի օրինակ՝ շաբթով (ԸԵ, հ. 1, էջ 359), քեզնից (ԸԵ, հ. 1, էջ 418), մեզնից (ԸԵ, հ. 1, էջ 437), ինձնից (ԸԵ, հ. 4, էջ 165), փեսին (ԸԵ, հ. 3, էջ 173), քարվան (ԸԵ, հ. 3, էջ 168) և այլն: Երբեմն նկատելի է նաև այլ ձայնավորի սղում(տվյալ դեպքում ի ձայնավորի), ինչը նույնպես բառին հաղորդում է բարբառային երանգ, ինչպես օրինակ՝ հարսանքում (ԸԵ, հ. 3, էջ 167):

Ժողովրդախոսակցական բառաշերտի մասն են կազմում նաև նվազական, փոքրացուցիչ ածանցներով կազմված բառերը, որոնք ոչ միայն արտահայտչականություն են տալիս բանաստեղծական խոսքին, այլև ընդգծում են բանաստեղծի գորովագութ վերաբերմունքը համապատասխան առարկայի կամ անձի նկատմամբ: Խանյանի խոսքարվեստում ոճական նման գործառույթով են օժտված փոքրիկ (ԸԵ, հ. 2, էջ 291), շնիկ (ԸԵ, հ. 2, էջ 293), քույրիկ (ԸԵ, հ. 2, էջ 300), արջուկ (ԸԵ, հ. 2, էջ 300), Սուսիկ (ԸԵ, հ. 2, էջ 303), բալիկ (ԸԵ, հ. 2, էջ 306), գառնուկ (ԸԵ, հ. 2, էջ 307), կարմրաթշիկ (ԸԵ, հ. 2, էջ 318), աչիկներ (ԸԵ, հ. 2, էջ 322), որբուկ (ԸԵ, հ. 2, էջ 325), ուլիկ (ԸԵ, հ. 2, էջ 327), թոռնիկ (ԸԵ, հ. 2, էջ 330), հորթուկ (ԸԵ, հ. 1, էջ 360), թխլիկ (ԸԵ, հ. 1, էջ 360), տաղիկ (ԸԵ, հ. 1, էջ 352) և այլ բառեր: Հայտնի է, որ նվազափաղաքշական ածանցներով կազմված բառերը ժողովրդական ոճավորման երանգ են կրում: Խոսքային համապատասխան միջավայրով են պայմանավորված նվազափաղաքշական ածանցներով կազմված բառերի գործածությունները, որոնց ստեղծած արտահայտչականությունը բանաստեղծական խոսքը դարձնում է ազդեցիկ ու հուզական:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

---

[1] ***Թումանյան Հ.,*** *Երկերի ժող. 6 հատորով, հ. 4, Քննադատություն և հրապարակախոսություն (1892-1921), Եր., 1951, էջ 142:*

[2] ***Ղազարյան Ս.,*** *Միջին հայերեն, գ. 1, Եր., 1960, էջ 191-192, Սաքապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006, էջ 30, Մկրտչյան Հ., Կարնո բարբառը, Եր., 1952, էջ 13:*

ՀՏԴ 82.09
Գրականագիտություն

Վալյա ԱՌԱՔԵԼՅԱՆ
բ.գ.թ. ավագ դասախոս, ԱրՊՀ

ՓԻՐՈՒՄՅԱՆՆԵՐԻ ՓԱՌԱՊԱՆԾ ՏՈՀՄԸ ԵՎ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Մեծ գեղագետ և պատմաբան Բ. Ուլուբաբյանի գրիչը անդադրում ծառայել է իր ժողովրդին:
Հիմք ընդունելով հարուստ սկզբնաղբյուրները՝ պատմական գիտական հետազոտություններն ու գիտական աշխատույթունները իրենց ծանրակշիռ ներդրումն ունեցան դարավոր ազատագրական տարեգրության մեջ:
Բ. Ուլուբաբյանի գրական վաստակի մի զգալի մաս են կազմում նրա հրապարակախոսական կրքոտ հոդվածներն ու ակնարկները, գրականագիտականներն ու թարգմանությունները:
Մենք համոզված ենք, որ նրա գրական-գեղարվեստական ու պատմական գիտական ժառանգությունը դեռևս կգտնի իր նոր հետազոտողներին:

Բանալի բառեր`*Արցախյան պատերազմ, մարտ, Արցախյան ֆենոմեն, տարեգրություն, գաղափարախոս, տարեգիր, հիմն, պատմաբան:*

В.Аракелян

САРДАРАПАТСКОЕ СРАЖЕНИЕ И СЛАВНЫЙ РОД ПИРУМЯНОВ

Перо Б.Улубабяна- великого эстета и историка беспрестанно послужила своему народу.
Изданные на основе богатых первоисточников научно-исторические исследования и труды внесли весомый вклад в летописи вековой освободительной борбы.
Значительную часть литературной заслуги Б.Улубабяна составляют страстные бублицистические статьи и очерки, переводы и отклики.
Мы убеждены, что художественно-литературные и научно-исторические насле дия еще найдут новых исследователей.

Ключевые слова: *Арцахская война, бой, арцахский феномен, летопись, идеолог, летописец, гимн, историк.*

V. Araqelyan

THE SARDARAPAD BATTLE AND THE PIRUMANYAN`S GLORIOUS FAMILY

The contribution of B.Ulubabyan, the historian and art historian had served to his people impartaly. Each of the great historical works and researches of the historian is the steady contribution to the chronicals of the Armenian strugle of freedom.
The great part of B.Ulubabyan's literature services made up his urgent articles and reviews, the works of literary criticism translations from grabar (old Armenian language) and from Russian.

Keywords. *Artsakh war, heroic battle, Artsakhfenomen, annals, ideologist, chronicler, hymn, historian.*

Հայ ժողովրդի հազարամյա պատմության աստղային ժամը Սարդարապատի ճակատամարտն էր ՝ 1918 թ. մայիսյան այն օրհասական շաբաթը, որը կործանման եզրին հասած ազգի համար դարձավ գոյատևումի ու ազգապահպանության խարիսխ:

1918 թվականի մայիսին հայկական զորքի ձեռք բերած հաղթական իրադարձությունների վերապրումը ազգային գոյության ու ինքնաճանաչման կարևորագույն նախապայման է, բարոյական ու փիլիսոփայական հանգրվան ապագա սերունդների համար :

Սարդարապատի ճակատամարտով մարդկային և տարածքային մեծագույն կորուստներ կրած հայն ապրելու իրավունք ձեռք բերեց: Եվ այսօր մեզանից յուրաքանչյուրը, որ ապրում է Հայաստանում, Արցախում, թե օտար երկրում, հազարամյակների խորքից եկող ազգային ինքնագիտակցությունն ու գոյատևելու պատվախնդրությունը հանգուցալուծում է Սարդարապատով:

Բ.Ուլուբաբյանը «Սարդարապատ» վեպն էապես, պատմականորեն փաստարկված վավերագրական երկ է: Տաղանդավոր պատմաբանը և գրողն ստեղծել է ժողովրդական մեծ պայքարն արտացոլող մի վեպ, որն ունի անխարդախ ոգի, գրված է ներշնչանքով ու երևույթները գնահատող խորաթափանց մտքով: Վեպն ազնիվ մի պատում է հայ ժողովրդի պայքարի ու հպարտության մասին: Բ.Ուլուբաբյանի միտումը «պատմության հոգեբանական ճշմարտության» հայտնաբերումն է: Դրանով է պայմանավորված «Սարդարապատ» վեպի ամենակենսական լիցքը՝ ժողովրդական մաքառման արդիական իմաստավորումը, հարցադրումների այժմեականությունը:

Ուլուբաբյանը, պատմաշրջանի դրամատիզմն ու քաղաքական պայմանների սրությունը նկարագրելով, գեղարվեստորեն հավաստում է, որ պատմական շիկացած մթնոլորտը, քաղաքական հանգամանքները, իբրև առաջնորդ առաջ քաշեցին գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանին: Կախարդական մի հարվածով Դանիել Բեկ-Փիրումյանի ներքին ուժերը մի նոր լույս են ստանում. նա վճռում է լքել Երևանյան ռազմաճակատի հրամանատարի տեղակալի իր պաշտոնը և գնալ կռվի գիծ՝ տեղյակ դառնալով վերջին վճիռներին: Իսկ ինչպիսին էին վերջին վճիռները. դադարեցնել ռազմական գործողությունները հայ-թուրքական ճակատում և Երևանն առանց որևէ դիմադրության հանձնել թուրքերին:Նա ստիպված էր գործել ի հեճուկս հայկական զինվորական ու քաղաքացիական ամեն տեսակ ղեկավարության:

Իսկ Երևանի քաղաքային դումայում էլ մայիսի 18 – ին քննել են հարցը և որոշել, որ երկրի ղեկավարությունը պետք է քաշվի Սևանի բարձունքները՝ Երևանն ու Էջմիածինը հանձնելով թուրքերին: Երևան քաղաքի բնակչությունը, սակայն, ի զարմանս երկրի ղեկավարության,

ցույց կազմակերպեց: Քարկոծվեցին քաղաքային դումայի շենքը, համարձակ կանանցից մի քանիսը լաչակները վար առան գլխներից, շպրտեցին դեպի դումայի պատշգամբը՝ ասելով. «Առեք, այդ լաչակները կապեցեք ձեր դատարկ գլուխներին, դուք տղամարդու գլխարկ դնելու իրավունք չունեք» :

Այս ամենին իրազեկ և վկա գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանը համարձակ վճիռ է կայացնում՝ դուրս գալ թշնամու ստեղծած ճակատի ամենասուր անկյան դեմ, որտեղ և գտնվում էր իր հորեղբորորդի գնդապետ Հովսեփ Բեկ-Փիրումյանի զորամասը և բեկում մտցնել ճակատում, որից կախված էր Հայաստան աշխարհի, նաև ազգի ճակատագիրը :

Դրության օրհասով պայմանավորված՝ խորհրդանշական էր Արարատյան երկրի բոլոր վանքերի ու եկեղեցիների զանգերից համազգային տագնապ ազդարարելը: Ոգեղեն էին Էջմիածնի ճեմարանի տեսուչ, մեր հայրենակից Գարեգին Հովսեփյանի՝ մեր ժամանակների Ոսկեբերանի /ծննդով Մաղավուզ գյուղից, հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս, մշակութային գործիչ, հայագետ / ի զեն կոչերը :

Հիրավի, ազգը գտնվում էր ճակատագրական ճամփաբաժանումում և փրկչական աղոթք էր վանկարկում, որին ականջալուր եղան մեծերը՝ Վանի փրկիչ , Երևանի ազգային խորհրդի նախագահ, հմուտ քաղաքական գործիչ Արամ Մանուկյանը, զորավար Դրոն, Անդրանիկը, Դանիել Բեկ և Պողոս Բեկ-Փիրումյանները և ուրիշներ: Այդպիսի փայլուն համաստեղություն, թերևս, միատեղ չի տեսել մեր ազգը, որն անարգ թշնամուն պետք է ասի իր վերջին՝ հաղթական խոսքը :

Մարշալ Հովհ. Բաղրամյանը, «Սարդարապատի հերոսներ» աշխատության մեջ վերլուծելով հայկական զորքերի մարտական գործունեությունը /հատկապես Կյազիմ բեյի դիվիզիայի ջախջախումը/ ընդգծում է, որ այդ կարևոր հաղթանակում հսկայական դեր խաղաց 5-րդ հայկական հրաձգային գունդը. «Գունդը կազմավորված էր,- գրում է մարշալը,- հատկապես ղարաբաղցիներից և, գտնվելով գնդի հրամանատարական կետում՝ տոգորվեցի մեծ հարգանքով Ղարաբաղի ռազմիկների նկատմամբ՝ նրանց արիության, անձնուրացության և անվեհերության համար » :

Բեկ Փիրումյանները ազգականներ էին, ղարաբաղցիներ: … Հատկապես թուրքերի վրա ուժեղ ճնշում էր գործադրում և նրանց հսկայական կորուստներ պատճառում հայկական 5-րդ գունդը, որը տարիներ շարունակ կռվել է թուրքական ճակատում /Վասպուրականում և այլուր/ և փառքով պսակել իր անունը: Արիասիրտ ու անվեհեր էին նրա զինվորները՝ մեծ մասը ղարաբաղցիներ և Արարատյան դաշտի զավակներ: Նրա բոլոր վաշտերն էլ խիզախության համար « մահապարտներ» անունն էին ստացել :

Եվ անհնարինը դարձավ հնարավոր: Թուրքերի վերջին հաջողությունը եղավ մայիսի 21-ին Սարդարապատ գյուղի և համանուն կայարանի գրավումը: Սիլիկյանի հմուտ ղեկավարությամբ նույն օրն էլ կասեցվեց թշնամու առաջխաղացումը և լույս 22-ի գիշերը Դանիել Բեկ-Փիրումյանը նախապատրաստում էր այն հարվածը, որն իրագործելու էր իր հորեղբորորդի Պողոս Բեկ-Փիրումյանը: Մայիսի 22-ին ազատագրվեց Սարդարապատ գյուղն ու կայարանը: Այդ հաջողությունը մեծ խանդավառություն առաջացրեց ժողովրդի և զորքի մեջ: Թուրքերը դիմեցին անկանոն նահանջի: Մայիսի 24-26-ին Բաշ-Ապարանի ուղղությամբ հաղթանակ տարավ Դրոյի ջոկատը :

Այսպիսով՝ հայ զինվորների և աշխարհազորայինների մեկշաբաթյա մարտական գործողությունները, կազմալուծելով թուրքական բանակի գլխավոր ուժերը, փաստորեն արգելակեցին Արևելյան Հայաստանի նվաճումը: Թուրքական բանակի Կովկասյան ճակատի ընդհանուր հրամանատար Ֆերիկ վեհիբ փաշայի ծրագիրը, որ նա ձևակերպել էր ՝ « Այս օպերացիան ձեռնարկվում է սոսկ …հումանիզմի և քաղաքակրթության պարտքով » , տապալվեց :

Այսպես թե այնպես՝ արդյունքում մնում է մի պարզ ճշմարտություն . հայերի վճռականությունը հասկացնել տվեց թուրքերին, որ այս ժողովուրդն այլևս չի խոնարհվի վայրագ ու դաժան հակառակորդի առջև :

Հետաքրքիր է ինքնին այն փաստը, որ Հ. Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» գիրքը եզրափակվում է հետևյալ տողերով . «Սարդարապատի հաղթանակը դարբնել է հերոսացած ամբողջ ժողովուրդը-հայ զորքն ու աշխարհազորայինները-ռազմաճակատի հրամանատար գնդապետ Դանիելբեկ Աբիսողոմի Փիրումյանի ղեկվարությամբ» :

Ուշագրավ է, ժամանակաշրջանի դրամատիզմն ու քաղաքական պայմանների սրությունը ցույց տալով, գեղարվեստորեն հավաստում է, որ շիկացած մթնոլորտը, պատմական հանգամանքները առաջ քաշեցին գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանին: Հետաքրքիր մի զուգադիպությամբ զուգահեռվում են հայ ժողովրդի համար բախտորոշ երկու հերոսամարտերի կազմակերպիչների՝ Վարդան Մամիկոնյանի և Դանիել Բեկ-Փիրումյանի խոհերը և շատ դեպքերում նրանք շատ են նման իրար :

Պերճ Զայթունցյանը «Սրբազան խորհուրդ» հոդվածում, որը լույս է տեսել Սարդարապատի ճակատամարտի 70–ամյակի կապակցությամբ, նկարագրում է. «Գլխավոր հրամանատարի տեղակալ, ղարաբաղցի գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանը ջրհան աշտարակի գագաթից տեսնում է, որ գրոհի նետված իր զինվորները շփոթվել ու տատանվում են մի պահ, և նա, հետևելով բնազդի թելադրանքին, այդ ակնթարթին հավատ չնծայելով խոսքի ուժին, հանում է զինվորական սև վերարկուն, շրջում վառ կարմիր աստառի կողմը, հագնում հակառակ երեսից և, Արարատյան դաշտի ղռերի խանձող արևի տակ, ոտքից գլուխ կաս–կարմիր, առաջնորդում է իր

զինվորներին: Այդպիսի լարված և օրհասական պահին ում լեզուն կպտտվի գնդապետի արածը գեղեցիկ էֆֆեկտ համարել: Դա սեփական հուսահատության և ուրիշներին հույս ու հավատ ներշնչելու գերմարդկային ճիչ էր, զինվորականի խիստ և հատու հրաման և միաժամանակ՝ զինակցի , ընկերոջ, ազգակցի խնդրանք, աղաչանք»:

Ուրեմն պետք է մեծարանքի հատուկ խոսք ուղղել գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանի պայծառ հիշատակին: Այդ անունը ընդհանուր խմբանկարից առաջինը առանձնացրեց ու խոշոր պլանով ներկայացրեց Սարդարապատի ճակատամարտի մասնակիցներից մեկը ՝ կոռնետ Վանոն, հետագայում՝ Խորհրդային միության փառապանծ մարշալ Հովհ. Բաղրամյանը: Նա ջերմ գնահատական է տվել գեներալ Սիլիկյանին, ինչպես նաև Դանիել Բեկ-Փիրումյանին, որի գերդաստանի տասը անդամներ մասնակցում էին առաջին աշխարհամարտին, իսկ տասից վեցը՝ Սարդարապատի ճակատամարտին: Դ. Փիրումյանի երկու որդիները՝ Միքայելը և Հովսեփը, մասնակցեցին Սարդարապատի ճակատամարտին ցավոք, երկուսն էլ վիրավորվեցին, և նրանց գերի վերցրին թուրք ասկյարները. այդ ամենը հեռադիտակով տեսնում էր հայրը՝ Դ. Փիրումյանը :

Բացի հիշյալ Փիրումյաններից՝ Սարդարապատի ճակատամարտին իր ծառայությունն է մատուցել Քրիստափոր Փիրումյանը (Փիրումյանների տոհմից), որը Խնուսի գնդի ավագ բժիշկն էր և այսպես էր կատարում իր սրբազան պարտքը ՝ օրհասի առաջ կանգնած հայրենիքի հանդեպ:

Սարդարապատի ճակատամարտում առանձնապես քաջություն ցուցաբերեց Պողոս Բեկ /Պավել / Փիրումյանի 5-րդ գունդը, որին անվանում էին « Մահապարտների գունդ»:

Սերժ Աֆանասյանը այդ գնդի մասին գրում է. «Գնդապետ Պավել Բեկ-Փիրումյանի հետևակային 5-րդ գունդը մեծ մասամբ բաղկացած էր Ղարաբաղի քաջարի զինվորներից, որոնց Կիլիկիայի ապագա կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը մկրտել էր « անմահներ » անունով»:

Իսկ հիմա մեջբերենք Հ. Թուրշյանի գրքից. «Այդ օրհասական ժամին դրությունը նորից փրկում է «բոլշևիկյան» հորջորջված Մահապարտների 5-րդ գունդը: Նահանջն ու փլուզումը բացասաբար չէին ազդել միմիայն այդ գնդի հիմնական կորիզի վրա, որը կազմված էր նոր գաղթի հետ ընտանեկան առնչություն չունեցող ղարաբաղցիներից »:

Լեոն նույնպես հպարտության զգացումով է խոսել 5-րդ գնդի մասին:

Միանգամայն արդարացիորեն, հավատարիմ պատմությանը, Ուլուբաբյանը կենտրոնական տեղ է հատկացրել ղարաբաղյան գնդին, որը, իրոք, եղել է պաշտպանության առանցքը: Կարելի էր, իհարկե, ավելի տեղ հատկացնել վանեցիներին, իգդիրցիներին, մշեցիներին, որոնք նույնպես իսկական հերոսության օրինակներ են տվել ռազմի դաշտում և հետ մղելով թուրքական ուժերը Բաշ-Ապարանում՝ նպաստել Սարդարապատի զորքերի հաղթանակին:

Խորհրդային կարգերի առաջին իսկ օրերին Արտակարգ հանձնաժողովի նախագահ Գևորգ Աթարբեկովը (Ալ. Բեկզադյանը նրան կոչում էր Օտարբեկով) կալանքի տակ առավ Դանիել Բեկ Փիրումյանին և Սարդարապատի ու Բաշ-Ապարանի հարյուրավոր հերոսների , ավելի քան 1500 հայ մարդկանց ուղարկեց Ռուսաստան՝ իր նմաններին ի կեր:

Դանիել Բեկի ու նրա զինակիցների գնդակահարության լուրն առնելով ՝ կալանքից վրիպած Պողոս Բեկն ուզում էր բողոքել: «Այն ժամանակվա անգլիական (այժմ քսանվեցի) այգում մի մեծ բազմության առաջ բարձրացել էր ձյունոտ ու սառած նստարանը … Սակայն հերոսին լսող չկար : Գնդապետը ստիպված եղավ ատրճանակի փողն իր բերանը կոխել ու կրակել»: Հայրենական մեծ պատերազմում ավելի քան 20 արցախցի զինվորականներ արժանացել են Խորհրդային Միության հերոսի, իսկ Ն. Ստեփանյանը՝ կրկնակի հերոսի կոչման:

Վերը ներկայացված պատմական ուրվագիծը, որքան էլ թռուցիկ, ուստի և պակասավոր, այսուհանդերձ հաստատում է մի անառարկելի իրողություն. արցախահայությունն է Արցախ աշխարհի բնիկ տերը, այն պահողն ու ծաղկեցնողը :

Չափազանց կարևոր և հույժ այժմեական է այն, որ հեղինակը քննական վերլուծության եղանակով վեր է հանել ժամանակի հայ ղեկավար գործիչների թույլ տված քաղաքական ու դիվանագիտական սխալներն ու բացթողումները: Այս առումով «Սարդարապատ» վեպը ունի խորապես ժամանակակից հնչեղություն:

Սարդարապատի խորհուրդը մշտապես գործում է մեզ համար. այն բաց դաս է բոլոր ապրողներիս, որ ուսուցանում է հավաքականություն, հայրենասիրություն, անձնազոհություն և նորից ու հազար անգամ հավաքականություն:

Եվ որքան էլ տարօրինակ թվա, սակայն փաստ է, որ այդ հերոսամարտի մասին քիչ է գրվել, իսկ նրա շատ հերոսներ տակավին սպասում էին իրենց ճշմարտացի գնահատմանը: Հերոսները մեծարման կարիք չունեն բնավ, մենք ինքներս կարիք ունենք մեր հավաքական հիշողությունը հարգելու՝ ի սեր մեր այսօրվա և մանավանդ վաղվա բարոյականության:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

ՀՏԴ 82.09
Գրականագիտություն

Նարինե ԱՎԱՆԵՍՅԱՆ
բ. գ. թ., դոցենտ, ԱրՊՀ
e-mail: nare-luys@mail.ru

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԿՓԵՂԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԿԱՄ ԴԱՐՁԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԵՏՔԵՐԸ ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆԻ ՎԻՊԱՇԽԱՐՀՈՒՄ

1920-1930-ական թթ. սփյուռքահայ գրական կյանքում ծայր առած, գեղարվեստական հստակ տարածք հաստատագրած կարոտի գրականության ուղղվածությունն իր բնորոշ առանձնահատկություններով խորհրդահայ արձակում զարգացման նոր որակի հասավ Մ. Գալշոյանի արձակում: Գալշոյանի ստեղծագործության առաջնային դերը արևմտահայության կենսագոյության գեղարվեստականացումը, տունդարձի ճանապարհի մտասևեռումը, հայրենիքի ոգեղեն գոյի գաղափարական շեշտադրումն է: Անհատի ճակատագիրը, գեղարվեստական նյութի կոնկրետությունից վերանալով, իմաստավորվում է որպես ժողովրդի պատմության տիպականացում, ժողովրդի դիմագծի ընդհանրացում:

Բանալի բառեր՝ *կարոտախտ, երկփեղկվածություն, ոգեղեն դարձ, հիշողություն, բռնագաղթ, ցեղասպանություն, հայրենիք, կորուստ, ողբերգություն, դիմակայություն:*

Н. Аванесян

ПРОБЛЕМА ДУХОВНОГО РАЗДВОЕНИЯ ИЛИ СЛЕДЫ ПУТИ РАСКАЯНИЯ В ПРОЗЕ МУШЕГА ГАЛШОЯНА

Тоска как концепт в литературе, основавшаяся и укрепившаяся в 1920-1930гг. в литературной жизни армянской диаспоры, вышла на новый уровень в советско-армянской прозе, в частности, произведениях Мушега Галшояна. Первостепенная роль в творчестве Галшояна принадлежит художественной реализации жизни западных армян, отражению пути домой, идеологическому акценту на духовной родине. Судьба индивида, исчезнувшая из специфики художественного материала, задумана как типизация истории народа, обобщение его образа.

Ключевые слова: *ностальгия, разделение, духовное обращение, память, депортация, геноцид, родина, потеря, трагедия, сопротивление.*

N. Avanesyan

THE PROBLEM OF SPIRITUAL DICHOTOMY OR TRACES OF REPENTANCE IN MUSHEGH GALSHOYAN'S PROSE

Having emerged in 1920-1930s in the life of the Armenian diaspora, longing as a literary concept reached a new level in Soviet Armenian prose, in particular, in Mushegh Galshoyan's works. The primary role in the author's prose belongs to the artistic representation of the lives of Western Armenians, the reflection of return home, and the ideological emphasis on the spiritual Motherland. The destiny of an individual that had disappeared from literary material is realized through typification of the history of the nation and generalization of its image.

Keywords. *Keywords: nostalgia, division, spiritual conversion, memory, deportation, genocide, homeland, loss, tragedy, confrontation.*

1920-1930-ական թթ. սփյուռքահայ գրական կյանքում ծայր առած, գեղարվեստական հստակ տարածք հաստատագրած կարոտի գրականության ուղղվածությունն իր բնորոշ առանձնահատկություններով խորհրդահայ արձակում զարգացման նոր որակի հասավ Մ. Գալշոյանի արձակում: Գալշոյանի ստեղծագործության առաջնային դերը արևմտահայության կենսագոյության գեղարվեստականացումը, տունդարձի ճանապարհի մտասևեռումը, հայրենիքի ոգեղեն գոյի գաղափարական շեշտադրումն է: Անհատի ճակատագիրը, գեղարվեստական նյութի կոնկրետությունից վերանալով, իմաստավորվում է որպես ժողովրդի պատմության տիպականացում, ժողովրդի դիմագծի ընդհանրացում:

Վերհուշի տարածական ընդգրկումներով հատկանշվող Գալշոյանի արձակի հոգևոր դարձի ու վերադարձի շրջապտույտը նպատակամիտված է կորուսյալ հայրենիքի վերագտնումի գաղափարին: Հիշողությունը՝ որպես անհետացող ծննդավայրի ոգեղեն գոյություն, դառնում է ստեղծագործական խտանյութ, որից բազմաճյուղվում են պատկերների հոսքն ու ներքին դիպաշարը: Իր հոգևոր կերտվածքի ծագումնաբանության ակունքներին ձգտող Գալշոյանի հերոսի դարձի խնդիրը պարունակում է նաև համամարդկային իմաստ ու նշանակություն, մարդու հողածին կերպի, հեղեղեն ծագումի գոյափիլիսոփայություն: Գեղագիտական այս սկզբունքից նշանավորվում է Գալշոյանի արձակի մի այլ հատկություն՝ արևմտահայ ինքնության շեշտադրումն ու առաջնայնությունն ազգային տեսակի պահպանման խնդրում:

Ազգային հիմնախնդիրը Գալշոյանը քննադիտում և գեղագրում է համամարդկային առանցքից՝ կենտրոնաձիգ պահելով կերպարի հոգեբանության պատմության խնդիրը: Գեղարվեստական տիպար ընտրելով ցեղասպանությունից փրկված և հայրենազրկված մարդկանց՝ գրողը պատկերում է ներհոգեկան այնպիսի կարծրավիճակներ, ինչպիսիք են մտային վերացարկումները, պատմաքաղաքական իրողությունների անհաշտությունից ահագնացող ներփակությունն ու ինքնամեկուսացումը,

կորուստներին հաջորդած ապրելու բնազդի ամոթը: Հոգեվերլուծական պատումն ընթանում է վերհուշի և մտահանգումի համակցություններով՝ որպես գեղագիտական ուրույն տեսակ նշանավորվելով կորուսյալ հայրենիքի հիշողության գրական ընթացքի վերանորոգման փուլում:

Արևմտահայ վերապրող կենսագրությունների բացահայտման ճանապարհին Գալշոյանը պատմականացնում է գերդաստանների պատմություններ՝ գրական կերպար դարձնելով ոչ թե պատահական, այլ իր արմատների և տոհմի հստակ հիշողությունն ունեցող մարդկանց: Այսպիսով՝ գրական հերոսը Գալշոյանի արձակում գեղարվեստածին գոյություն չէ, արևմտահայ կոնկրետ գերդաստանի շառավիղն է, արմատախիլ արված, իր կենսագոյությունը զուտ տոհմի շարունակության խնդրին նպատակամիտած արևմտահայը:

Շարունակելով 20-րդ դարի հայրենասիրական գրականության ավանդույթները՝ Գալշոյանը ընդսմին բացում է գեղարվեստի իր հունը, ստեղծագործական իր եզրը, գաղափարագեղագիտական իր տեսակը: Առանձնաղիտելի է պատումի եղանակը՝ արտաքին և ներքին աշխարհների գործողությունների կարգով: Անցյալն ու ներկան համընթաց զուգահեռվում են ներքին ու արտաքին գործողությունների շղթայակապով, ընդ որում՝ մշտապես առկա է խոսքի փոխանցումների, առարկայականից ոգեղեն հարթություն բնական կապը: Արտաքին ազդակից դեպի համադրականություն, դրսից՝ ներս. սա Գալշոյանի արվեստի գերակա հատկանիշներից է:

Դեպքերի ներքին զարգացումը Գալշոյանի վիպաշխարհում գլխավորապես ընթանում է ոգեղեն ոլորտում, նյութի առարկայականությունը զիջում է վերացարկումին կամ վերհուշին, նյութին գերիշխում է ոգին: Հոգու ետդարձի այս ճանապարհը գաղափարապես և զգայապես հակամիտվում է տունդարձի գաղափարին: Կարոտի գրականության ուղղվածությունից Գալշոյանն սկզբնավորում է գեղարվեստական նոր եզրուղի՝ տունդարձի արձակ կամ վերադարձի արձակ:

Տունդարձի ճանապարհի գեղագիտական եղանակը վերհուշն է: Կորուսյալ հայրենիքը ոչ թե անցած հուշ է, ավարտված անցյալ, այլ՝ վերհուշի հոգեվիճակ, այսինքն՝ շարունակվող ներկա: Հիշողությունը Գալշոյանի արձակում նաև տոհմիկ ծննդավայրի երազանքով պարուրված մտավիճակ է, կորուստին դիմադարձ ոգեղեն պատրանք, հիշողությունը գեղագիտական միջոց է՝ պահպանելու պատմության, հողի, ինքնության հեռապատկերը:

Դարձի ճանապարհը Գալշոյանի արձակում հոգևոր բռնկումից վերածվում է իրական ճանապարհի: Վերադարձը նաև կեցության նախանյութի, բնածին վիճակի վերագտնումի մարդկային ներքին կարևոր պահանջ է:

Գալշոյանի արձակի տիպական առանձնահատկություններից առանձնանշելի է նաև բնաշխարհի և հերոսի ժառանգորդական կապը, հոգևոր ներքին հաղորդակցումը: Մարդու և բնության համակեցության բռնահատումը առաջ է բերում հոգեբանական ճեղքվածք: Բնաշխարհի կերտվածքը պայմանավորել է մարդկային հոգեկերտվածքի, աշխարհընկալումի գեղագիտությունը, որ դրսևորվում է և՛ հոգեպատկերում, և՛ խոսքարվեստում: Հողի ոգին, հիշողությունը՝ որպես կերպարի մտավիճակ, դառնում է գործողությունների զարգացման առանցք: Էրգրի հերոսները, ստացական հատկանիշներ չյուրացնելով նոր միջավայրում, հարազատ են մնում իրենց նախանյութին, բնածին հատկանիշներին, ինչը ինքնըստինքյան բերում է ներքին բախումի: Բայց Գալշոյանի արձակում մարդու բնության խախտում տեղի չի ունենում. մարդը չի ընկրկում իր ինքնանկարից, արմատներից, հող ու ջրից: Միաժամանակ կերպարների ոգեղեն ոլորտում ամբողջացող կորուսյալ բնաշխարհը Գալշոյանի որոնած բարոյականության, հոգևոր արժեքների, կեցության անաղարտ սկզբի, ինքնանկարի ակունքների գեղագիտական եզերքն է: Կարոտի իններորդ ալիքը, որ Գալշոյանի արձակի ներքին տարերքն է, կարոտ է ոչ միայն հեռվում մնացած հող ու ջրի, այլև կորուսյալ մարդկանց ու մարդկայնության: «Գալշոյանի հերոսները,- նկատում է Կ. Աղաբեկյանը,- մեծ բարոյականության չափանիշ են և իրենց ապրած կյանքով ու մահով հաստատում են այդ մեծ բարոյականությունը»[1]: Նոր կեցության իմաստը, կորուստի սփոփման գերխնդիրը տվյալ պարագայում տոհմի շարունակության պարտավորվածությունն է:

Վերհուշի մեջ կենդանագրվող գալշոյանական բնաշխարհն ունի իր գուներանգն ու գծանկարը, մանրամասների ճշգրտությունը, որ բնաշխարհիկ հեռազգայության արդյունք է: Հիշողության տարածության մեջ կորուսյալ հայրենիքը քարտեզագրող անունները պատկերանում են բնաշխարհիկ մանրամասներով՝ իրենց կայուն ու շարժուն վիճակներով, որոնց խորքում գալշոյանական կենսահայութն է՝ կարոտի ու տխրության թախծաշաղախով: Բնապատկերի, դիմապատկերի, դիպաշարի կերպավորումը կայանում է հերոսի հոգեպատկերում, այսինքն՝ վերհուշի ոլորտում: Ընդ որում՝ ներքին ապրումները ոչ թե կարճատև հույզ ու զգացմունք են, այլ մշտառկա հոգեվիճակ, հիշողությունների ու մտապատկերների շարունակական ներհոսք: Խոսքի կենդանությանը նպաստում է նաև կորուսյալ բնաշխարհի և հերոսի ոգեղեն հարաբերության ներդաշնակ ռիթմը:

Գեղարվեստական վերացարկումները, հիշողությունների և մտապատկերների շարունակական ներհոսքը, կարոտի մշտառկա հոգեվիճակը, անցյալի բևեռացումը ներկա ժամանակի մեջ, դարձի մտասևեռումը, հեռվում մնացած ծննդավայրի գերզգացողությունը

[1] ***Կ. Աղաբեկյան***, *Արդի հայ արձակի զարգացման միտումներ, Ե., 2008, էջ 239:*

Գալշոյանի արձակում ընդգծում և վերստին շեշտադրում են կորուսյալ հայրենիքի վերադարձի և տունդարձի գաղափարը:

Կորուսյալ հայրենիքը գեղագիտորեն առարկայացնող, արևմտահայության դիմագիծն ու ճակատագիրն ամբողջացնող տիպար է Գալշոյանի արձակի կենտրոնական դեմքը՝ Զորի Միրոն, որի կյանքի առանցքային իրողություններով գրողն ազգային նշանակության շեշտադրումներ է արել անցած դարի պատմական իրադարձությունների և քաղաքական ուղեգծի վրա՝ ակնարկելով դրանք արտաքին ու ներքին գործողություններով և դրանցից ածանցյալ խորհրդածություններով: Պատմականությանը Գալշոյանը համադրել է անընդմեջ ողբերգական կորուստներից վերապրող, վերահաստատվող, վերաշարունակվող ազգային գոյի ոգեղեն ուժի գաղափարը: Ժամանակային երկու բևեռի՝ անցյալի ու ներկայի համընթաց զուգահեռներով գրողը դրվագել և ամբողջացրել է ցեղասպանության, բռնագաղթի, ինքնապաշտպանական կռիվների համապատկերը, վերապրող արևմտահայ մնացորդների կենսագոյության՝ որպես ազգային տեսակի ժառանգորդության մաքառումները, կորցրածի հետ չհամակերպվելու մտասևեռումները, հոգեբանական ինքնատեսակ զարգացումները: Արևմտահայ ինքնության շարունակության գերխնդիրը, էրգրի դարձի ճանապարհը Գալշոյանի գլխավոր հերոսի և արևմտահայ փրկված սերունդի կյանքի մտասևեռումն է: Զորի Միրոյի կերպարը վիպակում վերանում է անհատի ինքնանկարից, դառնում ցեղի ոգու պատմության, տոհմի շարունակականության խորհրդանիշ, որին անընդհատ ուղեկցող վերհուշը դարձի ու վերադարձի միակ ճանապարհն է, վերադարձը՝ որպես հոգեբանական վիճակ և վաղվա ճանապարհ:

Ցեղասպանությունը, այսպիսով, նախանյութ հանդիսանալով, Գալշոյանի վիպակում անմիջական գործողությունների հիմնաշերտ չի դառնում. վիպակի առանցքը ցեղասպանության հետևանքներն են, պատմական հայրենիքի կորուստը, և այդ ամենը՝ հերոսի հոգեկան ոլորտում և արտաքին կյանքում: «Աշխարհք հող ու ջրից անուշ բան չկա,- խորհրդածում է Գալշոյանի հերոսը: -Մարդու ուժ հողի մեջ է: Քանի հող չեն խլե ոտաց տակեն, մարդ անպարտ է, թեկուզ զարկվի՝ անպարտ է, խլեցին՝ գերի է, գառ»[1]: Վիպակի ամբողջ ընթացքում հերոսի վերացարկված հարաբերությունը ծննդավայրի հետ ոչ միայն մարդու և բնաշխարհի բռնահատված համակեցության հեռակա շարունակվող կապի ներքին վիճակ է, այլև գեղագիտական միտում՝ գեղարվեստի մեջ պահպանելու կորուսյալ ծննդավայրի համայնապատկերը՝ կարոտի գեղարվեստին ներհատուկ գունագեղությամբ: Հայրենիքի հեռապատկերը՝

[1] ***Մ. Գալշոյան,*** *Զորի Միրոն, Ե., 1983, էջ 14: Այսուհետ հղումների էջերը կնշվեն բնագրի մեջ:*

որպես ոգեղեն և աշխարհագրական տարածք՝ իր բնաշխարհիկ մանրամասներով, ժամանակային կոնկրետ պահերով, անհետացած անդրենաձին հերոսներով կենդանագրվում, վերանորոգվում է Զորի Միրոյի կյանքի ընթացքի հետ՝ ներքին ազդակ ունենալով կարոտացավի առկախ վիճակը: «Կարոտից զորեղ բան աշխարհք չկա…. Կարոտի հետ տխրություն կմեծանա…. Ու էդ տխրություն մեծ բան կպտղե, մարդու հոգին կմեծացնե, մարդուն կդարձնե աժդահա, հերոս» (20): Նման խորհրդածությունների խորքից առթող թանձր կարոտը հեռվից մորմոքող էրգրի հանդեպ Գալշոյանի հերոսը որպես կեցության կերպաձև պահ է տալիս իր սերունդին՝ երկրորդ աշխարհամարտ մեկնող երկրորդ Հարութ ժառանգին:

Ազգային ճակատագիրը Գալշոյանը շարունակ վերաքննում է կերպարի ողբերգական կյանքի համապատկերով: Ցեղասպանության հետևանքները չհաղթահարած Զորի Միրոն, որ կորցրել է ծննդավայր, գերդաստան, ընտանիք, ընկերներ, կյանքն իմաստավորող մի ամբողջ աշխարհ, քար ու ծերպի հետ կռիվ տալով՝ վերապրել է, գերդաստանի ջիղը շարունակելու մղումով հաղթահարել ապրելու ամոթի ներքին բնազդը, ամուսնացել իր բախտակից խութեցի Նարեի հետ, երկրորդ աշխարհամարտում զոհ տվել ունեցած միամորիկ որդուն, որերորդ անգամ կորցրել կյանքի հիմքերը. «….Քար կտրեց դռան մոտ դրած իր քարի վրա և ձորի մեջ թափեց աչքերի մշուշն ու սևը, դարձավ տան պատին ծեփված, աղավաղված ստվեր» (74): Մարդկային խոր ողբերգության համապատկերին գրողը ընդգծել է վերածնված ազգային հույսի բեկանումը երկրորդ աշխարհամարտից հետո: Հատկանշական է Զորի Միրոյի և նրա երրորդ ժառանգի՝ Հարութ որդու հոգեկան անջրպետը, որ բնիկ արմատներից օտարվելու հետևանք չէ միայն, այլև կորուսյալ էրգիր տանող ճանապարհի կորուստ: Այստեղից վիպակի խորագիրը՝ ոչ թե «Լեռների Միրո», այլ «Զորի Միրո». ձորը ենթադրում է վերելքի ճանապարհ, հակառակ դեպքում՝ պետք է մնա որպես վայրէջքի վերջնակետ, ձորը՝ նաև որպես լեռնցի Միրոյի կյանքի կորուստների պատկեր-խորհրդանիշ: Զորից վերելք գեղագիտական գաղափարին է միտված Գալշոյանի վիպակը:

Արևմտահայ տեսակի շեշտադրումն ու նշանակալիությունն ազգային ինքնության պահպանման խնդրում, որ նաև «Մարութա սարի ամպերը» ժողովածուի ներքին հիմնաշերտն է, վիպակում մարմնավորված է Զորի Միրոյի կերպարում: Կյանքի վերաշարունակության մղումը Գալշոյանի հերոսի պարագայում դառնում է սխրանք, մահվան հանդեպ կյանքի վերահաստատման ուժ: Ցեղասպանությանը, հայրենիքի կորուստին, անհատի պաշտամունքի վտանգավոր տարիներին, Հայրենական պատերազմին և խորհրդային համահարթիչ գաղափարաքաղաքական ուղեգծին դեմ հանդիման վերապրած Միրոն ինքը ժողովուրդն է, Միրոյից շառավիղված, Հարութ պապի անվանակիր երեք Հարութ որդու մեջ ժամանակային երեք սերունդ է՝ հոգեբանական կերտվածքի

առանձնահատկություններով և պատմական ընթացք գաղափարանշող ճակատագրերով: Առաջին Հարութ որդին՝ ցեղասպանության զոհ, երկրորդ Հարութ որդին՝ Մեծ Հայրենականի զոհ, երրորդ Հարութ որդին՝ խորհրդային համահարթիչ գաղափարախոսության կրավորական զոհ, որ արմատների գիտակցությունից և ազգային բեռից պայմանականորեն դուրս է: Երրորդ Հարութ որդու կերպարում Գալշոյանը արտահայտում է արևմտահայ ինքնության անհետացման վտանգը՝ այդ խնդրի շեշտադրումով ավարտելով վիպակը:

Միրոյի տիպարի առանձնահատկությունները բացահայտվում են հոգեբանական ապրումների, խորհրդածությունների, գործողությունների համապատկերում: Նրա կյանքն անվերջ կորուստների և դիմակայության ընթացք է: Կյանքի զգացողությունը խլացնող մահվան կսկիծը, սակայն, ծնկի չի բերել հերոսի վերապրելու կամքը, սերունդ թողնելու տոկունությունը: «Աշխարհի ամենամեծ կորուստ մարդու կորուստն է: Մարդու կորուստ անդարձ կորուստ է.... Երգիր ու հողի կորուստ ծանր կորուստ է, բայց հող անմահ է, հող ուրիշ տեր չի ընդունե, հող իր տիրոջ հետ արնակից է ու իր արնակցին կսպասե՞, կսպասե՞, ու օրերից մի օր կհանդիպին: Հողի կորուստ անդարձ կորուստ չէ» (69): Այս է ապրեցրել Զորի Միրոյին. հողի ոգին և հիշողությունը երբեք չեն լքել նրան, կարոտը թանձրացել է հոգու մեջ, կորուստի ցավը՝ կարծրացել, միտքը երկփեղկվել՝ այլաշխարհելով ժամանակից ու տարածքից: Միրոյի միտքը տարիներով սահել է էրգրի ուղիներով, կրկին կանգ առել հանգած օջախի սանդքարին, անցյալը իր վերաշարունակությամբ բևեռացվել է ներկայի մեջ, վերհուշը՝ դարձել կյանքի առանցք: Սա անդավաճան նվիրում է տոհմի ջիղին, ծննդաբանության ակունքներին: Պատումի կարոտախառն լիցքին նպաստում են վերհուշի գեղարվեստական ձևին բնորոշ առանձնահատկությունները, նաև կորուսյալ հայրենիքի բարբառի կենդանի հնչեղությունը: Մտքի պատկերավորությունը, բառի ու պատկերի գունագեղությունը Գալշոյանի արձակի մնայուն հատկանիշներից են, որոնք առհասարակ երևան են հանում արևմտահայ մտածելակերպի յուրահատկությունները, ինչպես Հարութ պապի հետևյալ պատկերավոր միտքը՝ «Աշխարհք դարձե լողցած հարս» (9), երբ որոտում էր Մարաթուկը անձրևից հետո:

Գալշոյանը վիպական հատկանիշներով է վերակերտում նաև մյուս հերոսներին՝ Զորի Միրոյի հիշողությունների մեջ կենդանացող անդրենածին Հարութ պապին՝ ստեղծագործ աշխատանքի համապատկերին, Խումար Մարեին, Խանդութ հարսին՝ ծոցվոր ու գրկանոցով որ ժայռից ցած է նետվել չանպատվելու համար, լեռների ծերպերին ինքնապաշտպանական կռիվներում ընկած ֆիդայի ընկերներին. «Հարութ պապից զատ, գյուղ ու օջախից զատ, Խանդութից զատ.... կորցրածն ու կորցնելիքը ինչքա՞ն, ինչքա՞ն է» (40):

Զորի Միրոն մաքառող տեսակ է, ցեղի դիմադրության ջիղը երբեք չի նվաղել նրանում. «Մահ չընդունիս կամոք,- խորհուրդ է տալիս Միրոն զինվոր որդուն: -Կռվի քո մահվան դեմ. հաղթ էղար, կապրիս, չէ՝ մեռնել կա ու կա… Էն մարդ կամոք կընդունե մահ, ով վրեժ ու փափագ չունե…» (56): Ցեղասպանության մղձավանջն ու կորուստներն անգամ չեն աղավաղել արևմտահայ տեսակի ազնվականությունը. «Մարդ սպանելուց էլ հարկ է մարդ մա՛րդ մնա: Կսպանիս…. կսպանիս, Հարութ, տղամարդու պես զարկ ճակտին, հոգու հետ խաղ չանիս…. (16): ….Կռիվ է, նեղ վիճակ կպատահի, մահի հետ համաձայնվի, այրություն կորցնելուն՝ չէ… Մերը կռիվ չէր…. Մերն ուրիշ էր» (52,16):

Վիպակն ավարտվում է կորուսյալ հայրենիքի պահանջատիրության անկումային տրամադրությամբ: Գալշոյանի գաղափարական շեշտադրումն ուղղվում է արևմտահայ տեսակի անհետացման և կորուսյալ հայրենիքի պահանջատիրության խնդրին: Բռնագաղթված արևմտահայության երկրորդ սերունդը նահանջում է բնիկ արմատներից ու հիշողությունից. «Զորի մի ափում գծագրվեցին հայրն ու մայրը, մյուսում՝ ինքն ու Մարինեն: Կետգծեր էին սկսվում հոր մոտից, գալիս դեպի իրեն, չէին հասնում՝ անդունդի վրա թեքվում, ընկնում էին ձորը….» (93): Մինչդեռ Միրոն ամբողջ կյանքում դիմադարձ է պահել հայրենիքի վերադարձի գաղափարը: Անհատի պաշտամունքի վտանգավոր տարիներին անձնագրային սեղանի պետը հարցրել է՝ որտեղացի՞ է, պատասխանել էր՝ Սասնո գավառի Խութի շրջանի Գործվարք գյուղից, և նրա դեմ փորձել են մեղադրանք հարուցել. «Բա՞, Քարագլուխ գյուղը ձեռք չի տալիս Զորի Միրոյին, միտքը Սասու՞նն է» (4): Հարութը Միրոյի գաղափարակիր ժառանգը չէ այլևս, ծրագրում է պատրաստել այնպիսի հաշվիչ մեքենա, որ «Ջոնի ձորից հավաքի Զորի Միրոյի Խանդութ կնոջ ճիչը, երկրի կնճռոտ ճամփաներից՝ Զորի Միրոյի թափառիկ ոտնահետքերը, մեկ-մեկ հավաքի աշխարհի բոլոր պայթյունները, բոլոր ճիչերը» (90):

Երկու խորհրդանշաններ՝ Միրոյի հին ու նոր տան հակադարձ պատկերները, հանգում են վիպակի հիմնական գաղափարին: Հին տան պատկերը դարձնելով գեղարվեստական մուտք՝ Գալշոյանը նախանշում է արևմտահայ սերունդի ողբերգականությունը, Հայաստանի հողային հիմնախնդիրները. «Գյուղեզրին խոռված մի տուն կա՝ թիկունքը գյուղն արած, շեմ ու դուռ՝ ձորի ցանցառ ու անտաշ ատամներով բաց երախին» (3): Սա խորհրդանշում է միաժամանակ աշխարհի հետ գժտված հոգու պատմությունը, քար ու ծերպի բաժին մարդկային կյանքի դժվարագույն ընթացքը: Աշխարհի հետ հերոսի հաշտության եզրի որոնումը, որ Գալշոյանն ակնարկում է Միրոյի՝ որդու համար կառուցած նոր տան պատկերով՝ «թիկունքը ձորն արած, լուսամուտ ու դուռ՝ դեմ գյուղին» (186), ապարդյուն է դառնում, որովհետև նոր տան ժառանգը հոր տեսակի սերուցքը չէ: Վեպը վերջանում է Զորի Միրոյի ինքնանկարի

վերահաստատումով. «Գնաց նստեց ձորին նայող քողտիկի դռան մոտ, իր քարին, լուցկու շրխկոցով խանձեց գիշերվա դեմքը և ասաց ձորին.

-Մնացինք ես ու դու» (93):

Ցեղասպանությունն ու ծննդավայրի կորուստը վերապրողների թեման Գալշոյանը շարունակեց նաև «Կածանի ճամփորդներ» վիպակում, «Տարեմուտին» անավարտ վեպում, սակայն կորուսյալ էրգրի գալշոյանական բռնկուն ճանապարհին որպես գրական երևույթ առանձնադիտելի է «Մարութա սարի ամպերը» ժողովածուն:

Ժողովածուի գլխավոր հերոսների հոգեբանական երկփեղկվածության հիմնապատճառը ցեղասպանության հետևանքով ծննդավայրի կորուստի ողբերգությունն է. նրանք բոլորն էլ ոգեղեն ոլորտում ապրում են կորուսյալ Սասնո աշխարհի հիշողություններով, նրանց մեջ մշտապես բռնկուն է վերադարձի գաղափարը: Էրգիր տանող ճանապարհի գեղագիտական շեշտադրումը Գալշոյանի մոտ ազգային գոյաբանության պահպանման իմաստ է ձեռք բերում: Գաղափարական ներքին բովանդակությունից զատ՝ գեղագիտական կառուցվածքի տեսանկյունից հատկանշական է պատմվածաշարի գրեթե բոլոր գործերի սկզբնավորումը էրգիր տանող ճանապարհի հոգևոր բռնկումով: Հայրենիքի կորուստի ողբերգության հիմքում ազգային նշանակության խորհրդածություններից բացի՝ Գալշոյանը հարցադրում է մարդու և բնաշխարհի ժառանգորդական կապի բռնահատման համամարդկային հոգեբանական խնդիրներ: Դեպքերի ներքին զարգացումը ոգեղեն ոլորտում ավարտվում է հոգևոր և իրական ճանապարհների միաձուլումով: Տոհմիկ ծագումնաբանության ներքին մղումով գեղարվեստի մեջ հավերժականացնելով արևմտահայ կենսագրությունները՝ Գալշոյանը կորուսյալ գերդաստանների վերապրող շառավիղների հոգեբանական պատմություններով էրգրի հիշողությունից հասնում է էրգրի պահանջատիրության հիմնագաղափարին:

«Մարութա սարի ամպերը» ժողովածուի ստեղծագործական ակունքները սերում են կորուսյալ Սասունից: «Էս հին ու նոր օրեր… Էս մամռոտ օրեր…» պատմվածքի հերոսը՝ Գալշոյանի հայրը՝ Օվեն, օր ծերության կորուսյալ էրգրի հիշատակները վերապրում է ոչ թե որպես վերհուշ, այլ՝ ներկա իրողություն. «-Մուշեղ,- հետո ասաց հայրս,- էս գարնան Ծովասարի արտերն ի՞նչ ցանենք: Գարի՞ ցանենք, թե՞ գլգիլ» (157):

Բացարձակ նվիրումը ծննդավայրին, արմատներին, կորուսյալ կյանքի հիշողություններին Գալշոյանի հերոսների ամենացայտուն գիծն է: Վարդո մարեն կորուսյալ ծննդավայրի Թուխ Մանուկ եկեղեցու հիշատակով մատուռ է ստեղծում, ուխտատեղի դարձնում և հավատի երկյուղածությունը չի կորցնում նույնիսկ, երբ միակ որդին՝ Տոնեն, զոհվում է պատերազմում («Թուխ Մանուկ»):

«-Ալեեե՜… Ալե, իմ հոգին, Ալեեե՜… Ծերունին, մահակին հենված, կանչում էր երգեցիկ… Արևածագից, մահակին հենված, կանչում էր ու կանչում» (167): Հիսունհինգ տարի անց ծերունի Զորոն, երբ ամուսնացնում

էր կրտսեր որդուն, Արարատյան դաշտի գյուղերից մեկում հանդիպում է բռնագաղթի ժամանակ կորցրած մանկության տարիների սիրած աղջկան՝ Ալեին: Սիրո վերագտնումի բերկրանքը, որ տակնուվրա է անում ծերունի Զորոյին և Ալեին, նաև կորուսյալ էրգրի հետ կապված թանկագին հիշողության վերագտնումն է. «Պառավը, որ հուզված կուչոտել էր, փլվեց ծնկներին և հոնգուր-հոնգուր լաց եղավ: Դրսից լսվում էր կանչը, -Ալե՜,- ոչ ոք իրեն այդպես չէր կանչել՝ այդպես ջերմ, այդքան սրտանց, այդպես կարոտիկ, աղոթքի նման, երգի պես, հեռու լեռներից եկող արձագանքի պես…» (173):

Կորուսյալ էրգրի հերոսներին Գալշոյանը վիպականացնում է տոհմիկ հատկանիշներով, բացառիկ հիմնագույներով: Մահվան մահճում պառկած տալվորիկցի Դավոն վրիժառության ոգով, «ձիու ականջը մտած, մերկացած սուրը ճակատին, սուրում էր դեպի բլրակը՝ թշնամու դիրքերը…. Իրիկնապահի արևը բոցկլտում էր մերկ սրին, համբուրում ճակատը, և աչքերի դիմաց կայծկլտացող կարմիր ու կանաչ պեծեր: Դավոն սուրում էր դեպի արևմուտք, դեպի հեռու լեռների վրա փշրված արևը» (220): Մեռնում է կորուսյալ էրգրի վերջին հերոսներից մեկը՝ չիրագործված վրեժխնդրությունն ու ծննդավայրի կորուստի ցավը սրտում, զառացանքի մեջ էրգրի ճանապարհը բռնած. «Մարութա վանքում խաչի փոխարեն սուրը համբուրած տալվորցի Դավոն գնում էր: Արևմուտքի հետ Դավոյի շունչը խառնվելու էր Մարութա սարի ամպերին, և Կաբլորաքարի կատարին ճախրող ծեր արծիվը կրծքից մի փետուր էր պոկելու, ու իրիկնապահի բույրերով այրվող փետուրը թպրտալու էր Տալվորիկի երկնքում» (210): Այսպես՝ մահվան ճանապարհը դառնում է կարոտաբաղձ ոգու սրբազնագույն որոնումին հասնելու ոգեղեն ճանապարհ: Հավաքվել են համերկրացի ընկերները՝ Համզե Պչուկը, Գևորգ Չաուշի արնակից մքենցի Գրիգորը, Բջե Ավեն, Մանուկը, Միրոն, Տիգրանը՝ կորուսյալ ծննդավայրի կրակը հոգիներում. «Քո ճակտին ուրախություն կա, Դավո, դու էրգի՞ր կերթաս…. կանչում է ընկերոջը Համզե Պչուկը: -Թե էրգիր կերթաս, հետ իրար էրթանք, մինակ ո՞ւր է կերթաս-տնավեր» (210-213): Իսկ Ցիցքարի հերոսամարտի հիշողությունից պայծառացած քաջ Դավոյի միտքը այդ պահին ոգեղեն ոլորտներում ճեղքում էր կորուսյալ էրգրի սահմանները. «Կռիվ է կերթամ, Պչուկ, կգաս…. Ով զարկվեց՝ դավաճան է» (211): Կորուսյալ էրգրի հերոսն իր կռիվների կռիվն էր մղում, վերջին կռիվը՝ պարտադրված պարտություններից ու կորուստներից հետո. «Գնդակները վժժում էին գլխավերևում, ականջի տակ, բայց ինքը համոզված է, որ չի զարկվելու. Դավոն այդպիսի դավաճանություն չի անի, տալվորիկցի Դավոն դեռ վրեժ ունի լուծելու: Եվ թուրը ճակատին պահած՝ սուրում էր դեպի թշնամին» (216):

Ցեղասպանության և հայրենիքի կորուստի վրիժառության ոգու կրողն է նաև Դավոյի համերկրացին՝ Քեռի Թորոսը, համանուն պատմվածքում: Օր ծերության կոկորդի հեղձուցիչ ցավը քեռի Թորոսին տեսլանում է թուրք

ոստիկանապետի ծանոթ կերպարանքով, և Թորոսը վրեժխնդիր է լինում՝ թրով կտրելով կոկորդը. «Էս թշնամին մինակ իմ կոկորդին չէ… Ու ես կսպանիմ զինք» (195): Չկայացած վրիժառության մի վերջին հնարավորություն է սա՝ հանգիստ հոգով մահվան դեմ հանդիման գնալուց առաջ: Իսկ վերջին կտակը, որ հերոսի կողմից փոխանցվում է իր ցեղի ժառանգների ժառանգին, այս է. «Ձկուկ, մեծանաս ու չդառնաս Քեռի Թորոսիկ… Էղնի ու, ձկուկ, ետ դառնաս իմ եկած ճամփով…. Էն ճամփեն, սար ու ձորի մեջ քանց թել խճճված կռվի ու կոտորումի իմ մոլոր ճամփեն, դու կծկիս ու ետ դառնաս…» (198):

Հողի և նախնիների ոգին անընդհատ կանչում է Գալշոյանի հերոսներին: «Իմ հերն ու Ծովասար կկանչին զիս…. Առավոտ կերթամ,- հաստատ ասաց Օհանը և շեշտեց,- առավոտ ճամփորդ եմ» (223): Վերադարձի բռնկուն հոգևոր ճանապարհը հաղթահարում է իրական պատնեշները. ի՞նչ սահման ու սահմանապահ. Ծովասարի Օհանն իր մտքից ետ դարձողը չէ: Էրգիր գնալուն պատրաստվում է արարողության պես՝ սթափ մտքով ու գիտակից կամքով. «Օհանը տեսավ, որ որդին էլ է ավտո նստում. ուրեմն ուզում է իրեն ճանապարհել. դրա համար հուզվեց. բայց փորձեց որդուն ետ պահել…. ի՞նչ է, Օհանը Էրգրի ճամփան չի՞ իմանում…. և ուրախ ու գոտեպինդ նստեց «Շտապ օգնության» ավտոմեքենան» (225):

Արևմտահայ ինքնանկարների բացահայտումը Գալշոյանը շարունակում է պատմվածաշարի մյուս գործերում՝ նորովի շեշտադրումներով և մտահանգումներով: Շրջկոոպի նախագահի ծննդյան օրը Ներսեն, որի համար կեցության սկզբունք ու չափանիշ են արդարությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, կյանքում մեն-միակ անգամ, հակասելով ինքն իրեն, բաժակաճառ է ներբողում նախագահին, բայց երբ տանը սթափվում է ոգելից վիճակից, վերհիշելով արածը՝ ծառս է լինում իր դեմ. «Քո հոգին ես ծախե» (206), և կեսգիշերին հասնելով շրջկենտրոն՝ նախագահի տուն, ետ է վերցնում խոսքերը. «Չեմ ուզի, որ իմ սուտ խոսքի վրա առավոտ բացվի: Գիշերով եկա զիմ խոսքն ետ առնիմ ու էրթամ… Դու ի՞նչ հայրենասեր» (209):

Արևմտահայ տեսակի շեշտադրումները Գալշոյանը առաջ է տանում պատմվածքների վերնագրերից սկսած, որոնք գրեթե բոլորն էլ իրենց հերոսների անվանակիր են՝ ընդգծելու նրանց ինքնությունն ու տոհմիկ խտացվածքը:

Խութեցի Ափրեն շրջապատի հորդորներով նոր տան հողե հատակը տախտակապատում է, բայց իրիկնապահին, սրտնեղելով հողե հատակի կարոտից, նորից քանդում է, որովհետև հողե հատակը «նրան հիշեցնում էր Էրգրում կիսատ մնացած իր մանկությունից հուզիչ մի պատկեր՝ կավածեփ պատերով մեծ հացատուն, երդիկից իջած արևի խուրձ, գրգռիչ բույրով ավել, արծաթագույն այդ ավելով ու երկար փեշերով հատակը մաքրող կին և լուսե սյան մեջ խտղտացող փոշու խատուտիկ հատիկներ» (276):

Կորուսյալ էրգրի պատրանքով ապրող հերոսներից մեկն էլ Բարսեղ ծերունին է («Գինարբ ծաղիկ»): « -Էրթանք Խուչերով արտերն. իմ թոռան գինարբ ծաղի՞կ քաղիմ: Բարսեղ ծերունին առավ ձեռնափայտը, բռնեց Մանուկ թոռան ձեռքից, ելավ դուրս» (261): Քառասունութ տարի առաջ կորցրած էրգրի մի նշխարի՝ գինարբ ծաղկի հայտնությունը, խանդավառում է Գալշոյանի հերոսի ծերունական հոգին: Գինարբ ծաղիկը երջանկության ծաղիկն է՝ կորուսյալ էրգրի խորհրդանիշը, որ ամբողջ կյանքում որոնել են էրգրի հերոսները: Բարսեղ ծերունին հոգեկան ցնցում է ապրում, երբ հերկում են արտն ու արտի մեջ եղած գինարբ ծաղիկները. նա կորցնում է էրգրի երջանիկ պատրանքը. «Խուչերով արտերի տունը փլեր է, Մանուկ»,- ասաց մտքում և ափլփելով իջավ ու նստեց օտարացած արտի փեշին» (264):

Կորուսյալ էրգրի մի ուրիշ պատրանք՝ Լուսաստղը, ապրեցրել է Բազե Առաքելին («Պատրանք»). «Ութսուն տարվա սովորույթ էր. զարթնում էր լուսելուսին, և աչքը բացելու հետ հայացքը թռչում էր երդիկն ի բաց. «Յա՜, բարի Լուսո աստղ»: Լուսաստղը, է՜, էրգրի տուն երդիկին էր ծաղկում, նոր երդիկին ուրիշ երկինք էր բացվում, արշալույսին մանր-մունր աստղեր էին մարմրում երդիկի երկնքում, և դրանցից ոչ մեկը Լուսաստղը չէր, սակայն Բազե Առաքելը երդումը ցուցամատին պնդում էր՝ է՜, էն է Լուսո աստղը» (265): Կորուսյալ հայրենիքի կանչող որևէ պատրանք Գալշոյանի հերոսներին տանում-ձուլում է հողին, նախնիներին. «Ճերմակ ու սառած լանջով Առաքելը ելնում էր ջահել բաշը թափ տալով, հետքից ոլորվում էր սեղմ ու հավաք հոտը, շունչը ծփում էր աջ ու ձախ, Բազե Առաքելը ոտք էր փոխում չափուկ ու ժիր, մահակը կայտառ թափ էր տալիս, և մի պահ նրան այնպես թվաց, թե Լուսաստղի հետ, հոտի հետ, շան հետ, ահա, Ճակատասարն է բարձրանում…. Հե՜յ գիդի, հա՜, այն օրը, անուշիկ այն լուսածագին, երբ հոր հետ, շան հետ ելնում էին Ճակատասարը, հրաշք լիներ ու տեղնուտեղը քարանային» (174-175):

Բազե Առաքելը ևս իր մահով միանում է կորուսյալ էրգիր գնացող Գալշոյանի հերոսներին. «Լուսաստղը հենց գլխավերևում էր. և… գլխավերևի երկինքը ինչո՞վ Ճակատասարի երկինքը չէր- հենվեց խզակոթը ձյան մեջ խրած հրացանին և, այն է պետք է ելներ, հրացանը որոտաց…. Բազե Առաքելը, գլուխը ուսին ձգած, հենված էր քարին, փակ կոպերը ժպտում էին, և կնճիռները կամաց-կամաց լցվում էին ժպիտով» (275):

Գալշոյանի հերոսներին կանչող վերջին պատրանքը ոչ թե մտացածին, անգո տեսիլ է, այլ կորուսյալ էրգրի հետ կապված իրական դրվագի վերահայտնություն ոգեղեն ոլորտում: Ցեղասպանության և ծննդավայրի կորուստի հոգեհարվածն ավերել է այդ մարդկանց կյանքը, բայց կենդանի է մնացել էրգրի հեռավոր պատկերը, որով ապրում են հայրենակորույս հերոսները: «Փողփուչ Մելոն» Բակունցի Հազրոյի պես ծիրանի փող էր նվագում. «Էրգրի Կուսգետ գեղից էր…. Մելոյի ձենն ամբողջ Սասունն էր բռնե: -Հայրս ծնկներին հակված լռեց: Դա հորս սովորական նստվածքն էր.

այդպես՝ թևերը ծնկներին խաչած, հակված ու համրացած՝ հայրս էրգիր էր գնում» (229): Մելոն այլևս չի նվագում. էրգրի կորուստից հետո լռել է սրինգի ձայնը: Կորուսյալ հայրենիքի խորհրդանիշն այլևս ծիրանի փողի կարոտականչը չէ, ինչպես Բակունցի պատմվածքում, փողփուչ Մելոյի հսկայական չիբուխն է՝ հոգու կապարե ցավը թմրեցնող ծխի քուլաներով. «-Քու ծիրանի փող կորե՞լ է, Մելո»: Մելոն, գործի հետ, գլխով արեց՝ կորել է: «Նոր փո՞ղ կշինիս»: «Աստված էվելի շնորհք տա, Մելո, փող շինե, փող փչե, թող մեր հոգին քրքրվի»: Ոչ մեկի մտքով չէր անցնում, որ Մելոն չիբուխ է պատրաստում» (233):

Փողփուչ Մելոն կորցրել է ծիրանի փողը, վերադարձի հույսը: Նա ոգեղեն ոլորտում ամբողջ կյանքում ապրում է կորուսյալ երկրում, բայց չի նշմարում վերադարձի ճանապարհը՝ տարբերվելով համերկրացի մյուս հերոսներից. «Մոռացել էր մեզ, մոռացել էր իր տեղը, մոռացել էր, որ խոսում է.... Նրան թվում էր, թե ինքն իր մտքերի հետ է, ամեն օրվա պես՝ հիշում է... » (235):

Հայրենակորույս մարդկանց դրամատիկ ապրումների հոգեբանական պատումը Գալշոյանը շարունակում է «Թաթոն», «Միայնակ ծառը», «Դաշտապահը», «Մեղապարտը», «Աղորիք» պատմվածքներում՝ գեղարվեստի պատմության մեջ հավերժականացնելով մի բացառիկ աշխարհ՝ «Քարագլուխ» անունով, հերոսների զգայավառ ապրումներով և կորուսյալ էրգրին կամուրջ նետող ծիածաններով, որոնց վրա Մամփրե արքայի հայատառ գլխագրերն են. «Օսման, թալանչի Օսման.... Աղբյուրի անուն Մեհրե էր ու Մեհրե կմնա...» (402):

«Մարութա սարի ամպերը» ժողովածուն գեղարվեստական արժանիքներից դուրս կռում-կոփում էր այն ոգեղեն ուժը, որ անսասան պիտի պահեր կորուսյալ հայրենիքի պահանջատիրության գաղափարը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

ՀՏԴ 81՝37
Լեզվաբանություն

Լուսինե ՄԱՐԳԱՐՅԱՆ
բ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ
e-mail: margaryan.lusine@yandex.ru

ԻՐԱՆԱԿԱՆ -ŠAT /ՇԱՏ և -ŠEN/ՇԵՆ ԲԱՌԱՐՄԱՏՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԱՐՑԱԽԻ ԲՆԱԿԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

*Արցախի բնականվանացանկում **շատ**-ով բաղադրված տեղանուններդ սահմանափակ են, այնուամենայնիվ **շատ**-ը կիրառական է և կենսունակ որպես տեղանվանակերտ մասնիկ: **Վարդաշատ, Ծաղկաշատ, Արևշատ** բնականունների քննությունից ակնհայտ է դառնում, որ Արցախի բնականվանակազմության մեջ քաղաք իմաստով **շատ**-ի տեղանվանակերտ գործառույթը մարած է, և «առատ» նշանակությամբ գործառվող համանուն միավորի կենսունակությունն է ակտիվանում:*

*Իսկ **Շեն** բառարմատով բաղադրված հուրջ քառասունհինգ բնականուն է վկայված Արցախի բնականվանացանկում /հին ու նոր/: Հատկանշելի է՝ եթե **շեն** եզրն առդրվում է հատկանվանը/անձնանուն, մականուն, տոհմանուն/, այդ դեպքում **շեն**-ը՝ որպես բառարմատ, գիտակցելի է մնում ու պահպանում է իր բառական նշանակությունը, իսկ եթե հասարակ անվանն է բաղադրվում, ապա մեծանում է նրա բառական իմաստի՝ ածանցականի վերածվելու՝ ապանյութականանալու հնարավորությունը:*

***Բանալի բառեր**՝ -շեն, -շատ բառարմատներ, բնականուն, Վարդաշատ, Ծաղկաշատ, Արևշատ, Խոնաշեն, Բերդաշեն, Մաճկալաշեն, Սիսողաշեն, Մադաթաշեն, Մյուրիշեն, Սարգսաշեն, Մարտունշեն, Սեղիշեն:*

Л. Маркарян

ФУНКЦИОНАЛЬНО-СЕМАНТИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ИРАНСКИХ КОРНЕВЫХ ОСНОВ -ŠAT /ШАТ И -ŠEN/ШЕН В ОЙКОНИМАХ АРЦАХА

Среди Арцахских ойконимов топонимы, составленные иранским корнем –шат, ограничены, но по сути корень –шат имеет активную функциональность и практичность как топонимический формант. Изучив ойконимы Варташат, Цагикашат, Аревшат, становится очевидно, что в Арцахских ойконимах корень -шат со значением «город» почти не реализуется, однако данная омонимичная единица активнее употребляется в значении «много», становясь активным топонимическим формантом.

Среди Арцахских ойконимов примерно 45 топонимов, составленных иранским корнем –шен.

Примечательно, что если –шен прилагается к именам собственным (имя, прозвище, родовое имя), то выделяется как корень и сохраняет свое лексическое значение, в случае приложения к нарицательному

имени проявляется его производное значение.
Ключевые слова: *корневые основы –шат, -шен, ойконим, Варташат, Цагикашат, Аревшат, Хонашен, Берташен, Мачкалашен, Схторашен, Мадаташен, Мюришен, Саркисашен, Мартунашен, Сейдишен*

L.Margaryan

THE FUNCTIONAL-SEMANTIC CHARACTERISTICS OF IRANIAN ROOT STEMS -SHEN AND -SHAT IN ARTSAKH OIKONYMS

Toponyms made up of the Iranian root –shat are limited in Artsakh oikonyms, but in essence the root –shat has an active functional and practical application as a toponymic formant. Having studied the oikonyms of Vartashat, Tsagikashat, Arevshat, it becomes obvious that in Artsakh oikonyms the root -shat with the meaning "town" is almost not realized, however, this homonymous unit is actively used in the meaning of "many", thus becoming an active toponymic formant.

There are approximately 45 toponyms made up of the Iranian root –shen among Artsakh oikonyms.

It is noteworthy that if -shen is attached to proper nouns (name, nickname, generic name), then it stands out as a root and retains its lexical meaning but when it is attached to common nouns, its derivative meaning appears.

Keywords. *root-stems -shat, –shen, oikonym, Vardashat, Tsakhkashat, Arevshat, Khonashen, Berdashen, Machkalashen, Skhtorashen, Madatashen, Mewrishen, Sargsashen, Martunashen, Saydishen.*

Աշխարհագրական անվանումները բազմալեզու են, և դրանց առաջացումը, լեզվական պատկանելությունը տարբեր ժամանակային շերտերի են հասցեագրվում: Պատմական իրողությունների մշտական փոփոխությունները, այդ փոփոխություններով պայմանավորված լեզվական շփումները Արցախի տեղանվանական համակարգի բնութագրին որոշակիորեն ազդել են: Եվ ինչպես Արցախի բարբառում, օրինաչափորեն նաև տեղանվանական համակարգի միավորներում իրանական լեզվազդեցության տարրերն առկա են:

Արցախի՝ իրանական ծագման **šat /շատ** և **-šen/շեն** տեղանվանակազմիչ միավորներով բաղադրված բնականունների քննությամբ բացահայտվում են այդ եզրերի՝ որպես տեղանվանակերտ միավորների կենսունակության հնարավորությունները: Ե՛վ **շատ**, և՛ **շեն** բառարմատները հայերենում վկայված են դեռևս 5-րդ դարից[1]:

Իբրև տեղանվանակերտ միավոր ***շատ***-ը առկայացած է որոշակի թվով աշխարհագրական անուններում և առավել տարածված է թագավորների, իշխանների անուններով բաղադրված կառույցներում: Աշխարհագրական տերմինների ժողովրդական բառարանում քննվող միավորի ծագումը կապվում է իրանական *ուրախ* բնիմաստով –šat բառին և *քաղաք* գլխավոր իմաստով է մեկնաբանվում, որն անկախաբար չի գործածվում և հանդես է գալիս միայն աշխարհագրական անունների բաղադրյալ

[1] ***Լ. Հովհաննիսյան****, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 164:*

կազմություններում որպես երկրորդ բաղադրիչ[1]: Իրանական լեզուներում նույնպես –šat-ով տեղանուններ կան, բայց, ի տարբերություն հայերենի, այնտեղ այն նախադաս կիրառություն ունի[2]:

Բառարմատի ստուգաբանությունը Գ. Ջահուկյանը ներկայացնում է համանունային շարքով. 1. *առատ* նշանակությամբ, 2.*ուրախություն, բավականություն* իմաստներով, 3.*քաղաք* իմաստով/տեղանուններում/. վերջինս *ուրախ* նշանակությունից ածանցված, փոխաբերացված է համարում:[3] Բառարմատը համանունային արժեքով է նշում նաև Լ. Հովհաննիսյանը. *առատ* նշանակությամբ՝ ինքնուրույն գործածվող, *քաղաք* իմաստով՝ անկախաբար չկիրառվող, տեղանվանակերտ մասնիկի գործառույթով: Ընդ որում նա **շատ**-ը տարարմատ համանուն է դիտում[4] : Ղափանցյանը նշում է, որ իրանական –šat-ի աշխարհագրական գործառությունը մեռած է, և հայկական տեղանուններում առկա **շատ**-ը հայկական ծագում ու նկարագիր ունի:[5] Լ. Հովհաննիսյանը հավաստում է, որ «արդի հայերենում **շատ**-ը գործուն տեղանվանական ձևույթ է, սակայն այն ընկալվում է *բազում, շատ* նշանակությամբ, իսկ գրաբարինը ծագումնաբանորեն կապում են պիւ. –šat/*ուրախ*/ բառի հետ»: Ու նաև հավելում, որ «համոզիչ չի թվում տեղանվանակերտ *շատ* ձևույթի ծագումնաբանական կապը պիւ. –šat/*ուրախ*/ բառի հետ: Ըստ երևույթին **շատ**-ը ենթադրում է այլ ծագում»[6]:

Արցախի բնականուններում տեղանվանակերտ այս ձևույթը չունի լայն աշխարհագրություն: Այսօր բնականվանացանկում վկայված օրինակներից է Հադրութի շրջանի **Վարդաշատ** գյուղը: Գյուղի հին անունը նշվում է **Որթնաշատ**[7]**, Վորդնաշատ**. բարբառային արտասանությունն էլ փաստում է վերջինիս հավաստիությունը՝ **Վըրթնաշատ**: Բայց նրա ծագման հետ կապված շրջանառվող վարկածները միանշանակ չեն, քանի որ պատմական-աշխարհագրական տվյալները տարակարծությունների հիմք են տալիս: Անվանումը կարող է կապվել խաղողի որթի առատության փաստին. պատմական աղբյուրում կա այսպիսի արձանագրություն. «Այստեղ/ Հադրութում/ հիմնականում խաղողայգիներ են, սակավ են թթայգիները»[8], նույն աղբյուրում մեկ այլ տեղեկույթ այլ վարկածի հիմք է տալիս՝ որդից առաջացած լինելու մասին. «1877թ. Հադրութում գործում էր մետաքսագործարան, որն ութ ամսվա ընթացքում արտադրում էր 50-60

---

[1] ***Э. Мурзаев***, *Словарь народных географических терминов, Москва, 1984, стр 625.*

[2] *Տե՛ս* ***Լ. Հովհաննիսյան***, *նշված աշխ., էջ 134:*

[3] ***Գ. Ջահուկյան***, *Ստուգաբանական բառարան, 2010, Երևան, էջ 582:*

[4] *Տե՛ս* ***Լ. Հովհաննիսյան***, *նշված աշխ., էջ 207:*

[5] ***Гр. Капанцян***, *Историко-лингвистические работы, Т II, Изд. Акад. Наук Арм. ССР, Ереван, 1956, стр. 163.*

[6] *Տե՛ս* ***Լ. Հովհաննիսյան***, *նշված աշխ., էջ 134:*

[7] ***Ս.Սարգսյան***, *Արցախ. պատմաշխարհագրական ճշգրտումներ, « Հայ Էդիթ», Ե., 1996, էջ 70:*

[8] *СМОМПК, Выпуск 6, Тифлис, 1888. ,стр. 170:*

փութ մետաքս»[1]: Չի բացառվում **Վարդանաշատ**-ի հնարավորությունը. այն նույն արտասանությունը կունենար բարբառում: Եվ սա հիմնավորելի է նրանով, որ հայկական տարածքում ***շատ*** բաղադրիչով առավել տարածված էին անհատների/թագավորների, իշխանների/ անուններով բաղադրված կառույցները: Տվյալ դեպքում այն պիտի կապվեր Վարդան Մամիկոնյանի անվան հետ: Հայտնի է, որ հայոց մեջ կար նաև **Վարդանանց տոն,** որը ժողովուրդը կոչում էր **Սուրբ Վարդան**: Այն նշվում էր գարնանը և աշնանը՝ որպես սրբի ծննդյան ու մահվան ժամանականշան: Այդ անվամբ վայր նշվում է Հայաստանի տարածքում՝ Ուտիք աշխարհի Գարդմանաձոր գավառում և նույնանուն գյուղ Գր. Խալաթյանցը տեղադրում է Արցախ աշխարհում[2]: Սա թերևս անվան ստուգաբանության վարկածներից մեկն է:

Այն, որ **Վըրթնաշատ**-ը հին բնակավայր է, հաստատում է նաև լեզվական տեղեկանքը. այդ բնականվան բաղադրիչների մինչտեղան-վանական իմաստները մթագնված են, բաղադրիչների տարորշումը միանշանակ չէ, և նրանում, բնականաբար, ավելի վառ է տեղանվանական էությունը:

Ներկայիս **Վարդաշատ**-ը վերանվանում և հնչողական նմանությամբ վերականգնված, գրականացված ձև է՝ զուրկ պատմական հիմքից: Գրեթե բոլոր դեպքերում, երբ ստույգ չէ կամ անտեսվում է պատմական փաստը, և տեղանվան ու նրա բառական նշանակության միջև խզված է կապը, տեղանվան բացատրությունը կատարվում է բառիմաստի պարզ, երբեմն կամայական վերլուծությամբ ու վերականգնմամբ:

Շատ բաղադրիչով այսօր ունենք նորանուն **Ծաղկաշատ** գյուղը, որը պատմական **Վաքա/Վահկա/** գյուղն է[3]: Նույնանուն գյուղաքաղաք կար Կիլիկիայում՝ Ադանայի նահանգի Քոզանի գավառում, բերդ և գավառակ՝ Լեռնային Կիլիկիայում: Արցախյան **Վաքան** վերանվանվել էր **Ղշլաղ**, որ նշանակում էր **ավան, բնակատեղի**. մոնղոլները Արցախում ***կիշլակ*** են անվանել մեծ ու կենտրոնական բնակավայրերը: Սերգեյ Մելքումյանը նշում է, որ ներկայիս գյուղը ձևավորվել է 17-րդ դ. 70-ական թթ.[4]: Սլավա Սարգսյանն էլ հաստատում է, որ դեռևս 1667թ. հիշատակվող **Վաքան** Ղշլաղի նախկին անվանումն է, և ներկայիս գյուղը ձևավորվել է մոտակայքում գտնվող **Վաքա/Վահկա/** բնակավայրից վերաբնակության հաշվին[5]: Ներկայումս այն վերանվանված է **Ծաղկաշատ:**

---

[1] *Տե՛ս նույնը, էջ 174:*

[2] *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հակոբյան Թ., հ. 4, Ե.1986, էջ 777:*

[3] *Տե՛ս **Ս.Սարգսյան**, նշված աշխ. էջ 69 :*

[4] ***Ս.Մելքումյան**, Լեռնային Ղարաբաղ, Ե., 1990,էջ 138:*

[5] *Տե՛ս **Ս.Սարգսյան**, նշված աշխ. էջ 69:*

Արցախի բոլոր բնակավայրերն էլ ծաղկաշատ են, ու այսպիսի անվանադրումը տեղանվանական համակարգում պայմանական ու պատահական է դիտվում:

Այս բնականվան նորակոչումն է հաստատում նաև այն, որ երկու բաղադրիչների մինչտեղանվանական իմաստներն էլ ընկալելի են ու հեշտությամբ բաղադրելի՝ **ծաղիկ+շատ**/. վերջինս, բնականաբար, ***առատ*** նշանակությամբ:

Շատ բաղադրիչով բնականուն առկա է նաև Հադրութի շրջանում՝ **Արևշատ** անվամբ: **Արևշատ** գյուղի պատմությունն սկսվում է 18-րդ դարից[1]: Սլավա Սարգսյանը նշում է, որ գյուղն այդպես անվանակոչվել էր լեռնանունից, որը 19-րդ դարում կրում էր նաև *Արգյունաշ* անվանումը[2]՝ *Արեգդեմ* նշանակությամբ ու այդ անվան ձևափոխությամբ[3]: Պատմական մի շրջանում՝ խորհրդային տարիներին, այն վերանվանվել էր **Դոլանլար**: Պարսկերենում *դոլան* նշանակում է լեռան անցք[4], տարբեր լեզուներում այն որպես տեղանիշ միավոր ունի *հարթավայր, ցածրադիր տարածք, լեռան գոգ, հարթավայր, իջվածք* նշանակությունները[5], որոնք համապատասխանում են գյուղի աշխարհագրական բնութագրին: 1962թ. օգոստոսի 22-ի՝ աշխատավորների դեպուտատների Հադրութի շրջսովետի գործկոմի N 182 որոշմամբ առաջարկվում էր գյուղը վերանվանել Նորակերտ[6], որը սակայն չի ընդունվում և չի հանրայնանում: Անկախության շրջանում՝ 1998թ. հունիսի 26-ի ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՕ-15 օրենքի համաձայն՝ գյուղն անվանվում է **Արևշատ**, որն իր նշանակությամբ գրեթե նույնանում է պատմական *Արգունաշ/Արևգունաշ-Արեգդեմ/* անվանը և վերջինիս նորակերտ վերախմբագրումն է՝ **շատ**՝ առատ նշանակությամբ:

Թեպետ Արցախի բնականվանացանկում **շատ**-ով բաղադրված կառույցները սահմանափակ են, այնուամենայնիվ այն կիրառական է և կենսունակ որպես տեղանվանակերտ մասնիկ: Բայց պիտի ընդգծել, որ Արցախի բնականվանակազմության մեջ *քաղաք* իմաստով **շատ**-ի տեղանվանակերտ գործառույթը մարած է, և նոր անվանումները փաստում են, որ *առատ* նշանակությամբ գործառվող համանուն միավորի կենսունակությունն է ակտիվանում:

Իսկ ահա իրանական ծագման **-šen**- բառարմատը առավելապես հաճախական և ակտիվ իմաստագործառական բնութագիր ունի: Մայրենի

---

[1] *Տե՛ս **Ս.Մելքումյան**, նշված աշխ. էջ 267:*

[2] *Свод статистических данных, о населении Закавказского края, ч.IV,Материалы для изучения экономического быта господарственных крестьян Закавказского края, т.IV, Тифлис, 1886, стр. 334*

[3] ***Ս.Սարգսյան**, Արցախի բնակավայրերը, Երևան, 2018, էջ 102:*

[4] *Տե՛ս **Э. Мурзаев**, նշված աշխ., էջ 186:*

[5] *Տե՛ս նույնը, էջ 185:*

[6] *ԼՂՀ պետական արխիվ, ֆ.1, ց.1, գ. 17:*

լեզվում՝ իրաներենում, այն ունի *բնակատեղի* իմաստը[1]: Արցախի բնականվանակազմություն մեջ *շեն*-ը ամենաակտիվ տեղանվանակազմիչ ձևույթն է: Հիմնականում հանդես է գալիս տեղանվանական բարդություններում՝ որպես երկրորդ բաղադրիչ: **Շեն** բաղադրիչի տեղանվանակերտման կենսունակության ապահովման կարևոր պայման է նաև մի կողմից՝ բարբառային բառաշերտում **շեն** բառի իմաստային նեղացումը՝ **գյուղ** նշանակությամբ, մյուս կողմից՝ իմաստային ծավալումը՝ **բնակավայր** նշանակությամբ: Արցախի բնականվանացանկում /հին ու նոր/ **շեն**-ով բաղադրված շուրջ քառասունհինգ բնականուն կա: Յուրաքանչյուրն իր կենսագրությունն ունի, և ենթակա է առանձին քննության: Ընդհանրացնելով՝ կարող ենք հաստատել, որ մի շարք բնականուններում **շեն**-ի *բնակավայր* մինչտեղանվանական նշանակությունն աստիճանաբար մթագնվում է, ու բարդությունը բաղադրիչներով վերլուծելը կամ բացատրելը դառնում է աննպատակահարմար, ինչպես՝ **Խոնաշեն, Բերդաշեն, Մաճկալաշեն, Սխտորաշեն, Սարուշեն, Սպիտակաշեն**, մինչդեռ **Մաղաթաշեն, Մյուրիշեն, Սարգսաշեն, Մարտունշեն, Սեյդիշեն, Վազգենաշեն, Միխթարաշեն և այլ** բնականուններում վերականգնելի է *գյուղ* մինչտեղանվանական նշանակությունը, այսինքն՝ նշյալ անձանց կողմից հիմնադրված կամ նրանց պատվին անվանակոչված գյուղ:

Հատկանշելի է՝ եթե **շեն** եզրն առդրվում է հատկանվանը/ անձնանուն, մականուն, տոհմանուն/, այդ դեպքում **շեն**-ը՝ որպես բառարմատ գիտակցելի է մնում ու պահպանում է իր բառական նշանակությունը, իսկ եթե հասարակ անվանն է բաղադրվում, ապա մեծանում է նրա բառական իմաստի՝ ածանցականի վերածվելու՝ ապանյութականանալու հնարավորությունը:

Շեն մասնիկով բնականվանական կազմությունները հասցեագրվում են տարբեր ժամանակների, բայց նրանց գործածության հաճախականությունը և մեծ ակտիվությունը առավել նկատելի էր ֆեոդալական հասարակարգի, կալվածատիրական ժառանգորդության ժամանակաշրջանում:

Հաշվի առնելով այդ եզրերի գործառական հնարավորությունները՝ կարող ենք նշել, որ թե՛ **շատ**-ը, թե՛ **շեն**-ը Արցախի տեղանվանական համակարգում կենսունակ են և արտադրողական՝ նոր տեղանուններ կերտելու տեսանկյունից: Ու թեև դրանք որոշ տեղանվանա-կազմություններում դեռևս պահպանում են իրենց բառական նշանակությունը, բայց ակնհայտ է այն իրողությունը, որ քննվող համակարգում այդ բառամիավորները ածանցական նշանակությամբ են կիրառվում՝ որպես տեղանվանակերտ բաղադրիչներ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ. դոցենտ Հ.Ս. Ղազարյանը:

[1] *Տե՛ս* ***Գ. Ջահուկյան****, նշված աշխ., էջ 513:*

ՀՏԴ 81`37
Լեզվաբանություն

Մ. ՔՈՒՄՈՒՆՑ
բ.գ.թ., դոցենտ (Գորիս)
e-mail: prof1972@mail.ru

ԱՆԳ>(Ա)ԱՆԳԵՂ (NERGAL -’ЕРГЕ́Л) «ԱՆԳՂ», ԲԾԻԾ, ՊԻԾԱԿ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անգ>(Ա)անգղ *բառին վերաբերող ուսումնասիրությունները շատ են: Հեղինակների մի մասը կարծում է, որ Անգեղ բառի հիմքում ընկած է Ան - գեղ «տգեղ» բառը: Սակայն կարծում ենք, որ Գորիսի բարբառում պահպանված* ***անգ*** *արմատից են* ***անգ*** *«բերան, ծնոտ»,* ***անգղ*** *«ցին»,* ***անգ*** *«ունկ, կանթ» բառերը, ինչպես և Անգեղ հատուկ անունը, ինչն էլ նկատի են ունեցել Մ. Խորենացին և Աստվածաշնչի թարգմանիչները:*
Բծիծ, պիծակ *բառերը հանգամանալից ուսումնասիրված չեն: Կարծում ենք, որ Սյունիք-Արցախ բարբառային տարածքում պահպանված* ***պըտէզնը*** *//* ***պըծէզնը*** *//* ***պիծէզնը*** *բառերի հիմքում ընկած է* ***բծիծ *bhei-*** *«մեղու, ճանճ», ավելի ընդհանրական՝ «ինչ-որ միջատ» իմաստներով բառը:*
Բանալի բառեր` *անգ, անգղ, Անգղ, ծնոտ, Մ. Խորենացի, ստուգաբանություն, Գորիսի բարբառ, Սյունիք-Արցախ բարբառախումբ, բծիծ, պիծակ, մեղու:*

М. Кумунц

ЭТИМОЛОГИЯ СЛОВ АНГ>[А]АНГЕХ (NERGAL-’ЕРГЕ́Л) «ГРИФ» (ԱՆԳ>(Ա)ԱՆԳԵՂ), БЦИЦ, ПИЦАК «ПЧЕЛА, МУХА» (ԲԾԻԾ, ՊԻԾԱԿ)

Есть много исследований слова ***анг>[А]ангех (Անգ>(Ա)անգղ).*** *Часть авторов считает, что слово* ***[Торк] Ангех (Անգեղ)*** *происходит из корня* ***Ан-гех (Ան–գեղ)*** *«некрасивый». Однако считаем, что слова* ***анг*** *(****անգ****) «рот, челюсть»,* ***ангх*** *(****անգղ****) «гриф»,* ***анг*** *(****անգ****) «ушко, ручка», а также собственное имя* ***Ангех (Անգեղ)*** *происходят из корня* ***анг*** *(****անգ****)****,*** *сохранившегося в диалекте Гориса, что и имели в виду М. Хоренаци и переводчики Библии.*
Слова ***бциц (բծիծ), пицак (պիծակ) «вошь, оса»*** *детальноне изучены. Считаем, что сохранившиеся в диалектах территории Сюник-Арцах слова* ***пытезны*** *||* ***пыцезны*** *||* ***пицезны*** *(****պըտէզնը*** *||* ***պըծէզնը*** *||* ***պիծէզնը)*** *происходят из корня* ***бциц «вошь»*** *(****բծիծ****)* ****bhei-*** *«пчела, муха», всеобщее значение «какое-то насекомое».*
Ключевые слова: *анг (рот, челюсть), гриф, [Торк] Ангех, челюст, М. Хоренаци, этимология, диалект Гориса, Сюник-Арцах диалектная лексика, вошь, оса, пчела.*

M. Kumunts

ETYMOLOGY OF WORDS ANG>[A]NGEGH (NERGAL-'ЕРГЕ́Л) «VULTURE» (ԱՆԳ>(Ա)ԱՆԳԵՂ), BCIC, PICAK «LOUSE, WASP» (ԲԾԻԾ, ՊԻԾԱԿ)

There are many studies about the word ***ang>[A]angegh (Անգ>(Ա)անգղ).*** *Some authors think, that word* ***[Tork] Angegh (Անգեղ)*** *is based on the word* ***an-gegh (Ան–գեղ)*** *"ugly". But we think that words ang (**անգ**) "mouth, chin" , anggh (**անգղ**) "glede", ang (**անգ**) "handle", also Angegh (**Անգեղ**) special name, which was meant by M. Khorenatsi and translator of Bible were originated from root ang (**անգ**) saved in dialect of Goris. Words* ***bcic (բծիծ)*** *«louse» and* ***picak (պիծակ)*** *«wasp» are not studied in detail.*

We think that words ***pətezna || pəcezna || picezna (պըտէզնը || պըծէզնը || պիծէզնը)*** *saved in Syunik-Artsakh dialectical area are based on word* ***bcic*** *«louse» (**բծիծ**) ***bhei-** "bee, fly", more generally in the sense of "some insect".*

Keywords. *Ang, vulture, Anggh, chin, M. Khorenatsi, etymology, dialect of Goris, Syunik-Artsakh dialectical group, louse, wasp, bee.*

Մուտք

Սյունիք-Արցախ բարբառային տարածքում պահպանված **անգ** թռչնի և **բծիծ, պիծակ** միջատների անվանումների վերաբերյալ բառաքննական և ստուգաբանական աշխատանքներում հաճախ պատշաճ ուշադրության չեն արժանացել բարբառային ձևերը և նրանց արտահայտած իմաստները: Այնինչ, այս և ընդհանրապես համեմատական լեզվաբանության շատ հարցեր քննելիս կարելի է օգտվել բարբառներում պահպանված հարուստ նյութից, որ արձանագրված չեն մատենագրական աղբյուրներում: Սույն աշխատանքում ստուգաբանական փորձ է արվում **անգ>(Ա)անգղ** և **բծիծ, պիծակ** կենդանիների անունների շուրջ մատենագրական, բարբառային տվյալների հենքով կատարված ուսումնասիրությունների բաղդատմամբ:

Անգ>[Ա]անգղ

Անգղ || անգ || անկ թռչնի անվան տարբերակների վերաբերյալ բավականին ուշագրավ ուսումնասիրություններ կան, իսկ **Անգեղ** աստվածության շուրջ հայ և օտար հեղինակների կողմից կատարված ուսումնասիրությունների շրջանակը այնքան է մեծացել, որ այլևս համահավաք աշխատանք կատարելը և շրջանառված կարծիքների մասին մեկնաբանություններ տալը գրեթե անհնար է դարձել:

Մատենագրական տեղեկություններ և վկայություններ

Հայ մատենագրության մեջ **անգ** արմատը առանձին հանդիպում է տարբեր հեղինակների մոտ: ՆՀԲ-ն **անգ || անկ** նշում է «անկաւոր, պատեհ,

պատշաճ»[1], Ռ. Ղազարյանը **անկ** հնչյունախմբով նշում է համանուններ՝ **անգ || անկ**՝ 1. «վայելուչ, հարմար», 2. «ունեցվածքից, պատվից զրկված, ընկած»[2]. «Սկիզբն արասցո՛ւք պատմել քեզ համառօտ բանիւ՝ որ ինչ մեզ **անգ** է՝ և քեզ տեղեկութիւն տալոյ բաւական, և զայլն այլում թողցուք ժամու»[3], «…վասն զի այն գուժիցն և դժնէիցն է **անգ**, որք ժպրհելով ժամանեն ի պատասխանիսն փութալ իբրև յաստուածաւանդն գտեալ տախտակի լուսաբեր մերոյն աւետաբեր տառի»[4]: **Անգ || անգղ || անգեղ** «թռչուն» իմաստով՝«և **անգղ**, և ցին, և որ ինչ նման իցէ նոցա» (Ղև 11[14]) «և զցին և **զանկղ**, և որ ինչ նման է նոցա» (Բ Օր 14[13]) «քո՛ հրամանաւ վերանայ .... **անկղ** ի վերայ բունոյ իւրոյ» (Յբ 39[27])[5]:

Անգ հնչյունախմբով հայերենում տարբեր կազմություններ կան, այդ թվում՝ **անգ-եղ**: Գրաբարի աղբյուրներում հանդիպում են՝ **անգեղ || անգղ** «1. ունկն կամ ունկունք ամանոց, 2. ճարմանդ», անգեղ «տգեղ», **անգեղաղէշ, անգեղեայ, անգեղեցիկ «անգեղեցիկն**, գ. (յունաբանութեամբ) 1. անգեղեցկութիւն: 2. անտեղի՝ անյարմար՝ անպատշաճ լինելը, անտեղութիւն»[6], **անգեղեցկափորձապէս, անգեղեցկութիւն** և այլն:

Ստուգաբանական տեսակետներ

Թեմայի շուրջ ասելիքը չծանրաբեռնելու նպատակով չենք փորձի վերլուծել մինչև օրս եղած այն բոլոր տեսակետները, որոնց մասին արդեն տարբեր առիթներով գրվել է, բայց նշենք, որ ուսումնասիրողներից շատերը **(Ա)անգեղեայ (Տորք)** բառի մեկնությունների համար հիմք են վերցնում ոչ թե **անգ (-ղ, -եղ)**, այլ **(ան-) գեղ** արմատը[7]: Առանձնացնենք ստուգաբանություններից մեկը: Ա. Պետրոսյանը **Անգեղ** հատուկ անունը բխեցնում է «տես-» արմատից. «Անգեղ անունը մեկնաբանում է [Մ. Խորենացին] որպես «տգեղ»՝ ան-գեղ հնդեվրոպական *ņ- ժխտականով

---

[1] ***Գ. Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ. Ասգերեան***, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1836-1837, 2-րդ հրատ. (2 հատորով), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, հատ. I, 1979-1981, էջ էջ 124 (այսուհետև՝ՆՀԲ):*

[2] ***Ղազարեան Ռ. Ս.,*** *Գրաբարի բառարան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2000, էջ 101 (այսուհետև՝Ղազարյան, 2000):*

[3] ***Ուխտանէս Եպիսկոպոս***, *Պատմութիւն հայոց, Հատուած երկրորդ, Վաղարշապատ, տպ. Ս. Էջմիածնի, 1871, էջ 54:*

[4] *Գրիգոր Մագիստրոսի թղթերը, աշխատասիրութեամբ՝* ***Կ. Կոստանեանցի***, *Աղէքսանդրապօլ, տպ. Գէորգ Սանոյեանցի, 1910, էջ 208:*

[5] *Համաբարբառ գրաբար Աստվածաշնչի, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Երևան, 2012, էջ 103:*

[6] ***Ղազարյան,*** *2000, Էջ 77:*

[7] ***Капанцян Г. А.,*** *Историко-лингвистические работы, Изд-во АН Арм. ССР., Ер., с. 199-200,* ***Պետրոսյան Ա.,*** *Արամազդ. կերպար, պաշտամունք, նախատիպեր, Երևան, Վան Արյան, 2006, էջ 39,* ***Մովսես Խորենացի***, *Հայոց պատմություն, Թարգ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, խմբ. Գ. Սարգսյան, Երևան, «Հայաստան» հրատ., 1997, էջ 297 (ծանոթագրության մեջ), 187,* ***Hacikyan A. J.***, *The Heritage of Armenian Literature, vol. III, Wayne State University Press, 2000, p. 385 և այլն:*

*wel- «տեսնել» արմատից, «անտես, անտեսանելի» «անտեսք» և նման իմաստներով, հմմտ. գեղեցիկ, որպես «տեսքոտ»: Սա երբեմն համարվել է «ժողովրդական ստուգաբանություն», բայց, ինչպես կտեսնենք, այն կասկածի ենթակա չէ»[1]:

Մ. Խորենացին այսպես է պատկերում Տորք Անգեղին. «Իսկ զայր **խոժոռագեղ** և բարձր և **կոպտարանձն** և **տափակաքիթ**, խորակն և դժնահայեաց... Տուրք անուն կոչեցեալ, որ վասն առաւել **ժահաղիմութեանն** ձայնէին Անգեղեայ, վիթխարի հասակաւ և ուժով, հաստատէ կուսակալ արևմտից և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն»[2]: Այս հատվածը բազմից ուշադրության է արժանացել ու ստացել տարբեր մեկնություններ, որոնց նույնպես չենք անդրադառնա[3]:

Չենք կարող անտեսել Մ. Խորենացու բացատրություն-մեկնությունը. «**ժահաղիմութեան**»[4] համար Տորքին կոչել են «Անգեղեայ», բայց և հակված չենք այն տեսակետին, ըստ որի՝ **Անգեղ** բառի առաջին բացատրության մեջ «թաքնված ստուգաբանություն» կամ այլաբանական մեկնություն կա[5]: **Անգ-անգղ-Անգեղ** բառերը ստուգաբանելիս, որքանով որ նկատեցինք, հեղինակները հանգամանորեն չեն օգտագործել հնարավոր բոլոր աղբյուրները, այնինչ հայերենի բարբառներում կան տարբեր բառեր ու բառիմաստներ, որ պահպանված չեն մատենագիտական աղբյուրներում, բայց կարևոր նյութ են տալիս այս և նման հարցերի լուսաբանմանը:

Բարբառային վկայություններ և ստուգաբանական տեսակետ

Սյունիք-Արցախ բարբառային տարածքում **անգ** արմատով համանուններ կան՝ **անգ** «ցին, անգղ թռչուն» և **անգը** || **անգը** «բերան, ծնոտի՝ ականջ ձգվող վերջույթները»: Բարբառագիտական բառարաններում հանդիպում են՝ **անգ**՝ Եր. Թիֆ. «լաթի մը եզերքը», **անգ**՝ Արաբ. Զթ. (անգղ) «ամանի ունկունք, բռնելու տեղը»[6], **անկ**՝ Ար. անգ(ը)՝ Շտխ. Սս. Մշ., «ուժից ընկած, անդամալույծ, 2. ծերացած, նիհար», **անկ**՝ Աղն. «մատի ոսկորները իրար միացնող հոդ, խաղ», **անկ**՝ Ար., **անգ || անջ**՝ Մրշ. «քունք, քունքոսկր»,

---

[1] ***Պետրոսյան Ա.,*** *Որոշ հայ նշանավոր տոհմերի ծագումը ըստ ավանդական տվյալների, Բանբեր Մատենադարանի, թիվ 25, Երևան, «Նաիրի», 2018, էջ 247:*

[2] ***Խորենացի Մովսես,*** *Պատմութիւն հայոց, Armenienne de Saint-Lazare, Venise, 1841, էջ 158-160:*

[3] ***Հովհաննիսյան Լ. Շ.,*** *Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 134 (այսուհետև՝ Հովհաննիսյան 2016 Բմիմ), **Մարգսյան Գ. Խ.,** Հատուկ անունների ստուգաբանությունը Մովսես Խորենացու Պատմության մեջ, Պատմա-բանասիրական հանդես, թիվ 1-2, Երևան, 1998, էջ 115 և ուրիշներ:*

[4] *Ֆրանսերեն թարգմանության մեջ՝ **laideur** «տգեղություն»:*

[5] *Այս հարցի մասին ավելի մանրամասն տե՛ս՝ Հովհաննիսյան 2016 Բմիմ, էջ 134-136:*

[6] ***Աճառեան Հ.,*** *Հայերէն գաւառական բառարան, Լազարեան ճեմարան, Թիֆլիս, 1913, էջ 95 (այսուհետև՝ ՀԳԲ):*

Կրճ. Մրշ. «ծնոտ» և այլն[1]: Գորիսի շրջանում տարբեր կազմություններ են պահպանվել **անգ** || **անգը** || **ա̈նգʲ** || **ա̈նգʲը** տարբերակներով՝ **անգը թո̈ւլ** «շատախոս», **անգը ծօռ** «1. տգեղ, 2. բերանը ծուռ», **անգը ծըռէլ** «դժգոհություն արտահայտել, բերանը ծռել», **անգը կախ** «1. պարապ տեղը խոսող, շատախոս, 2. տգեղ», **անգը հաստ** «1. ծնոտը հաստ, 2. դժնատեսիլ» և այլն. «Կըտամ **անգըտ** կըթափէմ», «Հինչ էս **անգըտ** ծըռում վիրաս», «**Անգը** կախ ա ըրալ, մընացալ»: Նկատում ենք, որ բոլոր կազմություններում պահպանված է «բերանը, ծնոտը ծուռ» իմաստը: Արցախը **անգ** «բերան, ծնոտ» իմաստներով բառը չունի: **Անգ** || **անկ** բառի՝ բարբառումս ունեցած ձևին և իմաստին զուգահեռում ենք Գ. Ջահուկյանի վարկածը, ըստ որի՝ Տորք-ի Անգեղեայ մականվան՝ Խորենացու կողմից տրված մեկնաբանությունը որպես **ան-գեղ**՝ տգեղ, պետք է համարել ժողովրդական ստուգաբանություն. «Հայտնի չէ սրա կապը մի կողմից՝ Անգեղ դիցանվան հետ, որով Աստվածաշնչում թարգմանվել է Nergāl (հուն. Ἐργε΄λ) աստծո անունը, և մյուս կողմից՝ Անգեղ անձնանվան հետ[2]: Բարբառային տվյալներ ձեռքի տակ չունենալով հանդերձ, կարծում ենք, Գ. Ջահուկյանը ճիշտ հետևության է եկել[3]՝ հնարավոր համարելով **անգ** || **անկ** կապը **Անգեղ** և **անգղ** թռչնանվան հետ՝ բխեցնելով հ.-ե. ***ank-** «ծռել, թեքել» արմատից. «թռչունը կարող էր այսպես կոչվել ըստ կտուցի ձևի»[4]:

Սյունիք-Արցախ բարբառային տարածքում **անգ** բառին հոմանիշ է **չա̈նա̈**՝ **čāne /چانه/**, պրսկ. փոխառությունը[5], որով կազմությունների մի մասը պատճենումներ են պարսկերեն ձևերի, իսկ մյուս մասը՝ **անգ**-ով կազմությունների[6]:

Անգ բառի՝ հայերենին ցեղակից լեզուների հետ ունեցած աղերսները առայժմ բառաքննության երկրորդ պլանում ենք թողնում[7]: Թերևս առավել ակնհայտ են հուն. զուգահեռները՝ **γρϋπαίετος > γρϋπ-αίετος** «առասպելական թռչնի անուն՝ արծվանգղ», **γρυπός** «կոր, կեռ, 2. կորամեջք արծիվ, 3. կեռ կտուց, քիթ», **έπί-γρϋπος** «թեթևակի կոր, կորավուն», **κατα-**

---

[1] *Հայոց լեզվի բարբառային բառարան, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գլխ. խմբ.՝ Ա. Սարգսյան, 7 հատորով, 2001-2012), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001, հատ. Ա, էջ 60-61 (այսուհետև՝ ՀԼԲԲ):*

[2] ***Ջահուկյան Գ.,** Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 411-412 (Այսուհետև՝ Ջահուկյան ՀԼՊ):*

[3] ***Անգղ** արմատի հետ է նույնացնում նաև՝ Ն. Ադոնց և այլք (**Adontz N.,** Tarkhou chez les anciens Armeniens, Revue des e΄tudes Arme΄niennnes, tome VII, fascicule 2, Paris, 1927):*

[4] *Ջահուկյան ՀԼՊ, էջ 412:*

[5] *Ընդ որում՝ **čāne /چانه/** հ.-ե. ծագմամբ բառ է՝ ***ĝénus-**, բայց բարբառախմբին անցել է պրսկ. տարբերակը՝ չա̈նա̈. հմմտ.՝ ավեստ. **zānu**, սանս. **hánu**, լատ. **gena**, հոլ. **kin**, անգլ. **chin**, գերմ. **kinn**. հայ. **ծնոտ**, Գուր. քրդ. **چەناکە /čanāka/** || **زنج /zinǰ/** և այլն:*

[6] *Համեմատել՝ **زدن** («հարվածել») **چانه** «1. սակարկել, 2. շաղակրատել» **չանա թակէ** «1. շատախոսել, 2. սակարկել, այլն՝ **չա̈նա̈ն ծըռէլ, չա̈նա̈ն ծօռ, չա̈նա̈ն բօշ, չա̈նա̈ն կախ** և այլն:*

[7] *Առավել մանրամասն կարելի է տեսնել՝ **Pokorny J.,** Indogermanisches etymologisches Wörterbuch, I bend, München: Francke Verlag, Bern, 1959, p. 45-47 (այսուհետև՝ Pokorny 1959):*

γρϋπόομα& «քիթը արհամարհական կնճռոտել, վեր քաշել»[1], որ կարող են համեմատվել Ս. Գրքի սեմական **Nergāl** աստծու հունական տառադարձված ձևին՝ իմաստային պատճենմամբ՝ **’Εργε΄λ**, որ «զարմանալի կերպով թարգմանված է Անգեղ»[2], և որի ծագումը Հ. Աճառյանը թողել է անհայտ:

Գալով Մ. Խորենացու՝ բառի մեկնությանը, կարծում ենք՝ հեղինակը նկատի է ունեցել ոչ թե **գեղ > ան-գեղ** կազմությունը, այլ հենց **անգ || անգղ || անգեղ** արմատը և նրանից բխող իմաստները, որ կարող են առնչվել հ.-ե. ***anko-(lo)** ***ank-**, ***ang-** արմատներին, այդ թվում՝ **անգ || անգղ** թռչուն, որ ևս **խոժոռ (ագեղ), կռպ[ի]տ (արանձն), տափակաքիթ, ժահաղի/եմ (ութեանն)** է և առասպելներում, համեմատվող անուններում պատկերվում է հենց Մ. Խորենացու նկարագրածով[3]: Քիչ հավանական է, որ Մ. Խորենացուն ծանոթ չեն եղել **անգ || անգղ** || **Անգղ** բառն ու նրա՝ հիշյալ շրջանի խոսակցականում տարածված ձևիմաստային տարբերակները, այլև ծագումնաբանական նշանակությունը: Նկատում ենք նաև, որ Մ. Խորենացու աշխատություններում խնդրահարույց շատ բառեր ու կազմություններ հաճախ լուսաբանվում են Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարում պահպանված փաստական նյութով:

Այս և նման քննություն անցկացնելիս, կարծում ենք, չպետք է անտեսել ոչ միայն լեզվաաշխարհագրական, տոհմանվանական, պատմահա-մեմատական, այլև բարբառային և հարցին առնչակից այլ տվյալներ, որ կարելի է գտնել բառը կրող հանրության լեզվամշակույթի մեջ:

Բծիծ, պիծակ>պըտէզնը

(բառաքննություն և ստուգաբանություն)

Պըտէզնը || պըծէզնը || պիծէզնը «մսի վրա ճանճի դրած ձվերից առաջացած որդներ», այստեղից՝ **պիզիզնել**՝ «1. ձու դնել, 2. մզլել, 3. քայքայվել, մաշվել», բառերը լայն տարածում ունեն Սյունիք-Արցախ բարբառային տարածքում: Մատենագրության մեջ այս իմաստով հանդիպում է **բծիծ**, որ ՆՀԲ-ն նշում է «ոջիլ ծնեալ ի բծից, կամ յաղտեղութեանց մարմնոյ»[4] իմաստը. «…ոմն աղէքսանդրացի կացեալ ի տէղւոջ ուրեմն յարևու, քաղելով ի ձորձոց իւրոց զբրտնածին **բծիծսն**…»[5]: Բնագրային օրինակից հասկանում ենք, որ խոսքը ոչ թե կոնկրետ «ոջիլ», որ

---

[1] ***Дворецкий И.Х.*** *Древнегреческо-русский словарь, том 1, Государственное издательство иностранных и национальных словарей, Москва, 1958 с. 334, 605, 885.*

[2] ***Աճառեան Հ.,*** *Հայոց անձնանունների բառարան, Երևան, Երևանի Պետական Համալսարան, 1942, էջ 157:*

[3] *Այս մասին կարելի է տեսնել՝* ***Belmonte J. L.,*** *Nergal: The shaping of the god Mars in Sumer, Assyria, and Babylon. A dissertation submitted to the University of Wales Trinity Saint Davidin fulfilment of the requirements for the degree of Master of Arts in Cultural Astronomy and Astrology, 2017 (http://cura.free.fr/13+/1712belmonte.pdf. վերջին այցը՝ 3.08.2019):*

[4] *ՆՀԲ, էջ 492:*

[5] ***(Nonnos.)****, Die scholien zu fünf Reden des Gregor von Nazianz (herausgegeben von* ***Agop Manandian****,), Marburg Hessen, “N. G. Elwert’sche erlagsbuchhandlung”, 1903, p. 36.*

աղտածին ինչ-որ «միջատների» մասին է: Չենք կարող բացառել բառի՝ հնարավոր ընդհանրությունները **բիծ** (-ի, -ի-ա, -ո)՝ «մարմնի վրայի արատ, աղտ, անմաքուր», արմատի հետ, որով բազմաթիվ կազմություններ կան հայերենում:

Կարծում ենք՝ **բծիծ՝ բծծ-ի** կամ **բծծ-ոյ**, **պիծակ (-ի-ա)՝ պըծ-էզնը** բառերը նույն ծագմամբ են և խմբավորվում են հ.-ե *** bhei-** «մեղու, պիծակ» արմատի ներքո **n-, k-, t-** ընդլայնումով[1] «մեղու, ճանճ», ավելի ընդհանրական «ինչ-որ միջատ» իմաստներով. հմմտ.՝ լատշ. **bi-te**, լիտ. **bì-tė || bitìs** «մեղու», գերմ. **bi-ene**, անգլ. **bee**, հին ռուս. **бъчела** և այլն: Վ. Դալյան համարում է **жужжать, бучать> бчела, бжела**[2] ձևերից առաջացած, որ նախապես եղել է **бъчела**, ապա **ъ**-ի անկումից՝ **б>ч**[3]: **Բծիծ** բառահոդվածի տակ Հ. Աճառյանը նշում է միայն ՆՀԲ-ի մեկնությունը՝ «կեղտ» բառից, ապա «Գավառական» բաժնում հիշատակում բառի վկայությունը միայն Արցախում[4]: ՀԱԲ-ում առկախ է մնում նաև **պիծակ**՝ «մի տեսակ իշամեղու», բառի ծագումը, որին հոմանիշ է **ձիաստաց**՝ «ձիապիծակ»[5] այլն՝ «մեղու կամ պիծակ, կամ կրէտ սև թևաւոր, որ յաղբս լինի»[6]. «…ըստ այսմ և զձիաստացն ի նեխեալ մարմնոց ձիոյ ծնանել …»[7]: Լ. Հովհաննիսյանը այս բառի ուսումնասիրության մեջ նշում է վկայությունը Աստվածաշնչում և այլն համարում «հայ թարգմանչի ստեղծած բառ»[8]:

Կարծում ենք, որ հ.-ե. ***bhei-** հայերենին նույնպես աճականով է անցել՝ ***bhei-t** կամ ***bhei-ḱ**, որ գրաբարում տվել է **բիծ**, կրկնությամբ՝ **բիծ-իծ**: **Պիծ-ակ** բառը, ենթադրելի է, բարբառային տարբերակ է գրաբարում՝ **բ>պ՝ -ակ** ածանցով: Սյունիք-Արցախը **մեղու** բառը չունի, դրա փոխարեն գործածվում

---

[1] *Pokorny 1959, p. 116.*

[2] ***Владимір Даля,*** *Толковый словарь живаго великорускаго языка, томъ третій, С.-Петербургъ-Москва, "Тип. М. О. Вольфа", 1882, с. 567.*

[3] ***Цыганенко Г. П.,*** *Этимологический словарь Русского языка, Киев, "Радянська школа", 1989, с. 433-434.*

[4] ***Աճառյան Հր.,*** *Հայերեն արմատական բառարան (4 հատորով, 2-րդ հրատարակություն), Երևան, Երևանի համալսարանի հրատ. (առաջին հրատարակությունը՝ 1926-1935, 7 հատորով), 1971-1979, հատ. 1, էջ 156 (այսուհետև՝ ՀԱԲ):*

[5] *ՀԱԲ 4, էջ 80:*

[6] ***Ամալյան Հ.,*** *Հայ միջնադարյան բառարանագրությունը, Երևան, «Երևանի առաջին տպարան», 2007, էջ 256:*

[7] *Այստեղ Ա. Բագրատունին, ըստ էության, տալիս է բառի բացատրությունը. «Հասարակաց կարծիք էր երբեմն արևելից, և ոչ անտեղի ինչ, թէ ամենայն ազգի ազգի բզիզք և ժիժակք և ճճիք և զեռունք՝ ի գիճական փտութենէ , այսինքն՝ ի խմորելոյ և եռալոյ և նեխեալ կամ այլայլեալ և ապականեալ նիւթոցն ծնանիցին: Զայս և **զմեղուաց** կարծէին , յարջառոյ սպանելոյ և նեխելոյ, ի ծնունդ յառաջագայիլ պարուց նոցա որ և եգիպտացւոց հնարագիտութեան գիւտ Համբաւեալ էր». **Պորփիոսի Վիրգիլեայ Մարովնի**, Մշակականք (թարգմանությունը և մեկնությունը՝ Ա. Բագրատունու), Վենետիկ, 1847, էջ 105:*

[8] ***Հովհաննիսյան Լ. Շ.,*** *Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2016, էջ 7: Բերվում են նաև բառի ռուս. **шершней,** հուն. **σαικηφσ** և լատ. **crabrones** զուգահեռների հոգնակի տարբերակները:*

է **մըղրաճանջ**: **Պըտէզնը || պրծէզնը || պիծէզնը**, որ կազմված է **պիծ** և **եզն** բաղադրիչներից՝ **եզան պիծ**, բառակազմական ձևատիպերն ունի բարբառախմբում՝ **շընաճանջ, մըղրաճանջ, ծիյաճանջ, պըրթաճանջ:** Նշված կազմությունների համաբանությունից է նաև հայերենի **իշամեղու** բառը: Այս երևույթին առնչվող կազմություններ են՝ **ճանջակ անէլ** «ճանճերը գլխով կամ պոչով քշել», **ճընջըփըսօկ** «1. ճանճի կծած տեղը, 2. կենդանու մաշկի վրա ճանճի դրած ձվերից գոյացած խուլը»: **Պիզիզնէլ** բառում երկրորդ **զ**-ի առնմանությամբ **ծ**-ն դարձել է **զ**, **պըտէզնը** տարբերակում **ծ-տ** շփոթության դեպքն է, հմմտ.՝ **լըպըրծուն-լըպըրտուն**, կամ շփական հնչյունների տարնմանությամբ է առաջացել **ծ-զ**:

Չնիմաստային նմանություններ կան պրսկ. **piç /چ ـ/** «ոլորան, պտույտ», թյուրք. piç «աղավաղում», Սյունիք-Արցախ բարբառախմբում՝ **փըչէչ** «կեղտից թաղկած», այլև քրդ. **vizik, pişo**, պրսկ. **pāşe /شه ـ/**«մոծակ», **pis /پس ـ/** «բիծ, պեպեն, կեղտոտ, պիղծ», թյուրք. **pis** «խայտաբղետ», բարբառախմբում **փիս** «վատ» բառերի միջև: Այս բոլորը թյուրք. անցած փոխառություններ են: Եթե անգամ ընդհանրություններ կան հայերեն և պարսկերեն բառերի միջև հիմքային ձևերում, այնուամենայնիվ, կարծում ենք, բարբառախմբին նույնպես պարսկերենից անցած փոխառություններ են:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ. դոցենտ Հ.Ս. Ղազարյանը:

ՀՏԴ 81՝28
Լեզվաբանություն

Լիլիթ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Բ. գ. թ., դոցենտ, Վանաձորի պետական համալսարանի դասախոս
e-mail: lilitpetrosyano1977@mail.ru
Լալա ԽԱՉԱՏՐՅԱՆ
Արարատի Շահումյան գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ

ՈՒՐՄԻԱՅԻ ԲԱՐԲԱՌԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Մայրենի լեզվի ուսուցման առանցքային հարցերից է լեզվի կառուցվածքայնության գիտակցումը և ճիշտ կիրառությունը այնպես, որ աշակերտները կարողանան մտապահել իրենց կառուցած գաղափարները՝ զարգացնելով մտածողության արդյունավետ հմտություններ: Բարբառախոս վայրերում աշակերտների հիմնական մասի համար գրական հայերենի կիրառությունը նոր երևույթ է, որ նրանք պետք է սովորեն և կիրառեն իրենց համայնքային կյանքից դուրս: Գրական հայերենի ուսուցումը արդյունավետ է լինում հատկապես այն ժամանակ, երբ նոր գիտելիքները հենվում են աշակերտների լեզվամտածողության վրա:

Բարբառախոս վայրում մայրենիի ուսուցչի՝ բարբառին տիրապետելը հնարավորություն է տալիս ուսուցչին կանխագուշակել նրանց անհանգստությունները, մտածմունքները՝ հիմք ընդունելով նրանց խոսքի կառուցվածքայնությունը:

Առաջարկում ենք աշակերտների մեջ դաստիարակել սեր սեփական բարբառի հանդեպ և մայրենիին զուգահեռ ուսուցանել նաև բարբառի գաղտնիքները, քանի որ դրանք մեր ազգային հարստություններից են:

Բանալի բառեր՝ *մայրենիի դասագիրք, ժողովրդական լեզվամտածողություն, ազգային հարստություն, բարբառային և գրական տարբերակներ, ներլեզվական թարգմանություն*

Л.Петросян, Л.Хачатрян

ХАРАКТЕРИСТИКА УРМАЙСКОГО ДИАЛЕКТА И ПРОБЛЕМА ЕГО СОХРАНЕНИЯ

Одним из основных вопросов обучения родному языку является осознание структуральности языка и правильное применение, чтобы ученики смогли бы запоминать построенные мысли, развивая эффективные навыки мышления. В диалектных местностях для большинства учеников применение литературного языка новое явление, которому они должны учиться и применять вне общинной жизни. Обучение литературному языку особенно эффективно, когда новые знания опираются на лингвомышление учеников.

Владение диалектом позволяет учителю, основываясь на структуру

речи учеников, в диалектной местности прогнозировать их тревоги, мысли.
*Коммуникационные навыки развиваются благодаря занятиям, полных народных слов и выражений. Ученики учатся как можно яснее и точнее выражать свои мысли и чувства. Даже на занятиях по математике преподаватель, руководствуясь конструктивным обратным связем, то еть успешным пересказом, убеждается, что ученики понимают его. Ученики своими словами пересказ*ывают суть проблемы, не подражая выразительным средствам и изложения учителя.
Предлагаем привить в учениках любовь к собственному диалекту и параллельно родному языку изучить также тайны диалекта, так как они являются нашим национальным богатством.
Ключевые слова: *учебник родного языка, народное лингвомышление, национальное богатство, диалектные и литературные варианты, внутриязыковой перевод.*

L.Petrosyan, L.Khachatryan

CHARACTERISTICS OF URMIA DIALECT AND THE PROBLEM OF ITS PRESERVATION AT SCHOOL

One of the key issues of native language learning is the understanding and proper use of language structures so that students can memorize the ideas they form by developing effective thinking skills. The use of literary Armenian for the majority of students in places, where people speak in their dialects, is a new phenomenon that they must learn and practice outside their community life. Literary Armenian teaching is effective especially when new knowledge relies on pupils' linguistic thinking.
In the place, where people speak in different dialects, the native language teacher, who is cognizant of the dialect, has the opportunity to anticipate their concerns, thoughts, on the basis of the structure of their speech.
Communication skills are developed through collaborative classes full of folk words and expressions. Pupils learn to express their thoughts and feelings as clearly and precisely as they can. Even during Math classes, guided by constructive feedback, i.e. the success of renarration, the teacher ensures that pupils have understood the teacher. The pupils renarrate the essence of the problem in their own words without imitating the teacher's expressive means and narration.
We suggest that you should instill love for their own dialect in pupils and teach the secrets of the dialect in parallel to the native language as they are our national wealth.
Keywords. *a textbook of native language, folk linguistic thinking, national wealth, dialectal and literary variants, interlaced translation.*

ՀՀ Արարատի մարզում այսօր կենդանի է Ուրմիայի կամ Խոյի բարբառը, որը Ա. Ղարիբյանի բնորոշմամբ պատկանում է ***u*** ճյուղին [3, 97]: Հայ բարբառագիտության մեջ Ուրմիայի բարբառը առանձին ուսումնասիրության է ենթարկվել Մ. Ասատրյանի կողմից: Լեզվաբանը նախընտրում է կիրառել «Խոյի բարբառ» տերմինը, քանի որ «այդ բարբառով խոսողների հիմնական մասսան գաղթել է Խոյից»: Սակայն կիրառում է Ա. Ղարիբյանի անվանադրումը՝ «տերմինների մեջ շփոթություն չառաջացնելու նպատակով» [1, 16]: Առաջնորդվելով Գ.

Ջահուկյանի՝ հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման հիմունքներով՝ մասնավորապես ուսումնասիրել ենք Արարատի մարզի Շահումյան գյուղի խոսվածքի հնչյունական և քերականական առանձնահատկությունները [5, 45-103]:

1. Բաղաձայնի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ ձայնեղություն (բ, գ, դ, ձ, ջ > պ, կ, տ, ծ, ճ), օրինակ՝ *պերան, տանակ, կ'ալ, ծմեռ, ճառթել* և այլն:

2. Ր-ից հետո և միջձայնավորային ու բառավերջի ձայնավորային դիրքերում գտնվող ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ խլություն (բ, գ, դ, ձ, ջ > փ, ք, թ, ց, չ), օրինակ՝ *պուրթ, երք, պառց, արչ, խափել, թաքավոր* և այլն:

3. Ոչ բառասկզբի շնչեղ-խուլերի ապաշնչեղության առկայություն նկատվում է *աղկատ* բառում:

4. Քմայնացած ***կ'*** ետնալեզվայինի առկայություն, օրինակ՝ *կ'յարի, կ'յառ, կ'լոխ* և այլն:

5. ***Նգն, նկն*** հնչյունակապակցությունների դիմաց ***յն*** կամ ***ն***, օրինակ՝ *կայնել, ինել, ցինել, ծունգ* և այլն:

6. Ձայնավորահաջորդ ետնալեզվային պայթականների շփականություն նախաբաղաձայնական դիրքում, օրինակ՝ *մեյմեկ, փսայվել, այհլոր, տայհտեղ* և այլն:

7. ***Տ***-ի առնմանական փոփոխություն՝ *տր* > *ռռ*, օրինակ՝ *կտրել* > *կըռռել, կոտրել* > *կոռռել* և այլն:

8. Կիսաշփականների շփականություն նախաբաղաձայնական դիրքում, օրինակ՝ *էշնել, մեշկ, ռաճիլոտ, կոշկել, աշկ, իշքան, անեսկ, տասկել խեզնել, լվասկ* և այլն:

9. Բառասկզբում ձայնավորից առաջ գրական լեզվի համեմատությամբ հավելական ***յ***-ի առկայություն ***յուր*** (ուր) բառում:

10.Բառասկզբի ***հ***-ի դիմաց ոչ առնմանական ***խ*** (***հ*** > ***խ***), օրինակ՝ *խազար, խայ, խեր, խասկընալ, խայիր, խարս, խետ, խինգ, խրվանդ* և այլն:

11.Հայերենի համար ոչ սովորական կոկորդային բաղաձայնի՝ ***կ՛***-ի առկայություն, օրինակ՝ ***կ՛***ավուրմա, ***կ՛***արիք, ***կ՛***սմաթ, ***Կ՛***ազար և այլն:

12.***Ֆ***-ի առկայություն, օրինակ՝ ***Ֆ***ոֆոռալ, ***Ֆ***այհմ, ***Ֆ***ասոն, ***Ֆ***լան, ***Ֆ***ստան:

13.Հիմանական հատկանիշներին զուգահեռ առկա են նաև սահմանափակ տարածում ունեցող բաղաձայնական հատկանիշներ, ինչպես՝ *սֆտակ* բառի մեջ առկա է պասկերեն ***բ*** > ***ֆ*** փոխանցում. *sipeda* > *սֆտակ*: Որոշ բառերում ***րհ*** հնչյունակապակցությունը հնչյունափոխվում է ***խ***-ի, օրինակ ***օխ***նել, ***ճամբախ*** և այլն:

14.Շեշտակիր ***այ***-ի դիմաց առաջին շարքի ձայնավոր (***այ*** > ***է***), օրինակ՝ *էս, էդ, էն, խեր, մեր, ախպեր, կել, լեն, ծեր* և այլն:

15.***Ույ***-ի (< ***ոյ***) դիմաց շրթնային ***օ*** ձայնավոր, օրինակ՝ *թոլ, լոս* և այլն: Սրանց զուգահեռ *խերքուր, մերքուր* բառերում ***ու*** ձայնավոր՝ առանց շեշտազրկության:

16.***Յու***-ի (< ***իւ***) դիմաց քմայնացած ***ու*** ձայնավոր, օրինակ՝ *ալուր, ախպուր, էրուն, ծուն,* բայց՝ *հարյուր* > *խայիր*: Այս հանգամաքից բխում է նաև ձայնավորների ներդաշնակության առկայությունը:

17.Միավանկ բառերի սկզբնային ***և***-ից առաջ ***յ***-ի հավելում, օրինակ՝ *յեզ, յես, յեփ* (երբ), ինչպես նաև *արի՛* > *յա՛ր*:

18.***Ը***-ի լիաձայնությունը առկա է *Ըսկո* անձնանվան մեջ, որը *Իսկուհի* բառի արտակարգ հնչյունափոխության ենթարկված տարբերակն է: Այսպես սկզբնային ***ը*** ձայնավորն առկա է նաև ***Ռ***-ով սկսվող անձնանուններում, ինչպես՝ ***ը****Ռուդիկ,* ***ը****Ռուբ,* ***ը****Ռոզ* և այլն:

19. Միավանկ բառերի սկզբնային ***ո***-ից առաջ շրթնային տարրի հավելում, օրինակ՝ ***վ****օխչ,* ***վ****օրց,* ***վ****օրփ,* ***վ****որ* և այլն:

20. Բաղադրյալ հոգնակերտ՝ «***ք***+***եր***» կաղապարով, օրինակ՝ *ախչքեր, անգշքեր, իրեսքեր, աշխրքեր* և այլն:

21. ***Է***-ով բացառական. *քաղաքէն, ծովէն, խացէն, ծծէն, աշխատանքէն* և այլն:

22.Անձնական դերանունների բացառականում և գործիականում ***մ***-ի առկայություն, օրինակ՝ *ընձմեն, քեզմեն, քեզմով, ընձմով* և այլն:

23.Դերանունների թեք հոլովաձևերում ***ի***-ի առկայություն, օրինակ՝ *ընձի, քեզի, մեզի, ծեզի*:

24.***Մ***-ով ներկա, օրինակ՝ *կարդաս եմ, կարդաս ես,* ***կարդալ ի,*** *կարդաս ենք, կարդաս եք, կարթաս են, նստես եմ, նստես ես,* ***նստել ի,*** *նստես ենք, նստես եք, նստես են*: Օրինակից պարզ է դառնում, որ ***ս*** վերջավորությունը հանդես չի գալիս եզակի թվի երրորդ դեմքում:

25. ***Ր***-ով վաղակատար, որը գումարվում է ***ի*** խոնարհիչին, օրինակ՝ *պերիր եմ, պերիր ես, պերիր ի, պերիր ենք, պերիր եք, պերիր են*:

26. Բաղադրյալ անցյալ ձևերի կազմում «ներկա ժամանակաձև + ***էր*** օժանդակ բայ» կաղապարով, ինչպես՝ *կիրեսեմ էր, կիրեսես էր, կիրես էր, կիրեսենք էր, կիրեսեք էր, կիրեսեն էր:*

27.Անցյալ կատարյալի առաջին հիմքով կազմություններ՝ բացառությամբ եզակի թվի երրորդ դեմքի, ինչպես՝ *կիրիմ, կիրիր, կիրեց, կիրինք, կիրիք, կիրին*:

28.***Ուզել*** բայով բաղադրյալ ապառնի, ինչպես՝ *կուզեմ կիրեմ, կուզես կիրես, կուզի կիրի, կուզենք կիրենք, կուզեք կիրեք, կուզեն կիրեն:*

29.Օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ***ի***-ով ձև, օրինակ՝ *աղջիկ ի, սեղան ի* և այլն:

Ներկայացված հատկանիշները քննել ենք գյուղի դպրոցի ուսուցիչների հետ՝ զուգահեռաբար պարզելով բարբառախոս վայրում մայրենիի ուսուցչի կարևոր առաքելություններից մեկը՝ **բարբառի պահպանումը**: Բարբառին տիրապետելը հնարավորություն է տալիս ուսուցչին հասկանալու աշակերտների անհանգստությունները, մտածմունքները՝ հիմք ընդունելով նրանց խոսքի կառուցվածքայնությունը, քանի որ աշակերտները հատկապես հուզված պահերին չեն կարողանում իրենց տիրապետել և

իրենց զգացմունքներն արտահայտում են մայրենի բարբառով: Այսպես են նաև կատարվում խմբային աշխատանքների ներքին քննարկումները, որոնց գաղտնի ունկնդիրն ուսուցիչն է: Հասկանալով բարբառը՝ մենք պատկերացնում ենք աշակերտների տրամաբանության էությունը, հաջորդական քայլերի ճշտությունը և ըստ այդմ էլ շարունակում ուսուցման կազմակերպումը:

Կան աշակերտներ, որոնք համառորեն շարունակում են բարբառով խոսել նույնիսկ դասի ընթացքում, այս դեպքում առաջարկում ենք ուսուցչին ոչ թե միանգամից ակնհայտ կերպով ուղղել սխալը, այլ զուգահեռ անցկացնել գրական լեզվի հետ և կատարելով ներլեզվական թարգմանություն՝ աշակերտին սովորեցնել դրա գրական համարժեքը: Բարբառային ձևերը պետք է համարել ոչ թե սխալ, այլ բարբառային, որոնց գրական համարժեքների ուսուցումը առաջարկում ենք կատարել ուսումնառության պարբերական մոդելի կիրառմամբ [2, 56-60]:

Չորրորդ դասարանում «Սասունցի Դավիթ» էպոսի ընթերցանության դասի առաջին աստիճանում ուսուցիչն աշակերտներին անսահմանափակ հնարավորություններ է ընձեռում՝ ուսումնասիրելու պատումներ՝ դրանք լսելով իրենց մեծերից: Յուրաքանչյուր աշակերտ յուրովի է պատմում էպոսը, քանի որ յուրաքանչյուր մեծ տարբեր կերպ է հիշում էպոսի բովանդակությունը: Այստեղ աշակերտները առաջադրում են բազմազան հարցեր և վարկածներ: Այս աստիճանը մանկավարժներն անվանում են «Հայտնագործում»:

Երկրորդ աստիճանում անցկացվում են «Գաղափարի ներմուծման» դասեր, որոնց նպատակն է լինում կենտրոնանալ աշակերտների հարցերի վրա և ապահովել դրանց առնչվող նոր բառերի, գաղափարների յուրացումը՝ աշակերտների հետ ամբողջացնելով էպոսի նոր պատումը:

Երրորդ աստիճանում կատարվում է «Գաղափարի կիրառում», որը եզրափակվում է «Հայտնագործում-գաղափարի ներմուծումը» բեմականացմամբ: Այսպես յուրաքանչյուր տարի էպոսի վերլուծության ժամանակ աշակերտները նորովի են ներկայացնում ժողովրդական բանահյուսությունը՝ հասկանալով դրա իմաստնությունը:

Մայրենի լեզվի ուսուցման առանցքային հարցերից է լեզվի կառուցվածքայնության գիտակցումը և ճիշտ կիրառությունը այնպես, որ աշակերտները կարողանան մտապահել իրենց կառուցած գաղափարները՝ զարգացնելով մտածողության արդյունավետ հմտություններ: Բարբառախոս վայրերում աշակերտների հիմնական մասի համար գրական հայերենի կիրառությունը նոր երևույթ է, որ նրանք պետք է սովորեն և կիրառեն իրենց համայնքային կյանքից դուրս: Գրական հայերենի ուսուցումը արդյունավետ է լինում հատկապես այն ժամանակ, երբ նոր գիտելիքները հենվում են աշակերտների լեզվամտածողության վրա: Այսպիսով զարգանում են երկիմաստ գործողություններ, և աշակերտները հասկանում են, որ մտածածը կարելի է արտահայտել

տարբեր եղանակներով: Նրանք սկսում են լեզվաբանական <<հայտնագործություններ կատարել>> և հատկապես դասամիջոցներին վիճել իրենց խոսքի ճշտության շուրջ՝ բարբառային տարբերակները համեմատելով գրական համարժեքների հետ՝ ըստ համապատասխան օրինակների:

Աշակերտներներին հանձնարարվում է նախագծման մեթոդով կազմել «Խոյի բարբառը» վերնագրով պաստառ, որը առանձին քարտերով լրացվում է ամբողջ տարվա ընթացքում բոլորի կողմից, և վերջում կազմակերպվում է պաստառի շնորհանդես, որտեղ աշակերտները ներկայացնում են իրենց հայրենի բարբառի առանձնահատկությունները՝ դրանք հիմնավորելով ժողովրդական խաղիկներով, զրույցներով, առած-ասացվածքներով, ավանդություններով: Այսպես մենք պատրաստվում ենք «Երկնքից երեք խնձոր ընկավ» հեքիաթասացության և բարբառի փառատոներին, որ կազմակերպվում է ՀՀ մշակույթի նախարարության և Հ. Թումանյանի թանգարանի աջակցությամբ [6]:

Գիտակցելով բարբառային և գրական տարբերակները՝ աշակերտները ինքնակառավարման միջոցով վերահաստատում են իրենց գիտելիքները, քանի որ նրանց տրվում է համապատասխան հնարավորություն՝ ստուգելու նոր գաղափարների և գործընթացների կիրառման աստիճանը լրացուցիչ համատեքստերում:

Մեր աշխատանքային գործունեության ընթացքում կազմակերպել ենք բանահավաքների խումբ, աշակերտներին հրահանգել ենք կատարել մեծահասակների ձայնագրումներ: Նրանք սկավառակների վրա հավաքել են բազմաթիվ հեքիաթների, առած-ասացվածքների, խաղիկների պատումներ, որոնց լսումները, հավատացնում ենք, հետաքրքրում են ոչ միայն աշակերտներին, այլ նաև մեծահասակներին: Այս եղանակով պահպանվում են հայ ժողովրդական բանահյուսության բազմաթիվ նմուշներ, որոնք կարող էին մոռացվել սերունդների հաջորդականության շրջափուլերում:

Ելնելով հավաքված բանահյուսական նյութից՝ աշակերտները հստակորեն պատկերացնում են ժողովրդական խոսքի իմաստնության գաղտնիքը: Հեքիաթներն ու ավանդապատումներն ունեն ոչ միայն դաստիարակչական նշանակություն, այլ նաև ճանաչողական: Լսելով իրենց հայտնի տեղանունների, մարդկանց մականունների և այլնի մասին՝ նրանք ճանաչում են իրենց շրջապատը, իմանում են իրենց պատմությունը:

Բարբառագիտական զուգահեռները հատկապես հետաքրքիր են ժողովրդական բանահյության հիմքով դասերի ընթացքում: Աշակերտները, կարդալով առածներ, ասացվածքներ, դարձվածքներ և հեքիաթներ, փորձում են հիշել դրանց զուգահեռները իրենց բարբառում և դրանց նշանակությունն ու իմաստնությունը իմանում են իրենց տատիկներից ու պապիկներից՝ ապահովելով սերունդների փոխադարձ կապն ու հարգանքը:

Ժողովրդական բառ ու բանով հագեցած դասերին համագործակցության միջոցով զարգանում է հաղորդակցության հմտությունը: Աշակերտները սովորում են հնարավորինս պարզ ու որոշակի արտահայտել իրենց մտքերն ու զգացմունքները: Նույնիսկ մաթեմատիկայի դասերին ուսուցիչը համոզվում է, որ աշակերտները իրեն հասկացել են՝ առաջնորդվելով կառուցողական արձագանքի՝ վերաշարադրման հաջողության գրավականով: Աշակերտները սեփական բառերով վերաշարադրում են խնդրի էությունը՝ առանց ընդօրինակելու ուսուցչի արտահատչամիջոցներն ու շարադրանքը:

Առաջարկում ենք աշակերտների մեջ դաստիարակել սեր սեփական բարբառի հանդեպ և մայրենիին զուգահեռ ուսուցանել նաև բարբառի գաղտնիքներն ու մարդկային ներաշխարհի բացահայտման հնարավորությունները, քանի որ դրանք մեր ազգային հարստություններից են:

Գրականություն

1. Ասատրյան Մանվել, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1962, 256 էջ:
2. Կառուցողական կրթության կրթության հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, «ՏիգրանՄեծ» հրատարակչություն, Երևան, 2004, 336 էջ:
3. Ղարիբյան Արարատ, Հայերեն բարբառների մի նոր ճյուղ, Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 9, Երևան, 1939:
4. Պետրոսյան Լիլիթ, Բաղդասարյան Քնքուշ, Մայրենիի ուսուցման մեթոդիկան բարբառախոս գյուղերի դպրոցներում, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Ա, Երևան, 2016, 345 էջ, էջ 271:
5. Ջահուկյան Գևորգ, Հայ բարբառագիտության ներածություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1972, 348 էջ:
6. http://mincult.am/news-,

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ,բ.գ.թ. դոցենտ Հ.Ս. Ղազարյանը:

ՀՏԴ 81՝37
Լեզվաբանություն

Շուշան ՆԵՐՍԵՍՅԱՆ
Վանաձորի պետական համալսարան
«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն, մագիստրատուրա 1-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ Լ. Պետրոսյան

ՀԱՅՐ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Սույն հոդվածում քննել ենք ազգակցական հարաբերություն ցույց տվող հայր հասկացույթի իմաստային ընկալումները: Անդրադարձել ենք ոչ միայն հասկացույթի առաջնային, այլև մի շարք երկրորդական իմաստներին, որոնք, այնուամենայնիվ, սերտորեն կապված են առաջնային իմաստի հետ և բխում են նրա բովանդակությունից: Քննելով բառարանային վերլուծությունները՝ կատարել ենք համեմատական աշխատանք՝ պարզելով, թե իմաստային ինչ փոփոխություններ են գրանցվել բառի պատմական զարգացման ընթացքում:

Աշխատանքի ավարտին եկել ենք այն եզրակացության, որ հայոց լեզվի բնիկ շերտի բառերից մեկը՝ հայրը, ժամանակի ընթացքում սկսել է գործածվել ոչ միայն անձնանիշ, այլև իրանիշ գոյականներին վերագրվելիս:

Բանալի բառեր՝ *հայր, հասկացույթ, բառ, առաջնային իմաստ, երկրորդական իմաստ, ծնող:*

Ш.Нерсесян

СЕМАНТИЧЕСКИЕ РЕЦЕПЦИИ КОНЦЕПТА «ОТЕЦ» В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

В данной статье мы проанализировали семантическую рецепцию концепта «отец» в системе родственных отношений. Мы исследовали не только первичное значение концепта, но и ряд второстепенных смыслов, которые, тем не менее, тесно связаны с первичной семантикой и вытекают из ее содержания. На основе анализа словарных статей, мы провели также сравнительное исследование и выяснили, какие семантические трансформации были зафиксированы на всем протяжении исторического развития данного слова.

В конце работы мы пришли к выводу, что одна из исконных лексем армянского языка – «отец» – с течением времени стала употребляться не только с терминами, обозначающими лицо, но и с предметными существительными.

Ключевые слова: *отец, концепт, первичное значение, вторичное значение, родитель.*

Sh.Nersesyan

SEMANTIC PERCEPTION OF THE CONCEPT "FATHER "IN ARMENIAN LANGUAGE

In this article we have considered the semantic perceptions of the concept "father" that shows relationship. We have touched upon not only the word's primary meaning but also a number of secondary meanings which are closely related to the primary meaning and come from its contents. Having discussed lexicographical analyses we have done comparative analysis to find out what semantic changes have been recorded during the historical development of the word. At the end of the study we have come to the conclusion that the word "father", as one of the words of the Armenian basic layer, has been recently used not only for animate nouns, but also for inanimate nouns.

Keywords. *Fother, concept, primary meaning, secondary meaning, parent.*

Հայր հասկացույթի հիմնական իմաստն է *«Այր կամ արու ծնօղ զավակի» (12, 32)* : Այս բացատրությունը գրեթե նույնությամբ կրկնում են հետագա շրջանների բանասիրական բառարանների հեղինակները: Ս. Մալխասյանցը «Հայերէն բացատրական բառարանում» որպես այս բառի առաջնային իմաստ նշում է. *«արական սեռի անձ, որ որդի ունի, արու ծնող» (10, 39),* Է. Աղայանը «Արդի բացատրական բառարանում»՝ *«Տղամարդը իր որդիների համար, ծնող արական անձը»* և *«Տղամարդ, որ արդեն որդի ունի կամ ունեցել է» (1, 813)*: ***Հայր*** հասկացույթի առաջնային իմաստը գործածելի է հայերենի պատմական զարգացման բոլոր երեք շրջաններում և բարբառներում: Այն իր առաջնային իմաստով պահպանվել է հայ գրականության և ժողովրդական բանահյուսության մեջ:

Այսպես՝ ***հայր*** հասկացույթի առաջնային իմաստը գործածված է «Աստվածաշնչի» «Գիրք ծննդոց» գլխում *«Վասն այնորիկ թողցէ այր **զհայր** իւր՝ և զմայր իւր, և երթիցէ՛ զհետ կնոջ իւրոյ»* նախադասության մեջ, որտեղ առաջնային իմաստի պարզաբանման համար հիմք զուգահեռ գործածվող, ազգակցական հարաբերություն արտահայտող բառերը՝ *զմայր, կնոջ:*

Հայ հին և միջնադարյան տարբեր հեղինակների ստեղագործություններում ***հայր*** հասկացույթի առաջնային իմաստը հստակորեն տարբերակելու համար հիմք են դառնում զուգահեռ գործածվող ազգակցական հարաբերություն արտահայտող այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ *մայր, պապ, եղբայր, քույր, որդի* և այլն: Օրինակ՝ *Բարբանջեալ բարձին Զհելքն խիկարին, Ետուն սպանանել, զիւր մօրուն, **Հօր** աչքից հանին (*8,159), *Պապուս անունն ասեն մօլլայ, Աղբօրս ասեն քաղքին շահնայ, Ու զիմ անունս ասեն Այշալ, Մէկալ քուրոջս Օղուլդայ, Զիմ մօրս անունն ասեն Ֆաթմայ, Ու **հօրս** ասեն դատի մօլլայ* (8, 320), ***Հայրն** չկարաց փրկել զորդին իւր սիրական, Որդին ելաց և հառաչեաց յոգւոց*

եհան (8, 343), *Ջիս այլ սիրո տէր արիր, ու հանիր իմ հօրն ի տանէն, Աղուո՛ր, քեզ բան մի կ՛ասեմ, հօրդ ահուն չեմ իշխեր ասել* և այլն:

Աշխարհաբար գրականության մեջ ***հայր*** հասկացույթը դրսևորվում է իր առաջնային իմաստի կիրառմամբ: Աշխարհաբար մի շարք հեղինակների ստեղծագործություններում, հատկապես երբ դրանք ընտանեկան հարաբերություններ են պատկերում, հանդիպում ենք այս բառի առաջնային իմաստի կիրառմանը, ինչպես՝ *-Անցածը վերադարձնել չի կարելի, **հա՛յր,** օրհնի՛ր,-արտասանեց որդին մի տեսակ խուլ ձայնով (14, 292), Ու ողորմելի **հայրը** կխոստանար, ամեն բան կխոստանար, կանուխ պիտի գար ու պտտցնելու պիտի տաներ այս հեք զրկյալ որբերը (14, 78), -Կուզե՞ս ես քո քույրը լինեմ, դու իմ եղբայրը: Ես կխնդրեմ **հորս,** որ դու մեր տանն ապրես և ինձ համար միշտ այդպիսի եղանակներ նվագես (14, 147), Շամվոնը **հորը** տեսնելով՝ ավելի մռայլվեց և մեղավորի պես, կարծես ինքը լիներ աղետի պատճառը, չպատասխանեց և աչքերը գետնին գցեց (3, 4)* և այլն:

Հայ նոր գրականության հատկապես չափածո ստեղծագործություններում նույնպես հանդիպում ենք ***հայր*** հասկացույթի առաջնային իմաստի կիրառություններին, ինչպես՝ ***Հայրը** ինչպես մռայլ մի ամպ, Աղջիկն անուշ մի լուսին (5, 122), -Սա էլ **հորս** տնկածն է,- պարծենում էր քույրս քաջ, Գոհար քույրս, որ **հորս** «դրչաղ» տղեն էր դարձել (13, 180), Մինչ **հայրը** նրա՝ Գևոն կոշկակար, Գոգնոցը հանեց, արխալուղ հագավ (15, 4), Գեթ **հայրը** մնար…Բայց **հայրն** էլ գնաց, Երբ որդին չկար տասը տարեկան* (15, 7) և այլն: Չափածո խոսքում ***հայր*** հասկացույթը շատ հաճախ օգտագործվում է փաղաքշական՝ ***հայրիկ*** տարբերակով՝ երբեմն ունենալով **իմ** դերանունով արտահայտված հատկացուցիչ, ինչպես՝ *-**Հայր՛իկ**, ինչո՞ւ ետ չդարձան էն քաջերը սիրատենչ, Մի՞թե, **հայրիկ**, ինձ մոռացան, Էլ չեն բերի հուրն անշեջ (5, 124), **Հայրի՛կ, հայրի՛կ**, մի՞թե չկա էս աշխարհքում անշեջ հուր* (5, 125), *Գտնեմ դեռ կորած խաչքար մի, **հայր իմ**, Որպես շիրիմդ՝ համբուրեմ ու լամ* (13, 183), ***Հայր իմ**, արծիվ կուզեիր, բուերի փառքն ինձ մնաց* (13, 201), և այլն: Հ. Շիրազի ստեղծագործություններում նույնպես ***հայր*** հասկացույթը կապակցվում է այնպիսի որոշիչների, ինչպիսիք են ***խեղճ, ծերուկ, սուրբ, քաղցր, հրաշք*** և այլն, ինչպես՝ *Մանուկ աչքիս՝ **հայրիկս** ծերուկ հսկա էր թվում,* (13, 184), *Ու փշրեցին սուրբ **հորս** որպես կավե մի արձան* (13, 192), *Միայն քաղցր **հայրիկիս** նուրբ շշուկն է դեռ ինձ հետ* (13, 192), *Երբ **հայրիկիս** շնչին էր միշտ կարոտում որբ հոգիս, Հարցնում էի ծերերից՝ թե տեսե՞լ եք **հորս** խեղճ* (13, 194), *Հրաշք **հայր էր,** մարդ էր, մարդ և աստվածն էր բոստանի…* (13, 209) և այլն:

Հայր հասկացույթը հայերենի բարբառներում հանդես է գալիս հետևյալ տարբերակներով ***հայր*** (Ագլ.), ***հար*** (Ախց., Ակն., Ասլ.,Կր., ՆՆխ., Պլ., Ռ., Սեբ., Սչ.), ***հէր*** (Ալշ., Գոր., Երև., Հմշ., Ղրբ. Մշ., Շմ., Տփ.), ***խէր*** (Մկ.,

Մրդ., Ջղ., Սլմ., Վն. Ոզմ.) որոնցում ակնհայտ է երկբարբառի պարզեցումը (***այ>ա, է, է***) *(2, 32)*:

Հայերենի զարգացման բոլոր փուլերում ***հայր*** հասկացույթը, պահպանելով առաջնային իմաստը, ասիճանաբար ձեռք է բերում նոր երկրորդական իմաստներ և կապակցելիական նոր հնարավորություններ: ***Հայր*** հասկացույթի իմաստաբանական քննությունը ցույց է տալիս, որ այս հասկացույթը վերագրվում է *աստվածանիշ*, *անձնանիշ*, *կենդանանիշ* և *իրանիշ* գոյականների՝ իմաստային համապատասխան հերթագայություններով:

1. Աստվածանշություն

Դավանաբանական հայեցակետով դիտարկելիս հայ իրականության մեջ առանձնացնում ենք երկու շրջան՝ *նախաքրիստոնեական* (հեթանոսական) և *քրիստոնեական*:

Հեթանոսական շրջանում հայ դիցաբանության գերագույն աստվածն Արամազդն էր, որին հաճախ անվանում են աստվածների ***հայր*** կամ ***հայր*** Արամազդ, ինչպես՝ *Հայոց աստվածների* ***հայր*** *Արամազդի գլխավոր տաճար-սրբատեղին գտնվում էր Բարձր Հայք նահանգի Դարանաղի գավառի Անի ամրոցում: Լսիր, ա՛յ Եվայի ցեղի դասական ներկայացուցիչ, ինչու՞ ես կարծում, որ դու իսկական ծնող ես, իսկ* ***հայր*** *Արամազդը՝ պահեստային:*

Քրիստոնեական շրջանից մեզ հասած գրականությունից պարզ է դառնում, որ ***հայր*** հասկացույթը, ի տարբերություն ազգակցական հարաբերություն ցույց տվող մնացած հասկացույթների, ամենահաճախադեպն է կրոնաեկեղեցական գրականության մեջ, որտեղ նրա գործածումը վերագրվում է ***Աստված*** հասկացույթին՝ *«****Հայր*** *տեառն մերոյ կամ* ***հայրն*** *ձեր երկնաւոր»* (12, 32) իմաստով, ինչպես՝ *«Ջայ ասի՝ հայելով յառաջին անձն յանուն* ***հօր****, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ: Առ* ***հայր*** *իմ (բնութեամբ), և առ* ***հայր*** *ձեր շնորհօք:* ***Հայր*** *տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և այլն: Կամ* ***Հայրն*** *ձեր երկնաւոր: Տէր* ***հայր*** *մեր: Հայր մեր՝ որ յերկինս»:* Ս. Մալխասյանցը այս իմաստի պարզաբանման համար բերում է *«Աստված, իբրև արարիչ ամենքի»* (10, 39) բացատրությունը: Այս իմաստի դրսևորմանը հանդիպում ենք Ե. Կողբացու *«Եղծ աղանդոցում»*, ինչպես՝ *«Եթե* ***հայրն*** *յորդւոյն արարածս ոչ խնայեաց այնու, զի ի ձեռս չարին մատնեաց, որդին զիւրսն զի՞ արդ ոչ զընդայցէ. Առ տկարութեա՞ն ինչ, թե՞ առ չարակամութեան» (7, 465)*:

2. Անձնանշություն

Կապված կրոնաեկեղեցական իրականության հետ՝ այս հասկացույթը, աստվածանիշ, վերագրվում է նաև անձնանիշ գոյականների՝ լայն ընդգրկմամբ նշանակելով՝ *«եկեղեցու* ***հայրեր,*** *հոգևոր կոչման անձեր կամ հեղինակներ, որոնց գրուածքները կամ որոշումները վայելում են հեղինակութիւն»* (10, 39):

Այս իմաստի նեղացմամբ ՆՀԲ-ն բերում է *«Աբբայ, վանական, միայնակեաց և վարդապէտ եկեղեցւոյ կամ հայրապէտ»* իմաստը: Այս իմաստով ***հայր*** հասկացությոը գործածվել է *«Վարք հարանց և բանք նոցա լուսաւորեն զանձնն»* երկի և միջնադարյան հեղինակների մի շարք երկերում: Այս իմաստով գործածվելիս հասկացությոը հիմնականում կապվում է արական սեռի որևէ անձնանիշ հատուկ գոյականի, ինչպես՝ *«Ասաց **հայրն** Անտոն»*, *«Արսենիոս **հայրն»*** և այլն: Այս իմաստին բնորոշ են նաև *լուսաւորե*, *ժողովել*, *ասել* գործողություն ցույց տվող բայերը և *աստվածաբան*, *սուրբ*, *բազմերջանիկ* որոշիչները, ինչպես՝ *«վարք **հարանցն** և բանք նոցա լուսաւորեն զանձնն, Ասաց **հայրն** Գրիգոր աստուածաբան, սուրբ **հարքն** ի Նիկիա ժողովեալքն, բազմերջանիկ **հարանցն»*** և այլն:

Սրանցից բացի, ***հայր*** հասկացությոը առհասարակ համարվում է *«հարգական մակդիր հոգևորականների»* (1, 813), մասնավորապես՝ ***Տէր հայր***-քահանային դիմելու ձև, ***Հայր սուրբ***-վարդապետին դիմելու ձև, ***Սրբազան հայր***-եպիսկոպոսին ողջունելու ձև, ***Վեհափառ հայր***-կաթողիկոսին դիմելու ձև (վերջինիս դեպքում հաճախադեպ է վեհափառ ***հայր***ապետ արտահայտությունը), ինչպես՝ *Էն վանքում հայոց ազգին պահապան Աղոթք էր անում ծերուկ **հայր** Օհան: **Հայր սուրբն** ընդունեց բանալիները, հարցնելով: **Հա՛յր Սուրբ**, եթե մարդը հավատացյալդ չէ, Որտեղ պիտի նա իր մեղքը խոստովանի: **-Սրբազան հայր**, մենք քրիստոնյա ենք,- նկատեց մի վարդապետ,- որտե՞ղ և օծենք մեր քահանայապետին, միևնույն է: **Հա՛յր** Կոմիտաս, աչքով չտամ, բավականին կազդուրվել ես, հանգստացած տեսք ունես, երևի լավ են պահել քեզ այս մի քանի ամսվա ընթացքում, խոսակցությունն սկսեց **վեհափառ հայրապետը*** և այլն

Հայր հասկացությոը հանդիպում է նաև *«Խնամող, կրթություն տվող անձ: Հոգևոր հայր»* իմաստով, ինչպես՝ *Հայր չունի, դու եղիր նրան հայր*: Ազգակցական հարաբերություններ ցույց տվող հասկացություներից *«խնամող»* իմաստով առանձնանում է *քույր* հասկացությոը *(գթության քույր)*:

Հայր հասկացությոը իմաստի ընդլայնմամբ գրաբարում նշանակում էր նաև «նախահայր», որ վերագրվում էր *Սամուել*, *Նախաստեղծ*, *Աբրահամ* անձնանիշ գոյականներին, ինչպես՝ *«Սամուել **հայր** Ասրւոց»*, *«Նա զնախաստեղծն **զհայրն** աշխարհի»*, *«**Հայր** մեր Աբրահամ է»* և այլն: Այս իմաստով գործածվելիս հասկացությոը գործածվում է նաև որպես օրէնք հասկացությի հատկացուցիչ, օրինակ՝ *«Ի վերայ հարցն օրինաց»*, *«Անցանել զհարցն օրինօք»* և այլն:

Լինելով անձնանիշ հասկացությ՝ ***հայր***ը կիրառվում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվով՝ ի տարբերություն առաջին իմաստի, օրինակ՝ *«Ով հարք սուրբք»*: Է. Աղայանը, անդրադառնալով այս իմաստին, նշում է, որ այս իմաստն է ենթադրում նաև ***հայր*** հասկացությի հոգնակի ձևը՝ «հայրեր, նախնիներ, նախորդ սերունդներ» (1, 813) և *«հայրեր, պատվավոր, նշանավոր այրեր»* իմաստներով: Ըստ Ս. Մալխասյանցի՝ ***հայր***

հասկացույթի հոգնակին ենթադրում է *«նախնիք, պապեր, նախապապեր»* (10, 39) իմաստը, ինչպես՝ *Քեֆ էին անում ու ուրախանում մեր հսկա պապերն ու մեր **հայրերը***:

Ինչպես ժողովրդախոսակցական լեզվում, այնպես էլ աշխարհիկ բովանդակությամբ գեղարվեստական գործերի մեջ ***հայր*** հասկացույթը նշանակում է նաև *«ցեղի կամ ազգի նախահայր, վերակացու, տնօրէն, գլուխ, տէր, առաջնորդ»* (12, 32), ինչպես՝ *Մեր ազգի **հայրն** է Հայկ Նահապետը՝ ըստ ժողովրդական աւանդութեան, Մայրս, քոյրս միտս ընկան, որ **հայրերիս** սուրբ հողում ինձ կհիշեն ու լուռ կուլան աստղերի հետ հեզ* և այլն:

Հայր հասկացույթի հոգնակի թվով կիրառման ևս մեկ իմաստ են բերում ՆՀԲ-ի հեղինակները՝ վկայելով, որ ***հայր*** հասկացույթը ասորերենի նմանությամբ կիրառվում է նաև ծնող իմաստով «Ըստ ասորի ոճոյ՝ փոխանակ ասելոյ հայրն և մայրն, ծնօղք», ինչպես՝ *Գայեն ծնաւ անհծիւք, զոր զգեցեալ էին **հարք** նորա, Օր մի երբեմն դի ոչ դիտեին **հարք** նոցա, ասէ Գայեն զՀաբել, եկ երթամք ի դաշտ, զԱդամ և զևոյ **զհարս** ամենայն երկրի* և այլն: Օրինակներից պարզ է դառնում, որ իմաստային այս կիրառությունը հատուկ է հոգնակի թվով արտահայտություններին:

Այս ենթաիմաստի ընդլայնմամբ ***հայր*** հասկացույթի կիրառությունը նշանակում է նաև սկեսրայր և մայր հասկացույթը՝ սկեսուր, ինչպես՝ *«Արդ նոքա են քո **հայր** և մայր»*:

Արշակունյաց Հայաստանում այս հասկացույթով էր բնութագրվում «Արշակունի թագաւորների արքունի **ներքինապետը, մարդպետ»** (10, 40), ինչպես՝ *Արտաշեսյանները նրանց **հայր** էին անվանում, որովհետև Մարդպետների աղխը նվաճել էր արքունիքի հանդեպ հայրական հոգատարություն տածելու մենաշնորհը* և այլն:

3. Կենդանանշություն

Անձնանիշ-կենդանանիշ փոխակերպման արդյունքում կենդանիների անունների վրա դրվելով՝ կազմում է նրանց արականը, ինչպես՝ ***Հայր*** *արագիլը կանգնել էր բույնի եզրին, հսկում էր նորածին ձագերին, իսկ մայր արագիլը գնացել էր ճահիճը կերակրվելու կամ կեր բերելու: Մի առավոտ **հայր** արագիլը իր ձագերի գլուխն անցած պտույտ գործեց գյուղի վրա և իջավ բակը: Օտարը, որ չէր սպասում այդպիսի հարձակման, պաշտպանվում էր կատաղորեն և կարողացավ դուրս պրծնել **հայր** առյուծի թաթերից, ետ ցատկել և թափ առնելով հարձակվել: -Ժամանակն է, շուտով պետք է հեռանանք այս տեղերից,-ասում էր **հայր** արագիլն իր ձագերին:* և այլն:

4. Իրանիշություն

Հայր հասկացույթը՝ որպես իրանիշ գոյական, *«առաջին յիմիք կարգի»* իմաստով գործածում է Եղիշեն *«Ամենայն տառից առաջին և **հայր** այբն է»* (12, 32) նախադասության մեջ՝ առարկայացում գեղարվեստական պատկերավորման միջոցով:

Հայր հասկացույթով է բնութագրվում Ավետարանը, ինչպես՝ *«Քանզի **հայր** մեր զառաջ աւետարանն գիտեմք, և մայր զառաքելական եկեղեցի կաթողիկէ»:*

«Սկիզբ» նշանակությամբ Է. Աղայանը բերում է *«գիտության կամ տեխնիկայի որևէ ճյուղի հիմնադիր»* (1, 813) իմաստը, ինչպես՝ *Հերոդոտոսը հայր է կոչվում, Հայ պատմագրության հայրն է Մովսես Խորենացին*: Այս իմաստին Ս. Մալխասյանցը հավելում է *«սկզբնապատճառ, հեղինակ»* (10, 39) փոխաբերական իմաստը: Այս իմաստի դրսևորումները նույնպես բավականին տարածված են հայ հին և միջնադարյան գրականության էջերում, օրինակ՝ Գրիգոր Լուսավորչի *«Հաճախապատում»* երկում հանդիպում ենք *«Մահվան **հայրը** նախանձն է»* նախադասությանը, ինչպես՝ *«Ով է **հայր** մահու,- Նախանձ» (6, 147)*: ***Հայր*** հասկացույթը վերոնշյալ նշանակությամբ է գործածվել նաև Հայոց հին հավատալիքներում *(9),* որտեղ ավանդազրույցները ներկայացվում են ընտանեկան հարաբերությունների ձևով: Այս դեպքում ***հայր*** հասկացույթն անմիջականորեն առնչվում է ***մայր*** հասկացույթին և բնության երևույթների անձնավորմամբ ներկայացնում ընտանեկան հարաբերությունները, ինչպես՝ *Երկինքն ու երկիրը ամուսիններ են: Երկինքը **հայր** է, երկիրը՝ մայր*: (9, 12): Երբեմն ***հայր*** հասկացույթը դառնում է որոշիչ, ինչպես՝ *Ամպրոպի ժամանակ **հայր** երկինքն ու մայր երկիրը ծիրանի ծովի միջոցով միանում են իրար* (9, 21) և այլն:

Իրանիշ գոյականների վերագրվելիս ***հայր*** հասկացույթը նշանակում է նաև նախանյութ, ինչպես՝ *«Պողպատի կտոր, որի վրա բարձր քանդակված է տառը, և որից ճնշման միջոցով ստանում են մայրը և մատրիցան»* (10, 40):

Գրականություն

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, «Հայաստան» հրատարակչություն:
2. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1971, «Երևանի համալսարանի» հրատարակչություն:
3. Դեմիրճյան Դ., Երկեր, Երևան, 1983, «Լույս» հրատարակչություն:
4. Զոհրապ Գ. Երկեր, Երևան 1989, «Խորհրդային գրող» հրատարակչություն:
5. Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հ 2:
6. Լուսավորիչ Գ., Հաճախապատում:
7. Կողբացի Ե., Եղծ աղանդոց:
8. Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Երևան, 1979, «Երևանի

համալսարանի» հրատարակչություն
9. Հարությունյան Ս., Հայ հին վիպաշխարհը, «Արևիկ» հրատարակչություն, Երևան, 2004:
10. Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1944, Հայկական ՍՍՌ պետական հրատարակչութիւն:
11. Նար-Դոս, Պատմվածքներ, վիպակներ, Երևան, 1978, «Լույս» հրատարակչություն:
12. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Երևան, 1979, «Երևանի համալսարանի» հրատարակչություն:
13. Շիրազ Հ., Երկեր, հ. 4, Երևան 1986, «Սովետական գրող» հրատարակչություն:
14. Շիրվանզադե Ալ., հ 3, Երևան, 1987, «Սովետական գրող» հրատարակչություն:
15. Սևակ Պ., Անլռելի զանգակատուն, Երևան, 1990, «Խորհրդային գրող» հրատարակչություն:

Գեղարվեստական օրինակների մի մասը ներկայացված է՝ ըստ Արևելահայերենի ազգային կորպուսի http://eanc.net/EANC/search/?interface_language=am: Հասանելի է 20.10.2019:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնը:

УДК 81`33
Прикладная лингвистика

Тамара ДАНИЕЛЯН
аспирант кафедры романо-германских языков,
Арцахский Государственный Университет
e-mail: tamara_danielyan@yahoo.com

СПЕЦИФИКАЦИЯ ДИСКУРСИВНОГО СТАТУСА ПУБЛИКАЦИЙ В ЛИНГВИСТИЧЕСКОЙ ЭКСПЕРТИЗЕ (НА МАТЕРИАЛЕ СТАТЬИ НЬЮ ЙОРК ТАЙМС «ЗАХВАТ СЛЕДУЮЩЕЙ ТЕРРИТОРИИ РОССИЕЙ»)

Ключевые слова: *дискурс-анализ, контекст, метаязычные маркеры, конфликтогенный, индуктивный метод, дедуктивный метод.*

Թ. Դանիելյան

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԴԻՍԿՈՒՐՍԻՎ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՏԿՈՐՈՇՈՒՄԸ (ՆՅՈՒ ՅՈՐՔ ԹԱՅՄՍ ԹԵՐԹԻ «ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀՈՂՄԻՑ ՀԱՋՈՐԴ ՏԱՐԱԾՔԻ ԳՐԱՎՈՒՄԸ» ՀՈԴՎԱԾԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Այս հոդվածում մենք փորձում ենք հատկորոշել հրապարակումների դիսկուրսիվ կարգավիճակը լեզվաբանական փորձաքննության ընթացքում: Ուսումնասիրության նպատակն է բացահայտել հրապարակումների դիսկուրսիվ կարգավիճակը՝ հաստատելով դրա տեղեկատվական, մանիպուլյատիվ և վերծանման գործառույթները: Վերլուծվում է «Նյու Յորք Թայմս» -ի «Ռուսաստանի հաջորդ տարածքի գրավում» հոդվածը՝ ուսումնասիրելով թերթի դիսկուրսում օգտագործվող մի շարք լեզվական միջոցներ:

Բանալի բառեր՝ *դիսկուրս-վերլուծություն, համատեքստ, մետալեզվի ցուցիչներ, կոնֆլիկոգեն, ինդուկտիվ մեթոդ, դեդուկտիվ մեթոդ:*

T. Danielyan

PECULIARITIES OF DISCURSIVE PUBLICATION STATUS IN LINGUISITC EXPERTISE (BASED ON THE ARTICLE "RUSSIA'S NEXT LAND GRAB" BY THE NEW YORK TIMES)

n this article, we specify the discursive status of publications during the LE. The aim of the study is to identify the discursive status of publications by establishing its informative, manipulative and decoding functions. We analyze the article "Russia's next land grab" by the New York Times examining the various linguistic means used in the discourse of newspaper.

Keywords. *discourse analysis, context, metalanguage markers, conflictogenic, inductive method, deductive method.*

Лингвистическая экспертиза проявляет широкий интерес к таким методам, как дискурс-анализ, различие между дискурсом и текстом, применение дискурсивного анализа к различным типам письменного и публичного общения, а также взаимодействие с различными междисциплинарными науками. Изучение дискурса предполагает его классификацию с их соответствующими подтипами, типологические особенности, сферы функционирования и их совпадения. При помощи интеракции в социуме появляются не только новые литературные жанры, но и новые типы текстов и способов общения.

Говоря о дискурсивном статусе публикаций, мы можем отметить, что он основан на письменной и устной коммуникации. Между письменным и устным видом дискура есть определенные различия. Во-первых, в устном дискурсе производство и понимание речи происходят синхронно, в то время как в письменном дискурсе синхронность отсутствует. Во-вторых, существует разница в скорости общения: мы пишем в десять раз медленнее, чем мы говорим, но мы читаем быстрее, а затем общаемся. В-третьих, в устной речи существует прямая связь во времени и пространстве между адресантом и реципиентом, в то время как письменный дискурс лишен этих особенностей.[1]

Чтобы иметь возможность правильно анализировать рассматриваемый фрагмент дискурса, мы должны учитывать *контекст*, в котором он встречается. «Контекст» – это термин, характеризующий особенности неязыкового мира, в котором используются лингвистические единицы. При дискурс-анализе мы сталкиваемся с ситуационным контекстом, который в самом широком смысле охватывает общую неязыковую предпосылку текста / высказывания, включая непосредственную ситуацию, в которой он используется, и осведомленность производителя и реципиента о ранее произнесенных высказываниях, а также соответствующих внешних убеждений.[2]

Одной из характеристик дискурса публикаций СМИ – является пассивная периферийная диалогичность. В массово информационном дискурсе диалогичность осуществляется не с прямым участием адресанта и адресата, а выражается различными обращениями к читателю:побуждением к размышлению, выявлением предполагаемых реакций читателя, потому что в этом случае замечается отсутствие прямого реципиента.

Дискурсивный статус публикаций обуславливается двумя функциями: информативной и воздействующей. *Информативная* функция газеты реализуется посредством передачи информации потребителями масс медиа, учитывая экстралингвистические факторы. *Воздействие* осуществляется с помощью внедрения в сознание реципиента скрытой интенции к совершению того или иного действия. При оценочном воздействии публицистического текста принимаются во внимание потребности позитивного/негативного изображения имиджа и репутации оппонента, ее пропаганды или дискредитации. Другие компоненты воздействующей функции газетного текста - *логическая аргументация* и *эмоциональность* пропозиции. Аргументация считается одним из способов убеждения, который осуществляется через последовательность тезисов или суждений. Эмотивный статус публикаций определяется эмоциональностью слов, стилистическими приемами и выразительными средствами. В ряд функций

[1] *https://www.academia.edu/4774305/DISCOURSE_TYPOLOGY_CHANNELING_DISCOURSE*
[2] ***Elena Buja**, "The Discourse Analysis of a Newspaper Article",Acta Universitatis Sapientiae, Philologica,2,2; Transilvania,, 2010; p260*

газетных публикаций входит не только информирование и воздействие, но и *дешифрование*. Газетный дискурс взаимосвязывает языковые и внеязыковые особенности, иными словами публицистический текст -это продукт, реализованный через ряд лингвистических и экстралингвистических факторов.

Ինչ վերաբերում է լայն սահմանմանը, ապա ամենից հայտնին թերևս պատկանում է ամերիկյան տեսաբան Ստ. Ուոլտին: Նա գտնում է, որ դաշինքը ձևային կամ ոչ ձևային համաձայնությունն է, որի նպատակն է անվտանգության ոլորտում համագործակցությունը երկու կամ ավելի

---

[1]Ձևային այն իմաստով, որ դրանք ճանաչված են պետությունների կողմից, և հաստատված են փոխադարձ պարտավորություններ:

*[2] Տես՝ **Snyder Glenn H.**, Alliance theory: a neorealist first cut // Journal of International Affairs, Vol. 44, No. 1, p. 104.*

[3] Համաձայնությունը վերաբերում է միջպետական հարաբերությունների ավելի լայն շրջանակին, որը կարող է ամրագրվել կամ չամրագրվել փաստաթղթերով, մինչդեռ դաշինքն ունի ավելի լայն պարտավորությունների շրջանակ, քան համաձայնությունը. համաձայնությունը ցույց է տալիս կողմերի շահերի համանմանությունն առանց պաշտոնապես ամրագրված փոխադարձ պարտավորությունների:

*[4] Տես՝ **Beres, Louis René**, Bipolarity, Multipolarity, and the Reliability of Alliance Commitments // The Western Political Quarterly, Vol. 25, No. 4, 1972, p. 702.*

*[5]Տես՝ **Liska, G.** Nations in Alliance: The Limits of Interdependence. Baltimore : Johns Hopkins, 1962.*

ինքնիշխան պետությունների միջև[1]: Ուոլտի սահմանումն ավելի ներառող է, քան Գ. Սնայդերի սահմանումը: Մեկ այլ լայն սահմանում է ներկայացնում Ք. Ուոլտցը: Ըստ նրա՝ դաշինքները ստեղծվում են այն պետությունների կողմից, որոնք ունեն ընդհանուր շահեր (հաճախ վախն այլ պետություններից եկող սպառնալիքից)[2]: Այս սահմանման մեջ հստակ նշված չեն պարտավորությունները, դաշինքը բնույթով պաշտպանական է, թեև չի հստակեցվում օբյեկտը, այսինքն՝ թե ում դեմ է ուղղված այն: Տեսական առումով կարևոր դիտարկում են կատարել մտածողներ Օ.Հոլստին, Թ.Հոփմանը և Ջ.Սալիվանը: Վերջիններս առանձնացնում են դաշինքի երեք առանցքային բաղադրիչ՝ ա/ ձևային պայմանագիր՝ բաց կամ գաղտնի, բ/պայմանագիրը վերաբերում է ազգային անվտանգության հիմնահարցերին, գ/պայմանագիրը ստորագրող կողմերն ինքնիշխան պետություններ են: Այս երեք տարրերի հիման վրա հեղինակները դաշինքը սահմանում են որպես «ձևային համաձայնություն երկու և ավել պետությունների միջև՝ ազգային անվտանգությանը վերաբերող հարցերի շուրջ համագործակցելու նպատակով»[3]: Այսպես՝ ընդհանրացնելով կարող ենք ասել՝ լայն սահմանումները պնդում են, որ դաշինքների պարտավորությունները լինում են ձևային կամ ոչ ձևային և ուղղվածությունը հաճախ նախանշված չէ: Լայն իմաստով դաշինքը պետությունների միավորում է, որը կոորդինացնում է նրանց գործողությունները նպատակների իրականացման ուղղությամբ: Համատեղ ջանքերը կարող են ունենալ խաղաղ պատճառներ և հիմնված լինել դաշնակիցների ընդհանուր քաղաքական նպատակների վրա: Դաշինքների լայն սահմանման համաձայն՝ այս հասկացությունն ընդգրկում է պետությունների միջազգային համագործակցության բոլոր ձևերը, ներառյալ վերոնշյալ ռազմական դաշինքները, դիվանագիտական կոալիցիաները, ռազմավարական գործընկերությունը, միջկառավարական միջազգային կազմակերպությունները, վերազգային կազմակերպությունները: Այսպես՝ դաշինքը կարելի է տարբերակել համագործակցության այլ ձևերից՝ կիրառելով լայն կամ նեղ սահմանում: Ընդհանրացնելով՝ կարող ենք դաշինքը սահմանել որպես բնույթով ձևային կամ ոչ ձևային, բացառապես անվտանգությանն ուղղված համագործակցություն երկու կամ ավելի ինքնիշխան պետությունների միջև:

2. Դաշինքի շրջանակներում անվտանգության ապահովման և ինքնիշխանության պահպանման հարաբերակցությունը

Իսկ ինչպե՞ս են ձևավորվում դաշինքները: Այս հարցն իր պարզաբանումն է գտել դաշինքների տեսության շրջանակներում:

---

[1] *Տես՝ **Walt Stephen**, The Origins of Alliances, Cornell University Press, Ithaca, 1987.*

[2] *Տես՝ **Waltz Kenneth**, Theory of International Politics, Random House, New York, 1979.*

[3] *Տես՝ **Holsti Ole**/ Hopmann Terrence P. / Sullivan John D: Unity and Disintegration in International Alliances, Lanham/New York/London, 1973.*

Մասնավորապես, նեոռեալիզմի ներկայացուցիչներն առաջ են քաշել հետևյալ մոտեցումները:

Այսպես՝ միջազգային հարաբերությունների ամերիկյան տեսաբան Ք. Ուոլցն առաջ է քաշում ուժերի հավասարակշռության տեսությունը: Այս տեսության համաձայն՝ պետությունները ձևավորում են դաշինքներ, երբ ի վիճակի չեն հավասարակշռելու այլ պետությունների ուժը սեփական ջանքերով կամ այն դեպքում, երբ հակառակորդին զսպելու ներքին ծախսերը գերազանցում են դաշնակցային ծախսերը: Այս տեսանկյունից չզսպված ուժը վերածվում է սպառնալիքի ավելի թույլ պետության համար: Ուստի մեկ կամ մի քանի թույլ պետություններ դաշինք են կազմում, երբ առճակատվում են ավելի հզոր պետության[1]:

Ուժերի հավասարակշռության տեսությունը կարող է ծառայել նաև որպես դաշինքների ձևավորման ու կազմալուծման տեսություն: Այս պարագայում ուժի միջազգային բաշխման տեղաշարժերը կարող են սպառնալ հաստատված դաշինքների գոյությանը: Օրինակ՝ նախկինում գերակայող պետությունը կարող է կորցնել իր դիրքերը և այլևս դաշինքը կարիք չունենա զսպել այդ ուժը: Հնարավոր է, որ դաշինքի անդամներից մեկն այնքան հզորանա, որ մնացած դաշնակիցները կապերը խզեն և ստեղծեն դաշինք հենց նրա դեմ[2]:

Ուժերի հավասարակշռության տեսության հստակեցված մոտեցում է առաջարկում ամերիկյան մեկ այլ տեսաբան Ստ. Ուոլտը՝ իր սպառնալիքների հավասարակշռության տեսությամբ: Ըստ նրա՝ դաշինքներն այն միջոցներն են, որոնք չեզոքացնում են պետության արտաքին սպառնալիքները: Այս պարագայում հնարավոր է երկու մարտավարություն: Հավասարակշռությունը նշանակում է, որ պետությունը միավորվում է ավելի թույլ պետությունների հետ ընդդեմ ուժեղ պետության: Ավելի ուժեղ պետությանը ենթարկվելու մարտավարությունն ընտրում են այն դեպքում, երբ ավելի հզոր ուժ է սպառնում[3]:

Ռ. Շուելլերն առաջ է քաշում դաշինքների ձևավորման մեկ այլ դրդապատճառ. պետությունները դաշինք են կազմում հակառակորդի հետ, որպեսզի պաշտպանեն սեփական անվտանգությունը: Նա պնդում է, որ այս դեպքում փոքր պետությունն իր ռազմավարական նպատակի համար տալիս է իր անկարողությունը՝ հակազդելով գերտերության հնարավորություններին[4]: Նեոռեալիզմի ներկայացուցիչները գտնում են, որ զսպումն ավելի տարածված է, քան հակառակորդի հետ մերձեցումը:

---

[1] *Տես՝ Security studies Security studies: an introduction/edited by Paul D. Williams, 2008, p.296.*

[2] *Տես՝ Security studies Security studies: an introduction/edited by Paul D. Williams, 2008, p.296.*

[3] *Տես՝ Security studies Security studies: an introduction/edited by Paul D. Williams, 2008, p.296.*

[4] *Տես՝ **Schroeder, P.W.** Alliances, 1815–1945: Weapons of Power and Tools of Management. In K.Knorr (ed.) Historical Dimensions of National Security Problems. Lawrence: University Press of Kansas, 1976, p. 227–262.*

Ջ.Փրեսմանը ևս դաշինքը դիտարկում է որպես սպառնալիքների չեզոքացման գործիք: Որոշ պետություններ դաշինք են կազմում այն պետությունների հետ, որոնց կողմից հավանական է պատերազմի սանձազերծումը: Այս տեսանկյունից տեսաբանը պարզաբանում է երկու կարևոր դաշինք՝ ԱՄՆ-Իսրայել և ԱՄՆ-Մեծ Բրիտանիա[1]:

Որոշ տեսաբաններ (Փ. Շրոդեր[2], Փ. Ուետսման[3]) հակված են դաշինքը դիտարկելու որպես կոնֆլիկտի կարգավորման մեխանիզմ: Փ. Ուետսմանը պնդում է, որ դաշինքը կարող է ներառել նաև հակամարտող կողմեր. պետությունը դաշինքի օգնությամբ չեզոքացնում է թշնամիներից եկող սպառնալիքը՝ նրանց կապելով իրար: Այս տեսանկյունից դաշինքի գործառույթն է դառնում մեծացնել հակառակորդի ծախսերը և դաշինք կազմել ավելի քիչ ծախսերով: Դաշինքները որպես ինստիտուտ դիտարկելն օգնում է սպառնալիքները դարձնել կառավարելի: Այսպես՝ ՆԱՏՕ-ի առաջին գլխավոր քարտուղար Լորդ Իսմեյը կազմակերպության առաջնային նպատակ էր համարում «ԽՍՀՄ-ին դուրս թողնել, ԱՄՆ-ին ներառել և Գերմանիային զսպել»: Մյուս կողմից դաշինքի ներսում առկա է կարևոր զարգացում: Թուրքիան և Հունաստանը ՆԱՏՕ-ի անդամներ են չնայած այն փաստին, որ հակառակորդ պետություններ են: Նրանք չեն ավելացնում մեկը մյուսի հնարավորությունները, սակայն կարող են ստանալ ինստիտուցիոնալ առավելություններ կոնֆլիկտի կարգավորման տեսանկյունից: Այսպիսի արդյունավետ դաշինքի անկանխատեսելի արդյունքը կարող է դառնալ այն, որ չնայած դաշինքը ձևավորվում է կոնֆլիկտը կառավարելի դարձնելու համար, այն վերածվում է սպառնալիքի ոչ անդամ պետությունների համար՝ բարձրացնելով սպառնալիքի մակարդակը և անվստահությունը միջազգային համակարգում: Փ. Ուետսմանը նման զարգացումը համարում է դաշինքի պարադոքս և պնդում, որ այն հանգեցնում է պատերազմի հավանականության բարձրացման:

Փ. Ուետսմանը գտնում է, որ դաշինքների շրջանակներում սահմանվում է պարտավորությունների ցածր մակարդակ՝ ներառելով պետություններին սեփական ազդեցության ոլորտ: Դա թույլ է տալիս դաշինքը նախաձեռնող պետությանը միավորել հնարավորությունները և խոչընդոտել հավանական հակառակորդի ընդլայնմանը: Այս դաշինքներն անդամ պետություններին տալիս են արտաքին քաղաքականության մեջ

---

[1] Տես՝ ***Pressman Pressman, J.*** *(2008) Warring Friends: Alliance Restraint in international Politics. Ithaca: Cornell University Press.*

[2] Տես՝ ***Schroeder****, P.W. Alliances, 1815–1945: Weapons of Power and Tools of Management. In K.Knorr (ed.) Historical Dimensions of National Security Problems. Lawrence: University Press of Kansas, 1976, p. 227–262.*

[3] Տես՝ ***Weitsman, P.A****. Intimate Enemies: The Politics of Peacetime Alliances. Security Studies 7 (1), 1997, 156–192., Weitsman, P.A. Dangerous Alliances: Proponents of Peace, Weapons of War. Palo Alto: Stanford University Press, 2004.*

ինքնուրույն գործելու ավելի մեծ ազատություն և կարող են հարթակ դառնալ պետությունների հետագա համագործակցության համար, օրինակ՝ ՇՀԿ և ԳՀԽ, որոնք ներառում են Ռուսաստանը և Չինաստանը:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ դաշինքների հիմնական նպատակն է համատեղել հնարավորությունները: Երբ երկու կամ ավել պետություններ համագործակցում են, նրանք վերածվում են ավելի հզոր ռազմական ներուժի: Դաշնակիցներն ամբողջապես չեն համաձայնեցնում իրենց ռազմական քաղաքականությունը, սակայն ռազմական պլանավորումը և նախապատերազմական կոորդինացիան թույլ են տալիս անհրաժեշտության դեպքում արդյունավետ ռազմական գործողություններ ծավալել և նրանց մտադրությունները կողմերի համար դարձնել են ակնհայտ: Եթե տեսականորեն ուշադրությունը կենտրոնացնում ենք արտաքին ագրեսիայի դեպքում դաշնակցին օգնություն տրամադրելու խոստման վրա, ապա գործնականում հնարավորությունների համատեղումը կարող է օգտակար լինել միջազգային քաղաքականության մեջ տարաբնույթ նպատակների իրագործման համար: Երբ պետությունը դաշնակիցներից ստանում է աջակցություն, առավել պատրաստված է պատասխանել իր առջև ծառացած մարտահրավերներին և հակառակորդներին ստիպել զիջումների գնալ՝ առաջ քաշելով միջազգային նպատակներ: Տեսաբաններ Ալֆրեդը, Լալմանը և Նյումանը բերում են վիճակագրական տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ պետությունների ձևավորած դաշինքները մեծացնում են նրանց անվտանգության մակարդակը և բարելավում հակառակորդների ագրեսիան զսպելու կարողությունը[1]:

Դաշինքի կազմելու կարևոր հիմնահարցերից է ձեռքբերումների և կորուստների կարգավորումն անվտանգային փոփոխվող միջավայրում: Դաշնակցային հարաբերություններում հաճախ կողմերից մեկը ստիպված է դառնում ինքնիշխանության զիջումներ կատարել՝ թույլատրելով դաշնակցին ազդեցություն ունենալ իր արտաքին քաղաքականության վրա: Հիմնահարցի պարզաբանումն անհրաժեշտություն է առաջացնում տարբերակելու համաչափ դաշինքներն անհամաչափ դաշինքներից:

Համաչափ դաշինքների դեպքում պետությունները, որպես կանոն, ունեն ընդհանուր շահեր և միավորվում են նմանատիպ նպատակների հիման վրա: Պետությունները կարևորում են հավելյալ ռազմական կարողությունները, որոնք նրանց առավելություն են տալիս նաև արտաքին քաղաքականություն վարելու ժամանակ: Միշտ չէ, որ հարկ է լինում օգտագործել կոշտ ուժային մեթոդներ: Այս դեպքում դաշինքը համաչափ է:

---

[1] *Ավելի մանրամասն տես՝* ***Altfeld, M.F.*** *1984. The Decision to Ally: A Theory and Test. Western Political Quarterly (37), p.523–544; Lalman, D., and Newman, D. 1991. Alliance Formation and National Security. International Interactions (16), p.239–253.*

Գրեթե անհավանական է, որ համաչափ դաշինքում կողմերի քաղաքական տարբեր մոտեցումների պատճառով դաշնակիցների միջև առաջանա հակասություն: Այնունամենայնիվ, նման հակասության ի հայտ գալու դեպքում պետություններից մեկը կդադարեցնի դաշինքը, դաշինքը կկազմալուծվի:

Եթե համաչափ դաշինքների դեպքում պետությունների անվտանգության ձեռքբերման և ինքնիշխանության պահպանման միջև հակասությունը սուր չէ, ապա այսպիսի խնդիր ծագում է անհամաչափ դաշինքների պարագայում: Վերջինիս դեպքում կողմերն ունեն տարբեր շահեր: Անհամաչափ դաշինքը համաձայնություն է, որտեղ գերտերությունն իր վրա է վերցնում փոքր պետության անվտանգության ապահովման պատասխանատվությունը, հովանավորյալ պետության սպառնալիքները զսպելու և նպատակներն իրագործելու համար հակամարտության մեջ ներգրավված լինելու ռիսկը, փոխարենն ստանում է ազդեցություն փոքր պետության արտաքին քաղաքականության որոշման գործընթացի վրա: Մի կողմից՝ փոքր պետությունները կազմում են դաշինքներ, որպեսզի մեծացնեն իրենց անվտանգությունը գերտերության կողմից տրված երաշխիքների հիման վրա (պաշտպանել սեփական տարածքային ամբողջականությունը և բնակչությունը զինված հարձակման դեպքում), մյուս կողմից՝ գերտերությունը հետաքրքրված է ոչ այնքան սեփական տարածքի և բնակչության պաշտպանությամբ փոքր պետության կողմից, որքան իր ռազմական և արտաքին քաղաքական ազդեցության ընդլայնմամբ փոքր պետության նկատմամբ:

Փոքր պետությունը ստիպված է վճռորոշ ընտրություն կատարելու անվտանգության կամ ինքնիշխանության միջև, ընդ որում նշվածներից ցանկացածի ընտրությունն անպայմանորեն հանգեցնում է մյուսի կորստին: Սեփական ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանելու դաշնակցի խոստմանն ի պատասխան՝ վերջինս պարտավորվում է պաշտպանել դաշնակցին և առաջ մղել նրա նպատակները: Քիչ դեպքերում է գերտերությունն ակնկալում փոքր պետության ռազմական աջակցության ցուցաբերում: Զիջումները հիմնականում վերաբերում են արտաքին քաղաքականության նախաձեռնություններին, տարածքի և ռեսուրսների անարգել օգտագործման թույլտվությանը, առևտրային նախընտրությունների ձևավորմանը և համագործակցության այլ ձևերին:

Ստ. Ուոլտը, ուսումնասիրելով Միջին Արևելքի դաշինքները, ցույց է տալիս, որ տարածաշրջանային պետություններն առավել մտահոգված են հարևան թշնամիներից, քան գերտերություններից եկող սպառնալիքներով[1]: Այս դեպքում գերտերության հետ համագործակցության նպատակը հարևան պետության հետ առճակատման պարագայում օգնություն

[1] *Տես՝* ***Walt Stephen****, The Origins of Alliances, Cornell University Press, Ithaca, 1987.*

ստանալն է: Փոքր պետությունները[1] կարող են հետաքրքրված լինել դաշնակցային պարտավորություններով ոչ միայն ռազմական անվտանգության ապահովման, այլև ոչ ռազմական բնույթի ձեռքբերումներ ունենալու համար, օրինակ՝ առևտրի աճը կամ ներքին քաղաքական ռեժիմի աջակցությունը:

Դաշինքների ձևավորման, պահպանման և դադարեցման վերաբերյալ ամերիկյան տեսաբան Ջեյմս Մորոուն ելնում է այն թեզից, որ դաշինքները ավելին են, քան անարխիկ միջազգային համակարգում անվտանգության ապահովման միջոց: Նա հետազոտում է անվտանգության և ինքնավարության միջև փոխզիջումը համաչափ դաշինքներում, որտեղ պետությունները գրեթե հավասար են հզորության տեսանկյունից, և անհամաչափ դաշինքներում, որոնցում գործընկերների միջև ունակություններն անհավասար են: Օգտագործելով այս տեսությունը՝ Մորոուն առաջ է քաշում և հիմնավորում մի շարք հիպոթեզներ դաշինքի վարքագծի վերաբերյալ: Նա առանձնացնում է երեք պայման, որոնք կարող են դրդապատճառ դառնալ պետության համար, որպեսզի նա դադարեցնի կամ վերաձևակերպի դաշնակցային պարտավորությունները: Այդ պայմաններն են՝ պետության անվտանգության կամ ինքնուրույնության խաթարումը դաշինքի ներսում, պետության անվտանգության կամ ինքնուրույնության բարելավման հնարավորությունը դաշինքից դուրս, պետության վարչակարգի փոփոխությունը[2]:

Վերջաբանի փոխարեն

Անդրադառնալով հայ-ռուսական հարաբերություններին՝ նշենք, որ այս հարաբերությունները ամրագրված են շուրջ 140 միջպետական համաձայնագրերով, որոնք վերաբերում են համագործակցության բոլոր ոլորտներին: Անվտանգության ապահովման տեսանկյունից հատկապես կարևորվում են՝ 2010թ. Հայաստանում Ռուսաստանի Դաշնության 102-րդ ռազմակայանի գործառնությանը վերաբերող պայմանագրի ժամկետի երկարացումը մինչև 2044թ., երկու պետությունների միջև 2015թ. կնքված «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին» համաձայնագիրը, 2016թ. հաստատված «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի միացյալ խմբավորում ստեղծելու մասին» համաձայնագիրը, որի

---

[1] Փոքր ասելով՝ նկատի ունենք այն պետությունը, որի դիվանագիտական և նյութական ռեսուրսներն այնքան սահմանափակ են, իսկ պետության ղեկավարները կենտրոնանում են տարածքային ամբողջականության պաշտպանության, այլ ոչ թե հեռուն գնացող համաշխարհային նպատակների վրա:

*[2] Տես՝ **Morrow James D.**, Alliances and Asymmetry: An Alternative to the Capability Aggregation Model of Alliances // American Journal of Political Science Vol. 35, No. 4 (Nov., 1991), p. 917.*

նպատակը Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ցամաքային սահմանների պաշտպանությունն է:

Հայ-ռուսական համագործակցության պարագայում դաշինքը միանշանակ անհամաչափ է: Ռուսաստանը՝ որպես հեգեմոն պետություն, օգտագործում է անհամաչափ դաշինքները որպես միջազգային համակարգում իր վերահսկողության ընդլայնման միջոց: Գերտերությունը տրամադրում է իր դաշնակիցներին անվտանգության ապահովման երաշխիքներ հարևան պետություններից եկող սպառնալիքներից և ստանում է վերահսկողություն դաշնակիցների վարած քաղաքականության ու ռազմավարական նշանակության օբյեկտների նկատմամբ հետագայում իր շահերին ծառայեցնելու նպատակով: Ռուսաստանն իր գերիշխանության տարածման, ինչպես նաև Հարավային Կովկասում իր ներկայությունն ապահովելու նպատակով կազմել է դաշինք Հայաստանի հետ: Հայաստանը դիտվում է որպես անվտանգության ապահովման կարևորագույն օղակ և հուսալի դաշնակից տարածաշրջանում: Ռուսաստանը գիտակցում է, որ Հարավային Կովկասում Հայաստանը մնացել է իր միակ հենարանը, քանի որ անկախացումից հետո տարածաշրջանի երկրները կատարել են տարբեր ընտրություններ: Մասնավորապես՝ Վրաստանը դիմորոշվել է դեպի Արևմուտք, ինչն ավելի ակնհայտ դարձավ 2008թ. օգոստոսի ռուս-վրացական պատերազմից հետո: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա անկախացումից հետո Ադրբեջանը սկսեց սերտ համագործակցություն Թուրքիայի հետ՝ ապավինելով սեփական նավթադոլլարներին և Արևմուտքի հետաքրքրությանն այս առումով: Չնավորված պայմաններում Ռուսաստանին կենսականորեն անհրաժեշտ են Հայաստանի հետ ունեցած հարաբերությունները: Դրանով կարելի է բացատրել այն, որ գերտերության հետ ռազմավարական դաշինքի կազմում լինելով հանդերձ՝ Հայաստանը կարողանում է զարգացնել համագործակցությունն Արևմուտքի հետ:

Մյուս կողմից՝ Ռուսաստանն ունի Հայասատանի վրա ազդելու լծակներ, նախ և առաջ անվտանգության ոլորտում: Ղարաբաղյան հակամարտությունը, Ադրբեջանի հետ սահմանին շարունակական լարվածությունը, Թուրքիայի վարքագիծը, որը ներկայանում է որպես Ադրբեջանի դաշնակից, անհրաժեշտ են դարձնում Հայաստանի համար Ռուսաստանի հետ ռազմավարական դաշնակցությունը: Ընդունելի գներով զենքի մատակարարումը, ռուսական ռազմակայանի ներկայությունը Հայաստանի տարածքում, ՀԱՊԿ անդամակցությունը ստեղծում են Հայաստանի համար որոշակի անվտանգության միջավայր:

Գրականություն

1. Snyder Glenn H., Alliance theory: a neorealist first cut // Journal of International Affairs, Vol. 44, No. 1.
2. Beres, Louis René, Bipolarity, Multipolarity, and the

Reliability of Alliance Commitments // The Western Political Quarterly, Vol. 25, No. 4, 1972.
3. Liska, G. Nations in Alliance: The Limits of Interdependence. Baltimore : Johns Hopkins, 1962.
4. Walt Stephen, The Origins of Alliances, Cornell University Press, Ithaca, 1987.
5. Waltz Kenneth, Theory of International Politics, Random House, New York, 1979.
6. Holsti Ole/ Hopmann Terrence P. / Sullivan John D: Unity and Disintegration in International Alliances, Lanham/New York/London, 1973.
7. Security studies Security studies: an introduction/edited by Paul D. Williams, 2008.
8. Schroeder, P.W. Alliances, 1815–1945: Weapons of Power and Tools of Management. In K.Knorr (ed.) Historical Dimensions of National Security Problems. Lawrence: University Press of Kansas, 1976, p. 227–262.
9. Pressman Pressman, J. (2008) Warring Friends: Alliance Restraint in international Politics. Ithaca: Cornell University Press.
10. Weitsman, P.A.Intimate Enemies: The Politics of Peacetime Alliances. Security Studies 7 (1), 1997, 156–192., Weitsman, P.A. Dangerous Alliances: Proponents of Peace, Weapons of War. Palo Alto:

Stanford University Press, 2004.

11. Altfeld, M.F. 1984. The Decision to Ally: A Theory and Test. Western Political Quarterly (37), p.523–544.
12. Lalman, D., and Newman, D. 1991. Alliance Formation and National Security. International Interactions (16), p.239–253.
13. Walt Stephen, The Origins of Alliances, Cornell University Press, Ithaca, 1987.
14. Morrow James D., Alliances and Asymmetry: An Alternative to the Capability Aggregation Model of Alliances // American Journal of Political Science Vol. 35, No. 4 (Nov., 1991).

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ,պ.գ.դ., Վ.Ռ.Բալայանը:

ՀՏԴ 94(5)
Պատմություն

Ալեքսանդր ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտ
e-mail: khachatryan.aleksandr@gmail.com

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄՆ ՈՒ ՍԻՆ-ԾԻԱՆԳ ՈՒՅՂՈՒՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հոդվածը XX դարի առաջին կեսի Չինաստանի ներքին և արտաքին քաղաքականության վերլուծությունն է: Նրանում անդրադարձ է կատարվում Արևելյան Թուրքեստանի հանրապետության և ԽՍՀՄ միջև հարաբերություններին, ույղուրական խնդրին, Չինաստանի ներքին քաղաքացիական պատերազմին և Սինձիան մարզի վերջին պատմական էտապին: Այն բազմակողմանիորեն դիտարկում է նաև տարածաշրջանում գլխավոր ակտորների հետաքրքրությունները և դրանց անմիջական կապը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հռչակման հետ: ՉԺՀ հռչակումից հետո Սինձիան մարզը մտնում է Չինաստանի կազմի մեջ, իսկ 1955 թվականին ստեղծվում Սին-Ծիանգ ույղուրական ինքնավար մարզը:

Բանալի բառեր՝ *Ույղուրներ, Չինաստան, Ույղուրական հարց, Արևելյան Թուրքեստանի Հանրապետություն, Չինաստանում քաղաքացիական պատերազմ, Սին-Ծիանգ ինքնավար մարզի պատմություն*

А. Хачатрян

ПРОВОЗГЛАШЕНИЕ КИТАЙСКОЙ НАРОДНОЙ РЕСПУБЛИКИ И ОБРАЗОВАНИЕ СИНЬЦЗЯН-УЙГУРСКОГО АВТОНОМНОГО РАЙОНА

Данная статья содержит анализ внутренней и внешней политики Китая в первой половине 20-го века. В статье рассматриваются отношения между Восточно-Туркестанской Республикой и СССР, уйгурский вопрос, гражданская война в Китае и последний исторический этап провинции Синьцзян. В ней также рассматриваются интересы основных региональных держав и их связь с появлением новой Китайской Народной Республики. После провозглашения Китайской Республики провинция Синьцзян вошла в состав Китая, а в 1955 году был формирован Синьцзян-Уйгурский автономный район.

Ключевые слова: *Уйгуры, Китай, Уйгурский вопрос, Восточно-*

Туркестанская Республика, Гражданская война в Китае, История Синьцзян-Уйгурского автономного района

A. Khachatryan

PROCLAMATION OF THE PEOPLE'S REPUBLIC OF CHINA AND THE FORMATION OF THE XINJIANG UYGUR AUTONOMOUS REGION

This article contains an analysis of China's domestic and foreign policy in the first half of the 20th century. The article considers the relations between the East Turkestan Republic and the USSR, the Uyghur issue, China's civil war and the latest historical stage of the Xinjiang province. It also includes the analysis of international actors' interests in the region and their direct link with the proclamation of the People's Republic of China. After the proclamation of the PRC, the province of Xinjiang became part of China, and in 1955 the Autonomous province of Xinjiang was established.

***Keywords**: Uyghurs, China, Uyghur issue, East Turkestan Republic, Civil war in China, History of the Xinjiang Uygur Autonomous Region*

Պատմական հայացք գցելով ույղուրական հարցին՝ պարզ է դառնում, որ չին-ույղուրական հարաբերությունները մշտապես լի են եղել դոմինանտության համար պայքարի դրսևորումներով, իր մեջ ներառելով՝ թե՛ էթնիկ, և թե՛ կրոնական բաղադրիչներ: Սին-Ծիանգ Ույղուրական ինքնավար մարզը ձևավորվում է 20-րդ դարի կեսին, երբ Չինաստանում հաստատվում են կոմունիստական կարգերը: Տվյալ քաղաքական փոփոխությունները պայմանավորված էին ներքին քաղաքացիական պատերազմով և արտաքին միջազգային ուժերի գործոնով:

Դիտարկենք Չինաստանի ներսում գործող քաղաքական գործընթացները, որոնք մեծ ազդեցություն ունեցան ոչ միայն ույղուրների ճակատագրի, այլև ողջ չինական էթնոսի հետագա զարգացման ուղղու վրա: 19-րդ դարի վերջից Ցին դինաստիան գնալով թուլանում էր և կորցնում իր ազդեցությունը հյուսիսային և հարավ-արևելյան ճակատներում: Ի հակառակ դրան՝ մեծ թափ էին հավաքում տարբեր ժողովուրդների, այդ թվում նաև հենց չինացիների ապստամբությունները և դժգոհությունները: Ակտիվ էին նաև կրոնական հենքի վրա ձևավորված թաքուն խմբավորումները, որոնք Յետտի-Շաարի անկախության փաստի և Օսմանյան կայսրության հետ մտերմիկ հարաբերությունների արդյունք էին: Ցին դինաստիայի թուլացումից օգտվելով, բազմաթիվ թյուրքական ծագում և իսլամ դավանող ներկայացուցիչներ մշատապես առիթը բաց չէին թողնում՝ Սինձիան մարզում ամբստամբություններ կազմակերպելու համար: Յետտի-Շաարի չեզաքացումից հետո ևս պանթուրքիզմի գաղափարը չհեռացավ տարածաշրջանից: Ավելի քան հարյուր թուրք էմիսարներ և կամավորներ I համաշխարհային պատերազմի նախաշեմին ժամանում են Սինձիանի մարզ՝ նպատակ ունենալով բացել դպրոցներ և

կրթել տեղի բնակչությանը պանթուրքիզմի գաղափարախոսությամբ: Այդ դպրոցներում դասավանդվում և ուսումնասիրվում էին թյուրք ազգերի ընդհանուր պատմությունը, մշակույթը, լեզուն և իսլամական հենքի վրա պրոպագանդվում էր ազատագրական պայքար մղելու գաղափարը: Դա նաև իր հետ բերելու էր անկախ պետություն ստեղծելու անհրաժեշտությունը, որին պետք է միանային Կենտրոնական Ասիայի տարածքներն ու ժողովուրդը, Ղազաախստանը, ամբողջ Սինձիանն ու Արևելյան Մոնղոլիան:[1]

Սինձիանի ժողովուրդների ակտիվացումը չդադարեց նաև 1920-ական թվականներին՝ արդեն իսկ Չինաստանի արևելյան հակառակորդի դերակատարությամբ: Չինաստանի հետ մշտապես հակամարտող Ճապոնիան ևս ուներ իր հետաքրքրությունները տվյալ տարածաշրջանում: Դեռևս 1918 թվականին Տոկիոյում բացվել էր ույղուրական հատուկ պատրաստության ազգային դպրոց, իսկ Սինձիանում՝ “Թուրանի” համայնք: Այդ ամենը մեկ նպատակ էր հետապնդում՝ ստեղծել ճապոնական կառավարություն ունեցող մի պետություն Չինաստանի հյուսիսում:[2]

19-րդ դարի առաջին կեսը Չինաստանի պատմության անկայուն շրջափուլերից է համարվում: Ցին դինաստիայի հեռացումը, Սինհայի հեղափոխությունը, Ճապոնիայի հետ հակամարտությունը ծանր ազդեցություն է թողնում Չինաստանի թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական օրակարգի վրա: Արտաքին ուժերը՝ ի դեմս ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ռուսական կայսրության (ավելի ուշ՝ ԽՍՀՄ) և Ճապոնիայի, փորձում էին ապակայունացնել երկիրը և խառնվել ներքին գործերին: 1930-ական թվականներին նրանց է միանում նաև Գերմանիան՝ իր զավթողական քաղաքականությամբ: 1930-ական թվականներից սկսած՝ Չինաստանը կառավարվում էր Չանկայշիի կողմից, որը իր որդիներից մեկին ուղարկում է ֆաշիստական Գերմանիա՝ ռազմական դասընթացների: Զուգահեռ դրան ակտիվանում են Չինաստանի հարավում բնակվող ժողովուրդների և հյուսիս-արևմուտքում՝ ույղուրների, դունգանների և այլ ազգությունների անհնազանդությունները: Արտաքին ուժերի՝ մասնավորապես Թուրքիայի կողմից թե՛ քաղաքական և թե՛ ռազմական աջակցություն ստանալով՝ ձևավորվում են մի քանի ռազմական ճակատներ Սինձիան մարզի ներսում:[3] Այդ միավորումները ունեին միայն մեկ նպատակ՝ ապստամբել Չինաստանի կառավարության դեմ և վերջապես ստեղծել նոր անկախ իսլամական պետություն:[4]

---

[1] Տե՛ս ***Хожамбердиев К.*** *Указ. соч. - С. 337-345.*

[2] Տե՛ս ***Петров В.И.*** *Синьцзян: краткая история народных движений и воспоминания. - М.:, 2003. - С. 343-346.*

[3] Տե՛ս ***Бабаян Давид Климович*** */ ПОЛИТИКА КИТАЯ В ЦЕНТРАЛЬНОЙ АЗИИ, НА КАВКАЗЕ И В СЕВЕРНОМ ПРИКАСПИИ В* ***КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВВ./ Москва 2016/ http://ivran.ru/f/Dissertaciya_Babayana_D.K..pdf***

[4] Տե՛ս ***Хожамбердиев*** *К. Указ. соч. - С. 341-352.*

Հակաչինական ապստամբությունները վերջիվերջո հասնում են որոշակի հաջողության: Արդեն իսկ 1932 թվականին տարածաշրջանում հայտնվում է Խոտանի էմիրատը, որն իր հետ բերում է նոր պետության ձևավորմանը: Արդեն իսկ 1933 թվականի նոյեմբերի 12-ին տարածաշրջանում հայտնվում է մի նոր սուբյեկտ՝ Արևելյան Թուրքեստանի Իսլամական Հանրապետությունը: Այն հայտնի էր նաև Ույղուրստանի Հանրապետություն անվանումով և կառավարվում էր փաստացի նախագահ Խոջա Նիյազի կողմից: Արևելյան Թուրքեստանի Հանրապետության կենտրոնն էր համարվում Քաշգարը, որը ձգտում էր ամեն կերպ միջազգային ճանաչում ստանալ միջազգային հարաբերությունների հիմնական ակտորներից: Սակայն ո՛չ Չինաստանը և ո՛չ էլ Խորհրդային միությունը չէին կարող կողմ լինել իսլամական հենքի վրա ստեղծված նոր անկախ պետությանը:

Ույղուրների ստեղծած նոր պետությունը, չունենալով բավարար փորձ, աջակցություն և հայտնվելով միջազգային հարաբերությունների միջև եղած տարաձայնությունների կիզակետում, շուտով չեզոքացվում է: Բանն այն է, որ Չինաստանում մշտապես շարունակվող քաղաքացիական պատերազմի արդյունքում երկիրը բաժանվել էր երկու բևեռների: Դրանք էին՝ չին ազգայնականները և կոմունիստները, որոնք իրենց հերթին ցանկանում էին տիրանալ ամբողջ Չինաստանին: Իրավիճակը փոխվում է միայն այն ժամանակ, երբ Արևելյան Ասիայի հյուսիսում իր ազդեցությունն է մեծացնում Չինաստանի և Սովետական Միության հարևաններից մեկը՝ Ճապոնիան: Ճապոնիան ցանկանում էր ընդլայնել իր տարածքը, ուստի և վարում էր էքսպանսիայի քաղաքականություն:

Հայտնի է, որ Սովետական Միության ներկայացուցիչները բացահայտ դեմ էին Չինաստանում հաստատված Գոմինդյաններին և աջակցելով կոմունիստներին՝ փորձում էին թուլացնել Չանկայշիի իշխանությունը Չինաստանում: Սակայն իրադրությունը փոխվում է, երբ 1937 թվականին Ճապոնիան ներխուժման փորձեր է իրականացնում դեպի Չինաստանի հյուսիս, Մոնղոլիա և ներկայիս Ռուսաստանի արևելյան շրջաններ: Սովետական Միության ռազմական ուժերի ղեկավար կազմի զեկույցներից հետո սովետական բանակը որոշում է կայացնում աջակցել Չինաստանի կառավարությանը և կայունացնել իրավիճակը տվյալ հատվածում: Այդ աշխարհաքաղաքական խնդիրների հետ հաշվի նստելով՝ նոր ստեղծված Արևելյան Թուրքեստանի Իսլամական Հանրապետությունը գրավվում է սովետական և չինական բանակների կողմից և այնուհետև փոխանցվում Չինաստանին: Սովետական բանակը, օգտագործելով իր օդային ուժերը, կրակահերթի է ենթարկում Սինձիանի տարածքը՝ Չինաստանին վերադարձնելու նպատակով: Կարևոր է նշել, որ Սինձիանի նոր ղեկավարը

ավելի հակված էր սովետական վարչակարգին, քան չինական գոմինդյանների իշխանությանը:[1]

Սինձիանի ղեկավարության մասին խոսելիս, կարելի է առանձնացնել ամենակարկառուն դերակատարներից մեկին՝ Շեն Շիցային: Շեն Շիցայը 20-րդ դարի երեսունականներից եղել է Սինձիան մարզի մարզպետը՝ ղեկավարը, որը փաստացի, սովետական իշխանության հետ վարելով բարիդրացիական հարաբերություններ, դարձել էր Սինձիանի միապետը: Տվյալ մարզը և հարակից շրջանները ակտիվ տնտեսական հարաբերություններ էին վարում ԽՍՀՄ-ի հետ և ուղղակիորեն կախման մեջ էին գտնվում առևտրականներից:[2]

Ինչպես արդեն նշել էինք, 1936-ին Չինաստանը կորցնում է բավականին մեծ թվով տարածքներ՝ հատկապես ներկայիս Չինաստանի հյուսիս-արևելյան և ծովափնյա հատվածներում: Ճապոնիան ցանկանում էր վերջնականապես հպատակեցնել Չինաստանին և ձերբազատվել Չանկայշիի իշխանությունից, և քանի որ Չինաստանի հյուսիսային սահմանը անցնում էր միայն Սինձիանի տարածքով, մինչև 1942 թվականը գոմինդյանները փորձում էին բանակցել Շեն Շիցայի հետ և համագործակցության որոշակի պայմանավորվածություններ ձեռք բերել: Այդ թեմայով Պետրովը նշում է, որ «1942 թվականին Սինձիան մարզի խոշոր քաղաքներից Ուրումչի է մեկնում անձամբ Չանկայշիի կինը՝ բանակցություններ վարելու ակնկալիքով: Այս անգամ տարածաշրջանային և անգամ միջազգային դրությունը այլ էր: 1942 թվականի հունիսի 22-ին Գերմանական Վերմախտը հարձակվել էր ԽՍՀՄ-ի վրա և բավականին արագ տեմպերով շարժվում էր առաջ: Շեն Շիցայը հասկանալով, որ այլևս չի կարող ենթադրել սովետական բանակի և իշխանության աջակցությունը՝ կտրուկ շրջադարձ է կատարում դեպի գոմինդյանական ղեկավարություն: Անմիջապես հայտվում են կուսակցական նոր մարզային շտաբեր, ներկայացուցիչներ, իսկ Շեն Շիցայը որոշում է կտրուկ քայլերով ձերբազատվել կոմունիստներից և կոմունիստական հայացքներ ունեցող բնակչությունից»:[3] Այդ քաղաքականությունը բերում է նրան, որ 1942 թվականին նախ՝ սկսվում է ղազախների ապստամբությունը, իսկ այնուհետև՝ մարզի տարբեր հատվածներում ձևավորվում են ուժային պայքարի խմբավորումներ: Ղազախական թևի առաջնորդն էր Դալելխան Սուգուրբայևը, որը ոգեշնչելով այլ տեղացի ժողովուրդներին, կոչ էր անում ստեղծել նոր անկախ պետություն:[4]

---

[1] *Տե՛ս* ***Алексей Волынец*** */ Первая часть. История уйгурского сепаратизма до 1950-х годов /* *https://rusplt.ru/society/education/world/uyguryi-v-bolshoy-igre-velikih-derjav-7859.html*

[2] *Տե՛ս Letter of Governor Sheng Shicai to CDES.Stalin, Molotov, and Voroshilov - https://digitalarchive. /wilsoncenter.org/document/121894*

[3] *Տե՛ս* ***Петров В. И.*** *«Мятежное „сердце“ Азии. Синьцзян: краткая история народных движений и воспоминания» - Москва, издательство «Крафт+», 2003. ISBN 5-93675-059-0*

[4] *Տե՛ս 杜根成,"达列力汗·苏古尔巴也夫" 中华英烈网/ http://www.81.cn/yljnt/2014-01/20/content_5741785.htm*

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Սինձիանի մարզը գտնվում էր ծանր տնտեսական ճգնաժամի մեջ: Շեն Շիցայի կայացրած որոշումը՝ ԽՍՀՄ-ի հետ առևտրական հարաբերությունները դադարեցնելու մասին, բերեցին նրան, որ մարզում արդյունաբերարական և գյուղատնտեսական ապրանքների պակաս կար: Դժգոհությունների մեծ ալիքը հանգեցրեց 1944 թվականի օգոստոսին Չանկայշիի ՝ Շեն Շիցայի հետ կանչման որոշմանը, իսկ այդ պաշտոնը ժամանակավորապես կրճատվեց:[1] Մարզային կառավարության ղեկավար նշանակվեց Յու Ջուսինը, ով մի շարք բարեփոխումներ իրականացրեց, ընդհուպ մինչև ազատ արձակեց քաղբանտարկյալներին: [2]

Իրավիճակի սրումը ավելի ու ավելի էր խորացնում ապստամբների հետ հարաբերությունները, ուստի 1944 թվականի սեպտեմբերից ղազախների, ույղուրների և այլ ժողովուրդների զինված պայքարի արդյունքում տարածաշրջանում հայտվում է մի նոր պետություն: Հոկտեմբերից սկսվում են նաև ապստամբությունները Նիլկի շրջանում՝ թաթարների, ղազախների և կալմիկների մասնակցությամբ: 1944 թվականի նոյեմբերի 7-ին Քուլջան անցնում է ապստամբների ազդեցության տակ, իսկ հինգ օր անց՝ նոյեմբերի 12-ին, իր անկախությունն է հռչակում նոր Արևելյան Թուրքեստանի Հանրապետությունը: Հատկանշական է, որ առաջին Արևելյան Թուրքեստանի իսլամական Հանրապետությունը իր անկախությունը նույնպես հռչակել էր նոյեմբերի 12-ին(1933 թվական):

Նոր անկախ հանրապետության առաջին նախագահ է դառնում Ալիհան Տորեն՝ որը դեռ 1943 թվականին հիմնել էր «Արևելյան Թուրքեստանի ազատության կոմիտեն» և ակտիվորեն քարոզում էր անկախացման գաղափարը: Նորաստեղծ պետության կառավարությունը սահմանեց Սինձիանում բնակվող ժողովուրդների հավասարության, մշակույթի և տնտեսության հզորացման, իսլամի խորացման և հարակից պետությունների հետ բարիդրացիական հարաբերություններ վարելու քաղաքականություն: Կարևոր էր նաև տարբեր ազգային պատկանելիություն ունեցող ներկայացուցիչներից կանոնավոր բանակ ստեղծելու մտադրությունը: Բանակաշինության գործում մեծ դեր ունեցավ Ահմեդժան Քասիմը, որը ապստամբական միավորումներից 1945 թվականի ապրիլի 8-ին ձևավորեց կանոնավոր բանակ :

Արևելյան Թուրքեստանը ցանկանում էր տիրանալ և իր հսկողությունը սահմանել Չինաստանի հյուսիս-արևմտյան հատվածում, որտեղ իրենց հետաքրքրություններն ունեին նաև ԽՍՀՄ-ն և Չինաստանի կոմունիստական հայացքներ ունեցող ուժերը: Նրան հաջողվում է տիրանալ Ալթայի շրջանին, Քուլջային և 1945 թվականի օգոստոսի վերջին

[1] ***John W. Garver***. *Chinese-Soviet Relations, 1937-1945: The Diplomacy of Chinese Nationalism. 173-176pp.*

[2] ***Jacobs, Justin Matthew*** *(2011). Empire besieged: the preservation of Chinese rule in Xinjiang, 1884-1971. San Diego, CA: University of California, San Diego. ISBN 9781124814070.*

գոմինդյանական ուժերից ազատվում է նաև Ուրումչին։ [1] Պաշտոնական Չոնգցինգը, տեղեկանալով իրավիճակին մասին, ընդունում է հեղափոխական ուժերի՝ ինքնավարություն ստանալու իրավունքը։ Նա կոչ է անում դադարեցնել ռազմական գործողությունները և նստել բանակցությունների սեղան՝ Սինձիանում նոր կոալիցիոն կառավարություն ձևավորելու նպատակով։ Արևելյան Թուրքեստանի Հանրապետության (ԱԹՀ) ղեկավարությունը համաձայնում է բանակցել՝ ելնելով գոմինդյանների մարտական ուժերի առավելության հանգամանքից։

1945 թվականի հոկտեմբերին Ուրումչի է ժամանում ԱԹՀ-ի Կառավարությունը։ Գեներալիսիմուս Չանկայշին, հաշվի առնելով Սինձիանում առկա բարդ իրադրությունը, բանակցությունների է ուղարկում գեներալ Ջան Ջիջոնգի գլխավորած պատվիրակությունը, որի նպատակն էր մինիմալիզացնել Սինձիանում անջատողական տրամադրությունները և ստանալ կարևոր լծակներ հետագայում ձևավորվելիք նոր կառավարությունում։ Հատկանշական է, որ Չանկայշիի կառավարությունը ռազմական գործողությունները դադարեցնելու հարցով բանակցում էր նաև ԽՍՀՄ-ի հետ, որը ակտիվորեն զինում էր Արևելյան Թուրքեստանի Հանրապետությանը։ Այդ տարիներին Թուրքեստանի բանակի ենթակայության տակ առկա էին ծանր հրետանի, ժամանակակից զրահատեխնիկա, իսկ գումարտակները ուղեկցվում էին Խորհրդային Միության ռազմական խորհրդատուներով։ Դա էր պատճառը, որ ապստամբները արագորեն կարողանում էին դիմակայել գոմինդյաններին և առաջ շարժվել դեպի հարավ։ [2]

Փաստացիորեն տվյալ տարածաշրջանում ձևավորվել էին «երեք տարածքներ», որոնք ունեին անկախանալու նկրտումներ և ցանկանում էին ստանալ ինքնավարություն՝ գոմինդյանական իշխանությունից։ Ի վերջո երեք ամիս տևած բանակցություններից հետո, 1946 թվականի հունիսի 12-ին՝ Ուրումչիում, ստորագրվում է խաղաղության համաձայնագիրը, ըստ որի՝ ապստամբած տարածքներում ձևավորվում է կոալիցիոն կառավարություն, որը գլխավորում է անձամբ Ջան Ջիջոնգը։ Ըստ համաձայնագրի, Ահմեդժան Քասիմովը դառնում է կառավարության երկրորդ դեմքը, իսկ ընդհանուր անդամների համամասնությունը պետք է բաշխվեր հետևյալ կերպ՝ տասնհինգ ներկայացուցիչ տեղական և տասը՝ գոմինդյանական իշխանություններից։ Հաստատվեցին նաև մի շարք փոփոխություններ, որոնցից կարելի է առանձնացնել լեզուների հավասարությունը, խոսքի, հավաքների, մամուլի ազատությունները, ինչպես նաև զանազան կազմակերպությունների հետ համագործակցելու հնարավորությունը։ Արևելյան Թուրքեստանի հանրապետությունը

[1] *Տե՛ս* ***Mark Dickens****: "The Soviets in Xinjiang 1911-1949. 20-25pp.*
[2] *Տե՛ս* ***Mark Dickens****: "The Soviets in Xinjiang 1911-1949. 16-18pp.*

այսուհետ կարող էր ինքնուրույն վարել ներքին և արտաքին առևտրային հարաբերությունները, որը պայմանավորված էր ԱԹՀ կանոնավոր բանակի պահպանմամբ: [1]

Բանակցային կողմերը թեև եկան համաձայնության, սակայն նրանց նպատակները իրականում այլ էին: Չինացի ազգայնականները ձգտում էին իրենց իշխանությունը ամրապնդել Սինձիանում, իսկ Արևելյան Թուրքեստանի Հանրապետությունը՝ ձերբազատվել արտաքին իշխանություններից և հիմնել նոր անկախ պետություն: Ընդ որում, ԱԹՀ-ի ներսում տիրող իրավիճակը ևս անկայուն էր, քանի որ տարբեր շրջանների առաջնորդները ձգտում էին տիրանալ ողջ ԱԹՀ-ին և դառնալ այդ տարածքների ղեկավարը: Բացի այդ, հարկավոր է նշել ԽՍՀՄ և չինացի կոմունիստների հետաքրքրությունները, որոնք հետագայում հանգեցրին միջազգային փոփոխության: Բանն այն է, որ 1946 թվականին գոմինդյանների հետ ձեռք բերված պայմանավորվածություններից հետո ԱԹՀ-ի առաջին նախագահ Ալիհան Տորեն հափշտակվում է ԽՍՀՄ հատուկ ծառայությունների կողմից և ուղարկվում Տաշկենտ, որտեղ և անցկացնում է իր հետագա տարիները: Նրան փոխարինելու է գալիս Ահմեդժան Քասիմովը, որը, ի տարբերություն Ալիհանի ուներ պրոսովետական հայացքներ: Հենց Քասիմովն էր գլխավորում պրոսովետական Արևելյան Թուրքեստանի թյուրքական ժողովուրդների ազգային կոմիտեն, որը մշտապես համագործակցում էր և ուղղորդվում ԽՍՀՄ-ի կողմից: Մյուս կողմից Չինաստանում ընթանում էր մշտական բնույթ կրող քաղաքացիական պատերազմը, որը ևս մեծ դեր խաղաց Սինձիանի հետագա ճակատագրի վրա:

Ջան Ջիջոնգը, վարելով գոմինդյանական ազգային քաղաքականություն, փորձում էր թուլացնել սովետական ազդեցությունը ոչ միայն ԱԹՀ-ի, այլև ամբողջ տարածաշրջանի վրա: Հայտնի է, որ ԱԹՀ-ի մաս կազմող ոչ բոլոր տարածքներում էր ընդունվում կոմունիստական գաղափարախոսությունը և ԽՍՀՄ-ի աջակցությունը: Մասնավորապես Ալթայի շրջանում գոմինդյանների հետ կոալիցիոն կառավարություն ստեղծելուց հետո ղեկավար էր նշանակվել ղազախ Օսպան-Բաթուրը, որը մշտապես հակամարտության մեջ լինելով Ահմեդժանի իշխանության հետ՝ փորձում էր ձերբազատվել ԽՍՀՄ-ի «լծից»: Գոմինդյանների ներկայացուցիչ Ջան Ջիջոնգը դիվանագիտորեն փորձում էր աջակցել Օսպան-Բաթուրին՝ տրամադրելով նրան զենք, զինամթերք: Ջիջոնգը նպատակ ուներ համոզել Օսպան-Բաթուրին փոխել իր դաշնակիցներին և անցնել գոմինդյանների կողմը: Միաժամանակ Ջիջոնգը բարեփոխում էր տնտեսական և քաղաքական համակարգը, սակայն 1947 թվականից Սինձիանի ողջ

[1] *Տե՛ս* ***Andrew D.W. Forbes****, Warlords and Muslims in Chinese Central Asia: A Political history of Republican Sinkiang 1911-1949 (Cambridge: Cambridge University Press, 1986) ISBN-13: 978-0521255141, 97-99pp*

տարածքում սկսվում են մասսայական ապստամբություններ: 1947 թվականից անկարգություններ են սկսվում նաև Ուրումչիում: Ապստամբության հիմնական ակտորները ույղուրներն էին, որոնք պահանջում էին ույղուրներին՝ մարզային իշխանությունում ավելի մեծ լծակներ տրամադրել: Դժգոհությունները հանգեցրին իշխանությունից Ջան Ջիջոնգի հեռացմանը, ում հետագայում փոխարինեց Մասուդ Սաբրին:[1]

Արևելյան Թուրքեստանի Հանրապետության ներքին քաղաքական ճգնաժամը չչեզոքացվեց անգամ Մասուդ Սաբրիի օրոք: Բանն այն է, որ Մասուդ Սաբրին ուներ հակասովետական և պրոգոմինդյանական կողմնորոշում, որը խիստ հակասում էր «երեք տարածքների» քաղաքականության հետ: Իրավիճակը էլ ավելի սրվեց, երբ Օսպան Բաթուրը լքեց կոալիցիոն կառավարությունը և ԱԹՀ մայրաքաղաք Քուլջան: Նրան միացան այլ առաջնորդներ, որոնք համաձայնեցին պայքարել իրենց իսկ անկախության համար՝ մասնավորապես ԽՍՀՄ-ի և պրոսովետական ուժերի դեմ: Այսպիսով՝ կարելի է պնդել, որ 1947 թվականի վերջից Քուլջայի և Ուրումչիի միջև կապը կտրվեց, որը նոր թափ հաղորդեց Սինձիանում ռազմական գործողություններին: Խոսքը Մոնղոլիայի և Չինաստանի միջև գտնվող «Բեյթաշան» տարածքի շուրջ տեղի ունեցած միջադեպի մասին է: Չինացի ազգայնականները 1947 թվականի առաջին կեսին ներխուժում են Մոնղոլիայի տարածք և գրավում որոշ բարձրունքներ: Մոնղոլիայի հարավային և Չինաստանի հյուսիսային հատվածները մշտապես եղել են ԽՍՀՄ-ի ուշադրության տակ, ուստի հաշվի առնելով նաև հակասովետական Մասուդ Սաբրիի նշանակումը՝ ԽՍՀՄ-ն որոշում է աջակցել մոնղոլներին և Սինձիանում բնակվող այլ ուժերի՝ տարածաշրջանում վերահսկողություն սահմանելու նպատակով: Առաջնային փուլում գոմինդյանական ուժերը հաջողություններ են արձանագրում, սակայն հունիսի 5-ի՝ ԽՍՀՄ օդային ուժերի ռմբակոծություններից հետո չինացիները սկսում են նահանջել: Մոնղոլները և խորհրդային բանակը հատում են Սինձիանի սահմանը և հասնում մինչև կենտրոնական Սինձիան: Ղազախների առաջնորդ Օսպան Բաթուրի, գոմինդյանական ուժերի և ամերիկյան աջակցության շնորհիվ ռազմական գործողությունները դադարեցվում են և վերականգնվում է ստատուս-քվոն: [2]

Միջիշխանական պայքարը և ռազմական բազմապիսի գործողությունները շարունակվեցին ընդհուպ մինչև 1948-1949 թվականները: ԽՍՀՄ-ի ներկայացուցիչները քաջ գիտակցում էին իրենց դերը տարածաշրջանում և պարբերաբար վարում էին բանակցություններ

[1] *Foreign Relations of the United States, 1947, The Far East: China, Volume VII / United States Government Printing Office Washington 1972 / https://history.state.gov/historicaldocuments/frus1947v07*

[2] ***David D. Wang**. Clouds over Tianshan: essays on social disturbance in Xinjiang in the 1940s. - NIAS Press, 1999. - P. 122. - ISBN 8787062623.*

թե՛ ԱԹՀ-ի և թե՛ գոմինդյանական ուժերի հետ: Պատճառը ակնհայտ էր՝ Չինաստանում քաղաքացիական պատերազմի վերջին փուլն էր ընթանում և անհրաժեշտ էր դիվանագիտական ճիշտ որոշում կայացնել: 1949 թվականի՝ գոմինդյանների և կոմունիստների միջև տեղի ունեցած հունվարյան բանակցություններից արդեն իսկ պարզ էր, որ գոմինդյանական ուժերը պարտություն են կրել, և նրանց Սինձիանի ճակատագիրը այլևս չէր հետաքրքրում: ԽՍՀՄ առաջնորդ Իոսիֆ Ստալինը իր հերթին համակրում և բանակցում էր Մաո Ցզե Դունի հետ, որը Չինաստանի Կոմունիստական կուսակցության հիմնական ակտորն էր: Հատկանշական է, որ Ստալինը նաև ակտիվ բանակցում էր Նանկինում գոմինդյանական իշխանության հետ՝ ի դեմս՝ Ջան Ջիջոնգի և Ուրումչիի քաղաքապետ՝ Բուրհան Շահիդիի: Չնայած գոմինդյանների և կոմունիստների միջև 1949 թվականի հունվարից-մայիս տևած բանակցությունները ոչ մի արդյունք չտվեցին, այնուամենայնիվ Բուրհան Շահիդիին փոխարինեց Մասուդ Սաբրիին՝ որպես մարզային կառավարության ղեկավար: [1]

Բուրհան Շահիդին, ինչպես արդեն նշել էինք, ուներ գոմինդյանական ուղղվածություն, սակայն երբ 1949 թվականի սեպտեմբերի 24-ին Կոմունիստական կուսակցության բանակը ներխուժում է Սինձիանի տարածք՝ նրան այլ տարբերակ չի մնում, քան անցնել Չինաստանի կոմունիստական կուսակցության կողմը և փոխել իր դիրքորոշումը: Նույն ուղին է ընտրում նաև Ջան Ջիջոնգը, որը 1949 թվականի հունիսին լքելով Գոմինդյանական կուսակցությունը, իր աջակցությունն է հայտնում անձամբ Մաո Ցզե Դունին:

Չինաստանում քաղաքացիական պատերազմը մոտենում էր իր ավարտին, և տեղի էր ունենում ուժերի վերադասավորում: Սինձիանը բացառություն չէր, և գոմինդյանական ուժերի հեռացման փաստը չին կոմունիստներին թույլ էր տալիս ավելի ազատ գործել տվյալ տարածքում: 1949 թվականի օգոստոսի 9-ին Կոմունիստական կուսակցության առաջնորդ Մաո Ցզե Դունը հանձնարարում է Ջան Ջիջոնգին հրավիրել Սինձիան մարզում ապստամբած ժողովորդների առաջնորդներին՝ Չինաստանի ժողովրդական քաղաքական խորհրդատվական խորհրդին մասնակցելու նպատակով: Մաո Ցզե Դունը ցանկանում էր վերջնական բանակցել «երեք տարածքների» առաջնորդների հետ՝ առաջարկելով միանալ և հռչակել Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն: Սինձիանի տասնմեկ հոգանոց պատվիրակությունը, որի կազմում էին Ահմեդժան Քասիմովը, Աբդուլքերիմ Աբբասը, Իշաք Բեկ Մունոնովը, Լու Չժին և Դելիլհան Սուգուրբաևը, ուղևորվում են դեպի Պեկին:[2]

[1] *Տե՛ս* ***Mark Dickens****: "The Soviets in Xinjiang 1911-1949. 25-26pp.*
[2] *Տե՛ս* ***Donald H. McMillen****, Chinese Communist Power and Policy in Xinjiang, 1949-1977 / Westview Press, 1979, 24p.*

Պատվիրակությունը պետք է հասներ Պեկին ԽՍՀՄ ինքնաթիռով՝ Խորհրդային Ղազախստանի մայրաքաղաք Աստանայից կատարելով մի քանի կանգառներ: Տվյալ ուղին պայմանավորված էր նրանով, որ պատվիրակության ղեկավար Ահմեդժան Քասիմովը ցանկանում էր հանդիպումներ ունենալ ԽՍՀՄ ներկայացուցիչների հետ և համոզել նրանց աջակցել Սինձիանի անկախ պետության ստեղծման գաղափարը: Ահմեդժանը կտրուկ դեմ էր արտահայտվում Չինաստանին միանալու և Չինաստանի հյուս-արևմտյան մարզը դառնալուն, ուստի ակնկալում էր ԽՍՀՄ աջակցությունը: Բանակցությունները ընհատվում են, քանի որ 1949 թվականի սեպտեմբերի 3-ին ԽՍՀՄ-ը տեղեկացնում է ԱԹՀ-ի առաջնորդներից Սայֆուդդին Ազիզին՝ պատվիրակության ինքնաթիռի կործանման մասին: Պատվիրակության բոլոր անդամները մահանում են, իսկ հետագա բանակցային գործընթացը շարունակվում է հենց Սայֆուդդին Ազիզի գլխավորությամբ: Ի տարբերության նախորդ պատվիրակության՝ Սայդուդդին Ազիզին լոյալ էր տրամադրված Չինաստանի նոր կոմունիստական կուսակցության առաջնորդներին և գաղափարին, ուստի նա համաձայնում է միանալ նոր ստեղծվելիք Չինաստանի Ժողովրդական Հանրապետությանը:

Կան տարբեր վարկածներ պատվիրակության ինքնաթիռի կործանման վերաբերյալ: Ըստ պաշտոնական վարկածի՝ ինքնաթիռը եղանակային պայմաններից ելնելով, կտրուկ նվազեցրել է թռիչքի բարձրությունը և բախվել Բայկալ լճի մոտակայքում գտնվող սարի: Ոչ պաշտոնական վարկածի կողմնակիցները, որոնց թվում հիմնականում ույղուրներ են, պնդում են, որ եղել է պայմանավորվածություն ԽՍՀՄ և Չինաստանի առաջնորդների միջև, չեզոքացնել Ահմեդժան Քասիմովին և Սինձիանի այլ առաջնորդներին՝ բանակցությունները չձախողելու նպատակով: Ինչպես արդեն նշել էին, Քասիմովը դեմ էր Չինաստնանի կազմի մեջ մտնելու գաղափարին և բանակցություններին փորձելու էր ստանալ Չինաստանի համաձայնությունը՝ նոր անկախ պետություն ստեղծելու համար:

1949 թվականի սեպտեմբերի 19-ին Սինձիանի ղեկավար Բուրհան Շահիդին հեռագիր է ուղարկում Մաո Ցզե Դունին, ըստ որի՝ Սինձիանի ժողովորդը դադարեցնում է Գոմինդյանների հետ բոլոր հարաբերությունները և միանում Չինաստանի Կոմունիստական կուսակցությանը: 1949 թվականի հոկտեմբերի 1-ին Պեկինում հռչակվում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը, իսկ Սինձիանը դառնում է ՉԺՀ մարզերից մեկը: Հոկտեմբերի 20-ին Չինաստանի ժողովրդական ազատագրական բանակը տեղակայվում է Ուրումչիում, իսկ Բուրհան Շահիդին վերանշանակվում է որպես Սինձիանի ղեկավար: Հաջորդ տարի՝ 1950 թվականին, ԱԹՀ-ի ռազմական ուժերը ևս միանում են Չինաստանի ժողովրդական ազատագրական բանակին և ենթարկվում պաշտոնական Պեկինին:

Չինաստանի նոր կոմունիստական կառավարությունը հռչակելով Սինձիանը իր տարածքի մաս՝ ժառանգեց նաև բոլոր քաղաքական, ազգային և տնտեսական խնդիրները, որոնք առկա էին տվյալ տարածքում: Ապստամբությունները Սինձիանում շարունակվեցին ընհուպ մինչև 1960-ական թվականները: Մինչև 1955 թվականը, Մաո Ցզե Դունին հաջողվում է բանակի շնորհիվ կասեցնել և չեզոքացնել անկայունություն ստեղծող բազմաթիվ ուժերը: Ի վերջո, 1955 թվականի հոկտեմբերի 1-ին ձևավորվում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տարածքով ամենամեծ՝ Սին-Ծիանգ Ույղուրական ինքնավար շրջանը:[1]

Այսպիսով՝ ույղուրները, պատմության ողջ ընթացքում բախվելով բազմաթիվ տարածաշրջանային, քաղաքական և տնտեսական խնդիրների, կարողացել են պահպանել իրենց էթնիկ ինքնատիպը, մշակույթն ու լեզուն: Պատմական տարբեր փուլերում մշտապես ձգտել են ունենալ անկախ պետություն, պետականություն, հիմք են հանդիսացել բազմաթիվ պետական միավորումների ձևավորմանը, իսկ Չինաստանի հետ հարաբերություններում վարել են պետականամետ քաղաքականություն: Հատկանշական է, որ ՉԺՀ առաջնորդ Մաո Ցզե Դունը շատ էր կարևորում Սինձիանի հետ համաձայնության գալու հանգամանքը, քանի որ հյուսիսային, հյուսիս-արևմտյան և արևմտյան սահմանները մինչև օրս համարվում են Չինաստանի տնտեսական և ռազմաքաղաքական կարևոր նշանակության տարածքներ:

Գրականություն

1. Gumilev, L. N. Ancient Turks. The history of the formation and flourishing of the Great Turkic Kaganate
2. (the VI-VIII centuries AD). SPb: Kristall. 2003.
3. Dillon, M. Xinjiang – China's Muslim Far Northwest. – L., 2004.
4. Muldavin Joshua / «From Rural Transformation to Global Integration: The Environmental and Social Impacts of
5. China's Rise to Superpower»: 2006
6. Liu, Tao Tao. Faure, David (1996). Unity and Diversity: Local Cultures and Identities in China. Hong Kong
7. University Press Rian Thum (13 October 2014). The Sacred Routes of Uyghur History.
8. Harvard University Press. pp. 113
9. Syroezhkin, K. L. Separatism in Xinjiang: Myths and Reality. Centralnaya Asia, no.10, pp. 34-36, 1997.

[1] *Տե՛ս* ***Preeti Bhattacharji*** *- Uighurs and China's Xinjiang Region /* https://www.cfr.org/backgrounder/uighurs-and-chinas-xinjiang-region

10. Xinjiang Tunji Nanjian - 2009. Statistical Yearbook of Xinjiang in 2009. Urumqi. 2009. P. 79. (In Chn.)
11. Yitzhak Shichor, Ethno-Diplomacy: The Uyghur hitch in Sino-Turkish relations,
12. East-West Center, Honolulu,2009
13. Zhogolev, D. A. The policy of the Chinese Communist Party in the regions of the national autonomy (the 80s).
14. Cand. sci. diss. M., 1991.
15. Zhong hua ren min gong he guo min zu qu yu zi zhi fa (Law on National District Autonomy of the People's
16. Republic of China). Governmental Portals of the People's Republic of China National People's Congress.
17. Beijing: 2005, p. 10. (In Chn.)
18. Бабаян, Д.К. Политика Китая в Центральной Азии, на Кавказе и в Северном Прикаспии в конце XX – начале
19. XXI вв.: дис. канд. ист. наук / Д.К.Бабаян. – М., 2016. – 521 с
20. Байчоров А.М Китаизация. Последствия роста мощи Китая для мира в XXI веке. - Москва:
21. «Международные отношения", 2013.
22. Буяров, Д.В. Современный Китай в системе международных отношений / Д.В. Буяров. Москва: 2015. – 632с Владимиров, О. Страницы политической биографии Мао Цзэ-дуна / О. Владимиров, В. Рязанцев. - М.:
23. Издательство политической литературы, 2001. - 112 с.
24. Григорьев В.В. Землеведение К. Риттера. География стран Азии, находящихся в непосредственных
сношениях с Россией. Восточный или Китайский Туркестан. СПб. 1869.
25. Даниэль, Елисеев История Китая. Корни настоящего / Елисеев Даниэль. - М.: Евразия, 2008. - 255 с
26. Китай в мировой политике. - М.: Российская политическая энциклопедия, Московский государственный
институт международных отношений (Университет) МИД РФ, 2001. - 528 с.
27. Киреев А.А Современный Китай в системе международных отношений. - Москва: 2014. Китай после
28. "культурной революции". - М.: Мысль, 1979. - 360 с Лексютина Я.В., Петрунина Ж.П., Киреев А.А.
29. Современный Китай. Страницы истории, Москва:

Ленанд, 2016.
30. Лифань Ли, Шиу Дин. Геополитические интересы России, США и Китая в Центральной Азии / Ли
31. Лифань, Дин Шиу // Центральная Азия и Кавказ. – 2004. – № 3. – 212 с.
32. Малявкин, 1972. Малявкт А. Г. Китай и уйгуры в 840-848 гг. // Сибирь, Центральная и Восточная Азия в
33. средние века. - Новосибирск, 1972.
34. Разов, С. С. Китайская Народная Республика. Справочник: моногр. / С.С. Разов. - М.:
35. Издательство политической литературы, 1989. - 277 с.
36. Сыроежкин К. Л. Этносоциальный фактор развития Синьцзяна // Проблемы Дальнего Востока. 1990. № 2.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ,պ.գ.դ., Վ.Մ.Ավանեսյանը:

ՀՏԴ 94(31)
Պատմություն

Ալեքսանդր ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտ
e-mail: khachatryan.aleksandr@gmail.com

ՈՒՅԳՈՒՐՆԵՐԸ ՄՈՆԳՈԼԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ (IX-XV ԴԱՐԵՐ)

Գոյություն ունեն բազմաթիվ հիփոթեզներ ույղուրների՝ որպես առանձին էթնիկ խմբի, ի հայտ գալու ճշգրիտ ժամանակի մասին, սակայն ակնհայտ է, որ ույղուրները իրենցից հնագույն էթնոս են ներկայացնում, որոնք գոյատևել են մինչ օրս: Ույղուրների պատմությունը, ինչպես նաև նրանց էթնիկ ծագումը, վեճի առարկա են հանդիսանում ույղուր ազգայնականների և Չինաստանի իշխանությունների միջև:

Ույղուրներն իրենց պատմության տարբեր փուլերի ընթացքում հիմնել են բազմաթիվ պետություններ, որոնցից ամենամեծն ու ամենահայտնին էր Ույղուրական կագանատը: Սակայն Մոնղոլական կայսրության հզորացումից հետո ույղուրները ընկնում են Չինաստանի, այնուհետև մոնղոլական լծի տակ: Ույղուրները մեծ դեր են խաղացել Մոնղոլական կայսրության վարած թե՛ ներքին և թե՛ արտաքին էքսպանսիոն քաղաքականության վրա:

Բանալի բառեր՝ ույղուրներ, Չինաստան, Ասիայի հին ժողովուրդները, ույղուրական կագանատ, չին-ույղուրական հարաբերություններ, Մոնղոոլական կայսրություն, Սին-Ծիանգ ինքնավար մարզի պատմություն

А. Хачатрян

УЙГУРЫ В ЭПОХУ МОНГОЛЬСКОЙ ИМПЕРИИ (IX-XV ВЕКА)

Существует множество точек зрения относительно точного времени появления уйгуров как отдельной этнической группы, но ни у кого нет сомнений в том, что уйгуры - древнейший этнос, дошедший до наших дней. История уйгурского народа, как и этническое происхождение народа, является предметом спора между уйгурскими националистами и властью Китая.

Уйгуры в своей истории основали множество государств, из которых самым известным и большим являлся Уйгурский каганат. Однако после появления Монгольской империи на мировой арене, уйгуры сначала стали частью Китая, а затем самой Монгольской империи. Уйгуры играли важную роль во внутренней и внешней экспансионистской политике Монгольской империи.

Ключевые слова: *уйгуры, Китай, древние народы Азии, Уйгурский каганат, сино-уйгурские отношения, Монгольская империя, история Синьцзян-Уйгурского автономного района*

A. Khachatryan

UIGHURS IN THE ERA OF THE MONGOL EMPIRE (IX-XV CENTURIES)

There are many hypothesizes of the exact time of the uighurs' origin as a separate ethnic group, however it is clear that uighurs are an ancient ethnos which has survived till the present. The Uighur history, as well as their ethnic origin, have been the subject of debate between the Uyghur nationalists and Chinese authorities.

The Uighurs established many states and state unions throughout their history, the largest and most famous of which was the Uighur Khaganate. However, after the Mongol empire spread its influence on the entire region, the Uighurs came under Chinese, and then the Mongol empire's control. The Uighurs played an important role and put impact on both the domestic and foreign expansionary policies of the Mongol Empire.

Keywords. *uyghur, China, ancient nations of Asia, Uyghur Khanate, sino-uyghur relations, Mongol empire, history of the Xin-Jiang Autonomous Region*

Արդեն իսկ IX դարից սկսած՝ ույղուրները զիջեցին իրենց դիրքերը նախ թյուրք ժողովուրդներին, իսկ ավելի ուշ՝ մոնղոլներին: Հայտի է, որ IX-X դարերում Ույղուրական կագանատի ներսում հասունանում էին տարբեր ժողովուրդների անհնազանդության տրամադրությունները: Ի վերջո դրանք հանգեցրին այն բանին, որ 840 թվականին՝ քաղաքացիական պատերազմից հետո, Ույղուրական կագանատը նվաճվեց թյուրքական կիրկիզ ժողովրդի կողմից: Արդյունքում ույղուրների կառավարման տակ գնտվող ժողովուրդները գաղթեցին հյուսիս-արևելյան Չինաստան, որը ներկայիս Սինձիանգ-ույղուրական ինքնավար մարզի տարածքն է:

Հատկանշական է, որ նախքան կագանատի նվաճումը, չինական Թան դինաստիայի հան ներկայացուցիչների կողմից բազմիցս փորձեր են արվել ասիմիլացնել ույղուրներին, մասնավորապես 770-ական թվականներին, չինական իշխանությունները հրաման են արձակում ույղուրների հագուստի վերաբերյալ: Ույղուրները պարտավորվում էին կրել հատուկ տարբերվող հագուստ, որը կխանգարեր նրանց ամուսնանալ չին կանանց հետ և արգելվում էր նաև չինացի ձևանալ: Հիմնական նպատակն էր պահպանել չինական արժեքներն ու ավանդույթները և չշեղվել իրենց ուղղուց:

843 թվականից սկսած՝ չինացիները հետևողական էին ույղուրների զարգացմանը և տեղաշարժին: 847 թվականին, երբ սպանվեց ույղուրների վերջին կագանը, նրանց փոխարինելու եկան Ենիսեյան կիրգիզների կագանատը, որը ավելի քան 70 տարի հզոր դիրք գրավեց Կենտրոնական Ասիայում: Ույղուրների և Ենիսեյան կիրգիզների միջև մշտապես լարված հարաբերությունների էին, իսկ չինական կայսրները մշտապես սպասում էին երկու կողմերի թուլացմանը: Հանձնելով դիրքերը կիրգիզներին՝ ույղուրները հաստատվեցին Սինձիանում, Շանսիի արվարձաններում և Գանսուում: Այստեղ ույղուրները հիմնում են երկու անկախ պետություններ՝ Գանջոույան՝ 870 թվականին, և Քոչո կամ Տուրֆանի պետություն 843 թվականին: Հատկանշական է, որ Տուրֆանի պետության գլուխ էր համարվում կագանը, բայց այլ անվանմամբ՝իդիկուտ: Ամբողջ պետությունը հռչակվել էր Ույղուրական Տուրֆանյան իդիկուտ, որը բառացիորեն թարգմանվում է,

որպես “Սուրբ հարստություն, փառք”: [1] Հետաքրքիր է այն փաստը, որ այդ պետությունները երկուսն էլ անկում են ապրում մոնղոլական հզորացումից, որ 13-14 դարերում գրավում և հպատակեցնում է այդ տեղանքի ժողովորդներին և տալիս վասալների կարգավիճակ: Ի տարբերություն Գանջոույի տերության, որը պահպանել է իր դիրքերը մինչև 1028 թվականը, ույղուրական Տուրֆանյան տերությունը կառավարվելով տարբեր ցեղերի ներկայացուցիչների կողմից, ճանաչեց Մոնղոլիայի գերիշխանությունը և ընդունեց վասալի կարգավիճակը: Այստեղ պետք է նշել նաև Գանջոույի տերությունը կառավարող օղակի դերի մասին, որոնք Յագլաքարյան տոհմից էին և ունեին պետականության հզոր պաշար: Ինչպես նշել էինք, հենց նրանց օրոք էր, երբ Չինաստանի կայսրը օգնություն էր խնդրում ույղուրներին՝ Տիբեթից պաշտպանվելու և դիմակայելու համար: Յագլաքարյան կագանները կամ իշխողները ութն էին, որոնք գրագետ դիվանագիտություն վարելով, գոյատևեցին մինչև 982 թվականին իրենց պետությունը հիմնած տանգուտների կողմից նվաճումը:[2] Տանգուտները իրենց հերթին բուդդիստներն էին, որոնք 13-րդ դարում նույնպես ընկան մոնղոլական լծի տակ:

Ույղուրները տանգուտների տիրապետության տակ հավատարիմ մնացին իրենց կրոնին և չընդունեցին իսլամ:[3] Այդ կոնտեքստում պետք է նաև անդրադառնալ ույղուրների պատմության հաջորդ էջին, որը փոխեց նրանց պատմության ուղղվածությունը, կրոնը և Չինաստանի հետ հարաբերությունները: Խոսքը գնում է Կարախանների դինաստիայի մասին, որը ըստ պատմաբանների սկիզբ է առել ույղուրական կագանատի փլուզումից հետո, երբ Սատուկ Բոհրան, նվաճելով կարլուկների մայրաքաղաքը հռչակում է Կարահանների պետությունը: [4]

Սատուկ Բոհրան շատ մեծ դեր է խաղում Կարահանների զարգացման, մշակույթի և առհասարակ խանության համար: Հասնելով մինչև ներկայիս Չինաստանի ամենաարևելյան կետերից մեկին՝ Կաշգարին, մայրաքաղաքը և կենտրոնը տեղափոխում է Կաշգար գետի հովիտ: Կարահանների կառավարման տարիներին է, որ ույղուրները ընդունում են իսլամը, որպես մանիքեության այլընտրանք: Սատուկ Բոհրան առաջինն էր, որ կրոնափոխվեց և ընդունեց իսլամը՝ փոխելով նույնիսկ իր անունը Աբդ Ալ Քարիմի: Տարածաշրջանում իսլամը ի հայտ եկավ՝ ի շնորհիվ սելջուկների, պարսկական և արաբական ցեղերի, որոնք քոչվորական զավթողական կյանք էին վարում:

Կարախանների կառավարման ժամանակաշրջանը համարվում է ույղուրների պատմության անբաժան և շրջադարձային մասը: Այդ տարիներին Կաշգարից մինչև Գանսու ույղուրները հարմարվողական դիրք էին գրավել և զարգացնում էին ներքին տնտեսությունը, լեզուն, մշակույթը: Կարևոր է այն, որ ույղուրները, սկսած Տուրֆանյան իդիկուտի կամ խանության ժամանակաշրջանից սկսել էին ասիմիլացվել՝ ընդունելով տեղի ժողովուրդների լեզուն, այդ թվում նաև պարսկական, մոնղոլական և չինական, լեզուն, մշակույթը, կրոնը և սովորույթները: Կարախանների օրոք կառուցվում են մի

---

[1] *Տե՛ս Joint Centre for Asia Pacific Studies (1996). Cultural contact, history and ethnicity in inner Asia: p. 134-139*

[2] *Տե՛ս* ***Сычев Н.В****. Книга династий. М., 2008. с. 658-665.*

[3] *Տե՛ս* ***Рулан Н****. Юридическая антропология: учебник / Н. Рулан. – М.: Норма, 1999.*

[4] *Տե՛ս Kazakh Encyclopediasy Limited Liability Partnership / Almaty 2006 / Volume 4 / 487-494 pages*

շարք մզկիթներ, դպրոցներ, դասավանդվում թյուրքական գրականություն, որը հետին պլան է ուղարկում ույղուրական գիրն ու խոսակցական լեզուն:

Կարախանյան պետության ներքին տոհմական խնդիրների պատճառով 1040 թվականին այն բաժանվում է արևելյան և արևմտյան մասերի: Հատկանշական է այն փաստը, որ շուրջ երկու դար գոյատևելուց հետո երկու միավորումներն էլ ընկնում են մոնղոլական լծի տակ: 1089 թվականին սելջուկների արշավանքների պատճառով արևմտյան Կարախանը հռչակում է իրեն սելջուկների վասալը: Իսկ 1212թվականին այն գրավվել է Խորեզմշահերի պետության կողմից՝ Մուհամմադ II-ի օրոք:

Տարածաշրջանում իրենց հզորությունն էին սկսել վայելել և Մուհամմադ II-ը՝ ի դեմս Խորեզմշահերի պետության, և Չինգիզ խանը՝իր իսկ կողմից հիմնադրած Մոնղոլական կայսրությամբ: Խորեզմշահը մտադրություններ ուներ հասնել մինչև Պեկին և գրավել Չինաստանը, սակայն Չինգիզ խանը 1215 թվականին առաջինն է հասցնում գրավել այն: Բացի այն, որ Կարախանյան պետության մնացորդները ոչնչացվեցին Խորեզմշահի կողմից, Չինգիզ խանը, իր հերթին պատերազմ հայտարարելով Մուհամմադ II-ին 1221 թվականին նվաճում է Խորեզմշահերի պետությունը և հասցնում Մոնղոլական կայսրությունը իր հզորության բարձրակետին:

XIII-XVI դարերում տարածաշրջանում տեղի են ունենում բազմաթիվ փոփոխություններ, որոնք ահռելի հետք են թողում ժամանակակից քարտեզի վրա տեղ գտած պետությունների վրա: Ույղուրներ, ինչպես նաև չինացիները, լինելով Մոնղոլական կայսրության մի մասը հաճախ ընդիմանում էին, սակայն չէին կարողանում անկախանալ: Հայտնի է, որ Մոնղոլական կայսրությունը իր այդ տեսակով գոյատևեց մինչև XIII դարի վերջ, իսկ Չինաստանում մոնղոլական Յուան դիանաստիան կառավարեց մինչև 1368 թիվը: Իրավիճակը փոքր ինչ փոխվում է Չինգիզ խանի մահից հետո՝ 1227 թվականին, երբ նրա պետությունը բաժանվում է 4 որդիների միջև, որոնցից երրորդ որդի Ուգեդեյը դառնում է Մեծ Խան կառավարելով տերությունը: Հատկանշական է, որ հենց Ուգեդեյի կառավարած տարիներին է, որ գրավվում է Չինաստանի հյուսիսային մասը, Հայաստանը, Վրաստանը և այլ տարածքներ:

Չինգիզ խանի մահից հետո, շրջանները որտեղ մեծապես բնակվում էր ույղուր ժողովուրդը բաժին է ընկնում Չաղաթայի կողմից կառավարվող Չաղաթայի ուլուսին: Այն իր մեջ ներառում էր Մավերաննահրը, ամբողջ Արևելյան Թուրքեստանը, Տուրֆանը և իհարկե ներկայիս Կաշգարի տարածքը: Ույղուրները միշտ հավատարիմ են եղել իրենց ղեկավարներին և մասնակցել մի շարք պատերազմների: Ներպետական խմորումների և առավել ևս Չաղաթայի մահից հետո Չաղաթայի ուլուսը մասնատվում է երկու մասի՝ Մոգուլիստանի և Մավերաննահրի: Սակայն մինչև փլուզումը պետք է նշել, որ 1326 թվականին ամբողջ ուլուսի պաշտոնական կրոն ճանաչվեց իսլամը, որը էլի ավելի ամրապնդեց իսլամական արմատները ույղուրների պատմության մեջ: Արևմտյան մասը, ի դեմս Մավերաննահրի բնակչության հիմնականում մահմեդականներ էին, իսկ արևելյանը՝ Մոգուլիստանը, մոնղոլներ էին և հավատում էին բուդդիզմին: [1]

Կարևոր է այն, որ Չինգիզ խանի հետնորդները և թոռները տիրացան ամողջ Ասիային և Չինաստանի մի մասին: Պատմության այդ ժամանակաշրջանը իրենից ենթադրում էր Չինգիզ խանի հետնորդի հայտնվելուն, որոնք

[1] Տե՛ս **Sh. Tseyen-Oidov** / "From the Genghis Khan to Ligden Khan" 2002 / Mongolian History

կկատարեր Չինգիզ խանի պլանը՝տիրանալ Չինաստանին և Ասիայի արևելյան շրջաններին: Չաղաթայի խանության արևմտյան շրջաններին տիրանալով՝ տարածաշրջանում հայտվում է մի նոր ակտոր՝ Լենկթեմուրը, որը չուներ Չինգիզ խանի հետ որևէ ժառանգական կապ, սակայն ձգտում էր վերականգնել Մոնղոլական կայսրության վաղեմնի հզորությունը: Լենկթեմուրը հասնելով և գրավելով Թուրքիան, հարավային Ռուսաստանը, Հայաստանը, Վրաստանը, Հնդկատանը և մի շարք այլ տարածքներ, ցանկանում էր ամրապնդել նաև արևելյան սահմանները: Արևելքում, ինչպես արդեն նշել էինք, Մոնղոլական կայսրությունից ազատվելով, Չինաստանում՝1368 թվականից հաստավում է Մին դինաստիան, որը ձեռնամուխ է լինում երկիրը զարգացմանը: Չինացիները այդ տարիներին հմուտ և խորամանկ դիվանագիտություն են վարում բազմապիսի ցեղերի և ցեղախմբերի հետ՝ հաճախակիորեն ուղարկելով նրանց հարևան երկրներ: Արևելյան ճակատում Լենկթեմուրը ցանկանում էր գրավել Չինաստանի Մետաքսյա ճանապարհի մնացած ուղղությունները և զրկել Չինաստանի Մին դինաստիային հետագա առաջխաղացումից: Սկսած 1398 թվականից՝ Լենկթեմուրը պլանավորում էր արշավել դեպի Չինաստան, իսկ 1404 թվականին նա, վերադառնալով մայրաքաղաք Սամարկանդ, սկսում է իր պայքարը Չինաստանի դեմ: Սակայն ցուրտ ձմեռվա պատճառով 1404 թվականի վերջում ժամանկավորապես դադարեցվում է առաջխաղացումը, իսկ 1405 թվականանին Լենկթեմուրը մահանում է: Հետաքրքիր զուգադիպությամբ և Չինգիզ խանին, և Լենկթեմուրին չի հաջողվում գրավել Չինաստանը:

Ույղուրները այդ տարիներին զբաղեցնում էին հյուսիսային Չինաստանի Գանսու, ժամանակակից Սին-Ծիանգ Ինքնավար մարզի և Մոգուլիստանի տարածքները:

Ույղուրական պատմության այս էջը կարելի է փակված համարել, որը, մեծ ազդեցություն թողնելով ույղուր էթնոսի վրա, բացելու է հերթական պատմական փուլը, սակայն այս անգամ Չինական դինաստիաների հետ բուռն պայքարներով և պետականություն ստեղծելու խորը ձգտումով:

Գրականություն

1. Байчоров А.М Китаизация. Последствия роста мощи Китая для мира в XXI веке. - Москва:
2. Изд.«Международные отношения", 2013, 192с
3. Бондаренко А.В. Синьцзян-Уйгурский автономный район Китая в начале XXI в.
4. М.: Изд. ИДВ РАН, 2010, 176 с.
5. Буяров, Д.В. Современный Китай в системе международных отношений / Д.В. Буяров.
6. Москва: Изд.СИНТЕГ, 2015. - 632 с
7. Владимиров, О. Страницы политической биографии Мао Цзэ-дуна / О. Владимиров, В.
8. Рязанцев. - М.: Издательство политической литературы, 2001. - 112 с.
9. Восточный Туркестан в древности и раннем средневековье. Тт. 1-4. М. Изд. ГРВЛ. 1988. 456 с.
10. Григорьев В.В. Землеведение К. Риттера. География стран Азии, находящихся в непосредственных сношениях с

Россией. Восточный или Китайский Туркестан. СПб. «Типография К. Замысловского»1869, 530 с
11. Даниэль, Елисеев История Китая. Корни настоящего / Елисеев Даниэль. - М.: Изд. «Евразия»,2008. - 255 с
12. Зотов О.В. Китай и Восточный Туркестан в XV-XVШ вв. Межгосударственные отношения. М., «Наука», 1991, 168 с
13. Исхаков, Г.М. Уйгурское население на территории Средней Азии / Г.М. Исхаков //Фольклор, литература и история Востока. - Ташкент: «Фан», 1984, 510
14. Китай в мировой политике. - М.: Российская политическая энциклопедия, Московский государственный институт международных отношений (Университет), МИД РФ, 2001. - 528 с.
15. Киреев А.А Современный Китай в системе международных отношений. - Москва:2014.
16. Китай после "культурной революции". - М.: «Мысль», 1979. - 360 с
17. Лексютина Я.В., Петрунина Ж.П., Киреев А.А.Современный Китай. Страницы истории, Москва: «Ленанд», 2016, 368 с
18. Малявкин, 1972. Малявкт А. Г. Китай и уйгуры в 840-848 гг. // Сибирь, Центральная и Восточная Азия в средние века. - Новосибирск, «Наука»1972, 236 с
19. Радлов, В.В. К вопросу об уйгурах / В.В. Радлов. - СПб., Тип. Акад. наук, 1893. - 130 с
20. Разов, С. С. Китайская Народная Республика. Справочник: моногр. / С.С. Разов. - М.: Издательство политической литературы, 1989. - 277 с.
21. Скрайн К.П. Китайская Центральная Азия (Синьцзян). М., «Молодая Гвардия», 1935, 143
22. Muldavin Joshua / «From Rural Transformation to Global Integration: The Environmental and Social Impacts of China's Rise to Superpower» : 2006
23. Rian Thum. The Sacred Routes of Uyghur History. Harvard University Press. pp. 113
24. Yitzhak Shichor, Ethno-Diplomacy: The Uyghur hitch in Sino-Turkish relations, East-West Center, Honolulu, 2009, 72p

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., Վ.Մ.Ավանեսյանը:

ՀՏԴ 94(479.234)
Պատմություն

Նունե ՍԱՐՈՒՄՅԱՆ
պ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ
Էլեոնորա ԶԱՔԱՐՅԱՆ
Արցախի գիտական կենտրոն

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵԱՀԽ-ին ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Հոդվածում փորձ է կատարվում կարևորելու այն հանգամանքը, որ հակամարտությունների հիմնախնդիրները մշտապես գտնվել և գտնվում են միջազգային հանրության ուշադրության կենտրոնում, և աստիճանաբար ուժեղանում են աշխարհի մեծ ու փոքր պետությունների միջամտությունը տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործընթացներին: Ընդգծվում է, որ հակամարտությունների թատերաբեմ դարձած նախկին խորհրդային հանրապետությունները, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, ներառվեցին եվրոպական անվտանգության շրջանակների մեջ:

Հատկապես ուշադրություն է դարձվում Լեռնային Ղարաբաղում և հարակից հայաբնակ տարածքներում ադրբեջանական իշխանությունների վարած քաղաքականության արդյունքում հասունացած հակամարտությանը, որն ուղեկցվեց լայնածավալ պատերազմով: Արդյունքում ղարաբաղյան հիմնախնդիրը դարձավ Մեծ տերությունների արտաքին քաղաքականության առանցքային խնդիրներից մեկը:1992թ. հունվարի 30-ին Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանը դարձան ԵԱՀԽ-ի անդամներ և ԵԱՀԽ գործող նախագահին խնդրեցին պատվիրակություն ուղարկել տարածաշրջան՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման ուղիներն ուսումնասիրելու նպատակով: Եվ՛ Հայաստանը և՛ Ադրբեջանը հայտնեցին իրենց համաձայնությունը, որպեսզի հենց ԵԱՀԽ-ն՝ որպես Հելսինկյան գործընթացի քաղաքական իրավահաջորդ, ստանձնի անկողմնակալ միջնորդի դերը:

Հոդվածում ընդգծվում է, որ Ադրբեջանը ոչ մի անգամ չանսաց միջազգային հանրության, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչվող ՄՄԿ-ի ԱԽ բանաձևերում ամրագրված կոչերին՝ դադարեցնել ռազմական գործողությունները և վարել խաղաղ բանակցություններ:

Միջազգային հանրության անունից ղարաբաղյան

հակամարտության կարգավորմամբ լիազորված էր զբաղվել ԵԱՀԽ-ն, որի գործունեությունը ընդունված է կապել Մինսկի խմբի գործունեության հետ: Հակամարտության լուծման ուղիների որոնման նպատակով միջազգային հանրության ներգրավմանը Ադրբեջանը հենց սկզբից բացասաբար արձագանքեց:

Պարզաբանվում է, որ Մինսկի խմբի շրջանակներում քննարկումների ընթացքում առանցքային հարցերից էին մնում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների կարգավիճակն ու մասնակցության ձևաչափը: Սակայն նշվում է, որ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Մինսկի գործընթացը հենց սկզբից ձեռք բերեց որոշ առանձնահատկություններ, որոնք զգալի բացասական ազդեցություն ունեցան ամբողջ գործընթացի վրա, և ղարաբաղյան հիմնախնդիրը ոչ մի ձևաչափով լուծում չստացավ:

Բանալի բառեր: *Ղարաբաղյան հակամարտություն, էթնիկ զտումների քաղաքականություն, ԵԱՀԽ, Ամազ պաշտոնյաների կոմիտե, Հելսինկիի Եզրափակիչ ակտ, քաղաքական իրավահաջորդ, անկողմնակալ միջնորդ, լիազորված անձ, մարդու իրավունքների պաշտպանություն, առանձնահատկություն, զինադադար:*

Н.Сарумян, Э.Захарян

ПЕРЕГОВОРНЫЙ ПРОЦЕСС УРЕГУЛИРОВАНИЯ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА В ПЕРИОД СТАНОВЛЕНИЯ ЧЛЕНОМ СБСЕ И ПОЗИЦИЯ АЗЕРБАЙДЖАНА

В статье делается попытка подчеркнуть тот факт, что конфликтные проблемы всегда присутствуют и находятся в центре внимания международного сообщества и постепенно наращивают вмешательство крупных и малых государств по всему миру в процессе урегулирования региональных конфликтов.

Подчеркивается, что бывшие советские республики, ставшие ареной конфликтов, после распада СССР, были включены в рамки европейской безопасности.

Особое внимание уделяется конфликту, возникшему в результате политики, проводимой азербайджанскими властями в Нагорном Карабахе и прилегающих к нему населенных армянами районах. которая сопровождалась масштабной войной. В результате карабахский конфликт стал одним из ключевых вопросов внешней политики великих держав.

1992 30 января 2008 года Республика Армения и Азербайджан стали членами СБСЕ и попросили действующего президента СБСЕ направить делегацию в регион для изучения путей урегулирования нагорно-карабахского конфликта.

И Армения, и Азербайджан выразили согласие с тем, что СБСЕ, как политический преемник Хельсинкского процесса, возьмет на себя роль беспристрастного посредника.

В статье подчеркивается, что Азербайджан никогда не отвечал на

призывы международного сообщества, в частности резолюции Совета Безопасности ООН по нагорно-карабахскому конфликту, прекратить военные действия и вести мирные переговоры.
От имени международного сообщества урегулированию карабахского конфликта был уполномочен практиковать СБСЕ, чья деятельность принята связать с деятельностью Минской группы. С самого начала Азербайджан негативно отреагировал на вовлечение международного сообщества в поиск путей разрешения конфликта.
Выясняется, что в ходе дискуссий в рамках Минской группы статус и формат участия представителей Нагорного Карабаха оставался одним из ключевых вопросов.
Тем не менее, отмечается, что исследования показывают, что Минский процесс с самого начала приобрел некоторые особенности, которые оказали значительное негативное влияние на весь процесс, и что карабахская проблема не была решена ни в каком формате.
Ключевые слова: Карабахский конфликт, политика этнической чистки, Комитет старших должностных лиц, СБСЕ, Хельсинкский заключительный акт, политический преемник, беспристрастный посредник, уполномоченное лицо, защита прав человека, особенность, прекращение огня.

N. Sarumyan, E.Zakharyan

NEGOTIATION PROCESS FOR SETTLEMENT OF THE KARABAKH CONFLICT DURING BECOMING THE OSCE MEMBER AND POSITION

Conflicts have always attracted the attention of international community, regional conflict regulation has increasingly been mediated by all states. Following the collapse of the USSR, conflicts in former Soviet states were integrated into Europ's area of security.
Conflict in Nagorno Karabakh and adjacent Armenian-populated territories was instigated by Azeri authorities. It developed and resulted in a large-scale war. Eventually Karabakh conflict became a key issues of the foreign policy of the Powers. On January 30, 1992 Armenia and Azerbaijan became participating states to OSCE and the acting OSCE Chairman was asked to send a delegation to the region to determine methods of conflict resolution. Both Armenia and Azerbaijan expressed agreement to impartial mediation of OSCE as the legal successor of Helsinki group.
The article points out that Azerbaijan has never complied with calls of the UN and the Security Council stated in Karabakh conflict settlement formulas on termination of military actions and conduct of peaceful negotiations.
International community assigned Karabakh conflict settlement to OSCE, that is admittedly connected with the activity of Minsk group. The search for ways of conflict resolution by international community was negatively reacted to by Azerbaijan.
One of the key issues of Minsk group discussions is the status of NK representatives and the format of their participation. The studies reveal that some ways of operation acquired by Minsk process from the very start had negative impact on the whole process. None of the formats brought about settlement of Karabakh conflict.
Keywords: *Karabakh conflict, ethnic cleansing policy, Committee of Senior Officials, CSCE, Helsinki Final Act, political successor, impartial mediator, authorized person, protection of human rights, feature,ceasefire.*

Արդի ժամանակաշրջանում աշխարհում ընթացող քաղաքական գործընթացները ցույց են տալիս, որ հակամարտությունների հիմնախնդիրները մշտապես գտնվել և գտնվելու են միջազգային հանրության ուշադրության կենտրոնում, և աստիճանաբար ուժեղանալու է աշխարհի մեծ ու փոքր պետությունների միջամտությունը տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործընթացներին: Հակամարտությունները, հանդիսանալով միջպետական հարաբերությունների որոշակի ձև, այսօր դարձել են գիտնականների մշտական ուսումնասիրության առարկա: Հակամարտությունների խաղաղ, ոչ բռնի կարգավորման համար գոյություն ունի գիտական հետազոտությունների երկու հիմնական ոլորտ՝ իրավական և քաղաքական: Առաջին ոլորտը ուսումնասիրում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ «զինված հակամարտության իրավական հետևանքները, քաղաքացիական բնակչության իրավունքների պաշտպանությունը, զինված հակամարտող կողմերի իրավական դրությունը, զինված հակամարտության ավարտման ժամանակի կարգավորումը և այլն: Երկրորդ ոլորտը, լինելով քաղաքական, գիտական շրջանակներում կողմնորոշված է դեպի փոխադարձ ըմբռնման ընդունելի համաձայնություն գտնելու հետազոտումը, կողմերի միջև քաղաքական ուղիով՝ բանակցությունների և միջնորդական առաքելությունների միջոցով հակամարտությունների քաղաքական կարգավորումը:»[1]

Հակամարտությունների կարգավորման երկու՝ և՛ քաղաքական , և՛ իրավական ձևերն էլ չեն բացառվում, երկուսն էլ իրար լրացնում են, «երբեմն նույնիսկ համալրում են իրար: Մասնավորապես, հակամարտության քաղաքական կարգավորման ուղին պետք է ավարտվի իրավական հիմք ունեցող փաստաթղթի մշակմամբ և ստորագրմամբ: Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ գոյություն չունի հակամարտության կարգավորման որևէ միասնական, կատարյալ միջոց: Լինելով ծայրահեղ բարդ երևույթ՝ հակամարտությունները պահանջում են խաղաղ կարգավորման համակարգված, համապարփակ մոտեցում:»[2]

Հակամարտությունների թատերաբեմ դարձած նախկին խորհրդային հանրապետությունները ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ներառվեցին եվրոպական անվտանգության շրջանակների մեջ:

Լեռնային Ղարաբաղում և հարակից հայաբնակ տարածքներում ադրբեջանական իշխանությունների վարած էթնիկ զտումների քաղաքականությունը վերաճեց Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի կողմից բացահայտ ագրեսիայի և լայնածավալ ռազմական

---

[1] ***Лебедева М.М.,*** *Политическое урегулирование конфликтов: Подходы, решения, технологии. Москва, 1999, стр.6, 271 с.*

[2] *См. там же, стр.7.*

գործողությունների, ինչը հանգեցրեց տասնյակ հազարավոր զոհերի և զգալի նյութական կորուստների:

Անհերքելի է այն փաստը, որ ԽՍՀՄ իշխանությունները ի վիճակի չեղան լուծել ղարաբաղյան հիմնախնդիրը, ինչը հետագայում պատճառ հանդիսացավ հակամարտության և լայնածավալ պատերազմի: Արդյունքում ղարաբաղյան հիմնախնդիրը դարձավ Մեծ տերությունների արտաքին քաղաքականության առանցքային խնդիրներից մեկը:

Աշխարհաքաղաքական տարբեր բևեռներ և երկրներ, ստանձնելով միջնորդի դերը, ինչպես Հայկական հարցի ծագման ժամանակներից սկսած, այս անգամ էլ առաջին հերթին հետապնդում են իրենց շահերը՝ ոմանք իրենց երբեմնի ազդեցությունը վերականգնելու, մյուսներն էլ տարածաշրջանում քաղաքականապես և տնտեսապես հաստատվելու նպատակով: Բնականաբար այս ամենը ոչ միայն չնպաստեց հիմնախնդրի կարգավորմանը, այլև ունեցավ բացասական մի շարք հետևանքներ[1]:

Դիմակայության վերակենդանացման հենց սկզբից ղարաբաղյան հակամարտությունը դարձավ, առաջին հերթին, քաղաքական հակամարտություն: Դրա էությունն այն էր, որ «միութենական հանրապետության պետականաստեղծ ազգերից մեկը, որը տվյալ հանրապետության շրջանակներում օժտված էր ազգային-վարչական ինքնավարությամբ, ցանկացավ դուրս գալ հանրապետության կազմից և հարել մեկ այլ միութենական հանրապետության՝ Հայկական ԽՍՀ-ին»:[2]

Ադրբեջանը ոչ մի անգամ չանսաց միջազգային հանրության, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն առնչվող ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերում ամրագրված կոչերին՝ դադարեցնել ռազմական գործողությունները և վարել խաղաղ բանակցություններ:

Ինչպես հայտնի է, ներկա պայմաններում միջազգային հանրության առջև կանգնած հիմնական և ամենասուր հիմնախնդիրներից մեկն աշխարհի տարբեր տարածաշրջաններում կայունության ու անվտանգության ապահովումն է, ինչը, «ըստ էության, ենթադրում է հակամարտությունների քաղաքական լուծում, և ոչ թե՝ «սառեցում»[3]:

Միջազգային հանրության անունից ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ լիազորված էր զբաղվել ԵԱՀԽ-ն[4](Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդակցություն, այսուհետ՝

---

[1] *Տե՛ս* ***Բալայան Տ.,*** *Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ.., Երևան, 2004, էջ 7:*

[2] *Տե՛ս* ***Манасян А.****, Карабахский конфликт: Ключевые понятия и хроника, Ереван, 2005, стр.19:*

[3] *Տե՛ս* ***Բալայան Տ.,*** *Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ.., Երևան, 2004, էջ 9:*

[4] *ԵԱՀԽ-ն հիմնադրվել է 1975թ., նստավայրը՝ Վիեննա: Զբաղվում է եվրոպական առանձին տարածաշրջաններում հակամարտությունների կանխատեսման, կանխարգելման, իրադրության կարգավորման ու առողջացման հարցերով: Տես՝ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, ՀՀ հանրագիտարան, Երևան, 2004, էջ 188:*

ԵԱՀԽ)։ ԵԱՀԽ-ի գործունեությունը ընդունված է կապել Մինսկի խմբի[1] գործունեության հետ։

1991թ. դեկտեմբերի 31-ին Հայաստանի Հանրապետության արտգործնախարարը ԵԱՀԽ-ին (1995թ.-ից՝ Կազմակերպություն) անդամակցելու դիմում ուղղեց կազմակերպության նախագահող, Գերմանիայի արտգործնախարար Գենշերին[2]։ Հունվարի 8-9-ին տեղի ունեցած ԵԱՀԽ-ի Ավագ պաշտոնյաների ժողովի ընթացքում քննարկվեցին խորհուրդ հրավիրելու մանրամասները և նախկին ԽՍՀՄ տաս հանրապետությունների դիմումները[3]։

Ինչպես հայտնի է, ԵԱՀԿ-ն անվտանգության հարցերով զբաղվող աշխարհի ամենախոշոր տարածաշրջանային կազմակերպությունն է, որին անդամակցում են Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Հյուսիսային Ամերիկայի 56 պետություններ։ Կազմակերպության գործունեությունն ընթանում է 3 ուղղություններով՝ ռազմաքաղաքական, տնտեսական/

---

[1] *Ղարաբաղյան հակամարտության քաղաքական կարգավորման բանակցություններ վարող Մինսկի համաժողովի անդամ երկրների մարմին։ Սկսել է գործել 1992 թ. ամառվանից։Խմբի անդամներ են՝ ԱՀ, ՀՀ, Բելոռուսը, Գերմանիան, Իտալիան, Ռուսաստանը, ԱՄՆ-ն, Թուրքիան, Ֆրանսիան, Չեխոսլովակիան, Շվեդիան և ԼՂՀ ներկայացուցիչները։ Տե՛ս ՂԱՊ, էջ 490։*

[2] *Տե՛ս Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածներլի ժողովածու, թիվ 3, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2002, էջ 230։*

[3] *Տե՛ս Հունվարի 27-ին ժամանելով Պրագա՝ ՀՀ պատվիրակությունը տեղեկանում է, որ Թուրքիան սպառնում է վետո կիրառել ընդդեմ Հայաստանի անդամակցության։ Համաձայն ԵԱՀԽ կանոնադրության՝ կազմակերպության անդամ հանդիսացող պետությանը իրավունք է վերապահվում մերժել այս կամ այն պետության անդամակցումը կազմակերպությանը, և Թուրքիան՝ որպես անդամ-պետություն, սպառնում էր կիրառել այն Հայաստանի պարագայում։ Թուրքիան Հայաստանից պահանջում էր, նախ հաստատել սահմանների անձեռնմխելիությունը և վավերացնել Կարսի ու Մոսկվայի պայմանագրերը, երկրորդ՝ չհովանավորել ահաբեկչությունը և օգնություն չցուցաբերել այնպիսի կազմակերպությունների, որոնք պայքարում են տարածքային պահանջների համար, երրորդ՝ Հայաստանը պետք է ընդուներ իրավական ակտեր, որոնցով կբացառվեր ռասայական, կրոնական, էթնիկական թշնամանքը ինչպես Հայաստանի, այնպես էլ ԵԱՀԽ մյուս պետությունների նկատմամբ։ Թուրքական պատվիրակությունը պահանջում էր ներկայացնել գրավոր փաստաթուղթ։ Վեճի հարթման գործում միջնորդի դերը ստանձնեց Միացյալ Նահանգների պատվիրակությունը, քանի որ հակառակ դեպքում առաջ էր կգար մնացած ինը նորանկախ պետությունների անդամակցության հարցը։ Հայկական պատվիրակությունը հրաժարվեց ընդունել այդ պահանջները։ Մատնանշվեց 1991թ. հոկտեմբերին Լ. Տեր-Պետրոսյանի արած հայտարարությունն այն մասին, որ Հայաստանը ցանկանում է բարելավել հարաբերությունները Թուրքիայի հետ առանց որևէ նախապայմանի, ինչպես նաև նշվեց, որ Հայաստանի և Թուրքիայի միջև, իրոք, կան հարթվելիք հարցեր, և հայկական պատվիրակությունը պատրաստ է քննարկելու թուրքական կողմի բարձրացրած հարցերը ԵԱՀԽ-ի սկզբունքներին համաձայն, երկկողմանի բանակցությունների ընթացքում։ Եվ եթե Թուրքիան ցանկանում է էքսկուրս կատարել դեպի 1921թ. Կարսի և Մոսկվայի պայմանագրերը, ապա նա պետք է նաև պատրաստ լինի շոշափել 1915թ. խնդիրները։ Թուրքիան, հանդիպելով այսպիսի դիրքորոշման, հրաժարվեց իր պահանջից, և Հայաստանը դարձավ ԵԱՀԽ-ի անդամ։ Տե՛ս Ազգ, Երևան, 1992. փետրվար 12։*

բնապահպանական և հումանիտար, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հիմնախնդիրների «զամբյուղը»: ԵԱՀԿ մոտեցումը անվտանգության և կայունության ապահովման խնդիրներին բազմակողմանի է և համընդգրկուն: ԵԱՀԿ տեսանկյունից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգումն ու պաշտպանությունը, ինչպես նաև տնտեսության ու շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառներում համագործակցությունը նույնքան կարևոր են անվտանգության, խաղաղության և կայունության հաստատման համար, որքան ռազմաքաղաքական խնդիրների լուծումը[1]:

1992թ. հունվարի 30-ին Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանը դարձան ԵԱՀԽ-ի անդամներ և ԵԱՀԽ գործող նախագահին խնդրեցին պատվիրակություն ուղարկել տարածաշրջան՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման ուղիներն ուսումնասիրելու նպատակով: Եվ՛ Հայաստանը, և՛ Ադրբեջանը հայտնեցին իրենց համաձայնությունը, որ հենց ԵԱՀԽ-ն՝ որպես Հելսինկյան գործընթացի[2] քաղաքական իրավահաջորդ, ստանձնի անկողմնակալ միջնորդի դերը:[3]

ԵԱՀԽ-ն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանն է միացել կազմակերպությանը՝ Հայաստանի և Ադրբեջանի անդամակցությունից (Պրահա, 1992 թ. հունվարի 30) անմիջապես հետո[4]: ԵԱՀԽ-ի օպերատիվ ղեկավարման մարմին Ավագ պաշտոնյաների կոմիտեն 1992թ. փետրվարի 28-ին ծանոթացավ «Լեռնային Ղարաբաղի

---

[1] *Տե՛ս **Հարությունյան Ա.**, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը /Պատմությունը, գործունեությունը և հեռանկարները / Եր., Անտարես, 2006, էջ 23:*

[2] *Տե՛ս Եվրոպայում անվտանգության համագործակցության խորհուրդը (հետագայում՝ ԵԱՀԿ-ն) հիմնադրվել է 70-ականների սկզբին՝ «սառը պատերազմի» տարիներին Արևմուտքի եւ Արևելքի միջև քաղաքական երկխոսության հաստատման նպատակով: ԵԱՀԽ առաջին նիստը գումարվել է 1973թ. հուլիսի 3-ին Հելսինկիում: Դրան հաջորդող երկու տարիների աշխատանքի արդյունքում 1975թ. օգոստոսի 1-ին Հելսինկիում ԵԱՀԽ 35 պետությունների ներկայացուցիչների կողմից ստորագրվել է «Հելսինկիի եզրափակիչ ակտ» հիմնարար փաստաթուղթը: Տես՝ Հարությունյան Ա., Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը /Պատմությունը, գործունեությունը և հեռանկարները / , Եր., Անտարես, 2006, էջ 23-24:*

[3] *Տե՛ս Ղարաբաղյան հակամարտության արտաքին քաղաքական ասպեկտները , Երևան 2009, էջ 209:*

[4] *Տե՛ս Մինչև 1990թ. ԵԱՀԽ-ն գործում էր իբրև հանդիպումների և համաժողովների շարք, որոնց ընթացքում ընդլայնվում էր մասնակից պետությունների հանձնառությունների շրջանակը և վերահսկվում դրանց իրագործումը: 1990թ. նոյեմբերին Փարիզում կայացած գագաթաժողովը նոր ուղղություն հաղորդեց ԵԱՀԽ աշխատանքներին: Գագաթաժողովին ընդունված Նոր Եվրոպայի համար կանոնադրության մեջ կոչ էր արվում ԵԱՀԽ-ին իր ուրույն դերակատարումն ունենալ Եվրոպայում տեղի ունեցող պատմական փոփոխություններում, դիմակայել նոր հետսառըպատերազմյան մարտահրավերներին: Փարիզի գագաթաժողովով սկսվեց ԵԱՀԽ վերափոխման, ինստիտուցիոնալիզացման գործընթացը: 1994թ. Բուդապեշտի գագաթնաժողովի որոշմամբ ԵԱՀԽ-ն վերանվանվեց ԵԱՀԿ-ի: Տես՝ http://osce.mfa.am/hy/overview-OSCE/*

իրադրության կապակցությամբ միջանկյալ զեկույցին»[1] և խրախուսեց ներգրավված կողմերին անհապաղ զինադադար հայտարարել Լեռնային Ղարաբաղի շրջանում, որի բնակչությունը մարդու բոլոր իրավունքներից օգտվելու իր կամքն է արտահայտում, ներառյալ Հելսինկիի եզրափակիչ ակտում ամրագրված իրավունքները:

Պետք է ընդգծել, որ Հելսինկյան գործընթացի հիմքում ընկած այդ փաստաթղթում ներառված էին այն կարևորագույն պարտավորությունները, որոնք մասնակից պետությունները ստանձնել էին ռազմաքաղաքական, տնտեսական, բնապահպանական և հումանիտար ոլորտներում:

Փաստաթղթում տեղ էին գտել նաև այն 10 հիմնարար սկզբունքները, որոնք կոչված էին կարգավորվելու ինչպես պետությունների, այնպես էլ պետությունների և իրենց քաղաքացիների միջև հարաբերությունները[2]…

Ինչպես նաև ընդգծում է, որ ԵԱՀԽ-ի կողմից լիազորված անձանց շրջանում գտնվելու փաստը կօժանդակի գործուն զինադադարի հաստատմանը, և դիմում է շահագրգիռ կողմերին՝ նրանց անվտանգությունն ապահովելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու խնդրանքով[3]:

Հակամարտության լուծման ուղիների որոնման նպատակով միջազգային հանրության ներգրավմանը Ադրբեջանը հենց սկզբից բացասաբար արձագանքեց, քանզի ղարաբաղյան հիմնախնդիրը համարում էր Ադրբեջանի ներքին գործ՝ պնդելով, թե Ադրբեջանն՝ ինքը, պետք է լուծի այդ հարցը:[4]

Հիմնախնդրի լուծումը Ադրբեջանը պատկերացնում էր այնպես, ինչպես երիտթուրքերը 20-րդ դարի սկզբին, երբ փորձում էին իրագործել Հայկական հարցի լուծումը՝ բնակչության բռնի տեղահանման և ցեղասպանության միջոցով: Այլ էր ՀՀ ղեկավարության դիրքորոշումը, որը հիմնախնդրի միջազգայնացումը դիտում էր որպես նրա լուծման պարտադիր նախապայման՝ շեշտը դնելով մարդու իրավունքների պաշտպանության և ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի վրա: Ղարաբաղյան հակամարտության մեջ ներգրավված կողմերի դիրքորոշումների իրարամերժության պայմաններում ԵԱՀԽ-ն առանց հապաղելու, օգտագործեց առաջին իսկ հնարավորությունը և հանձն առավ

---

[1] *Տե՛ս* ***Հակոբյան Թ.,*** *Կանաչ ու սև. Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2008, էջ 495:*

[2] *Տե՛ս* ***Հարությունյան Մ.,*** *Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը /Պատմությունը, գործունեությունը և հեռանկարները / , Եր., Անտարես, 2006, էջ 23-24:*

[3] *Տե՛ս* ***Հակոբյան Թ.****, Կանաչ ու սև. Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2008, էջ 496:*

[4] *Տե՛ս* ***Բալայան Տ.,*** *Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ.., Երևան, 2004, էջ 53:*

հիմնախնդրի լուծման նախաձեռնությունը: 1992թ. փետրվարի 12-ից-18-ը ԵԱՀԽ գործող նախագահի[1] հանձնարարությամբ այդ կազմակերպության պատվիրակությունն այցելեց ՀՀ, ԱՀ և ԼՂՀ, որից հետո բավականին օբյեկտիվ զեկույց ներկայացրեց տարածաշրջանում ստեղծված իրավիճակի, նրա զարգացման, հակամարտության նկատմամբ տարածաշրջանային երկրների դիրքորոշման մասին:

Որպես հետագայում հակամարտության կարգավորման գործընթացում օգտագործվելիք տարրեր՝ բերվում էին Ժելեզնովոդսկի կոմյունիկեի դրույթները, որոնք օբյեկտիվորեն թելադրված էին ինչպես Լեռնային Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում և Ադրբեջանում փոփոխված տարբերակով (նկատի պետք է ունենալ 1991թ. օգոստոսին Մոսկվայում ուժային կառույցների մի խումբ ղեկավարների իրականացրած անհաջող հեղաշրջման փորձը):[2] Դրանով Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինը նպատակ ուներ ի ցույց դնել աշխարհին, որ ԽՍՀՄ լուծարման դեպքում, Ռուսաստանն իրեն իրավասություն է վերապահելու հանդես գալ որպես հակամարտության կարգավորման հիմնական դերակատար:[3]

Մեծ տեղ էր հատկացված հակամարտության գոտում ընթացող գործընթացներին և դրանց ազդեցությանը հակամարտության վրա: Զեկուցագիրը կազմված էր անաչառ ձևով և արտահայտում էր իրերի փաստական դրությունը տարածաշրջանում: Պատվիրակութան անդամների ճշմարտություն գտնելու ձգտման մասին վկայում է այն փաստը, որ փետրվարի 13-ին՝ տարածաշրջան մեկնելուց առաջ, նրանք Մոսկվայում հանդիպում ունեցան հակամարտությունը լուսաբանող մի խումբ լրագրողների հետ:[4]

Զեկուցագրից պարզ էր դառնում, որ ՀՀ իշխանությունները հրաժարվել են Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետությանը միացնելու գաղափարից, սակայն որպես երրորդ շահագրգռված կողմ՝ համաձայն են հարցի այնպիսի լուծմանը, որը կապահովի Լեռնային Ղարաբաղում մարդու իրավունքների պաշտպանությունը և մարդկանց անվտանգությունը՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից: Զեկուցագրի պահանջները հիմնականում կրկնում են ժելեզնովոդսկի կոմյունիկեի դրույթները: Զեկուցագիրը ներկայացվեց փետրվարի 28–ին Պրահայում տեղի ունեցած ԵԱՀԽ Ավագ պաշտոնյաների կոմիտեի (ԱՊԿ) հանդիպմանը[5], որտեղ մասնակիցները, զեկուցագրի դրույթներին

---

[1] *Տե՛ս* ***Торкунов А. В.*** *Современные международные отношения и мировая политика, М., 2004, էջ 527-530:*

[2] *Տե՛ս* ***Золян С.,*** *Нагорный Карабах: Проблема и конфликт, Москва , 2001, стр. 125:*

[3] *Տե՛ս* ***Փաշայան Հ.,*** *Քաղաքական փաստարկները Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում, Ստեփանակերտ , 2016, էջ 109:*

[4] *Տե՛ս* ***Բալայան Տ.****, Ղարաբաղյան հիմնահարցը..., էջ 55:*

[5] *Տե՛ս* ***Золян С****, стр. 200:*

համապատասխան, կոչ արեցին ԵԱՀԽ անդամներին, ինչպես նաև Իրանին և արաբական երկրներին զերծ մնալ հակամարտող կողմերին զենքի մատակարարումից: Հակամարտող կողմերից պահանջվում էր հարգել հարևանների տարածքային ամբողջականությունը:

ԱՊԿ-ի նույն նիստում ընդունվեց առաջին որոշումը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ, որն իրենից ներկայացնում էր հակամարտության լուծմանն ուղղված քայլերի ամբողջություն: Կայացրած որոշումները սակայն ոչ միայն մնացին թղթի վրա, այլև անմիջապես սկսեցին խախտվել:[1]

ԵԱՀԽ-ի շրջանակներում Ղարաբաղյան հիմնախնդրի հետագա քննարկումները հիմնականում համահունչ էին ԵԱՀԽ-ի պատվիրակության զեկույցի դրույթներին և սկզբունքներին, սակայն իրավիճակը հակամարտության գոտում օրեցօր փոփոխվում էր, և այս հանգամանքն անկասկած բացասաբար էր անդրադառնում ԵԱՀԽ-ի խաղաղարար գործունեության վրա, որը կարծես թե ժամանակից հետ էր ընկնում: 1992թ. մարտի 13-ից 14-ը Հելսինկիում կայացավ ԵԱՀԽ ԱՊԿ-ի 8-րդ հերթական հանդիպումը, որի արդյունքում 10 կետից բաղկացած որոշում[2] ընդունվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ: Ընդունված որոշումը հիմնականում կրկնում էր նախորդ որոշման դրույթները, ինչն արդեն ցուցադրում էր նախորդ որոշման արդյունավետությունը:

Որոշման մեջ ընդգծված էր, որ Ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը ԵԱՀԽ-ից պահանջում է ավելի արդյունավետ ջանքեր գոծադրել: Որոշման կետերից մեկում նախատեսվում էր Հելսինկիում մարտի 24-ին[3] նախարարների խորհրդի արտակարգ հանդիպում անցկացնել, որի նպատակն էր քննարկել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուղիները և դրանցում ԵԱՀԽ-ի դերակատարությունը, որն ավելի իրատեսական էր, քան անհապաղ զինադադարի հաստատման մասին կետը:

Մարտի 14-ի որոշման ԵԱՀԽ-ի նոր պատվիրակության, ինչպես նաև հետագայում ԵԱՀԽ գործող նախագահի այցերին ու մարտի 24-ի նախարարների խորհրդի արտահերթ հանդիպման մասին կետերը թերևս միակն էին, որոնք իրագործվեցին:

ԵԱՀԽ-ի երկրորդ պատվիրակության այցը, որը տեղի էր ունեցել ԱՊԿ-ի մարտի 24-ի[4] արտակարգ հանդիպումից անմիջապես առաջ, արդեն ուներ հստակ նպատակ զինադադարի հաստատում՝ այն դիտելով որպես բանակցությունների սկսման անհրաժեշտ նախապայման:

---

[1] *Տե՛ս* ***Հակոբյան Թ.****, նշվ.աշխ., էջ 497:*

[2] *Տե՛ս* ***Բալայան Տ.****, ԵԱՀԽ Ղարաբաղյան հակամարտությամբ զբաղվող Մինսկի խմբի կազմավորումը, Պետություն և իրավունք, թիվ 3, Երևան, 2013, էջ 60:*

[3] *Տե՛ս Նույն տեղում:*

[4] *Տե՛ս Նույն տեղում:*

Այս նպատակին հասնելու պատրվակով ԵԱՀԽ պատվիրակության ղեկավար Յան Կուբիսը Բաքվում հանդիպեց նույն առաքելությամբ տարածաշրջանում գտնվող Իրանի փոխարտգործնախարար Վայեզիի հետ, սակայն ոչ մի էական համագործակցություն չկայացավ: Յան Կուբիսի պատվիրակության զեկույցից[1] պարզ է դառնում, որ այդ ժամանակ կողմերից յուրաքանչյուրը կրակի դադարեցման իր պայմաններն էր առաջարկում: Մասնավորապես, Ադրբեջանը կրակի դադարեցումը պայմանավորում էր ՀՀ-ից ԼՂՀ-ի զինամատակարարումների դադարեցմամբ, իսկ ՀՀ-ն՝ ապաշրջափակմամբ: Չնայած հակամարտության բոլոր կողմերն էլ զինադադար հաստատելու իրենց ցանկության մասին էին հայտարարում, սակայն նրանցից և ոչ մեկը չէր հավատում երկարատև զինադադարի հաստատմանը…

ԵԱՀԽ-ի մարտի 24-ի նիստում որոշում ընդունվեց[2] Լեռնային Ղարաբաղի հարցին նվիրված կոնֆերանսը հրավիրել Մինսկում: ՀՀ ԱԳՆ Եվրոպայի բաժնի պատասխանատու Քրիստիան Տեր-Ստեփանյանի՝ ՀՀ իշխանություններին ուղղված հաշվետվության մեջ նշված է. «Կոնֆերանսի մասնակից երկրներն են՝ Գերմանիան, Իտալիան, Ռուսաստանը, Շվեդիան, Չեխիայի ու Սլովակիայի հանրապետությունները և Թուրքիան, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները, որոնք Մինսկում հրավիրվելիք կոնֆերանսին պետք է մասնակցեն խորհրդաժողովի նախագահի հրավերով…»[3]:

Նշված պետությունները, ինչպես նաև հետաքրքրված կողմերը հետագայում նախատեսվելիք կոնֆերանսի անցկացման վայրի անվանմամբ կոչվեցին Մինսկի խումբ:

Դեռևս մարտի 24-ի քննարկումների ժամանակ ի հայտ եկան հակամարտության նկատմամբ եվրոպական պետությունների մոտեցումների տարբերությունները: Չնայած դիրքորոշումների տարբերությանը, բոլոր երկրները համամիտ էին, որ հակամարտության կարգավորմանն ուղղված առաջին քայլը պետք է լիներ կայուն զինադադարի հաստատումը, սակայն բարձրագոչ հայտարարություններից այն կողմ գործը չանցավ: Մարտի 24-ի նախարարների որոշման մեջ ոչ մի խոսք չկար Մինսկի խմբի ստեղծման կամ գործունեության սկզբունքների մասին, կա դրույթ, ըստ որի՝ խաղաղության համաժողովը պետք է գումարվի Մինսկում: Չնայած այս հանգամանքին ուսումնասիրողների մի մասը հակված է Մինսկի խմբի մանդատ դիտարկել հենց մարտի 24-ի որոշումը:[4]

---

[1] *Տե՛ս* ***Բալայան Տ.,*** *Ղարաբաղյան հիմնահարցը…, էջ 60:*

[2] *Տե՛ս ԵԱՀԿ-ի պաշտոնական կայքը http://www.osce.org/*

[3] *Նույն տեղում:*

[4] *Տե՛ս* ***Мурадян А.А.,*** *Самая благородная наука. Об основных понятиях международно-политической теории. М.: Международные отношения, 1990, стр. 77.*

Նախարարների խորհրդի մարտի 24-ի նիստում բաց մնաց և հետագայում էլ իր վերջնական լուծումը չստացավ ԼՂ ներկայացուցիչների կարգավիճակի հարցը: Փաստորեն, այս ամենը զուտ ձևական բնույթ էր կրում և Մինսկի գործընթացի շրջանակներում ընթացող բանակցություններին ոչ մի օգուտ չտվեց: Ընթացող բանակցությունները դժվարանում էին նաև Ադրբեջանում տիրող ներքին անկայուն իրավիճակի պատճառով: Իշխանության էին գալիս հակամարտության կարգավորման ռազմական տարբերակը նախընտրող ուժերը, որոնք բանակցություններին մասնակցում էին ձևականորեն: Այս պատճառով եվրոպական մայրաքաղաքներում ընթացող տարբեր մակարդակների քննարկումները և դրանց արդյունքում ընդունված որոշումներն ապարդյուն էին դառնում: Իսկ Լեռնային Ղարաբաղը շարունակում էր մնալ ծանր կացության մեջ՝ շրջապատված բոլոր կողմերից: Միջազգային հանրությունը Ադրբեջանի ռազմատենչ գործողությունները զսպող քայլեր ձեռնարկելու փոխարեն որոշումներ էր ընդունում նրանց տնտեսության զարգացումն ապահովելու նպատակով օգնություն տրամադրելու մասին:

Պետք է նշել, որ ԱՄՆ-ն սկզբնական շրջանում վարում էր տարածաշրջանում ուժերը հավասարակշռելու քաղաքականություն: Այս առումով կարելի է հիշատակել 1992թ. ԱՄՆ-ի կոնգրեսի կողմից ընդունված Ազատության աջակցության ակտի թիվ 907 բանաձևը[1], ըստ որի արգելվում էր Ադրբեջանին ԱՄՆ-ի կառավարական օգնության ցուցաբերումը Հայաստանի նկատմամբ իրականացվող շրջափակման համար: Բանաձևի ընդունմանը մեծապես նպաստել էր ԱՄՆ-ի հայկական կազմակերպությունների աշխատանքը, սակայն դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի արդյունքներ կարող էր ունենալ այդ օգնության տրամադրումը Ադրբեջանին, որն, անկասկած, այդ գումարները կօգտագործեր նաև ռազմական նպատակներով: Բանաձևն ինքնին աշխարհաքաղաքական խաղաթուղթ էր հանդիսանում թ՛ե ԱՄՆ-ի վարչակազմի, թ՛ե տարբեր լոբբիստական կազմակեերպությունների ձեռքերում:

Իրավիճակը տարածաշրջանում կտրուկ փոխվեց ՀՀ-ի և ԼՂՀ-ի միջև ցամաքային կապի հաստատումից հետո, երբ ղարաբաղյան զորամիավորումները հաջող ռազմական գործողությունների արդյունքում 1992թ. մայիսի 8-ից 17-ը ընկած ժամանակահատվածում ազատագրեցին Շուշին և Լաչինը՝ ցամաքային կապ հաստատելով հայկական երկու պետությունների միջև: Ստեղծված պայմաններում ԵԱՀԽ-ին անհրաժեշտ էր նոր մոտեցումներ մշակել հակամարտության կարգավորման գործընթացում՝ հակամարտության գոտում նոր իրավիճակին համապատասխան: Նմանատիպ մոտեցումներ մշակելու ԵԱՀԽ-ի

[1] ***Հակոբյան Թ.,*** *նշվ. աշխ., էջ 216:*

անպատրաստությունը երևաց 1992թ. մայիսի 21-ի ԱՊԿ-ի նիստում[1], երբ ԱՄՆ ներկայացուցիչ Ջոն Մարեսկան առաջարկեց մի բանաձև ընդունել, որով նախատեսվում էր Մինսկի համաժողովի անդամ-երկրների արտահերթ հանդիպում հրավիրել: Որոշման հանդիպումը կանխվեց ՀՀ-ի կողմից, քանի որ նախագծում նշված էր, թե Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի տարածք է, ինչը, փաստորեն, կանխորոշում էր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Ի պատասխան Ադրբեջանն առաջարկեց Մինսկի գործընթացի շրջանակներում որոշումներն ընդունել «կոնսենսուս-մինուս-մեկ» սկզբունքով՝ ցանկանալով միջազգայնորեն հաստատել ԼՂ-ի պատկանելությունը Ադրբեջանին: Ադրբեջանը, գտնվելով ներքին և արտաքին ծանր դրության մեջ, Մինսկի գործընթացին իր մասնակցությունը պայմանավորեց հակահայաստանյան հայտարարության ընդունմամբ: Որպես փոխզիջումային տարբերակ որոշվեց, որ ոչ մի որոշում այդ հարցով չի ընդունվի, այլ հունիսի առաջին շաբաթվա ընթացքում Մինսկի կոնֆերանսի մասնակից երկրների արտահերթ նիստ գումարելու մասին դրույթը կմտցվի ԱՊԿ-ի 11-րդ հանդիպման եզրափակիչ փաստաթղթերի մեջ՝ որպես չընդունված փաստաթուղթ, որին կկցվեն նաև անդամ-երկրների հայտարարությունները:

Նման հանդիպում տեղի ունեցավ 1992թ. հունիսի 1-ին Հռոմում[2]: Այդ հանդիպմամբ սկիզբ դրվեց նմանատիպ տասնյակ հանդիպումների, որոնց արդյունքում և կազմավորվեց Մինսկի խումբը: Այսպիսի զարգացումների և ռազմական գործողությունների ծավալման պայմաններում խիստ նվազեց արդեն Մինսկի խումբ[3] անունը ստացած ԵԱՀԽ-ի կառուցվածքային մարմնի դերը: Այդ մասին է խոսում այն փաստը, որ 1992թ. հունիսի 23-ին նախատեսված Մինսկի խաղաղության կոնֆերանսը մինչև այժմ չի կայացել, սակայն դրա փոխարեն 1992թ. ամռան ընթացքում Հռոմում տեղի ունեցան 5 փուլերից բաղկացած բանակցություններ[4], որոնք ոչ մի արդյունք չտվեցին, քանի որ այդ հանդիպումները ժամանակավրեպ էին և դրանց ընթացքում քննարկվող հարցերը հակամարտության գոտում տեղի ունեցող գործընթացներին չէին համապատասխանում:

Հռոմում քննարկումների ընթացքում առանցքային հարցերից էր մնում Մինսկի խմբում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների կարգավիճակն ու մասնակցության ձևաչափը: Չնայած 1992 թ. մարտի 24-ին Հելսինկիում ընդունված «Լեռնային Ղարաբաղի ընտրված և այլ ներկայացուցիչներ» ձևակերպումը թույլ էր տալիս պաշտոնական Ստեփանակերտին մասնակցել բանակցային գործընթացին, այնուամենայնիվ, փակուղային

---

[1] *Տե՛ս* ***Казимиров В.*** *Мир Карабаху. Посредничество России в урегулировании нагорно-карабахского конфликта¸ М.: Междунар. отношения, 2009 ¸ с. 32.*

[2] *Տես՝ նույն տեղում*

[3] *http://www.nkr.am/hy/osce-minsk-process*

[4] *http://www.nkr.am/hy/osce-minsk-process*

իրավիճակ էր ձևավորվել. Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը պետք է որոշեր Մինսկի խորհրդաժողովը, իսկ բանակցային գործընթացում Լեռնային Ղարաբաղի մասնակցության ձևը կախված էր նրա կարգավիճակից[1]:

1992թ. ամռանը ղարաբաղյան խնդիրն արդեն լուրջ մտահոգություն էր առաջացնում եվրոպական մայրաքաղաքներում և սկսեց քննարկվել ամենաբարձր մակարդակով:[2] Հուլիսի 8-ին աշխարհի առավել զարգացած 7 պետությունների ղեկավարների գագաթնաժողովի մասնակիցներն իրենց մտահոգությունն արտահայտեցին Գերմանիայի կանցլեր Հելմութ Քոլի հատուկ հայտարարությամբ, որտեղ հակամարտության կողմերին կոչ էր արվում անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և լուծել վիճելի խնդիրները: Բանակցային գործընթացի արդյունավետության և հակամարտության արագ կարգավորման տեսանկյունից մեծ կարևորություն ուներ ԼՂ ներկայացուցիչների կարգավիճակի հստակեցումը, քանի որ ըստ հակամարտաբանության տեսության առանց հակամարտության անմիջական կողմի մասնակցության՝ բանակցային գործընթացն անարդյունավետ է լինում:[3]

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Մինսկի գործընթացը հենց սկզբից ձեռք բերեց որոշ առանձնահատկություններ, որոնք զգալի բացասական ազդեցություն ունեցան ամբողջ գործընթացի վրա: Նախ, ԼՂՀ-ն հենց սկզբից անտեսվեց որպես բանակցությունների լիիրավ կողմ և դրանով իսկ կանխորոշվեց ԼՂ-ի կարգավիճակը բանակցությունների ավարտական փուլում:[4]

Երկրորդ՝ Մինսկի գործընթացում տարածաշրջանի պատմությանը, այնտեղ տիրող իրավիճակին, հատկապես ազգամիջյան հարաբերություններին անծանոթ այդքան մեծ քանակությամբ երկրների ներգրավումը չէր կարող արդարացված լինել:

Ավելին, գործընթացում ընդգրկվեցին նաև տարածաշրջանում ավանդական շահեր ունեցող երկրներ, որոնց մասնակցությունը բնականորեն կասկածի տակ էր դնում ԵԱՀԽ Մինսկի համաժողովի գործունեությունը հիմնախնդրի արդարացի լուծման համար:

Երրորդ,կասկածի տակ է դրվում Մինսկի գործընթացում որպես միջնորդ Թուրքիայի ներգրավման նպատակահարմարությունը,որովհետև լինելով զինված բախումը անմիջականորեն հրահրողներից և այնուհետև դրա անմիջական մասնակիցներից մեկի ռազմավարական դաշնակիցը՝

---

[1] *Տե՛ս* ***Золян С.****. Нагорный Карабах: Проблема и конфликт. , Ереван , Издательство «Лингва», 2001. стр.192-193.*

[2] *Տե՛ս* ***Բալայան Տ.,*** *Ղարաբաղյան հիմնահարցը … , էջ 66-67:*

[3] *Տե՛ս* ***Лебедева М.М.,*** *Политическое урегулирование конфликтов;Учеб. Пособие.-Москва,:Аспект Пресс, 1999,стр. 48.-271 с.*

[4] *Տե՛ս* ***Բալայան Տ.,*** *Ղարաբաղյան հիմնահարցը … , էջ 63:*

նա չուներ անկողմնակալ մոտեցում և հետևաբար չէր կարող հանդես գալ որպես անաչառ միջնորդ։

Չորրորդ՝ ԵԱՀԽ-ն ձեռնամուխ եղավ իր հաշտարար գործունեությանը երկու իրարամերժ սկզբունքներով՝ երկրների տարածքային ամբողջականություն և ազգերի ազատ ինքնորոշում։ Երկու սկզբունքներն էլ առաջնային էին հռչակված, և պարզ չէր, թե որ սկզբունքին է նախապատվություն տրվելու ղարաբաղյան հիմնախնդրի պարագայում[1]։ Այս հանգամանքը նպաստեց, որպեսզի ԵԱՀԽ ներկայացուցիչները ՄԱԿ-ի և ԵԱՀԽ հիմնարար փաստաթղթերի մեջ տեղ գտած սկզբունքները մեկնաբանեն անձնական տեսանկյունից, որը բազմաթիվ բարդությունների տեղիք էր տալիս։

Հինգերորդ՝ ԵԱՀԽ-ն ընտրել էր գործունեության մի ուղի, որն արդեն ապացուցել էր իր անարդյունավետությունը ԽՍՀՄ ժամանակաշրջանում. տեղում հարցերը պարզելու և օպերատիվորեն լուծելու փոխարեն այն նախընտրում էր տարածաշրջան կարճաժամկետ այցերի ընթացքում իրագործել եվրոպական մայրաքաղաքներում կայացված որոշումները։

Վեցերորդ՝ եթե ԱՊԿ-ի փետրվարի 28-ի որոշման իրագործման համար հստակ մեխանիզմներ սահմանվեին, ապա ընդհանրապես կվերանար այլ որոշումների անհրաժեշտությունը, քանի որ այդ որոշումը ի վիճակի էր բարելավելու իրավիճակը և հակամարտող կողմերին, նույնիսկ ԼՂ չհստակեցված կարգավիճակով հանդերձ, նստեցնել բանակցությունների սեղանի շուրջ արդեն իսկ հաստատված զինադադարի պայմաններում։

Յոթերորդ՝ Մինսկի գործընթացի սկզբնական փուլում հայերը մեղադրեցին կոնֆերանսի նախագահող Մարիո Ռաֆայելիին կողմնապահության մեջ[2], ինչն արգելակում էր խաղաղ գործընթացը։

Վերջապես, ինչպես հայտնի է Մինսկի գործընթացի անդամ երկրների միջև համաձայնություն չկար նույնիսկ հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերի առաջնայնության գործում։ Այսինքն՝ եթե Ռուսաստանը առաջնային էր համարում հակամարտության գոտում կրակի դադարեցումը և զինադադարի հաստատումը, ապա ԱՄՆ-ի համար առաջնային էր ռազմական գործողությունների կարգավորումը և բանակցությունների անընդհատելիությունը։

Կարելի է համարձակորեն ընդգծել, որ ԵԱՀԽ-ի նախաձեռնած միջնորդական նախաձեռնությունը թերի էր հիմնախնդրի լուծման հստակ սկզբունքների և մեխանիզմների բացակայության պատճառով։

Չնայած նշված թերություններին՝ ԵԱՀԽ-ն, այնուամենայնիվ, հաջողության հասնելու մեծ հավանականություն էր պահպանում, քանի որ հակամարտող բոլոր կողմերի հանդիպումների միակ ձևաչափն էր, հանդիսանում և միակ կազմակերպությունն էին, որին աջակցում էին թե

[1] *Նույն տեղում, էջ 63։*

[2] *Նույն տեղում, էջ 63։*

ՄԱԿ-ը, թե մյուս միջազգային կազմակերպությունները: Կարելի է եզրակացնել, որ Մինսկի խումբը և ԵԱՀԽ-ն սպառել էին հակամարտության կարգավորմամբ զբաղվելու կարողությունը և գործում էին իներցիայով: Անհրաժեշտ էր գործունեության բոլորովին նոր հայեցակարգ և ռազմավարություն մշակել: Սակայն ԵԱՀԽ-ն չկարողացավ գործել ժամանակի պահանջներին համապատասխան, ինչով և նպաստեց նոր նախաձեռնության հասունացմանը:

1992 թվականից մինչ այսօր ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, որի համանախագահներն են ԱՄՆ-ն, Ռուսաստանը և Ֆրանսիան, բանակցություններ են ծավալվում ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ:[1] Երկու կողմերի միջև լուրջ ընդհարումներ տեղի չէին ունենում, բացառությամբ 2016 թ. ապրիլյան դեպքերի, սակայն հակամարտության հիմնական հարցերը շարունակում են չլուծված մնալ:

Միջազգային հանրաթյունը մինչև վերջերս գտնում էր, որ առաջնահերթ կարգով պետք է հայերի և ադրբեջանցիների միջև ամրապնդել վստահության մթնոլորտը, այլ ոչ թե ամեն գնով ձգտել մեկ հարվածով կտրել Արցախյան հիմնահարցի գորդյան հանգույցը:

Չնայած ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում հակամարտության կարգավորման միջազգայնորեն ընդունված միակ ձևաչափով տարվող բանակցություններին և դրանք Մինսկի գործընթացի շրջանակներում ընթանալու պայմանավորվածություններին՝ Ադրբեջանը, խեղաթյուրելով հակամարտության էությունն ու հետևանքների բուն պատճառները, նաև փորձեր է ձեռնարկում հակամարտության կարգավորման մեջ ներքաշելու այլ միջազգային կազմակերպությունների և բանակցային գործընթացը խոչընդոտող և քարոզչական նպատակներ հետապնդող զուգահեռ գործընթացներ է նախաձեռնում մասնավորապես ՄԱԿ ԳԱ-ում և Եվրոպայի խորհրդում: «Բաքվի մեր ընդդիմախոսների մատուցմամբ՝ միջազգային քաղաքական շրջանակներում տիրապետող է այն պատկերացումը, թե կոնֆլիկտը ծագել ու բորբոքվել է ԽՍՀՄ լուծարման ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման հետևանքով:»[2] Այդ պատկերացումը կարելի է դուրս մղել և պետք է դուրս մղվի տեղեկատվական ու քաղաքական շրջանառությունից առկա անհերքելի փաստերի ճնշմամբ:

---

[1] *Տե՛ս Արցախ; долгий путь к свободе. К 30-летию начала современного этапа хационального движения в Нагорном Карабахе,Москва,2018, стр.232. 306 стр.*

[2] ***Մանասյան Ա.,*** *Ադրբեջան-Արցախ հարյուրամյա հակամարտության փոխակերպումները իրադարձային հենքի և իրավաքաղաքական արդյունքների դիտակետից, « Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հրաբերություններ, Քաղաքագիտություն», 2018, թիվ 2, (26), էջ 4:*

Ադրբեջանի վարած ռազմատենչ ագրեսիվ քարոզչությունը ևս կասկածի տակ է դնում փոխզիջումային կարգավորման հասնելու Ադրբեջանի ցանկությունը, հայտարարությունները, ստանձնած հանձնառություններն ու դրանց լրջությունը: Ադրբեջանը նավթային եկամուտներից ստացված գումարները շարունակում է ուղղել ռազմական բյուջեի ավելացմանը և մեծ քանակությամբ հարձակողական սպառազինությունների ձեռքբերմանը՝ կոպտորեն ոտնահարելով անվտանգության և ռազմաքաղաքական ոլորտի մի շարք համաձայնագրեր և պարտավորություններ: Ըստ էության, Ադրբեջանը տապալում է նաև կողմերի միջև վստահության ամրապնդմանն ուղղված տնտեսական, քաղաքական, ռազմական և հումանիտար բնույթի բոլոր նախաձեռնությունները:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., Վ.Ռ.Բալայանը:

ՀՏԴ 274
Արևելագիտություն

Սեդեղենասիմ ՖԱԹԵՄԻ
Հայ-Ռուսական համալսարան, արևելագիտության ֆակուլտետ,
հայցորդ 3-րդ կուրս Հայաստան՝ Երևան
e-mail: saramn834@gmail.com

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՐՈՆԱՓՈԽ ԵԶԴԻՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ (ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐ, ՀԻՍՍՈՒՆԱԿԱՆՆԵՐ)

Վերջին տասնամյակներում նկատվում է եզդիների կրոնափոխության ակտիվ միտում դեպի այլ կրոններ՝ Եհովայի վկաներ[1] և Հիսունականներ: Սույն հոդվածում փորձ է արվել ներկայացնել, թե ինչպիսին է կրթության դերը Եհովայի վկա դարձած եզդիների և եզդի հիսունականների մոտ: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել այն սկզբունքային տարբերությունները, որ առկա են կրթության հիմնախնդիրների մեջ երկու կրոններում և նրանց թողած ազդեցությունները եզդի կրոնափոխների մտածելակերպի վրա և առօրյա կյանքում: Հետազոտությունը վերլուծում է աշխարհիկ և աստվածաբանական դպրոցների դերերի բաշխումը և նրանց առանձնահատկությունները կրոնափոխ եզդիների (Եհովայի վկաներ և Հիսունականներ) շրջանում: Սույն հոդվածի հիմքում ընկած են հեղինակի դիտարկումները, համեմատության ու վերլուծության մեթոդով և անհատական և խմբային հարցազրույցները Հայաստանի և Ռուսաստանի Եհովայի վկաների և Հիսունականների կողմ ընդունած եզդիների հետ: Ամփոփում՝ հոդվածում հանգում ենք այն եզրակացությունը, որ կրոնափոխ եզդիները ձեռք են բերում նոր հոգևոր արժեքներ՝ սովորելով աստվածաբանական դպրոցներում, իսկ աշխարհիկ կրթություն ստանալու տեսանկյունից Հիսունականները ավելի են խրախուսում կրթությունը ընդհանրապես և առանձնապես բարձրագույն կրթությունը:

Բանալի բառեր՝ *կրոնափոխ եզդիներ, Եհովայի վկաներ, հիսունականներ, կրթության հիմնախնդիրներ,եզդիների համայնքներ, աստվածաբանական դպրոց, բարձրագույն կրթություն*

С.Фатеми

ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ СРЕДИ ОБРАЩЁННЫХ ЕЗИДОВ (СВИДЕТЕЛЕЙ ИЕГОВЫ, ПЯТИДЕСЯТЫХ)

Российско-Армянский (Славянский) университет, соискатель третий год, Института востоковедения, Армении, г. Ереван

За последние десятилетия у езидов заметна активная тенденция обращения в другие религии-Свидетелей Иёговы и Пятидесятники. В данной статье предпринята попытка представить, кокова роль

[1] ***Фатеми, С.С.*** *«Езиды Армении в секте «Свидетелей Иеговы» (первичный анализ мотивации)». Регион и Мир, научно-аналитический журнал, Том IX, No 4, 2018, С.111-115.*

образования у езидов ставших Свидетелей Иеговы и Пятидесятников. Целью данной статьи является изучение тех основных различий, которые существуют в проблемах образавания обеих религий и их вмияние на мышление и повседневную жизнь езидов поменявших религию. В исследовании анализируется распределение ролей светских и богословских школ и их особенности среди новообрищённых (Свидетелией Иеговы, Пятидесятников) езидов. В основе данной статьи лежат наблюдения автора методом сравнения и анализа, индивидуалные и групповые интервью среди обращённых езидов в религию Свидетелей Иёговы и Пятидесятников Армении и Рассии. Таким образам, мы приходим к выводу, что, обучасясь в богословской школе, обращенные езиды приобретают новые духовнные ценности, а с точки зрения светского образования Пятидесятники более поощряют образование вообще и особенно высшее образование, чем Свидетили Иеговы.

Ключевые слова: обращённые езиды, Свидетелией Иеговы, Пятидесятники, основные проблемы образования, езидские общины, богословсая школа, высшее образование.

S. Fatemi

EDUCATION ISSUES AMONG CONVERTED YEZIDIS (JEHOVAH'S WITNESSES, PENTECOSTALS)

In recent decades, it has been observed an active trend of Yezidis converting to other religions, Jehovah's Witnesses and Pentecostals. This article attempts to present the role of education among Yezidis who became Jehovah's Witnesses and Pentecostals. The purpose of this article is to examine the principal differences that exist between education issues in the two religions and their effects on the converted Yezidi's thinking and daily life. The study analyzes the distribution of the roles of secular and theological schools and their peculiarities among the converted Yezidis (Jehovah's Witnesses and Pentecost). This article is based on the author's observations, method of comparison and analysis, individual and group interviews with converted Yezidis (Jehovah's Witnesses and Pentecost) from Armenia and Russia. Thus, the article concludes that converted Yezidis acquire new spiritual values by studying in theological schools, and in terms of secular education, the Pentecost encourage education in general and in higher education in particular.

Keywords.*converted Yezidis, Jehovah's Witnesses, Pentecostals, education issues, Yezidi communities, theological school, higher education*

Ավանդական եզդիական համայնքներում եզդիները ոչ միշտ են լիարժեք կրթություն ստանում: Նրանք հիմնականում սահմանափակվում են միջնակարգ կրթությամբ, երբեմն թերի միջնակարգ կրթությամբ: Հիմնականում տղաներն են ստանում միջնակարգ կրթություն, իսկ աղջիկների մեծ մասը ստանում է թերի միջնակարգ կրթություն, և շատ քչերն են շարունակում իրենց ուսումը մինչև միջնակարգ կրթության ավարտը:

Եզդիների մոտ բարձրագույն կրթության խնդիր հիմնականում չի դրվում, նամանավանդ աղջիկների պարագայում: Սակայն հանդիպում են ընտանիքներ, որ իրենց թե՝ աղջիկներին և թե՝ տղաներին տալիս են բարձրագույն կրթություն՝ կարևորելով կրթության դերը նրանց կյանքում:

Եզդի Եհովայի վկաներ

Կրթության դերը էապես չի փոփոխվում նաև այն եզդիների մոտ, ովքեր Եհովայի վկա են դառնում: Նրանք լիարժեք կրթություն չեն ստանում, քանի որ ըստ Եհովայի վկաների՝ կրթությունը հարկավոր է այնքանով, որ մարդ կարողանա կարդալ և ուսումնասիրել Աստվածաշունչը: Եհովայի վկաները չեն ձգտում բարձրագույն կրթության՝ այն համարելով ժամանակի անօգուտ վատնում:

Ըստ նրանց՝ Աստվածաշունչն ուսումնասիրող մարդն արդեն իսկ բարձրագույն կրթություն ունի[1]: Զուրկ լինելով բարձրագույն կրթությունից՝ կրոնափոխ երիտասարդ եզդիները չեն կարողանում պատշաճ աշխատանք գտնել և այդ պատճառով արհեստներ են սովորում առօրյա կարիքները հոգալու համար: Նրանք մնացած ժամանակը տրամադրում են Աստվածաշունչը ուսումնասիրելուն ու քարոզելուն, քանի որ ասում են՝ «մարդը պետք է սովորի արհեստ իր հացը վաստակելու, իսկ մնացած ողջ ժամանակը հատկացնի Աստծուն՝ քարոզելու և Աստվածաշունչն ուսումնասիրելու համար»:

Հարցազրույցների արդյունքների հիման վրա կրոնափոխ եզդիների կրթական մակարդակը պայմանականորեն բաժանել եմ երեք խմբի.

- Կրթություն չունեցող
- Միջնակարգ կրթություն ստացած
- Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող և կրոնափոխությունից հետո ուսումից հրաժարվող

Կրթություն չունեցող եզդիները, Եհովայի վկա դառնալով, սովորում են գրել և կարդալ, բայց ոչ ավելին: Նրանց մեջ կան նաև այնպիսիները, որոնք ուզում են մասնագիտական կրթություն ստանալ, սակայն նրանց երազանքը չի իրականանում, քանի որ Եհովայի վկաները այն չեն խրախուսում: Նրանք ասում են. «Ավելի ճիշտ է ժամանակը օգտագործել Աստվածաշունչն ուսումնասիրելու և Եհովայի խոսքը ուրիշներին քարոզելու համար»:

Միջնակարգ կրթություն ստացողները ևս, որոնք նախկինում երազում էին շարունակել իրենց կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում, Եհովայի վկա դառնալով, հեռանում են իրենց վաղեմի երազանքից՝ իրենց ապագան տեսնելով միայն Եհովա Աստծուն ծառայելու մեջ:

Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող և կրոնափոխությունից հետո ուսումից հրաժարվող խմբում ներգրավված է եզդիների միայն հինգ տոկոսը:

Կրոնափոխ եզդիների կրթության հիմնախնդիրներն ավելի լավ պատկերացնելու համար ներկայացնում ենք մեր ուսումնասիրած օրինակներից երեքը:

<u>Առաջին օրինակ</u>. Վերջերս Եհովայի վկաների կրոնը ընդունած մի 30-ամյա կին պատմեց, որ 8-րդ դասարանից հետո չի շարունակել կրթությունը: Ծնողները թույլ չեն տվել, որ նա քաղաք գնա և շարունակի ուսումը՝ համարելով այն ամոթալի արարք: Հետագայում, ամուսնանալուց հետո ժամանակի սղության և հնարավորություններ չունենալու պատճառով նա չի կարողացել անգամ ինքնակրթությամբ զբաղվել, չնայած նրան, որ միշտ երազել է բժիշկ դառնալ . . .

[1] *Տե՛ս https://www.jw.org/hy/եհովայի-վկաներ/հոռհ/jw-կրթություն-դպրոց/, 2019 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania.*

Տարիների ընթացքում տնային հոգսերը, երեխաների դաստիարակությանը չթողեցին կնոջը նույնիսկ զբաղվել ինքնակրթությամբ: Նա անտեղյակ էր, թե բացի Եհովայի վկաների կրոնից՝ աշխարհում ի՞նչ ուրիշ կրոններ կան: Իսկ երբ ասեցի, որ համակարգչի օգնությամբ նա կարող է ստանալ շատ հարցերի պատասխանը՝ ասաց, թե կարծում էր, որ համակարգիչը երեխաների խաղերի համար է: Այս կինը կորցրել էր հետաքրքրությունը ամեն ինչի հանդեպ և փակված իր տանը՝ իրեն երջանիկ էր համարում և իր ողջ ժամանակը տրամադրել էր միայն Աստվածաշունչը ուսումնասիրելուն:

<u>Երկրորդ օրինակ</u>. 20 տարեկան մի տղա պատմեց, որ Նկարչական քոլեջի 5-րդ կուրսում է սովորել, բայց չի շարունակել ուսումը, քանի որ այն խանգարել է իրեն հոգևոր կյանքին անմնացորդ նվիրվելուն. «Եթե Եհովայի վկաների հետ չծանոթանայի, հիմա երևի նկարիչ կլինեի»՝ ավելացրեց նա . . .

<u>Երրորդ օրինակ</u>. 19 տարեկան աղջիկ. «Ես Եհովայի վկա եմ դարձել և արհեստ եմ սովորել, որ հետագայում կարողանամ աշխատել: Կան եզդիներ, որոնք կրթությունը թողել են, երբ Եհովայի վկա են դարձել, որովհետև կրթությունն իրենց հոգևոր աճին խանգարել է: Մենք առաջնությունը տալիս ենք հոգևորին: Երբ դպրոցն ավարտեցի, ծնողներս առաջարկեցին, որ բժշկական ինստիտուտում շարունակեմ կրթությունս: Ես հրաժարվեցի: Եթե ես գնայի սովորելու, առավոտյան 9-ից մինչև 5-ը համալսարանում էի լինելու: Սակայն ժամը 16:00-ին Եհովայի վկաների ժողովի ժամն է, և ես չէի կարողանա ներկա գտնվել ժողովին, իսկ չմասնակցել չէի ցանկանում: Ճիշտ է, բարձրագույն կրթություն չստացա, բայց հագուստի մոդելավորմամբ եմ զբաղվում: Որպես Եհովայի վկա՝ ուզում եմ ավելի շատ ծառայել Աստծուն և իմ ազգին օգնել գտնելու ճշմարիտ ուղին»:

Պետք է սակայն նշել, որ չնայած նրան, որ Եհովայի վկաները չեն խրախուսում բարձրագույն կրթությանը, նրանք քաջալերում են եզդիներին և առհասարակ բոլոր եհովայի վկաներին (անկախ տարիքից և սեռից) սովորել օտար լեզուներ: Սա ինքնին նպատակ ունի ավելի հեշտացնելու օտարազգիների հետ հաղորդակցումը և Աստվածաշնչի քարոզումը: Իսկ այն տարեց եզդի տղամարդկանց և կանանց, ովքեր գրաճանաչ չեն, օգնում են սովորելու գրել և կարդալ, որպեսզի նրանք կարողանան ուսումնասիրել Աստվածաշունչը:

50 տարեկան մի եզդի կին, որն ուներ միջնակարգ կրթություն, սովորել էր պարսկերեն, որպեսզի Եհովայի վկաների ուսմունքը քարոզել Հայաստանում ապրող պարսիկներին: Կինը հարցազրույցի ժամանակ նշեց, որ նրան արդեն հաջողվել է պարսիկ մի քանի ուսանողների կրոնափոխ անել:

Մի 65 տարեկան եզդի կին էլ ռուսերեն էր սովորել՝ Հայաստանում գտնվող ռուսներին քարոզելու նպատակով:

Եհովայի վկաների դպրոցները (Աստվածապետական դպրոցներ)[1]

Եհովայի վկաները մկրտվում են որոշակի գիտակցական մակարդակի հասնելուց և ուսմունքը բավարար տիրապետելուց հետո միայն: Այնուհետև մկրտվողը մեկ տարի շարունակում է ծառայել և ուսումնասիրել ուսմունքը, մեծ ակտիվության դեպքում հնարավոր է նաև կիսով չափ կրճատվի այդ ժամկետը, որից հետո նա դիմում է երեցներին՝ խնդրելով իրեն թույլադրել հաճախելու ռահվիրական դպրոց:

[1] *https://www.jw.org/hy/հրատարակություններ/ամսագրեր/w20120915/աստվածապետական-դպրոցներ/, 2019 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania.*

Ռահվիրական դպրոց

Դպրոցի ուսումնառությունը չորս տարի է, ընդ որում յուրաքանչյուր ուսումնական տարուց հետո աշակերտի ուսումը ընդմիջվում է, և նա իր գիտելիքները հինգ տարի կիրառում է քարոզչության մեջ, հետո սկսվում է ուսումնառության երկրորդ տարին, և այդ սկզբունքը գործում է մինչև ուսումնառության ավարտը: Ուսումնական տարին բաղկացած է տասնօրյա դասընթացներից, մնացած ողջ ժամանակը հատկացվում է քարոզչությանը և Աստվածաշնչի ուսումնասիրմանը:

Երեցների դպրոց

Կանայք իրավունք չունեն այս դպրոցում սովորելու: Երեցների դպրոցում ուսումնարության տևողությունը չորս տարի է: Տարվա ընթացքում տաս օր հատկացվում է Աստվածաշնչի խոր ուսումնասիրմանը և ժողովներ վարելու հմտություններ ձեռք բերելուն: Մնացած ողջ ժամանակը անցնում է քարոզչության և Աստվածաշնչի ուսումնասիրման վրա: Ուսումնառության առաջին տարուն հաջորդում է չորս տարի տևողությամբ պրակտիկ գործունեությունը: Դրանից հետո սկսվում է ուսումնառության երկրորդ տարին, որից հետո նորից չորս տարվա պրակտիկ գործունեություն և այս ձևաչափով մինչև ուսման ավարտը:

Շրջանային դպրոց:

Այստեղ ուսումը տևում է երկու ամիս, որից հետո նրանք հինգ տարի զբաղվում են քարոզչությամբ և Աստվածաշնչի ուսումնասիրությամբ: Հետևում է ևս երկու ամսվա ուսումնառություն, և սրանով ուսումը ավարտում է: Այն իր մեջ ներառում է Աստվածաշնչի ուսումնասիրությունը, քարոզելու մեթոդիկան և ժողովները կառավարելու հմտությունները:

Եզդի Եհովայի վկաներն առանց ջանք խնայելու ծառայում են Եհովա Աստծուն և քարոզում են, որպեսզի հետագայում կարողանան սովորել այդ դպրոցներում:

Եհովայի վկաները հոգևոր կիրակնօրյա դպրոցներ չունեն երեխաների համար, քանի որ «Եհովա Աստված ուզում է, որ բոլորը միասին իրեն երկրպագեն[1]»: Այդ պատճառով երեխաները իրենց ծնողների հետ վաղ հասակից մասնակցում են հոգևոր ժողովներին: Բացառություն չեն նաև եզդի Եհովայի վկաները: Գոյություն ունի հատուկ մշակված ծրագիր Եհովայի վկաների կայքում ՝ «աստվածաշնչային ուսմունքներ» երեխաների համար, որը իր մեջ ներառում է ֆիլմերի, երգերի և առաջադրանքների[2] ցուցադրում Աստվածաշնչի թեմաներով: Եհովայի վկաները շաբաթը երկու անգամ միասին մասնակցում են ժողովներին ՝ երկու-երեք ժամ տևողությամբ, որտեղ ուսումնասիրում են Աստվածաշունչը (հին և նոր կտակարանները): Մնացած ողջ ժամանակը զբաղվում են անձնական ուսումնասիրություններով և քարոզչությամբ [3]:

---

[1] *Տե՛ս https://www.jw.org/hy/եհովայի-վկաներ/հոգի/jw-կրթություն-դպրոց/, 2019 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania.*

[2] *Տե՛ս https://www.jw.org/hy/աստվածաշնչյան-ուսմունքներ/երեխաներ/ 2019 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania.*

[3] *Տե՛ս* ***Фатеми, С.С****. , Проповедники Свидетели Иеговы и их методы пропаганды в езидских общинах, "Danish Scientific Journal", №21/2019 ISSN 3375-2389 Vol. С. 70-74*

Եզդի Հիսունականներ

Եզդի հիսունականները, բացի հոգևոր կյանքից, հաճախելով աստվածաբանական դպրոցներ (Ռահավիրների դպրոցներ[1], Երեցների դպրոցներ[2]), մեծ կարևորություն են տալիս աշխարհիկ կրթությանը՝ մասնավորապես բարձրագույն կրթությանը: Միջնակարգ ուսումից հետո շատ եզդի 50-ականներ շարունակում են իրենց ուսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում: Նրանց մեջ քիչ չեն գիտության և արվեստի գործիչներ՝ բժիշկներ, իրավաբաններ, ինժիներներ, մանկավարժներ և այլն: Նրանք չեն զբաղվում միայն սպորտով և պարով: Ինչպես իրենք են նշում, «այդ գործերով զբաղվելը Աստվածահաճո չի»: Երեխաների համար գործում է կիրակնօրյա հոգևոր դպրոցը, որտեղ նրանք հատվածներ են արտասանում Աստվածաշնչից, երգում են Աստվածաշնչի թեմաներով գրված հոգևոր երգեր: Այստեղ գործում են երկու տարիքային խմբի՝ 5-ից 10 տարեկան և 10-ից 14 տարեկան երեխաների երգչախմբեր: Աստվածաբանական դպրոցների աշակերտների տարիքը 3-ից 14 տարեկանն է:14-ից բարձր տարիքի երեխաները համարվում են հասունացած և ժողովներին մասնակցում են բոլորի հետ միասին: Կիրակնօրյա դպրոցների աշակերտները մասնակցում են մեծահասակների հոգևոր ժողովներին՝ մեկ ժամ աստւնքում և երգում են հոգևոր երգեր, իսկ մնացած երկու ժամը շարունակում են իրենց ուսումը հոգևոր դպրոցում: Ինչ վերաբերվում է մեծահասակներին, նրանք շաբաթը հինգ անգամ հավաքվում են որևէ մեկի տանը կամ ժողովի սրահում և երկու ժամ տարբեր ձևաչափերով ուսումնասիրում, վերլուծում և քննարկում են Աստվածաշունչը (միայն նոր կտակարանը): Մնացած ողջ ժամանակը զբաղվում են իրենց առօրյա գործերով, ուսումով: Հիսունականները չեն զբաղվում քարոզչությամբ:

Այսպիսով՝ եզդիները կրոնափոխությունից հետո ձեռք են բերում նոր հոգևոր արժեքներ, սովորում են օտար լեզուներ և այլն: Եզդի Եհովայի վկաները ավելի խորանում են իրենց հոգևոր ուսումնասիրություններում, իսկ եզդի Հուսունականները հոգևոր կյանքին զուգահեռ՝ ավելի նպատակային են աշխարհիկ գոծերում և կյանքում:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., Վ.Ռ.Բալայանը:

[1] *Կարող են սովորել տեղամարդիկ և կանայք:*
[2] *Կարող են սովորել միայն տղամարդիկ:*

ՀՏԴ 94 (479.243)
Պատմություն

Տարոն ՀԱԿՈԲՅԱՆ
պ.գ.թ., ԱրՊՀ
e-mail: taronh@rambler.ru

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ և ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁևԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ: (1992թ. ՀՈՒՆՎԱՐ – 1994թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ)

ԼՂՀ-ի հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների ձևավորման գործընթացը: Այդ կառույցների ստեղծումը, չնայած ռազմաքաղաքական դժվարին կացությանը, անցավ միջազգային ժողովրդավարական չափանիշներին լիովին համապատասխան: Արցախում պետական շինարարության առանձնահատկությունն այն է, որ նույնիսկ նկատվող ներքաղաքական բարդ իրադրության և սաստակացող ռազմական գործողությունների պայմաններում իշխանության գլուխ անցած նոր ուժերը, անկախ կուսակցական պատկանելությունից, փորձեցին ինքնուրույնաբար ստեղծել հիմքերը իրավական և ժողովրդավարական մի պետության, որին վիճակված էր դիմակայել Ադրբեջանի ագրեսիային և պահպանել իր անկախությունը: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտներին:

ՀՀ նախագահ սաստկացրեց ճնշումը ԼՂՀ օրենսդիր մարմնի վրա և կարողացավ իշխանափոխություն կատարել ԼՂՀ-ում՝ բերելով իր համար բարենպաստ ուժեր: Այնուհետև ԼՂՀ կառավարման համակարգում կատարվեցին ստիպողական փոփոխություններ, որոնց արդյունքում երկիրը խորհրդարանական հանրապետությունից անցում կատարեց նախագահականի:

Բանալի բառեր` *Պետական շինարարություն, Գերագույն խորհուրդ, Նախարարների խորհուրդ, Պաշտպանության կոմիտե, Պաշտպանության խորհուրդ, Պաշտպանության պետական կոմիտե, բանակցային գործընթաց, ներքաղաքական հակասություններ, կառավարություն, հակամարտություն*

Т. Акопян

ВНУТРИПОЛИТИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКЕ И ИХ ВЛИЯНИЕ НА ФОРМИРОВАНИЕ ГОСУДАРСТВЕННОЙ СИСТЕМЫ (ЯНВАРЬ 1992 - ДЕКАБРЬ 1994 ГГ.)

После провозглашения НКР начался процесс формирования новых властных структур. Несмотря на сложную военно-политическую ситуацию, формирование этих структур прошло в полном соответствии с международными демократическими нормами. Особенность государственного строительства в Арцахе заключается в том, что даже в условиях явной сложной внутриполитической ситуации пришедшие к власти новые силы, независимо от партийной принадлежности, постарались самостоятельно создать основы правового и демократического государства, которому было суждено противостоять агрессии Азербайджана и сохранить свою независимость. Однако эти усилия столкнулись с непреодолимыми препятствиями, созданными властями РА во внутриполитических целях.

Президент РА усилил давление на законодательный орган НКР и смог реализовать смену руководства в НКР, тем самым приведя к власти благоприятные для них силы. В последствие в системе руководства НКР произошли принудительные изменения, в результате которых страна из парламентской республики перешла в президентскую.

Ключевые слова: *государственное строительство, Верховный совет, Совет министров, Комитет обороны, Государственный комитет обороны, переговорный процесс, внутриполитические противоречия, правительство, конфликт*

T. Hakobyan

THE INNER POLITICAL PROCESSES IN THE NAGORNO KARABAKH REPUBLIC AND THEIR INFLUENCE ON THE FORMATION OF THE STATE SYSTEM (JANUARY 1992 – DECEMBER 1994)

After the proclamation of the NKR, the process of new ruling structures formation started. Despite the complicated military-political situation, the formation of these structures passed according to international democratic norms. The peculiarity of state building in Artsakh is in the fact that even in the conditions of vivid complicated inner political situation the new forces, no matter to which political party they belonged, tried to create the basis of a legal and democratic state which would have to stand the aggression of Azerbaijan and keep its independence. But these efforts faced insuperable obstacles created by the authorities of the Republic of Armenia for inner political reasons.

The president of the RA intensified the pressure on the NKR legislative body and managed to realize a change of power and thus administer the power to the forces favorable for him. Later forced changes took place in the system of the NKR leadership and as a result the state from the parliamentary republic turned into a presidential one.

Key words: *state building, Supreme Council, Council of Ministers, Defense Committee, State Committee of Defense, negotiation process, inner political contradictions, government, conflict*

Մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ) հռչակումը և Գերագույն խորհուրդի (ԳԽ) ընտրությունները Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում (ԼՂԻՄ) պահպանվում ու գործում էին խորհրդային իշխանության բոլոր մակարդակների մարմինները: Սակայն, նրանց գործունեությունը թեև հիմնված էր ԽՍՀՄ օրենքների վրա, այնուամենայնիվ, ամբողջովին ենթարկեցված էր Ադրբեջանի կազմից դուրս գալու և ինքնուրույն պետականություն ստեղծելու նպատակները հետապնդող համաժողովրդական շարժման խնդիրներին: Դրանք, հատկապես Շարժման առջև կանգնած քաղաքական ու դիվանագիտական բնույթի հարցերի լուծման գործում ժողպատգամավորների մարզային խորհուրդն ու նրա գործկոմը, ոչ միայն ցուցաբերում էին մեծ ակտիվություն, այլև դարձել էին բոլոր գործողությունների օրինական, իրավական հիմքերի մշակման կենտրոն: Սակայն մարզում ստեղծված իրադրությամբ և նրա զարգացման ընթացքով թելադրված հիմնախնդիրները լուծելու գործում մարզգործկոմի ղեկավարության կողմից ցուցաբերվող նկատելի երկչոտությունը պահանջում էր ամրապնդել մարզի ղեկավարությունը: Հենց այդ նպատակն էր հետապնդում մարզային խորհրդի գործկոմի 1991թ. հունիսի 11-ի ընդլայնված նիստը, որին մասնակցում էին ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարները, ԼՂԻՄ շրջգործկոմների նախագահները: Քննարկելով մարզում ստեղծված աղետալի վիճակը՝ ակտիվը որոշեց ձեռնարկել կազմակերպչական անհետաձգելի միջոցներ՝ ընդունելով մարզգործկոմի նախագահ Ս. Բաբայանի հրաժարականը: Նախագահի պարտականությունների կատարումը դրվեց նրա առաջին տեղակալ Լ. Պետրոսյանի վրա[1]:

ԼՂՀ-ի հռչակման մասին 1991թ. սեպտեմբերի 2-ին ընդունված Հռչակագրում ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհուրդն ու նրա գործկոմը ճանաչվեցին որպես ԼՂՀ պետական իշխանության և կառավարման ժամանակավոր բարձրագույն մարմին՝ մինչև համաժողովրդական ընտրությունների անցկացումը, իշխանության ու կառավարման հանրապետական մարմինների ձևավորումը[2]:

ԼՂՀ-ի հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր մարմնի՝ ԳԽ-ի ձևավորման գործընթացը: Պետական և ռազմական շինարարության խնդիրները լուծվում էին զուգահեռաբար՝ չընդհատվող ռազմական գործողությունների պայմաններում: ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ում, որը հետագայում անվանվեց ԼՂՀ խորհրդարան (այժմ՝ ԼՂՀ Ազգային ժողով), պետք է ընտրվեր 81 պատգամավոր: Ընտրությունների օր նշանակվեց 1991թ. դեկտեմբերի 28-ը: Ընտրությունների անցկացման կարգը քննարկվեց ԼՂՀ գործկոմի դեկտեմբերի 19-ի նիստում[3]: Կազմավորվեց

---

[1] *Տե՛ս* ***Арутюнян В.****, События в Нагорном Карабахе, хроника часть IV, январь 1993г.-июль, Ер., 1997, с. 26 (այսուհետև՝ Հարությունյան Վ.):*

[2] *Նույն տեղում, էջ 73:*

[3] *Տե՛ս* ***Ավետիսյան Հ.****, Ճակատագրին ընդառաջ, Եր., 2001, էջ 147:*

81 ընտրատարածք[1], այդ թվում նաև բոլոր ադրբեջանաբնակ վայրերում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ հաստատվեց Է. Պետրոսյանը:

Դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ ԳԽ ընտրությունները, որոնք անցկացվեցին մեծամասնական ընտրակարգով՝ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ:

Հանրապետության ԳԽ ընտրությունների մասին տեղյակ էին պահվել Շուշիի և ադրբեջանական մյուս բնակավայրերի բնակիչները: Ադրբեջանցիները կատարեցին Մութալիբովի հրամանը և չմասնակցեցին ընտրություններին, ինչպես որ չէին մասնակցել հանրաքվեին:

ԼՂՀ ԳԽ ընտրություններից հետո՝ 1992 թ. հունվարի 6-ին, Ստեփանակերտում՝ նախկին մարզխորհրդի նիստերի դահլիճում, ընտրված 51 պատգամավորներից 48-ի մասնակցությամբ (ճանապարհները փակ լինելու պատճառով 3 պատգամավորներ չէին կարողացել հասնել Ստեփանակերտ) և 80 դիտորդների ու լրագրողների ներկայությամբ, «Հայր մեր» տերունական աղոթքով աշխատանքն սկսեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը: Նույն օրը ընդունվեց «ԼՂՀ պետական անկախության հռչակագիրը»[2]:

Հանրապետության սահմանները պաշտպանելու և բնակչության անվտանգությունն ապահովելու համար հենց առաջին նիստում որոշվեց ստեղծել հանրապետության իշխանության բարձրագույն մարմիններին ենթակա սեփական ռազմական ուժեր, հասարակական կարգի պահպանության ու պետական անվտանգության մարմիններ և բոլոր ռազմական ուժերը միավորել մեկ հրամանատարության ներքո:

Հունվարի 7-ի նիստում պատգամավորները ձեռնամուխ եղան ԳԽ նախագահի ընտրության հարցի լուծմանը: Առաջադրվեցին 7 թեկնածուներ՝ Լ. Պետրոսյան, Օ. Եսայան, Ռ. Քոչարյան, Ա. Մկրտչյան, Լ. Մելիք-Շահնազարյան, Ա. Մանուչարով և Շ. Մեղրյան: Թեկնածուներից հինգը ինքնաբացարկ հայտարարեցին, և մնացին Ա. Մկրտչյանն ու Լ. Պետրոսյանը: Մի քանի անգամ քվեարկություն կատարվելուց հետո 42 ձայնով ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ ընտրվեց ՀՅԴ անդամ, պատմական գիտությունների թեկնածու, 33-ամյա Ա. Մկրտչյանը[3]: Ստեղծվեց նաև Նախարարների խորհուրդ (ՆԽ), որի նախագահ հաստատվեց Օ. Եսայանը, իսկ տեղակալ՝ Բ. Առուշանյանը[4]: Ընտրված պատգամավորների մեծամասնությունը ՀՅԴ անդամներ էին, ԳԽ նախագահի ընտրություններում հաղթանակ տանելով՝ ՀՅԴ-ն որոշում ընդունեց երկրում ներքաղաքական կայունությունը

---

[1] *Տե՛ս* ***Օհանջանյան Մ****., Ակնախության քայլերը. ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն և ընտրությունները (1991-1998թթ.), Ստեփ., 1998, էջ 12:*

[2] *Տե՛ս* ***Հարությունյան Վ.,*** *նշվ. աշխ., էջ 109:*

[3] *Տե՛ս* ***Աբրահամյան Հ.,*** *նշվ. աշխ., էջ 151-152:*

[4] *Տե՛ս* ***Հակոբյան Տ****., ԼՂՀ հռչակումն և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ.), Եր., 2011, էջ 37:*

պահպանելու նպատակով մի շարք կարևոր ղեկավար պաշտոններ, այդ թվում ՆԽ նախագահինը, հանձնել մյուս քաղաքական ուժերին: ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի առաջարկով ԼՂՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալի պաշտոնի համար առաջադրվեց Ռ. Քոչարյանի թեկնածությունը, սակայն փակ գաղտնի քվեարկության ժամանակ թեկնածուն անհրաժեշտ քվեներ չստացավ: Նախագահի առաջին տեղակալի պաշտոնը մնաց թափուր:

ԼՂՀ ԳԽ առաջին նստաշրջանը կոչով դիմեց ՄԱԿ-ին, աշխարհի բոլոր պետություններին, ԱՊՀ երկրներին՝ խնդրելով ճանաչել ԼՂՀ-ն, նրան օգնություն ցույց տալ և կանխել արցախահայության ցեղասպանությունը:

Նստաշրջանի աշխատանքում հայտարարվեց ընդմիջում, և աշխատանքները շարունակվեցին հունվարի 17-20-ը:

Հունվարի 11-ին տեղի ունեցան ԼՂՀ ԳԽ պատգամավորների լրացուցիչ ընտրություններ. 11 թափուր տեղի համար ընտրվեց 9 պատգամավոր, որոնց իրավունքները հաստատվեցին ԳԽ նստաշրջանի հունվարի 17-ի նիստում: Նույն օրը ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալ ընտրվեց ՀՅԴ անդամ Գ. Պետրոսյանը, քարտուղար՝ պատմական գիտությունների թեկնածու, անկուսակցական Վ. Հակոբյանը[1]:

ԳԽ նստաշրջանն ընդունեց «Արտակարգ դրության մասին» օրենքը: Ապա կազմավորվեցին ԳԽ մշտական հանձնաժողովները[2] և հետևյալ խումբ-խմբակցությունները՝ ՀՅԴ խմբակցություն, «Արցախի ժողովրդական ճակատ» պատգամավորական խումբ, «Մարտակերտցիների խումբ», «Միացում» պատգամավորական խումբ, չեզոք անդամներ ու զինվորականներ:

Այսպիսով՝ արցախահայության ազատագրական պայքարը թևակոխեց նոր շրջան՝ անկախ հանրապետության գոյության շրջանը: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, Արցախյան շարժումը սկզբնավորվեց համաժողովրդական զարթոնքի հորձանուտում: Հետագայում Շարժման մեջ ձևավորվեց երկու հակառակ ուղղություն: Մի ուղղությունը Ադրբեջանի ագրեսիային պատասխանում էր խաղաղարար երկխոսության քաղաքականությամբ, ինչը հետագայում չարդարացվեց, իսկ դրան զուգահեռաբար գնում էր այլ գործընթաց՝ ինքնապաշտպանության ջոկատների կազմավորումը, պարտիզանական շարժումը բռնազավթված գյուղերում: Եվ այդ խնդրում վճռական դեր խաղաց Արախում ՀՅԴ: ՀՅԴ-ի ակտիվությունը, ըստ երևույթին, գործի մղեց նաև ՀՀՇ-ին, որի խողովակով նույնպես սկսվեց զենք մատակարարվել և ստեղծվել ինքնապաշտպանական ջոկատներ: Սա չէր կարող Ղարաբաղյան շարժման առաջնորդների խմբավորում չառաջացնել. հայտնվեցին Լ. Տեր-Պետրոսյանի կողմնակիցներ, բայց հիմնական մասը ընդգրկվեց ՀՅԴ-ի մեջ:

Այս քաղաքական կուսակցության հաղթանակը ակնհայտորեն դուր չեկավ պաշտոնական Երևանին, որի գլուխ էր կագնած ՀՀՇ-ն: Եվ դա քաղաքական

---

[1] *Տե՛ս* ***Աբրահամյան Հ.****, նշվ. աշխ., էջ 152:*
[2] *Տե՛ս* ***Հակոբյան Տ.****, նշվ. աշխ., էջ 39:*

ցնցում հանդիսացավ Հայաստանի նոր իշխանության համար, որը տակավին չէր հասցրել հասկանալ, թե ինչ է կատարվում Արցախում: Որոշ առումով նուրբ իրավիճակ ստեղծվեց: Այսպես՝ ԼՂՀ ԳԽ նստաշրջանն սկսելուց մի քանի օր առաջ՝ հունվարի 3-ին, Ստեփանակերտ էր ուղարկվել Հայաստանի Հանրապետության ՀՀ ԳԽ-ի դիմումը: Այդ փաստաթղթում նշված էր, որ արցախահայության ազգային ազատագրական պայքարը թևակոխել է նոր՝ պետականության հաստատման շրջան: ՀՀ ԳԽ-ն համոզված էր, որ այն կընթանա միջազգային իրավունքի հանրաճանաչ ժողովրդավարական նորմերին համապատասխան՝ դրանով օրինական հիմքի վրա դնելով ԼՂՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Այնուհետև ասված է, թե ՀՀ ԳԽ-ն ողջ հայ ժողովրդի անունից հավաստիացնում է ԼՂՀ ԳԽ-ին, որ բոլոր միջոցներով զորավիգ կլինի Արցախի պետականության հաստատմանն ու ամրապնդմանը: Սակայն մի քանի օր անց պարզվեց, որ վերոհիշյալ դիմումը պարզապես քաղաքական դեմարշ էր. ՀՀ-ի ՀՀԾ-ական իշխանությունները չէին սպասում դեպքերի նման ընթացքի, և հունվարի 12-ին, երբ ՀՀ ԳԽ նախագահության նիստի ժամանակ առաջարկվեց շնորհավորանքի խոսք հղել ԼՂՀ նորընտիր իշխանություններին, նախագահության 12 անդամներից Է. Եգորյանը և Ա. Ոսկանյանը դեմ քվեարկեցին՝ շատ լավ իմանալով, որ որոշում ընդունելու համար անհրաժեշտ է 11 ձայն: Այսպիսով, ՀՀ ԳԽ-ն չշնորհավորեց ԼՂՀ նորընտիր իշխանություններին[1]: Պատճառը պարզ է. Արցախում իշխանության էին եկել ՀՀ-ի ՀՀԾ-ական ղեկավարության համար ոչ ցանկալի ուժեր: Փաստորեն, պաշտոնական Երևանը ԼՂՀ-ի համար այդ դժվարին պայմաններում բացահայտ քաղաքական առճակատման գնաց Ստեփանակերտի հետ: Դրա արտահայտությունը դարձան ԼՂՀ իշխանությունների նկատմամբ ՀՀ ղեկավարության հետագա վերաբերմունքն ու ձեռնարկած քայլերը:

ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը հունվարի 26-ից փետրվարի 2-ը կատարեց առաջին պաշտոնական այցը Երևան: Պաշտոնական տեղեկագրերում մանրամասնություններ չեն պահպանվել նաև այդ այցի վերաբերյալ: Սակայն գոյություն ունեն տեսակետներ այն մասին, թե ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Ա. Մկրտչյանին ընդունել է խիստ սառը և պահանջել հրաժարական տալ[2]:

Իսկ ռազմական իրադրությունը ԼՂՀ-ում շարունակում էր շիկանալ: Օրեցօր սաստկացող մարտական գործողությունները հրամայաբար պահանջում էին կատարելագործել ոչ միայն ինքնապաշտպանական ուժերի (ԻՊՈՒ) կառուցվածքային ու մարտական բնութագրերը, այլ նաև կառավարման համակարգը: Մարտի 4-ի ԳԽ նախագահության նիստում Արցախի ԻՊՈՒ հրամանատար նշանակվեց գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանը: Նույն օրը նախագահությունը որոշեց ԼՂՀ ԳԽ 1992թ. հունվարի 9-ի որոշմանը

[1] *Տե՛ս* ***Աբրահամյան Հ.****, նշվ. աշխ., էջ 153-154:*
[2] *Տե՛ս* ***Հակոբյան Տ.,*** *նշվ. աշխ., էջ 42:*

համապատասխան՝ հաստատել ԼՂՀ պաշտպանության խորհրդի (ՊԽ) կազմը[1]:

Այնուհետև ԳԽ նախագահությունը ձեռնամուխ եղավ նաև կառավարության մի շարք պաշտոնների նշանակման, ԼՂՀ ՆԽ կազմը հաստատելու մասին, ԼՂՀ կառավարության անհատական կազմի մասին որոշումների նախագծերի քննարկմանը[2]: «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, հաստատվեց ԼՂՀ կառավարությունը և անձնարարվեց վերջինիս՝ առաջնորդվելով «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքով, անցնել իր լիազորությունների կատարմանը:

Այսպիսով՝ ոչ վերջնականապես, բայց ձևավորվեց ԼՂՀ գործադիր իշխանությունը, որը պետք է լուծեր երկրին վերաբերող սոցիալ-տնտեսական և մի շարք այլ հարցեր: Սակայն պետք է նշել, որ, կազմավորելով ԼՂՀ Կառավարությունը, ԼՂՀ ԳԽ նախագահությունը գործադիր իշխանության կարևորագույն լիազորությունները իրեն վերապահեց մինչև 1992թ. օգոստոս (Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը): Դա մեծապես պայմանավորված էր նրանով, որ իրադրությունը ռազմաճակատում դեռևս անչափ լարված էր և հնարավորություն չէր տալիս ԳԽ նախագահությանը ավարտել իշխանական լիազորությունների օպտիմալ բաշխումը, կառավարման համակարգի կենտրոնացումն ու կատարելագործումը:

Ելնելով ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրությունից և ղեկավարվելով «ԼՂՀ ՆԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածով՝ հանրապետության անվտանգության և պաշտպանության ապահովման անհետաձգելի միջոցառումների մշակման ու իրագործման շրջանակներում, մինչև ԼՂՀ պաշտպանության նախարարության կազմավորումը, 1992թ. մարտի 26-ին ԼՂՀ ՆԽ-ին առընթեր՝ ստեղծվեց ԼՂՀ պաշտպանության կոմիտե (ՊԿ)[3]:

Հանրապետությունում ներքին կայունություն պահպանելու նպատակով՝ ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը, ներքին պայմանավորվածության համաձայն, որոշեց ՊԿ նախագահ նշանակել Ս. Սարգսյանին, որին հանձնարարվեց 10-օրյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել ՊԿ-ի կառուցվածքի, կանոնադրության և անվանակազմի մասին: Կոմիտեն իր ողջ գործունեությունը պետք է կազմակերպեր ԼՂՀ ԳԽ և ՆԽ որոշումների ու կարգադրությունների հիման վրա: Այդ որոշումից հետո ԳԽ նախագահությունը նպատակահարմար գտավ, որ ԼՂՀ ԳԽ նախագահը մի անգամ ևս հանդիպում ունենա ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ՝ երկկողմ հարաբերությունների բարելավման նպատակով: Ա. Մկրտչյանը Երևան մեկնեց մարտի 30-ին և հաջորդ օրը հանդիպեց ՀՀ նախագահի հետ: Զրույցի ընթացքում ՀՀ նախագահը Ա. Մկրտչյանին նորից հասկանալ տվեց, որ

---

[1] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆոնդ 254, ցանկ 1, պահպանման միավոր 2, կապ 1, թերթ 5-6:*
[2] *Նույն տեղում, թ. 11-14:*
[3] *Տե՛ս ԱՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՆԽ 1992թ. մարտի 26-ի նիստի արձանագրություն, N 3:*

նա իր տեղը պետք է զիջի ՀՀԾ-ական որևէ մեկին՝ հակառակ դեպքում Հայաստանը կարող է դադարեցնել ռազմական օգնության ցուցաբերումը Արցախին[1]:

ԼՂՀ ԳԽ նախագահության և ԻՊՈՒ հրամանատարության ազդեցիկ ղեկավարների մեծամասնությունը դեմ էր նախագահի պաշտոնից Ա. Մկրտչյանի հնարավոր հրաժարվելուն: Մինչդեռ, առանց ՀՀ-ի ամենաբարձր մակարդակով օգնության, հնարավոր չէր պաշտպանել Արցախը: Փաստորեն՝ ԼՂՀ ԳԽ նախագահը կագնած էր երկընտրանքի առաջ: Եվ այդ ժամանակ էլ Արցախում արդեն նշմարվում էր երկիշխանության ուրվականը:

Այս համատեքստում չենք կարող չհիշատակել մի իրադարձություն, որը տեղի ունեցավ Արցախում մինչև Ա. Մկրտչյանի մահը: Արտաքին ուժերի ազդեցության ներքո փորձ կատարվեց մասնատել նորաստեղծ պետականությունը և այդ գործընթացի սկիզբը դրվեց Մարտակերտում: Հարկ է նշել, որ այս իրադարձության վերաբերյալ նշված ժամանակաշրջանի քաղաքական գործիչների շրջանակներում մինչ օրս էլ կան իրարամերժ կարծիքներ, սակայն, երևի այդ իրադարձությունից է դրդված, որ ապրիլի 3-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը դիմում հղեց ԼՂՀ բնակչությանը, որում, մասնավորապես, ասվում էր. «…Հայրենակիցներ, Մենք Ձեզ կոչ ենք անում սթափ և սառնասիրտ գնահատել Արցախի ներկա իրավիճակի ողջ բարդությունը, չենթարկվել խուճապահարույց սադրանքների: Ժամանակի հրամայականն է՝ դիմակայել ցանկացած դավերի: Մեր ինքնապաշտպանական ուժերը հրաշքներ են գործում: Անհավասար կռվում հայրենիքի անձնվեր զավակների թափած արյան գնով թիզ առ թիզ ազատագրվող այս սուրբ հողը չենք զիջի ոչ մեկին: Մեկ անգամ ևս հիշենք. անարգ ու բիրտ ուժին բոլորս միասին դիմագրավենք՝ որպես մեկ հոգի և մեկ մարմին: Պատմության օրենքն է՝ ազատությունը ձեռք է բերվում ուժերի գերագույն լարումով, վերանձնական զոհողությամբ, տքնաջան աշխատանքով և կազմակերպվածությամբ:

Մեր պայքարը խարսխվում է մեր անդառնալի որոշման, անկոտրում կամքի վրա, որոնք կռվաններն են մեր հուսալի ապագայի: Այդ ապագան մեզ է վիճակված կերտելու՝ ի պահ սերունդների»[2]:

Հակված ենք կարծելու, որ Ա. Մկրտչյանի և ԼՂՀ-ում ՀՅԴ-ի գործունեության սխալը պատերազմական իրադրությունում ժողովրդավարական պետություն կառուցելու ուղղությո ընտրելն էր, ինչի արդյունքում հարկ եղավ իշխանության մի շարք կարևոր պաշտոններ հանձնել ընդդիմադիր կուսակցական գործիչներին: Նման ռազմավարությունը իրեն կարդարացներ, թերևս, արտաքին միջամտության բացակայության դեպքում: Հետագայում կնկատենք, որ Ա. Մկրտչյանի մահից հետո պետության ներսում ստեղծվեց ներքաղաքական քաոսային իրավիճակ:

---

[1] *Տե՛ս* ***Աբրահամյան Հ.****, նշվ. աշխ., էջ 160:*

[2] *ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 1, պ.մ 2, կ.1, թ.36-37:*

Այսպիսի ծայրաստիճան լարված ռազմաքաղաքական իրադրություն էր տիրում հակամարտության գոտում, երբ տեղի ունեցավ ԼՂՀ-ի ներքաղաքական կյանքի ամենաողբերգական իրադարձությունը, որը շրջադարձային կետ հանդիսացավ ԼՂՀ պետական շինարարության գործընթացում. ապրիլի 14-ի երեկոյան զոհվեց ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը:

Մինչ օրս դժվար է պատասխան տալ այն հարցին, թե արդյո՞ք մտատանջություններն ու հուսահատության ապրումները դարձան կատարված ողբերգության պատճառը: Պատմական փաստն այն է, որ Ա.Մկրտչյանը իրենից հետո թեև ոչ մեծ, բայց թողեց քաղաքական ու բարոյական ժառանգություն. նա ավանդույթներ ստեղծեց, որոնք պահպանվեցին մինչև Գ. Պետրոսյանի հրաժարականը, որը տեղի ունեցավ արդեն պաշտոնական Երևանի հետ ծանր պայքարի պայմաններում: Այսինքն՝ Ղարաբաղը չէր միջամտում ՀՀ ներքաղաքական կյանքին և պահպանում էր իր չեզոքությունը:

Ժանակակիցների վկայությամբ, մինչև նիստի բացումը որոշ քաղաքական ուժերի կողմից տարբեր հասցեներով մեղադրականներ հնչեցին պատահարի առնչությամբ: Ստեղծվել էր պայթյունավտանգ իրավիճակ, երբ ամեն մի անզգույշ քայլ կարող էր ապակայունացնել ներքաղաքական իրադրությունը և հանգեցնել անկախատեսելի հետևանքների: Լիակատար պատրաստականության էին բերվել ԻՊ ուժերում գտնվող ՀՅԴ զինված կազմավորումները, որոնց մեծ մասը կենտրոնացվել էր Ստեփանակերտում: ԼՂՀ ՆԳ նախարարի պաշտոնակատար Ա. Իսագուլովի առաջարկությամբ, մինչև հետաքննության նախնական եզրակացությունը, ԳԽ նախագահության անդամների և Ա. Մկրտչյանի ընտանիքի պահպանությունը ուժեղացնելու նպատակով՝ ներքին կարգով լրահամալրվեց ԳԽ պահակախումբը (մեծամասնությունը՝ ՀՅԴ զինված կազմավորումներից): Միաժամանակ ԳԽ նախագահության անդամներին առաջարկվեց մնալ շենքում: Այդ միջոցառումների իրականացման պատասխանատվությունը դրվեց ԼՂՀ ԳԽ պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Բալայանի վրա:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը, ելնելով ստեղծված իրավիճակից և առաջնորդվելով «ԼՂՀ ԳԽ-ի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածով և 16-րդ հոդվածի 5-րդ կետով, ԼՂՀ ԳԽ նախագահի պարտականությունները դրեց ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալի՝ Գ. Պետրոսյանի վրա[1]:

ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի ողբերգական մահից հետո ստեղծված ներքաղաքական անկայուն իրադրությունը չսասանեց ԼՂ պետականության հիմքերը, ավելին, ԼՂՀ իշխանությունների վճռականության շնորհիվ ԻՊ ուժերը կարողացան ազատագրել Շուշին և Լաչինը՝ ցամաքային կապ հաստատելով հայկական երկու պետությունների միջև: Դա կարելի է համարել

[1] *Տե՛ս նույն տեղում, թ. 52:*

հայոց ազատագրական պայքարում արցախահայության ամենամեծ ռազմական ու քաղաքական նվաճումներից մեկը և կարևոր գրավական՝ ԼՂ-ի պետականության ամրապնդման համար:

Մայիսյան հաղթանակներից հետո թվում էր, թե ԼՂՀ-ում հանդարտվել են ներքաղաքական հակասությունները, սակայն հունիսի 2-6-ը տեղի ունեցած ԼՂՀ ԳԽ առաջին նստաշրջանը ապացուցեց հակառակը: Նստաշրջանում ԼՂՀ ԳԽ նախագահի ընտրությունների ժամանակ իրենց նորից զգացնել տվեցին ներքին հակասությունները, որոնք ավելի սրվեցին Հայաստանի ղեկավարության ազդեցության հետևանքով: և այն ավելի խորացավ Ադրբեջանի կողմից անսպասելի և շատ կարճ ժամանակամիջոցում Շահումյանի ու Մարտակերտի շրջանի մի մասի բռնազավթումից հետո:

Մեր կարծիքով Շահումյանի ու Մարտակերտի անկումը պետք է բացատրել փոխկապակցված, թերևս, իրար լրացնող մի շարք քաղաքական գործոններով:

Այստեղ լիովին բնականոն հարց է ծագում. ինչպե՞ս պատահեց, որ վերջին պարտություններից հետո բարոյալքված ադրբեջանական բանակը, որն ի վիճակի չէր լայնածավալ ռազմագործողություն վարել, հանկարծ կարողացավ այդքան մեծ հաջողությունների հասնել շատ կարճ ժամանակահատվածում: Չէ՞ որ Ադրբեջանի ներքաղաքական ճգնաժամը չէր կարող նպաստել ադրբեջանական բանակի մարտական ոգու վերելքին: Ընդհակառակը, այդ ճգնաժամը ավելի էր խարխլում նրա մարտունակությունը:

Պետք նշել նաև, որ նման երևութը կասկածելի է քաղաքական ասպարեզում ու պատմագիտության մեջ. այն մտորումների և ուսումնասիրության տեղիք է տալիս՝ միգուցե աղերսելով հետագայում բացահայտում: Մինչև այսօր փորձեր չեն ձեռնարկվել օբյեկտիվության և առողջ տրամաբանության հիման վրա վերհանել անկման պատճառները: Հաշվի առնելով խնդրի բարդությունն ու խճողվածությունը, ինչպես նաև նրա քաղաքական երկարատև շահարկումները՝ հեղինակները հիմնականում շրջանցել են այն: Սակայն շրջանառության մեջ կան տարբեր տեսակետներ, բայց մի բան ակնհայտ է, որ ԼՂՀ և ՀՀ ուժային համակարգերը տեղյակ էին ադրբեջանական բանակի խոշոր կուտակումների մասին[1]:

Հետագայում կտեսնենք, որ իրադարձությունների զարգացումը և երկրում ստեղծված քաոսային վիճակը անխուսափելի դարձրին մի շարք արմատական փոփոխությունները ԼՂՀ-ի ներքաղաքական կյանքում, որոնք կատարվեցին ՀՀ ղեկավարության պահանջով: Դրանից հետո միայն սկսվեց Արցախյան պատերազմում հայկական կողմի նոր հաջողությունների շրջանը:

Շահումյանի և Մարտակերտի հանձնումը մեծ աղմուկ բարձրացրեց Հայաստանի ներքին կյանքում, լարվեց ներքաղաքական դաշտը: Փոխադարձ մեղադրական կոչեր լսվեցին միմյանց հանդեպ: Շահումյանում տեղակայված Հայաստանի զինված ուժերը մեղադրվեցին դիմադրություն ցույց չտալու և

[1] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 2, կ.1, թ.94:*

խուճապ առաջացնելու մեջ: Իսկ հակառակ թևը մեղադրում էր ԼՂՀ ղեկավարությանը[1]:

Ստեղծված ծանր կացությունից դուրս գալու նպատակով ԼՂՀ ԳԽ նախագահությունը փորձեց համապասխան ուղիներ որոնել: Դրությունը շտկելու նպատակով ԼՂՀ իշխանությունները փորձեցին իրագործել գործադիր և ռազմական իշխանությունների կենտրոնացումը ՊԽ-ի ձեռքում, ինչը հնարավորություն կտար դուրս գալ ստեղծված ճգնաժամային կացությունից: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտներին:

Դրանից ելնելով՝ դեռևս հուլիսի 18-ին ԼՂՀ ԳԽ նախագահության նիստում քննարկվեց ՀՀ-ԼՂՀ փոխհարաբերությունների հարցը: Հաշվի առնելով երկու հայկական հանրապետությունների փոխհարաբերությունների նման վիճակը, ինչպես նաև ելնելով արցախյան հիմնահարցի ըմբռնման գործում պաշտոնական Երևանի դիրքորոշումը պարզելու անհրաժեշտությունից՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում կայացրեց՝ ՀՀ իշխանությունների հետ բանակցություններ սկսելու նպատակով ՀՀ ուղարկել ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակություն՝ հետևյալ կազմով. Գ. Պետրոսյան, Վ. Հակոբյան, Վ. Աղաբալյան, Վ. Ալեքսանյան, Կ. Բաբուրյան, Վ.Ղազարյան, Հ. Խաչատրյան[2]:

Բանակցությունների ընթացքի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ, սակայն, հաշվի առնելով այդ ժամանակաշրջանի որոշ քաղաքական գործիչների վկայությունները[3] և ուսումնասիրելով հուլիսի 27-ի ԼՂՀ ԳԽ նախագահության նիստի սղագրությունը, որտեղ ներկայացված են ՀՀ իշխանությունների հետ բանակցած ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակության անդամների կարծիքները, գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ նախագահը ձգտում էր ձերբազատվել ԼՂՀ ԳԽ նախագահության «անհնազանդ» անդամներից՝ պահանջելով ստեղծել մի ռազմաքաղաքական կամ պետական խորհուրդ և նրան փոխանցել օրենսդիր ու գործադիր մարմինների բոլոր պարտականությունները[4]: Եվ կարելի է կռահել, թե ինչու օգոստոսի 11-ին հանրապետության ՆԽ նախագահ Օ. Եսայանը դիմեց ԳԽ նախագահությանը՝ իր հրաժարականի հարցը քննարկելու խնդրանքով: Նա իր այդ քայլը բացատրում էր իշխանության գոյություն ունեցող կառույցների և ռազմական իրավիճակի պահանջների անհամապատասխանությամբ և առաջարկեց մինչև 1992թ. վերջը հանրապետությունում ռազմական դրություն մտցնել, ինչպես նաև ստեղծել ինչ-որ մարմին և ԼՂՀ ԳԽ-ի ու ՆԽ-ի

---

[1] *Տե՛ս* ***Ուլուբաբյան Բ****., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Եր., 1997, էջ 463:*
[2] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 2, կ.1, թ. 22-23:*
[3] *Տե՛ս* ***Հակոբյան Տ****., նշվ. աշխ., էջ 123:*
[4] *Տե՛ս ԱՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության 1992թ. հուլիսի 27-ի նիստի սղագրություն:*

լիազորությունները հանձնել այդ մարմնին[1]: Իսկ հաջորդ օրը՝ օգոստոսի 12-ին նույն՝ հրաժարականների հարցով երկրորդ անգամ ԼՂՀ ԳԽ նախագահությանը դիմեց նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը և ԼՂՀ ԳԽ քարտուղար Վ. Հակոբյանը, սակայն նախագահությունը դարձյալ որոշեց մերժել վերջիներիս հրաժարականների դիմումը[2]:

Նշված իրադարձության վերաբերյալ կարծիքներ էին տարածվել, թե ԳԽ նախագահի պաշտոնակատարի և քարտուղարի հրաժարականի պատճառը ներքին և արտաքին ճնշումներն են, և այդ քայլը իշխանական համակարգում երկպառակությունը կանխելու նպատակ է հետապնդում:

Այսպիսով՝ հունիսյան ռազմական անհաջողություններից հետո ԼՂՀ-ում ստեղծվեց ծայրաստիճան լարված և անկայուն իրավիճակ՝ սպառնալով երկրի անվտանգությանը: Դրությունը շտկելու նպատակով ԼՂՀ իշխանությունները փորձեցին իրագործել գործադիր և ռազմական իշխանությունների կենտրոնացումը ՊԽ-ի ձեռքում, ինչը հնարավորություն կտար դուրս գալ ստեղծված ճգնաժամային կացությունից: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտներին: Անհրաժեշտ է նշել նաև, որ այսօր որոշ քաղաքագետներ և պատմաբաններ ԻՊՈՒ-ի ահաջողությունները վերագրում են ԳԽ-ին և ԻՊՈՒ-ի նախկին հրամանատարությանը, որի ռազմաքաղաքական գործունեությունը համարում են կազմակերպչական տեսակետից անարդյունավետ, դրան զումարելով ռուսական օգնությունը Ադրբեջանին, նաև Հայաստանի ոչ ռուսական կողմնորոշումը: Սակայն, պատմական դեպքերը ուսումնասիրելուց և վերլուծելուց հետո կասկածի տակ է առնվում նման տեսակետի տրաբանական լինելը:

1992թ. օգոստոսի 15-ը դարձավ ԼՂՀ-ի պատմության մեջ մի նոր ուղենիշային տարեթիվ. այդ օրը տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ և ՆԽ համատեղ նիստը, որը պետք է վճռեր ՆԽ նախագահի հրաժարականի հարցը և լուծում տար ՀՀ նախագահի՝ մի նոր մարմնի ստեղծման պահանջի հետ կապված մի շարք խնդիրների[3]: Ընդունվեց ԼՂՀ ՆԽ նախագահ Օ. Եսայանի հրաժարականը: Երկրորդ հարցի վերաբերյալ եղան բազմաթիվ իրարամերժ կարծիքներ, և, ի վերջո, ընդդիմադիր կողմերը եկան փոխհամաձայնության: ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց ռազմական դրության ռեժիմն իրականացնելու համար «ԼՂՀ պետական անկախության հիմունքների մասին» սահմնադրական օրենքի 9-րդ բաժնի 3-րդ հոդվածին համապատասխան՝ ստեղծել Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ)[4]:

ՊՊԿ նախագահ նշանակվեց Ռ. Քոչարյանը, ՊՊԿ նախագահի առաջին տեղակալ՝ ԼՂՀ ՆԽ նախագահի առաջին տեղակալ Բ. Առուշանյանը, ՊՊԿ

---

[1] *Տես՝ **Արրահամյան Հ.**, նշվ. աշխ., էջ 182:*
[2] *Տես՝ ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 2, կ.1, թ. 31-33:*
[3] *Նույն տեղում, թ. 44-47:*
[4] *Տես՝ **Հակոբյան Տ.**, նշվ. աշխ., էջ 127:*

նախագահի տեղակալ՝ ԼՂՀ ԳԽ նախագահության անդամ, պետական շինարարության, իրավական հարցերի և օրինականության ամրապնդման հանձնաժողովի նախագահ Կ. Բաբուրյանը: ՊՊԿ կազմի մեջ ընդգրկվեցին ԼՂՀ ԳԽ նախագահության անդամ, պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի նախագահ Վ. Բալայանը, ԼՂՀ ՊԿ նախագահ Ս. Սարգսյանը, ԼՂՀ ՆԳՆ նախարարի պաշտոնակատար Ա. Իսագուլովը, ԻՊՈՒ հրամանատարի առաջին տեղակալ Ս. Բաբայանը:

ՊՊԿ-ին փոխանցվեցին ՆԽ-ի՝ «ԼՂՀ նախարարների խորհրդի մասին» օրենքով նախատեսված բոլոր պարտականությունները, ռազմական դրության ռեժիմի իրականացման այն լիազորությունները, որոնք նախատեսված են «Ռազմական դրության մասին» ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. օգոստոսի 13-ի հրամանագրով: ԼՂՀ ԳԽ նախագահության մի շարք լիազորություններ նույնպես փոխանցվեցին ՊՊԿ-ին: ՊՊԿ նախագահն օժտվեց ԼՂՀ ՆԽ նախագահի լիազորություններով: ՊՊԿ նախագահին պարտավորեցվում էր 6 ամիս հետո իր գործունեության հաշվետվությունը ներկայացնել ԳԽ:

ՊՊԿ-ի ստեղծումով սկսվեց արցախյան պետականության գոյապայքարի տարեգրության մի նոր էջ: Անժխտելի է, որ պատերազմական ծանր իրադրությունում կենտրոնացված իշխանական համակարգի, մասնավորապես՝ ռազմաքաղաքական մարմնի նորովի ստեղծումը, ինչպիսին էր ՀՀ իշխանությունների համակրանքը վայելող ՊՊԿ-ն, դարձավ կենսական անհրաժեշտություն և պատմականորեն արդարացվեց: Սակայն, պետաշինարարության հետագա ընթացքի ուսումնասիրությունն ու վերլուծելությունը ակնբախ են դարձնում այդ գործում եղած մի շարք էական թերություններն ու շեղումները, որոնք իրենց բացասական դրոշմն են դրել հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի վրա: Հասկանալի պատճառներով հարկ չենք համարում կանգ առնել այդ թերությունների ու շեղումների վրա…

Պետք է ասել, նաև, որ ՊՊԿ-ի գործունեությունը թելադրվում էր հիմնականում ՀՀ իշխանությունների կողմից, և դա կատարվում էր որպես երկու հայկական հանրապետությունների իշխանությունների գործողությունները ներդաշնակեցնելու անհրաժեշտություն: Իհարկե, այդ անհրաժեշտությունը կար և այն նույնիսկ կենսական պահանջ էր, սակայն այն հանգեցրեց միջազգային դիվանագիտական ասպարեզում ԼՂՀ-ի պետական ինքնուրույնության որոշակի սահմանափակմանը: Հետագայում կնկատենք, որ ԼՂՀ-ն զրկվել էր որևէ ինքնուրույն քաղաքական քայլ կատարելու հնարավորությունից, հետզհետե սեղմվեցին հանրապետության օրենսդիր մարմնի գործունեության շրջանակները, և նրա կարգավիճակը աստիճանաբար դարձավ ձևական: Իսկ Ժողովրդավարական ձևով ստեղծված պետությունը պատերազմական իրադրության թելադրանքով վերածվեց ավտորիտարի: Ցավոք, օգտվելով ժամանակի պարտադրած հանգամանքներից, իշխանական որոշ պաշտոններում հայտնվեցին նաև հասարակության համակրանքը չվայելող անձինք, որոնց գործունեությունը բացասական հետք թողեց և՛

ժողովրդի բարոյահոգեբանության, և՛ երկրի պետական շինարարության որակի վրա:

Որպես հակակշիռ վերը ասվածի, պետք է նշել, որ ՊՊԿ-ն, իր ձեռքը վերցնելով վերոհիշյալ լիազորությունները, շարունակեց և գործունեության առաջին պլան մղեց կառավարման համակարգի յուրովի կենտրոնացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչպես նաև ԻՊ ուժերը կազմակերպական-հաստիքային կառուցվածքի անցկացնելու, այսինքն՝ բանակային ենթակառույցների, պաշտպանական շրջանների (ՊՇ) ձևավորման գործընթացը: Իսկ այն սկսվել էր դեռևս ԼՂՀ ՊԿ նախագահի՝ «Պաշտպանական շրջանների և շրջանային լրակազմի ուժերի ու միջոցների կազմակերպական-հաստիքային կառուցվածքի մասին» 1992թ. օգոստոսի 14-ի հրամանագրով[1]: Այդ հրամանագրի հիման վրա ստեղծվեցին 6 ՊՇ-ներ: Իսկ 1993 թ. նոյեմբերին ԻՊՈՒ-ի վերակազմավորման գործընթացը մոտեցավ իր ավարտին, և ԼՂՀ ՊՊԿ նախագահը նոյեմբերի 10-ին հրաման ստորագրեց ԼՂՀ ԻՊՈՒ-ն ԼՂՀ Պաշտպանության բանակի (ՊԲ) վերակազմակերպելու մասին[2]:

Թվում էր, թե մարտական գործողությունների սաստկացման այդ շրջանում ՊՊԿ-ի ստեղծումով կհարթվեն ԼՂՀ օրենսդիր մարմնի և ՀՀ ղեկավարության փոխհարաբերությունները, սակայն բանակցային գործընթացում (1992 թ. օգոստոսի 27-ի Ալմա-Աթայի և Սոչիի սեպտեմբերի 19-ի համաձայնագրերը) առաջ եկած տարաձայնությունները վատթարացրին երկկողմ հարաբերությունները: Իսկ այդ տարաձայնությունների հիմնական պատճառներից մեկն այն էր, որ ԼՂ-ի շուրջ բանակցային գործընթացը տարվում էր առանց ԼՂՀ-ի մասնակցության: Բանակցային գործընթացում ԼՂՀ օրենսդիր մարմնի և ՀՀ նախագահի միջև առաջացած տարաձայնությունները նոր խթան հանդիսացան լարվածության ուժեղացման համար: Այնուամենայնիվ, ԼՂՀ ԳԽ նախագահությունը շարունակում էր ՀՀ իշխանությունների հետ հարաբերությունները բարելավելու համար ուղիներ որոնել, սակայն այդ որոնումներն ապարդյուն անցան:

Կարելի է ասել, որ բանակցային գործընթացում ՀՀ նախագահը նորից չէր վստահում ԼՂՀ օրենսդիր իշխանությանը: Ուստի հակառակ թևը սկզբնական շրջանում փորձեց ուղիներ որոնել և բարելավել հարաբերությունները ՀՀ իշխանությունների հետ: Այդ առնչությամբ 1992թ. հոկտեմբերի 13-ին ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակությունը՝ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի գլխավորությամբ այցելեց Երևան և հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի հետ: Այդ հանդիպումների նպատակն էր պարզել՝ արդյո՞ք փոփոխություններ տեղի չեն

---

[1] *Տե՛ս **Հարությունյան Մ**., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., պատմական գիտությունների թեկնածուական ատենախոսություն, Եր., 2001, էջ 86 (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարան):*

[2] *Տե՛ս ԱՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՊՊԿ-ի նախագահի 1993թ. նոյեմբերի10-ի որոշում N 323:*

ունեցել ԼՂՀ հանդեպ վարած ՀՀ քաղաքականության մեջ, մանավանդ ինչպես նշեցինք, երբ ԼՂՀ վերաբերյալ վերջին երկու համաձայնագրերը կայացվել էին առանց ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցության[1]: Սակայն կարելի է եզրակացնել, որ բանակցություններն անցել են անարդյունք: Պատճառը երևի պարզ է. ՀՀ-ում Արցախյան հիմնախդիրը պետք է շահարկվեր ներքին կայունությունը պահպանելու համար:

Երկու հայկական հանրապետությունների բարձրագույն իշխանությունների հարաբերությունների լարվածությունը ԼՂՀ-ում ծնունդ տվեց բացահայտ ներքա¬ղաքական առճակատումների, որոնք հանգեցրին ՊՊԿ-ի կողմից ԳԽ նախագահության անդամների, ԳԽ պատգամավորների և ԳԽ աշխատակազմի որոշ անդամների վրա ճնշումների գործադրման[2]: Վերլուծելով ստեղծված իրավիճակը, կարելի է գալ այն եզրահանգման, որ ՀՀ ղեկավարությունը ՊՊԿ-ի լծակներով փորձում էր նորից պատժել ԼՂՀ ԳԽ նախագահության «ահնազանդ» անդամներին:

Այդ առնչությամբ նոյեմբերի 24-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին հղեց հետևյալ նամակը. «Մեծարգո նախագահ. ՀՀ-ի և ԼՂՀ-ի միջև ժամանակի ընթացքում Երևանում սկսված բնական երկխոսությունների օգտակարությունը հուշում է գործընթացի շարունակման անհրաժեշտությունը: Վիճակի օրավուր սրման պայմաններում, պատիվ ունենք, մեծարգո նախագահ, հրավիրելու Ձեզ ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտ՝ արժեքավորելու և կոնկրետացնելու շահավետ երկխոսությունը: Համաձայնություն տալու դեպքում, խնդրում ենք մեզ տեղյակ պահել Արցախ գալու Ձեզ համար նպատակահարմար ժամանակի մասին:

Ընդունեք, պարոն նախագահ, Ձեր նկատմամբ տածած հարգանքների հավաստիացումը»[3]:

Պետք է նշել, որ այդպես էլ ՀՀ նախագահը չցանկացավ հանդիպել ԼՂՀ ԳԽ նախագահության անդամների հետ: Նման պայմաններում ԼՂՀ ԳԽ նախագահությունը գաղտնի նամակ հղեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին[4]:

Նամակի բովանդակության վերաբերյալ նշված ժամանակաշրջանի քաղաքական գործիչների շրջանակներում մինչ օրս էլ կան իրարամերժ կարծիքներ, սակայն, ուսումնասիրելով դրանք, կարելի է եզրակացնել, որ նամակում ԼՂՀ ԳԽ նախագահությունը բանակցային գործընթացի վերաբերյալ արտահայտել է իր տեսակետներն ու առաջարկությունները:

1993թ. փետրվարի սկզբներին Արցախի իշխանությունների միջև գոյություն ունեցող հակասությունները թևակոխեցին մի նոր շրջան: Փետրվարի 10-ին, Ադրբեջանի կողմից ուղղակի ԼՂՀ տարածքի բոնազավթման կապակցությամբ ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը որոշում կայացրեց 3 ամսով, մինչև 1993թ.

---

[1] *Տե՛ս «Երկիր», 30.10.1992:*
[2] *Տե՛ս **Հակոբյան Տ.,** նշվ. աշխ., էջ 140:*
[3] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 6, կ.1, թ. 22:*
[4] *Տե՛ս **Հակոբյան Տ.**, նշվ. աշխ., էջ 147:*

մայիսի 12-ը երկարաձգել 1992թ. օգոստոսի 12-ի ԼՂՀ ԳԽ-ի նախագահության հրամանագրով ԼՂՀ ողջ տարածքում ռազմական դրության ժամկետը[1]: Նույն որոշմամբ, ռազմական դրության հայտարարման կապակցությամբ ստեղծված ՊՊԿ-ն պետք է փետրվարի 18-ին ԼՂՀ ԳԽ-ի նախագահությանը ներկայացներ հաշվետվություն՝ անցած 6 ամսվա ընթացքում կատարած աշխատանքի վերաբերյալ: Ինչպես նաև առաջիկա այդ 2 օրերին ՊՊԿ-ն պետք է ԼՂՀ ԳԽ-ի նախագահությանը հանձներ իր ընդունած որոշումները, կարգադրություններն ու այլ փաստաթղթեր: Փետրվարի 12-18-ը փորձագետները պետք է ճշտեին դրանց օրինականությունը:

Փետրվարի 14-ին ԼՂՀ ԳԽ-ի մանդատային, մարդու իրավունքների, պարկեշտության և ազգությունների մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ հրավիրվեց ԼՂՀ ԳԽ-ի պատգամավորների խորհրդակցություն: Հանդիպան ժամանակ, որին մասնակցել են նաև ԼՂՀ ՊՊԿ-ի և ԻՊՈՒ-ի ղեկավարությունը, առաջարկվեց քննարկել ՊՊԿ-ի լիազորությունների լրանալու և ռազմական դրության ժամկետի երկարաձգման հետ առնչվող հարցեր: ՊՊԿ-ին մոտ շրջանակների ներկայացուցիչները ռազմական դրությունը մինչև պատերազմի ավարտը երկարաձգելու և[2] ՊՊԿ-ին լրացուցիչ լիազորություններ տրամադրելու պահանջներ ներկայացրեցին:

Նման իրավիճակի պայմաններում ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը փետրվարի 17-ին նամակ հղեց ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանին[3]: Նամակում հաղորդվում էր ՀՀ տնտեսական և քաղաքական իրավիճակի պատճառների, ՀՀ նախագահի և ԼՂՀ օրենսդիր մարմնի փոխհարաբերությունների, ինչպես նաև բանակցային գործընթացում ԼՂՀ դիրքորոշումների անտեսման մասին:

ԼՂՀ ԳԽ-ի նախագահության և ՊՊԿ-ի միջև քաղաքական հակամարտությունը փետրվարի 18-ին մտավ իր վերջին փուլը: ՊՊԿ-ի նախագահ Ռ.Քոչարյանը չներկայացավ ԼՂՀ ԳԽ-ի նախագահության ընդլայնված նիստին, ուր պետք է լսվեր ՊՊԿ-ի 6 ամսյա գործունեության հաշվետվությունը: Նիստին մասնակցող ՊՊԿ-ին մոտ կանգնած շրջանակները միաժամանակ արշավ ծավալեցին՝ պահանջելով առանց ՊՊԿ-ի հաշվետվությունը լսելու վերանայել ռազմական դրությունը 3 ամսով երկարաձգելու որոշումը: Նրանք այն կարծիքին էին, որ ռազմական դրությունը պետք է հայտարարվի մինչև պատերազմի վերջը:

Նիստում նաև առաջարկվեց ստեղծել փոքր խորհրդարան կամ ընդլայնված նախագահություն՝ նրա կազմում ընդգրկելով ոչ պատգամավորների: Բացահայտելով նման որոշումների կործանարար էությունը երիտասարդ հանրապետության համար՝ ԳԽ-ի նախագահությունը մերժեց ընդունել

[1] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 7, կ.1, թ. 52-53:*
[2] *Տե՛ս «Երկիր», 17.02.1993:*
[3] *Տե՛ս «Երկիր», 23.02.1993:*

որոշումներ, որոնք կարող են հանգեցնել «բռնատիրության» հաստատմանը: Ի վերջո, երկար քննարկումներից և բանավեճերից հետո գործադիր իշխանությունների ներկայացուցիչները ստիպված էին համաձայնել ողջամիտ միակ տարբերակի հետ՝ հրավիրել նստաշրջան, որը պետք է լսեր ՊՊԿ-ի և ԳԽ-ի նախագահության զեկուցումները և որոշ փոփոխությունների ընդգրկումը ԳԽ-կանոնակարգի մեջ: Այն ակնկալվում էր հրավիրել առաջիկա 1 ամսվա ընթացքում, նստաշրջանի հարցերից մեկն էլ պետք լիներ նաև ԼՂՀ ԳԽ-ի ղեկավարության թափուր պաշտոնների համար ընտրությունները:

Այս իրադարձությունների կապակցությամբ ՀՀ ԳԽ-ի մի խումբ պատգամավորներ հրապարակեցին հայատարարություն, որով արտահայտեցին իրենց մտահոգությունը ցավալի միջադեպի առթիվ՝ կատարվածը համարելով Հայաստանի ղեկավարության կոպիտ միջամտության արդյունք, պահնջել վերջ տալ ժողովրդավարական եղանակով ստեղծված մարմնի հեղինակության հետ կատարվող խաղին, միասնական ու համերաշխ գործողություն ծավալել ԼՂՀ օրինական պետական մարմնի հովանու ներքո[1]:

Ինչպես տեսնում ենք, ներքաղաքական իրադրության սրումը հետևանք է այն հանգամանքի, որ օրենսդիր և գործադիր մարմինները, որոնք առաջին հայացքից, թվում է, յուրովի իրավացի են գործում, չունեին համատեղ և ներդաշնակ գործունեության մշակված ծրագիր, ինչի պատճառով նրանց կողմից մեկը մյուսին ներկայացվող մեղադրանքները, փաստորեն, վերաբերում էին երկուսին էլ: Պարզ է, որ ժողովրդի կողմից օրինական կերպով ընտրված օրենսդիր մարմնի և պատերազմական շրջանի թելադրանքով ստեղծված գործադիր մարմնի միջև համերաշխության առկայության, երկուստեք քաղաքական պատվախնդրությունների բացակայության դեպքում նրանց երկուսի ջանքերը լիովին կնպատակամղվեին ընդհանուր շահին՝ ադրբեջանական ագրեսիայի դեմ հաղթանակի հասնելու գործին, այլ ոչ թե ներքին հակասությունների հաղթահարմանը կամ մեկը մյուսի նկատմամբ գերակայության հասնելուն: Չի կարելի ժխտել, որ ՊՊԿ-ն, որպես պատերազմական շրջանի ռազմաքաղաքական մարմին, պարտավոր էր հանրապետության գերագույն ղեկավար մարմնի առաջ իր պատասխանատվության և իրավունքների շրջանակներում լուծել ոչ միայն ռազմական խնդիրները, այլև դրանցից բխող, դրանցով պայմանավորված և դրանց հետ առնչվող՝ ներքին կյանքի հարցերը: Հենց այդ շրջանակներից դուրս գալը, ԼՂՀ ԳԽ-ի ու նրա նախագահության գործունեությունը սահմանափակելու ձգտումը, ինչը պարզորոշ կերպով նկատելի է ստեղծված իրադրության ֆոնի վրա, հանդիսացել է ներքաղաքական կյանքի լարվածության գլխավոր պատճառը:

Մարտի 21-ին իր աշխատանքը վերսկսեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ի առաջին նստաշրջանը: Օրակարգում էին հետևյալ հարցերը՝ ԼՂՀ ՊՊԿ-ի

[1] *Տե՛ս «Երկիր», 19.02.1993:*

հաշվետվությունը, ԼՂՀ ամբողջ տարածքում ռազմական դրության ժամկետի մասին, ԼՂՀ ԳԽ-ի ժամանակավոր կանոնակարգում և ԼՂՀ ԳԽ-ի մասին օրենքում փոփոխություններ մտցնելը, ԼՂՀ ԳԽ-ի նախագահի և նախագահի տեղակալի ընտրությունները, ԼՂՀ ԳԽ-ի նախագահության հրամանագրերի և օրենսդրական ակտերի ուղղությամբ որոշումների հաստատումը:

ՊՊԿ-ի հաշվետվությունը ներկայացրեց ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանը[1]: ԼՂՀ ԳԽ-ի նախագահության հաշվետվությամբ հանդես եկավ ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը[2]: Նա անդրադարձավ պետականության ձևավորման խնդիրներին, ինչպես նաև նշեց օրենսդիր և գործադիր մարմինների միջև առկա տարաձայնությունների առարկայական և ենթաառարկայական պատճառները[3]:

ԼՂՀ ԳԽ նախագահի թեկնածուներին ոչ մեկին չհաջողվեց հավաքել ձայների անհրաժեշտ քանակություն: ԳԽ-ի նստաշրջանը որոշեց Գ.Պետրոսյանին թողնել ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար մինչև ապրիլի վերջը, այնուհետև կրկին անդրադառնալ այդ հարցին: Սակայն ապրիլի վերջին քվորում չլինելու պատճառով այն չկայացավ, որոշում կայացվեց նիստը անցկացնել ԳԽ-ի կրկնական և նոր ընտրությունների անցկացումից հետո:

Այսպիսով՝ ԼՂՀ իշխանական համակարգում կատարված ակնհայտորեն ստիպողական փոփոխությունները չվերացրին պաշտոնական Երևանի և Ստեփանակերտի միջև եղած հակասությունները: Խաղաղարար բանակցային գործընթացում ծագած նոր տարաձայնությունները և որոշ ներքին գործոններ ավելի սրեցին դրանք, ինչը բացասական ազդեցություն ունեցավ ԼՂՀ-ի ներքաղաքական կայունության վրա՝ սպառնալիք ստեղծելով երկրի անվտանգությանը: Հենց այդ հանգամանքից օգտվելով՝ ՀՀ նախագահը սաստկացրեց ճնշումը ԼՂՀ օրենսդիր մարմնի վրա, որի արդյունքում հրաժարական տվեց ԼՂՀ ԳԽ պաշտոնակատար Գ.Պետրոսյանը, իսկ ԳԽ նախագահի պարտականությունները դրվեց Կ.Բաբուրյանի վրա:

Թվում էր, թե ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի հրաժարականով պետք է հանդարտվեր ներքաղաքական լարվածությունը հանրապետությունում, սակայն 1994թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների ընթացքը ցույց տվեց հակառակը: Իսկ դա վառ կերպով դրսևորվեց դեկտեմբերի 21-23-ին տեղի ունեցած ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանում, որի աշխատանքը անհրաժեշտ ենք համարում մասնակի լուսաբանել, քանզի այդ նստաշրջանը նաև ուղենիշային և բախտորոշ դեր խաղաց ԼՂՀ-ի քաղաքական կյանքում:

Մինչդեռ 1994թ նոյեմբերի 9-ի ԼՂՀ ԳԽ նախագահության նիստի ժամանակ որոշում կայացվեց նստաշրջանը հրավիրել 1994թ. նոյեմբերի 23-ին[4]:

---

[1] *Տե՛ս ՀՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 4, պ.մ 2, կ.1, թ. 41-50:*
[2] *Նույն տեղում, թ. 59-65:*
[3] *Տե՛ս «Երկիր», 23.02.1993:*
[4] *Տե՛ս ՀՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 2, պ.մ 23, կ.3, թ. 9:*

Օրակարգում ներկայացվեցին մի շարք հարցեր, այդ թվում՝ ԼՂՀ ռազմական դրության ժամկետը երկարաձգելու և ԼՂՀ կառավարման համակարգի կատարելագործման մասին: Սակայն անհայտ պատճառներով նստաշրջանը տեղի չունեցավ:

Այն կայացավ դեկտեմբերի 21-ին: Ցանկանում ենք նշել նաև, որ նստաշրջանը սկսվեց առանց օրակարգի[1], և այն ձևավորվեց նստաշրջանի ընթացքում:

Ուսումնասիրելով դեկտեմբերի 21-23-ին տեղի ունեցած ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանի սղագրությունը, ինչպես նաև մասնակի պահպանված տեսաձայնագրությունը*՝ պարզ է դառնում, որ ՀՀ իշխանությունների համակրանքը վայելող քաղաքական գործիչների և ԼՂՀ ՊԲ հրամանատարության՝ մասնավորապես ՊԲ հրամանատար Ս.Բաբայանի կողմից ճնշումներ գործադրվեցին ԼՂՀ ԳԽ որոշ պատգամավորների վրա: ԼՂՀ ԳԽ նախագահությունը մեղադրվեց անգործության մեջ: Հնչեցին հայտարարություններ ԼՂՀ կառավարման համակարգում փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության մասին, նաև ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանին նախագահ չընտրվելու դեպքում անգամ 10 օրվա ընթացքում ԳԽ-ն ընդհանրապես ցրելու և նոր ընտրություններ անցկացնելու մասին[2]:

1994թ. դեկտեմբերի 21-ին ԳԽ-ի նիստում որոշում կայացվեց ԼՂՀ-ում հիմնել նախագահական կառավարման ինստիտուտ, ընդունվեց «ԼՂՀ Նախագահի մասին» օրենքը, ըստ որի հանրապետության նախագահը պիտի ընտրվեր 5 տարի ժամկետով՝ ուղղակի փակ գաղտնի ընտրությամբ: Սակայն, հաշվի առնելով ռազմական դրության պահանջները, ԳԽ որոշեց ԼՂՀ առաջին նախագահին ընտրել երկու տարի ժամկետով՝ փակ գաղտնի քվեարկությամբ[3]:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 22-ին, ընդունվեցին «ԼՂՀ Խորհրդանի մասին»[4], «ԼՂՀ կառավարության մասին» օրենքները[5]: Այնուհետև խորհրդարանն անցավ հաջորդ հարցին՝ ԼՂՀ նախագահի ընտրություններին: Առաջադրվեցին 2 թեկնածու՝ ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանը և ԼՂՀ ԳԽ պատգամավոր Մ. Պետրոսյանը, ով, սակայն, հանեց իր թեկնածությունը: «ԼՂՀ Նախագահի մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն փակ գաղտնի քվեարկությամբ (51 կողմ, 2 դեմ) ԼՂՀ նախագահ ընտրվեց Ռ.Քոչարյանը[6]

Դեկտեմբերի 23-ի առավոտյան նիստում տեղի ունեցավ ԼՂՀ նախագահի երդման հանդիսավոր արարողությունը, այնուհետև, շարունակելով նիստը, ընդունվեց «ԼՂՀ Խորհրդարանի ընտրությունների մասին» օրենքը[7]:

---

[1] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 2, պ.մ 25, կ.3, թ. 90:*

* *Թեմայի ուսումնասիրության ընթացքում ծագել են որոշակի դժվարություններ, ցավոք, ԱՀ պետական և ԱԺ ընթացիք արխիվներում ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության նիստերի սղագրություններից մեզ հասել են մի շարք ռազմական և քաղաքական գործիչների արտկահարույց ելույթներ, ինչպես նաև պետական շինարարությանը վերաբերող որոշ կարևոր արխիվային նյութեր: Ուստի առաջադրված խնդիրները պարզաբանելու համար անհրաժեշտ է եղել օգտագործել անձնական արխիվներ:*

[2] *Տե՛ս Հեղինակի անձնական արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանի 1994թ. դեկտեմբերի 21-23 նիստի տեսաձայնագրություն:*

[3] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 2, պ.մ 25, կ.3, Ա. 52:*

[4] *Նույն տեղում, թ. 90-137:*

[5] *Նույն տեղում, թ.138-146:*

[6] *Նույն տեղում, թ.150:*

[7] *Նույն տեղում, թ.154-187:*

Այսպիսով՝ պաշտոնական Երևանի միջամտության արդյունքում ԼՂՀ կառավարման համակարգում կատարվեցին ստիպողական փոփոխություններ, որոնց հետևանքով երկիրը խորհրդարանական հանրապետությունից անցում կատարեց նախագահականի: Ներքաղաքական կայունության ապահովման գործում մեծ դեր խաղաց օրենսդիր մարմնի դրսևորած քաղաքական կամքը և պատասխանատվության զգացումը նորաստեղծ պետականության ու երկրի ժողովրդի ապագայի հանդեպ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., Վ.Ռ.Բալայանը:

ՀՏԴ 347
Քաղաքացիական դատավարություն

Գրետա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
իրավագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՀ իրավունքի ամբիոն
e-mail: arzumanyan.greta@mail.ru

ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԵՐՈՎ

Հոդվածը նվիրված է գործարքների վերաբերյալ վեճերով ապացույցների թույլատրելիության հատուկ կանոններին: Ապացույցների թույլատրելիության կանոնները կիրառվում են, երբ այս կամ այն փաստերը, համաձայն օրենքի ուղղակի պահանջի, չեն կարող հաստատվել ցանկացած ապացույցով: Թույլատրելիության հատուկ կանոնները հիմնականում կապված են գործարքների վերաբերյալ վեճերի քննության հետ. եթե խախտվել է գործարքի պարտադիր հասարակ գրավոր ձևը, ապա վեճի դեպքում կողմերն իրավունք չունեն հենվելու վկաների ցուցմունքների վրա:

Հոդվածում հայրենական գործող օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի վերլուծության ու մեկնաբանման հետ մեկտեղ ներկայացվել են ապացույցների թույլատրելիությունը կարգավորող օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Բանալի բառեր՝ *թույլատրելի ապացույց, ապացույցների թույլատրելիություն, ապացույցների թույլատրելիության հատուկ կանոններ, գործարքի ձև, ձայնագրություն, տեսագրություն:*

Г Арзуманян

ОСОБЫЕ ПРАВИЛА ДОПУСТИМОСТИ ДОКАЗАТЕЛЬСТВ ПО СПОРАМ О СДЕЛКАХ

Статья посвящена особым правилам допустимости доказательств по спорам о сделках. Правила допустимости доказательств применяются, когда те или иные факты, согласно прямому указанию закона, не могут быть подтверждены любыми доказательствами. Особые правилам допустимости в основном связаны со спорами о сделках: если при совершении сделки была нарушена обязательная простая письменная форма, то в случае спора стороны не вправе ссылаться на свидетельские показания.

В статье наряду с анализом и толкованием отечественного

законодательства, правоприменительной практики были представлены предложения, направленные на усовершенствование законадательства, регулирующее правила допустимости доказательств.

Ключевые слова: *допустимое доказательство, допустимость доказательств, особые правила допустимости доказательств, форма сделки, аудиозапись, видеозапись.*

G. Arzumanyan

SPECIAL RULES OF ACCEPTABILITY OF PROOFS ABOUT CONFLICT BARGAIN

The article deals with special rules of admissibility of evidence on transaction conflicts. Admissibility of evidence rules are applied when different facts, as directed by the law, cannot be confirmed by any evidences.

Special admissibility rules are generally linked with transaction disputes: if when transacting compulsory simpe written form has been violated then in case of a confict the sides must not refer to the testimony of eye-witnesses.

Alongside with the analysis, interpretation of domestic legislation and law enforcement practice, suggestions on how to perfect the legislation regulating admissibility of evidence rules, are introduced.

Keywords. *admissible evidence, admissibility of evidence, special rules of admisibility acceptability of evidence, form of bargain, videorecording, audiorecording.*

Ապացույցների տեսությունում թույլատրելիությունը ապացույցի պիտանի լինելն է աղբյուրների, տեղեկությունների ստացման և հետազոտման մեթոդների և հնարքների օրինականության տեսակետից[1]:

Քաղաքացիական դատավարությունում, ի տարբերություն քրեական դատավարության, ապացույցների թույլատրելիությունը դիտարկվում է լայն և նեղ առումներով: Լայն առումով թույլատրելի են միայն այն ապացույցները, որոնք սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի/այսուհետ՝ ՔԴՕ/[2] 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ գրավոր և իրեղեն ապացույցներ, փորձագետների եզրակացություններ, վկաների և գործին մասնակցող անձանց ցուցմունքներ/տեսության մեջ դրանք անվանվում են նաև ապացուցման դատավարական միջոցներ, ապացույցների աղբյուրներ, դատավարական ձև/: Ընդ որում, ապացույցի յուրաքանչյուր տեսակի ձեռք բերման և հետազոտման կարգը սահմանվում է առանձին:

---

[1] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, ընդ. մաս, հեղինակային խմբի ղեկավար և խմբագիր Գ.Ս.Ղազինյան, ԵՊՀ հրատ., Երևան-2000, էջ 284: Ապացույցների թույլատրելիությունը բնորոշվում է նաև որպես ապացուցման կանոն, դատավարության սկզբունք, դատավարական հիմունք, ապացույցի հատկանիշ, դատավարական լավորակություն կամ բարորակություն/ /տե՛ս, օրինակ, Треушников М. К. Судебные доказательства. 5-е издание, дополненное. М., Изд. «Городец», М. 2016, էջ 126, Ղամբարյան Ա., Ապացույցների թույլատրելիությունը քրեական դատավարությունում/ մինչդատական վարույթ/, Երևան 2004, «Եգեա» հրատ., էջ 15/:*

[2] *Ընդունվել է 17.12.2008 թ.:*

Նեղ առումով ապացույցների թույլատրելիության կանոնը սահմանված է ՔԴՕ 47-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով[1]:

Այսպիսով՝ քաղաքացիական դատավարությունում հնարավոր են դեպքեր, երբ այս կամ այն փաստը չի կարող հաստատվել ՔԴՕ 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ցանկացած ապացույցով/հատուկ կանոն/, իսկ այն դեպքերում, երբ օրենքում կամ իրավական ակտում ուղղակիորեն նշված չէ այն ապացույցը, որով թույլատրվում է հաստատել այս կամ այն փաստը, ապա վերջինս կարող է հաստատվել ՔԴՕ 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ցանկացած ապացույցով/ ընդհանուր կանոն/:

ՔԴՕ 47-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված նորմը կրում է վկայակոչող բնույթ. որպես կանոն, այն կիրառվում է դատական քննության ենթակա այս կամ այն նյութահիրավական հարաբերությունը կարգավորող կոնկրետ նորմի հետ համակցված: Նման դեպքերում գրականության մեջ խոսվում է ապացույցների թույլատրելիության հատուկ կանոնների մասին: Այդ կանոններն ունեն ընդհանուր նպատակային ուղղվածություն, այն է՝ ապահովել ապացույցների արժանահավատությունը, փաստերի մասին տեղեկությունների իսկությունը[2]:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է: Այս ընդհանուր կանոնը նույնությամբ վերարտադրվել է ՔԴՕ 43-րդ հոդվածի 2-րդ մասում[3]:

Թույլատրելիության հատուկ կանոններն ամրագրում են գործի հանգամանքները պարզելու համար որոշակի ապացույցների օգտագործումը/դրական թույլատրելիություն/, կամ էլ արգելում են որոշակի ապացույցների օգտագործումը/բացասական թույլատրելիություն/[4]:

Թույլատրելիությունը դրական է, եթե գործի որոշակի փաստական հանգամանքները կարող են հաստատվել իրավունքի նորմերով նախատեսված որոշակի ապացույցներով: Ընդ որում, դրական թույլատրելիության կանոնները մի դեպքում ընդհանրապես բացառում են

---

[1] *Նույն իրավակարգավորումն առկա է նաև ՎԴՕ-ում/23 հոդվ. 2-րդ մաս/:*

[2] *Տե՛ս* ***Треушников М. К.,*** *նշվ. աշխ., էջ 126:*

[3] *ՎԴՕ 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցների օգտագործումն արգելվում է: Դրանք ապացուցողական ուժ չունեն և չեն կարող դրվել դատական ակտի հիմքում:*

[4] *Տե՛ս, օրինակ,* ***Треушников М. К.****, նշվ. աշխ., 136-137 էջերը,* ***Մեղրյան Ս.Գ. Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում /դասախոսություններ/, Երևան-2012, 128-134 էջերը:***

իրավական ակտով նախատեսված ապացույցներից բացի այլ ապացույցների օգտագործումը/ունեն բացարձակ բնույթ/, իսկ մյուս դեպքերում, ունենալով հարաբերական բնույթ, դատարաններին պարտավորեցնում են այլ ապացույցների հետ մեկտեղ հետազոտել և գնահատել օրենքով ուղղակիորեն նախատեսված որոշակի ապացույցները: Դատավարագիտության մեջ դրանք հաճախ անվանվում են անհրաժեշտ ապացույցներ[1], որոնք թեպետև ՔԴՕ 43-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված ապացույցների մնացած տեսակների նկատմամբ որևէ առավելություն չունեն, այնուամենայնիվ, գործի լուծման համար համարվում են անհրաժեշտ/պարտադիր/[2]:

Բացարձակ դրական թույլատրելիության հատուկ կանոնի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենսդրության համաձայն գործով որևէ փաստ պարզելու համար պետք է օգտագործվի միայն որոշակի բովանդակության ու ձևի գրավոր ապացույց, ապա այդ փաստը հաստատելու համար ապացույցի այլ տեսակի, ինչպես նաև այլ բովանդակության ու ձևի գրավոր ապացույցի օգտագործումն անթույլատրելի է:

Այսպես, օրինակ, եթե գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ապա ձեռք բերողի սեփականության իրավունքի գրանցման փաստը հավաստող ապացույց համարվում է սեփականության իրավունքի վկայականը կամ դրա կրկնօրինակը/Քաղ.օր. 176 հոդվ. 2-րդ մաս./: Կամ իրավաբանական անձի ստեղծման փաստը կարող է հաստատվել բացառապես իրավաբանական անձի պետական գրանցման վկայականով: Կամ <<Քաղաքացիական կացության մասին> օրենքի համաձայն՝ ծննդի պետական գրանցման ապացույց համարվում է ծննդյան վկայականը, ամուսնության պետական գրանցման ապացույց՝ ամուսնության վկայականը, այլ ապացույցներով այդ փաստերը հաստատվել չեն կարող:

Հարաբերական դրական թույլատրելիության հատուկ կանոնները, որպես կանոն, կիրառվում են օրենքով սահմանված դեպքերում:

Օրինակ՝ քաղաքացուն անգործունակ ճանաչելու գործերով քաղաքացու հոգեկան խանգարման վերաբերյալ հիմնավոր կասկածների առկայության դեպքում անհրաժեշտ է նշանակել և անցկացնել դատահոգեբուժական փորձաքննություն/ ՔԴՕ 155 հոդվ./: Փորձագետի եզրակացությունը տվյալ դեպքում անհրաժեշտ ապացույց է: Ապացույցների մնացած տեսակները /օրինակ՝ քաղաքացու ոչ ադեկվատ վարքագծի մասին դիմողի ցուցմունքը, հոգեբուժական հիմնարկում բուժվելու մասին տեղեկանքները և այլն/ նույնպես թույլատրելի են, սակայն չեն կարող փոխարինել դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությանը:

---

[1] *Տե՛ս, օրինակ, **Մեղրյան Ս.Գ.** նշվ. աշխ., էջ 129:*

[2] *Տե՛ս Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի** Հանրապետության քաղաքացիական դատավարություն, Ոսկան Երևանցի, Ե.-2012, էջ 298, **Մեղրյան Ս.Գ.** նշվ. աշխ., 128- 134 էջերը:*

Կամ երեխաների խնամքի և դաստիարակության հետ կապված վեճերը դատարանի կողմից քննելիս խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել երեխայի և այն անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն, որը (որոնք) հավակնում է (են) երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպմանը, որից հետո և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը, իսկ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դեպքում՝ նաև սոցիալական աջակցության բնագավառում Արցախի Հանրապետության Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի կողմից խնամակալության և հոգաբարձության մարմիններին տրված եզրակացությունը երեխայի որդեգրման, խնամակալության կամ հոգաբարձության, խնամատարության կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ուղեգրելու մասին/ԸնտՕր. 67-րդ հոդվ./: Կամ ծնողական իրավունքներից զրկելու մասին գործերը քննելիս հաշվի է առնվում սոցիալական աջակցության բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի կողմից խնամակալության և հոգաբարձության մարմիններին տրամադրված՝ երեխայի և ծնողի սոցիալական կարիքների գնահատման մասին եզրակացությունը (դիրքորոշումը)/ԸնտՕր. 60-րդ հոդվ./:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ թույլատրելի/անհրաժեշտ/ ապացույցներ մշակվում են նաև դատական պրակտիկայի կողմից[1]:

Թույլատրելիությունը բացասական/նեգատիվ/ է, եթե իրավական նորմերը պարունակում են այս կամ այն ապացույցի օգտագործման արգելք: Քաղաքացիական դատավարությունում նեգատիվ բնույթ ունի վեճի դեպքում ի հաստատումն գործարքի և նրա պայմանների վկաների ցուցմունքներն արգելելու մասին ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի /այսուհետ նաև՝ Քաղ. օր./ 298-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված նորմը:

Ի դեպ, պատմականորեն ապացույցների թույլատրելիության կանոնները ձևավորվել են հենց գործարքների խախտման հետևանքների ազդեցության ներքո: Անգլիայում, օրինակ, այդ կանոնները կիրառվել են խաբեության, չարաշահումների դեմ պայքարելու համար, «քանի որ դժվար էր հավատալ այս կամ այն կողմի կամ վկայի բանավոր խոսքին, երբ պայմանագրի օբյեկտ էր համարվում այնպիսի առանձնահատուկ գույք,

[1] *Կոնկրետ գործով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բաժնեմասը բնեղենով առանձնացնելու փաստը կարող է հաստատվել միայն համապատասխան մասնագիտական եզրակացությամբ, որի ստացմանն ուղղված դատավարական միջոցներից է գործով փորձաքննության նշանակումը/տե՛ս ըստ հայցի ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության ընդդեմ Ա/Հ Գուրգեն Այվազյանի և մյուսների՝պարտապանի բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու մասին քաղ. գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27. 11. 2015 թ. որոշումը/:*

ինչպիսին փողն է»[1]: Հետագայում արդեն ապացույցների թույլատրելիության կանոնների կիրառումը հնարավոր է համարվել նաև այլ իրավահարաբերությունների հիմքում ընկած փաստերի պարզման համար:

Քաղ. օր. 298-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված կանոնի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի և նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքում կամ կողմերի համաձայնության մեջ ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության:

Ապացույցների թույլատրելիության վերոնշված կանոնի գործողության տակ ընկնում են ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ խմբի գործարքներով փաստերի ապացուցման դեպքերը, այսինքն՝ գործարքներ, որոնց համար սահմանված է վկաների ցուցմունքների վրա հենվելու արգելքի տեսքով դատավարահիրավական հետևանք/սանկցիա/, այնպես էլ գործարքներ, որոնց համար սահմանված է անվավերության տեսքով նյութահիրավական հետևանք/սանկցիա/:

Գրավոր գործարքը սովորաբար կազմվում է իր բովանդակությունն արտահայտող փաստաթուղթ կազմելու և գործարքը կնքող անձի (անձանց) կամ նրանց կողմից պատշաճ լիազորված անձի ստորագրությամբ (Քաղ. օր. 296-րդ հոդվ. 1-ին կետ): Այս կանոնն ընդհանուր է և կիրառվում է ցանկացած գործարքի դեպքում: Օրենքով, այլ իրավական ակտերով և կողմերի համաձայնությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ, որոնց պետք է համապատասխանի գործարքի ձևը (որոշակի ձևաթղթի վրա կնքելը, կնիքով դրոշմված լինելը և այլն/:

Գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով/ Քաղ. օր. 296-րդ հոդվ. 3-րդ մաս/:

Պայմանագիրը կարող է կնքվել գործարքները կնքելու համար նախատեսված ցանկացած ձևով, եթե տվյալ տեսակի պայմանագիր կնքելու համար օրենքով որոշակի ձև սահմանված չէ (Քաղ. օր. 450-րդ հոդվ. 1–ին մաս)[2]:

---

[1] *Տե՛ս* ***Треушников М. К.,*** *նշվ. աշխ., էջ 123:*

[2] *Գործարքի հասարակ գրավոր ձևի մասին տե՛ս* ***Татаркина К. П****. Форма сделок в гражданском праве России. Автореферат канд. дисс. Томск 2009,* ***Թադևոսյան Ա****. Գործարքի հասարակ գրավոր ձևը և այն չպահպանելու հետևանքները,<<ՀՀ դատական իշխանություն>>, Ստեփանակերտ 2016, 11-21 էջերը:*

Պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային, կամ կապի այլ միջոցներով փաստաթղթեր փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշելու, որ փաստաթուղթը ելնում է պայմանագրից /Քաղ.օր. 450-րդ հոդվածի 3-րդ մաս/:

Պայմանագրի գրավոր ձևը պահպանված է համարվում, եթե պայմանագիր կնքելու գրավոր առաջարկն ընդունվում է օֆերտա ստացած անձի կողմից դրա ակցեպտի համար սահմանված ժամկետում՝ դրանում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ գործողությունները ձեռնարկելու (ապրանքներ բեռնելու, աշխատանքներ կատարելու, ծառայություններ մատուցելու, համապատասխան գումար վճարելու և այլն) միջոցով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով, կամ նշված չէ օֆերտայում:

Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս ակցեպտը համարվում է ստացված այն պահից, երբ օֆերտայում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ գործողությունները ձեռնարկելու վերաբերյալ էլեկտրոնային ծանուցումը մուտք է գործում օֆերտա ուղարկած անձի կողմից նշված տեղեկատվական համակարգ, կամ այն հայտնաբերել է օֆերտա ուղարկած անձը, եթե այն ուղարկվել է նրա կողմից չնշված տեղեկատվական համակարգին/450,454/հոդվ./:

Պայմանագրերի առանձին տեսակներին նվիրված նորմերը նախատեսում են պայմանագրի գրավոր ձևը պահպանված համարելու այլ եղանակներ: Օրինակ՝ պահատվության պայմանագրի հասարակ գրավոր ձևը համարվում է պահպանված, եթե գույքի ի պահ ընդունումը պահառուի կողմից հավաստված է պահառուին 1) պահատվության ստացական, անդորրագիր, վկայագիր կամ պահառուի կողմից ստորագրված այլ փաստաթուղթ տրամադրելով, 2) գույքի ի պահ ընդունումը հավաստող մետաղանիշ (համար) կամ այլ նշան տալով, եթե գույքի ի պահ ընդունումը հաստատող այդպիսի ձևը նախատեսված է օրենքով կամ այլ իրավական ակտով կամ սովորական է տվյալ տեսակի պահատվության համար:

Քաղ.օր. 297-րդ հոդվածի համաձայն՝ բացառությամբ նոտարական վավերացում պահանջող գործարքների հասարակ գրավոր ձևով պետք է կնքվեն՝ 1/իրավաբանական անձանց՝ միմյանց միջև և քաղաքացիների հետ գործարքները, 2/քաղաքացիների միջև աշխատավարձի նվազագույն չափի քսանապատիկ գումարը գերազանցող, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ անկախ գումարի չափից գործարքները:

Պարտադիր գրավոր ձևով կնքվում են՝ բնակելի տարածության օգտագործման պայմանագիրը/ Քաղ.օր. 223 հոդվ./, գրավի պայմանագիրը/Քաղ.օր.234 հոդվ./, հիպոթեքի պայմանագիրը/Քաղ.օր. 264 հոդվ./, տուժանքի մասին համաձայնությունը/Քաղ.օր. 370 հոդվ./, երաշխավորության պայմանագիրը/Քաղ.օր. 376 հոդվ./, նախավճարի մասին համաձայնությունը/ Քաղ.օր. 395 հոդվ./, մատակարարման պայմանագիրը/Քաղ. օր. 521 հոդվ./, էներգամատակարարման

պայմանագիրը/Քաղ. օր. 551 հոդվ./, անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը/Քաղ. օր. 562 հոդվ./, ռենտայի պայմանագիրը /Քաղ. օր. 571 հոդվ./, նվիրատվության պայմանագիրը/Քաղ. օր. 594 հոդվ./, վարձակալության պայմանագիրը/Քաղ. օր.609 հոդվ./, վարձույթի պայմանագիրը /Քաղ. օր. 628 հոդվ./, անձնակազմով տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիրը/Քաղ. օր. 635 հոդվ./, առանց անձնակազմի տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիրը /Քաղ. օր. 645 հոդվ./, շենքի կամ շինության վարձակալության պայմանագիրը/Քաղ. օր. 653 հոդվ./, բնակելի տարածության վարձակալության պայմանագիրը/Քաղ.օր. 661 հոդվ./, ֆինանսական վարձակալության պայմանագիրը/Քաղ. օր. 677 հոդվ./, գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը/Քաղ. օր. 685 հոդվ./, կապալի պայմանագիրը/Քաղ. օր. 699 հոդվ./, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը/Քաղ. օր., 776 հոդվ./, հանձնարարության պայմանագիրը /Քաղ. օր. 781 հոդվ./, կոմիսիայի պայմանագիրը/Քաղ. օր. 790 հոդվ./, գործակալության պայմանագիրը/Քաղ. օր. 805 հոդվ./, փոխադրման պայմանագիրը /Քաղ. օր. 853 հոդվ./, տրանսպորտային առաքման պայմանագիրը /Քաղ. օր. 871 հոդվ./, փոխառության պայմանագիրը /Քաղ. օր. 877 հոդվ./, վարկային պայմանագիրը/Քաղ. օր. 888 հոդվ./, դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագիրը/Քաղ. օր. 892 հոդվ./, բանկային ավանդի պայմանագիրը /Քաղ. օր. 904 հոդվ./, բանկային հաշվի պայմանագիրը /Քաղ. օր. 913 հոդվ./, գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը/Քաղ. օր. 959 հոդվ./, համալիր թույլտվության պայմանագիրը/Քաղ. օր. 982 հոդվ./, ապահովագրության պայմանագիրը/Քաղ. օր. 1000 հոդվ./, համատեղ գործունեության պայմանագիրը/Քաղ. օր. 1028 հոդվ./, գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիների կողմից կնքվող համատեղ գործունեության պայմանագիրը/Քաղ. օր. 1041 հոդվ./, հեղինակային պայմանագիրը/Քաղ. օր. 1141 հոդվ./, արտոնագրի նկատմամբ իրավունքը փոխանցելու պայմանագիրը/Քաղ.օր.1159 հոդվ./, ապրանքային նշանի նկատմամբ իրավունքը փոխանցելու կամ լիցենզիա տրամադրելու մասին պայմանագիրը/ Քաղ.օր.1184 հոդվ./:

Քաղ. օր. 298-րդ հոդվածի 1-ին մասում նշված կանոնը գործում է դատավարությունում՝ բացառապես կողմերի միջև վեճի դեպքում: Այդ պատճառով, եթե կողմերը դատարանում ընդունում են գործարքի /պայմանի/ կնքման փաստը, ապա նշված փաստերն ապացուցելու կարիք չի զգացվում. ՔԴՕ 62-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով կողմն ազատվում է այդ փաստն ապացուցելու պարտականությունից, եթե, իհարկե, կասկածներ չկան, որ փաստն ընդունվում է խաբեության, բռնության,սպառնալիքի, մոլորության ազդեցության տակ, մեկ կողմի ներկայացուցչի հետ մյուս կողմի չարամիտ համաձայնության հետևանքով կամ ճշմարտությունը թաքցնելու նպատակով:

Եթե գործարքի հասարակ գրավոր ձևը չպաշտպանած մասնակիցների վեճը վերաբերում է ոչ թե գործարքին և/կամ/ նրա պայմաններին, այլ ուրիշ փաստերի/օրինակ՝ գործարքի պատշաճ կատարմանը, տույժի միջոցների կիրառմանը/, ապա համապատասխան փաստերը կարող են ապացուցվել նաև վկաների ցուցմունքներով: Առանձին դեպքերում օրենսդիրը թույլատրում է գործարքի և նրա պայմանների կնքման փաստերի

հաստատումը վկաների ցուցմունքների միջոցով: Օրինակ՝ վկաների ցուցմունքները թույլատրելի են փոխառության պայմանագիրը անփողության հիմքով վիճարկելիս, եթե պայմանագիրը կնքվել է խաբեության, բռնության, սպառնալիքի, փոխառուի չարամիտ համաձայնությամբ կամ այլ ծանր հանգամանքների բերումով/ Քաղ. օր. 882 հոդվ. 2-րդ մաս/[1]:

Քաղ. օր. 298-րդ հոդվածի 1-ին մասի տառացի բովանդակությունից միաժամանակ հետևում է, որ նշված սանկցիան տարածվում է միայն կողմերի վրա, երրորդ անձանց վրա այն չի տարածվում:

Գործարքների նոտարական վավերացումը պարտադիր է՝ 1/ օրենքում նշված դեպքերում, 2/ կողմերից որևէ մեկի պահանջով, թեկուզև օրենքով տվյալ տեսակի գործարքների համար այդ ձևը չի պահանջվում/ Քաղ. օր. 299-րդ հոդվ. 3-րդ մաս/:

Անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, իսկ շարժական գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ օրենքով սահմանված դեպքերում/Քաղ.օր. 301 հոդվ./:

Գործարքի նոտարական ձևը չպահպանելը վեճի դեպքում հանգեցնում է ոչ միայն ի հաստատումն գործարքի և նրա պայմանների վկաների ցուցմունքները վկայակոչելու արգելքի, այլև գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է (Քաղ. օր. 300–րդ հոդվ. 1-ին մաս): Նույն իրավական հետևանքները վրա են հասնում նաև գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման պահանջը չպահպանելու դեպքում/ Քաղ. օր. 301-րդ հոդվ. 3-րդ մաս/:

Որոշ դեպքերում գործարքի անհրաժեշտ նոտարական վավերացման, ինչպես նաև գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցման բացակայությունը կարող է լրացվել դատական ակտով: Այսպես՝ Քաղ. օր. 300-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, եթե կողմերից մեկը լրիվ կամ մասնակի կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նոտարական վավերացումից, դատարանն իրավունք ունի, գործարքը կատարած կողմի պահանջով այն վավեր ճանաչելու: Այդ դեպքում գործարքի հետագա նոտարական վավերացում չի պահանջվում: Քաղ. օր. 302-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, եթե գործարքը կնքվել է պատշաճ ձևով, իսկ կողմերից մեկը խուսափում է գործարքի պետական գրանցումից, դատարանն իրավունք ունի մյուս կողմի պահանջով վճիռ կայացնելու գործարքի գրանցման մասին: Այդ դեպքում գործարքից ծագող իրավունքները գրանցվում են դատարանի վճռի հիման վրա:

Գործարքի նոտարական վավերացումից կողմերից մեկի խուսափելու փաստերը կարող են հաստատվել ցանկացած ապացույցներով, այդ թվում՝ վկաների ցուցմունքներով: Սակայն քանի որ գործարքի այդ տեսակը

---

[1] *Քաղ. օր. 305-315 հոդվածներով նախատեսված հիմքերով /խաբեության, բռնության և այլն/ գործարքն անվավեր ճանաչելու վեճերով, երբ պահպանված է գործարքի գրավոր ձևի պահանջը, վկաների ցուցմունքները թույլատրվում են:*

պահանջում է պարտադիր գրավոր ձև, ապա չի կարելի իր իսկ գործարքի և նրա պայմանների/գործարքի բովանդակության, պայմանների, առարկայի, գործարքով կողմերի պատասխանատվության, գործարքի գրավոր ձևի/ առկայության փաստերը հաստատել վկաների ցուցմունքներով, քանի որ գործում է վկաների ցուցմունքների անթույլատրելիության մասին նեգատիվ կանոնը՝ սահմանված ՔԴՕ 298-րդ հոդվածի 1-ին մասով: Դատական պրակտիկան այդ հարցում միասնական է:

Այսպիսով՝ գործարքների վերաբերյալ վեճերով թույլատրելիության հատուկ կանոններն ունեն երկակի բնույթ՝ մի կողմից դրանք սահմանափակում են ապացույցների օգտագործման դաշտը և կողմերին զրկում գործի իրական հանգամանքները պարզելու հնարավորությունից, մյուս կողմից ապահովում են մարդու իրավունքները, ապացույցների հավաստիությունը, քաղաքացիական շրջանառության կայունությունը, երաշխավորում քաղաքացիական շրջանառության մասնակիցների պատշաճ վարքագիծը[1]:

Քաղաքացիական գործերով, այդ թվում օրենքով պահանջվող հասարակ գրավոր ձևի խախտմամբ կնքված գործարքներին վերաբերող վեճերով, գործին մասնակցող անձինք երբեմն կիրառում են ձայնագրման սարքեր և դրանց արդյունքները ներկայացնում դատարան՝ վեճերը լուծելիս որպես ապացույց օգտագործելու համար: ԱՀ դատարանները դժվարանում են դրանք ընդունել, քանի որ ԼՂՀ գործող ՔԴՕ-ն, լուսանկարները/լուսաժապավենները/, ձայնագրություններն ու տեսագրությունները դասելով իրեղեն ապացույցների շարքին, դրանց ներկայացման, հետազոտման կարգը առանձին կարգավորման չի ենթարկել.: Վիճահարույց է հատկապես անձի ձայնագրության թույլատրելիության հարցը, եթե այն իրականացվել է մասնավոր անձի կողմից՝ առանց այդ անձի համաձայնության կամ իմացության/գաղտնի/:

Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգիրքը, ի տարբերություն նախկինի, լուսանկարները/լուսաժապավենները/, ձայնագրություններն ու տեսագրությունները դիտարկում է որպես ապացույցների ինքնուրույն տեսակ/83-րդ հոդվ./ ու առանձին կարգավորում է քաղաքացիական գործերի քննության ընթացքում լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները որպես ապացույց ներկայացնելու, դրանց հետազոտման և թույլատրելիության գնահատման հետ կապված հարցերը: Այսպես, ՀՀ ՔԴՕ 83-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ լուսանկարները /լուսաժապավենները /, ձայնագրությունները, տեսագրությունները և դրանց էլեկտրոնային կրիչները հետազոտվում են համապատասխան տեխնիկական միջոցների

[1] *Այդ մասին մանրամասն տե՛ս* ***Треушников М. К.,*** *նշվ. աշխ., 135- 138 էջերը:*

օգտագործմամբ կամ դիտման միջոցով: Լուսանկարներ /լուսաժապավեններ/, ձայնագրություններ, տեսագրություններ և դրանց էլեկտրոնային կրիչները թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացնելիս դրանք ներկայացնող անձը պարտավոր է նշել՝ երբ, որտեղ, ում կողմից, ինչպես և ինչ պայմաններում են արվել այդ լուսանկարները/լուսաժապավենները/, ձայնագրություններն ու տեսագրությունները: Այդ փաստերը չբացահայտելու կամ դրանց վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ ներկայացնելու դեպքում լուսանկարները/լուսաժապավենները/, ձայնագրություններն ու տեսագրությունները չեն հետազոտվում և հանվում են ապացույցների կազմից:

ՀՀ ՔԴՕ 83-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե անձի լուսանկարումը կամ նրա ձայնագրումը կամ տեսագրումն իրականացվել է առանց այդ անձի համաձայնության կամ իմացության, ապա ապացույցը թույլատրելի է միայն այն դեպքում, եթե օրենքը դա չի արգելում: Այսինքն՝ մասնավոր անձի կողմից գաղտնի ձայնագրություն կատարելն ինքնին այդ ապացույցն անթույլատրելի չի դարձնում:

Վերոնշված իրավակարգավորումներով, այնուամենայնիվ, ապացույցների թույլատրելիությանն առնչվող բոլոր հարցերին չէ, որ հստակ պատասխան է տրվել: Մասնավորապես, մեր կարծիքով, օրենսդիրը պետք է թվարկեր այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում գաղտնի կատարված լուսանկարները /լուսաժապավենները/, ձայնագրությունները, տեսագրությունները՝ որպես ապացույց, անթույլատրելի կարող են համարվել: Կողմերը և դատարանը պետք է ճիշտ կիրառեն նաև Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասում ու ՔԴՕ 43-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված ընդհանուր կանոնն այն մասին, որ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է/այս կանոնը նույնպես, մեր կարծիքով, հստակեցման կարիք ունի/:

Այդ կապակցությամբ գրականության մեջ արտահայտված մոտեցումն այն է, որ բոլոր դեպքերում վճռորոշ նշանակություն ունեն կոնկրետ գործի հանգամանքները:

Եթե նկարահանումը, ձայնագրությունը կամ տեսագրությունը կատարվել է, օրինակ, բնակարանի, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքների խախտմամբ կամ խոշտանգումների, բռնության, սպառնալիքի գործադրմամբ, ապա դատարանն այն պետք է անթույլատրելի ճանաչի: Մինչդեռ եթե, օրինակ, պարտատերը գաղտնի ձայնագրել կամ տեսագրել է իր և պարտապանի խոսակցությունը, ապա

ստացված ապացույցները պետք է դիտարկել որպես թույլատրելի ապացույց[1]:

Այսպիսով, եթե լուսանկարները /լուսաժապավենները/, ձայնագրությունները ու տեսագրությունները կատարվել են բոլոր անձանց կամավոր համաձայնությամբ, ապա ՀՀ ՔԴՕ 83-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված բոլոր նախապայմանների առկայության դեպքում դրանք թույլատրելի ապացույցներ են քաղաքացիական դատավարությունում, այդ թվում՝ քննարկվող վեճերով: Իսկ եթե անձի լուսանկարումը կամ նրա ձայնագրումը կամ տեսագրումն իրականացվել է առանց այդ անձի համաձայնության կամ իմացության, ապա ապացույցը թույլատրելի է միայն այն դեպքում, եթե օրենքը դա չի արգելում[2]:

ՀՀ ՔԴՕ օրինակով առաջարկում ենք ԼՂՀ ՔԴՕ-ում լուսանկարները/լուսաժապավենները/, ձայնագրություններն ու տեսագրություններն առանձնացնել որպես ապացույցի ինքնուրույն տեսակ՝ լուծելով նաև դրանց ներկայացման, հետազոտման և թույլատրելիության գնահատման հետ կապված հարցերը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ի.գ.դ., Գ.Ս. Ղազինյանը:

---

[1] *Տե՛ս, օրինակ,* ***Մեղրյան Մ.Գ.*** *նշվ. աշխ., էջ 202,* ***Հովհաննիսյան Գ.Ղամբարյան Ա. , Մարգսյան Ա.*** *Մասնավոր անձի կատարած գաղտնի տեսագրության կամ ձայնագրության օգտագործման թույլատրելիությունը քրեական և քաղաքացիական դատավարություններում,Երևան 2017, <<ՎՄՎ –Պրինտ. հրատ., 92-101 էջերը,* ***Գրիգորյան Վ.*** *Գաղտնի եղանակով կատարված ձայնագրությունների և տեսագրությունների թույլատրելիության հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում /ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Ե-2017, 377-410 էջերը,* ***Գրիգորյան Վ.*** *Գաղտնի եղանակով կատարված լուսանկարները, ձայնագրությունները և տեսագրությունները քաղաքացիական դատավարությունում որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության հիմնախնդիրները, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 2018, N1/25/, 30- 44 էջերը:*

[2] *ՎԴՕ 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե անձի լուսանկարումը կամ նրա ձայնագրումը կամ տեսագրումն իրականացվել են առանց այդ անձի համաձայնության կամ գիտության, ապացույցը թույլատրելի է միայն այն դեպքում, եթե օրենքը չի արգելում այդ իրավիճակում առանց անձի համաձայնության լուսանկարումը, ձայնագրությունը կամ տեսագրությունը, ինչը, մեր կարծիքով, ավելի ճիշտ կարգավորում է:*

УДК 343

Уголовное право

Юрий КАСУМЯН
Приднестровский государственный университет
Уголовное право, криминалистика 3 курс
Научный руководитель: Ольга Салкуцан

ЭКСТРЕМИЗМ КАК ФОРМА ПРЕСТУПНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ И ЕГО АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ

В данной статье анализируется понятие и сущность экстремизма, анализируются различные взгляды на данное явление, а также исследуются особенности проявлений экстремизма в молодежной среде, отношение к проблеме экстремизма в современном обществе. Рассмотрены факторы, порождающие различные виды экстремизма, выявлены причины усиления экстремизма. Изучается законодательство в сфере противодействия экстремизму.

Ключевые слова: *экстремизм, экстремистская деятельность, профилактика, мотив экстремистской деятельности, молодежный экстремизм, ответственность за экстремизм*

Յու. Կասումյան

ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎ ԵՎ ՆՐԱ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս հոդվածում քննվում են «ծայրահեղականություն» հասկացությունը և էությունը, վերլուծվում են տվյալ երևույթի տարբեր ընկալումները, ինչպես նաև հետազոտվում են երիտասարդության շրջամում ծայրահեղականության դրսևորումների առանձնահատկությունները, ժամանակակից հասարակության մեջ ծայրահեղականության խնդրի նկատմամբ վերաբերմունքը: Դիտարկվում են ծայրահեղականության տարբեր տեսակներ ծնող գործոնները, բացահայտվում են ծայրահեղականության ուժեղացման պատճառները: Ուսումնասիրվում է ծայրահեղականությանը հակազդելու ոլորտի օրենսդրությունը:

Բանալի բառեր՝ *ծայրահեղականություն, էքստրեմիստական գործողություն ու գործունեություն, պրոֆիլակտիկա, էքստրեմիստական գործողության մոտիվ, էքստրեմիզմի համար պատասխանատվությունը.*

Yu.Kasumyan

EXTREMISM AS A FORM OF CRIMINAL ACTIVITY AND ITS ACTUAL PROBLEMS

This article analyzes the concept and essence of extremism, analyzes different views on this phenomenon, and also examines the features of

manifestations of extremism in the youth environment, the attitude to the problem of extremism in modern society. The factors generating various types of extremism are considered, the reasons of strengthening of extremism are revealed. The legislation in the sphere of counteraction to extremism is studied.
Keywords: *extremism, extremist activity, prevention, motive of extremist activity, youth extremism, responsibility for extremism*

События последнего времени, происходящие в Приднестровской Молдавской Республике и в соседних приграничных государствах, а так же распространение в сети Интернет, сведений анонимного характера, открыто призывающие к свержению законной власти в Приднестровье, к прекращению миротворческой миссии Российской Федерации в Приднестровье, вызывают обеспокоенность, и заставляют задуматься о причинах возникновения таких опасных явлений как экстремизм, и откровенно подтверждает актуальность рассматриваемой темы. Как показывает практика, появление и усиление кризиса либо противоречий в обществе, вызывает активизацию недовольства и враждебности к тем или иным порядкам, сословиям, общественным движениям. Это, к сожалению приводит к тому, что в последнее время все активнее используются антиконституционные формы и методы борьбы с оппонентами, в которых основное место занимают ставка на силу, использование насильственных форм и методов их подавления.

Экстремизму свойственно зарождаться и действовать внутри государства, как определённая прослойка некоего слоя общества, что значительно затрудняет его обнаружения в зачаточном состоянии. Экстремизм словно «раковая опухоль» повсеместно проникает во все государства, поражая все большее количество населения. Все большее количество субъектов применяют насильственный метод достижения своих целей либо насаждения своих идей, все это способствует возникновению и активизации экстремизма. Негативные изменения и тенденции в межгрупповых социальных отношениях наблюдаются в большинстве стран, ставших заложниками процессов глобализации.

Актуальность данной темы исследования велика, так как преступления экстремистской направленности занимают все более заметное место в общей структуре преступности, становятся привычным явлением в жизни общества, состоящего из множества социальных групп, разделяемых между собой как национальной либо расовой принадлежностью, так и религиозными, политическими и иными идеологическими предпочтениями.

Понятие «экстремизма» в законодательстве Приднестровской Молдавской Республики довольно полно раскрыто в законе ПМР «О противодействии экстремистской деятельности» и определяется как деятельность общественных и религиозных объединений либо физических лиц по планированию, организации, подготовке к совершению действий, направленных на насильственное изменение основ конституционного строя и нарушение целостности Приднестровской Молдавской Республики; подрыв безопасности Приднестровской Молдавской Республики; захват или присвоение властных полномочий; создание незаконных вооруженных формирований; осуществление террористической деятельности либо публичное оправдание

терроризма; возбуждение расовой, национальной или религиозной розни, а также социальной розни и нетерпимости, связанных с насилием или призывами к насилию; и др.[1]

Общеизвестно, что современный экстремизм подразделяется по территориальному уровню на внутригосударственный и международный, по содержанию – на политический, религиозный и национальный; по опыту – на возрастной (выше 25 лет) и молодежный.

О личностных качествах и свойствах экстремистов говорят следующее: «… прежде всего они (экстремисты) ориентированы на борьбу с чуждой идеологией, религией и неприятием «инакомыслящих».

Часто такая позиция обусловлена низким культурно-образовательным и правосознательным уровнем развития. Наряду с подобными личностями в экстремистской среде также могут присутствовать лица с психическими отклонениями, употребляющие наркотические средства и психотропные вещества. Им уготована роль исполнителей.[2] В литературе криминологи отмечают сегодня и другую категорию экстремистов, «олицетворяющих полную невоспитанность, ненавидящих существующий общественный порядок и само общество со дня своего появления в этом обществе и требующих перемен с появлением первых мыслей в их головах»[3]

Экстремизм «молодеет», что отмечается многими криминологами. Опасность этого социального явления заключается в том, что здесь задействованы политические, идеологические, расовые, национальные и религиозные мотивы ненависти или вражды и заражены ими даже пятнадцатилетние. В организованных группах они становятся социально опасными, так как подчиняются психологии всей группы (толпы). Изучая психологию толпы, находящейся под влиянием вождей, социологи утверждают, что «толпа более предрасположена к злу, чем к добру, и что внушение оказывает влияние не на любых людей, а лишь на предрасположенных совершить внушаемое действие»[4].

В научной литературе основные черты современного молодежного экстремизма определяются как «возрастающая организованность, сплоченность группировок, формирование в них идеологических, аналитических и боевых структур, усиление мер конспирации, применение для распространения своей идеологии и координации действий новейших информационных и коммуникационных технологий».

При определении причин справедливо отмечается «явный недостаток воспитательных воздействий на личность молодого человека, а также мер просветительского характера о национальных, культурных, конфессиональных и прочих особенностях народов страны»[5].

---

[1] *Закон ПМР «О противодействии экстремистской деятельности» от 27.07.2007*

[2] ***Романовская И. В.*** *Психолого-криминологическая характеристика крымского экстремиста. Симферополь, 2015., С.136*

[3] ***Дударь О. Г., Дударь А. И., Хусаинов Т. М.*** *Детерминанты экстремизма в России // Педагогика и просвещение. 2014. № 3., С. 50*

[4] ***Сигеле С****. Преступная толпа. Опыт коллективной психологии. М.: Институт психологии РАН, Изд-во «КСП+», 1998., С. 6*

[5] ***Пестрецов М. А****. Особенности проявления молодежного экстремизма и меры противодействия. Симферополь, 2015, С.278*

С этим выводом вполне можно согласиться. Экстремизм молодежи, как правило, характеризуется максимализмом, подкрепленным стремлением к рискованным формам поведения, обновлению жизни. Чаще такое поведение характерно для группового экстремизма, где отдельный человек не принадлежит себе. Он попадает под власть общей идеи и подчинен установкам вождя в лице фанатично настроенной группы лиц, формирующей и организующей экстремистские настроения молодежной группы. Другие авторы отмечают в качестве основных такие причины молодежного экстремизма, как «обострение социальной напряженности в молодежной среде (включающей проблемы уровня и качества образования, выживания на рынке труда, снижение авторитета правоохранительных органов); криминализация ряда сфер общественной жизни (вовлечение молодых людей в криминальный бизнес и т. д.)».[1]

Как отмечает С.Н. Фридинский «экстремизм динамичен и многогранен, при определенных условиях он способен разбалансировать политическую, экономическую и социальную системы, может спровоцировать массовые нарушения общественного порядка. Общество в этих условиях становится все менее управляемым, а социальные отношения характеризуются хаотичностью».[2] Поэтому необходимо не позволять создание этих условий, а своевременно бороться с любым проявлением экстремизма.

Исследование причин процессов формирования экстремистски настроенных групп и сообществ говорит о том, что чаще всего отсутствует такой важный компонент воспитания как правовое воспитание молодежи. Сердюк Л.В. указывает, что «этот вид воспитания должен начинаться с детских садов и школ начального образования. Практика показывает, что начало данного воспитания в вузах является запоздалым. В вуз или в трудовую жизнь должна приходить молодежь, уже подготовленная в правовом и культурном отношении»[3]. В правовое воспитание, кроме изучения права, неотъемлемыми компонентами должно включаться историческое и нравственное воспитание, патриотическое воспитание, что является очень важным.

Существенное усиление уголовной ответственности за экстремизм выражается не только в совершенствовании социально-правовых мер профилактического характера, но и во введении в УК ПМР новых уголовно-правовых норм, предусматривающих достаточно жесткие наказания (ст. 276 УК ПМР «Публичные призывы к осуществлению экстремистской деятельности», ст. 278 УК ПМР «Возбуждение национальной, расовой, религиозной вражды», ст. 278-1 УК ПМР «Организация экстремистского сообщества», ст. 278-2 УК ПМР «Организация деятельности экстремистской организации», ст. 278-3 УК ПМР «Отрицание положительной роли миротворческой миссии Российской Федерации в Приднестровской Молдавской Республике»).[4] В УК ПМР, пока не нашло отражение

---

[1] ***Чунусов М. А.*** *Психолого-педагогическая профилактика экстремизма несовершеннолетних. Симферополь, 2015., С.234*

[2] *Фридинский С.Н. Молодёжный экстремизм как особо опасная форма проявления экстремистской деятельности // Обзор.НЦПТИ., январь 2015г., №5., С. 7*

[3] ***Сердюк Л.В.*** *Экстремизм как форма преступной деятельности //Вестник Уфимского юридического института МВД России, 2018г., С. 21*

[4] *Уголовный кодекс ПМР от 7 июня 2002 г. № САЗ 02-23*

финансирование экстремистской деятельности, как это закреплено в ст. 280 УК РФ.[1]

Изучение данных статей позволяет выделить ряд проблем обусловленных недостатками законодательной техники, допущенными при определении признаков данных уголовно наказуемых деяний.

Группа проблем связана с законодательным описанием признаков конкретных составов преступлений экстремистской направленности. Так, С.В. Борисов отмечает, что «отсутствие определенного объективного «наполнения» действий, направленных на возбуждение национальной, расовой, религиозной вражды (ст. 278 УК ПМР), вызывает оживленные дискуссии в обществе и расценивается многими гражданами как ограничение свободы слова, позволяющее произвольно привлекать к уголовной ответственности любого человека, выражающего свое негативное отношение либо критикующего представителей какой-либо социальной группы или такую группу в целом».[2]

Возможно, частичная декриминализация в данном случае является оптимальным решением, т.к. несмотря на то, что в ст. 27 Конституции ПМР[3], говорится, что каждый имеет право на свободу слова, в ней же свобода слова ограничивается распространением информации против существующего конституционного строя, либо составляющую государственную тайну. Выражение мнения граждан по поводу политического режима и деятельности первых лиц государства не должно подпадать под рассматриваемое деяние.

Поэтому аналогичная статья в УК РФ не случайно стала предметом частичной декриминализации. 27 декабря 2018 года Президент России Владимир Путин подписал закон о частичной декриминализации 282-й статьи Уголовного кодекса («Возбуждение ненависти либо вражды, а равно унижение человеческого достоинства»)[4]. В частности, он заявил о необходимости дополнить часть 1 статьи 282 УК РФ следующим: уголовная ответственность за экстремизм в интернете и СМИ будет наступать только если это нарушение совершено более одного раза в течение года.

Примечания к данным статьям позволяют освободить от уголовной ответственности лиц, впервые совершивших преступления, предусмотренные указанными статьями, и добровольно прекративших участие в преступной деятельности. Это не просто гуманный жест государства, а предоставление возможности лицам, вовлеченным в эту преступную деятельность, самостоятельно исправить свою ошибку.

Следует отметить, что важнейшим условием повышения эффективности противодействия экстремизму является разработка общегосударственных и региональных комплексных программ противодействия экстремистской деятельности.

---

[1] *Уголовный кодекс РФ от 13 июня 1996 г. № 63-ФЗ // Собрание законодательства Российской Федерации - 17 июня 1996 г. - № 25 - Ст. 2954.*

[2] ***Борисов С.В.*** *Уголовно-правовые нормы об ответственности за преступления экстремистской направленности: проблема правотворчества // Юридическая наука, 2013г., №3., С. 98*

[3] *Конституция ПМР от 30 июня 2000 года № 310-КЗИД*

[4] *Федеральный закон от 27.12.2018 № 519-ФЗ "О внесении изменения в статью 282 Уголовного кодекса Российской Федерации"*

Стратегия предупреждения экстремизма должна включать в себя более эффективную информационную политику, направленную на переориентацию СМИ на противодействие пропаганде насилия и внедрения в социальную практику норм толерантного поведения.

По нашему мнению, необходима грамотная превентивная политика по борьбе с экстремизмом. Предупреждение должно заключаться в выявлении, устранении, нейтрализации, локализации и минимизации воздействия тех факторов, которые либо порождают экстремизм, либо ему благоприятствуют.

Профилактика экстремизма должна осуществляться на «допреступных стадиях» развития негативных процессов, то есть на этапах, когда формируется мотивация противоправного поведения.

Необходима массовая разъяснительная работа среди населения, особенно с молодёжью, с привлечением специалистов в области межнациональных отношений, обществоведения, психологии, юриспруденции с использованием всего спектра современных средств массовой информации включая возможности Интернета.

Противодействие экстремизму диктует необходимость проведения согласованной межведомственной политики противодействия экстремизму, которая должна включать законодательные, административно-правовые, уголовно-правовые, социальные, финансово-экономические, политические, военные, пропагандистские и профилактические меры.

Всё это в совокупности, возможно, сможет обеспечить решительное пресечение проявлений экстремизма ради сохранения в республике политической стабильности, мира и согласия.

Список использованных источников

1. Нормативные правовые акты

1.1 Конституция ПМР от 30 июня 2000 года № 310-КЗИД

1.2 Уголовный кодекс РФ от 13 июня 1996 г. № 63-ФЗ // Собрание законодательства Российской Федерации - 17 июня 1996 г. - № 25 - Ст. 2954.

1.3 ФЗ от 27.06.2002 г. № 114-ФЗ «О противодействии экстремистской деятельности»

1.4 Федеральный закон от 27.12.2018 № 519-ФЗ "О внесении изменения в статью 282 Уголовного кодекса Российской Федерации"

1.5 Уголовный кодекс ПМР от 7 июня 2002 г. № САЗ 02-23

1.6 Закон ПМР «О противодействии экстремистской деятельности» от 27.07.2007

2.Научная и учебная литература

2.1 Чунусов М. А. Психолого-педагогическая профилактика экстремизма несовершеннолетних. Симферополь, 2015., С. 234

2.2 Сигеле С. Преступная толпа. Опыт коллективной психологии. М.: Институт психологии РАН, Изд-во «КСП+», 1998., С. 6

2.3 Романовская И. В. Психолого-криминологическая

характеристика крымского экстремиста. Симферополь, 2015., С. 136
2.4 Дударь О. Г., Дударь А. И., Хусаинов Т. М. Детерминанты экстремизма в России // Педагогика и просвещение. 2014. № 3., С. 50
2.5 Пестрецов М. А. Особенности проявления молодежного экстремизма и меры противодействия. Симферополь, 2015, С.278
2.6 Фридинский С.Н. Молодёжный экстремизм как особо опасная форма проявления экстремистской деятельности // Обзор.НЦПТИ., январь 2015г., №5., С. 7
2.7 Сердюк Л.В. Экстремизм как форма преступной деятельности //Вестник Уфимского юридического института МВД России, 2018г., С. 21
2.8 Борисов С.В. Уголовно-правовые нормы об ответственности за преступления экстремистской направленности: проблема правотворчества // Юридическая наука, 2013г., №3., С. 98

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ իրավագիտության ամբիոնը:

ՀՏԴ 159.9
Հոգեբանություն

Վիտյա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ
հոգեբ. գ. թ.,
ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոն

ՇՓՎԵԼ ԱՅՆՊԵՍ, ՈՐ ՔԵԶ ՀԱՍԿԱՆԱՆ

Հոդվածը նվիրված է մարդկային կարևորագույն պահանջմունքներից մեկի՝ հաղորդակցման պահանջմունքի բավարարման խնդրին: Երկխոսության (դիալոգ)՝ որպես հաղորդակցման հիմնական ձևի արդյունավետությունը կախված է մարդկանց մոտ ձևավորված համապատասխան հմտություններից, լեզվական միջոցների հարստությունից և բովանդակությունից: Երկխոսության մասնակիցների՝ տեղեկություն հաղորդողի և ընդունողի միջև հաճախ առաջ են գալիս թերըմբռնման և չհասկացվածության երևույթներ, ինչի արդյունքում տուժում է նրանց հարաբերությունների որակը: Պատճառներից մեկը լինում է խոսքի ոչ ճիշտ ձևակերպումը: Այս խնդրի կառավարմանն է միտված սույն ուսումնասիրությունը:

Բանալի բառեր՝ *շփում, շփման հմտություն, հաղորդակցում, տեղեկատվություն, իմաստային հաղորդագրություն, սթրես, հետվնասվածքային սթրեսային խանգարում, դժվար իրավիճակ, մտքերի կառավարում:*

В.Ярамишян

ОБЩАТЬСЯ ТАК, ЧТОБЫ ТЕБЯ ПОНЯЛИ

Данная статья посвящена одной из важнейших потребностей человека - потребности в общении. Эффективность диалога как основной формы общения, зависит от формированных у человека соответствующих навыков, богатства и содержания языковых ресурсов. Между участниками диалога - передающим субъектом и принимающим объектом - часто возникают недопонимания и недоразумения, в результате чего страдает качество взаимоотношений между ними. Одной из причин является неправильное формулирование речи. Данное исследование направлено на управление этой проблемой.

Ключевые слова: *общение, навык общения, коммуникация, информация, смысловое сообщение, стресс, посттравматическое стрессовое расстройство, сложная обстановка, управление мыслями.*

V.Yaramishyan

COMMUNICATE TO BE UNDERSTOOD

This article is devoted to the problem of meeting one of the most important human needs - the need for communication. The effectiveness of a dialogue

as the main tool of communication depends on the formation of appropriate skills, as well as richness and content of the language. Very often misunderstanding occurs between dialogue participants- the speaker and the recipient- as a result of which the quality of the relationship between them suffers. One of the reasons is the incorrect speech production. This article is directed to the management of this task.
Keywords. *communication, communication skills, information, semantic message, stress, post-traumatic stress disorder, difficult environment, thought management.*

21-րդ դարը պատուհասած սթրեսային խանգարումների ամենատարածված պատճառներից մեկը, ամենայն հավանականությամբ, կապված է շփման և հաղորդակցման դժվարությունների հետ: Ժամանակակից աշխարհում մարդիկ հաճախ ստիպված են լինում ընդունել կամ փոխանցել այնպիսի հաղորդագրություններ, որոնք պարունակում են չճշտված տեղեկություններ կամ առհասարակ տեղեկություն չեն պարունակում: Դրանք, այսպես կոչվող, «կեղծ» կամ «ֆեյք» նորություններն են: Արդյունքում մարդիկ կորցնում են իրենց մտքերը հստակ և ավարտուն ձևակերպելու կարողությունը[1]: Ավելին, մարդկանց այն խմբերի համար, ինչպիսիք են պատերազմի մասնակիցները, արտակարգ իրավիճակների ականատեսները, բռնության զոհերը, պարզ ու ճշմարտացի խոսելը ոչ միայն դարձել է անցանկալի, այլև երբեմն նույնիսկ վտանգավոր՝ մարդկանց հոգեկան առողջությունը չվնասելու առումով: Տևական ժամանակ գտնվելով բարդ, առողջությանն ու անվտանգությանը սպառնացող վտանգների, գոյատևման համար մղվող պայքարի իրավիճակներում՝ մարդկանց մոտ սվորություն է ձևավորվում թաքցնելու հոգեցունց տեղեկատվությունը, ընդ որում, այդ անելու ոչ միայն կյանքին ու առողջությանը սպառնացող վտանգների պայմաններում, այլ նաև սովորական իրավիճակներում (4): Մասնագետները գիտեն, որ անորոշության իրավիճակներին անխուսափելիորեն ուղեկցում են սթրեսային հակազդումները, քանի որ բացահայտված է ուղղակի կախվածություն՝ տեղեկատվության բացակայության և առաջ եկած վախի զգացման միջև (նույն տեղը): Քննարկենք հետևյալ օրինակը. ենթադրենք ձեզ առաջադրվել է կոնկրետ հարց, իսկ դուք խուսափողական

[1] *Սույն ուսումնասիրությունը հիմնականում կառուցված է ամերիկյան հոգեբան-հոգեբույժ Բենջամին Կոլոռինի (3) աշխատությունների հիման վրա: Կոլոռինը ոչ այնքան տեսաբան, որքան պրակտիկ մասնագետ է և ունի աշխատանքի մեծ փորձ: Նա նաև բարեգործական ծրագրերով զբաղվող ամերիկյան կազմակերպության՝ «Օլիմպիա» ինստիտուտի հիմնադիր տնօրենն է: «Օլիմպիա» կազմակերպությունը ժամանակին զբաղվել է վիետնամական պատերազմի վետերաններին, հանցագործությունների զոհերին և հոգեկան խեղում ստացած այլ անձանց խորհրդատվական օգնություն ցուցաբերելու հարցերով: Արդյունքում Բ.Կոլոռինը մասնագիտացել է արտակարգ իրավիճակներում հետվնասվածքային սթրեսային խանգարումներ ունեցող անձանց հետ տարվող վերականգնողական աշխատանքերի կազմակերպման ու իրականացման մեջ:*

պատասխան եք տվել: Նման դեպքերում ձեր խոսակցին կարող է թվալ, թե դուք ունեք որևէ պատճառ՝ իրեն չվստահելու համար, այդ պատճառով գիտակցաբար թաքցնում եք կամ առնվազն չեք ցանկանում կիսվել նրա հետ այն տեղեկություններով, որոնց տիրապետում եք: Ձեր զրուցակցի մոտ կարող է առաջ գալ անհանգստություն և վախ, և նա կսկսի ձեզնից զգուշանալ, երբեմն նույնիսկ՝ հետապնդել: Այս օրինաչափությունը տեղ ունի նույնիսկ այն ժամանակ, երբ դուք մտադրություն չունեք թաքցնելու որևէ տեղեկատվություն, պարզապես, ձեզ մոտ գործարկվել է վերևում նկարագրված՝ հոգեծին տեղեկությունները չտարածելու ամրակայված սովորույթը: Հնարավոր է, որ դուք նույնիսկ չեք էլ նկատել, որ հարցին խուսափողական պատասխան եք տվել: Նման դեպքերում ձեր զրուցակիցը, ամենայն հավանականությամբ, նույնպես չի կռահի ձեր թերասածության բուն պատճառը, այլ յուրովի կմեկնաբանի ձեր ոչ հստակ պատասխանի բուն պատճառները, որոնք, ըստ ամենայնի, որևէ կապ չունեն ձեր իրական մտադրությունների հետ: Ձեր զրուցակիցն ունի իր խնդիրները, կասկածները, վախերն և հնարավոր է չունի ինքնավստահություն: Երբ դուք հեռանաք ուղղակի պատասխանից զրուցակցի համար անհասկանալի պատճառով, ապա դրանով իսկ կվախեցնեք նրան: Նրա տագնապն ու անհանգստությունը կարող է պրոյեկտվել ձեզ վրա, ինչի արդյունքում դուք կհեռանաք միմյանցից այն պարզ պատճառով, որ միմյանց չեք հասկացել, իսկ դրա հիմքում ընկած է այն, որ չեք կարողացել, սովոր չեք ձեր մտքերը ձևակերպելու ու բարձրաձայնելու պարզ, հստակ ու ճշմարտացի:

Անհնար է բոլոր մտքերի ու զգացմունքների մասին պատմել՝ ում պատահի, սակայն որոշ դեպքերում սեփական անձի մասին ավարտուն տեղեկատվություն չտալու երևույթը կարող է առաջ բերել լրջագույն խնդիրներ: Քննարկենք ևս մեկ օրինակ: Ձեր մտերիմ մարդկանցից մեկը հարցրել է իր նկատմամբ ձեր ունեցած վերաբերմունքի մասին, իսկ դուք կրկին խուսափել եք պատասխանից: Եթե ձեր մտերիմ մարդը նախկինում որևէ կասկած է ունեցել իր նկատմամբ ձեր ունեցած վերաբերմունքի մասին, ապա ձեր անկեղծանալ չցանկանալու կամ չկարողանալու պատճառով հստակ պատասխանի բացակայությունը կարող է ընկալվել որպես ապացույցն այն բանի, որ հաստատվել են զրուցակցի ամենամռայլ կասկածները. «Ուրեմն, ամեն ինչ շատ վատ է: Ինչի՞ մասին է խոսքը, երբ նա նույնիսկ պատասխանել չի ցանկանում»-կմտածի ձեր մտերիմ մարդը:

Նկարագրված անցանկալի իրավիճակներից խուսափելու միակ ուղին մարդկանց հետ պարզ խոսելն է: Բնական է, որ կլինեն այնպիսի հարցեր, որոնց մասին դուք ամբողջական տեղեկություններ չունեք, թեմային լիարժեք չեք տիրապետում, սակայն, միևնույն է, լավագույն ելքն այն է, որ անկեղծորեն ասեք, թե ինչ է տեղի ունենում: Երբեն ավելի օգտակար է լինում պարզապես խոստովանել, որ դուք շատ կցանկանայիք պատասխան գտնել, սակայն հստակ պատասխան չունեք, այլ ոչ թե չեք ցանկանում պատասխանել:

Մարդիկ, որոնք ունեն հետվնասվածքային սթրեսային խանգարումներ (4), անչափ դժվար են անկեղծանում, այսպես ասած «բացվում»՝ իրենց մասին տեղեկություններ տալու ժամանակ: Որոշ հիվանդագին ախտանիշների (անցյալի ողբերգական իրադարձությունների հետ կապված գիշերային մղձավանջներ, կպչուն մտքեր, վախեր) մասին այդպիսի մարդիկ պարզապես ոչ մեկի հետ չեն ցանկանում կիսվել: Եթե այս երևույթը ձեզ ծանոթ է, ապա դուք կա՛մ ներքուստ պատրաստ չեք այդ թեմայով խոսակցություններին, կա՛մ չեք ցանկանում ձեր խնդիրների մեջ ներգրավել հարազատ մարդկանց, կա՛մ էլ առկա է տեղեկատվությունը թաքցնելու այն չգիտակցված սովորույթը, որի մասին խոսք գնաց վերևում: Եթե այսպիսի ծածկամտությունն առկա է լինում մտերիմների հետ հարաբերություններում, ովքեր լավ ծանոթ են ձեր մտքերին ու վարքագծին, ապա ձեր խաբեությունը չի հաջողվի: Կռահելով, որ ինչ-որ բան այն չէ և այդ ինչ-որ բանը կրծում է ձեր հոգին, ձեր մտերիմները կմտածեն, թե այդ տեղի է ունենում իրենց մեղքով: Երբ «Ի՞նչ է պատահել» հարցին նրանք լսում են «Ոչինչ էլ չի պատահել, ամեն ինչ նորմալ է» խուսափողական պատասխանը՝ միաժամանակ դիտարկելով ու նկատելով, որ դուք տրամադրության անկում ունեք, ապա նրանք կսկսեն պատճառներ որոնել իրենց արարքների մեջ: Այսպիսով՝ ստացվում է, որ ճշմարտությունն ասելուց խուսափելը կամ կիսաճշմարտությունը սեպ է խրում ձեր և այն մարդկանց միջև, ովքեր թանկ են ձեզ համար:

Աղավաղված ճշմարտությունը կամ կիսաճշմարտությունը հատկապես վտանգավոր է մտերմիկ, ինտիմ հարաբերություններում: Նման իրավիճակը կարող է հունից հանել ձեր զուգընկերոջը (զուգընկերուհուն) և նրա մոտ շփոթմունք առաջացնել: Խորհուրդ. եթե այդ հարաբերությունները կարևոր են ձեզ համար, ապա ձեր մեջ ազնիվ ու բաց շփվելու ընդունակություն դաստիարակեք. դուք, այդպիսով, ձեզ և ձեր հարազատներին կազատեք ավելորդ սթրեսներից:

Շատերը գիտեն, որ ճշմարտացի տեղեկություններ հայտնելը միշտ չէ, որ հեշտ է լինում: Երբեմն մենք փորձում ենք ասել ճշմարտությունը, սակայն ոչինչ չի ստացվում, ու մենք հուզմունքից ավելի ենք խճճվում: Օրինակ, երբ մենք որևէ միտք ենք բարձրաձայնում, որի իմաստը մեզ համար միանգամայն հասկանալի է, ապա այդ դեռևս չի նշանակում, թե մեր զրուցակցի համար նույնպես ամեն ինչ պարզ ու հասկանալի է: Երբեմն մեզ համար ըստ իմաստի միանգամայն ակնհայտ միտքը մեր զրուցակցին կարող է թվալ անիմաստ, կամ, որ ավելի վատ է, ունենալ միանգամայն տարբերվող իմաստ: Լիարժեք փոխըմբռնման հասնելու համար կարևոր է ոչ միայն բաց տեքստով մտքերի բարձրաձայնումը, այլև զրուցակցի կողմից հասկացված լինելու աստիճանի ստուգումը: Նման դեպքերում ասում են, թե խոսակցությունն ընթանում է այնպես, որ զրուցակիցները խոսում են «նույն լեզվով»: Օգտակար է ժամանակ առ ժամանակ ստուգիչ հարցեր

տալը՝ համոզվելու համար, թե արդյո՞ք զրուցակիցը ճիշտ է հասկանում ձեր խոսքը:

Քննարկենք ևս մեկ օրինակ: Ենթադրենք, ամուսինը գործից տուն է վերադարձել և սկսել է զրուցել կնոջ հետ: Վերջինս, ամուսնու երկարատև բացակայությունից հետո, կարոտել է նրան, ուստի ակնկալում է նրանից լսել ուշադրության խոսքեր: Կինն իր թաքուն միտքը ձևակերպում է այսպես. «Մենք շատ քիչ ենք միասին լինում: Ինձ թվում է՝ դու խուսափում ես ինձնից»: Այս խոսքերով կինն ակնհայտորեն նպատակ ունի համոզվելու, որ ամուսնու համար նախկինի պես կարևոր է ընկերակցությունն իր հետ, չնայած ասված խոսքերի մեջ այդ միտքը բառացիորեն բացակայում է, քանի որ այնքան էլ պարզ չի ձևակերպվել: Աշխատանքից հոգնած ամուսինը կնոջ խոսքերի մեջ հանդիմանանք է որսացել, կարծելով, թե կինն իրեն մեղադրում է անտարբերության մեջ. «Մենք շատ քիչ ենք միասին լինում» խոսքերն, իսկապես, հնչում են մեղադրական հնչերանգով, չնայած կինն իրականում ա՛յդ նկատի չուներ, այլ, պարզապես, ջերմ խոսքերի, ուշադրության և սիրո խոստովանության կարիք ուներ: Ամուսինը, ամենայն հավանականությամբ, ներքին դժգոհությամբ կձևակերպի պատասխանը. «Ես ձգտում եմ՝ որքան կարողանում եմ», չնկատելով, որ այս խոսքերը հնչում են որպես պաշտպանություն և ինքնաարդարացում: Կինը դրա կարիքը չուներ, այլ կգերադասեր լսել «Սիրելիս, ես առաջվա նման սաստիկ սիրում եմ քեզ» արտահայտությունը, քանի որ լիովին վստահ է, որ տվել է հենց այն հարցը, որը ցանակացել է («Դու առաջվա պես ինձ սիրո՞ւմ ես»), և ամուսինն իրեն ոչ մի կերպ չէր կարող սխալ հասկանալ: Ամուսինն իր հերթին անորոշ պատասխանել է. «Ձգտում եմ, որքան կարողանում եմ», դրանով իսկ կնոջն ակնարկելով, որ աշխատանքում ծանրաբեռնված է ու իրենից մեծ ջանք է պահանջվում, որպեսզի ժամանակին տուն վերադառնա և կնոջ հետ ժամանակ անց կացնի: Կինն այսպիսի կիսապատասխանը, ամենայն հավանականությամբ, կմեկնաբանի որպես իր կասկածների հաստատում: «Վերջ, ամուսինս այևս ինձ չի սիրում»-կմտածի նա:

Այս օրինակով բավականաչափ ցայտուն երևում է, որ ամուսինները միմյանցից հեռացել են ոչ այն պատճառով, որ ունեն հակասություններ, այլ որ չեն կարողացել հստակ ձևակերպել և պարզորոշ արտահայտել իրենց մտքերը: Իրական պատճառն այն է, որ երկու կողմերն էլ որոշակի անվստահություն են ունեցել միմյանց նկատմամբ, իսկ յուրաքանչյուր թերասածություն ավելի է մեծացրել նրանց միջև դեռևս աննկատելի ճեղքվածքը:

Ի՞նչ խորհուրդ է տալիս մասնագետը նման իրավիճակում: Մասնագետները կարծում են, որ անցանկալի զարգացումներից խուսափելու համար հարկավոր է հավաստիանալ, որ ձեր խոսքերը զրուցակցի կողմից ճիշտ են հասկացվել, ինչն ստուգելու համար կարելի է ըստ բովանդակության համեմատել փոխանցված և հետ ստացված

հաղորդագրությունները՝մեսիջները: Մեր օրինակում, եթե ամուսիններից գոնե մեկը փորձ կատարեր ստուգելու, թե արդյո՞ք իրեն ճիշտ են հասկացել կամ ինքը ճի՞շտ է հասկացել մյուս կողմին, ապա կարող էր կանխել թյուրիմացությունը: Կնոջ հարցին ամուսինը կարող էր պատասխանել. «Դու ցանկանում ես ասել, որ ես ինչ-որ բան այնպես չե՞մ անում» կամ«Լավ կանես կոնկրետ ասես, թե ինչ ես ցանկանում»: Ամուսինն, այսպիսով, կնոջը հնարավորություն կտա ավելի հստակ ձևակերպելու իր գլխավոր միտքը, թաքնված հարցը, միաժամանակ հավաստիանալով, որ կնոջ խոսքերի մեջ բացասական երանգ չկա և իր մտավախությունները կեղծ են: Կինն իր հերթին ամուսնու անհասկանալի պատասխանը լսելուց հետո կարող էր ճշտել. «Ի՞նչ նկատի ունես, երբ ասում ես՝ ձգտում եմ, որքան կարող եմ»:

Երբեմն մենք այլոց խոսքերը մեկնաբանում ենք այնպես, ինչպես հուշում են մեր թաքնված մղումները: Ստացված տեղեկատվությունն, այդպիսով, աղավաղվում է մեր թաքուն վախերի ազդեցությամբ: Թե՛ առաջին, թե՛ երկրորդ օրինակներում և թե՛ առհասարակ, օգտակար է խոսակցության ժամանակ վարժվել ճշտող հարցեր առաջադրելու մեջ՝ այդպիսով նվազագույնի հասցնելով կողմերի թերըմբռնման պատճառով առաջ եկած տարաձայնությունները: Այսպիսով՝ ձևակերպենք հաղորդակցման «ոսկե կանոնը». ***«Միտքը, որը մենք հասկացել ենք, պետք է ճշտորեն համապատասխանի այն մտքին, որն արտահայտել է մեր զրուցակիցը»:***

Մինչև հիմա նկարագրված իրավիճակները վերաբերվել են իմաստների ոչ միտումնավոր աղավաղումներին, չնայած շփման ժամանակ թերըմբռնումները երբեմն լինում են գիտակցված: Որպես օրինակ քննարկենք, այսպես կոչվող «Չգիտեմ» ռեֆլեքսը, որն առաջ է գալիս այն ժամանակ, երբ մենք բարկացած ենք լինում կամ չենք ցանկանում շարունակել խոսակցությունը: Շփման այս ոճը կարելի է անվանել պասիվ-ագրեսիվ, որովհետև ցույց է տալիս, որ մենք պատրաստ ենք լինելու ագրեսիվ, չնայած արտաքինից բոլորովին հանգիստ ենք թվում: Չպատասխանել հարցին՝ ձևացնելով, թե իբր պատասխան չունեք, նշանակում է հոգեբանորեն գերիշխող դիրք գրավել զրուցակցի նկատմամբ և նրան զրկել վստահությունից: Շփման այս տեսակն ինքնին թշնամական է՝ նրա ծայրաստիճան աղավաղված բովանդակության պատճառով:

«Չգիտեմ» ռեֆլեքսը կարելի է որակել որպես ճշմարտացի տեղեկատվություն տալուց լիովին հրաժարում: Ահա մեկ օրինակ.

- Նախաճաշին ի՞նչ կցանկանայիր:
- Չգիտեմ:
- Գուցե ջեմով կարագ կամ ձվածե՞ղ:
- Ինձ համար միևնույն է:
- Հյութ կխմե՞ս:
- Հարյուր տարի չլինի, չեմ էլ հիշի:
- Գուցե քնից լիովին չե՞ս արթնացել:

- Գուցե:

«Չգիտեմ» ոճն ընդամենը շփումից խուսափելու ձև է՝ միաժամանակ չստանձնելով շփումից խուսափելու պատասխանատվությունը: Արդյունքում զրուցակիցը հայտնվում է անորոշության մեջ՝ չհասկանալով զրուցակցի՝ պատասխաններից խուսափելու բուն պատճառները: Հաղորդակցվող կողմերի համար օգտակար է հասկանալ, որ շփման ժամանակ կարևոր է պատասխանատվություն կրել յուրաքանչյուր արված արտահայտության համար: Չպետք է մոռանալ, որ լռությունը նույնպես դիրքորոշում է, յուրահատուկ խոսուն արտահայտություն, զրուցակցին որևէ միտք հաղորդելու ձև: Հարցին լիարժեք կամ թերի պատասխան է տրվել, թե լռության է մատնվել հարցը, բոլոր դեպքերում մենք գործ ունենք միանգամայն որոշակի իմաստալից տեղեկատվության հետ: Ահա թե ինչու, նկատելով, որ մարդիկ մեզ դժվար են հասկանում, հարկավոր է համոզվել, որ կարողանում ենք արդյունավետորեն շփվել: Պետք է հիշել. հարաբերությունների մեջ առաջացող ցանկացած լարվածություն զգալիորեն կախված է ոչ թե այն բանից, որ առկա են իրական հակասություններ, այլ, որ զրուցակիցներն արտահայտում եմ միմյանց համար դժվար հասկանալի մտքեր: Սովորենք խոսել ճիշտ և կազատվենք ավելորդ գժտություններից ու թյուրիմացություններից:

Առավել ուշադիր եղեք այն ժամանակ, երբ բարձրաձայնում եք խրախուսանք կամ քննադատություն: Քննարկեք իրավիճակ, երբ դուք փորձառու եք և դժվար իրավիճակներում արագ կողմորոշվելու և արդյունավետ որոշումներ կայացնելու կարողություն ունեք: Այդ առումով սխալներ թույլ տվող մարդկանց արդարացիորեն դիտողություններ կատարելով, դուք կարտահայտեք ձեր հոգատարությունը նրանց նկատմամբ, քանի որ, եթե դա չանեք, ապա առաջ կգա իրական վտանգ նրանց կյանքի ու առողջության համար: Այսպես մշակվում է սովորություն՝ արտահայտելու քննադատական դիտողություններ այն ժամանակ, երբ մարդիկ «գործում են ոչ այնպես, ինչպես պետք է» և լռություն պահպանել այն ժամանակ, երբ մարդիկ, ձեր կարծիքով, «ճիշտ են վարվում»: Շփման այսպիսի ոճը բնորոշ է պատերազմների մասնակիցներին, պահեստազորի սպաներին, փրկարարներին, ոստիկաններին և այլն: Նրանց համար հեշտ է քննադատելը, քան գովաբանելը: Անշուշտ, եթե խոսվում է բարդ իրավիճակներում գոյատևման մասին, ապա այս վարքագիծն ավելի քան արդարացված է, մինչդեռ, խաղաղ ու հանգիստ պայմաններում այն կարող է խնդիրներ առաջացնել: Մարդիկ, որոնք դժվար իրավիճակներին ծանոթ չեն, հազիվ թե ճիշտ հասկանան, թե ինչու են ուրիշներն այդպես կոշտ քննադատում իրենց: Նրանց կարող է թվալ, որ իրենց չեն հարգում, այլ մշտապես և առանց պատճառի դիպչում են իրենց ինքնասիրությանը: Հիշեք. մարդը, որ իր մեջ կրում է դառնություն ու չարացածություն, հակված է լինում այլոց գործողությունների քննադատությունն օգտագործելու որպես այդ լարվածությունից ազատվելու միջոց: Երբ այդ հակվածությունը

դրսևորվում է միանգամայն անմեղ մարդկանց նկատմամբ կամ ներկայությամբ, ապա տվյալ անձնավորությունը կանգնում է մարդկանց հետ հարաբերությունները փչացնելու ռիսկի առջև: Եթե, այնուամենայնիվ, անհրաժեշտ է քննադատական խոսք ասել որևէ մեկին, ապա մի շտապեք այդ անել, այլ մանրախնդրորեն ընտրեք հարմար ժամանակը և վայրը: Հետաձգեք քննադատական խոսքը և այն կիրառեք միայն այն ժամանակ, երբ կզգաք հոգեկան անդորր և հավասարակշռություն:

Մինչ այս պահը մենք խոսում էինք միայն քննադատություն կամ խրախուսանք արտահայտելու մասին, մինչդեռ ոչ պակաս կարևոր է, թե դուք ինչպես եք ընդունում ձեր հասցեին ասված նմանատիպ խոսքերը: Ընդունա՞կ եք արդյոք լսելու դիտողությունները՝ առանց սուր սթրեսային հակազդման: Կարողանո՞ւմ եք հանգիստ լսել գովասանքը: Եթե ուրիշների արտահայտած քննադատությունը ձեզ հավասարակշռությունից հանում է, ապա հարկավոր է հարց տալ ինքներդ ձեզ՝ իսկ կոնկրետ ի՞նչն է թվում սպառնալից այդ քննադատության մեջ: Այս մեթոդը օգնում է մարդուն ճանաչելու և կառավարելու սեփական վախերը: Կա արդյունավետ խաղ-վարժություն շփման հմտությունների զարգացման համար, և այն կոչվում է «Չամիչով կարկանդակ» (3,4): Երկու մասնակից պայմանավորվում են ոչ մի պարագայում չվիրավորվել միմյանցից և հերթականությամբ կատարել խոսողի ու լսողի դերերը: Խաղացողները նստում են դեմդիմաց, և խոսողը երեք արտահայտություն է ասում զուգընկերոջ մասին: Առաջինը պարունակում է գովասանք և սկսվում է մոտավորապես «Ես քո մեջ գնահատում եմ...» բառերով, երկրորդը քննադատություն է և սկսվում է «Քեզ հետ դժվար է, որովհետև...» բառերով և, վերջապես, երրորդը նույնպես գովասանք է՝ կամայական բառերով: Խոսողի խնդիրն է՝ մտքերն արտահայտել ծայրաստիճան պարզ և ընտրել այնպիսի բառեր, որոնք հնարավորինս համապատասխանում են իրականությանը և խաղացողների հարաբերությունների մակարդակին: Լսողի խնդիրն է՝ չնեղանալ և չոգևորվել այդ խոսքերից, ոչ մի դեպքում չընդհատել խոսողին, գովասանքն ու քննադատությունը լսել հնարավորինս հանդարտ, չկատարել ոչ մի գործողություն: Այնուհետև մասնակիցները փոխում են դերերը, և ամեն ինչ կրկնվում է:

«Չամիչով կարկանդակ» վարժությունը կարելի է մի փոքր բարդացնել՝ ստուգելու համար, թե լսողը որքանով է ճիշտ հասկացել խոսողին և հակառակը: Այդ նպատակով մասնակիցները բարձրաձայն կրկնում են այն մտքերը, որոնք ասվել են իրենց հասցեին՝ սպասելով հեղինակի հաստատական գնահատականին: Երբ դուք անկեղծորեն արտահայտում եք ձեր կարծիքը, և նույնը կատարում է ձեր խաղընկերը, ապա երկուսդ էլ ճիշտ եք, չնայած ձեր տեսակետները կարող են տրամագծորեն հակառակ լինել: Որպեսզի շփումը լինի լիարժեք, դուք պետք է զրուցակցին հնարավորություն տաք արտահայտելու սեփական կարծիք նույնիսկ այն դեպքում, երբ այդ կարծիքը ձեզ թվում է անիմաստ կամ

անտրամաբանական: Խուսափեք ինքնահավանության ծուղակն ընկնելուց: Երբ դուք «սեղմում եք» խաղընկերոջը, ապա դրանով մերժում եք նրա սեփական զգացմունքներ, կարծիքներ և տեսակետներ ունենալու իրավունքը, ինչով փակուղի եք տանում վարժությունը: Եթե խաղի ժամանակ նկատեք, որ ոչ մի կերպ չեք կարողանում պահպանել սահմանված կանոնները, ապա հրավիրեք մեկին, որը կարող է լինել մրցավար: Հոգեբան-թերապևտը կամ պարզապես ամուր նյարդեր ունեցող մարդը կարող է ձեզ մեծապես օգնել՝ ուշադիր լսելու և մտքերը հստակ ձևակերպելու հմտություններ ձևավորելու գործում: Այդ հմտությունները հնարավորություն կտան հասնելու սոցիալական նպատակներին, պահպանելու հոգեկան հավասարակշռությունը և այդ անելու նույնիսկ այն դեպքում, երբ շրջապատի մարդիկ չեն կարողանում կամ չեն ցանկանում որակով շփվել: Բայց թերևս ամենակարևորը, ինչին կարելի է հասնել նպատակային ջանքերի միջոցով, սեփական ձայնի և խոսքերի կառավարման օգնությամբ մարդկանց հետ հարաբերությունների արդունավետ կարգավորման հանարավորություն ստեղծելն է:

Գրականություն

1. Ռազմական սթրեսը և դրա կառավարումը, Ռազմական հոգեբանության հիմնախնդիրները հանրապետական գիտաժողովի նյութեր, Զեկուցումներ և հոդվածներ, Երևան, 2013թ., էջ 158-163,
2. Տեղեկատվական հաղորդակցման էությունը-Կրթության հոգեբանության դասախոսությունների ժողովածու, Լիմուշ, Եր-2017թ. 528 էջ, էջ 311-327,
3. Бенджамин Колодзин Как жить после психической травмы. © Перевод с английского Савельевой И.В., М-2001г,
4. Военно-травматический стресс: особенности посттравматической адаптации участников боевых действий-Психологический журнал, 1999г, том 20, N5, стр. 62-74,
5. https://libking.ru/books/sci-/sci-psychology/27962-20.11.2019թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հոգեբ.գ.թ. Ա.Մ. Մխիթարյանը:

ՀՏԴ159.9(316.6)
Հոգեբանություն

Արայիկ ՓԻՐՅԱՆ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, հայցորդ
e-mail: ara.firyan@mail.ru

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հոդվածում ներկայացված է արցախահայության ազգային ինքնագիտակցության սոցիալ-հոգեբանական նկարագիրը: Քննարկվում են որոշ գրավոր վկայություններ, որոնք նկարագրում են ազգային ինքնագիտակցության առանձնահատկությունները: Ներկայացված են Արցախի հիմնախնդրի ներկա վիճակի վերաբերյալ ներպետական և միջազգային պատկերացումների դինամիկան և այդ պատկերացումների ազդեցությունը արցախահայության ազգային ինքնագիտակցության զարգացման վրա: Դիտարկվում են նաև ազգային ինքնագիտակցության դրսևորման որոշ գործոններ ներկայիս արցախյան հասարակությունում:

Բանալի բառեր՝ *ազգային ինքնագիտակցություն, նույնականություն, կոնսոլիդացիա, սոցիալական պահանջմունք*

A.Firyan

SOCIO-PSYCHOLOGICAL DESCRIPTION OF THE ARMENIANS' ETHNIC SELFCONSCIOUSNESS IN ARTSAKH REGION

The article presents the socio-psychological description of the national self-consciousness of Armenians in Artsakh region. Some written evidence is given that describes the characteristics of national identity. Dynamics of national and international perceptions of the current situation in Artsakh and the impact of these perceptions on the development of national self-consciousness of Armenians living in Artsakh are presented. Some factors of manifestation of national self-consciousness in the current Artsakh society are considered.

Keywords. *national self-consciousness, identity, consolidation, social need*

А. Фирян

СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКАЯ КАРТИНА НАЦИОНАЛЬНОГО САМОСОЗНАНИЯ АРМЯН АРЦАХА

В статье представлена социально-психологическая картина национального самосознания арцахских армян. Приведены некоторые письменные свидетельства, которые описывают особенности национального самосознания. Также представлена динамика национального и международного понимания современного состояния арцахской проблемы и влияние этих представлений на развитие национального самосознания арцахских армян. Рассматриваются некоторые факторы проявления национального самосознания в нынешнем арцахском обществе.

Ключевые слова: *национальное самосознание, идентичность,*

консолидация, социальная потребность

Արցախահայության ազգային ինքնագիտակցության հոգեբանական ֆենոմենը ուսումնասիրվում է հարակից մի շարք հասարակագիտական ու հումանիտար գիտությունների շրջանակներում: Այն ենթադրում է պատմական հիշողության և ազգային հավաքական «Ես»-պատկերի ձևավորման, անձի ինքնառեալիզացիայի և սոցիալականացման բարդ գործընթացների ամբողջական քննություն, որտեղ իր դերն ունեն արցախահայության պատմությանը, լեզվին, մշակույթին ու հոգեկան կերտվածքին վերաբերող բազմաբնույթ ուսումնասիրությունները, ազգային նույնականությունը վկայող տվյալ հողի նկատմամբ հավաքական տիրոջ գիտակցության բացահայտումը, ինչն արտահայտվում է պատմական հայրենիքի մաս կազմելու զգացումով: Այս առումով հետաքրքիր են որոշ օտարաղբյուր վկայություններ՝ կովկասաբնակ ազգաբնակչության ազգային նկարագրի վերաբերյալ: Կ. Հ. Ղահրամանյանը և Ա. Ս. Ղազիյանը «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. պետականության ակունքները» գրքում նշում են ցարական Ռուսաստանի պաշտոնական աղբյուրներում շրջանառվող ընդհանուր կարծիքը կովկասաբնակ ժողովուրդների ազգային նկարագրի մասին, ինչի համատեքստում էլ դիտարկում են Արցախի հայերի ազգային ինքնության դրսևորումները: Համաձայն այդ կարծիքի՝ վրացական ժողովուրդների անցյալ դարի սկզբի աղբյուրները գնահատվում են որպես փակ և հետամնաց, որոնք «ոչ մի դեր չեն կատարում Կովկասի երկրամասի համար»[1]: Կովկասյան թաթարները, որոնք կիսանստակյաց, կիսաքոչվոր կյանք են վարում, նկարագրվում են հետևյալ կերպ. «Ադրբեջանական թաթարները վրիժառու են ու տգետ, հակված են խաբեբայության, գողության ու կողոպուտի, որի պատճառով չարիք են հանդիսանում նստակյաց ժողովուրդների համար»: Ի տարբերություն վերը նշված ժողովուրդների նկարագրի՝ նույն աղբյուրներում հանդիպում ենք հայերին տրված հետևյալ գնահատականներին. «հայերը դրսևորում են մեծ հակվածություն եվրոպական կրթության և առևտրով ու արդյունաբերությամբ զբաղվելու նկատմամբ: Ազգային զգացումը նրանց չափազանց ուժեղ է զարգացած: Իրենց ձեռներեցության և առևտրի նկատմամբ հակվածության շնորհիվ քաղաքաբնակ հայերը իրենց մենաշնորհին են դարձրել համարյա ամբողջ առևտուրն ու արդյունաբերությունը Կովկասյան երկրամասում, որի բնակչության զգալի մասը գտնվում է նրանցից լրիվ կախվածության մեջ» [2] [3]: Կ. Հ. Ղահրամանյանի և Ա. Ս. Ղազիյանի կողմից կատարված այս դիտարկումը շատ կարևոր է հասկանալու համար թե՛ ցարական Ռուսաստանի ազգային խտրական քաղաքականության հիմքը հանդիսացող ռազմավարությունը՝ ուղղված տնտեսապես կայուն ու անկախությանը ձգտող հայերին ղեկավարելուն, թե՛ աչքի ընկնող հայերի «ազգային ուժեղ զգացումը» թուլացնելու կայսերական նկրտումները: Ի հակադրություն դրան՝ հայերի շրջանում աստիճանաբար ուժեղանում էր իրենց հողի հետ նույնականացման ազգային այն զգացումը, որն ընկած է ազգային ինքնագիտակցության հիմքում: Վարչականորեն Արցախի տարածքը, 19-րդ

[1] *Տե՛ս* ***Ղահրամանյան Կ. Հ.****, Ղազիյան Ա. Ս. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. պետականության ակունքներ», Երևան, 2008*

[2] *Տե՛ս* ***Ղահրամանյան Կ. Հ., Ղազիյան Ա. Ս****. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. պետականության ակունքներ», Երևան, 2008*

[3] *Энциклопедический словарь, т. XIII A, С. Петербург, 1894*

դարի առաջին քառորդում անցնելով Ռուսաստանի կայսրությանը, կազմեց Ելիզավետպոլի նահագի Շուշիի, Ջևանշիրի և Ջաբրաիլի շրջանները: Այն մշտապես դիտարկվում էր որպես պատմական Հայաստանի անբաժանելի մաս և աղբյուրներում ներկայացվում իր հայկականությամբ: Տարածաշրջանի խորհրդայնացման հետ մեկտեղ Լեռնային Ղարաբաղն անցավ Խորհրդային Հայաստանի կազմի մեջ (1921 թ. հուլիսի 3), իսկ մի քանի օր անց (1921 թ. հուլիսի 5)՝ Կովկասյան բյուրոյի որոշմամբ անսպասելիորեն տրվեց Խորհրդային Ադրբեջանին՝ հաշվի առնելով «հայերի և մահմեդականների միջև ազգային համերաշխության» անորոշ պատճառաբանումը: Այսպես՝ 95% հայերով բնակեցված Արցախի երկրամասը, առանց պատշաճ վարչարարարության ու խնդրի պատմական, սոցիալտնտեսական ու հոգեբանական կողմերը հաշվի առնելու, բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին՝ վարչականորեն վերածվելով Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի: Եվ չնայած որ արցախահայությունը 20-րդ դարի ողջ ընթացքում փորձում էր բարձրացնել ՀԽՍՀ վերամիավորման հարցը (1920-ական թթ. սկիզբ, 1945 թ., 1967 թ., 1977 թ.) [1], այնուամենայնիվ խնդրի հանգուցալուծումը եղավ ԽՄ-ում Վերակառուցման քաղաքականությամբ սկիզբ դրած սոցիալական, հոգեբանական և քաղաքաիրավական լուրջ տրանսֆորմացիոն գործընթացների դինամիկան: Այժմ ներկայացնենք Արցախի հիմնախնդրի ներկա վիճակի վերաբերյալ ներպետական և միջազգային պատկերացումների դինամիկան և այդ պատկերացումների ազդեցությունը արցախահայության ազգային ինքնագիտակցության զարգացման վրա: Ինչպես իրավացիորեն նշում է Դ. Բաբայանը, Արցախի հիմնախնդրի բարձրացումն ու, առավել ևս, անկախության հռչակումը, Ադրբեջանի Հանրապետության համար շարունակում է մնալ անընդունելի, քանի որ սեփական գոյության համար լրջագույն վտանգ է ներկայացնում՝ անդրադառնալով ադրբեջանցիների էթնո-քաղաքական նույնականության հիմնախնդրին: Ադրբեջանում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ մեկ ազգի նույնականության վերաբերյալ պատկերացումը ձևավորվում է մեկ այլ ազգի ինքնուրույնությունը բացառելու միջոցով: Այլ խոսքերով՝ այդ երկրում մեկ ազգի ինքնորոշման փաստը ընկալվում է որպես մեկ այլ ազգի ինքնորոշման իրավունքը ժխտող հանգամանք: Հեղինակն անդրադառնում է այս խնդրին՝ հիմնվելով ադրբեջանական ազգի և ինքնության ձևավորման առանձնահատկությունների վրա: Մասնավորապես մատնանշվում է այն փաստը, որ ադրբեջանական էթնոսի ձևավորման գործընթացը սկսվել է 20-րդ դարի 30-ական թվականներին, երբ մահմեդական ազգությունների կոնսոլիդացիայի հիմքում ընկած էր ընդհանուր վարչական տարածքին պատկանելության զգացումը: Տարբեր ազգությունների ներկայացուցիչները նույնականացնում էին «ադրբեջանցի» էթնոնիմով՝ որպես Ադրբեջանի բնակիչներ: Ադրբեջանի ազգաբնակչության համար դա միակ հնարավոր ուղին էր՝ ձևավորելու ազգային ինքնագիտակցության տարրեր, քանի որ «Ադրբեջան» երկրի անվանումը կապված չէր երկիրը բնակեցնող և մեծամասնություն կազմող որևէ

[1] *Տե՛ս* ***Арустамян Р. С****. Провозглашение независимости НКР и становление ее национальной государственности //Republic of Nagorno-Karabakh Past, Present and Future,- International Scientific Conference, June 21-24, Stepanakert, Yerevan, 2007*

ժողովրդի հետ[1]: Այսպես՝ ադրբեջանաբնակ ազգություններից հեղինակը նշում է լեզգիններին, թալիշներին, թաթերին, քրդերին, լեռնային և թյուրքական ազգերին: Աստիճանաբար ազգային կոնսոլիդացիայի կենտրոնական դերակատարումն անցավ թյուրքական էթնոսին և «ադրբեջանցի» էթնոնիմը սկսեց նույնացվել այդ ազգության ներկայացուցիչների հետ, ինչի արդյունքում ադրբեջանաբնակ այլ ազգերի մոտ զարգացավ այն ընկալումը նրա վերաբերյալ, որ թյուրքական ծագում ունեցող ադրբեջանցիները այլ ժողովուրդներին պարտադրում են ազգային կոնսոլիդացիայի և ինքնագիտակցության իրենց պատկերացումը: Այստեղ է հենց թաքնված արցախյան հիմնախնդրի նկատմամբ Ադրբեջանի կողմից արտահայտված խիստ բացասական վերաբերմունքը: Արցախի ինքնորոշման և անկախության հետ մեկտեղ վտանգվում են Ադրբեջանի ազգային կոնսոլիդացիայի հիմքերը, ստեղծվում են նախադեպեր նաև այլ ադրբեջանաբնակ ազգությունների (լեզգիններ, թալիշներ և այլն) կրկնելու արցախահայության օրինակը: Այժմ դիտարկենք արցախահայության ազգային ինքնագիտակցության որոշ առանձնահատկություններ: Ազգային ինքնագիտակցության զարգացման վերաբերյալ հետաքրքիր նյութ է հաղորդում Հ. Մարությանը իր «Հայերի ցեղասպանությունը. պատմական հիշողությունը և ստերեոտիպերի փոխակերպումը ըստ Ղարաբաղյան շարժման ցուցապաստառների» հոդվածում[2]: Ցուցապաստառներում առկա տեղեկատվությունը անգնահատելի է Ղարաբաղյան շարժման ողջ ընթացքը դիտարկելու, ազգային ինքնագիտակցության զարգացման դինամիկան նկարագրելու համար, քանի որ այդ ցուցապաստառները բնորոշում են Արցախում ցուցարարների պահանջատիրությունը և ուղղորդում Ղարաբաղյան շարժման ընթացքը: Հեղինակն իրավացիորեն նշում է Ղարաբաղյան շարժման ծավալմանը զուգընթաց հայալեզու ցուցապաստառների քանակի աճը՝ շարժման սկզբում օտարալեզու ցուցապաստառների համեմատությամբ: Դա նշանակում է, որ եթե շարժման սկզբում ցուցապաստառները հասցեագրված են եղել արտաքին աշխարհին, ապա աստիճանաբար ցուցապաստառներում առկա տեղեկատվությունը դառնում է հայերեն՝ նպատակաուղղված լինելով Արցախի ազգաբնակչությանը: Այս երևույթը մենք բնութագրում ենք որպես «ազգային կոնսոլիդացիայի սինդրոմ», որը բնորոշվում է հոգեբանական պաշտպանության համապատասխան գործոններով: Ձևակերպված եզրույթը կարելի է մեկնաբանել երկակի՝ ըստ կոնսոլիդացիայի արտաքին և ներքին աղբյուրների: Այն դեպքում, երբ ազգային կոնսոլիդացիայի արտահայտչամիջոցները ուղղված են արտաքին աշխարհին և նկարագրվում են օտարալեզու հայտարարությունների, ցուցապաստառների, արտաքին աշխարհին հասանելի տեղեկատվության միջոցով, ձևավորվում է ազգային կոնսոլիդացիայի արտաքին սինդրոմի պատկեր: Կոնսոլիդացիայի ներքին սինդրոմի պայմաններում հասարակությունը հայտնվում է այնպիսի սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցության տակ, որոնք հասցեագրված են

---

[1] *Տե՛ս* ***Бабаян Д****. Существование НКР в контексте внутриармянской политики и международных отношений //Republic of Nagorno-Karabakh Past, Present and Future,- International Scientific Conference, June 21-24, Stepanakert, Yerevan, 2007*

[2] *Տե՛ս* ***Մարության Հ****., «Հայերի ցեղասպանությունը. պատմական հիշողությունը և ստերեոտիպերի փոխակերպումը ըստ Ղարաբաղյան շարժման ցուցապաստառների», - Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր. Արցախ,-Գիտական նստաշրջան, Զեկուցումների հիմնադրույթներ, Հայաստանի ազգագրության պետական թանգարան, Երևան, 1992*

առաջին հերթին ազգաբնակչությանը և սահմանափակվում են ներքին տեղեկատվական դաշտով[1]: Հնարավոր է նաև առանձնացնել գործոնների այնպիսի մի տեսակ, որն իր ներգործության ուղղվածության տեսանկյունից հասցեագրված լինի թե՛ արտաքին և թե՛ ներքին լսարանին: Նշենք նաև, որ Արցախում պատերազմական գործողությունների զինադադարի կնքման փուլում արձանագրված ազգային կոնսոլիդացիայի սինդրոմի երևույթն առ այսօր պահպանում է իր սոցիալ-հոգեբանական ներգործությունը՝ ստանալով նորանոր ձևեր և արտահայտչամիջոցներ[2]: Նշենք նկարագրված երևույթի դրսևորման որոշ գործոններ ներկայիս արցախյան հասարակությունում: Գործոններից առաջինը վերաբերում է «առանց պատերազմի, առանց հաշտության» իրավիճակին, որի վերաբերյալ կարծիք է հայտնել Լ. Հարությունյանը[3] [4]: Հեղինակը անդրադառնում է այն փաստին, որ «առանց պատերազմի, առանց հաշտության» իրավիճակում հայտնված հասարակության զարգացման համար հնարավոր ուղիներից երկուսն են համարվում իրատեսական և արդիական: Ուղիներից մեկը նախանշում է պատերազմական գործողությունների վերսկսման և առճակատման հնարավորությունը, իսկ մյուսը՝ հաշտության կառուցման և պահպանման տեսլականը: Արցախյան ազգաբնակչությունը այս փուլում հայտնվեց սահմանային մի իրավիճակում, երբ արդեն կարծես թե լայնածավալ պատերազմական գործողությունների վերսկսման վտանգը թուլացել է, բայց, այնուամենայնիվ, չի կարելի ասել, որ ձեռք է բերվել հաստատուն հաշտություն: Նման պայմաններում սոցիալ-քաղաքական և հոգեբանական տարատեսակ գործոնների փոփոխումը կամ տրանսֆորմացիան կարող են հանգեցնել իրավիճակի կա՛մ պատերազմական, կա՛մ հաշտողական լուծումներին: Հեղինակը նշում է նաև հասարակության նման սահմանային, միջանկյալ պայմաններում սոցիալական զարգացման այնպիսի գործոններ, որոնք ուղղորդվում են ապագա հաշտության կնքմանն ու իրավիճակի հանգուցալուծմանը: Այդ գործոններից են՝

- կոնֆլիկտի եզրափակման կամ տրանսֆորմացիայի ձևերի մշակումը,
- «թշնամու» պատկերի և բռնության հնարավորությունների թուլացումը,
- հաշտության հաստատման կոնստրուկտների բացահայտումը,
- քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական սկզբունքների ձևավորումը [5]:

Արցախում «առանց պատերազմի, առանց հաշտության» հասարակության կոնֆլիկտոգեն հիմքերից առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում երկրի պաշտպանական կառույցների ընդլայնման փաստը: Անկասկած, այդ

---

[1] *Տե՛ս* ***Ядов В. А.*** *Социальные и социально-психологические механизмы формирования социальной идентичности личности // Мир России, 1995, Ж3-4*

[2] *Տե՛ս* ***Anderson B****. Imagined. Communities. Reflections on the Origin and Spread of Nationalism. L.-N.Y., 1992,-1nternational Encyclopedia of Social Sciences, ed. By Still, D.L.-New York.*

[3] *Տե՛ս* ***Арутюнян Л.*** *Карабахское общество на этапе "ни войны, ни мира": особенности момента и логика демократических перемен //Republic of Nagorno-Karabakh Past, Present and Future,- International Scientific Conference, June 21-24, Stepanakert, Yerevan, 2007*

[4] *Տե՛ս* ***Бабаян Д.*** *Существование НКР в контексте внутриармянской политики и международных отношений //Republic of Nagorno-Karabakh Past, Present and Future,- International Scientific Conference, June 21-24, Stepanakert, Yerevan, 2007*

[5] *. Տե՛ս* ***Арутюнян Л****. Карабахское общество на этапе "ни войны, ни мира": особенности момента и логика демократических перемен //Republic of Nagorno-Karabakh Past, Present and Future,- International Scientific Conference, June 21-24, Stepanakert, Yerevan, 2007*

կառույցների ներկայությունն ինքնին նպաստում է զինադադարի պահպանմանն ու ազգաբնակչության խաղաղությանը, բայց, այնուամենայնիվ, նշենք պաշտպանական ինստիտուտների ևս մի ընկալում. որքան մեծ ուշադրություն է տրվում երկրի պաշտպանական կառույցներին, ազգաբնակչության մեջ այդքան ավելի է ամրապնդվում այն մտավախությունը, որ իրական պատերազմական գործողությունների վերսկսման վտանգը դեռևս չի անցել, և հասարակությունը շարունակում է գտնվել «առանց հաշտության» պայմաններում: Ի հավելումն վերոգրյալի՝ նշենք ևս մի գործոն, որի առկայությունը ամրապնդում է ազգաբնակչության մեջ «առանց հաշտության» կոնստրուկտի առկայությունը: Խոսքը վերաբերում է նրան, որ ներկա սահմանային սոցիալհոգեբանական իրավիճակում գտնվող արցախահայությունը երկար տարիներ դուրս է մնացել արցախյան հիմնախնդրի շուրջ բանակցություններին ակտիվ մասնակցության հնարավորությունից, ինչի արդյունքում մարդկանց մեջ ձևավորվել է այն կարծիքը, որ նրանք իրենց ճակատագրի տերը չեն: Ստեղծված իրավիճակում բանակցությունների լիիրավ սուբյեկտ չհանդիսանալու փաստը ևս ամրապնդում է հասարակության «առանց հաշտության» գոյատևման ընկալումը: Անդրադառնանք նաև այն գործոններին, որոնք ի հայտ են գալիս ի հակադրություն կոնֆլիկտոգեն հոգեբանական կոնստրուկտների: Առաջին հերթին հարկ է նշել երկրի ներսում զարգացող ժողովրդավարական ինստիտուտների գործոնը: Ակնհայտ է, որ արցախահայությունը ընտրել է քաղաքական, սոցիալ-տնտեսական և հոգեբանական կենսակերպ կազմակերպող ժողովրդավարական մեխանիզմների ներդրման ճանապարհը, որը խոսուն փաստ է հասարակության զարգացման ու աշխարհին ներկայացման տեսակետից: Այդ զարգացումները, միտված լինելով երկրի ներսում վարչատնտեսական ձևերի մշակմանը և սոցիալ-հոգեբանական անկաշկանդ, առաջադեմ մթնոլորտի ձևավորմանը, իհարկե, կրում են նաև միջազգային հանրությանը ներկայանալու իմաստ՝ որպես պրոգրեսիվ, ժողովրդավարական քաղաքական միավոր: Այդպիսի ներկայացումն ինքնստինքյան ենթադրում է պատասխան վերաբերմունք արտաքին աշխարհից, որն արցախյան այս «առանց պատերազմի, առանց հաշտության» սահմանային իրավիճակը պարտավորվում է լուծել նմանատիպ ժողովրդավարական սկզբունքներով՝ հօգուտ «առանց պատերազմի» դիրքորոշման:

Վերը նշած սոցիալ-հոգեբանական գործոնների քննությունը Արցախի օրինակով թույլ է տալիս եզրակացնելու «առանց պատերազմի, առանց հաշտության» հասարակությունների երկբևեռ զարգացման հնարավորությունների մասին: Ավելին՝ «առանց հաշտության» դիրքորոշման ընտրությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն արտաքին գործոններով, այլև ներքին՝ հոգեբանական այնպիսի գործոնների առկայությամբ ու արդիականացմամբ, ինչպիսիք են՝

- «թշնամու» պատկերի արդիականացումը,
- երկրի պաշտպանական կոնստրուկտների պահպանումը,
- հասարակության անմասն լինելը միջազգային բանակցային գործընթացներից,
- հնարավոր վտանգի երկարատև սպասման անորոշությունը,

• սոցիալ-տնտեսական իզոլյացիայի պայմաններում աճող սոցիալական պահանջմունքների անբավարարվածությունը, ներքին կոնսոլիդացիայի սինդրոմի թերզարգացվածությունը:

Գրականություն

1.Ղահրամանյան Կ. Հ., Ղազիյան Ա. Ս. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. պետականության ակունքները», Երևան, 2008

2. Մարության Հ., «Հայերի ցեղասպանությունը. պատմական հիշողությունը և ստերեոտիպերի փոխակերպումը ըստ Ղարաբաղյան շարժման ցուցապաստառների», - Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր. Արցախ,- Գիտական նստաշրջան, Զեկուցումների հիմնադրույթներ, Հայաստանի ազգագրության պետական թանգարան, Երևան, 1992

3. Арустамян Р. С. Провозглашение независимости НКР и становление ее национальной государственности //Republic of Nagorno-Karabakh Past, Present and Future,- International Scientific Conference, June 21-24, Stepanakert, Yerevan, 2007

4. Арутюнян Л. Карабахское общество на этапе “ни войны, ни мира”: особенности момента и логика демократических перемен //Republic of Nagorno-Karabakh Past, Present and Future,- International Scientific Conference, June 21-24, Stepanakert, Yerevan, 2007

5. Бабаян Д. Существование НКР в контексте внутриармянской политики и международных отношений //Republic of Nagorno-Karabakh Past, Present and Future,- International Scientific Conference, June 21-24, Stepanakert, Yerevan, 2007

6. Энциклопедический словарь, т. XIII A, С. Петербург, 1894

7. Ядов В. А. Социальные и социально-психологические механизмы формирования социальной идентичности личности // Мир России, 1995, Ж3-4

8. Anderson B. Imagined. Communities. Reflections on the Origin and Spread of Nationalism. L.-N.Y., 1992,-1nternational Encyclopedia of Social Sciences, ed. By Still, D.L.-New York.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հոգեբ.գ.թ., Վ.Բ. Ցարամիշյանը:

ՀՏԴ 330.3
Տնտեսագիտություն

Ռուզաննա ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ
տ.գ.թ., դոցենտ
ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոն

ՓՄՁ-Ի ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ

Բանալի բառեր՝ *փոքր և միջին ձեռնարկատիրություն, տնտեսական զարգացում, ՓՄՁ մասնաբաժին, զբաղվածություն, պետական աջակցություն, սուբսիդավորում, գործարար միջավայր,* ***ընտանեկան բիզնես,*** *բիզնես-կրթություն:*

Р. Мангасарян

РАСШИРЕНИЕ МАЛОГО И СРЕДНЕГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА КАК ВАЖНАЯ СОСТАВЛЯЮЩАЯ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ

В статье рассматриваются ключевые аспекты и подходы со стороны государства в поддержку малого и среднего предпринимательства в Республике Арцах, обосновывается необходимость развития сферы малого и среднего предпринимательства для экономического подъема и развития страны, улучшения качества жизни населения. Представлены основные критерии классификации сверхмалых, малых и средних предприятий как в экономике Арцаха и Армении, так и в Евросоюзе и проведен сравнительный анализ.

Тщательно исследуются показатели, характеризующие сектор МСП, в частности, особая важность придается исследованию его доли в ВВП и распределению по сферам субъектов МСП, проводятся сравнения с другими странами и делаются обоснованные выводы. Представлены программы поддержки и налоговых реформ, реализуемые со стороны Арцахского инвестиционного фонда и Фонда поддержки села и сельского хозяйства.

В статье предлагается развитие малого семейного бизнеса и создание бизнес-школы для расширения МСП в Республике Арцах.

Ключевые слова: *малое и среднее предпринимательство, экономическое развитие, доля МСП, занятость, государственная поддержка, субсидирование, бизнес-среда, семейный бизнес, бизнес-образование.*

R. Mangasaryan

SME EXPANSION AS AN IMPORTANT COMPONENT OF THE ECONOMIC DEVELOPMENT OF THE REPUBLIC OF ARTSAKH

The article discusses key aspects and approaches of the state in support of small and medium-sized enterprises in the Republic of Artsakh, substantiates the need to develop small and medium-sized enterprises for the economic recovery and development of the country and improvement the quality of life of the population. The main classification criteria for ultra-small, small and medium enterprises are presented both in the economy of Artsakh and Armenia and in the European Union and a comparative analysis is carried out.

The indicators characterizing SME sector are thoroughly considered, the study of SME share in GDP and its distribution by sectors is of particular importance, comparisons are made with other countries and valid conclusions are drawn. Support programs and tax reforms implemented by the Artsakh Investment Fund and the Rural and Agricultural Support Fund are presented.

The article suggests the development of a small family business and the creation of a business school to expand SMEs in the Republic of Artsakh.

Keywords. *small and medium-sized enterprise, economic development, the share of SME, employment, state support, subsidizing, business environment, family business, business education.*

Հոդվածում դիտարկվում են ԱՀ-ում փոքր և միջին ձեռնարկությունների պետական աջակցության մոտեցումները և կարևորագույն հայեցակետերը, հիմնավորվում ՓՄՁ ոլորտի զարգացման անհրաժեշտությունը երկրի տնտեսության վերակառուցման և զարգացման, բնակչության կյանքի որակի բարելավման հիմնախնդրում: Ներկայացվում են գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգման հիմնական չափորոշիչները ինչպես ԱՀ և ՀՀ տնտեսություններում, այնպես էլ Եվրամիությունում և կատարվում համեմատական վերլուծություններ:

Մանրակրկիտ դիտարկվում են ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշները, առանձնապես կարևորվում ՀՆԱ-ի մեջ դրա մասնակցության բաժնի, ըստ ճյուղերի ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքի ուսումնասիրությունը, համեմատության մեջ դրվում այլ երկրների հետ և կատարվում հիմնավոր եզրահանգումներ: Ներկայացվում են Արցախի ներդրումային /ԱՆՀ/ և Գյուղի և գյուղատնտեսության աջակցության /ԳԳԱՀ/ հիմնադրամների կողմից իրականացվող աջակցության ծրագրերը, կիրառվող հարկային բարեփոխումները:

Հոդվածում, ԱՀ-ում ՓՄՁ **ընդլայնման նպատակով, առաջարկվում է ընտանեկան փոքր բիզնեսի զարգացում և** բիզնես-դպրոցի ներդրում**:**

Ժամանակակից աշխարհում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման անհրաժեշտությունն ազգային տնտեսությունների վերակառուցման և զարգացման գլխավոր հրամայականներից մեկն է: Համաշխարհային փորձը փաստում է, որ առանց ՓՄՁ-ի անհնար է տնտեսության ներդաշնակ զարգացումը: Այն հանդիսանում է

յուրաքանչյուր երկրի տնտեսական առաջընթացի հիմնական երաշխիքը: Ընդհանուր առմամբ, ՓՄՁ ոլորտը ներառում է տնտեսության բավականին լայն հատված և ներկայացնում արտադրական և վերամշակող ձեռնարկություններ, արհեստներ, մանրածախ և մեծածախ առևտուր, ֆերմերային տնտեսություններ, ծառայությունների և սպասարկման ոլորտ և այլն:

Պատահական չէ, որ փոքր և միջին ձեռնարկությունները հաճախ գնահատվում են որպես բարգավաճող տնտեսությունների տնտեսական զբաղվածության ողնաշար, ինչպես նաև որպես նորարարության և հավելյալ արժեքի ստեղծող արտադրության շարժիչ ուժ: Դիտարկումները ցույց են տալիս, որ փոքր ձեռնարկությունների ակտիվ զարգացումը սկսվել է 20-րդ դարի 90-ական թվականներին և շարունակվում մինչև օրս: Այսպես՝ վիճակագրությունը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ում ամեն տարի ստեղծվում են շուրջ 600 հազար փոքր ձեռնարկություններ, Դանիայում՝ շուրջ 15 հազար բացարձակապես նոր ձեռնարկություններ: ՄԱԿ-ի փորձագետների տվյալներով փոքր ձեռնարկատիրության մեջ զբաղված է աշխարհի բնակչության շուրջ 50%-ը:[1] Զարգացած երկրների համար այս ցուցանիշը ավելի բարձր է: Այսպես՝ Ճապոնիայում փոքր և միջին բիզնեսում զբաղված է ընդհանուր բնակչության 64.2%-ը, Եվրամիության երկրներում՝ 71.92%-ը, Կանադայում՝ 60%-ը: [2] Նշենք, որ ԱՀ-ում ևս ՓՄՁ-ում զբաղված է բնակչության 70%-ից ավելին:

Եվրոպական հանձնաժողովը միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգման համար հիմք է ընդունում աղյուսակ 1-ում տրված չափորոշիչները.[3]

Աղյուսակ 1 Եվրամիությունում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները

ՓՄՁ սուբյեկտներ	Չափորոշիչներ			
	Աշխատողների թվաքանակ,մարդ	Տարեկան շրջանառություն,մլն եվրո	կամ	Ակտիվների հաշվեկշռային արժեք,մլն եվրո
Գերփոքր	10	2		2
Փոքր	50	10		10
Միջին	250	50		43

Նշենք, որ ՀՀ-ում 2010թ.-ին «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքում կատարված

[1] *Տե՛ս* ***Русак, Е. С.,*** *''Экономика предприятия'', Москва, Тетра Системс, 2015г. , с. 89*
[2] *Տե՛ս http://ec.europa.eu/*
[3] *Տե՛ս http://ec.europa.eu/*

փոփոխություններով փոփոխվեցին նաև ՓՄՁ դասակարգման ցուցանիշները: Օրենսդրական նախաձեռնության հիմնավորման մեջ ամրագրված էր, որ նոր դասակարգման սկզբունքների ներդրումը նպատակ ունի համադրելի դարձնելու Հայաստանում և Եվրոպայում կիրառվող մոտեցումները: Ինչպես և Եվրոպայում՝ Հայաստանում անցում կատարվեց ՓՄՁ դասակարգման ժամանակ զուտ քանակական ցուցանիշներով առաջնորդվելու սկզբունքին: Հարկ է նշել, որ Եվրամիության չափորոշիչներ կիրառող գրեթե բոլոր երկրները հնարավորություն ունեն իրականացնելու համեմատական վիճակագրական վերլուծություն, ինչն ակնհայտորեն ստեղծում է տարբեր երկրներում ՓՄՁ ոլորտի զարգացման մակարդակի վերաբերյալ առավել հստակ պատկեր՝ երկրի տնտեսության մեջ ՓՄՁ ոլորտի տեղի ու դերի գնահատման առումով: Ներդրված նոր մոտեցումները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2 Հայաստանում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները

ՓՄՁ սուբյեկտներ	Չափորոշիչներ			
	Աշխատողների թվաքանակ,մարդ	Նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթ,մլն դրամ	կամ	Նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեք, մլն դրամ
Գերփոքր	10	100		100
Փոքր	50	500		500
Միջին	250	1500		1000

Ինչ վերաբերում է Արցախի Հանրապետությունանը, ապա ՓՄՁ սուբյեկտների չափորոշիչները և պետական աջակցության հիմնական ուղղությունները սահմանվում են <<ՓՄՁ պետական աջակցության մասին>> ԱՀ օրենքով, որի համաձայն, գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգման համար հիմք է ընդունվում աղյուսակ 3-ում տրված չափորոշիչները.

Աղյուսակ 3 Արցախում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները

Ոլորտ	ՓՄՁ սուբյեկտներում աշխատողների թվաքանակը (մարդ)		
	Գերփոքր	Փոքր	Միջին
Արդյունաբերություն և նյութական արտադրություն	5	50	100
Շինարարություն և էներգետիկա	5	25	50
Գիտություն և կրթություն	5	25	50

Տրանսպորտ, առևտուր և ծառայություն	5	15	30

Նշենք, որ զարգացած երկրներում ձեռնարկատիրական կառույցների մոտ 70%-ը բաժին է ընկնում փոքր բիզնեսին: ԱՀ-ում այդ ցուցանիշը ևս հուսադրող է, քանզի ՓՄՁ-ի բաժինը բոլոր ձեռնարկությունների մեջ կազմում է մոտ 98.4%[1]: Միևնույն ժամանակ ուսումնասիրությունները փաստում են, որ փոքր և միջին կազմակերպությունները հանրապետության տնտեսության բոլոր ոլորտներում զբաղեցնում են կարևոր դիրքեր՝ դրանցից մի քանիսում կազմելով համապատասխան ոլորտների հիմքը: 2017թ. ըստ ճյուղերի պատկանելիության ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքը տրվում է գծապատկեր 1-ում.

Գծապատկեր 1: ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքը ըստ ճյուղերի 2017 թ.



Գծապատկերից ակնհայտ է, որ ԱՀ ՓՄՁ սուբյեկտների գերակշիռ մասը գործունեություն է իրականացնում առևտրի ոլորտում, ընդ որում՝ դրանց 95.5%-ը հանդիսանում են գերփոքր սուբյեկտներ: Այդ առումով, կարծում ենք, որ նման ճյուղային կառուցվածքը, նշանակալի ազդեցություն չի կարող թողնել երկրի տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի բարելավման վրա:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև Համաշխարհային բանկի «Բիզնեսի վարման» մասին զեկույցին / Doing Business-2019/, որն արդեն հրապարակվում է 17 տարի: Այն ընդգրկում է 190 պետություն: Զեկույցը մշակվում է՝ հաշվի առնելով այն բոլոր նորմերը, որոնք նպաստում կամ արգելակում են բիզնեսի զարգացմանը գործունեության ողջ շղթայի

[1] Տե՛ս www.stat-nkr.am

ընթացքում՝ ներառելով ձեռնարկությունների ստեղծումից մինչև արտաքին առևտրային գործունեությունը, հարկերի վճարումը և դրանց կարգը, ինչպես նաև ներդրողների պաշտպանվածությունը: Համաձայն այդ զեկույցի՝ Հայաստանը 47-րդ տեղում է: Համեմատության համար նշենք, որ նախկին ԽՍՀՄ տարածքից Վրաստանը 7-րդ հորիզոնականում է, Մերձբալթյան երկրները՝ Լիտվան, Էստոնիան և Լատվիան, համապատասխանաբար՝ 11-րդ, 18-րդ և 19-րդ տեղերում են, Ուկրաինան՝ 69-րդ հորիզոնականում: Ինչ վերաբերում է ԱՊՀ երկրներին, ապա հիշյալ ցուցանիշով ՀՀ-ին գերազանցում են՝ Ղազախստանն օրինակ 25-րդ տեղում է, Ադրբեջանը՝ 34-րդ, Ռուսաստանը՝ 28-րդ: ՀՀ-ից հետ է մեկ հորիզոնական Մոլդովան, Բելառուսը 49-րդ հորիզոնականում է, Ուզբեկստանը՝ 69-րդ, Ղրղզստանը 80-րդ, Տաջիստանը 106-րդ: Ցանկի առաջատարը Նոր Զելանդիան է: Նշենք, որ 2018 թ. ևս Նոր Զելանդիան գործարարությամբ զբաղվելու դյուրինության տեսանկյունից աշխարհի առաջատարն էր, այնուհետև՝ Սինգապուրը, երրորդ հորիզոնականը զբաղեցնում է Դանիան, չորրորդը՝ Կորեան, հինգերորդը՝ Հոնկոնգը և Չինաստանը: Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետության վարկանիշն անկում է ապրել, չնայած տարածաշրջանի երկրների հնգյակի շարքում զբաղեցնում է 3-րդ տեղը:[1]

Դժբախտաբար Արցախի Հանրապետությունում գործարարության վիճակը բնութագրող նման հետազոտություններ և համեմատություններ չեն իրականացվում, ինչը խոչընդոտում է տնտեսության զարգացման գործում հիշյալ ոլորտի դերակատարության արձանագրմանը:

Կարևորելով ՓՄՁ ոլորտի դերը ԱՀ տնտեսության զարգացման գործում՝ երկրի կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում ՓՄՁ-ի զարգացման և պետական աջակցության ուղղությամբ: ՓՄՁ զարգացման քաղաքականության և ռազմավարության մշակման գործառույթները վերապահված են ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը, որը նաև ՓՄՁ ոլորտի պետական աջակցության ծրագրերի մշակման համար պատասխանատու կառույց է: ՓՄՁ ոլորտի զարգացումն ապահովելու նպատակով մշակվում են ամենամյա տարեկան ծրագրեր, որոնց իրականացնողները Արցախի ներդրումային հիմնադրամը /ԱՆՀ/ և Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամն են /ԳԳԱՀ/:[2] Այսպես՝ ՓՄՁ աջակցության նպատակով, ԱՆՀ-ն իրականացնում է ներքոհիշյալ ծրագրերը.[3]

✓ <<**ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորում**>>:

---

[1] *Տե՛ս http://www.doingbusiness.org/*

[2] *<<ՓՄՁ պետական աջակցության մասին>> ԱՀ օրենք*

[3] www.aif.am

✓ <<**ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջմղման աջակցություն**>>:

✓ <<**ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն**>>:

✓ <<**ՓՄՁ սուբյեկտների մոտ նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցություն**>>:

Վերոհիշյալ ծրագրերից, ֆինանսական աջակցության տեսակետից կարևորվում է <<ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման>> ծրագիրը: Վերլուծությունները ցույց են տալիս, որ ծրագրի գործարկման տասը տարիների ընթացքում Հիմնադրամը ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տարեկան տոկոսադրույքների սուբսիդավորման համար ծախսել է 4.5 մլրդ դրամ, որից 265.1 մլն դրամը՝ 2017 թվականին: Ծրագրի բաշխվածքն ըստ ՓՄՁ սուբյեկտների գործունեության ոլորտների տրված է գծապատկեր 2-ում.[1]

Գծապատկեր 2:

2017թ. ծրագրի շրջանակներում սուբսիդավորված գումարները՝ ըստ տնտեսության ճյուղերի (տոկոսային արտահայտությամբ)



Գծապատկերից տեսանելի է, որ տարվա կտրվածքով ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանն ուղղված միջոցների 42,5 տոկոսը ուղղվել է արդյունաբերության ոլորտում գործող ընկերությունների աջակցությանը:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ 2015թ. կտրուկ կրճատվել ենֆինանսական աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների քանակը և

[1] www.aif.am

վարկավորման գումարները՝ պայմանավորված հիմնականում բանկերի կողմից վարկավորման գործընթացի ժամանակավոր կասեցմամբ: 2016թ. չնայած ապրիլյան պատերազմի անդառնալի կորուստների և տնտեսությանը հասցրած վնասներին, ՓՄՁ սուբյեկտների ակտիվությունը պահպանվել է: 2017թ. Հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ վարկավորված ՓՄՁ սուբյեկտների քանակը ավելացել է ավելի քան երկու անգամ: Սակայն երկրում, չնայած փոքր ձեռնարկությունների քանակական առավելությանը, դրանք խոշոր ձեռնարկություններին զիջում են իրենց արդյունավետությամբ ու արտադրողականությամբ, ինչը խոչընդոտ է հանդիսանում այս ոլորտում նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Վերոհիշյալից ելնելով՝ կարծում ենք, որ Հիմնադրամի կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրերի արդյունավետության բարձրացման և նպատակայնությանն ու հասցեականության ապահովման համար անհրաժեշտ է շարունակական քայլեր ձեռնարկել աջակցության ցուցաբերման մեխանզիմների ու ընթացակարգերի կատարելագործման նոր մեխանիզմների մշակման և գործողության մեջ դնելու ուղղությամբ: Ակնհայտ է նաև, որ ԱՆՀ-ի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակում մեծ աջակցություն չի տրամադրվում երկրի համար կարևոր և նշանակալի ոլորտի՝ գյուղատնտեսության զարգացմանը: Այդ առումով, ոլորտի զարգացմանը ուղղված ծրագերի իրականացումը մյուս կառույցի՝ ԳԳԱՀ-ի ռազմավարական նպատակն է: ԳԳԱՀ-ն իրականացնում է տարբեր բնույթի աջակցության ծրագրեր, այդ թվում.[1]

- ✓ **<<Հողօգտագործության զարգացմանն ուղղված աջակցություն>>:**
- ✓ **<<Անասնապահության զարգացմանն ուղղված աջակցություն>>:**
- ✓ **<<Մատուցվող գյուղատնտեսական մեքենայացված ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված աջակցություն>>:**
- ✓ **<<Գյուղատնտեսական մթերքների մթերման, պահպանման, վերամշակման և իրացման ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված աջակցություն>>:**

Արձանագրված տվյալների համաձայն՝ 2008-2018թթ. ժամանակահատվածում ԳԳԱՀ-ի կողմից իրականացվել է 69,973,817.7 հազար դրամի աջակցություն: Ընդհանուր աջակցության մեջ 55%-ը կազմում են Հիմնադրամի կողմից տրամադրված փոխառությունները: 2008-2018թթ. ժամանակահատվածում իրականացված աջակցության 17%-ը՝ 11,817,738.6 հազար դրամը, կազմում է միայն 2018թ. իրականացված աջակցությունը: Ընդգծենք, որ առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման գծով վերջին երեք տարվա

[1] *Տե՛ս* www.agrofund.am

կտրվածքով դիտվել է նվազման միտում: Նշված ժամանակահատվածում կարևորվում է ուղղակի առուվաճառքը, քանի որ շուկայականից ցածր գներով նյութատեխնիկական միջոցներ ձեռքբերելը հնարավարություն ընձեռեց գյուղատնտեսությամբ զբաղվող սուբյեկտներին իրացնել իրենց կողմից արտադրված գյուղմթերքը, ինչպես նաև մարել ԳԳԱՀ-ի նկատմամբ ունեցած իրենց ապառքները[1]:

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ ԱՆՀ-ն և ԳԳԱՀ-ն իրենց գործունեությամբ կարող են նպաստել ՓՄՁ սուբյեկտների գործունեության ընդլայնմանը: Սակայն կարծում ենք, որ տնտեսության որակական ցուցանիշների բարելավում կդիտվի միայն այն դեպքում, երբ ծրագրերի իրականացումը ուղեկցվի նաև տնտեսության ճյուղերում նոր տեխնոլոգիաների ներդրմամբ, երկրի տարածքային համաչափ զարգացմամբ, քաղաքային և գյուղական վայրերում աղքատության կրճատմամբ, երկրի պարենային ինքնաբավարարվածության ապահովմամբ:

ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշներից կարևորում ենք նաև ՀՆԱ-ի մեջ դրա մասնակցության բաժնի դիտարկումը: Համաշխարհային փորձը ապացուցում է, որ ՓՄՁ-ն ապահովում է ՀՆԱ-ի որակի և կառուցվածքի մինչև 40-50%-ը: Հարկ է նշել Թայվանի փորձը, որտեղ ՓՄՁ-ին բաժին է ընկնում ՀՆԱ-ի 45%-ը և զբաղվածության 78%-ը, ինչը տնտեսության զարգացման մեջ նշված ոլորտին տալիս է որոշիչ դեր[2]: 2013-2017թթ ընթացքում ԱՀ ՀՆԱ-ի մեջ ՓՄՁ ոլորտի մասնակցության ցուցանիշը ներկայացված է գծապատկեր 3-ում.

Գծապատկեր 3 2013-2017թթ ընթացքում ԱՀ ՀՆԱ-ի մեջ ՓՄՁ ոլորտի մասնակցության ցուցանիշը



[1] Տե՛ս www.agrofund.am

[2] Տե՛ս ***Бирюков А.*** *Развитие малого и среднего бизнеса - локомотив экономики (опыт Тайваня) //Вопросы экономики. - 2014. - № 9., стр.128*

Գծապատկերից տեսանելի է, որ վերջին տարիներին հանրապետությունում արձանագրվում է հիշյալ ցուցանիշի դինամիկ աճ: Երկրի ՀՆԱ-ում ՓՄՁ մասնաբաժինը միջինում տատանվում է 33-34% շրջանակներում՝ 2017թ. կազմելով 40.8%: Համեմատելով տվյալ ցուցանիշը ՀՀ-ի համանման ցուցանիշի հետ՝ կարող ենք փաստել, որ այն ԱՀ-ում այն ավելի բարենպաստ է, քանզի ՀՀ-ում հիշյալ ցուցանիշը 2013-2017թթ. ընթացքում աճել է 0,2%-ով՝ 2017թ. կազմելով ընդամենը 34,4%:

ԱՀ-ում գործարար միջավայրի բարելավման կարևոր քայլ կարող ենք համարել նաև բիզնեսի ինստիտուցիոնալ մուտքի ու ելքի արգելքների կրճատումը: Հանրապետությունում պետական գրանցում ստացող անհատ ձեռնարկատերերն ու կազմակերպությունները հարկ վճարողի հաշվառման համարն այժմ ստանում են պետական ռեգիստրի միջոցով: Նրանք այլևս ստիպված չեն լինում նախկին ավելորդ քաշքշուկներով ձեռք բերել իրենց հաշվառման համարը: Հաշվառման կանգնելուց հետո առաջին մեկ տարվա ընթացքում հարկային մարմնի կողմից առնվազն երկու անգամ կազմակերպվում են օժանդակման այցելություններ նոր ստեղծված հարկ վճարողներին՝ վերջիններիս կողմից ցանկություն հայտնելու դեպքում:[1] 2016թ. մշակվել է «Նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության և սպասարկման ծառայությունների նպատակով այցելությունների կանոնակարգ», որի նպատակն է ապահովել հարկ վճարողներին բարձրորակ սպասարկմամբ, բացատրական աշխատանքների իրագործման միջոցով բարձրացնել նրանց իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև ներկայացնել գործող հարկային և պարտադիր վճարների մասին օրենսդրության և դրանց հետ կապված այլ նորմատիվ ակտերի պահանջները:

ՓՄՁ ոլորտի առաջխաղացման տեսակետից կարևոր են նաև հարկային արտոնությունները, որոնք ավելի գրավիչ են դարձնում ոլորտը և ստեղծում բոլոր նախադրյալները դրա զարգացման, ինչպես նաև ներդրումների ներգրավման համար: Հանրապետության հարկային ծառայության կողմից վերջին մի քանի տարիների ընթացքում նախաձեռնվել են մի շարք օրենսդրական բարեփոխումներ, որոնք հիմնականում միտված են հարկային վարչարարության պարզեցմանն ու բարելավմանը: Փոփոխությունների մի խումբը միտված է փոքր ձեռնարկատիրական գործունեության համար փաստաթղթաշրջանառության բեռի թեթևացմանը, պարզեցմանը: Այսպես՝ նախկին ամսական կամ եռամսյակային պարբերականության փոխարեն կիսամյակային հաշվարկ-հաշվետվություն ներկայացնող անհատ ձեռնարկատերերի համար սահմանվում է հաշվարկ-հաշվետվությունների փաթեթի ներկայացման մեկ միասնական ժամկետ, որով վերջիններիս

[1] ***Նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության և սպասարկման ծառայությունների նպատակով այցելությունների կանոնակարգ»***

շփումները հարկային մարմնի հետ հասցվում է նվազագույնի: Վերջին տարիներին զգալիորեն կրճատվել է նաև ստուգումների քանակը:

Մեծ դեր են խաղում նոր ստեղծված հարկ վճարողների կողմից գործունեությունը սկսելու ամսվանից 3 ամսվա ընթացքում առևտրի հարկի, հաստատագրված և արտոնագրային վճարների կատարումից ազատումը, ինչը հնարավորություն է տալիս հարմարվելու և կայունանալու գործող միջավայրում: ԱՀ-ի մշակույթի կարևորագույն սեգմենտների՝ գորգագործության պահպանման համար արտադրողների կողմից արտադրված ձեռագործ գորգերի իրացումից ստացված եկամուտը, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամուտը ազատված է շահութահարկից, եկամտային հարկից, ԱԱՀ-ից (գյուղատնտեսական արտադրանքը մինչև 2021թ.): ԱԱՀ-ից ազատված է նաև որոշ գյուղատնտեսական տեխնիկաների, պարարտանյութերի, մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմացուների իրացումը: Տեղական մի շարք արտադրատեսակների զարգացմանն է ուղղված գյուղատնտեսական մթերքների ավարտուն տեխնոլոգիական ցիկլ անցնող ապրանքների վերամշակման մասով գործող ԱԱՀ-ից ազատման արտոնությունը: Իսկ ԱՀ մաքսային սահմանից դուրս <<արտահանում ազատ շրջանառութան համար>> մաքսային ռեժիմով արտահանվող ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ կիրառվում է զրոյական դրույքաչափ: [1]

Կարևորելով հարկային համակարգի և գործարար միջավայրի փոխառնչության հիմնախնդիրը՝ կարող ենք հաստատել, որ **պետության կողմից իրականացվող հիշյալ հարկային համակցված միջոցառումների համակարգը անկասկած կապահովի տնտեսական հավասարակշռվածություն և կայունություն, կնպաստի գործարար միջավայրի ու ներդրումային ակտիվացմանն, առանձին տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը: Սակայն հարկ ենք համարում ընդգծել նաև, որ երկրում հարկային օրենսդրությունը չափազանց հաճախ է փոփոխվում, և բիզնեսները չեն հասցնում հետևել շարունակական փոփոխություններին:**

Հանրապետությունում ՓՄՁ ոլորտի ընդլանմանը նպաստող ևս մեկ քայլ է 2017թ, նոյեմբերի 25-ին «Արցախի ՓՄՁ-ի զարգացման ասոցիացիա» հասարակական կազմակերպության ստեղծումը: Այն նպատակ ունի աջակցել փոքր և միջին ձեռնարկություններին՝ պաշտպանելով նրանց շահերն ու իրավունքները: Այն իր անդամ ՓՄՁ սուբյեկտներին տրամադրում է անվճար խորհրդատվություն հարկային, իրավաբանական և այլ հարցերով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխարհում ընտանիքի անդամների մասնակցությամբ փոքր բիզնես վարելու ավանդույթը դարերի

[1] *Տե՛ս http://www.arlexis.am/, ԼՂՀ իրավական տեղեկատվական համակարգ*

պատմություն ունի: Ըստ համաշխարհային վիճակագրության՝ աշխարհում ընկերությունների 2/3-ը հիմնված է հենց ընտանեկան բիզնեսի վրա: Հայաստանում, չնայած ընտանեկան ձեռնարկատիրությամբ զբաղվելու բազմամյա փորձերին, այդ մոդելի բիզնեսին աջակցող օրենք ընդունվել է միայն 2014թ.: Ըստ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 266 հոդվածի՝ ընտանեկան ձեռնարկատիրություն համարվում է «ձեռնարկատիրական եկամուտ ստանալու նպատակով ընտանիքի մեկից ավելի անդամների կողմից համատեղ իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը», ընդ որում, որպես ընտանիքի անդամներ դիտարկվում են ծնողը, ամուսինը, զավակը, քույրը, եղբայրը: Օրենքում հստակ նշվում է, որ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ չեն կարող համարվել առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, արտոնագրային հարկ վճարողները, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողները և (կամ) ներմուծողները:

Ընտանեկան բիզնեսն ազատվում է բոլոր տեսակի ձեռնարկատիրական հարկերից և շարունակում է մնալ ընտանեկան, քանի դեռ տարեկան շրջանառությունը չի գերազանցել 18 մլն դրամը: Ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված ընտանիքի անդամներին ընտանեկան ձեռնարկատիրության մասով հարկային գործակալի կողմից վճարվող հարկվող եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվում և վճարվում է յուրաքանչյուր անձի համար ամսական 5 հազար դրամի չափով:

Կարծում ենք, որ Արցախում ևս անհրաժեշտ է կիրառել նման մոտեցում, քանի որ ընտանեկան ձեռնարկատիրությունը կարող է՝

- ✓ լուծել սոցիալական խնդիր՝ ընտանիքի անդամներին ապահովում է աշխատանքով,
- ✓ թեթևացնել պետության բեռը, որն իր ռեսուրսները կարող է ուղղել այլ այլ խնդիրների իրացմանը,
- ✓ խթանել իր գործունեությամբ գործընկերների հետ հարաբերություններում հարկերի գեներացմանը:

Տնտեսական ու սոցիալական նշանակությունից բացի՝ ընտանեկան բիզնեսը փոխում է մտածելակերպը, մասնավորապես՝ կրթության նկատմամբ վերաբերմունքի հարցում: Այսպես, ծնվելով «բիզնեսի մեջ» և հետագայում ներգրավվելով դրանում՝ ընտանիքի երեխաները հստակ գիտակցում են՝ ինչ գիտելիքներ են իրենց անհրաժեշտ: Արդյունքում կրթություն ստանալը, կոնկրետ մասնագիտություն կամ հմտություն ձեռք բերելը դառնում է ոչ թե ինքնանպատակ քայլ, այլ՝ անհրաժեշտություն:

Խոսելով բիզնես-կրթության մասին՝ հարկ է շեշտել, որ ԱՀ-ում այսօր աշխատաշուկայում հագեցված մանագիտություններից է տնտեսագիտությունը: Այնուամենայնիվ, երկրում իսպառ բացակայում է բիզնես-կրթությունը (կորպորատիվ բիզնես-դպրոցներ): Մինչդեռ արդի

պայմաններում կրթական համակարգին ներկայացվող հիմնական պահանջներից մեկը տնտեսության ապահովումն է որակյալ կադրերով, ինչը ենթադրում է շուկայի պահանջներին համապատասխան ուսումնական ծրագրերի նորացում: Այդ համատեքստում առաջարկում ենք բիզնես-դպրոցի ներդրում, որի հիմնական գործառույթները պետք է լինեն՝

- ձեռնարկատիրական գիտելիքների, հմտությունների, նորարական գաղափարների մշակումը,
- գործարարություն սկսելու համար հերթական քայլերի մանրակրկիտ ոսումնասիրումը,
- ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի ուսումնասիրումը, համեմատություն միջազգային պրակտիկայում կիրառվող նորմերին,
- գործարարության ծրագրերի կազմումը, քննարկումը,
- ձեռնարկատերերի նոր շերտի ձևավորումը,
- լավագույն և իրատեսական գաղափարների ֆինանսական աջակցությունը:

Բիզնես դասընթացները պետք է վարվեն ոլորտի առաջատար մասնագետների, ինչպես նաև հաջողակ գործարարների կողմից, լսարանը բաժանելով դպրոցական, համալսարանական և հետբուհական հատվածների, քննարկելով, կիսվելով վերջիններիս հաջողության փորձով: Գնահատելով կրթության որակը՝ անրաժեշտ է դիտարկել «արտաքին արդյունավետության» ցուցանիշները, որոնք բնութագրում են կրթական համակարգի կողմից պատրաստվող կադրերի համապատասխանությունը շուկայի պահանջներին: Տվյալ համատեքստում կարևորվում է կրթության մակարդակի և տնտեսական ակտիվության միջև կապերի բացահայտումը:

Այսպիսով՝ ամփոփելով ընդգծենք, որ ԱՀ-ում ՓՄՁ–ի ընդլայնումը պետք է դիտարկել որպես տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժ, քանզի ոլորտը մեծ դերակատարություն ունի ինչպես ՀՆԱ–ի ձևավորման, այնպես էլ զբաղվածության և հարկային մուտքերի ապահովման, սոցիալական լարվածության նվազեցման գործում:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը:

ՀՏԴ 336.663
Տնտեսագիտություն

Գոհար ՍԱՐԳՍՅԱՆ
ԱրՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ, ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱՀ ՍՆՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հոդվածում նպատակ է դրվել որոշելու կազմակերպության ֆինանսական պարբերաշրջանի, որպես ընթացիկ կապիտալի կառավարման կարևոր ցուցանիշի, փոխկապվածության բնույթը ընթացիկ կապիտալի կառավարման երկու նպատակային ցուցանիշների՝ կազմակերպության ակտիվների շահութաբերության և իրացվելիության հետ: Նշված խնդրի լուծումն իրականացվել է Արցախի Հանրապետության սննդի արտադրության 27 կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվության ռեգրեսիոն վերլուծության միջոցով: Բացահայտվել է, որ իրացվելիության բարձրացումն ապահովելու համար կազմակերպությունները պետք է մեծացնեն իրենց ֆինանսական պարբերաշրջանը, իսկ շահութաբերությունը բարձրացնելու համար ձգտեն այն (ֆինանսական պարբերաշրջանը) հասցնել զրոյական արժեքին: Ուստի կազմակերպությունները, կախված ֆինանսական պարբերաշրջանի նշանից (բացասական, թե դրական), պետք է կիրառեն տարբեր ռազմավարություններ՝ կա՛մ նվազեցնեն, կամ ավելացնեն ֆինանսական պարբերաշրջանի մեծությունը՝ պահմանելով միևնույն ժամանակ իրացվելիության օպտիմալ մակարդակը:

Բանալի բառեր՝ *աշխատանքային կապիտալ, ընթացիկ կապիտալի կառավարում, ֆինանսական պարբերաշրջան, ակտիվների շահութաբերություն, ընթացիկ իրացվելիություն*

Г. Саркисян

ОЦЕНКА ВЗАИМОСВЯЗИ ПОКАЗАТЕЛЕЙ ФИНАНСОВОГО ЦИКЛА, РЕНТАБЕЛЬНОСТИ И ЛИКВИДНОСТИ ОРГАНИЗАЦИЙ ПИЩЕВОГО ПРОИЗВОДСТВА РЕСПУБЛИКИ АРЦАХ

В статье была поставлена цель – определить характер взаимосвязанности финансового цикла организации как важного показателя управления текущим капиталом, с двумя целевыми показателями управления текущим капиталом: рентабельностью и ликвидностью активов организации. Решение данной проблемы было выполнено посредством регрессионного анализа годовой финансовой отчетности 27 организаций по производству продуктов питания Республики Арцах. Было выявлено, что для обеспечения повышения ликвидности, организации должны увеличивать свой финансовый цикл, а для повышения рентабельности – стремиться довести его (финансовый цикл) до нулевого значения. Поэтому организации, в зависимости от знака финансового цикла (отрицательного или положительного), должны применять различные стратегии – либо снижать, либо увеличивать величину финансового цикла, удерживая при этом оптимальный уровень ликвидности.

Ключевые слова: *рабочий капитал, управление текущим капиталом, финансовый цикл, рентабельность активов, текущая ликвидность*

G. Sargsyan

THE ASSESSMENT OF INTERRELATION OF THE FINANCIAL CYCLE, THE PROFITABILITY AND THE LIQUIDITY INDICATORS IN ARTSAKH REPUBLIC'S FOOD PRODUCTION ORGANIZATIONS

The purpose of the article is to determine the nature of the financial cycle of the organization as an important indicator of current capital management, the nature of the interdependence of current capital management's two target indicators: profitability and liquidity of the organization. The solution of this problem is carried out by means of regression analysis of the annual financial statements of 27 food production organizations of the Republic of Artsakh. It was revealed that organizations should increase their financial cycle for ensuring their liquidity and for increasing the profitability-to strive to bring it (financial cycle) to zero. Therefore, organizations, depending on the sign of the financial cycle (negative or positive), should apply different strategies - either reduce or increase the value of the financial cycle, at the same time preserving the optimal level of liquidity.

Keywords*: working capital, current capital management, financial cycle, return on assets, current liquidity*

Կազմակերպությունների իրացվելիության կառավարման գործընթացում առանձնահատուկ ուշադրություն պետք դարձվի ընթացիկ (աշխատանքային) կապիտալի կառավարմանը: Ընթացիկ կապիտալի տակ (Working Capital) ընդհանուր առմամբ հասկացվում է կազմակերպության ընթացիկ գործառնություններում ներդրված միջոցների գումարը՝ հանած կազմակերպության ընթացիկ պարտավորությունները: Սովորաբար

ընթացիկ կապիտալի մեծությունը որոշվում է որպես ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների տարբերություն:

Կազմակերպության ընթացիկ (աշխատանքային) կապիտալի կառավարումն իրականացվում է ընկերության շահութաբերության աճի և նրա իրացվելիության պահպանման համապատասխան:[1] Այս հանգամանքը բարդեցնում է կազմակերպության ընթացիկ կապիտալի կառավարման գործընթացը, քանի որ շահութաբերության բարձրացման և իրացվելիության բարձրացման նպատակները հիմնականում հակասում են միմյանց, ինչը բացառում է երկու խնդիրների միաժամանակյա կատարման հնարավորությունը: Գործնականում այս իրավիճակը նշանակում է, որ շահութաբերության ավելացմանն ուղղված որոշումները կարող են չհանգեցնել իրացվելիության բարձրացման և հակառակը: Այս հակասությունը կարելի է վերացնել, ենթադրելով, որ ընթացիկ կապիտալի կառավարման հիմնական նպատակը շահութաբերության աճն է, քանի որ հենց շահութաբերությունն է հանդիսանում կազմակերպության կապիտալի արժեքի ստեղծման անմիջական շարժիչը: Միևնույն ժամանակ, իրացվելիությունը պետք է դիտարկվի որպես շահութաբերության աճի սահմանափակում: Այսպիսով՝ ընթացիկ կապիտալի կառավարման նպատակը կարող է ձևակերպվել որպես ընկերության շահութաբերության աճ՝ ապահովելով անհրաժեշտ իրացվելիության մակարդակ: Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել և բացահայտել կազմակերպության ֆինանսական պարբերաշրջանի կապը իրացվելիության և շահութաբերության հետ:

Մինչ նշված խնդրի իրականացնելը՝ ներկայացնենք այդ ցուցանիշների հաշվարկման մոտեցումները:

Կազմակերպության ընթացիկ կապիտալի կառավարման գործընթացի արդյունքներն արտացոլող ցուցանիշներից մեկը, սովորաբար, հանդիսանում կազմակերպության գործարար ակտիվությունը բնութագրող ֆինանսական պարբերաշրջանի (Financial Cycle – FC) մեծությունն է: Ըստ Վ.Վ. Կովալյովի[2]՝ այն բնութագրում է ընթացիկ արտադրական գործունեության իրականացման հետ կապված դրամական միջոցների արտահոսքի և դրանց՝ որպես արտադրաֆինանսական գործունեության արդյունքի, ներհոսքի միջև միջին տևողությունը և կարող է որոշվել հետևյալ կերպ.

$$FC = ITP + ARP - APP, \qquad (1)$$

որտեղ՝ ITP՝ պաշարների շրջանառելիության տևողությունն է,

ARP՝ դեբիտորական պարտքերի շրջանառելիության տևողությունը,

APP՝ կրեդիտորական պարտքերի շրջանառելիության տևողությունը:

---

[1] Տե՛ս ***Shin, Soenen,*** *1998*

[2] Տե՛ս ***Ковалев****, 2002, էջ 473*

Գործնականում գոյություն ունի կազմակերպության ֆինանսական պարբերաշրջանը հաշվարկելու առնվազն երկու հիմնական եղանակներ՝ ավանդական ֆինանսական պարբերաշրջանը (Cash Conversion Cycle – CCC) և զուտ առևտրային պարբերաշրջանը (Net Trade Cycle – NTC): Երկու եղանակն էլ նախատեսում են պարբերաշրջանի մեծության հաշվարկ և միմյանցից տարբերվում են բաղկացուցիչ մասերի՝ պաշարների, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի շրջանառելիության տևողության որոշմամբ:

Ֆինանսական պարբերաշրջանի հաշվարկման ավանդական մեթոդաբանության համաձայն՝ պաշարների, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի առաջացմանը տանող հոսքերը տարբեր են: Այսպես՝ պաշարները վերածվում են վաճառքի ինքնարժեքի, դեբիտորական պարտքերը՝ հասույթի, իսկ կրեդիտորական պարտքերը՝ ընկերության գնումների: Մի շարք հեղինակների[1] կարծիքով՝ կազմակերպության ֆինանսական պարբերաշրջանի տարբեր կազմող հոսքերի նման մեկնաբանումը թույլ չի տալիս այդ տարրերը հասցնել միասնական ինտեգրալ ցուցանիշի: Այդ իսկ պատճառով նրանք առաջարկում են օգտագործել հասույթով նորմավորված ֆինանսական պարբերաշրջանը կամ զուտ առևտրային պարբերաշրջանը, որը տարբերվում է նախորդից նրանով, որ վերջինիս տարրերը շրջանառվում են նույն հոսքում՝ կազմակերպության որոշակի ժամանակահատվածի հասույթում:

Կազմակերպության շահութաբերությունը տվյալ խնդրի լուծման համատեքստում արտահայտվում է իր ակտիվների շահութաբերության ցուցանիշի միջոցով: Մենք առավել նպատակահարմար ենք գտնում օգտագործել զուտ գործառնական ակտիվների շահութաբերության ցուցանիշը (Return on Net Operating Assets – RNOA), որը որոշվում է հետևյալ կերպ[2].

$$RNOA = \frac{EBI^{adj}}{NOA}, \qquad (2)$$

որտեղ՝ EBI^{adj}՝ զուտ շահույթի վերահաշվարկված /ճշգրտված/ գումարն է, NOA (Net Operating Assets)՝ զուտ գործառնական ակտիվներն են:

Հաշվի առնելով, որ կազմակերպության իրացվելիությունը բարդ և համապարփակ հասկացություն է, որպես իրացվելիության միջոց ընտրվել է ընթացիկ իրացվելիության գործակիցը (Current Ratio), որը սահմանվում է որպես ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հարաբերակցություն:

Նշենք, որ համաշխարհային գրականության մեջ վերջին տարիների ընթացքում կազմակերպության շահութաբերության վրա ընթացիկ

[1] *Տե՛ս , օրինակ,* ***Shin, Soenen****, 1998*

[2] *Տե՛ս* ***Волков, Никулин,*** *2009, էջ 65-69*

կապիտալի կառավարման արդյունավետության ազդեցության խնդրի ուսումնասիրմանը վերաբերող զգալի թվով հետազոտություններ են կատարվել: Ընդհանուր առմամբ, չնայած որոշակի առանձնահատկությունների առկայությանը, որոնք վերաբերում են առանձին ոլորտներին և դիտարկման ժամանակահատվածներին, նշված աշխատանքներն էմպիրիկ հաստատում են այն փաստը, որ ընկերության ֆինանսական պարբերաշրջանի նվազումը հանգեցնում է ակտիվների շահութաբերության ավելացմանը:

Մեր կողմից վերը նշված ցուցանիշների կապը բացահայտելու նպատակով ուսումնասիրվել են ԱՀ սննդի արտադրության 27 կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների տվյալները, որոնց հիման վրա կազմվել են ռեգրեսիոն մոդելներ:

Սննդի արդյունաբերությունը ԱՀ տնտեսության հիմնարար ճյուղերից մեկն է, քանի որ ապահովում է երկրի բնակչության զարգացման բարձր մակարդակ և կյանքի որակ: Այս ոլորտն արտադրում է զանգվածային սպառման արտադրանք, որը վայելում է առօրյա պահանջարկն ու արագ իրացվում է, ինչի արդյունքում կազմակերպությունների ֆինանսական պարբերաշրջանը կարճ է: Սննդի արդյունաբերության կազմակերպություններին բնորոշ առանձնահատկությունների շարքում նշվում են այնպիսինները, ինչպիսիք են արտադրվող արտադրանքի բարձր նյութատարությունը, արտադրության և աշխատուժի օգտագործման սեզոնայնության պատճառով տարվա ընթացքում արտադրական միջոցների անհավասար բեռնվածությունը, պատրաստի արտադրանքի պահպանման և իրացման սահմանափակ ժամկետները, կազմակերպությունների առաջադեմ տեխնոլոգիաներով և ժամանակակից տեխնիկայով հագեցվածության անհրաժեշտությունը, արտադրության ուղղվածությունը սպառողի վրա, ինչը դարձնում է սննդի արդյունաբերությունը զգայուն պահանջարկի փոփոխության նկատմամբ, հետևաբար նշված ոլորտում ընթացիկ ակտիվների կառավարումը իրացվելիության ֆինանսական կառավարման գործընթացում մեծ դեր է կատարում:

Էկոնոմետրիկ ռեգրեսիոն մոդելները կառուցելու ժամանակ մեր կողմից օգտագործվել են երկու կախյալ փոփոխականներ՝ ակտիվների շահութաբերությունը և ընկերության իրացվելիությունը:

Մոդելների հիմնական անկախ փոփոխականը ընկերության ֆինանսական պարբերաշրջանի ցուցանիշն է, որը ներկայացված է զուտ առևտրային պարբերաշրջանի տեսքով (NTC): Բացի այդ, ակտիվների շահութաբերության վերլուծության ժամանակ դիտարկվել են երկու տեսակի մոդելներ՝ ներառելով վերահսկող փոփոխական (երկգործոնային մոդելներ) և առանց ներառման (միագործոն մոդելներ): Որպես վերահսկող փոփոխական ընտրվել է իրացման շահութաբերության ցուցանիշը (Return on Sales – ROS), որը ցույց է տալիս վաճառքի զուտ գործառնական եկամտի

մասնաբաժինը հաշվետու ժամանակաշրջանի իրացումից հասույթում և ակտիվների շահութաբերության հիմնական շարժիչներից մեկն է: Միաժամանակ ուսումնասիրվել է ընթացիկ իրացվելիության և ակտիվների շահութաբերության փոխկապվածությունը:

Արդյունքում կառուցվել են աղյուսակ 1-ում ներկայացված ռեգրեսիոն մոդելները:

Աղյուսակ 1.

Հետազոտության ռեգրեսիոն մոդելները

Կախյալ փոփոխա-կաններ	Մոդելը	Անախ փոփոխականներ	
		Զուտ առևտրային պարբերաշրջան	Ընթացիկ իրացվելիություն
Ակտիվների շահութաբե-րություն	Երկգործոն մոդել	$RNOA = a_0 + a_1 \cdot NTC + a_2 \cdot ROS + s_i$	-
	Միագործոն մոդել	$RNOA = b_0 + b_1 \cdot NTC + t_i$	$RNOA = c_0 + c_1 \cdot CR + u_i$
Ընթացիկ իրացվելի-ություն	Միագործոն մոդել	$CR = d_0 + d_1 \cdot NTC + v_i$	-

Ուսումնասիրվող ցուցանիշների նկարագրողական վիճակագրությունը ներկայացված է աղյուսակ 2-ում: Ինչպես հետևում է աղյուսակ 2-ից, ընտրանքի մեջ են ընկել ինչպես շահութաբեր, այնպես էլ ոչ շահութաբեր կազմակերպությունները: Ֆինանսական պարբերաշրջանը ուսումնասիրվող կազմակերպություններում ընդունում է ինչպես դրական, այնպես էլ բացասական արժեքներ, ընդ որում միջին ֆինանսական պարբերաշրջանը դրական է:

Աղյուսակ 2.

Ռեգրեսիոն մոդելների փոփոխականների նկարագրային վիճակագրությունը
/ԱՀ սննդի արտադրության կազմակերպություններում/[1]

Փոփոխական[2]	Միջին արժեքը	Ստանդարտ շեղումը	Նվազագույն արժեքը	Առավելագույն արժեքը
RNOA	8,4	216,5	-891,0	356,3

[1] *Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից:*

[2] *RNOA, CR և ROS ցուցանիշները վերցված են տոկոսներով, իսկ NTC՝ օրերով:*

CR	223,8	246,6	0,2	956,3
ROS	-15,9	65,7	-293,5	27,1
NTC	103,2	449,5	-889,0	1995,9

Աղյուսակ 3-ում ներկայացված են մոդելների ցուցանիշների գնահատման արդյունքները, առաջին դեպքում ընդունելով որպես կախյալ փոփոխական ակտիվների շահութաբերությունը, երկրորդ դեպքում՝ ընթացիկ իրացվելիությունը:

Աղյուսակ 3.

Գծային ռեգրեսիոն մոդելների պարամետրերի գնահատման արդյունքները
/ԱՀ սննդի արտադրության կազմակերպություններում/[1]

Անկախ փոփոխականները	RNOA			CR
Constant	27,785	11,671	33,810	192,627
NTC	-0,076	-0,031	-	0,302
ROS	0,720	-	-	-
CR	-	-	-0,113	-

Ֆինանսական պարբերաշրջանի աճը պաշարների և դեբիտորական պարտքերի լրացուցիչ ներդրումների շնորհիվ հանգեցնում է ակտիվների շահութաբերության նվազեցմանը: Հետևաբար, ակտիվների շահութաբերությունը բարձրացնելու նպատակով կազմակերպությունները պետք է նվազեցնեն իրենց ֆինանսական պարբերաշրջանը: Սակայն վերջինիս չափից ավելի նվազումը (այդ թվում՝ այդ ցուցանիշի բացասական արժեքին հասնելը) կարող է կազմակերպության համար անբարենպաստ հետևանքների հանգեցնել ինչպես շահութաբերության, այնպես էլ իրացվելիության տեսանկյունից: Հետևաբար, բացասական ֆինանսական պարբերաշրջանով ընկերությունների համար շահավետ կլինի ոչ թե նվազեցնել, այլ մեծացնել իրենց ֆինանսական պարբերաշրջանը: Վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ կազմակերպությունները շահութաբերության աճի նպատակով ձգտում են զրոյական ֆինանսական պարբերաշրջանի: Կազմակերպությունների զրոյական ֆինանսական պարբերաշրջանի առկայությունը, փաստորեն, նշանակում է, որ ժամանակի պահերը, երբ կազմակերպությունը իր արտադրանքի համար ստանում է դրամական միջոցներ և երբ կատարում է հաշվարկները իր մատակարարների հետ, համընկնում են: Այլ կերպ ասած, այդ դեպքում կազմակերպությունը դրամական միջոցների դեֆիցիտ չի զգում և արտաքին աղբյուրներից իր գործառնությունները ֆինանսավորելու կարիք չունի:

[1] *Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից:*

Բացի այդ՝ վերլուծության արդյունքներից հետևում է նաև ակտիվների շահութաբերության և ընթացիկ իրացվելիության ցուցնիշների միջև հակադարձ կախվածությունը, ինչն էլ շահութաբերության աճի արգելք է, քանզի իրացվելիության գործակցի արժեքի նորմայից իջեցումը բերում է կազմակերպությանը անվճարունակության:

Ի տարբերություն վերը բերված կախվածության՝ ֆինանսական պարբերաշրջանի ցուցանիշի և ընթացիկ իրացվելիության մեծության միջև եղած կապն ուղղակի բնույթ է կրում. ֆինանսական պարբերաշրջանի մեծության աճը հանգեցնում է ընթացիկ իրացվելիության ցուցանիշի աճին: Ընթացիկ իրացվելիության ցուցանիշի արժեքի ավելացումը ենթադրում է կազմակերպության ընթացիկ ակտիվների մեծության ավելացում կամ ընթացիկ պարտավորությունների չափի նվազում: Հաշվեկշռի անփոփոխ հանրագումարի դեպքում երկուսն էլ ենթադրում են ֆինանսական պարբերաշրջանի մեծության աճ:

Բացահայտված կախվածության օգնությամբ կարելի է առանձնացնել ընթացիկ իրացվելիության գործակցի համար առաջարկվող արժեքների շրջանակը: Այսպիսով, եթե նշենք ֆինանսական պարբերաշրջանի պահանջվող արժեքը, ապա ռեգրեսիայի հավասարումներից կարելի է ստանալ նաև իրացվելիության գործակցի առաջարկվող համապատասխան արժեքը: Օրինակ, եթե սննդի արտադրության կազմակերպության զուտ առևտրային պարբերաշրջանի տևողությունը 60 օր է, ապա, օգտագործելով ռեգրեսիոն հավասարումը, մենք ստանում ենք ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը՝ հավասար 2.1 ($192.627\% + 0.302 \cdot 60\text{օր} = 210.7\% \approx 2.1$):

Ընթացիկ իրացվելիության գործակցի և ֆինանսական պարբերաշրջանի միջև փոխկապակցվածության մոդելը թույլ է տալիս լուծել նաև հետադարձ խնդիրը. կազմակերպության իրացվելիության տրված մակարդակով որոշել ֆինանսական պարբերաշրջանի անհրաժեշտ մեծությունը: Այսինքն, եթե նշենք իրացվելիության գործակցի պահանջվող արժեքը (պահանջվող արժեքների միջակայքը), ապա ռեգրեսիայի հավասարումներից կարող ենք ստանալ համապատասխան միջակայքը նաև ֆինանսական պարբերաշրջանի համար: Օրինակ, եթե ընթացիկ իրացվելիության գործակցի համար պահանջվող արժեքները գտնվում են [2; 3] ([200%; 300%]) միջակայքում, սննդի արտադրության կազմակերպությունների ֆինանսական պարբերաշրջանը (NTC) պետք է ընդունի արժեքները [25; 355] միջակայքից: Դրանցից երկար պարբերաշրջանի դեպքում կազմակերպությունների ընթացիկ կապիտալի կառավարումը կգնահատվի անարդյունավետ և կնպաստի շահույթի կրճատմանը և ակտիվների շահութաբերության նվազեցմանը: Հաշվարկածից կարճ պարբերաշրջանի դեպքում կազմակերպությունները կկորցնեն իրենց իրացվելիությունը:

Այսպիսով՝ մեր կողմից կառուցվել են էկոնոմետրիկ մոդելներ, որոնք նկարագրում են իրացվելիության, ֆինանսական պարբերաշրջանի և շահութաբերության փոխկապվածությունը: Կառուցված մոդելների հիմքում

ընկած է ԱՀ սննդի արդյունաբերության կազմակերպությունների զուտ ընթացիկ ակտիվների շահութաբերության կախվածությունը ֆինանսական պարբերաշրջանից, իրացվելիությունից, ինչպես նաև իրացվելիության կախվածությունը ֆինանսական պարբերաշրջանից: Ստացված մոդելների կիրառումը ապագայում թույլ կտա, հաշվի առնելով կազմակերպությունների ճյուղային յուրահատկությունը, մշակել միջոցառումներ սննդի արտադրության կազմակերպությունների շահութաբերության, իրացվելիության և ֆինանսական պարբերաշրջանի կառավարման կատարելագործման համար՝ հիմնվելով ընթացիկ ակտիվների օպտիմալ միջակայքը որոշելու վրա:

Գրականություն

1. *Бойко К.А.* Финансовый цикл и рентабельность активов российских компаний пищевой промышленности: эмпирический анализ взаимосвязи / К.А. Бойко, Е.М. Рогова // Вестник СПГУ. – 2016. – №1. – С. 31-65.
2. *Волков Д.Л., Никулин Е.Д.* Операционная эффективность и фундаментальная ценность собственного капитала организации // Вестн. С.-Петер. ун-та. Сер. Менеджмент. 2009. Вып. 1. С. 63–92.
3. *Волков Д.Л., Никулин Е.Д.* Современное состояние и перспективы развития исследований в области управления оборотным капиталом компании // *Корпоративные финансы. 2012.* № 3 (23). С. 61–69.
4. *Волков Д.Л.* Управление оборотным капиталом: анализ влияния финансового цикла на рентабельность и ликвидность компаний / Д.Л. Волков, Е.Д. Никулин // Вестник СПГУ. – 2012. – №2. – С. 3-33.
5. *Гаранина Т. А., Петрова О. А.* Взаимосвязь между ликвидностью, финансовым циклом и рентабельностью российских компаний // Корпоративные финансы. 2015. № 1 (33). С. 5–19.
6. *Ковалев В.В.* Финансовый анализ: методы и процедуры. М.: Финансы и статистика, 2002. – 560 с.
7. *Eljelly A.* Liquidity-Profitability Tradeoff: An Empirical Investigation on the Emerging Market // International Journal of Commerce and Management. 2004. Vol. 14. N 2. P. 48–61.
8. *Shin H., Soenen L.* Efficiency of Working Capital Management and Corporate Profitability // Financial Practice and Education. 1998. Vol. 8, N 2. P. 37–45.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը:

ՀՏԴ 334
Տնտեսագիտություն

Տիգրան ՀԱԿՈԲՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, իրավաբան,
ԱՀ ԱԺ Աշխատակազմի գլխավոր մասնագետ,
ԱրՊՀ «Տնտեսագիտության տեսության և կառավարման» ամբիոնի ավագ դասախոս,
էլ.հասցե՝ t_hakobyan@mail.ru

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Շինարարության ոլորտը շատ կարևոր է Արցախի տնտեսության համար: Մրցակցության ուժեղացումը համարվում է շինարարական բնագավառի զարգացման մարտահրավերներից մեկը: Շինարարական կազմակերպություններում հրատապ է ներքին վերահսկողության կազմակերպումն ու այդ գործընթացի հետագա կատարելագործումը: Ներքին վերահսկողությունն ամբողջ շինարարական գործընթացի անբաժան բաղադրատարրն է: Ներքին վերահսկողության համակարգը (որի հիմնական կորիզը ներքին վերահսկողության ծառայությունն է) թույլ է տալիս բացահայտել և չեզոքացնել շինարարական կազմակերպություններում գործունեության առկա ռիսկերը, երաշխավորել ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության իսկությունը: Ներքին վերահսկողության գործընթացի արդյունավետ կազմակերպումը շինարարական կազմակերպության բարեփոխման և առաջխաղացման միջոցներից մեկն է:

Բանալի բառեր՝ *շինարարական կազմակերպություն, ներքին վերահսկողություն, ռիսկ, ներքին վերահսկողության համակարգ, ներքին վերահսկողության ծառայություն, ներքին աուդիտ:*

Т. Акопян

ОРГАНИЗАЦИЯ ВНУТРЕННЕГО КОНТРОЛЯ В СТРОИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЯХ

Сфера строительства очень важна для экономики Арцаха. Усиление конкуренции является одним из вызовов развития строительной сферы. Актуальна организация внутреннего контроля и совершенствование этого процесса в строительных организациях. Внутренний контроль – неотделимый элемент всего строительного процесса. Система внутреннего контроля (ядром которого является служба внутреннего контроля) позволяет выявлять и устранять существенные риски деятельности в строительных организациях, гарантировать достоверность информации в финансовых отчетах. Эффективная организация процесса внутреннего контроля является одним из способов улучшения и продвижения строительной организации.

Ключевые слова. *строительная организация, внутренний контроль, риск, система внутреннего контроля, служба внутреннего контроля, внутренний аудит.*

T. Hakobyan

ORGANIZATION OF INTERNAL CONTROL IN CONSTRUCTION ORGANIZATIONS

The sphere of construction is very important for the economy of Artsakh. Increased competition is one of the challenges for the development of the construction industry. The organization of internal control and improvement of this process in construction organizations is relevant. Internal control is an inseparable element of the entire construction process. The internal control system (the core of which is the internal control service) makes it possible to identify and eliminate significant risks of activity in construction companies, to guarantee the accuracy of the information in the financial statements. Efficient organization of the internal control process is one of the ways to improve and advance the construction organization.

Keywords. *construction organization, internal control, risk, internal control system, internal control service, internal audit.*

Շինարարության ոլորտը շատ կարևոր դերակատարում ունի Արցախի տնտեսությունում: Ծավալը 2018թ. կազմել է 52504.8 մլն դրամ, որը կազմում է հանրապետության 310252.7 մլն ՀՆԱ-ի 16.9 տոկոսը: Եթե մի փոքր հայացք նետենք հետազոտության թվային տվյալների վրա, ապա կնկատենք անհամաչափություններ *(գծանկար 1)*: 2010-2018թթ. ընթացքում հանրապետության ՀՆԱ կայուն ձևով վերելք է արձանագրել և 118187.2 մլն դրամից հասել 310252.7 մլն դրամի[1]՝ աճելով ավելի քան 2.6 անգամ, իսկ շինարարության ծավալը, տատանումներով հանդերձ, 42769.2 մլն դրամից հասել է 52504.8 մլն դրամի[2]՝ աճելով ընդամենը 9735.6 մլն դրամով կամ 18.5 տոկոսով, որն էլ առաջացրել է ՀՆԱ մեջ շինարարության ծավալի մասնաբաժնի գրեթե հաստատուն ձևով նվազում՝ 36.2 տոկոսից հասնելով մինչև 16.9 տոկոսի *(աղյուսակ 1)*:

Աղյուսակ 1. 2010-2018թթ Արցախի Հանրապետության ՀՆԱ և շինարարության ծավալները, մլն դրամ*

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
ՀՆԱ	118187.2	35498.5	150015.7	168563.6	188840.3	209345.7	229651.6	72070.8	310252.7
Շինարարություն	42769.2	43359.5	38291.9	45219.9	49670.2	50145.3	45655.8	47100.1	52504.8

[1] *http://stat-nkr.am/files/yearbooks/2010-2016/3_himcuc_27-31.pdf*
http://stat-nkr.am/files/publications/2018/Doklad_2018_hunvar_dektember/4-5-1_0%20Makrocuc.pdf

[2] *http://www.stat-nkr.am/files/yearbooks/2004_2010/17_Shinarar.pdf*
http://stat-nkr.am/files/publications/2018/Doklad_2018_hunvar_dektember/23-27-1_2_3_Shinar.pdf

Շին. մ/բաժինը ՀՆԱ-ի մեջ, %-ով	36.2	32.0	25.5	26.8	26.3	24.0	19.9	17.3	16.9

*Աղբյուրը՝ սեփական հետազոտություն

Արցախի Հանրապետությունում մրցակցության ուժեղացումը համարվում է շինարարական բնագավառի զարգացման մարտահրավերներից մեկը, և այդ գործոնը կարելի է դրական համարել, քանի որ հենց մրցակցությունն է ստիպում ձեռնարկատերերին աշխատանքի արտադրողականության բարձրացման համար փնտրել ռեսուրսներ, նվազեցնել շինարարության ծախքերը, ինչպես նաև իջեցնել շինարարական ծառայությունների և կառուցված օբյեկտների արժեքները: Բայց այստեղ կան նաև մրցակցության ուժեղացմամբ պայմանավորված մտահոգիչ տվյալներ. ըստ հանրապետության վիճակագրության մարմնի տվյալների՝ 2010-2018թթ. կրճատվել են շինարարական կազմակերպությունների քանակը՝ 217-ից 213 կազմակերպություն, առավել ևս շինարարական կազմակերպություններում աշխատողների միջին ցուցակային թվաքանակը՝ 4149-ից 2910 մարդ[1]:

Մինչ ներքին վերահսկողությանն անցնելը ներկայացնենք ՀՆԱ-ի և շինարարության ծավալների ինֆոգրաֆիկան:



Գծանկար 1. 2010-2018թթ ՀՆԱ-ի և շինարարության ծավալների ինֆոգրաֆիկան

Շինարարական կազմակերպություններում (ՇԿ) շատ կարևոր է ներքին վերահսկողության կազմակերպումն ու այդ գործընթացի հետագա կատարելագործումը:

Ներքին վերահսկողությունն (ՆՎ) ամբողջ շինարարական գործընթացի անբաժան բաղադրատարրն է, որտեղ համապատասխանատվությունը

[1] http://stat-nkr.am/files/publications/2018/Doklad_2018_hunvar_dektember/23-27-1_2_3_Shinar.pdf
http://stat-nkr.am/files/publications/doklad_2010_hunvar_dektember/1_2_3_Shinar.pdf

ստուգվում է անմիջականորեն կազմակերպության ներսում, և հաճախ՝ հենց աշխատանքներ կատարողների կողմից:

Ռիսկերի հանդեպ անընդհատ հսկողությունը պետք է դառնա շինարարական կազմակերպության ներքին վերահսկողության առաջնային ուղղություններից մեկը, որի առնչությամբ էլ տնտեսական ռիսկերի առաջացման պատճառների բացահայտման համար պետք է ընդունվեն խիստ միջոցներ՝ նպատակ ունենալով ռիսկերի սահմանափակմանն ուղղված միջոցառումների համակարգի մշակումը: Ռիսկի առաջացման կոնկրետ տեսակից և պատճառից է կախված այս կամ այն միջոցի կիրառումը՝ ուղղված տնտեսական ու ֆինանսական գործունեության ռիսկերի սահմանափակմանը:

«Ներքին վերահսկողության համակարգ» հասկացությունը նշանակալիորեն լայն է «ներքին վերահսկողություն» հասկացությունից և իրենից ներկայացնում է ղեկավարության, սեփականատիրոջ ներկայացուցիչների կամ կազմակերպության այլ աշխատակիցների կողմից իրագործվող և կազմակերպվող գործընթաց, որտեղ տնտեսավարման գործառնությունների ֆինանսական (հաշվապահական) հաշվետվողականության, արդյունա-վետության ու նորմատիվ իրավական ակտերում, անձի գործունեության համապատասխանելիության տեսանկյունից, առաջադրված նպատակներին հասնելու համար ապահովվում է անհրաժեշտ վստահելիություն և հուսալիություն:

Ներքին վերահսկողության համակարգը (ՆՎՀ) թույլ է տալիս բացահայտել և չեզոքացնել շինարարական կազմակերպություններում գործունեության առկա ռիսկերը, երաշխավորել ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության իսկությունը: Դրա ստեղծման համար անհրաժեշտ է մշակել կազմակերպչական հստակ կառուցվածք, որոշել տեղեկատվական դաշտի ձևավորման մասնակիցների անձանց շրջանակն ու նրանց փոխհարաբերությունների կարգը, պատասխանատվությունը, փաստաթղթերն ու փաստաթղթաշրջանառությունը, ծառայողական ու պաշտոնեական հրահանգավորումը և այլն:

Ներքին վերահսկողությունը շինարարությունում ունի իր առանձնահատկությունը, քանի որ տվյալ ոլորտի ծախսերի կազմը բազմաբնույթ է ու բարդ, իսկ հաշվետվության կազմման ճշտության հանդեպ պահանջները՝ բարձր: Բացի այդ, շինարարությունում ներքին վերահսկողությունը բարդ է նաև նրանով, որ շինարարական ֆիրման հաճախ գործունեություն է իրականացնում միաժամանակ տարբեր շրջաններում, քաղաքներում, գյուղերում և այլ վայրերում՝ ստեղծելով շինհարթակներ, որի հետևանքով էլ ցանկացած ստուգում դառնում է բավականին ժամանակատար: Բոլոր փաստաթղթերն էլ ստորագրվում են կազմակերպության անունից՝ այդ պահից առաջացնելով տվյալ գործարքի մասով իրավունքներ և պարտականություններ, այդ իսկ պատճառով էլ համապատասխան ստորաբաժանման մեջ պետք է նշանակվեն և լիազորվեն այնպիսի անձինք, որոնք պատասխանատու են տեղում իրականացվող գործառնությունների, այդ թվում՝ սկզբնական փաստաթղթերի, կազմման համար:

ՇԿ ներքին վերահսկողության ծառայությունը (ՆՎԾ) համարվում է ՆՎՀ հիմնական կորիզը: Ելնելով գործի բնույթից՝ ՆՎԾ պետք է ուշադրություն դարձնի հետևյալ հարցերին.

ա) նյութական արժեքների պահպանմանը (հատկապես թանկարժեք և հեշտ իրացվող),

բ) համապատասխան տեղեկատվական որոշումների հուսալիության և ծախսերի նախագծերի կազմման ճշտության ստուգմանը,

գ) փաստացի կատարված և համապատասխան կատարողական ակտերով արձանագրված շինմոնտաժային աշխատանքների ստուգմանը:

ՇԿ ՆՎԾ առջև դրված են հետևյալ խնդիրները.

- ձեռնարկության արտադրա-առևտրային գործունեության և ֆինանսական վիճակի ստուգումը,
- կազմակերպչական միջոցառումների գործող նորմատիվ փաստաթղթերին և կանոնադրական պահանջներին համապատասխանելիության ստուգումը,
- հաշվապահական հաշվառման կազմակերպման և հաշվետվությունների կազմման փորձագիտության ենթարկելը,
- հայտնաբերված թերությունների ու բացթողումների վերացման մասով ղեկավարությանը առաջարկություններ ներկայացնելը:

ՇԿ ՆՎԾ գործառույթներն են՝

1. ՇԿ ֆինանսատնտեսական գործունեության փորձաքննությունը, որն իրականացվում է հետևյալ հատվածներում.

ա) հաշվապահական հաշվետվության՝ սկզբնական փաստաթղթերի ու հաշվառման ռեգիստրների կազմման և ճիշտ ձևակերպման հաստատումն ու Գլխավոր գրքի հետ հաշվետվության ձևերի համեմատումն ու համապատասխանեցումը,

բ) ֆինանսական արդյունքների հավաստիության՝ տարատեսակ գործունեությունների եկամուտների ու ծախսերի հաշվառման ամբողջականությունն ու շահույթի չափի կամ ծավալի որոշման ճշտությունը,

2. ՆՎՀ կատարելագործման մասով՝ հիմնավորված առաջարկների մշակումն ու ներկայացումը,

3. հաստատված պլանի համաձայն՝ ձեռնարկության ղեկավարության հրահան-գավորմամբ նյութական, աշխատանքային և ֆինանսական պաշարների օգտագործման արդյունավետության և գործող կարգի համաձայն՝ գների ու տարիֆների կիրառման պահպանման մասով՝ ստուգումների անցկացումը,

4. գործող նորմատիվ-իրավական ակտերի համաձայն՝ հաշվապահական և հարկային հաշվառումների կատարելագործման մասով՝ առաջարկների նախապատրաստումը,

5. հաշվառման կազմակերպման առանձին հարցերի ու նյութական պատասխանատու անձանց վերահսկման մասով՝ արտադրական ստորաբաժանումների և կառավարման աշխատակազմի ղեկավարների խորհրդատվությունը:

Գրեթե բոլոր ՇԿ-ներում (նույնիսկ այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են «Կապավոր» ՍՊԸ, «Հայկ-շին» ՍՊԸ, «Քարավան» ՍՊԸ, «Վիրաժ» ԱԿ, «Ճանշին» ՓԲԸ, «Պանտ» ՍՊԸ, «Արցախուղի» ՓԲԸ, «Պրոգրես» ՍՊԸ և այլն) չկա այնպիսի ստորաբաժանում, ինչպիսին ՆՎԾ է, սակայն վերահսկողական միջոցառումներ առկա են, այդ թվում կանոնակարգված են՝

- կապիտալ նախագծերի ու ներդրումների, պատվիրատուների ու մատակարարների պայմանագրերի հետ աշխատանքները,
- վճարային միջոցների և պարտավորությունների հաշվառումը,
- դրամարկղային գործառնությունները,

- սկզբնական բոլոր փաստաթղթերի և պայմանագրերի համակարգային հաշվառումը,
- անկախ աուդիտորական ընկերությունների կողմից գործունեության պարբերաբար աուդիտի անցկացումը,
- արտադրական և ֆինանսական ռեսուրսների վերահսկումը:

Ընկերության ղեկավարը ՆՎԾ գործառույթները բաշխում է ընկերության աշխատակիցների միջև, կոնկրետ՝ ֆինանսատնտեսական ծառայության:

Ընկերության զարգացման և արտաքին միջավայրի փոփոխության հետ կապված փոխվում են նաև ընկերության նպատակներն ու ռիսկերի բնույթները: Համապատասխանաբար առաջանում է ներքին վերահսկողության արդեն իսկ ձևավորված համակարգի անընդհատ վերանայման, ինչպես նաև դրա նպատակահարմարության և ռացիոնալության գնահատման պահանջը:

ԾԿ ռիսկերին դիմագրավելու նպատակով անհրաժեշտ է հաշվապահական հաշվառման տվյալների ամբողջական արտացոլման, հաշվապահական (ֆինանսական) հաշվետվողականության, գործառնությունների ճշգրիտ կատարման համար ունենալ հզոր ՆՎԾ, որտեղ պետք է ուշադրություն դարձնել հետևյալին.

ա) տվյալ աշխատակցի կողմից բարեխիղճ գործարար համբավ ունեցող շրջանակի գործընկերների հետ գործարքների կնքման սահմանափակմանը,

բ) վերադաս ղեկավարի կողմից տվյալ աշխատակցի իրականացրած ֆինանսա-տնտեսական գործառնությունների արդյունքների դիտարկման պարբերականությանը,

գ) տվյալ աշխատակցի կողմից գործարքներով պայմանավորված ծավալների և պայմանների պահպանմանը:

Ռիսկի և անորոշության պայմաններում ԾԿ կենսունակության բարձրացման համար անհրաժեշտ է «կողքից» նայել կազմակերպությունում առկա գործընթացների և դրանց հետ կապված վերահսկողական միջոցառումների վրա:

Նմանօրինակ դիտարկման արդյունքում հնարավորություն է առաջանում ՆՎԾ վերակառուցումը մի քանի ուղղություններով.

- բիզնես-գործընթացներ (փաստացի փաստաթղթաշրջանառության ընթացիկ ընթացակարգերի նկարագրում, երկակիացված գործառույթների բացահայտում ու բացառում, կազմակերպչական և տեղեկատվական բացերի կամ ճեղքերի վերացում կամ չեզոքացում, նոր կանոնակարգերի, քաղաքականության նախապատրաստում ու մշակում և այլն),
- IT համակարգեր (գոյություն ունեցող IT համակարգի ֆունկցիոնալ փոփոխություն, նոր հավելվածների և համապատասխան վերահսկողական ընթացակարգերի ներդրում, մուտքային իրավունքների փոփոխություններ),
- վերահսկողական ընթացակարգեր (դրանց ամբողջականության, բավարարվա-ծության կամ ավելցուկայնության, ոճային արդյունավետության, արդյունքների և ծախսերի համադրման վերլուծություն),
- կազմակերպչական կառուցվածք և ռեսուրսներ (բիզնես-գործընթացի մասնակիցների դերերի և լիազորությունների բաշխման արդյունավետության գնահատում):

Յուրաքանչյուր ուղղություն ունի իր ցուցիչները, որոնք վկայում են ՆՎՀ վերլուծության և վերակառուցման մասին: Կարճաժամկետ նպատակներին հասնելու նպատակով երբեմն բավարար է լինում բիզնես-գործընթացների և IT (ՏՏ) համակարգերի առանձին բաղադրիչների վերակազմավորումը:

Երկարաժամկետ հեռանկարում ընկերության կայունության ապահովման նպատակով անհրաժեշտ է ՆՎԾ համալիր վերակազմավորում:

Այսպիսով, ներքին վերահսկողության գործընթացի արդյունավետ կազմակերպումը հանդիսանում է ԾԿ դիրքի և մրցակցային վիճակում պահպանման բարելավման միջոցներից մեկը: Ի մի բերելով վերոնշյալները՝ անհրաժեշտ է փաստել, որ շինարարական կազմակերպության ներքին աուդիտի արդյունավետ կազմակերպումը թույլ կտա ճշգրիտ ձևով կյանքի կոչել ներքին վերահսկողության համակարգի կազմակերպման ողջ գործընթացը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը:

ՀՏԴ336
Տնտեսագիտություն

Թամար ԳՐԻԳՈՐՅԱՆ
Արցախի պետական համալսարան
Տնտեսագիտության ֆակուլտետ
«Կառավարում» մասնագիտացման, մագիստրատուրայի 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ Հովսեփյան Կ. Ա.
e-mail: tamar.grigorian@mail.ru

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԿՐԻՊՏՈԱՐԺՈՒՅԹՆԵՐ: ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Գլոբալիզացիան, դրամական շուկաների աննախադեպ աճը, թվայնացումը և IT-տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրին մեր հասարակությունում բազմաթիվ լրացուցիչ ինստիտուտների, ֆինանսական գործիքների և մարդկանց միջև փոխգործունեության նոր ձևերի առաջացմանը: Արդի ֆինանսական աշխարհում ձևավորվում է այդպիսի մի նոր՝ կրիպտոարժույթների: Աշխատանքի նպատակն է պարզել ժամանակակից բանկային համակարգի հնարավորությունները, ինտեգրվել դրամավարկային հարաբերությունների նոր իրողություններին, որոնք ձևավորվում են գիտատեխնիկական առաջընթացի ազդեցությամբ, վերլուծել կրիպտոարժույթի պահանջարկի վրա ազդող առավել նշանակալի գործոնները:

Բանալի բառեր՝ *բանկային համակարգ, Big Data, Artificial intelligence, կրիպտոարժույթ, բլոկչեյն, մայնինգ, էլեկտրա-էներգիա, ոսկի, գործոն :*

Т. Григорян

СОВРЕМЕННАЯ БАНКОВСКАЯ СИСТЕМА И КРИПТОВАЛЮТЫ: ПРИНЦИПЫ, ПРОТИВОРЕЧИЯ, ПЕРСПЕКТИВЫ

Глобализация, безудержный рост денежных рынков, всеобщая компьютеризация и развитие IT технологий повлекли за собой появление в нашем обществе огромного количества дополнительных институтов, финансовых инструментов и новых форм взаимодействия между людьми. Одним из таких институтов в современном мире выступает криптовалюта. Целью данной работы является выяснение возможностей современной банковской системы интегрироваться к новыми реалиям денежных отношений, которые формируются под влиянием научно-технического прогресса и анализировать наиболее значимые факторы, влияющие на спрос

криптовалют.
Ключевые слова: *банковская система, Big Data, Artificial intelligence, криптовалюта, блокчейн, майнинг, электроэнергия, золото, фактор*

T. Grigoryan

MODERN BANKING SYSTEM AND CRYPTOCURRENCIES: PRINCIPLES, CONTRADICTIONS, PERSPECTIVES

Globalization, unrestrained growth of money markets, universal computerization and development of IT technologies have led to the emergence of a huge number of additional institutions, financial instruments in our society and new forms of interaction between people. One of these institutions in the modern world is cryptocurrency. The purpose of this work is to clarify the capabilities of the modern banking system to integrate with the new realities of monetary relations, which are formed under the influence of scientific and technological progress and analyze the most significant factors affecting the demand for cryptocurrencies.
Keywords. *banking system, Big Data, Artificial intelligence, cryptocurrency, blockchain, mining, energy, gold, factor*

Շուկայական տնտեսությունում բանկային համակարգի գործնական դերը պայմանավորված է նրանով, որ այն կառավարում է երկրի վճարահաշվարկային համակարգը: Իր առևտրային գործարքների մեծ մասը այն իրականացնում է ներդրումների, վարկային գործառնությունների միջոցով՝ բնակչության խնայողությունները ուղղելով ֆիրմաներին և արտադրական կազմակերպություններին: Կատարված ներդրումների արդյունավետությունը կախված է բանկային համակարգի ունակությունից ուղղել դրամական միջոցները հենց այն վարկառուներին, որոնք կօգտագործեն դրանք առավելագույն արդյունավետությամբ: Գործելով համաձայնեցված պետության դրամավարկային քաղաքականությամբ՝ առևտրային բանկերը կարգավորում են դրամական հոսքերը՝ ազդելով շրջանառության արագության և փողի ընդհանուր ծավալի վրա: Բանկային գործունեությունը գտնվում է անընդհատ զարգացման մեջ, մշտապես ընդլայնվում է մատուցվող ծառայությունների շրջանակը: Հավելված 1-ում բերվում են վերջին ժամանակներում լայնորեն զարգացում ստացած ծառայություններն ու գործառնությունները:

Բանկային ծառայությունների նկատմամբ մասսայական պահանջարկը հանգեցնում է հաճախորդներ գրավելու պայքարի սրման, մրցակցային առավելությունների փնտրման և սպառողների հարցումներին ավելի օպերատիվ արձագանքելու մեթոդների մշակման: Այդ պատճառով ֆինանսական հաստատությունները ավելի ու ավելի հաճախ են միջոցներ ներդնում տեղեկատվական տեխնոլոգիաներում և վերջերս հատկապես Big Data-ում և AI-ում:

Տարբեր աղբյուրներ տարբեր ձևով են սահմանում դրանք. առավել ընդհանրական է IDC ընկերության սահմանումը, ըստ որի՝ BD-ն

տեխնոլոգիաների նոր սերունդ է, որը նախատեսված է շատ մեծ ծավալներով բազմազան տվյալներից տնտեսապես արդյունավետ ինֆորմացիայի առանձնացման համար (հավաքագրման, մշակման և վերլուծության բարձր արագությամբ)։ IDC-ն պրոյեկտը համարում է Big Data-ի կատեգորիայի,եթե տվյալների ծավալը գերազանցում է 100 TB, կամ եթե դրանց ծավալը տարեկան աճում է 60%-ով և ավելի, կամ եթե տվյալների հոսքի արագությունը գերազանցում է 60 GB/sec։[1] Big Data-ն համալիր հասկացություն է, որը սխեմատիկ ձևով ներկայացված է Հավելված 2-ում։ Ինչ վերաբերում է արհեստական ինտելեկտին, այն նույնպես ունի բազմաթիվ սահմանումներ, որոնք ներկայացված են Հավելված 3-ում։

Որպեսզի ֆինանսավարկային կազմակերպությունը արդյունավետ օգտագործի Big Data-ն և AI-ը, այն պետք է բավականին կայացած և հասուն լինի ինչպես բիզնեսի, այնպես էլ SS տեսանկյունից։ Ռուսական բանկերի ասոցիացիայի նախագահ Գարեգին Թոսունյանը արտահայտել է հետևյալ միտքը. «Այսօր մենք լսում ենք, որ Big Data-ն նոր նավթ է, և բոլորը իրենց ջանքերն ուղղում են դրա արդյունահանմանը։ Առանց տվյալների՝ անհնար է կառուցել թվային տնտեսություն, և ով այս հարցում հետ մնա, հետ կմնա ընդմիշտ»։ Ուսումնասիրելով բազմաթիվ գիտական հոդվածներ և փորձագետների կարծիքներ, մենք առանձնացրինք բանկային գործունեության որոշ ոլորտներ, որոնք, մեր կարծիքով, ավելի շատ փոփոխությունների կենթարկվեն Big Data-ի դարաշրջանում։ Դրանք ներկայացված են Հավելված 4-ում։

Այնուամենայնիվ, չնայած այն բոլոր հնարավորություններին, որոնք բացում են Big Data-ն և AI-ը բանկերի առջև, դրանց զարգացումը հղի է բազում մարտահրավերներով։ Առաջին հերթին պետք է նշել, որ այդ տեխնոլոգիաների լայն օգտագործումը կարող է հանգեցնել տվյալների գաղտնիության և անվտանգության հետ կապված խնդիրների։ Այդ պատճառով շատ երկրներ սկսում են մշակել համապատասխան կանոնակարգեր՝ կարգավորելու ֆինանսական տեխնոլոգիաների այս ոլորտը։ Օրինակ ԵՄ-ում սույն թվականի մայիսի 25-ին ուժի մեջ մտավ GDPR-ը (General Data Protection Regulation), որը լուրջ պատասխանատվություն է սահմանում անձնական տվյալների մշակմամբ[2] զբաղվող ընկերությունների համար։

Բացի վերոնշյալից կարող ենք ասել, որ ոչ բոլոր բանկերն ունեն այն տեխնիկական հնարավորությունները և մարդկային պոտենցիալը, որն անհրաժեշտ է տվյալ տեխնոլոգիաների լիարժեք կիրառման համար։ Փոքր և միջին բանկերի համար դժվար է դիմակայել մրցակցությանը, և նրանք աստիճանաբար զիջում են իրենց տեղը ֆինանսական հսկաներին։ Նշվածը

[1] *Большие данные в финансовой отрасли: обзор и оценка перспектив развития мирового и российского рынков, IDC, 2015*

[2] *https://ec.europa.eu/info/law/law-topic/data-protection/reform/what-constitutes-data-processing_en*

ակտուալ է նաև ՀՀ բանկային համակարգի համար ոչ միայն այն պատճառով, որ ՀՀ բանկային համակարգում չկան համապատասխան ռեսուրսներով խոշոր բանկեր, այլև այն պատճառով, որ, մեր կարծիքով, բանկային համակարգը չունի այն մասնագիտական պոտենցիալը, որն անհրաժեշտ է այդ նորամուծությունների կիրառման համար: Մեր կողմից անց է կացվել հարցում Ստեփանակերտ քաղաքում գործող ՀՀ բանկերի մասնաճյուղերի ներկայացուցիչների շրջանակում, որի նպատակն էր պարզել վերոնշյալ տեխնոլոգիաների նկատմամբ նրանց ունեցած դիրքորոշումը և տեղեկանալ այդ տեխնոլոգիաների ներդրման և օգտագործման ուղղությամբ բանկերում իրականացվող միջոցառումների մասին, սակայն արդյունքները գոհացուցիչ չէին: Հավելված 5-ում ներկայացված են ընդամենը 4 բանկերի մասնագետների դիրքորոշումները(մնացածները տեղյակ չէին՝ ինչի մասին է խոսքը):

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ նշենք, որ AI-ը և Big Data-ն հեղափոխական տրենդներ են բանկային համակարգի համար, որոնք շատ արագ զարգանում են ամբողջ աշխարհով մեկ: Դրանք հնարավորություն են տալիս բանկերին մինիմալացնելու ռիսկերը, ավելի լավ հասկանալու իրենց հաճախորդներին, կրճատելու ծախսերն ու ստանալու լրացուցիչ շահույթ: Կարևոր է նշել նաև, որ բացի նյութական օգուտներից՝ այս տեխնոլոգիաները օգնում են խնայելու նաև մարդու ամենակարևոր ռեսուրսը՝ ժամանակը:

Գլոբալիզացիան, դրամական շուկաների աննախադեպ աճը, թվայնացումը և IT-տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրին մեր հասարակությունում բազմաթիվ լրացուցիչ ինստիտուների, ֆինանսական գործիքների և մարդկանց միջև փոխգործունեության նոր ձևերի առաջացմանը: Արդի ֆինանսական աշխարհում ձևավորվում է այդպիսի մի նոր՝ կրիպտոարժույթների ինստիտուտ: Արդի աշխարհում, որտեղ համաշխարհային սարդոստայնը դարձավ մարդու և հասարակության կենսագործունեության բաղկացուցիչ մասը, բնական է համարվում այն փաստը, որ տնտեսական հարաբերությունները ևս աստիճանաբար վերափոխվում են էլեկտրոնային, դիստանցիոն ձևի: Վիրտուալ փողի և դրա զարգացման վերին աստիճանի՝ կրիպտոարժույթի ի հայտ գալը և մասսայականացումը բազմաթիվ փորձագետների կողմից դիտարկվում են որպես ֆինանսական համակարգի նոր ծագող հեղափոխության առաջին նշաններ: Կրիպտոարժույթի դերը արդի աշխարհում խորությամբ հասկանալու համար առանցքային է նրա տնտեսական բնույթի սահմանումը: Կրիպտոարժույթը թվային արժույթի տեսակ է, որը հիմնված է պաշտպանության կրիպտոգրաֆիկական մեթոդների վրա: Դրանք ապահովում են այն ստեղծողի և օգտագործողների գաղտնիությունը: Կեղծել կրիպտոարժույթը հնարավոր չէ, ինչը չենք կարող ասել այն էլեկտրոնային կրիչներից գողանալու մասին:

Ժամանակակից դրամական միջոցների այս նոր տարատեսակը արդյունահանվում և ներդրվում է շրջանառության մեջ այն մշակող

ենթակառուցվածքների կողմից, այդ պատճառով դրանք չեն կարող ենթարկվել վերահսկողության կամ էմիսիայի սահմանափակման: Այդպիսով՝ վիրտուալ արժույթի ոլորտում չկան կենտրոնացված կառույցներ, չկա նաև գլխավոր կենտրոն, կամ ֆինանսավարկային ենթակառուցվածք, որը կկարգավորեր կրիպտոարժույթի թողարկումը: Այս արժույթը հիմնված է միայն peer-to-peer սխեմայի, այսինքն՝ հաճախորդների հավասարազոր ծրագրերի համակարգի վրա: Այսօր գոյություն ունեն բազմաթիվ կրիպտոարժույթներ. դրանցից ամենահայտնիները ներկայացված են Հավելված 6-ում: Կրիպտոարժույթների հիմնական առավելություններն ու թերությունները ներկայացված են Հավելվածներ 7 և 8-ում: Կրիպտոարժույթը, հանդիսանալով ապագայի վճարման միջոց դառնալու հավակնորդ, իր հիմքում պետք է ունենա էմիսիայի և շրջանառության հստակ մեխանիզմ: Ցանկացած վճարային համակարգ պետք է ունենա տվյալների բազա, որտեղ գրանցվում են բոլոր գործարքները: Բոլոր կրիպտոարժույթների համար այդպիսի մեխանիզմ է հանդիսանում Բլոկչեյնը: Բլոկչեյնը բլոկերի շղթա է՝ դասավորված հատուկ սխեմայով, որտեղ հավաքագրվում է կրիպտոարժույթով իրականացվող ցանկացած գործարքի մասին ինֆորմացիա (բլոկչեյնի գործունեության սխեման ներկայացված է Հավելված 9-ում):

Մայնինգը գործընթաց է, որի ընթացքում համակարգչային հաշվողական հզորությունների օգտագործմամբ ստեղծվում են կրիպտոարժույթով իրականացված գործարքների բլոկերի շղթաներ: Յուրաքանչյուր բլոկի գործարքների ամբողջությունից առաջինը առանձնահատուկ է: Նոր բիթքոինները անցնում են նրան, ով գեներացրեց այն բլոկը, որում գտնվում է այդ գործարքը: Այդ բլոկը գեներացնողին են անցնում նաև բլոկում գտնվող բոլոր գործարքների միջնորդավճարները: Այդպիսով՝ մայներները միաժամանակ իրականացնում են բոլոր գործարքները և ստեղծում են նոր բիթքոիններ: Եթե աշխարհի բոլոր մայներները դադարեցնեն իրենց գործունեությունը, կրիպտոարժույթը կդադարի գոյություն ունենալուց: Յուրաքանչյուր 4 տարի փոխհատուցման չափը կրճատվում է կրկնակի: Խոշոր կրիպտոարժույթների մայնինգի համար սովորական անհատական համակարգչի ռեսուրսները բավարար չեն, և մայներները օգտագործում են «ֆերմաներ»՝ գերհզոր համակարգչային կայաններ, որոնց ձեռք բերման համար անհրաժեշտ են բավականին մեծ գումարներ: Մայնինգը իմաստ ունի այնքան ժամանակ, քանի դեռ դրանից ստացվող եկամուտները գերազանցում են սարքավորումների և էլեկտրաէներգիայի ծախսերը: Ըստ Digecoomist.net կայքում հրապարակված հոդվածի տվյալների՝ 2019 թ. դրությամբ բիթքոինի մայնինգից ստացվող ընդհանուր տարեկան եկամուտները կազմում են $4,675,051,368, իսկ տարեկան ընդհանրացված միջին ծախսերը՝ $2,986,728,769, այսինքն՝ ծախսածածկումը կազմում է մոտ 63,89%: Բիթքոինի «արդյունահանման» գործընթացը հաճախ համեմատում են ոսկու արդյունահանման հետ: Ինչքան շատ են շահագործում հանքը, այնքան ավելի

ծախսատար է դառնում դրա հետագա արդյունահանումը: Նման իրավիճակ է ստեղծվում նաև բիթքոինի դեպքում: Նոր քանակությամբ բիթքոինների թողարկման արագությունը ֆունկցիա է ժամանակից, և այդ արագությունը գնալով նվազում է և ձգտում 0-ի, ինչը պատկերավոր ձևով արտահայտում է բիթքոինների առաջարկի կորը (Հավելված 13): Շատ հետաքրքիր է նաև ոսկու և բիթքոինի «արդյունահանման» վրա կատարված ծախսերի համեմատական վերլուծությունը: 1 կգ ոսկու արդյունահանման համար ծախսվում է մոտ 175 ԳՋոուլ էներգիա, իսկ ոսկու արդյունահանման տարեկան ծավալները կազմում են մոտ 3100 խմ: Կատարելով որոշ մաթեմատիկական հաշվարկներ՝ կստանանք, որ ոսկու տարեկան արդյունահանման վրա կատարվում է մոտ 150 տերավատտ /ժամ էներգիայի ծախս: Բիթքոինի արդյունահանման վրա կատարվող էներգիայի ծախսը մեզ հայտնի է Bitcoin Energy Consumption Index-ից[1]: Վերլուծության մեջ մտցված է նաև Բիթքոինի վրա կատարվող էներգիայի մինիմալ ծախսը, որը գնահատվում է՝ հաշվի առնելով ցանցի ընթացիկ հաշվարկային հզորությունը: Հավելված 11-ում ներկայացված են արդեն հաշվարկված տվյալները: Դիագրամից երևում է, որ Ոսկու արդյունահանման ծախսերը գրեթե կրկնակի գերազանցում են Բիթքոինի մայնինգի ծախսերը, սակայն դա դեռ ամենը չէ: Արդյունահանված ոսկու արժեքը՝ արտահայտված ԱՄՆ դոլարով, նույնպես գերազանցում է բոլոր արդյունահանված բիթքոինների արժեքը (Հավելված 12), սակայն իրական պատկերը տեսնելու համար պետք է համեմատել միմյանց համարժեք ոսկու և բիթքոինի միավորների վրա կատարված ծախսերը: Հավելված 13-ում ներկայացված են ոսկու և բիթքոինի արդյունահանման վրա կատարված ծախսերը միավորի հաշվով: Առաջին սյունը արտահայտում է 1 բիթքոինին համարժեք ոսկու քանակության արդյունահանման վրա կատարված ծախսերը, իսկ երկրորդը՝ 1 բիթքոինի արդյունահանման վրա կատարված ծախսերը: Դիագրամը պարզ ցույց է տալիս, որ բիթքոինի մայնինգը ավելի շատ էներգիա է խլում, քան ոսկու արդյունահանումը: Տարիների ընթացքում մայնինգի էներգատարությունը հասավ ահռելի չափերի: Ներկայումս բիթքոինի ողջ ցանցը սպառում է ավելի շատ էլեկտրաէներգիա, քան մի շարք երկրներ: Էներգետիկայի Միջազգային գործակալության հաշվետվության[2] համաձայն՝ եթե Բիթքոինը լիներ երկիր, նա իր էլեկտրաէներգիայի սպառմամբ կգրավեր 43-րդ տեղը աշխարհում (Հավելված 14): Իհարկե, բոլորիս համար դժվար է պատկերացնել, որ բիթքոինը սպառում, ավելի շատ էլեկտրաէներգիա, քան օրինակ Քուվեյթը կամ Կոլումբիան: Հնարավոր է նաև համեմատել բիթքոինի էներգիայի սպառումը աշխարհի ամենախոշոր էներգիա սպառողող երկրների հետ: Արդյունքները ներկայացված են հավելված 15-ում: Բիթքոինի ամենամեծ խնդիրը նույնիսկ էներգիայի զանգվածային սպառումը չէ, այլ այն, որ ցանցը մեծամասամբ սնուցվում է

[1] *https://digiconomist.net/bitcoin-energy-consumption*
[2] *https://webstore.iea.org/key-world-energy-statistics-2017*

ածխային էլեկտրակայաններով, ինչը ցածր գներով հասանելի է Չինաստանում: Դա հանգեցնում է զգալի քանակությամբ ածխածնի արտանետման յուրաքանչյուր «արդյունահանվող» բիթքոինի համար: Բիթքոինի ցանցի կողմից սպառվող էներգիայի չափերը հեռանկարում պատկերացնելու համար կարող ենք այն համեմատել մեկ այլ վճարային համակարգի, օրինակ՝ VISA-ի հետ: Ըստ VISA-ի՝ 2016 թ. կազմակերպությունը սպառեց 680,559 ԳՋոուլ էներգիա[1] իր բոլոր գործառնությունների համար, ինչը կարող էր բավարարել 17000 ԱՄՆ տնտային տնտեսությունների էլեկտրաէներգիայի պահանջը: Նույն ժամանակաշրջանում VISA համակարգով իրականացվեց 111,2 մլրդ գործարք[2]: Այս թվերը մեզ թույլ են տալիս համեմատել երկու ցանցերը և տեսնել, որ բիթքոինում իրականացվող 1 գործարքը գրեթե 5 անգամ ավելի էներգատար է, քան VISA-ով իրականացվող 100.000 գործարքը (Հավելված 16): Այսպիսով՝ չնայած իր բոլոր առավելություններին՝ բիթքոինը դեռ պետք է անցնի կատարելագործման երկար ուղի. որպես վճարման միջոց այն չափազանց ծախսատար է: Վերջին տարիներին քայլեր են արվում մշակելու նոր ալգորիթմներ, որոնք թույլ կտան կրճատել էլեկտրաէներգիայի ծախսը, և թերևս միայն այդ դեպքում բիթքոինը կհավակնի դառնալ համաշխարհային փող:

Խոսելով կրիպտոարժույթների թերությունների մասին, մարդիկ շատ հաճախ նշում են դրա փոխարժեքի անկայունությունը: Դրա պատճառները պարզելու համար մենք փորձեցինք վերլուծել, թե ինչ գործոններ են ազդում դրա գնի վրա: Ինչպես ցանկացած այլ շուկայում, կրիպտոարժույթների շուկայում նույնպես գնի ձևավորման հիմնական գործոններն են պահանջարկն ու առաջարկը, սակայն այն տարբերությամբ, որ այստեղ առաջարկն աճում է ֆիքսված արագությամբ՝ պայմանավորված համապատասխան ալգորիթմներով: Մեկ կարևոր հանգամանք է նաև այն, որ որոշ կրիպտոարժույթների առաջարկը, ինչպես նշվեց վերը, սահմանափակ է և ժամանակի որոշակի պահից սկսած կլինի հաստատուն: Դա նշանակում է, որ գնի ձևավորման հարցում ավելի ակտիվ է պահանջարկի կողմը. ինչքան բարձր է պահանջարկը, այնքան բարձր է գինը և ընդհակառակը: Պետք է նշել նաև, որ առաջարկը որոշակիորեն ածանցյալ է պահանջարկից, քանի որ մայնինգով զբաղվում են այն անձինք, ովքեր կրիպտոարժույթի նկատմամբ պահանջարկ են ներկայացնում: Այսպիսով՝ կրիպտոարժույթի գնի վրա ազդող գործոնների վերլուծությունը հանգում է դրա պահանջարկի վրա ազդող գործոնների վերլուծության: Մենք վերլուծության ընթացքում որպես կախյալ փոփոխական ընտրեցինք բիթքոինի փոխարժեքը՝ արտահայտված ԱՄՆ դոլարով: Որպես անկախ փոփոխականներ առանձնացրինք հետևյալ գործոնները՝ այլ կրիպտոարժույթների գները՝ LTC. ETH. XRP, որոնք

[1] *Corporate Responsibility Report, VISA, 2016, p. 53*

դիտարկվում են որպես բիթքոինին մրցակից կրիպտոարժույթներ, եվրոյի, յուանի փոխարժեքները՝ որպես բիթքոինին մրցակից ֆիաթ արժույթներ, Dow Jones ինդեքսը, Case-Shiller ինդեքսը, ոսկու և նավթի գները՝ որպես ֆինանսական միջոցների ներդրման այլընտրանքային ուղղություններ (նշված բացարձակ մեծությունները արտահայտված են ԱՄՆ դոլարով), ինչպես նաև ՌԴ և Իրանի դեմ կիրառվող սանկցիաները, որոնք մտցվեցին մոդելի մեջ որպես դամի փոփոխականներ (ընդունում են 0 կամ 1 արժեքները, 1՝ սանկցիայի հայտարարման օրը)։ Վերլուծությունը հիմնված է նշված փոփոխականների՝ 2015 թ. հունվարի 1-ից մինչև 2019 թ. ապրիլի 15-ն ընկած ժամանակահատվածի օրական տվյալների վրա՝ ընդհանուր առմամբ 1567 դիտարկում։ Հավելված 17-ում ներկայացված է առաջին մոդելը, որը կառուցվել է փոքրագույն քառակուսիների մեթոդով։ Ուշադրություն դարձնենք դետերմինացիայի գործակցին, որը հավասար է 0.95-ի. դա նշանակում է, որ մոդելի սխալի հավանականությունը միայն 5% է։ Մոդելից կարող ենք տեսնել, որ բոլոր փոփոխականները, բացի սանկցիաներից նշանակալի են։ Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մոդելում արտահայտված են միայն սանկցիաների կիրառման մասին տվյալ օրվա հայտարարությունների ազդեցությունը տվյալ օրվա բիթքոինի փոխարժեքի վրա, սակայն հնարավոր է, որ այդ ազդեցությունը արտահայտվի մի քանի օր հետո։ Բացի դրանից՝ սանկցիաների, ազդեցությունը արդեն իսկ արտահայտվում է թե՛ ոսկու և թե՛ անշարժ գույքի գներում։ Պարզելու համար, թե սանկցիաները իրենց հայտարարման ո՛ր օրվանից են սկսում ազդել բիթքոինի գնի վրա, մենք մոդելի մեջ մտցրինք այդ 2 փոփոխականների մինչև 45-րդ լագերը։ Հավելված 18-ում ներկայացված է 2-րդ մոդելը։ Լագային փոփոխականներից նշանակալի դարձան միայն ՌԴ դեմ կիրառվող սանկցիաների 20-23-րդ, 26-28-րդ լագերը, այսինքն՝ սանկցիաները, իրենց հայտարարելու օրվանից սկսած, 27-28 օր հետո են ցուցաբերում իրենց առվելագույն ազդեցությունը բիթքոինի գնի վրա։ Հաշվի առնելով, որ այդ փոփոխականները նշանակալի են 5% նշանակալիության մակարդակով՝ մենք հանեցինք դրանք մոդելից (Հավելված 19)։ Այստեղ տեսում ենք, որ XRP դառնում է ոչ նշանակալի, այդ պատճառով մենք այդ փոփոխականը նույնպես հանեցինք մոդելից (Հավելված 20)։ Այս մոդելի վրա կիրառեցինք Ուայթի թեստը, որից պարզվեց, որ մոդելը հետերոսկեդաստիկ է։ Հետերոսկեդաստիկությունից ազատվելու համար կառուցեցինք BMHK (Հավելված 21)։ Մոդելը ցույց է տալիս, որ այլ կրիպտոարժույթների գները դրական են ազդում բիթքոինի փոխարժեքի վրա, ինչը պայմանավորված է դրանց փոխարժեքների ընդհանուր դիանմիկայով (Հավելված 22), իսկ վերջինս կրիպտոարժույթների միասնական շուկայի նկատմամբ պահանջարկի աճի հետևանք է։ Հաջորդ գործոնը DJ ինդեքսն է, որը արտահայտում է 30 խոշորագույն ամերիկյան կազմակերպությունների բաժնետոմսերի փոխարժեքների տատանումները։ Ինդեքսի և BTC փոխարժեքի միջև առկա է դրական կապ, այսինքն՝ նշված

կազմակերպությունների բաժնետոմսերի գների աճն ուղեկցվում է BTC գնի աճով: Պարզելու համար, թե այդ կազմակերպություններից որոնք են ավելի մեծ ազդեցություն թողնում BTC գնի վրա, մենք ստորաբաժանեցինք այդ կազմակերպությունները 3 խմբի՝ տեխնոլոգիական. ֆինանսական, արդյունաբերական: Յուրաքանչյուր խմբում ներառեցինք 3 կազմակերպություն և հաշվեցինք դրանց բաժնետոմսերի միջին արժեքները: Համեմատելով այդ ցուցանիշների դինամիկաները (Հավելված 23)՝ հանգում ենք այն եզրակացության, որ BTC փոխարժեքը հակադարձ կախվածության մեջ է տեխնոլոգիական կազմակերպությունների բաժնետոմսերի փոխարժեքից, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ բիթքոինը և այդ կազմակերպությունների թողարկած արտադրանքը (ծրագրային ապահովումներ, հաշվողական տեխնիկա) միմյանց լրացնող են: Իրավիճակը այլ է ֆինանսական և արդյունաբերական կազմակերպությունների դեպքում. այստեղ կապը դրական է, այսինքն՝ դրանց բաժնետոմսերում ներդրումները դիտվում են որպես ներդրումների իրականացման այլընտրանքային ուղի: Ընդհանուր ինդեքսի ազդեցությունը դրական է, քանի որ հաշվարկում ներառված տեխնոլոգիական կազմակերպությունների տեսակարար կշիռը փոքր է:

Անդրադառնալով յուանի ու եվրոյի փոխարժեքներին՝ պետք է նշել, որ դրանց փոխարժեքների տատանումները ոչ միանշանակ են ազդում կախյալ փոփոխականի վրա: Եվրոյի ու BTC միջև առկա է դրական կապ, իսկ յուանի ու BTC միջև՝ բացասական: Այս կապերը հասկանալու համար պետք է ուշադրություն դարձնել յուանի առանձնահատկություններին. նախ՝ այն չի մտնում CLS-ի մեջ, և դրա փոխարժեքը խիստ կարգավորվում է պետության կողմից, երկրորդ՝ յուանի շրջանառությունը, Չինաստանից դուրս այսպես կոչված օֆշորային յուանի շրջանառությունը՝ արժեքային արտահայտությամբ, և գործարքների մեծամասնությունը իրականացվում է եվրոպայի տարածաշրջանում (¼ -ը՝ Լոնդոնում): Այսինքն, եթե յուանի փոխարժեքը ընկնում է, մարդիկ սկսում են փնտրել միջոցների ներդրման այլընտրանքային ուղիներ, և այդ ուղիներից առաջինը հենց եվրոն է, հետևաբար աճում է եվրոյի փոխարժեքը: Այդպիսի այլընտրանքներից մեկն է նաև BTC, այսինքն՝ դրա գինը նույնպես հակադարձ համեմատական է յուանի գնին: Նշված հանգամանքներից ելնելով՝ կարող ենք ասել, որ եվրոյի և BTC փոխարժեքների միջև առկա է դրական կապ (այդ կապը նաև փոխարինման էֆեկտի արդյունք է):

Հաջորդ գործոններն են ոսկու գինը և Քեյս-Շիլլերի ինդեքսը: Ոսկու և BTC միջև կապի ամենահետաքրքիր դրսևորումներից մեկը 2016թ դեկտեմբերն էր, երբ BTC գինը հատեց $20000-ը: Շուկայի այդ իրարանցման շրջանում բոլորն սկսեցին իրենց միջոցներն ուղղել դեպի կրիպտոարժույթների շուկա, իսկ դա նշանակում է, որ պետք է տեղի ունենար կապիտալի արտահոսք այլ շուկաներից: Հենց այդպիսի կտրուկ արտահոսք է տեղի ունեցել ոսկու

շուկայից (Հավելված 24), սակայն երբ աժիոտաժը անցավ, ոսկու գինը նորից սկսեց կարգավորվել: Ինչ վերաբերում է անշարժ գույքի շուկային, ապա այստեղ կա յուրահատուկ սպեցիֆիկա. անշարժ գույքի պահանջարկը ճկուն չէ, այս շուկայի որոշակի սեգմենտ փոփոխության չի ենթարկվում՝ կախված արտաքին գործոններից, այսինքն՝ մարդիկ որոշում կայացնելիս հիմնվում են փոխարժեքի դինամիկայի վրա՝ երկար ժամանակահատվածի կտրվածքով: Նավթի ու գնի միջև եղած կապը հասկանալու համար պետք է հասկանալ նաև սանկցիաների ունեցած դերը: Վերը նշվեց, որ ՌԴ վրա կիրառվող սանկցիաները բացասական կապի մեջ են BTC փոխարժեքի հետ. դա պայմանավորված է այն հանգամանքով, որ սանկցիաների կիրառման հետևանքով ՌԴ սկսում է զարգացնել իր ներքին արտադրությունը, այսինքն, կապիտալն ուղղվում է իրական հատված՝ կրիպտոարժույթների շուկայի փոխարեն: ՌԴ դեմ սանկցիաների կիրառմանը ի պատասխան՝ ՌԴ իջեցնում է նավթի գները՝ համաշխարհային շուկայում իր արտահանման ծավալները մեծացնելու համար: Ստացվում է, որ սանկցիաների կիրառումը հակադարձ համեմատական է BTC փոխարժեքին և նավթի գներին, ինչով և բացատրվում է նավթի ու BTC փոխարժեքի միջև առկա դրական կապը:

Այսպիսով, ընդհանրացնելով ասածը, կարող ենք նշել, որ, չնայած բիթքոինը համեմատաբար նոր երևույթ է համաշխարհային ֆինանսական համակարգում, այն արդեն սերտորեն ինտեգրվել է տնտեսական բազմակողմանի փոխհարաբերությունների մեջ, որոնք իրենց ազդեցությունն են թողնում դրա փոխարժեքի ձևավորման վրա: Մոդելը ցույց տվեց հետաքրքիր փոխկապվածություններ, որոնք անզեն աչքով հնարավոր չէր լինի նկատել: Կրիպտոարտարժույթների ստեղծումը լուրջ մարտահրավերներ է ստեղծում տնտեսության մեջ ստատուս քվոյի պահպանման համար: Շատ ասպեկտներում տնտեսությունը, որտեղ հիմնական տեղը հատկացված կլինի կրիպտոարժույթներին, կտարբերվի մեր այսօրվա ծանրաբեռնված, անկայուն և կենտրոնացված կարգավորվող համակարգերից: Ի հակադրություն դրանց նոր աշխարհը կլինի ֆինանսապես առողջ, կայուն, էականորեն անաչառ, ապակենտրոնացված և ժողովրդավարական, քանի որ դրանում կկարողանա մասնակցել ցանկացած անձ՝ անկախ իր մոտ առկա ֆինանսական միջոցներից և ֆինանսական հաստատությունների մատչելիությունից: Բանկերի մենաշնորհը այժմ փլուզվում է: Կրիպտոարժույթների մեջ մենք տեսնում ենք նորաստեղծ փող և նոր տնտեսություն: Իշխող դասի խուճապը դեռ նոր է սկսվել... Հաջորդիվ ներկայացնում ենք մեր առաջարկությունները այս առումով:

1. Անհրաժեշտ ենք համարում տարածաշրջանային կոորդինացնող կառույցի կամ առնվազն համաձայնության ստեղծում, որում պետք է հստակ սահմանված լինեն կրիպտոարժույթի օգտագործման սկզբունքները, ինչպես նաև ՀՀ և ԱՀ օրենսդիր մարմինների կողմից համապատասխան կանոնների ու իրավական բազայի ձևավորումը:

2. Նպատակահարմար ենք գտնում ՀՀ ԿԲ-ի հովանու ներքո «Կրիպտոարժույթների շրջանառության համակարգի զարգացման հեռանկարները համաշխարհային տնտեսության գլոբալիզացիայի համատեքստում և դրա ազդեցությունը տարածաշրջանի՝ հատկապես ՀՀ և ԱՀ տնտեսությունների վրա» թեմայով կոնֆերանսի կազմակերպումը՝ ՀՀ առևտրային բանկերի, IT ընկերությունների ներկայացուցիչների, բուհերի տնտեսագիտական և տեխնիկական ուղղվածությամբ մասնագիտությունների ուսանողների ու դասախոսների ներգրավմամբ:

3. Հաշվի առնելով Մեծ տվյալները կառավարող համապատասխան մակարդակի մասնագետների պակասուրդը՝ ՀՀ ԿԲ-ը կարող է Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի շրջանակներում կազմակերպել այդպիսի մասնագետների պատրաստում: Ինչպես նաև անհրաժեշտ ենք համարում տնտեսագիտական մասնագիտությունների ծրագրերում «Թվային տնտեսություն» առարկայի ներդրումը, քանի որ այն առանցքային դեր ունի ներկա ժամանակաշրջանին համահունչ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման հարցում:

Գրականություն

1. А. А. Гусева, 2016, «Большие Данные»: Понятие, Источники, Возможности
2. Вахрушев Д. С., Железов О. В., «Криптовалюта как феномен современной информационной экономики: проблемы теоретического осмысления», Интернет-журнал «Науковедение», Выпуск 5 (24), сентябрь – октябрь 2014, URL: publishing@naukovedenie.ru
3. Кравченко И. М., Постников М. М., «Криптовалюта: роль в современном мире», МГУ, г. Москва, 2015 г.
4. Тапскотт Дон, Тапскотт Алекс, «Революция блокчейн. Как технология, стоящая за биткоин, меняет деньги, бизнес и Мир», Portfolio, 2016
5. Щербик Ев. Еф., «Феномен криптовалют: опыт системного описания» // Научно- методический электронный журнал «Концепт». – 2017. – № S1. – 0,6 п. л., URL: http://e-koncept.ru/2017/470010.htm.
6. Annual Report, VISA, 2017, Corporate Responsibility Report, VISA 2016
7. Bitcoin Energy Consumption Index, Digiconomist, 2018
8. Key World Energy Statistics 2017, International Energy Agency
9. https://bitcoin.org/bitcoin.pdf

Հավելված 1 Ժամանակակից բանկային ծառայություններ

• Սպառողական վարկերի տրամադրում: Անցյալում, գործնականորեն, բոլոր բանկերը խուսափել են մասնավոր անձանց համար վարկային հաշիվներ բացելուց, համարելով, որ սպառողական վարկերի փոքր ծավալները և փոխառուի կողմից վարկային պարտավորությունների չկատարման մեծ հավանականությունը նման ծառայությունը կարող է դարձնել ոչ շահավետ: Սակայն 20-րդ դարում, հատկապես 50-70-ականներին՝ զանգվածային սպառման հասարակության ձևավորման հետ մեկտեղ տրամագծորեն փոխվեցին բանկերի մոտեցումները:

• Ֆինանսական խորհրդատվություն: Ավանդաբար, բանկի հաճախորդները բանկին դիմում են ֆինանսական խորհրդատվություն ստանալու նպատակով, հատկապես երբ վարկային միջոցների կամ խնայողությունների օգտագործման հարց է առաջանում: Մեր օրերում շատ բանկեր առաջարկում են ֆինանսական խորհրդատվական ծառայություններ՝ սկսած բիզնես ծրագիր կազմելուց և վերջացրած ներքին ու արտաքին շուկաների հեռանկարների մասին մարքեթինգային վերլուծություններով:

• Կանխիկ միջոցների հոսքերի կառավարում: Ֆիրմայի և անհատների դրամական հոսքերի հավաքագրման (ինկասացիա) և ժամանակավորապես ազատ դրամական միջոցների կարճաժամկետ ներդրման գործընթացի կազմակերպումն է:

• Սարքավորումների լիզինգ: Շատ բանկեր սկսել են ակտիվորեն աջակցել հաճախորդ ձեռնարկություններին անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերման գործում՝ կիրառելով լիզինգային գործարքները, համաձայն որոնց, բանկը սեփականության իրավունքով ձեռք է բերում սարքավորումներ և վարձակալման հանձնում հաճախորդին:

• Ռիսկային (վենչուրային) կապիտալի առաջարկ: Ավելի ու ավելի հաճախ բանկերը իրականացնում են նոր ընկերությունների ստեղծման հետ կապված ներդրումներ՝ հատկապես բարձր տեխնոլոգիաների ոլորտում:

• Ապահովագրական ծառայությունների վաճառք: Երկար ժամանակ բանկերը զբաղվել են հաճախորդների կյանքի վարկային ապահովագրությամբ՝ դրանով իսկ ապահովելով տրված վարկերի երաշխավորված մարումը վարկառուի մահվան կամ հիվանդության դեպքում, սակայն պետք է նշել, որ ԱՄՆ-ի և բազմաթիվ այլ երկրների, այդ թվում նաև ՀՀ օրենսդրությունը առևտրային բանկերին արգելում է գրեթե բոլոր տեսակի ապահովագրական ծառայությունների մատուցումը:

• Կենսաթոշակային ծրագրերի վաճառք: Բանկերի տրաստային բաժինները ակտիվորեն զբաղվում են քաղաքացիների ծերության ապահովման ծրագրերի կառավարմամբ: Բրոքերային ծառայությունների առաջարկն ըստ արժեթղթերի գործարքների: Սա հաճախորդին հնարավորություն է ընձեռում գնելու և

վաճառելու բորսաներում գնանշվող ցանկացած արժեթուղթ՝ առանց յուրաքանչյուր արժեթղթի մասնագետ դիլերին դիմելու։

Հավելված 2: Big Data հասկացությունը



Հավելված 3: AI սահմանումը ըստ տարբեր աղբյուրների



Հավելված 4 Բանկային գործունեության այն ոլորտները, որոնք ավելի շատ կենթարկվեն փոփոխությունների BD-ի կիրառման դեպքում

1. Ռիսկերի կառավարում. Սա Big Data-ի և AI-ի կիրառման ամենանպաստավոր ոլորտներից է բանկային գործում: Ցանկացած տեսակի ռիսկերի կառավարումը, լինեն դրանք գործառնական, շուկայական, վարկային թե իրավական, կախված է ռիսկ-մենեջերի ստացած տեղեկատվության օբյեկտիվությունից ու լրիվությունից: Big Data-ի գործիքները հնարավորություն են տալիս ստանալ իրավիճակի համապարփակ պատկերը ցանկացած մակարդակում՝ վարկառուի վստահելիությունից մինչև երկրի առանձին տարածաշրջանի տնտեսական իրավիճակը:

Հաճախորդի ֆինանսական վիճակը ստուգելիս բանկերը հիմնվում են նրա ամսական հաշվետվությունների, վարկային պատմության, նրա կատարած վճարումների մասին տեղեկատվության, ինչպես նաև վարկառուի կողմից տրամադրված տեղեկատվության վրա: Ռիսկերի կառավարման համակարգը, որը հիմնված է Big Data-ի և AI-ի վրա, կպատմի պոտենցիալ վարկառուի մասին շատ ավելին ու ավելի օբյեկտիվ: Այն թույլ կտա միացնել վերլուծությանը նաև հսկայական քանակությամբ արտաքին ինֆորմացիա՝ կազմակերպության մասին (եթե պոտենցիալ հաճախորդը իրավաբանական անձ է) ԶԼՄ-րի հաղորդած տեղեկատվությունը, կադրային փոփոխությունների մասին

տեղեկատվությունը, կանխատեսումները, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ սոցիալական կայքերում նրանց ակտիվությունը, մեկնաբանությունների տոնայնությունը, գնումների նախընտրությունները և նույնիսկ վարքագիծը ցանցային խաղերում:

Big Data-ն և AI-ը հնարավորություն են տալիս ստեղծելու հաճախորդների հոգեբանական դիմանկարը, ինչը կարևոր դեր ունի վարկավորման գործընթացում ռիսկերի գնահատման համար: Այսպես, օրինակ, Banks.am-ը նախաձեռնել է մի հարցում՝ պարզելու համար ՀՀ բանկերի դիրքորոշումը սքորինգի հոգեչափական մոդելի կիրառման հարցի շուրջ. Արդյոք հաշվի՞ է առնվում վարկառուների վարքագիծը սոց ցանցերում վարկային հայտերն ուսումնասիրելիս, և քննարկվո՞ւմ է արդյոք նման մոդելի ներդրման հեռանկարը առանձին պրոդուկտի տեսքով: Հարցման արդյունքներով, որին պատասխանել են ՀՀ 17 առևտրային բանկերից միայն 8-ը, նրանցից և ոչ մեկը չի ուսումնասիրում վարկառուների վարքագիծը սոց ցանցերում: Անելիք Բանկի մասնագետները կարծում են, որ սքորինգի հոգեչափական մոդելի մասին խոսելը հայաստանյան բանկային համակարգում ժամանակավրեպ է՝ հաշվի առելով, որ «բանկերը դեռ ամբողջությամբ չեն յուրացրել վիճակագրական սքոր քարտերի հնարավորությունները»:[1] Յունիբանկում և Արմսվիսբանկում նույնպես նման մոդելի կիրառման հեռանկարներ չեն քննարկվում՝ համարելով այն ոչ նպատակահարմար: Արցախբանկն ու Evocabank-ը, ընդհակառակը, գտնում են, որ հոգեչափական մոդելը հետաքրքիր գաղափար է և ապագայում այն կարող է դառնալ վարկավորման համար կիրառվող առանցքային գործիքներից մեկը: Կոնվերսբանկն ու Հայէկոնոմբանկը առանձնացնում են սքորինգի հոգեչափական մոդելի հետ կապված ռիսկերը, մասնավորապես, նրանք նշում են, որ սոցցանցերում էական տոկոս են կազմում կեղծ օգտատերերը,

[1] https://banks.am/am/news/interviews/14819

ինչը մոդելում բարձրացնում է սխալի հավանականությունը, այդ տեղեկատվությունը հավաստի չէ և կարող է, առհասարակ, չհամապատասխանել իրականությանը:

2. Անվտանգություն և փողերի լվացման դեմ պայքար: Ֆինանսական խարդախությունները արդեն վաղուց լուրջ խնդիր են հանդիսանում ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար: Դրանց վտանգը մեծանում է համաշխարհային գործարքների թվի մեծացմանը զուգընթաց: Բարեբախտաբար, արհեստական ինտելեկտը ունի հսկայական ներուժ կրճատելու դրանց թիվը: Ըստ McAfee համակարգչային անվտանգության ապահովման ընկերության վերջին հաշվետվության՝ կիբերհանցագործությունների պատճառած վնասը համաշխարհային տնտեսությանը ներկայումս կազմում է մոտ 600 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը կազմում է համաշխարհային ՀՆԱ-ի 0,8%-ը:[1] Կիբերհանցագործությունների ամենատարածված և կանխարգելելի ձևերից մեկը կրեդիտային քարտերով խարդախություններն են: Դրանց իրականացման բարձր արագությունը ավելի է մեծացնում արհեստական ինտելեկտի կարևորությունը: Ունենալով մեծ ծավալներով ինֆորմացիա հաճախորդի, ինչպես նաև նրա գործարքների մասին, որը թարմացվում է իրական ժամանակահատվածում, AI-ը կարող է ստեղծել քարտապանի վարքագծի տիպիկ մոդել, բացահայտել արտասովոր գործարքները և անհրաժեշտության դեպքում իրականացնել համապատասխան գործողություններ:

Այս ուղղության կիրառման օրինակ կարող է ծառայել HSBC բանկը, որը 2017 թ. մայիսին հայտնեցվողների լվացման դեմ պայքարող ինտելեկտուալ համակարգ ներդնելու նպատակով Google-ի հետ իր համագործակցության մասին:

ՀՀ բանկերից Յունիբանկն արդեն ձեռք ենք բերել բավականին լուրջ համակարգ ակտիվ ֆրոդ-վերահսկողության գծով և սկսել է թեստավորումը:

3. Հաճախորդների սպասարկում: Հաճախորդի մասին համալիր տեղեկատվության վերլուծությունը թույլ է տալիս մշակել անձնական մոտեցում յուրաքանչյուր հաճախորդի կամ նրանց խմբերի նկատմամբ: Big Data-ն և AI-ը հնարավորություն են տալիս նախ գտնել և լուծել հաճախորդների մոտ առաջացած խնդիրները,կանխատեսել նրանց ցանկություններն ու հնարավորությունները, ապահիշտ ժամանակին առաջարկել «հատուկ նրանց համար» մշակված ծառայություններ:

Հասկանալով իր հաճախորդներին՝ բանկերը ոչ միայն կարող են ճիշտ գովազդային առաջարկություններ անել, այլև հարմարեցնել նրանց իրենց ավտոմատացված համակարգերի ինտերֆեյսը:

4. Գործընթացների ավտոմատացում: Արհեստական ինտելեկտը կարող է ավտոմատացնելմիատիպ բանկային գործընթացները և և էականորեն կրճատել բանկերի ծախսային հոդվածները աշխատավարձի գծով: Capgemini խորհրդատվական ընկերության փորձագետները փաստում են, որ ռոբորները 50-90 %-ով ավելի քիչ արժեն, քան հաստիքային և ոչ հաստիքային աշխատողները, և որ բանկերը ավելի շատ միջոցներ կներդնեն արհեստական ինտելեկտում՝ փորձելով բարձրացնել հաճախորդների սպասարկման արդյունավետությունը: Այդպիսով նրանք նաև կչեզոքացնեն մարդկային գործոնը՝ ի վերջո մարդիկ հիվանդանում են, աշխատանքից հեռանում, իսկ նոր աշխատանքի ընդունվածներին անհրաժեշտ է լինում նորից վերապատրաստել: Արհեստական ինտելեկտը անընդհատ կուտակում է ինֆորմացիա, ինքնակրթվում և կատարելագործվում:

Autonomus NEXT-ի վերջին հետազոտության համաձայն՝ միայն ԱՄՆ-ում AI-ի կիրառումը 2030 թ, կանխատեսմամբ կարող է հանգեցնել բանկային սեկտորի 1,2 մլն աշխատատեղերի կրճատման կամ 450 մլրդ ԱՄՆ դոլարի չափով ծախսերի խնայման: Սակայն մյուս կողմից դա նույնն է, ինչ խոսել 20-40 % գործազրկության մասին:[2]

Խոսելով մեր իրականության մասին՝ նշենք, որ ավտոմատացման փորձեր արվվում են: Օրինակ,Ամերիա բանկում որոշ պրոդուկտների գծով որոշումների կայացման գործընթացներն ամբողջովին ավտոմատացված են: «Մենք ցանկանում ենք թվով ավելի շատ որոշումներ կայացնել ավտոմատացված եղանակով և այդ եղանակը կիրառել ոչ միայն ֆիզիկական անձանց, այլ ՓՄՁ-ների նկատմամբ»,-հայտնումէ Ամերիաբանկի Ակտիվների, պարտավորությունների և կապիտալի կառավարման վարչության ղեկավար Հովհաննես Խաչատրյանը:[3]

Բանկային ծառայությունների մատուցման գործընթացների ավտոմատացման համակարգերի լիարժեք և արդյունավետ օգտագործման խոչընդոտ կարող է հանդիսանալ, ըստ մեզ, նաև հասարակության տեխնիկական կրթվածության մակարդակը ընդհանրապես, և բանկի առանձին հաճախորդինը՝ մասնավորապես: Ինչքան բարձր է նոր ստեղծվող տեխնոլոգիաների մակարդակը, այնքան պետք է բարձր լինի այն մարդկանց մակարդակը, ով օգտագործում է այդ տեխնոլոգիաները:

[1] "Economic Impact of Cybercrime— No Slowing Down", McAfee, February 2018
[2] https://next.autonomous.com/augmented-finance-machine-intelligence
[3] https://www.ameriabank.am/PressContent.aspx?id=6254&subcat=228&mt=image/jpeg&lang=33

Հավելված 5: Մեր կողմից անցկացված հարցման արդյունքները

Հավելված 6: Աշխարհում ամենամեծ տարածում գտած կրիպտոարժույթները



• Բիթքոին: Ըստ այս արժույթը ստեղծողի՝ դրա մշակումը սկսվեց դեռևս 2007 թ., ծրագիրը մեկնարկեց 2009-ին: Բիթքոինը այսօր հանդիսանում է ամենաընդարձակ և լայնածավալ ցանց ունեցող կրիպտոարժույթը, որն օժտված է մեծ լիկվիդայնությամբ: Բիթքոինի փոխանակման կուրսը շատ փոփոխուն է և որոշվում է բացարձակապես առաջարկի ու պահանջարկի բալանսավորմամբ: Գործարքների կասեցումը հնարավոր չէ: Բիթքոինի էմիսիայի ծավալը սահմանափակ է՝ 21 մլն, վերջին բիթքոինը «կարդյունահանվի» 2140 թվականին:

• Լայթքոին: Երկրորդ ամենատարածված արժույթը լայթքոինն է, որի թողարկումը մեկնարկեց 2011 թ.: Այն ունի բազմաթիվ ընդհանուր գծեր բիթքոինի հետ, Հիմնական տարբերությունները բիթքոինից այն է, որ այստեղ օգտագործվում է հեշավորման և բլոկերի հաշվառման այլ ալգորիթմ, փոխանցումները հաստատելու համար պահանջվում է 4 անգամ ավելի կարճ ժամանակահատված և էմիսիայի սահմանը 4 անգամ ավելի մեծ է՝ 84 մլն:

Բիթքոինից հետո համացանցում սկսեցին հայտնվել այլ կրիպտոարժույթներ,որոնք քիչ թե շատ նմանություններ ունեն վերջինիս հետ: Դրանց թվին կարելի է դասել Terracoin-ը, Ppcoin-ը, Namecoin-ը, Novacoin-ը, Etherium-ը: Դրանց տարբերությունները բիթքոինից կրում են տեխնիկական բնույթ՝ կոդավորման տարբեր ալգորիթմներ, մայնինգի և շրջանառության տարբեր մեթոդներ:

Հավելված 7: Կրիպտոարժույթների հիմնական առավելությունները

1. Ապակենտրոնացված համակարգ: Բոլոր գործարքները, ներառյալ արժույթի թողարկումը, ֆիքսվում են ընդհանուր բազայում, որը հասանելի է բոլոր օգտատերերին: Ցանկության դեպքում մենք կարող ենք տեսնել ցանկացած քոինի անցած ճանապարհը՝ ընդհուպ մինչև դրա ստեղծման պահը: Հենց այս պատճառով կրիպտոարժույթը հնարավոր չէ կեղծել, ինչպես նաև հնարավոր չէ լրիվությամբ ջնջել գործարքների պատմությունը, քանի որ այն միաժամանակ պահպանվում է միլիոնավոր օգտատերերի համակարգիչներում ամբողջ աշխարհով մեկ:

2. Կրիպտոարժույթի բաց ծրագրային կոդը և գաղտնիությունը: Բիթքոինում օգտագործվում են նույն ալգորիթմները, ինչ ինտերնետ-բանկինգում: Միակ տարբերությունն այն է, որ ինտերնետ-բանկինգում հայտնի են վերջնական օգտատերի տվյալները: Բիթքոին ցանցում բուն գործարքների վերաբերյալ ինֆորմացիան (գումարը, ժամկետը) մատչելի է հանրությանը, սակայն գումար ուղարկողի և ստացողի անձնական տվյալները հայտնի չեն:

3. Կրիպտոարժույթի Peer-to-peer ցանցը: Նմանատիպ ցանցերում բացակայում են գլխավոր սերվերները, որոնք պատասխանատու են բոլոր գործարքների համար: Բոլոր էլեկտրոնային դրամապանակները հանդիսանում են ցանցի մի մասը: Գործարքները կատարվում են հարյուրավոր բաժանորդների կողմից, նրանք նաև կոչվում են «մայներներ»: Ո՛չ բանկերը, ո՛չ հարկային մարմինները, ո՛չ պետությունը չեն կարող վերահսկել օգտատերերի դրամապանակների միջև փողի փոխանակումը:

4. Գործարքների անսահմանափակ հնարավորություններ: Օգտատերերից յուրաքանչյուրը կարող է վճարել ցանկացած մեկին ցանկացած գումար ցանկացած ապրանքի ու ծառայության համար: Գործարքները հնարավոր չէ արգելել, այնպես որ հնարավոր է փոխանցել գումար աշխարհի ցանացած կետ կրիպտոարժույթի էլեկտրոնային դրամապանակ ունեցող ցանկացած անձի:

5. Շատ ցածր միջնորդավճարներ: Ներկաումս կրիպտոարժույթով վճարումները իրականացվում են անհամեմատ ցածր միջնորդավճարներով, կամ ընդհանրապես առանց միջնորդավճարների:

Հավելված 8 Կրիպտոարժույթների հիմնական թերությունները

1. Ոչ բավարար տարածում և ճանաչում: Չնայած իր բոլոր առավելություններինէ բիթքոին վճարային համակարգը դեռևս համընդհանուր տարածում չի ստացել: Եթե դուք մտնեք խանութ և հարցնեք՝ կարող եք արդյոք վճարել բիթքոիններով, կտեսնեք միայն զարմացած հայացքներ: Այսինքն, օգտագործել բիթքոին այսօր հնարավոր է միայն որոշակի ոլորտներում:
2. Փոխարժեքի արագ տատանումներ: Նշենք, որ, բիթքոինի փոխանակման կուրսը շատ զգայուն է արտաքին միջավայրի փոփոխությունների նկատմամբ, և այն սկսեց աճել 2016թ., երբ Ճապոնիան ընդունեց այն որպես վճարային միջոց: Բիթքոինի փոխարժեքը իր գագաթնակետին հասավ 2017 թվականի դեկտեմբերին. Փոխարժեքը գերազանցեց 20000 ԱՄՆ դոլարը, սակայն Չինաստանի վարած զսպող քաղաքականության պատճառով այն նորից անկում ապրեց: Բիթքոինի փոխարժեքի դինամիկան իր ստեղծման պահից մինչև այսօր ներկայացված է հավելված 2-ում:
3. Անկանխատեսելիություն: Ըստ էության բիթքոինը ստարտ-ափ նախագիծ է,և կանխատեսել դրա հետագա զարգացումները բավականին բարդ է: Այն իր սկզբնական փուլը անցավ բավականին հաջող, իսկ թե ինչ կլինի հետո, կարելի է միայն ենթադրել: Դա բիթքոինի լուրջ թերություններից մեկն է:
4. Երաշխիքների բացակայություն: Բիթքոինի սեփականատերերը չունեն երաշխիքներ, որ կկարողանան հետ ստանալ գոնե այն գումարները, որոնք ներ են դրել այդ համակարգում: Բիթքոինի փոխարժեքը որոշվում է շուկայում և համաշխարհային ֆունդամենտալ փոփոխությունների դեպքում կարող է դառնալ նաև զրոյական: Բացի դրանից,բիթքոինը, որպես արժույթ, ոչնչով ապահովված չէ, բացառությամբ այն ստեղծելու համար օգտագործվող հաշվողական տեխնիիկայի:
5. Պետական արգելքներ: Տարբեր պետություններ տարբեր վերաբերմունք են ցուցաբերում բիթքոինի՝ որպես վճարային համակարգի նկատմամբ և ցանկացած պահի կարող են նոր արգելքներ մտցնել դրա նկատմամբ: Պետության համար փողի էմիսիայի մոնոպոլիայի կորուստն անթույլատրելի է, այդ պատճառով նրանք փորձում են կանխել այդ գործընթացը, կամ վերահսկողության տակ առնել ամբողջ համակարգը:
6. Անօրինական ապրանքների շրջանառությունը: Ստվերային տնտեսության մեջ բիթքոինի օգտագործումը թույլ է տալիս ապահովել ազգային մարմինների վերահսկողության բացակայությունը այնպիսի ապրանքների առքուվաճառքի նկատմամբ, ինչպիսիք են զենքերը, թմրամիջոցները, արգելված պրեպարատները, և նույնիսկ մարդիկ: Նման առևտրի վառ օրինակ լրատվամիջոցները հաճախ համարում են Silk Road ինտերնետ-խանութի պատմությունը: ԱՄՆ Սենատում լսումների ընթացքում վիրտուալ արժույթների մասին նշվեց, որ անօրինական գործարքների համար կանխիկ գումարներն ավելի հաճախ են օգտագործվում, քան կրիպտոարժույթները, բայց դա հիմք չի հանդիսանում կանխիկ դրամի քննադատության կամ արգելման համար:

Հավելված 9: Բլոկչեյնի գործունեության մեխանիզմը



Հավելված 10: Բիթքոինի առաջարկի կորը 2009-2019 թթ



Հավելված 11: Բիթքոինի և ոսկու արդյունահանման վրա կատարված համախառն էներգետիկ ծախսերի համեմատական վերլուծությունը



Հավելված 12: Բիթքոինի և ոսկու համախառն արտադրությունը՝ ԱՄՆ դոլար



Հավելված 13: Բիթքոինի և ոսկու արդյունաբերության ծախսերը միավորի հաշվով



Հավելված 14: Բիթքոինը և աշխարհի երկրները ըստ էլեկտրաէներգիայի սպառման ցուցանիշի



Հավելված 15: Բիթքոինի էլեկտրաէներգիայի ծախսը տոկոսային հարաբերությամբ աշխարհի առաջատարների հետ



Հավելված 16: Բիթքոին և VISA վճարային համակարգերի էլեկտրաէներգիայի ծախսի համեմատական վերլուծությունը



Հավելված 17: Модель 1: МНК, использованы наблюдения 1-1566
Зависимая переменная: averageBTC

	Коэффициент	*Ст. ошибка*	*t-статистика*	*P-значение*	
const	9838,84	1595,81	6,165	<0,0001	***
averageDJ	0,191625	0,0271754	7,051	<0,0001	***
averageLTC	44,4445	1,02996	43,15	<0,0001	***
averageXRP	−272,237	140,781	−1,934	0,0533	*
averageETH	0,752566	0,263233	2,859	0,0043	***
priceeur	13595,9	956,173	14,22	<0,0001	***
pricecny	−121922	7876,49	−15,48	<0,0001	***
PriceXAU	−4,71380	0,366993	−12,84	<0,0001	***
CSUSHPINSA	−29,5148	6,60584	−4,468	<0,0001	***
Russia	−212,452	195,803	−1,085	0,2781	
Iran	65,1151	302,095	0,2155	0,8294	
Brent	34,4946	3,60190	9,577	<0,0001	***

Среднее зав. перемен	3150,079	Ст. откл. зав. перемен	3642,631
Сумма кв. остатков	9,85e+08	Ст. ошибка модели	796,2264
R-квадрат	0,952556	Испр. R-квадрат	0,952220
F(11, 1554)	2836,414	P-значение (F)	0,000000
Лог. правдоподобие	−12676,73	Крит. Акаике	25377,46
Крит. Шварца	25441,74	Крит. Хеннана-Куинна	25401,36

Հավելված 18: Модель 2: МНК, использованы наблюдения 7:4-224:5 (T = 1521)
Зависимая переменная: averageBTC

	Коэффициент	*Ст. ошибка*	*t-статистика*	*P-значение*	
const	10926,2	1636,36	6,677	<0,0001	***
averageDJ	0,235499	0,0302777	7,778	<0,0001	***
averageLTC	46,3597	1,08276	42,82	<0,0001	***
averageXRP	−652,907	147,772	−4,418	<0,0001	***
averageETH	0,804401	0,276717	2,907	0,0037	***
priceeur	16856,0	1080,61	15,60	<0,0001	***
pricecny	−134573	8162,62	−16,49	<0,0001	***
PriceXAU	−5,13016	0,388859	−13,19	<0,0001	***
CSUSHPINSA	−46,4063	7,81825	−5,936	<0,0001	***
Russia_1	−330,795	202,621	−1,633	0,1028	
Russia_2	−347,565	202,613	−1,715	0,0865	*
Russia_3	−407,328	202,612	−2,010	0,0446	**
Russia_4	−460,090	202,627	−2,271	0,0233	**
Russia_5	−395,914	201,563	−1,964	0,0497	**
Russia_6	−344,553	201,203	−1,712	0,0870	*
Russia_7	−360,309	201,050	−1,792	0,0733	*
Russia_8	−375,258	201,137	−1,866	0,0623	*
Russia_9	−366,267	200,479	−1,827	0,0679	*
Russia_10	−299,613	200,471	−1,495	0,1353	
Russia_11	−245,732	200,301	−1,227	0,2201	
Russia_12	−211,917	200,203	−1,059	0,2900	
Russia_13	−225,248	200,219	−1,125	0,2608	
Russia_14	−207,740	200,343	−1,037	0,2999	
Russia_15	−19,1624	200,207	−0,09571	0,9238	
Russia_16	7,19607	200,287	0,03593	0,9713	
Russia_17	−92,9616	200,331	−0,4640	0,6427	
Russia_18	−188,470	200,395	−0,9405	0,3471	
Russia_19	−279,703	199,948	−1,399	0,1621	
Russia_20	−454,525	200,301	−2,269	0,0234	**
Russia_21	−615,701	200,538	−3,070	0,0022	***
Russia_22	−505,730	200,295	−2,525	0,0117	**
Russia_23	−401,136	200,153	−2,004	0,0452	**
Russia_24	−326,678	200,208	−1,632	0,1030	
Russia_25	−351,168	200,106	−1,755	0,0795	*
Russia_26	−432,179	200,267	−2,158	0,0311	**
Russia_27	−549,662	201,144	−2,733	0,0064	***
Russia_28	−490,419	200,942	−2,441	0,0148	**
Russia_29	−424,117	199,953	−2,121	0,0341	**
Russia_30	−390,849	200,381	−1,951	0,0513	*
Russia_31	−321,024	200,388	−1,602	0,1094	
Russia_32	−328,498	200,516	−1,638	0,1016	
Russia_33	−337,742	200,505	−1,684	0,0923	*
Russia_34	−276,570	200,476	−1,380	0,1679	

Russia_35	−199,785	200,465	−0,9966	0,3191
Russia_36	−125,261	200,333	−0,6253	0,5319
Russia_37	−117,446	200,067	−0,5870	0,5573
Russia_38	−139,928	200,043	−0,6995	0,4844
Russia_39	−138,321	200,058	−0,6914	0,4894
Russia_40	−102,152	199,989	−0,5108	0,6096
Russia_41	−77,1690	199,980	−0,3859	0,6996
Russia_42	−5,84357	199,993	−0,02922	0,9767
Russia_43	−16,3287	200,683	−0,08137	0,9352
Russia_44	77,2780	200,659	0,3851	0,7002
Russia_45	115,771	200,679	0,5769	0,5641
Iran_1	45,8951	307,388	0,1493	0,8813
Iran_2	17,6632	307,473	0,05745	0,9542
Iran_3	−7,30012	307,526	−0,02374	0,9811
Iran_4	79,6061	306,336	0,2599	0,7950
Iran_5	36,0946	306,370	0,1178	0,9062
Iran_6	−23,5050	306,639	−0,07665	0,9389
Iran_7	−19,7631	306,605	−0,06446	0,9486
Iran_8	55,9719	306,500	0,1826	0,8551
Iran_9	59,8658	306,414	0,1954	0,8451
Iran_10	20,1638	306,371	0,06581	0,9475
Iran_11	56,9278	306,352	0,1858	0,8526
Iran_12	32,9151	306,332	0,1074	0,9144
Iran_13	13,0734	306,397	0,04267	0,9660
Iran_14	−32,6380	306,433	−0,1065	0,9152
Iran_15	−53,7781	306,324	−0,1756	0,8607
Iran_16	−20,7004	306,232	−0,06760	0,9461
Iran_17	75,9908	305,215	0,2490	0,8034
Iran_18	62,1197	306,322	0,2028	0,8393
Iran_19	110,331	306,439	0,3600	0,7189
Iran_20	128,419	305,148	0,4208	0,6739
Iran_21	149,751	305,123	0,4908	0,6237
Iran_22	19,3855	305,023	0,06355	0,9493
Iran_23	41,1559	304,951	0,1350	0,8927
Iran_24	83,7470	304,988	0,2746	0,7837
Iran_25	67,8992	305,001	0,2226	0,8239
Iran_26	159,317	304,961	0,5224	0,6015
Iran_27	146,215	305,054	0,4793	0,6318
Iran_28	138,758	306,066	0,4534	0,6504
Iran_29	101,485	306,142	0,3315	0,7403
Iran_30	149,642	306,204	0,4887	0,6251
Iran_31	67,8805	306,167	0,2217	0,8246
Iran_32	44,1378	306,045	0,1442	0,8853
Iran_33	25,7343	305,951	0,08411	0,9330
Iran_34	41,1952	305,970	0,1346	0,8929
Iran_35	9,40402	305,969	0,03074	0,9755

Iran_36	5,17429	305,902	0,01691	0,9865	
Iran_37	113,946	306,037	0,3723	0,7097	
Iran_38	157,768	307,089	0,5138	0,6075	
Iran_39	173,547	307,065	0,5652	0,5720	
Iran_40	131,433	306,995	0,4281	0,6686	
Iran_41	103,659	307,022	0,3376	0,7357	
Iran_42	93,9631	308,169	0,3049	0,7605	
Iran_43	188,375	308,157	0,6113	0,5411	
Iran_44	300,199	308,260	0,9738	0,3303	
Iran_45	357,127	308,410	1,158	0,2471	
Brent	35,2710	3,67421	9,600	<0,0001	***

Среднее зав. перемен	3236,104	Ст. откл. зав. перемен	3661,128
Сумма кв. остатков	9,08e+08	Ст. ошибка модели	799,2476
R-квадрат	0,955446	Испр. R-квадрат	0,952342
F(99, 1421)	307,8093	P-значение (F)	0,000000
Лог. правдоподобие	−12272,35	Крит. Акаике	24744,70
Крит. Шварца	25277,41	Крит. Хеннана-Куинна	24943,02
Параметр rho	0,962850	Стат. Дарбина-Вотсона	0,074829

Հավելված 19: Модель 3: МНК, использованы наблюдения 1:1-224:5 (T = 1566)
Зависимая переменная: averageBTC

	Коэффициент	*Ст. ошибка*	*t-статистика*	*P-значение*	
const	9802,72	1594,75	6,147	<0,0001	***
averageDJ	0,190235	0,0271396	7,009	<0,0001	***
averageLTC	44,4899	1,02873	43,25	<0,0001	***
averageXRP	−264,878	140,577	−1,884	0,0597	*
averageETH	0,726744	0,261937	2,774	0,0056	***
priceeur	13604,7	955,870	14,23	<0,0001	***
pricecny	−121929	7874,50	−15,48	<0,0001	***
PriceXAU	−4,71634	0,366631	−12,86	<0,0001	***
CSUSHPINSA	−29,2333	6,59923	−4,430	<0,0001	***
Brent	34,5943	3,59935	9,611	<0,0001	***

Среднее зав. перемен	3150,079	Ст. откл. зав. перемен	3642,631
Сумма кв. остатков	9,86e+08	Ст. ошибка модели	796,0288
R-квадрат	0,952519	Испр. R-квадрат	0,952244
F(9, 1556)	3468,312	P-значение (F)	0,000000
Лог. правдоподобие	−12677,35	Крит. Акаике	25374,70
Крит. Шварца	25428,26	Крит. Хеннана-Куинна	25394,61
Параметр rho	0,967475	Стат. Дарбина-Вотсона	0,064741

Հավելված 20: Модель 4: МНК, использованы наблюдения 1:1-224:5 (T = 1566)
Зависимая переменная: averageBTC

	Коэффициент	*Ст. ошибка*	*t-статистика*	*P-значение*	
const	9582,25	1591,76	6,020	<0,0001	***
averageDJ	0,186105	0,0270732	6,874	<0,0001	***
averageLTC	43,9146	0,983194	44,67	<0,0001	***
averageETH	0,536716	0,241941	2,218	0,0267	**
priceeur	13721,0	954,656	14,37	<0,0001	***
pricecny	−121483	7877,38	−15,42	<0,0001	***
PriceXAU	−4,70529	0,366884	−12,82	<0,0001	***
CSUSHPINSA	−28,6855	6,59822	−4,347	<0,0001	***
Brent	34,3880	3,60063	9,551	<0,0001	***

Среднее зав. перемен	3150,079	Ст. откл. зав. перемен	3642,631
Сумма кв. остатков	9,88e+08	Ст. ошибка модели	796,6805
R-квадрат	0,952410	Испр. R-квадрат	0,952166
F(8, 1557)	3895,028	P-значение (F)	0,000000
Лог. правдоподобие	−12679,14	Крит. Акаике	25376,27
Крит. Шварца	25424,48	Крит. Хеннана-Куинна	25394,19
Параметр rho	0,968011	Стат. Дарбина-Вотсона	0,063635

Հավելված 21: Модель 5: ВМНК, использованы наблюдения 1:1-224:5 (T = 1566)
Зависимая переменная: averageBTC
Весовая переменная: const

	Коэффициент	*Ст. ошибка*	*t-статистика*	*P-значение*	
const	9582,25	1591,76	6,020	<0,0001	***
averageDJ	0,186105	0,0270732	6,874	<0,0001	***
averageLTC	43,9146	0,983194	44,67	<0,0001	***
averageETH	0,536716	0,241941	2,218	0,0267	**
priceeur	13721,0	954,656	14,37	<0,0001	***
pricecny	−121483	7877,38	−15,42	<0,0001	***
PriceXAU	−4,70529	0,366884	−12,82	<0,0001	***
CSUSHPINSA	−28,6855	6,59822	−4,347	<0,0001	***
Brent	34,3880	3,60063	9,551	<0,0001	***

Статистика, полученная по взвешенным данным:

Сумма кв. остатков	9,88e+08	Ст. ошибка модели	796,6805
R-квадрат	0,952410	Испр. R-квадрат	0,952166
F(8, 1557)	3895,028	P-значение (F)	0,000000
Лог. правдоподобие	−12679,14	Крит. Акаике	25376,27
Крит. Шварца	25424,48	Крит. Хеннана-Куинна	25394,19
Параметр rho	0,968011	Стат. Дарбина-Вотсона	0,063635

Статистика, полученная по исходным данным:

Среднее зав. перемен	3150,079	Ст. откл. зав. перемен	3642,631
Сумма кв. остатков	9,88e+08	Ст. ошибка модели	796,6805

Հավելված 22
Կրիպտոարժույթների փոխարժեքների դինամիկան







Հավելված 23

DJ ինդեքսի մեջ ներառված ֆինանսական,, տեխնոլոգիական և արդյունաբերական կազմակերպությունների բաժնետոմսերի փոխարժեքների տատանումները (կախված դիտարկման համարից)







Հավելված 23: Ոսկու գնի տատանումները 2015-2019 թթ



Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ. Շ.Շ.Ասրյանը:

Рецензия

Валерий АВАНЕСЯН

СТЕПАН ДАДАЯН. ПРАВДА И ЛОЖЬ О КАРАБАХСКОМ “ХАНСТВЕ”. Степанакерт, “Дизак-плюс”, 2019, 472 с.

С середины 60-х годов прошлого века с поощрением его политического руководства Советский Азербайджан ведет активную историко-информационную войну против армянства Арцах-Карабаха. С началом национально-освободительной борьбы армянства она стала более разнузданным. Информационная война азербайджанских историков направлена против концептуальных положений политической истории Арцах-Карабаха, северо-восточной части исторической Армении, который по воле большевиков России в 1921г. было передан искусственно созданному Азербайджану.

Под особым прицелом азербайджанских историков стали политические события в истории Арцах-Карабаха второй половины XVIII – первая четверть XIX вв. Вопреки воли его коренного армянского населения владельных князей (меликов), край приобрел абсурдное, противоречащее историческим реалиям, необоснованное название “Карабахское ханство”. Как могло подобное иметь место? Обусловлено ли данное явление объективным процессом исторического развития? Насколько правомерно было историческую Хамсу, существующую автономно со времен шаха Аббаса I, в составе пяти владельных армянских княжеств, “переименовать” в “Карабахское ханство”? Был ли этот акт произведен властными структурами Персии или нет? В чьих интересах было произведено данное абсурдное “создание”.? На все эти вопросы и на много других, читатель интересующийся политической историей Карабаха может найти в новой книге С. Дадаяна “Правда и ложь о Карабахском “ханстве””.

Вышеприведенные вопросы, пишет С. Дадаян вытекают от антинаучных, исторически необоснованных постулатов историков соседней республики. Вот, что пишет историк Т. Мустафа-заде: “В богатой пяти тысячилетней истории азербайджанской государственной традиции особое место занимает период ханств… Значение Гарабагского ханства азербайджанской государственности можно объяснить, в первую очередь тем, что оно сумело сохранить и развить азербайджано-тюркские государственные образования и традиции в Гарабагском ханстве, составляющем неотъемлемую часть территории Азербайжана и превратившемся сегодня в объект притязания армян”. (Мустафа-заде Т. О месте Гарабагского ханства в истории

Азербайджана. – Гарабаг-Курекчай – 200. Баку, 2005, с.91). Миф о “пяти тысячилетней традиции азербайджанской государственности”, дело азербайджанских историков, пусть они продолжают рассмешить своими “открытиями” читателей.

Цель рецензируемой работы состоит в критическом анализе азербайджанской исторической литературы постсоветского периода касательно политической истории Арцах-Карабаха вышеуказанного периода. Книга С. Дадаяна состоит из введения, четырех глав, заключения и списка литературы. Во введении автор дает аргументированную критическую оценку исторической литературы азербайджанских авторов, как абсурдная и антинаучная, целиком выстроенная на вымыслах и мифах. С. Дадаян отмечает, что историки Азербайджана в своих сочинениях по истории собственного народа касательно XVIII в., стараются связать с историей Арцах-Карабаха, как в геополитическом плане (т.н. Карабахское “ханство”), так и в цивилизационном (наличие огромного количества памятников материальной и духовной культуры армянского народа), как неотъемлемая часть своей истории.

Первая глава книги посвящена вопросам истории Арцаха с древнейших времен, как цивилизационное политико-административное образование в составе исторической Армении. Данная тема убедительно раскрыта в трудах древних историков и географов, авторов из России, Армении и других стран. Но для азербайджанских историков они не факт. У них своя логика, собственная концепция.

Особый интерес у азербайджанских историков к родословии меликских домов Арцаха, влиятельных хозяев земли армянской. Вопреки существующим историческим документам, они утверждают, что мелики в этническом плане не армяне, их родословие не местное а пришельцы. “Определение административных границ меликов и описание генеалогической родословий меликов хамсы является важным условием о несостоятельности утверждений азербайджанских авторов…” -пишет С. Дадаян, (с. 59).

Вторая глава ''Освободительная борьба армянства Арцах-Карабаха в первой трети XVIII в. в интерпретации азербайджанских историков'' посвящена важным военно-политическим событиям, сыгравшим исключительную роль в исторической судьбе армянского народа. Исторический Арцах-Карабах и Сюник стали центром развернувшейся освободительной борьбы армянства против кызылбашей, турок-османов и кавказских горцев. Характерен этот период и тем, что в русско-армянских отношениях все больше о себе дала знать политическая составляющая. Армянская знать (духовные отцы, удельные князя-мелики) стремились закрепить торгово-экономические интересы России и Закавказья стратегическими устремлениями политического характера. И эту

священную борьбу армянства стала предметом фальсификации и искажения со стороны азербайджанских историков. Автор приводит слова известного азербайджанского фальсификатора Ф. Мамедовой, которая считает, что "все события в истории Арцах-Карабаха переносятся в историю армянского народа" –(Причина-следственная связь карабахской проблемы. – http://udi.az/articles/0030/html). Отвечая ей, автор приводит слова армянского историка и лингвиста второй половины XIX в. Г. Езова (Езов), который писал: ''Сравнительно в лучшем положении находилась та часть Армении, которая называлась Карабахом… Здесь еще сохранились остатки прежней политической независимости. Страна находилась в наследственном управлении нескольких меликов, которые … имели … возможность оказывать сопротивление. Эти мелики вошли в сношение с Петром Великим, … возобновили … сношения с Екатериной II, и не прекращали их до тех пор, пока русская власть не утвердилась в их стране''. – (Езов Г. Сношения Петра Великого с армянским народом. Документы. СПб, 1898, док. 8, с.24).

Третья глава книги называется ''Рождение "ханства", его историко-правое обоснование по-азербайджански''. Она по сути является квинт-эссенцией самой работы в целом. Автор, использовав богатый фактологический материал, сумел обосновать, что тюркские племена появились на равнинной части Арцах-Карабаха не раньше XIV-XV вв., при том не как мирные переселенцы, а в виде бандформирований. При этом поселения они не создавали. Жили в обычных землянках. В нагорной части Арцах-Карабаха тюркские племена появились только в 50-х годах XVIII в. Согласно С. Дадаяна ни один азербайджанский историк (в работе использовано 71 книг и статей азербайджанских авторов) не в состоянии приводить хоть одного документа доказывающий автохтонность тюркских племен на территории Арцах-Карабаха, потому что их нет. Соответственно, утверждение азербайджанских авторов о том, что Карабах с давних времен заселяли тюркские племена, тем более азербайджанцы, всего лишь вымысел, желаемое выдать за действительность. Поиск исторического предка родного этноса для искусственно созданного государства, включая территорию армянского Арцах-Карабаха, стал главной задачей для историков Азербайджана.

С. Дадаяну удалось обосновать, как и при каких исторических условиях глава одной из бандформирований тюркской племени Джеваншир Панах, воспользовавшись политической ситуацией, царившей в Персии, при отсутствии легитимной шахской власти, а также междоусобицей среди армянских меликов Арцах-Карабаха, войдя в доверие к мелику Варанды Шахназару, сумел обосновать и в Карабахе, а впоследствии прибраться в крепость Шуши. Прав автор исследования. Он пишет: "… важно уяснить в качестве кого Панах оказался в стенах Шушинской крепости? Если хана Карабаха с шахским фирманом в руках это одно. А в качестве вожака

тюркского племени Джеваншир с прозвищем “хан”, это другое” – (стр. 445). Исследование показало, что Панах не имел шахского фирмана, который якобы был выдан в 1748 г. “шахом” – временщиком Адилем. Панах не имел шахского фирмана, как легитимный хан. Он был самозванцем. Вряд ли, чтобы Панах с “ханским” фирманом в руках бандитствовал на Мильских степях? Исвестно, что он появился Шуши только во-второй половине 50-х гг. XVIII в. Появление самозванца-Панаха в Шуши есть “политическая слепота всех меликов Хамсы. Особая роль в этой цепи принадлежит мелику Шахназару , его политическим амбициям”- пишет С.Дадаян (с.447). Исследование показало, что Панах присвоил себе титул “хан” в период “степной”, жизни еще в 1747г. как глава бандформирования. Но возможно ли, “чтобы глава бандформирования… объявить о создании “государственного” образования “Шушинского ханства”? Называть этот кочевой тюркский разбойничий стан в Шушинской крепости (…который должен был служить для мелика Шахназара пугалом против остальных меликов Арцах-Карабаха) независимым, мусульманским (азербайджанским) государством -абсурд”,- заключает С.Дадаян (с.447).

Четвертая глава книги посвящена политическим процессам имевшее места в Арцах-Карабахе в период русско-персидских войн 1804-1813 и 1826-1828гг. в частности: военно-политическое место Куракского трактата (14 мая 1805г.), историческое значение Гюлистанского (12 октября 1813г.) и туркменчайского договоров (10 февраля 1928г.). Особое место отводится развитию русско-армянских политических отношений и возвращению армянство в родные очаги.

С принятием Гюлистанского договора, т.н. Карабахское “ханство” кануло в историческое прошлое, его “ханы” превратились в предмет “большого спора, как факты подобные историческим аномалиям”-заключает С.Дадаян (с.452).

Книга С.Дадаяна необходимое последование для более глубокого осмысления общественно-политической жизни истории родного края. Необоснованные измышления азербайджанских историков о т.н. Карабахском “ханстве” позволили политическим структурам современного Азербайджана заявить его, как части выдуманного в 1918г. Азербайджана. Сегодня, в условиях политической независимости Арцаха, исследование С.Дадаяна актуализируется еще в большей степени.

Очищение исторического пути Республики Арцах от вредных, чуждых измышлений героической истории армянства-главная задача историка-профессионала, в чем мы убедились рецензируя книгу С.Дадаяана. Книга Дадаяна С.В., представленная читателя, является новой трактовкой политической истории Карабаха – Арцаха XVIII века.

Գրախոսություն

Սոկրատ ԽԱՆՅԱՆ

ՆՈՐ ԷՋ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԱՆՈՒՄ

Կան գրքեր, որոնց կարիքը շատ է զգացվում առանձնապես գիտության ասպարեզում: Դա մատենագիտությունն է, առանց որի չի կարող արդյունքի հասնել գիտությամբ զբաղվողը: Նշենք, որ մատենագիտության արմատները դարերի խորքն են հասնում: Գիտության զարգացումը միշտ էլ կարիք է զգացել տպագիր և ձեռագիր երկերի վերաբերյալ տեղեկատվության: Մատենագիտության միջոցով ընթերցողը, առանձնապես մասնագետը կողմնորոշվում է դեպի տարբեր բնագավառների վերաբերող գրքերի, պարբերականների, հոդվածների ու տպագիր այլ երկերի հսկայական զանգվածում: Առանց մատենագիտության՝ գիտության և մշակույթի ոչ մի գործիչ չի կարող հասնել իր նպատակին:

Մատենագիտությունը, սկիզբ առնելով Հին Եգիպտոսում, զարգացել է աշխարհի բոլոր քաղաքակիրթ երկրներում: Ռուսաստանում այն սկիզբ է առել 10-րդ դարում: Հայկական մատենագիտությունը ևս իր ինքնուրույն և ինքնատիպ ճանապարհն է անցել: Նրա ընդգրկման ուշագրավ նմուշները տպագիր և ձեռագիր հայերեն երկերն են: Ինչպես նշվում է Հայկական Սովետական Հանրագիտարանի 7-րդ հատորում. «Հայկական մատենագիտությունը զարգացման երեք շրջան է ունեցել՝ ա. հին և միջնադարյան (մինչև 17-րդ դ. վերջերը), բ. նոր (18-րդ դարից մինչև 1920-ը), գ. սովետական և սփյուռքահայ շրջան (1920-ից սկսած): Նշենք, որ հայ մատենագիտության զարգացման ուղղությամբ նշանակալից գործ են կատարել Հ. Անասյանը, որը հրատարակել է հայկական մատենագիտությունը 2 հատորով (1959-1976), «Մատենագիտություն հայկական մատենագիտության» (Ե., 1963), Ռ. Իշխանյանը՝ «Հայ մատենագիտության պատմություն»՝ 3 պրակով (1964-1968), Հ. Դավթյանը՝ «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» (1967) և այլն:

Եվ այսօր չափազանց ուրախալի ու հաճելի երևույթ է, որ հայ մատենագիտության զարգացմանը նվիրումով է մասնակցում բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԱրՊՀ ռեկտոր Արմեն Յուրիի Սարգսյանը:

Ղարաբաղի բանահյուսության և բարբառի վերաբերյալ գիտական տեղեկագրերում տպագրված մոտ 40-ի հասնող աշխատանքներին զուգահեռ՝ Արմեն Յուրիին հրատարակեց «Արցախի բանահյուսությունը» ժողովածուն (2015, 748 էջ), «Արցախյան առակներ» (2011, 96 էջ),

«Արցախյան զվարճախոսություններ» (2014, 172 էջ), «Ղարաբաղի բարբառի բառարան» (2013, 846 էջ), «Շաղախի ենթաբարբառը Հադրութի ենթաբարբառի միջավայրում» (2009, 104 էջ), ինչպես նաև «Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան» (Շ. Մինասյանի համահեղինակությամբ (2017, 568 էջ)) ուսումնասիրությունները: Դրանք լուրջ ներդրումներ են հայագիտության գանձարանում, որոնցով կարող է հպարտանալ յուրաքանչյուր ականավոր գիտնական:

Եվ ահա հրապարակի վրա են Արմեն Յուրիի երկու լուրջ աշխատությունները՝ «Մատենագիտություն Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության» և «Մատենագիտություն Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրության» խորագրերով: Երկու գրքերն էլ տպագրվել են Արցախի Գիտական կենտրոնի և Արցախի պետական համալսարանի գիտական խորհուրդների երաշխավորությամբ:

Աշխատանքներն իրականացվել են ԱՀ ԿԳՄՆ-ի կողմից տրամադրված ֆինանսական աջակցության շնորհիվ:

«Մատենագիտություն Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության» աշխատությունը բաղկացած է «Երկու խոսք», «Ներածություն», «Մատենագիտություն» և «Ձեռագիր աղբյուրներ» բաժիններից: Ընթերցելով ուսումնասիրությունը՝ մի կողմից զարմանում ես գիտնականի համբերության վրա, մյուս կողմից հպարտության հաճելի զգացում ապրում, որ գիտնականը կարող է ամենօրյա պաշտոնական ծառայության ընթացքում կատարել այդքան բազմաշերտ ու բազմաբովանդակ աշխատանք:

Աշխատությունն ամբողջության մեջ ներկայացնում է Ղարաբաղի բարբառին վերաբերող և առնչվող մասնագիտական գրականության ու ձեռագիր աղբյուրների մատենագիտություն: «Ներածության» մեջ հեղինակն առանձին բաժիններով ու ենթաբաժիններով քննության է առնում բարբառի ուսումնասիրության համառոտ պատմությունը՝ ըստ ժամանակագրության, հնչյունական ու հնչույթային համակարգերը, համաժամանակյա, տարաժամանակյա, դիրքային և փոխազդեցական հնչյունափոխության դեպքերը, խոսքի մասերի և նրանց քերականական կարգերի (հոգնակիակազմություն, հոլով, անվանական ու դերանվանական հոլովում, հոդառություն, ածականի համեմատության աստիճաններ, բայի դեմք, թիվ, սեռ, հիմք, կազմություն, եղանակ, ժամանակ ևն) դրսևորումները, շարահյուսական առանձնահատկությունները, բառապաշարի շերտերը, իմաստափոխության դեպքերը, բառակազմական միջոցները:

Հետազոտության միայն «Ներածություն» բաժինը բավական է՝ պարզ պատկերացում կազմելու կատարած աշխատանքի ծավալի, հեղինակի մասնագիտական նախանձելի կարողության և համբերության վերաբերյալ:

Գրքի «Մատենագիտություն» բաժինը բաղկացած է հինգ մասից: Առաջինում ընդգրկված են Ղարաբաղի բարբառին, նրա առանձին

ենթաբարբառներին ու խոսվածքներին կամ կոնկրետ որևէ օրինաչափության վերաբերող տպագիր ու ձեռագիր աշխատությունները, բառարանները, հոդվածները, զեկուցումները, առավել ընդգրկուն հիմնադրույթները: Երկրորդ բաժնում ներառված են հայերենի բարբառագիտական այն ուսումնասիրությունները, բառարաններն ու հոդվածները, որտեղ այլ բարբառների շարքում հեղինակները լրջորեն անդրադարձել են նաև Ղարաբաղի բարբառին կամ նրա ենթաբարբառներին ու խոսվածքներին: Երրորդ բաժնում բերվում են Ղարաբաղի բարբառին կամ նրա ենթաբարբառներին նվիրված աշխատությունների ու բառարանների մասին տպագրված գրախոսությունները: Չորրորդ բաժնում ներառված են Արցախի բանահյուսական այն ժողովածուները, նաև բարբառագիր ստեղծագործությունները, որոնց մեջ հեղինակներն այս կամ այն կերպ անդրադարձել են բարբառի առանձնահատկություններին և (կամ) ընդգրկել բարբառում գործածվող բառերի համեմատաբար ընդարձակ բառացանկեր: Հինգերորդ բաժնում ընթերցողը ծանոթանում է Արցախի ու Սյունիքի գրողների ստեղծագործությունների լեզվաոճական քննությանը նվիրված այն ուսումնասիրություններին, որտեղ քննության նյութ են դարձել մայրենի բարբառով պայմանավորված իրողությունները:

Թվարկած այս հիմնախնդիրների բացահայտման աշխատատարությունը և գիտական պատասխանատվությունը հստակ պատկերացնելու համար նշենք, որ Ա.Սարգսյանն ուսումնասիրել է 238 սկզբնաղբյուր, համառոտ ներկայացրել դրանց բովանդակությունը, ընդգծել նշանակությունը բանասիրության զարգացման ու հարստացման բնագավառում: Նրա ուշադրությունից չեն վրիպել դասական լեզվաբանների աշխատությունները: Ընթերցում ես հոչակավոր գիտնականներ Ս.Աբրահամյանի, Հր. Աճառյանի, Ռ. Բաղրամյանի, Գ. Բաղդասարյանի, Պ. Բեդիրյանի, Կ. Դավթյանի, Զ.Երվանդյանի, Ա. Ղարիբյանի, Ս. Մանուչարյանի, Ալ. Մարգարյանի, Ա. Պողոսյանի, Գ. Ջահուկյանի և մյուս անվանիների երկերի մեջբերումներն ու դրանց վերաբերյալ գրախոսությունները, խորին պատկառանքով ես լցվում հեղինակի նկատմամբ: Ե՞րբ և ինչպե՞ս է հասցնում կատարել այդպիսի տարողունակ ու բովանդակալից գործ: Ուրախալին նաև այն է, որ մատենագիտության փորձառու ու երիտասարդ հեղինակների մեծ մասը ապրում և ստեղծագործում է Արցախում: Լեզվաբաններ Օ.Բաբայանի, Հ.Ղազարյանի, Լ. Մարգարյանի, Լ. Մինասյանի, Շ. Մինասյանի, Ս. Մինասյանի, Ե.Միրզոյանի, Ռ.Մովսեյանի և այլոց ձեռքբերումները Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության բնագավառում զգալի են:

Գրքի մի կարևոր ու զգալի բաժինը վերաբերում է ձեռագիր աղբյուրներին, որոնք չեն վրիպել հեղինակի ուշադրությունից: Հոգատարությամբ ու գործի կարևորության զգացումով նա բերում է արժեքավոր այն ձեռագիր աղբյուրները, որոնք հիմք կարող են

հանդիսանալ լեզվաբանության նոր հիմնախնդիրները բացահայտելու և լուսաբանելու ուղղությամբ:

* * *

«Մատենագիտություն Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության» աշխատությանը զուգահեռ՝ նույն բարձունքի վրա է «Մատենագիտություն Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրության» հետազոտությունը: Այստեղ հեղինակն ուսումնասիրության նույն մեթոդով ներկայացնում է Արցախի բանահյուսությանը վերաբերող և առնչվող մասնագիտական գրականության, տպագիր ժողովածուների ու ձեռագիր աղբյուրների մատենագիտությունը: Գիրքը բաղկացած է «Ներածություն»-ից և բուն մատենագիտությունից: «Ներածության» մեջ առանձին բաժիններով քննության են առնված Արցախի բանահյուսության գրառման և ուսումնասիրության համառոտ պատմությունը և ժանրային, իմաստային առանձնահատկություններն ու կենցաղավարման ժամանակակից վիճակը: «Մատենագիտություն» բաժնում հեղինակի ուշադրության կենտրոնում են գտնվել Արցախի բանահյուսությանը կամ կոնկրետ որևէ ժանրի կերպարներին վերաբերող տպագիր ու ձեռագիր ժողովածուները, հոդվածները, զեկուցումները, առավել ընդգրկուն հիմնադրույթները: Լուրջ ուշադրություն է դարձված հայ բանահյուսական այն համահավաք ժողովածուներին ու բանագիտական ուսումնասիրություններին, որտեղ հեղինակները լրջորեն անդրադարձել են նաև Արցախի բանահյուսությանը կամ ընդգրկել որոշ նյութեր:

Հեղինակը բերում է նաև Արցախի բանահյուսական ժողովածուների մասին տպագրված գրախոսությունները: Ընթերցողը կարող է ծանոթանալ Արցախի ազգագրությանը, բարբառին, պատմությանը նվիրված այն ժողովածուներին ու աշխատություններին, որոնցում ընդգրկված են նաև բանահյուսական նյութեր: Պարզվում է, որ տարբեր հեղինակների կողմից Արցախի բանահյուսական նյութերը մշակվել են, որոնք նույնպես տեղ են գտել աշխատության մեջ: Գրքում բերված են նաև բանահյուսական մոտիվներով գրված գեղարվեստական գործեր:

Արմեն Յուրիի Սարգսյանի վերոնշյալ երկու աշխատությունները, հիրավի, նոր խոսք են, արժեքավոր ներդրում հայ մատենագիտության գանձարանում, որոնք, անշուշտ, արժանանալու են հետազոտողների ուշադրությանը՝ մեծապես նպաստելով հայ բանասիրության զարգացմանը:

Արցախի պետական համալսարանի
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ
Арцахского государственного университета
Artsakh State University's
PROCEEDINGS

2/2019

Հանձնված է տպագրության՝ 13.09.2019 թ.:
Ստորագրված է տպագրության՝ 29.11.2019թ.:
Ծավալը՝ 27 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 100:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան,
Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5
հեռ. (0749) 4-04-91, ֆաքս (0479) 7-12-14
E-mail: rector@asu.am
ԱրՊՀ հրատարակչություն, e-mail: printery.asu@mail.ru,
կայք: www.asu.am – Գիտական Հրապարակումներ – Գիտական տեղեկագիր

Основатель – Арцахский государственный университет
г.Степанакерт, ул. Мхитара Гоша 5,
тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ, e-mail: printery.asu@mail.ru,
сайт: www.asu.am – Научные публикации – Ученые записки.

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house, e-mail: printery.asu@mail.ru,
website: www.asu.am – Scientific publications – Proceedings.

Տպագրված է «էդիթ Պրինտ» ՍՊԸ տպարանում:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am